

The Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots
“MATENADARAN” and “Friends of the Matenadaran”
Benevolent Fund express their gratitude to “JTI ARMENIA”
CJSC for sponsoring the publication of this volume

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական
հիմնադրամը երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ
ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԼ-ին սույն հատորի հրատարակությանը
աջակցելու համար



“MATENADARAN”

MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN

25

**“Nairi” publishing house
YEREVAN – 2018**

“МАТЕНАДАРАН”

ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

25

**Издательство “Наири”
ЕРЕВАН – 2018**

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

25

«ՆԱԻՐԻ»

ԵՐԵՎԱՆ – 2018

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Օ. Վարդապարյան, Գ. Գասպարյան, Վ. Թորոսյան

«Բանբեր Մատենադարանի», Հ. 25 Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. – Եր.: «Նաիրի» հրատ., 2018:

Հ. 25/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2018:

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված է «Նարեկացիական ընթերցումներ» 3-րդ (17 հոկտեմբերի, 2017) և «Տպագրության Մարգարիտ» (19 սեպտեմբերի, 2017) միջազգային գիտաժողովների նյութերի ընտրանի, ինչպես նաև պատմաբանասիրական, արվեստաբանական և միջնադարյան բնագիտության այլևայլ հարցերի նվիրված հոդվածներ և հրապարակումներ:

«ՆԱՐԵԿԱՅԻԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2017

ԺԱՆՊԻՆՈՒ ՄԱՀԵ

«ԲՈՍՈՐ» ԱԾԱԿԱՆԸ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՏԱՂԵՐՈՒՄ. ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՄԻ ԳՈՒՅՆ

Բանալի բառեր՝ կարմիր, արյուն, Եսայու մարգարեություն, Բոսորա, տեղանուն, մեսսիա, Կյուրեղ Երուսաղեմացի, Ներսես Լամբրոնացի:

«Բոսոր» անվանը խոսակցական լեզվին չի պատկանում: Հոմանիշ «կարմիր»-ի համեմատությամբ՝ ավելի քերթողական, ավելի բոցավառ է հնչում, ասես փողփողում է խորհրդավոր լուսապսակով:

Կարծես թե այս բառի կրոնական ծագումը այսօր, գրեթե մոռացված լինելով հանդերձ, անգիտակից, բայց անջնջելի հետք է թողել հայախոս ժողովրդի հոգում: Կարմիր գույնի իմաստով «բոսոր» բառի ամենահին օրինակները գտնում ենք Գրիգոր Նարեկացու երկերում: Բայց այս հանգամանքը բացատրելու համար պետք է անցնել ծուռ ու մուռ ճանապարհներ՝ Սուրբ Գրքի մեկնությունների ասպարեզում: Այսպիսով կարող ենք տեսնել, թե երբեմն որքան դժվար է Նարեկացու ստեղծագործությունը ճիշտ ըմբռնելը: Ըստ լեզվաբանների՝ «բոսոր» անվանը ծագում է Եսայու մարգարեության մեկ հատվածի (ԿԳ. 1-6) գրաբար թարգամանությունից սխալ մեկնաբանությունից: Քերականությունը այդպիսի թյուրիմացությունը պիտի հերքեր, բայց Աստվածաշնչի մեկնիչները քերականների խրատներին ուշադրություն չեն դարձրել:

Վոլտերը հեգնանքով գրել է, թե Աստվածաշնչի առաջին հրաշքն այն է, որ իր մեջ եղած բառերը բուն իմաստից տարբեր բան են նշանակում: Պատկերացնենք հին հունական մի ողբերգության բեմադրություն: Մարտադաշտից եկած մի քաջարի հերոս քաղաք է վազում հաղթանակի ավետիսը բերելու: Նրան ընդառաջ են գալիս մի խումբ թերահավատ բնակիչներ: Չեն հասկանում լրաբերի արտասուվոր տեսքը՝ վայրագ դժնյա աչքերով, կեղտոտ փոշեպատ արնաշաղախ լաթերով:

Թարգմանաբար մեջբերենք բնագիրը: Քաղաքացիների խումբը հարցնում է. «Ո՞վ է սա, որ ելել, գալիս է Եդոմից. նրա հագուստների կարմիրը Բոսորից է, նա գեղեցիկ պատմուճանով է եւ հուժկու զօրութեամբ»¹:

¹ Աստվածաշնչյան մեջբերումների իմաստը ավելի հստակ դարձնելու համար, թեթևակի փոփոխել ենք հետևյալ հրատարակության աշխարհաբար թարգմանությունը՝ *Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանների*, արևելահայերեն նոր թարգմանությամբ, Մայր արքու Ս. Էջմիածին և Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, 1994:

Հերոսը պատասխանում է. «Արդարությունն հուշակոչը եւ փրկությունն վճի-
ռը հրապարակողը՝ ես եմ»: Խումբը՝ «Քո հանդերձներն ինչո՞ւ են կարմիր, քո
հագուստներն ասես հնձանահարի հագուստներ լինեն, որ տրորում է լեցուն
հնձանը»: Հերոսը՝ «Ես մենակ ճմլեցի հնձանը, հեթանոսներից ոչ ոք ինձ հետ
չէր. զայրոյթով տրորեցի նրանց, բարկութեամբ ճմլեցի նրանց և գետնին հա-
ւասարեցրի ու իմ բոլոր զգեստներն արինաթաթախ արեցի. քանզի հասել էր
նրանց հատուցման օրը, եկել հասել էր փրկութեան տարին: Նայեցի, բայց օգ-
նող չկար, մտածեցի, թէ ինչու ոչ ոք չկար, մտածեցի, թէ ինչու ոչ ոք չկար, որ
թիկունք դառնար ինձ: Իմ բազուկը փրկեց նրանց, և միայն իմ բարկութիւնն
ինձ զօրավիզ եղաւ: Իմ բարկութեամբ տրորեցի և իմ զայրոյթով մորթեցի
նրանց, գետնին հաւասարեցրի նրանց»:

Նախ և առաջ ուշադրություն դարձնենք բնագրի սկզբում գտնվող «Բո-
սոր» բառին: Անժխտելի է, որ այս համատեքստում «Բոսոր»-ը ո՛չ թե ածական
է, այլ տեղանուն: Պաղեստինի Բոսրա (BOSRA) ավանը (ներկայիս Բուսեյրա –
Bouseira), գտնվում է Հորդանան գետի մյուս ափին, Մեռյալ Ծովից 30 կմ հա-
րավ: Անցյալում Բոսրան եղել է եղոմացիների գլխավոր կենտրոնատեղին: Հի-
շեցնենք միայն, որ Հուգայի թագավորության հնուց թշնամի այդ ժողովուրդը
երբեմն դաշնակցել է Ասորեստանի Նաբուգոդոսոր արքայի հետ:

Մեր բնագիրը նշում է, որ հերոսի լաթերի կարմրությունը Բոսորից է,
այսինքն՝ եղոմացիների քաղաքից: Թե Բոսորում ի՞նչն է կարմիր, հասկացվում
է միայն համատեքստից: Կարմիր է թշնամիների արյունը: Ճակատամարտի
ընթացքում հերոսն արյունով է թաթախվել՝ եղոմացիներին խաղողի պես ոտ-
նահարելով հնձանում: Սակայն բուն իմաստով երբայերեն բացըրա (bāšarā)²
գոյականից առաջացած Բոսոր տեղանունը նշանակում է «ցանկապատված
տեղ, դաշտ կամ պարտեզ», որն ընդհանրապես գույնի հետ կապ չունի:

Այդ դեպքում ինչպե՞ս է պատահել, որ բառը ստացել է կարմիր գույնի
նշանակությունը: Ջոն Գրեպինը ենթադրել է, թե Կյուրեղ երուսաղեմացին «Կո-
չումն ընծայութեան» իր քարոզներում, համեմատելով Նաայու գրքի հերոսի
արյունաթաթախ լաթերը Պիղատոսի դատարանում Հիսուսի հագած կարմիր
զգեստի հետ, սխալ է եզրակացրել, թե «բոսոր» «կարմիր» է նշանակում³:

Մեջբերենք նշված հատվածի հունարեն բնագիրը. Τίς οὗτος ὁ κατὰ
ἀτιμίαν φορῶν τὰ κόκκινα; ἢ γὰρ βοσὸρ τοιαύτην τινὰ παρ’ Ἑβραίοις ἔχει
τὴν ἐρμηνείαν – «Մի է սա, որ ծաղրանքի հետևանքով ծիրանավոր զգեստ է
կրում: Այսպես կարելի է թարգմանել «բոսոր» երբայերեն բառը» (PG t 33,
col. 805):

² Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Կ. Ա, Երևան, 1971, էջ 473:

³ J. Greppin, «A Note on Armenian Bosor,» REArm 14, 1984, pp. 471-472.

Իրականում ո՛չ թե «Բոսոր», այլ «Եդոմ» բառը կարմիր գույնի հետ կապ ունի: Կարելի է կարծել, թե «Եդոմ» և «Բոսոր» բառերը պարունակող մարգարեության մեկ տունը կարգալիս, Կյուրեղը սխալվել է, վերջինիս վերագրելով առաջինի բացատրությունը: Իրոք, Մայքլ Սթոունի հրատարակած *Onomastica Sacra* բառարաններում, այսինքն՝ Աստվածաշնչի հատուկ անունների հայերեն միջնադարյան մեկնություններում, «Եդոմ» թարգմանվում է «կարմիր կամ երկնային», իսկ «Բոսոր»՝ «ամրություն», այսինքն՝ «ցանկապատ կամ պարսպապատ տեղ»⁴:

Սակայն, բառերի ենթադրյալ շփոթը չբացատրելով հանդերձ, կարելի է նաև քրիստոսաբանական բացատրություն որոնել: Նախ և առաջ թվարկենք Մարգարեի պատգամը. պատկանում է Նսայու գրքի երրորդ մասին, որը հորինել են մի քանի հեղինակներ՝ 538 թ. տեղի ունեցած Բաբելոնական աքսորից վերադարձից ի վեր մինչև Նեեմիայի ժամանակը, Ե. դարի կեսերին⁵:

Ճշգրիտ հայտնի չէ, թե ինչ պատմական դեպքի է վերաբերում բնագրի հիշատակարանը: Բանն այն է, որ եբրայեցիները երկար ժամանակ անհամբեր սպասել են եղոմացիների պատժվելուն: Բայց աղբյուրները չեն նշում, թե երբ և ով է վրեժը լուծել⁶:

Հիմնականում անանուն վրեժխնդրի ով լինելը Մարգարեի տեսակետից կարևոր չէ: Իր կարծիքով խորհրդավոր հերոսը Տիրոջ կողմից առաքվող նահատակն է, որը պետք է ոչնչացնի ընտրյալ ժողովրդի բոլոր թշնամիներին: Այսպիսով պատմական, այսինքն՝ թվական ունեցող, դեպքը վերածվում է անժամանակ խորհրդանիշի: Հանգամանքների անորոշությունը և համատեքստի մթնոլորտը կարծես թե երաշխավորում են գաղտնի, խորհրդավոր մի բովանդակություն:

Ամենահին ժամանակներից սկսյալ՝ եկեղեցու հայրերը մեկնողական այն սկզբունքն են ընդունել, թե Հին կտակարանում հանդիպող ամեն կարծեցյալ հակասություն պետք է համարել ո՛չ թե սխալ, այլ «խորհուրդ», իսկ խորհրդի բանալին կարող է լինել միայն Քրիստոսը կամ եկեղեցին: Օրինակ՝ «Մահակի և Հակոբի օրհնանքների» ճառում Հիպոլիտոս Հոմեոցին իղձ է արտահայտում. «Աստվածային բանը օգնության թող գա մեզ և ինքը մեկնաբանի իր սեփական խորհուրդները» (*PO 27, 1954, p. 2*):

⁴ **M. Stone**, *Signs of the Judgement, Onomastica Sacra, and the Generations from Adam* (University of Pennsylvania Armenian Texts and Studies 3), Chico: Scholars Press, 1981, pp. 126, 172.

⁵ **E. Osty et J. Trinquet**, *La Bible*, Paris, 1979, p. 1526.

⁶ **A. Lemaire**, *Histoire du peuple hébreu*, Paris: PUF, 1981, 2008², p. 58.

Նմանապես լուսահոգի Միշել Վան Էսբրուկի հրատարակած՝ վրացերեն թարգմանությունը պահպանված և Արդար Բարսաբեին (Գործք Ա. 23) վերագրված «Քրիստոսի և եկեղեցիների մասին» ճառում հեղինակը թվարկում է Մենդոց գրքում 28 «սահղումլո», այսինքն՝ հանելուկային խորհուրդներ, որոնց գաղտնի նշանակությունը կգտնենք Քրիստոսի կյանքում⁷:

Ահա այս ճանապարհով կարելի է հասկանալ, թե ինչպես է «Բոսրա» տեղանունը դարձել «բոսոր»՝ արյան և այգեկուծի կարմիր գույնն արտահայտող բանաստեղծական ածական: Լրիվ մոռանալով պատմական հանգամանքները, երբ եբրայացիներն աքսորից վերադառնալուն պես եղոմացիներին և հատկապես բոսրացիներին անողոք շարդեցին ու ոչնչացրին, ժողովուրդը մարգարեությունից հիշել է միայն մեսսիական նշանակություն թելադրող բառերը. «Արդարություն հռչակող և փրկության վճիռը հրապարակողը ես եմ», կամ «բազուկս փրկեց նրանց»:

Մեսսիայի փառավոր գալստյան մասին էր խոսքը: Հետևաբար՝ Բոսրայի մոռացված հաղթանակի տեղանունն այլևս կարևորություն չուներ:

Չի կարելի բացառել այն հնարավորությունը, որ երկրորդ Տաճարի ժամանակաշրջանում, որոշ հրեա մեկնաբաններ ենայու գրքի այդ հատվածին մեսսիական նշանակություն են վերագրել: Այս դեպքում հաղթական հերոսի լաթերը ներկող արյունն անպայման պետք է լիներ իր կոտորած թշնամիների արյունը:

Բայց այս տեսակետը միանգամից շուռ եկավ, հենց որ Քրիստոսյա մեկնաբանները սկսեցին հաստատել, թե Մեսսիան ոչ թե հաղթական զորավար, այլ խաչված Հիսուս նազովրեցին է:

Քանի որ Փրկիչը հաղթել էր ո՛չ թե մարդկային թշնամիներին, այլ անմարմին չար դեերին, իր շորերը ներկող արյունը չէր կարող թշնամիներին լինել, այլ միմիայն իրենը: Ավելին, մարգարեի բեմադրած երկխոսությունը ո՛չ մի դեպքում չէր կարող աշխարհում տեղի ունենալ, այլ միմիայն այն աշխարհում, կամ դժոխքում, կամ երկնքի բարձունքում:

Հայոց հին և միջնադարյան գրականության մեջ «բոսոր» ածականը չի երևում մինչև Թ-Ժ. դդ. մշակութային վերածնունդը: Օրինակ, կարելի էր ակնկալել «բոսոր» ածականի գործածումը Ագաթանգեղոսի պատմած՝ Գրիգոր Լուսավորչի տեսիլքում: Այն հնձանի մոտ, որտեղ նահատակվել են Հռիփսիմեն և 40 կույսերը, Լուսավորիչը տեսնում է նրանց նվիրված ապագա մատուռների պատվանդանները. «Այդ պատվանդանները, — գրում է Ագաթանգեղոսը, —

⁷ Barsabée de Jérusalem, *Sur le Christ et les Eglises*, Introduction, édition du texte géorgien inédit et traduction française par Michel van Esbroeck (Patrologia Orientalis 41/2), Turnhout: Brepols, 1982, pp. 177-178.

կարմիր էին, արյան գույնով» (§ 737): Քանի որ այս համատեքստում ո՛չ թե «բոսոր», այլ «կարմիր» ածականն է օգտագործվում, պետք է ենթադրել, որ այն ժամանակ «բոսոր» բառը որպես ածական դեռ գործածելի չէր:

Բոլորովին տարբեր իրավիճակի ենք հանդիպում Գրիգոր Նարեկացու Տաղերում: Մարգարեական պատգամն արտահայտում է Քրիստոսի կրած շարժարանքների և փառավոր հարույթյան միջև ընկած խորհրդավոր կապը, ինչպես նաև հարույթյան և համբարձման միջև եղած կապը: Կարծես թե սուրբ բանաստեղծի երևակայության մեջ Քրիստոսը դժոխքից երկնքի գագաթ միանգամից, միևնույն շարժմամբ է վերանում:

Հարույթյանը նվիրված իր տաղում Նարեկացին մարգարեի նման խոսքը տալիս է քաջ նահատակին՝ իր իսկ հաղթանակը պատմելու համար: Մի քիչ ծանր ոճով թարգմանեմ այս դժվար բնագիրը.

Տերունական օրվա համար,
Պայծառ և աներեկ մի օր, որ հայտնի է միայն Տիրոջը,
Տիրոջ հրամանով բարձրանում եմ իբրև պահակ,
Իբրև հսկող հասնում եմ հարավում գանվող իմ դիտարանը,
Գնում եմ բոսորագույն վերահյու հագած.
Այսինքն՝ իմ կողից բղխող արյան վտակի գույնի:

...

Լիալիբ կատարելությամբ մայրս պսակեց ինձ,
Ինձ հետևող մայրս, պայմանավորված օրն ու ժամին:
Այն օրը ինձ գերեզման գցեցին, երեք օրով,
Ինձ դժոխք գցեցին, ավազակի բռունցքի տակ.
Բռնության բռունցքը և բռնակալի ուժը,
Դևերի հզոր զորքը (հմմտ. ՄՀ, ԺԲ. հատոր, 2008, էջ 647-648.18-23, 28-33):

«Տերունական օր», ինչ խոսք, նշանակում է Զատիկի կիրակի օրը: Ամենասուրբ այս կիրակին խորհրդավոր իմաստ ունի: Նշում է տիեզերական Ավագ շաբաթի վերջը և նոր ժամանակաշրջանի սկիզբը, որի ընթացքում արարչությունը հիմնովին վերանորոգված կլինի: Ահա այս փոփոխություններին ուշադիր հետևում է հսկող պահակը իր դիտարանի, այսինքն՝ հաշի բարձունքից, որի վրա բարձրացվել է, ըստ Հովհաննոս ավետարանի (ԺԲ. 32): Դիտարանից նայում է դեպի հարավ, այսինքն՝ այն ուղղությամբ, որտեղից պայծառ լույս է գալու:

Գալիք Արքայության պատճառով ծիրանի պատմուճան է հագել և թագով է պսակվել, «երգ երգոց»-ի մեսսիական փեսայի պես⁸: Սակայն, պսակը փշերից է հյուսված, իսկ պատմուճանի ծիրանին՝ ներկված իր իսկ արյունով:

⁸ «... պսակն որով պսակեաց զնա մայր իւր յատուր փեսայութեան իւրոյ...» (Երգ Գ. 11):

Չարչարանքների և մահվան այս հետքերը իրականության մեջ լավագույն անցագիր պետք է համարել, որի միջոցով Քրիստոսը, թաքցնելով իր անմահության թշուրը, խաբելով Սանդարամետի պահակներին, ընդունվում է մեռելների աշխարհում: Այն ժամանակ թալանում է ավազակի ամբողջական ավարը, այսինքն՝ ազատում է դժոխքի խավարում գերի եղած ոգիներին: Բայց այս ազատագրումը փրկության առաջին փուլն է միայն: Երկրորդ փուլն իրագործելու համար այն արյունաներկ պատմուճանը, որն այնքան հեշտացրել էր Փրկչի դժոխք իջնելը, հիմա խանգարելու է նրա և իրեն հետևող ոգիների վերանալուն:

Իրոք, այն ժամանակից ի վեր, երբ Տեր Աստված դրախտի դռանը տեղադրեց պտտվող բոցեղեն թրով զինված քերովբեներին, որպեսզի թույլ չտան հողածին մարդկանց պարտեզ մտնել (Ծննդ. Գ. 2), երկնային կամարների դռները պահող (հունարեն ΤΕΛΩΝΑΙ կոչված⁹) մաքսավոր-հրեշտակներին հրամայվել է արգելել մահկանացու էակի անցումը: Ուստի և այս երկնային դռնապանները համբարձման ժամանակ խստորեն հարցապնդում են Քրիստոսին.

Արյունաշաղախ մարդկային մարմնով

Տիրոջը տեսան անմարմին գվարթում՝ երկնային անոն ուժերը,

Միմյանց հարցնելով, թե ո՞վ է նա,

Ո՞վ է Եդոմից եկած այս անծանոթը,

Բոսորային կարմրածորձ հագած,

Գեղեցկապես պննված աստվածազարդ լույսով:

Լույսը տեղեկացրեց հրեղեններին, ասելով.

«Իմ ուժեղ զորությամբ հերձեցի

Ում երկրային արդարությունը համարում էր ամենից ուժեղը:

Հրեշտակներին պատմունանի գույները երկրածին էին թվում,

Իրենց կասկածները փարատելու համար հարցնում են.

Ի՞նչ է լիբը հնձանի նման այդ կարմիր հանդերձը,

«Խաչի վրա, ասում է նա, իմ ոտնահարած հնձանից է,

Կենաց թշնամուն կոխեցի

Գետնին թափեցի նրա մեղքի մաղձը»:

Բայց երկնայինները ուրիշ հարց են դնում.

«Ի՞նչ է այդ վերքը քո ձեռքիդ,

Որով, Տերդ, ստեղծեցիր հողեղեն պատկերդ» (հմմտ. ՄՀ, ԺԲ. հատոր,

էջ 662-663):

Այս հատվածում հրեշտակները կոչվում են «հրեղեններ», «վեհեր», «գվարթունք» ևն:

⁹ F. Cumont, *Lux perpetua*, Paris: Geuthner, 1949, p. 300.

Դանիելի տեսիլքին հատուկ (Դան.Գ. 10, 14, 20), այս վերջին բառը Աստծո դեմքի առաջ միշտ հսկող էակներին է նշանակում: Իրենց դրած առաջին հարցն այնքան մոտիկ է Եսայու բնագրին, որ կարելի է տարակուսել, թե ինչպե՞ս թարգմանենք՝ «Բոսորա (ավանի) ծիրանի հագած», թե՞ «բոսորագույն ձորձ հագած»: Սակայն ուրիշ օրինակներ ցույց են տալիս, որ նարեկը «բոսոր» բառը որպես «կարմիր» է ընդունում: Մատյանում (ԿԼ.4, էջ 424.85-86) ինքն իրեն հարցնում է «կանչե՞մ երկնքի թռչուններին: Նրանց են կանչում մորթված զոհերի բոսոր գույնով մնացորդների վրա»: Արյան վերածված Նեղոսի ջրերի հրաշքը հիշատակելիս, նարեկացին գրում է. «Գետից առնված (ջուրը) ... ցամաքում մածեցիր արյան բոսորային նոր երանգով» (Մատեան, ԿԳ.1 ՄՀ, ՓԲ. հատոր, էջ 391.27-30): Հեղինակն օգտագործում է նաև «բոսոր»-ից առաջացած բարդ բառեր. օրինակ Քրիստոսը թափում է «բոսորաբուլիս» (Աստվածածնի ներբող)¹⁰ կամ «բոսորակայլակ արյուն» (Սբ. Խաչի ներբողը, ՄՀ, ՓԲ. հատոր, էջ 943.16), հիշատակվում են «բոսորակայլակ կաթիլները» (Հակոբ Մծբնեցու ներբողը, ՄՀ, ՓԲ. հատոր, էջ 1000. 71): Այս բարդ բառերն այն դեպքի ապացույցն են հանդիսանում, որ աստվածաշնչյան ծագումով հանդերձ, «բոսոր»-ը նարեկացու համար դարձել է լրիվ բնականոն մի ածական:

Հետագայում Ներսես Շնորհալին (1168-1173) և շարականների ուրիշ անանուն հեղինակներ¹¹ հետևում են նարեկացու օրինակին, «բոսորայ» կամ «բոսորային» բառերը օգտագործում են միշտ Եսայու մարգարեության և Քրիստոսի Համբարձման համատեքստում:

Այս թեման լայնորեն ժողովրդականացվեց Ներսես Լամբրոնացու (1153-1198) քարոզում, որտեղ հրեշտակների և երկնային կամարներով անցնող Քրիստոսի տրամախոսությունը վերածվել է գրեթե թատերական բեմադրության¹²:

Հավանական է, իմ կարծիքով, որ Լամբրոնացին կրել է ասորերեն «սողի-թաների», այսինքն՝ բանաստեղծական տրամախոսության ձև ունեցող քարոզների ազդեցությունը: Նշենք օրինակ «Քերովբի և ավազակի Սողիթան», որը հրատարակեց Ֆրանսուա Գրաֆենը¹³: Այս պոեմը երգում էին քաղղեացիները Ջատիկից առաջ, գիշերային ժամի ընթացքում: Համենայն դեպս Ներսես Լամբրոնացին իր քարոզում օգտագործում է մի նոր բարդ բառ՝ «բոսորատիպ»:

¹⁰ 22.23՝ րսւմ **T. Dasnabedian**, *La Mère de Dieu. Études sur l'Assomption et sur l'image de la très-saint Mère de Dieu*, Anthelias, 1995, p. 290-291:

¹¹ Հմմտ. **N. Ter-Mikaelian**, *Das Armenische Hymnarium. Studien zu seiner Entwicklung*, Leipzig: J.C. Hinrichs, 1905:

¹² **Մ. Աբեղյան**, *Երկեր*, հ. 4, Երևան, 1970, էջ 163-165:

¹³ **F. Graffin**, "La soghitha du chérubin et du larron," *L'Orient Syrien*, vol. 12, 1967, pp. 481-490.

Մանրամասնորեն ուսումնասիրված «բոսոր» բառի օրինակը թույլ է տալիս հասկանալ, թե որքան խոր արմատներով են Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունները, հատկապես տաղերը, խարսխված աստվածաշնչյան, ուշ հրեական և վաղ քրիստոնեական ավանդույթներում: Ուստի և կարող են մեկնողական գրականության շատ հարցեր լուսաբանել:

Հայոց գրականության պատմությունից բոլորս գիտենք, որ պետք է սպասել ժԹ. դարի երկրորդ կեսին՝ մաքուր աշխարհիկ երկեր կարգալու համար: Միևնույն ժամանակ Նարեկացու տաղերը դեռ հանրահայտ են մնացել՝ թեկուզ գրավիչ եղանակների պատճառով: Այսպիսով «բոսոր» բառը մոռացության չի մատնվել, այլ նոր ասպարեզ է սկսել ժամանակակից բանաստեղծության մեջ:

JEAN-PIERRE MAHE

L'ADJECTIF *BOSOR* « ROUGE » DANS LES *ODES* DE GREGOIRE DE NAREK : UNE COULEUR MYTHOLOGIQUE

Mots-clef: rougue, sang, la profétie d'Isaïe, Bosra, toponyme, messie, Cyrille de Jérusalem, Nersēs Lambronacⁱ.

L'adjectif poétique *bosor* (« rouge écarlate ») est attesté pour la première fois dans les œuvres de Grégoire de Narek, à propos d'Isaïe 63, 1-6. Un héros venu de Bosra / Bouseïra, chef-lieu des Édomites, annonce la victoire qu'il a remportée sur l'ennemi. Ses vêtements, rouges du sang de ses victimes, ressemblent à ceux d'un vendangeur foulant le raisin au pressoir. Par erreur, les exégètes ont interprété le toponyme Bosra comme un nom de couleur : *bosor* « rouge ».

Une fois oubliées les circonstances historiques de la bataille de Bosra, liée au retour de l'exil (après 538 avant notre ère), les Hébreux ont vu dans ce récit un oracle messianique. À leur tour, les chrétiens ont rattaché la prédiction au Christ. L'exégèse chrétienne inverse les perspectives du texte d'Isaïe. Le sang qui teinte les vêtements de Jésus n'est plus celui des ennemis, mais le sien propre, répandu sur la croix.

C'est le cas dans les passages des *Odes* de Grégoire de Narek mentionnant la Crucifixion, la Descente aux enfers et l'Ascension. On examine en détail ces textes énigmatiques. Le sens adjectival de *bosor* est bien confirmé par le *Livre de Lamentation*. Nersēs Šnorhali reprend le mot et l'image dans les Hymnes du Šaraknocⁱ. Le même vocable apparaît dans le *Sermon sur l'Ascension* de Nersēs Lambronacⁱ. On y perçoit probablement l'écho de certains dialogues poétiques syriaques (*soghita*).

ЖАН-ПЬЕР МАЭ
ПРИЛАГАТЕЛЬНОЕ *BOSOR* “КРАСНЫЙ” В ОДАХ ГРИГОРА
НАРЕКАЦИ: МИФИЧЕСКИЙ ЦВЕТ

Ключевые слова: красный, кровь, Пророчество Исаяи, Босра, топоним, мессия, Кирилл Иерусалимский, Нерсес Ламбронаци.

Эпитет *bosor* (“пунцово-красный”) впервые встречается в произведениях Григора Нарекаци в связи с Ис. 63.1-6. Герой, пришедший из Босры, главного города эдомитов, провозглашает свою победу над врагами. Его одежда, красная от крови врагов, напоминает одежду того, кто топтал виноград в точиле. Толкователи по ошибке приняли топоним *Босра* за название цвета: “красный”.

Забыв в какой-то момент исторические обстоятельства сражения при Босре, после возвращения из пленения (538 г. до н. э.), евреи стали усматривать в этом стихе мессианское предсказание. В свою очередь, христиане связали предсказание с Христом. Христианская экзегеза изменила ракурс восприятия текста Исаяи. Кровь, окрасившая одежды Иисуса – это отныне не кровь его врагов, а его собственная, пролитая на кресте.

Так обстоит дело в тех загадочных пассажах од Григора Нарекаци, где упоминается Распятие, Сошествие во ад и вознесение. Значение эпитета *bosor* подтверждается “Книгой скорбных песнопений”. Нерсес Шнорали воспринял и слово, и образ в гимнах “Шаракноца”. То же слово встречается в “Проповеди на Вознесение” Нерсеса Ламбронаци. Возможно, здесь можно услышать эхо сирийских поэтических диалогов, известных как *soquta*.

ԱՐՐԱՀԱՄ ՏԷՐԵԱՆ

ՆԱՐԵԿԵԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ՓԻՂՈՆԵԱՆ ՆԱԽԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

«Միջնադարում գորեղ է եղել նաև Ալեքսանդրյան այլաբանական դպրոցի ազդեցությունը՝ պայմանավորված Փիլոն Ալեքսանդրացու երկերի հնագույն թարգմանություններով»:

Հ. Թամրազյան¹

Բանալի բառեր՝ Գրիգոր Նարեկացի, Փիլոն Աղեքսանդրացի, պատկեր, այլաբանություն, հելլենական հրէություն, վաղ Քրիստոնէություն, հայրաբանություն, մեկնողական գրականություն:

Քրիստոսի ժամանակակից Փիլոն Աղեքսանդրացին կամ եբրայեցին հեղինակն է մօտ չիստն ընդհանրապէս այլաբանական երկերու, որոնք Ս. Գրոց (մանաւանդ Հնգամատեանի) մեկնողական վաղ գրականութեան մէջ կարեւորագոյնը կը նկատուին: Իրենց կարեւորութիւնը ոչ միայն վաղեմի հեղինակութեան պատճառաւ է՝ այլեւ այլաբանական մօտեցման մէջ, ուր Մովսիսական գրքերը (Ծննդոցն ու Ելիցը մանաւանդ) երեք անգամ ենթարկուած են ընդարձակ մեկնություններու. առաջինը՝ հարց-պատասխանով, երկրորդը՝ բառ առ բառ, եւ երրորդը՝ նիւթերու շարադրանքով²: Փիլոնի երկերէն գրեթէ տասը՝ վաղուց կորսուած է, գրեթէ տաս մըն ալ (ոմանք թերի) միայն հայերէնով մեզի հասած է՝ Զ-րդ դարու Յունաբան Դպրոցի թարգմանութեամբ³, իսկ մնացած-

¹ Հ. Թամրազյան, *Նարեկյան դպրոցը*, Երևան, 1999, էջ 183:

² Ասոնց ժամանակագրական կարգաւորման մասին տե՛ս **A. Terian**, “The Priority of the *Quaestiones* among Philo’s Exegetical Commentaries,” *Both Literal and Allegorical: Studies in Philo of Alexandria’s Questions and Answers on Genesis and Exodus*, ed. **D.M. Hay** (Brown Judaic Studies 232), Atlanta: Scholars Press, 1991, pp. 29-46, եւ “Back to Creation: The Beginning of Philo’s Third Grand Commentary,” *Wisdom and Logos: Studies in Jewish Thought in Honor of David Winston*, ed. **D.T. Runia & G.E. Sterling** (Brown Judaic Studies 312), Atlanta: Scholars Press, 1997 / *Studia Philonica Annual* 9 [1997], pp. 19-36:

³ Փիլոնի եբրայեցոյ բանք երեք շեւ ի լոյս ընծայեալք. Ա եւ Բ Յաղագս Նախախնամութեան, Գ Յաղագս կենդանեաց/ *Philonis Judaei sermones tres hactenus inediti, I. et II. De Providentia et III. De Animalibus*, խմբ. եւ թարգմ. Մկրտիչ Աւգերեան, Վենետիկ, 1822 (այսուհետեւ՝ Աւգ. Ա), Մնացորդք ի Հայս, Մեկն. Ծննդոց եւ Ելից. Ճառք ի Սամփսոն, ի Յովնան, եւ յերիս Մանկունս կամ ի Հրեշտակս / *Philonis Judaei paralipomena armena: Libri videlicet quatuor in Genesin [sic], libri duo in Exodum, sermo unus de Sampson, alter de Jona, tertius de tribus angelis Abraamo apparentibus*, խմբ. եւ թարգմ. նոյն, Վե-

ներն իրենց բնիկ յունարէնով գոյութիւն ունին, որոնցմէ ոմանք հայերէնով ալ հասած են շնորհիւ Յունաբան Դպրոցին⁴: Թէ՛ կորսուած եւ թէ՛ միայն հայերէնով հասած երկերուն հեղինակային հարազատութիւնը վաղուց ստուգուած է Դ-րդ դարու եկեղեցւոյ մեծ պատմաբան Եւսեբիոս Կեսարացւոյ (Պաղեստինեան) հաղորդած Փիլոնի երկերու ցանկով ու անոնցմէ առատօրէն քաղած մէջբերումներով:

Իր երկերով Փիլոն՝ Հելլենական շրջանի Հրէութեան լաւագոյն ջատագովը կը հանդիսանայ, Հրէութիւնն ու Յոյն փիլիսոփայութիւնը համերաշխել ջանալով: Իր ժամանակուայ Պղատոնական հակումները նկատելի են նաեւ Աւետարաններուն (մանաւանդ Յովհաննու) եւ Առաքելական Թուղթերուն (մանաւանդ Եբրայեցւոյ) մէջ: Հետեւաբար՝ Նոր Կտակարանի եւ Վաղ Քրիստոնէութեան աղբերական ուսումնասիրութեան մէջ իր երկերը ամենէն շատ պրպտուած աղբիւրներն են: Թէեւ ինքը Քրիստոնէութեան տեղեակ չէր, իր երկերը քրիստոսաբանական շատ մը ցուքեր կ'արժարժեն, որոնցմէ Վաղ եկեղեցւոյ Հայրերը օգտուած են՝ Քրիստոնէական հաւատքի ջատագովութեան վերածելով եւ — Փիլոնեան աւանդութեամբ — այլբանօրէն Նոր Կտակարանը մեկնելով: Աղբասանդրացի Կղեմէսն ու Որոգինէսն սկսեալ եւ անցնելով Կապադովկեան Հայրերուն՝ չկայ Յոյն եկեղեցւոյ Հայր մը որ չէ ազդուած Փիլոնէն⁵:

Այսպիսով Փիլոնի ազդեցութիւնը Հայ հին մատենագրութեան մէջ երկճիւղ է, երկուքն ալ թարգմանաբար. մին ուղղակի կերպով Յունաբան Դպրոցէն, եւ միւսն անուղղակի կերպով Յոյն Հայրերէն, մանաւանդ Կապադովկեան Հայրերէն (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նիւսացի, եւ Գրիգոր Նազիանզացի):

Օրինակներս մի քանի պատկերներ են Նարեկացւոյ տօնական երկերէն՝ տաղերէն, գանձերէն ու ներբողներէն⁶. ալ աւելի օրինակներ կարելի է ներկայացնել Մատեան Ողբերգութենէն: Պատկերներէն ոմանք Փիլոնի արդէն հասա-

նետիկ, 1826 (այսուհետեւ՝ Աւգ. Բ): Բնագրին մէջ Փիլոնի երկերու վերնագրերը յապատուած են ըստ ՆԲՀԼ-ի, բացի այնտեղ չգտնուած «Փիլոնի Յաղագս զԱստուած ի բարեգործութեան հոս ծախող անուանել՝ ի տեսլեան երից մանկանցն, որ առ Աբրահամ, եւն» (գրքի վերնագրին՝ յերիս Մանկունս կամ ի Հրեշտակս)՝ աստ «Փիլ. Ած.» յապատուած:

⁴ Փիլոնի Հեբրայեցւոյ ճառք, թարգմանեալք ի նախնեաց մերոց, որոց հելլեն բնագիրք հասին առ մեզ (Վեներաբլի, Մխիթարեան Տպարան, 1892: Հրատարակութեան պատրաստողը (անանուն) Գարեգին Զարպհանալեանն է (այսուհետեւ՝ Զարպ.):

⁵ D. T. Runia, *Philo in Early Christian Literature: A Survey* (Compendia rerum iudaicarum ad Novum Testamentum 3.3), Assen: Van Gorcum, 1993, pp. 132-332.

⁶ Բնագրերը գտնել *Մատենագիրք Հայոց*, հ. ԺԲ, Ժ. Դար, Գրիգոր Նարեկացի, կազմ. Հ. Թամրազեան, Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 2008 (այսուհետեւ ՄՀ): Տաղերն ու գանձերը նոյնպէս գտնել *Տաղեր և Գանձեր*, խմբ. Ա. Քյոշկերյան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1981 (այսուհետեւ՝ Քյոշ.): Բացատրեալ թարգմ.՝ A. Terian, *The Festal Works of St. Gregory of Narek: Annotated Translation of the Odes, Litanies, and Encomia* (A Pueblo Book; Collegeville, MN: Liturgical Press, 2016):

րակ դարձած ազդեցութիւնը կը կրեն ու մաս կը կազմեն Միջնադարեան եկեղեցւոյ աւանդութեան: Անով հանդերձ՝ ինչպէս Գուշերոտտի Սրբազանը կը յայտնէ իր վերջին «Նարեկացիական» զեկոյցին մէջ՝ «Պանծարանի՝ Գրիգորը՝ տօներու վերաբերեալ իր բնագրերու վերագրումի խորհրդաւորութեամբ, երբեմն մեկնաբանութեան խիստ դժուարութեամբ, ծիսական հեղինակ է»⁷: Նպատակս է ցուցնել, թէ Փիլոնն ու Վաղ եկեղեցւոյ Հայրերը կրնան այդ մեկնաբանութեան դժուարութիւնը բաւական դիւրացնել:

Աստուածային Պատկերն ու Շունչը

Ըստ Փիլոնի այլաբանութեան՝ թէ՛ աստուածային պատկերը, որու նմանութեամբ Ադամ (մարդ) ստեղծուեցաւ (Ծննդ. Ա 27), եւ թէ աստուածային շունչը, որմէ հողեղէն մարդը ոչ միայն շունչ, այլեւ հոգի ստացաւ (Ծննդ. Բ 7), Աստուծոյ «Բանն» է՝ (յուն. ὁ Λόγος), որու շնորհիւ մարդ արարածը բանական կամ հոգեւոր հանդիսացաւ: Այլաբանութեամբ՝ թէ՛ աստուածային պատկերը եւ թէ աստուածային շունչը միեւնոյն կերպով մեկնուեցան. այդ պատկերն ու շունչը / հոգին միտքն է մարդուն, իր բանական կամ մտային կարողութիւնը, իր հոգին (բան-միտք-հոգի, բանական-մտային-հոգեւոր, հոմանիշ բառեր դարձան միջին Պղատոնականութենէն սկսեալ): Միտքը որպէս աստուածային պատկեր ու շունչ կամ հոգի՝ իսկական մարդն է մարդու մարմնին մէջ, անապականն ապականին մէջ: Փիլոն կ'աւելցնէ, թէ նոյնիսկ մեղքի մուտքէն ետք (այսինքն՝ Ադամ-Եւայի անկումէն ետք, Ծննդ. Գ), այդ աստուածային հետքը շանհետացաւ. հետեւաբար՝ մարդկային միտքը կամ հոգին որպէս աստուածային մասունք՝ կարող է երկնային բարձունքներու հասնիլ, իր բնավայրին վերադառնալ: Վաղ եկեղեցւոյ Հայրերը ասկէ հետեւցուցին, թէ մարդկային միտքը կարող է ոչ միայն Աստուծոյ նմանիլ, այլեւ Աստուծոյ միանալ, նոյնիսկ Աստուծոյ հետ նոյնանալ: Այս եղաւ Քրիստոնեայ խորհրդաբանութեան սկզբնակէտը⁸:

Փիլոնէն կարելի է տասնեակ օրինակներ մէջբերել այս նիւթին շուրջ, բայց պիտի բաւականանանք այս երկուքով:

Ո՛վ է ստեղծեալ մարդն, եւ իբրե՛ւ զանազանեալ է այն՝ որ ըստ կերպարանին է (Ծննդ. Բ 7-ա):

⁷ (Արք.) Կլաուդիո Գուշերոտտի, «Նարեկացու ծիսական պատկերների վերաբերեալ որոշ դիտարկումներ», *ԲՄ* 23, 2016, էջ 30-36, հոս՝ 35: Տե՛ս նաև Հ. Քամբազյան, *Նարեկյան դպրոցը*, Երևան, 1999, էջ 207. «Գրիգոր Նարեկացու միստիկ հայացքները յուսօրինակ զարգացում են գտել նրա «Մատենաձում» և տաղերում, որոնց հատկապես մանվածապատ ու խրթին հատվածները ըստ ամենայնի վերծանված ու մեկնաբանված չեն»:

⁸ Այս հիմնական պատկերը միջնադարեան հայ մեկնողական գրականության մէջ լայնածիր է Փիլոնեան այլ պատկերներու առընթեր: Տե՛ս Արուսյակ Քամբազյան, *Էսսեներ և ուսումնասիրություններ*, Երևան, «Նայիրի», 2013, էջ 5-55:

... ստեղծանելին, որպէս ի բրաէ՛ ի փոշոյ եւ յերկրէ կերպարանեցաւ ըստ մարմնոյ. եւ հոգոյ հասաւ փշեցեալ Աստուծոյ ի դէմսն զկեանս. եւ խառն էր խառնուած բնութեանն՝ ապականացուի եւ անապականի: Իսկ այն որ ըստ կերպարանին է, անապակ եւ անխառն, յանտեսանելի բնութենէ, ի պարզէն եւ ի լուսաւորէն...:

Ընդէ՛ր ի դէմս փշեալ ասի զկեանս (Ծննդ. Բ 7-բ):

... մարդ, ոչ միայն շնչոյ, այլեւ բանական շնչոյ [այսինքն հոգոյ] մասն ընկալեալ է, եւ գլուխ՝ մտաց տանար է. որպէս ոմանք ասացին:

Փիլ. Լին. Ա. 4-5 (Աւգ. Բ. էջ 3-4):

Քանզի անորակ եւ անարարուած է Աստուած, ոչ միայն ոչ մարդակերպ է, բայց երեւեցուցանէ իմն եւ բնականագոյն արտաբերութիւնս:

Քանզի երիս գոլ պարտ է՝ զշնչողն, զընդունողն, զայն որ շնչին: Արդ այն որ շնչէն է Աստուած, իսկ ընդունող՝ միտքն, եւ որ շնչին՝ հոգին...:

Քանզի ոչ իշխեցեալ լինէր եւ համարձակեալ՝ այնքան ի վեր ընթանալ ելանել մարդկային միտքս, մինչ զի բուն հարկանել եւ ընդունելութիւն առնուլ աստուծոյ բնութեան:

Փիլ. Այլար. Ա. 36-38 (Զար. էջ 117):

Այսպէս ալ Նարեկացոյ տօնական երկերուն մէջ՝ ուր օրինակները շատ են⁹, բայց պիտի նշեմ առաւելապէս հետեւեալ երկուքը:

«Քարոզ ի Գալուստ Ս. Հոգոյն» (տող 78-81).

Առ քեզ պաղատիմք՝ Աստուած անսկիզբն,

Ստեղծիչ շնչոց, ոգի կերպար, անձն դիմաւոր,

Որդոյ մերձաւոր, բնաւից թագաւոր, ընդ Հար միաւոր,

Որով լնուն ի տուրս պարզելի անաշտ բաշխամբ՝ բարձունք եւ ստորինք.

(ՄՀ ժԲ, էջ 671. Քյոչ., էջ 157-58):

«Ճառ Լուսոյ Խաչի» (Ա. տարբերակ).

... քանզի որքան իշխանական անձկա[յ] գալիք մարմնեղէն հանճարոյ մտաց տեսութիւնք, զանկիրն բարձրութեան գագաթան երկնի եւ զանընդունակ լայնատարր դիմաց երեսաց երկրի, բովանդակապէս տանել կարացէ:

(ՄՀ ժԲ, էջ 930.4):

Յօդը

Ըստ Փիլոնի՝ ցօղը վերին ծագում ունի, որ երկինքէն երկիր իջնալով արարչութեան բարգաւաճման կը նպաստէ: Այս երկնային նիւթը նման է «Բան»-ին՝

⁹ Օրինակ՝ «Տաղ ի Յարութիւն Ղազարոյ» (ՄՀ ժԲ, էջ 642. Քյոչ., էջ 85.40-3), «Ներբող Ի Ս. Խաչն» Ա. տարբ. 35-36, 50 (ՄՀ ժԲ, էջ 934, 936), բաղդ. Բ. տարբ. 7.44-48, 19.74-75 (ՄՀ ժԲ, էջ 946, 948), «Ներբող ի Ս. Կոյսն» Բ. տարբ. 11.31 (ՄՀ ժԲ, էջ 968):

որ ինչպէս արարչակից՝ փրկարար դեր կը կատարէ երկրի վրայ: Նոյնիսկ Փիլոնէն շատ առաջ, Ովսէի մարգարէութեան եօթանասնից թարգմանութեան մէջ (ԺԳ 6), Աստուած նմանցուած է ցօղի. նոյնպէս Իմաստութիւն Սիրաքայ եօթանասնից թարգմանութեան մէջ (ԻԳ 3, հայ.՝ 4-5), մէզը Աստուծոյ մարմնացեալ Իմաստութեան նմանցուած է, որ իրմէ երկիր կը զրկուի: Քրիստոսաբանութեան մէջ «Բան»ն ու «Իմաստութիւն»ը կը նոյնանան յանձին Քրիստոսի (Յովհ. Ա 1, 14. Ա. Կորնթ. Ա 24, 30): Հետեւաբար՝ Նարեկացւոյ մօտ ցօղը յաճախ կը ներկայացնէ Քրիստոսի Աստուածութիւնը, երկինքէն երկիր իջնալը, Կոյս Մարիամէն մարմնանալը, ծնունդը, իր մարգեղութեան անբացատրելի խորհուրդը:

Նախ Փիլոն.

Ընդէ՞ր ասէ, «Տացէ քեզ Տէր Աստուած ի ցաւոյ երկնից, եւ ի պարարտութենէ երկրի» (Ծննդ. Իէ 28):

... Ի մարդ նմանեալ միտ՞ երկնի. քանզի բանական են երկաւանչիւր մասունքն, մին աշխարհի եւ միւսն ոգոյ... եւ ցաւաւոր զմիտսն ստացելում: Եւ նշանակաբար ցաւոյն բանն է աստուածային, մեծապէս եւ վայելչաբար եւ հանդարտաբար եւ յանախակի աւգուտ առնելով առաջնորդի եւ իշխանի մտացն:

Փիլ. Լիւն. Գ 215 (Աւգ. Բ, էջ 416):

... զցաւոյն իբրեւ զսերմնական իմն բան ընկալեալ...

Փիլ. Լիւս. Ի (Աւգ. Ա, էջ 152):

Նարեկացւոյ տաղերէն շատ մը օրինակներ կարելի է տալ, ի մէջ ըլլալով «Տաղ Վարդավառին»¹⁰, սակայն հետեւեալ երեքը կը բաւեն:

«Տաղ Ծննդեան» (տող 19-21).

Առաւատուն ցաւիկն իջեալ

Ի նոր Սիոն, զծայրսըն տուեալ

Քաղցր արեւուն, արուսեկին:

(Մշ ԺԲ, էջ 634, Քյոչ., էջ 73):

Եւ դարձեալ.

«Տաղ Քառասնարեայ Գալստեան Տեան» (տող 42-43).

¹⁰ Տե՛ս «Տաղ Ծննդեան», տող 19-21 (Մշ ԺԲ, էջ 633, Քյոչ., էջ 73), «Տաղ Քառասնարեայ Գալստեան Տեան», տող 43-44 (Մշ ԺԲ, էջ 636, Քյոչ., էջ 77), «Տաղ ի Յարութիւն Ղազարու», տող 39-41 (Մշ ԺԲ, էջ 642, Քյոչ., էջ 85), «Տաղ Յարութեան» Ա, տող 25-28, Գ., տող 16-18 (Մշ ԺԲ, էջ 648, 651, Քյոչ., էջ 92, 98), «Տաղ Վարդավառին», տող 23-28 (Մշ ԺԲ, էջ 705, էջ Քյոչ. 118-19), «Տաղ Սուրբ Խաչին», տող 15-16, 23-24 (Մշ ԺԲ, էջ 735, Քյոչ., էջ 237-38), «Քարոզ Ասացեալ ի Փոխումն Ամենարհնեալ Ս. Աստուածածնին», տող 87 (Մշ ԺԲ, էջ 709, Քյոչ., էջ 206): Տե՛ս նաեւ «Տաղ Սուրբ Յարութեան», տող 2 (Ն. Պողարեան, Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ժ, Երուսաղէմ, 1990, էջ 592):

Որ լրմամբդ եղեր մեզ թողութեան ամպ,
Ամպ յամարայնոյ, ցաւ ձիւնանման մեզ ծագեցար:

(ՄՇ ժԲ, էջ 636, Քյոչ., էջ 77)

*Իսկ երրորդը Յարութեան տաղերէն, ուր երգ երգոցի մէջ յիշուած «ցաւ-
դին» կ'ակնարկուի (ե 2).*

«Տաղ Յարութեան» (տող 25-28).

Ձայն տոմ դատերացդ Սիոնի. Չի՞ լայֆ,
Չի՞ լայֆ ու աւաղէֆ, պըսակ՝ ի գլուխ իմ.
Իմ վարսս անձրեւով, ֆաղցրիկ ցաւով լի,
Լի ու լրումնաւէն զիս պսակեաց մայր իմ¹¹.

(ՄՇ ժԲ, էջ 648, Քյոչ., էջ 92):

*Թէ այս աւանդական դարձած պատկերը կը շարունակուէր միջնադարեան
Հայ գրականութեան մէջ, բաւարար է ցուցնել ԺԳ-ԺԵ դդ. հեղինակ Առաքել
Բաղիշեցոյ ծանօթ «Տաղ Բլբուլի եւ Վարդի» ոտանաւորէն, ուր բլբուլը աւե-
տաբեր Գաբրիէլ Հրեշտակապետն է ու վարդը՝ Ս. Կոյս Մարիամը. այսպէս են 4-
րդ, 5-րդ եւ 8-րդ տուները, որոնք մասամբ Նարեկացոյ «Տաղ Սուրբ Խաչին»
ոտանաւորէն ներշնչուած ըլլալ կ'երեւին¹².*

Բլբուլն ի Վարդն ասաց. – Իմ բանիս լսէ,
Որ ֆո սիրտդ իմ սիրոյս այսպէս վկայէ.
Ես ցոյ բերեմ յերկնից, որ զֆեզ զարդարէ,
Յայնժամ իմ սէքս եւ ֆոյդ միաբանեալ է:

Վարդն ի Բլբուլն զայս պատասխան առնէ.
– Վախեմ, թէ հետ ցոյոյն կայծակ իջանէ
Եւ զիմ պայծառ տերես հրով այրեսցէ,
Ծաղկանցն ամենայնի նախատիմֆ առնէ:

Բլբուլն ի Վարդն ասաց. – Քեզ ամպ լինիմ ես,
Որ ի յարեգական տօթոյն պահեմ զֆեզ.
Վերայ ֆո հովանի սիրով լինիմ ես
Եւ ֆաղցրագոյն ցոյով սնուցանեմ զֆեզ¹³:

¹¹ Վերջին տողը Ս. Կոյսէն մարմնացման կ'ակնարկէ:

¹² «Հափկ մի պայծառ կացեալ / Ի յայն խաչաթեփն վերայ... / Չաչերն արտասուամ լրնոյր՝
/ առաւատուն ցաւոյն նըման», տող 7-8, 15-16, բաղդ. տող 23-24 (ՄՇ ժԲ, էջ 735, Քյոչ.,
էջ 237-38):

¹³ Առաքել Բաղիշեցի, XV դ., ոտամնասիրոյթուն, բնագրեր եւ ծանոթագրոյթուններ *Արշա-
լույս Ղազինյանի*, Երևան, ՀՍՍՀ Գիտ. Ակադ., 1971, էջ 212-221 (տող 13-20, 30-33): Երկխօ-

Սուրբ Երրորդութեան

Սուրբ Երրորդութեան վարդապետութիւնը յաճախ դժուարիմաց տեսութիւն մըն է, որու ծագումը ցարդ դժուարաքնին է Քրիստոնէական աստուածաբանութեան մէջ: Սակայն Հելլենական շրջանի Հրէութեան մէջ, որու լաւագոյն ներկայացուցիչն է Փիլոն, այդ վարդապետութիւնը պարզապէս յառաջ կու գայ Ծննդոց գրքի ժԸ գլխի այլաբանական մեկնութենէն: Ըստ Ծննդոց՝ մինչ Աբրահամ միջօրէին իր վրանին դուռը նստած կը դիտէր, Աստուած իրեն երեւցաւ որպէս «արք երեք», որոնք իր ուղղութեամբ կը յառաջանային: Երբ նահապետը անոնց դիմաւորելու կը մօտենայ, երեքին եզակիօրէն «Տէր» կը կոչէ: Փիլոն երեքին անուններ կու տայ. մէջտեղինին «է» կը կոչէ, իսկ միւս երկուքը՝ «Աստուած» եւ «Տէր»: Փիլոն կ'եզրականացնէ, թէ հեռուէն Աստուած որպէս երեք կ'երեւի, բայց որքան Աստուծոյ մօտենանք՝ կ'անդրադառնանք, թէ Աստուած մէկ է (խորհրդաբանութեամբ՝ այս բառական խորիմաստ անդրադարձութիւն մըն է)¹⁴:

Այսպէս Փիլոն.

Ի տեսլեան երից մանկանցն, որ առ Աբրահամ, յորժամ նստէր ի միջարեփն, «եւ համբարձեալ զաչս՝ ետես», եւ այլն (Ծննդ. ժԸ 1-2):

1. Քանզի այն՝ որ համեմատեալ են յըստ Աստուծոյն իմանալոյն, մեծ ոգոցն աչացն տեսանի. քանզի էին երեւումն իմանալի արեգականն ծագեաց. եւ ժամանակատր՝ կայուն՝ փայլակմունս գարէն նառագայթիցն ընծիւղեաց. եւ ապա անստուեր ծնաւ նշոյլ զբոլոր ոգովք շուրջ լուսատուեալ. եւ ապա գեր ի վերոյ եւ ի վերայ գագաթանն կայ: Քանզի արժան ոչ ամենեցուն է, այլ որք միանգամ զերեսս իւրեանց ի վեր ձգտեցուցանեն յԱստուածայինսն հասաներ լոյս:

5. Ի վերայ երից արանցս այսոցիկ՝ ... որ ի միջոցին՝ «է», վասն զի է ... եւ ի մէջ որոցն է՝ յայտնեաց, կոչեցեալ զնոսա ֆերովբէս. Որոց զմին նուիրեալ եղեալ լինի արարչական գարութեանն, եւ ասի յիրաւի «Աստուած». եւ միսն իշխանականին եւ արայականին, «Տէր»:

Փիլ. Ած. 1, 5 (Աւգ. Բ, էջ 613-619):

Զի՞նչ է, «ետես եւ անա արք երեք կային ի վերայ նորայ» (Ծննդ. ժԸ 1-3):

Բնականագոյնս այնոցիկ՝ որք կարեն տեսանել՝ յանդիման կացուցանէ, զի եւ միումն երեք գոյ դէպ եղեւ լինել, եւ երիցն մի, քանզի այն են ըստ վեր-

սուրբան աղբիւրն է Մանկութեան Աւետարանը (Ե.1-9). տե՛ս **A. Terian**, *The Armenian Gospel of the Infancy*, Oxford: Oxford University Press, 2008, pp. 20-25:

¹⁴ Աստուծոյ երկու «գօրութիւններ»ու մասին՝ տե՛ս նաեւ Փիլ. Ել. Բ 62, 64 (Աւգ. Բ, էջ 512-13): Անկանոնական գրականութեան մէջ տե՛ս *Վերափոխումն Եսայեայ Ժ 36*:

նային բանին մի: ...զայն՝ որ առանց ուրոմ ըստ միատրութեան անկարագեալ տեսանել, ընդ նմա էացեալք անդէն վաղվաղակի առաջին զօրութեանցն, արարչականին՝ որ կոչի Աստուած, եւ արհունականին՝ որ կոչի Տէր: ...տեսանել զտէրունի եւ զուրբ զաստուածային տեսիլն ըստ այնմ՝ որ մի երեւոյթն երեւի նմա իբր երրորդութիւն, եւ երրորդութիւն իբր միութիւն:

Փիլ. Լին. Դ 2 (Աւգ. Բ. էջ 242-43):

Նարեկացոյ Ս. Երրորդութեան վարդապետութեան մասին խօսիլը էջեր պիտի պահանջէ, նա մանաւանդ իր տօնական երկերու բացման ու փակման փառաբանութիւններուն մէջ խտացուած աստուածաբանութիւնը Միասնական այդ Երրորդութեան¹⁵: Ասոնցմէ ամենաբարդը նշել հարկաւոր է:

«Տաղ Ծննդեան» (տող 1-3).

Էին աջոյ աջոյ ձեռին,

Աջոյն իւրոյ աջ ընդ աջմէ

Հար յահեկէ լուսոյն փառաց:

(ՄՀ ԺԲ, էջ 633, Քյոշ. էջ 72):

Անտարակոյս՝ խօսքը Ս. Երրորդութեան մասին է. աչինը՝ Քրիստոսն ու յահեկի լոյսը՝ Ս. Հոգին ըլլալով, զոր օրինակ խօսողը հետեւեալ տաղին մէջ (ուր Հոգեգալուստն ու եկեղեցոյ հիմնարկութիւնը կը զուգադրուին)¹⁶:

«Տաղ Եկեղեցոյ» (տող 15-18).

Ես հապա ի բաց, ես հապա ի բաց գնամ՝

Յիմ յաշխատացեալ յըղեւորէն եկեալ.

Արփիատեսիլ նառագայթիմ փայլեալ,

Ծիր ի ծիրայնոյ վառ ի վառեալ ըզդէմս:

(ՄՀ ԺԲ, էջ 695, Քյոշ., էջ 127):

Տաճարը կամ Եկեղեցին

Հրէից վաղ աւանդութեան մէջ, սկսեալ Ելից գրքէն (ԻԵ 9, 40)¹⁷, Մովսիսական Վրանը, եւ ապա Սողոմոնեան Տաճարը, երկնային սրբարանի մը օրինակով կառուցուած են: Այլաբանական մեկնութեամբ՝ վրանը եւ կամ տաճարը, իրենց ճարտարապետական մանրամասնութեամբ եւ կահաւորումով երկինքն ու երկիրը կը խորհրդանշեն, նոյնիսկ ամբողջ տիեզերքը: Նոյն այս մեկնու-

¹⁵ Ասոնց մէջ ուշագրաւ է իր «Երագգ/այ» բառին իրայատուկ գործածութիւնը «Համբարձման» տաղին («էն էին անէին») հինգերորդ տողին մէջ. «Մինն յէից զարմից յերագգայից» (ՄՀ ԺԲ, էջ 666, Քյոշ., էջ 108): Տե՛ս Ս. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, Երեւան, Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն, 1944, Ա, էջ 569:

¹⁶ Գործք Առաք. Բ 1-12, 41, 44:

¹⁷ Տե՛ս նաեւ Ելից ԻԶ 30, ԻԷ 8, Թուց Ը 4:

թիւնն է, որ եկեղեցաբանութեան խարիսխը կը կազմէ, այսինքն՝ երկրի մէջ եկեղեցին ամբողջ երկինքն ու տիեզերքը կը ներկայացնէ: Այսպիսով սուրբերը երկնային աստղեր կը նկատուին¹⁸, սրբանկարներն ալ՝ իրենց համապատկերները եկեղեցիէն ներս: Փիլոնի մօտ վրանի կամ տաճարի երկու բաժիններէն մին՝ ամենասուրբը կամ խորանը՝ երկինքը կը ներկայացնէ, իսկ սուրբ մասը՝ երկիրը: Սուրբ մասէն (կամ եկեղեցոյ նաւէն) ամենասուրբ մասը (կամ խորան) բարձրանալը՝ երկրէ երկինք անցնիլ կը նշանակէ: Այս մեկնութեան խորհրդաբանական տուեալները շատ են, ուր երկրէ երկինք անցնիլը հետ-մահու կարելիութիւն չէ միայն, այլեւ այժմեան մտային կամ հոգեւոր հնարաւորութիւն¹⁹.

Զի՞նչ է «Արասցես ըստ արիմակիմ՝ որ ցուցաւ քեզ ի լերինն» (Ելից ԻԵ 40):

Դարձեալ առակէ ի ձեռն արիմակիմ զանմարմին երկինն...:

Փիլոն մանրամասն մեկնութիւններ կու տայ իր յաջորդ հարց-պատասխաններուն մէջ, ինչպէս՝ – Զի՞նչ է խորան. Զի՞նչ է «Որոշեսցես զվարագոյրն ի մէջ Սրբոյն Սրբոց» (Ելից ԻԶ 33)²⁰, եւ յաւելեալ մեկնութիւններ «Յաղագս Բագնին Իրաց» խորագրին տակ (Զար., էջ 201-19):

Նարեկացիէն շարք մը օրինակներ կարելի է ներկայացնել, սակայն մի քանին կը բաւեն, նա մանաւանդ իր եկեղեցոյ նուիրուած տաղերէն ու գանձերէն.

«Տաղ Եկեղեցոյ» (տող 1-2).

Երկինն ի յերկիրս եւ երկիրս ի յերկինն,

Վայրէջք ի խոնարհ եւ վերելք ի բարձունս...

(ՄՇ ԺԲ, էջ 682, Քյոռ., էջ 232-34):

«Տաղ ի Եկեղեցոյ եւ ի Տանարն Սուրբ» (ամբողջութեամբ).

Զարք ի վերուստ իջեալ առ Սողոմոն արքայն,

Շինէին գտանարն, տաշէին զփայտն...

(ՄՇ ԺԲ, էջ 731-32, Քյոռ., էջ 232-34):

«Քարոզ Եկեղեցոյ» (տող 22-24, 80-82).

Իմաստագործ, անսխալաստեղծ,

Պատշաճակերտ կազմից համայնից,

Որ յսկզբնաձեռն յառաջակառոյց զայս կերպարան հրաշագարդ իրի...

¹⁸ Դանիէլ ԺԲ 3:

¹⁹ Մատեան Ողբերգութեան մէջ «Հեռի լինելով խորան ի խորանէ» (Խօսք ԺԷ Գ) երկնային խորանի եւ երկրային խորանի զուգահեռ յարաբերութեան ակնարկութիւն մըն է:

²⁰ Փիլ. Ել. Բ 83-94 (Աւգ. Բ, էջ 524-30): Բաղդատել Նարեկացոյ հետեւեալը. «Որով անայլայլակ նոյնութեամբ յաւետ ամբարձեալ գովութեամբ գերունակութիւն ի վերին վերարկու վարագործին նախագրոյ...» («Ճառ Լուսոյ Խաչին» Ա. տարբ. 14, ՄՇ ԺԲ. 931):

Բազմամասնեայ արիմակ կերպից
Ի նոյն տեսութիւն բոլոր էութեան,
Ի կերպարանս բիրատեսակս առ ի շինուած կաթողիկէի:

(ՄՇ ժԲ, էջ 676, 678, Քյոչ., էջ 164, 167):

Փիլոնի Պղատոնական հայեացքով արարչութիւնը Աստուծոյ մտածողութեամբ սկսու²¹: Նոյնը կը գտնենք Նարեկացոյ տօնական երկերուն մէջ, ուր արարչութեան պէս՝ տաճարը կամ եկեղեցին կառուցուելէ առաջ Աստուծոյ մտքին մէջ գոյացաւ.

«Տաղ Եկեղեցոյ» (տող 1-9).

Յառաջ քան շարժիցն՝ աներբ էիցըն կայք,

Աւրէն խորհրդոյ եւ հրաւիրող բարեաց.

Բանին վեր առեալ իմաստութեամբ կազմեալ,

Զերբիցն եղանիւր եթերական կամաւ:

Աննարիցըն ճարն ճարտարապետեալ եռանիսակ զարդիւք,

Խաղացմամբ ի վայր գա՛յր, հասանէր աւուրք,

Յիմաստանահօրէն՝ շառաիղէն Դայրի,

Սողոմոն արքայն, մեծ քերական պերնիւք,

Զարդարեալ ըզսա վայելչալից փառամ:

(ՄՇ ժԲ, էջ 695, Քյոչ., էջ 126):

Շուշանն ու Աշտանակը

Ինչպէս տեսանք, այլաբանական մեկնութեամբ՝ Հրէից տաճարը ամբողջութեամբ տիեզերական խորհրդանշաններ կը կրէ, նոյնպէս եւ ճարտարապետութեան ու կահաւորման մանրամասերը, օրինակ՝ վարագոյրն ու աշտանակը, շուշանաձեւ զարդերը, նոյնիսկ ծէսն ու պաշտամունքը.

Ընդէ՛ր իւրաքանչիւրումեք յոստան երեք են քակոյք տպաւորեալք ընկու-
զագարդ եւ գնդաձեւ եւ շուշան (Ելից ԻՅ 32):

²¹ «Եւ ի՞բր առնել զաշխարհ աստուած սկսեալ. անկարգապէս եւ անդասաբար եւ սխալաբար շարժեցեալ նիւթոյ, գեղեցկակարգութիւն այժմ հանդերձ զարդու ընկալեալ աշխարհի, սկիզբն գնիւթն առնո՞յր. իսկ արարիչն միշտ զսա իմանալով զարդարէր: Քանզի աստուած ոչ յառաջ իմանալ սկսաւ, այլ առնել. եւ ոչ էր երբէ՞ յորժամ աստուած ոչ առնէր, տեսակացն սկզբնութեամբ ընդ նմա եղելոյ: Քանզի կամք աստուծոյ ոչ յետոյ դէպ լինին, քանզի միշտ ընդ նմա են կամքն, քանզի բնական շարժումնն ոչ երբէք պակասեն: Եղիցի այսուհետեւ իմանալով միշտ առնել, եւ զգալեացն սկիզբն լինելոյ տուեալ. զի երկաքանչիւր ի նոցանէ ի միասին գոյացին, աստուածային խորհրդով միշտ առնել» Նիս. Ա. 7, Աւգ. Ա, էջ 5): Այս աւանդական հայեացքը կը շեշտէ Պղատոնի աշակերտ Քսենոկրատէսը (396-314 ՆՔՔ), տե՛ս **J.M. Dillon**, *The Middle Platonists, 80 B.C. to A.D. 220*, Ithaca, NY: Cornell University Press, 1977, pp. 29, 94-95:

մեծն, ժամանակ անսուտ ուրախութեան. զոր ոչ սեռն, այլ՝ զգաստ իմաստութիւն գործէ:

Փիլ. ել. Բ 15 (Ա.գ. Բ, էջ 479):

Նմանօրինակ մեկնութիւն մը կը գտնենք Նարեկացւոյ «Ներբողեան ի Սուրբ Խաչն» գովաբանութեան մէջ, ուր խօսքը պատարագազոհուած Քրիստոսի մասին է (Ա. տարբ. 59, Բ. տարբ. 26.90).

Ղամբար անշէջ եւ անստուեր բոցոյն պայծառ կիզարան, նշան ամենագով, քանզի ի քեզ մարդացեալն Տէր արտաբոյ բանակին անպարունակն էութեամբ Աստուածութեանն ամենածախ հրովն կենդանախարուկեալ²³, Անմահն անշնչութեամբ աննաոբար նեններեալ, ըստ առակաւոր զոհիցն կիզման. յարինակ զարութեան ազդման աւժանդակեալ հարպաւ հնազանդութեան անեղծն մեծութեամբ միւեցաւ կամաց բարձրութեանն հար:

(ՄՇ ժԲ, էջ 937, 949):

Ուղտն ու Մեղուն

Փիլոնի ալլաբանութեան մէջ՝ ուղտը խորհրդանիշ է յիշողութեան.

Ընդէ՞ր պատանին տասն ուղտ ի տեանն ուղտոցն առնու, եւ յամենայնէ բարեաց նորա ընդ իւր (Ծննդ. ԻԳ 21):

Տասնեակն կատարելագոյն թիւ է, եւ ուղտն նշանակ յիշատակի [կամ յիշողութեան]՝ վասն զի որոնայ զկերակուրն վերստին աղալով եւ ծասկելով: ... Եւ յիշատակ [կամ՝ յիշողութիւն] իմաստնոյն գեղեցիկ էն եւ յաղագս գեղեցկացն...:

Փիլ. Լին. Դ 92 (Ա.գ. Բ, էջ 317-18)²⁴:

Իսկ թեւաւոր միջատները կը խորհրդանշեն Աստուծմէ առաքուած օգնութիւն, եւ կամ իր զօրութիւնը յայտնաբերող միջամտութիւն.

Ընդէ՞ր ասէ, «Առաւելցից զծիաստացն առաջոյ քո, եւ հանից զըջնամիս քո» (Ելից ԻԳ 28. Աստուածաշունչն ունի «Առաւելցից առաջի քո զպիծակ...»):

Ձիաստաց յաներեւութուստ, ոչ յառաջագոյն տեսեալ՝ ի վերայ թոշին, եւ իսայթոցան խոցոտելով՝ դարձեալ անդրէն ի բաց կան... Արդ կամ ի սկզբանէ զգարավիզն աւգնականութիւնն ոչ ի բաց հատանելի է... Եւ այլաբանեալ է, զի նշանակ պարտ է համարել զծիաստացն անյոյս եւ աղէկարձում զարութեան, աստուածային առամամբ յղեալ՝ որ ի բարձանցն մեծաւ զարութեամբ ի վերայ հատուցեալ զհարուածսն, ոչ վրիպեցէ հարմամբ...:

Փիլ. ել. Բ 24 (Ա.գ. Բ, էջ 484-5):

²³ Եբր. ԺԳ 11, 13:

²⁴ Բաղդ. Փիլ. Լին. Դ 94, 106, 109, 136, 141 (Ա.գ. Բ, էջ 319-20, 328, 330, 348, 352):

Երբ նարեկացին Ա. Յովհաննէս Մկրտիչը կը նկարագրէ, հետեւելով Աւետարանի նկարագրութեան, թէ՛ Մկրտիչը ուղտի մազէ հիւսուած շապիկ կը հագնէր եւ կաշիէ գօտի, ու մարախ եւ վայրի մեղր կ'ուտէր (Մատթ. Գ 4, Մարկ. Ա 6), կենդանիները անուանելու փոխարէն ան կու տայ անոնց այլաբանական իմաստը միայն՝ այսպէս.

«Քարոզ ի Սուրբ Յովհաննէս Մկրտիչն» (տող 52-57).

Շատացեալ ծածկութիւ միով ստեւով կենդանոյն խոհականութեամբն,
Ըստ նշանակութեան կրելով մաշկեղէն գաւտի իմն ուխտից մահացու
Եւ ի պաշտան էին միշտ պատրաստ:

Հսկող իսկականին եւ տապաւ նորուն՝ տապալիչ անհաւատութեանց,
Ինքնաբերաւն շատացեալ եւ յաւելորդացն հրաժարեալ.

Խորհրդաբեր կենդանովն առ վերինսն եւ քաղցովն հաճոյ առ արէնսն
Աստուծոյ:

(ՄՇ ժԲ, էջ 657, Քյոչ., էջ 144-45):

Եղովմը

Եսաւէն սերած Եղովմէացիք Աւետեաց երկրի հարաւը հաստատուեցան գրեթէ նոյն շրջանին, երբ Իսրայէլացիք՝ Եսաւի եղբօր Յակոբի սերունդը, Սինայի անապատէն Աւետեաց երկիր մտնել փորձեցին Եղովմի ճամբով: Արգելք հանդիսանալով Իսրայէլացիներուն՝ Եղովմ կը նկատուէր Աստուծոյ ժողովուրդին առաջնակարգ թշնամին, խորհրդանիշը սատանայական բոլոր թշնամանքներու (Թւոց Ի 14-21, Ես. ԼԴ 5-15, Երեմ. ԽԹ 7-22): Բոսրա Եղովմի մայրաքաղաքն էր (Ես. ԼԴ 6, Եր. ԽԹ 13, 22), իր բնաշխարհիկ վարդագոյն ժայռերով (այժմ Յորդանանի Պետրայի շրջանը)՝ որմէ կը ծագի «բոսոր» բառը կարմրագոյն իմաստով եւ որմէ կը յառաջանայ Եսայի մարգարէին վիրաւոր-մարտիկ Մեսսիայի պատկերը (Ես. ԿԱ 1), որ նարեկացին յաճախ կը գործածէ²⁵:

Իւրաքանչիւր հեղինակէն օրինակ մը Եղովմի վատ իմաստով.

Ընդէ՞ր կոչեցաւ անուն նորա Եղովմ (Ծննդ. ԻԵ 30):

Եղովմ առեալ ի Հայ [կարդայ՝ Յոյն] լեզու՝ կոչի բոցագոյն [կամ՝ բոսրագոյն], եւ կամ հողեղէն, ընտանի անուանս եղեալ անխուզ եւ վաւաշոտ բարուցն, որ զհետ է ոչ զիրի՛ք զերկնայնոցն եւ զաստուածային իրաց, այլ զամենայն հողեղինի եւ ապականացոյի:

Փիլ. Լին. Դ 171 (Աւգ. Բ, էջ 376):

²⁵ Օր.՝ «Տալ Սրբոց Քառասնից» տող 11-12 (ՄՇ ժԲ, էջ 637, Քյոչ., էջ 79), «Տալ Յարութեան» տող 15-22 (ՄՇ ժԲ, էջ 647, Քյոչ., էջ 92), «Տալ Համբարձման» տող 17-19 (ՄՇ ժԲ, էջ 666, Քյոչ., էջ 109), «Փոխ / Հատուն, Հատուն» տող 7 (ՄՇ ժԲ, էջ 683, Քյոչ., էջ 115), «Ներբող ի Ս. Խաչն» Բ. տարբ. 3.16 (ՄՇ ժԲ, էջ 943), «Ներբող ի Ս. Կոյսն» Ա. տարբ. 70 (ՄՇ ժԲ, էջ 960), «Ներբող ի Ս. Կոյսն» Բ. տարբ. 22.69 (ՄՇ ժԲ, էջ 972):

«Ներքող Ի Սուրբն Յակոբ Մծբնայ».

Իսկ իմաստասիրապէս յեղեղեալ զկոշումն անուանդ առ ի պատկանիցն կցորդութիւն բանիս բարդութեան, ոչ է տարագիր: Քանզի Յակոբ, այսինքն է խաբող, ունող զընթացիցն գործի Եղովմայ, որ է հողեղէն, մարմնասէր, անասնակենցաղ:

(ՄՇ ԺԲ, էջ 994, 11.29-30):

Երկոտասանը

Փիլոնի մօտ թիւեր միշտ այլաբանական, խորհրդաւոր իմաստ ունին: Իր առաջին գործն էր թիւերու մեկնաբանութեան առձեռն տետրակ մը՝ որմէ միայն ու միայն հայերէն պատառիկ մը մնացած է²⁶, որու կը յաջորդէ իր «Յաղագս Տասն Բանիցն» գործը²⁷ լի թուաբանական այլաբանութեամբ: Այլ աւելի ուշագրաւ է իր «Յաղագս Արարչութեան» գրութիւնը, որու քառորդէն աւելի թիւերու մեկնութիւն է²⁸: Թէեւ այս գրութեան հայերէն թարգմանութիւն չունինք, երկը կարեւոր աղբիւր մըն էր Բարսեղ Կեսարացոյ «Յաղագս Վեցօրեայ Արարչութեան», որու հայերէն թարգմանութիւնը բաւական ազդեցութիւն ունեցած է մեր Հայրերու Ծննդոց գրքին մեկնութիւններուն վրայ: Այս ընդհանրացած ազդեցութիւնը աւելի զգալի էր Նարեկեան դպրոցէն ներս, ուր թիւերու այլաբանական մեկնութեան մեծ կարեւորութիւն կը տրուէր²⁹:

Այսպէս Փիլոն.

Յաղագս որ ի վերայ լանջացն երկոտասան ակունքն որ բանակ կոչի.

Ապա առ կրծիւն երկոտասան ակունքն բազմապատիկի գունով զանազանեալի, յերից կարգեալ շորեկարգեան, առ ի ցոյցս կենդակին տպատրեալի ... զտարւոյն ժամանակս զչորսն կատարէ, երիս բաշխելով... վասն զի ամենայն ինչ որ յերկնի է բանիւք, եւ կշռութեամբ եւ համեմատութեամբ արարեալ է եւ կարգեալ.

«Յաղագս Քահանայիցն» (Ջար. էջ 180):

Ընդէ՞ր մականունն են ակունքն տոհմապետացն՝ քանդակ ունելով կնից յանուանցն (Ելից ԻԸ 21):

²⁶ Ջարբ. էջ 222-23: Թարգմանութիւն եւ ուսումնասիրութիւն՝ **A. Terian**, “A Philonic Fragment on the Decad,” *Nourished with Peace: Studies in Hellenistic Judaism in Memory of Samuel Sandmel*, ed. **F.E. Greenspahn et al.** (Scholars Press Homage Series 9), Chico, CA: Scholars Press, 1984, pp. 173–82:

²⁷ Ջարբ. էջ 223-67:

²⁸ Մանասանդ §§47-52, 89-128:

²⁹ Ուշագրաւ է Ամանիա Նարեկացոյ «Սակս բացայայտութեան թուոց» երկը, տե՛ս Հ. Թամրազյան, *Նարեկյան դպրոցը*, էջ 198-213:

Վասն զի երկոտասան ակունքն, այնոցիկ որ ի կենդանաբերին³⁰ են, երկոտասան կենդանեացն են կերպարանք, եւ նշանակ երկոտասան տոհմապետացն...:

Փիլ. ել. Բ 114 (Աւգ. Բ, էջ 542):

Իսկ Նարեկացին.

«Ներբող ի Սուրբ Առաքեալսն».

Քառակի երիւմ գովութեամբ բարեաց բաղդատեալք, շորեմծագեան մասանց էակաց անպատկառ խաւանակք, միաբան բնութեան եղակաց...

Նշանակիրք կերպատարակք այլազան զարմի միաթիւ շարի երկակի հնգիցն եւ երկուց վարողացն եւ յարմարաց տարեր երկրի, եւ ամաց շարժութեան... Քանզի նուիրական ուն է ի սոցունց, որպէս ոչխար կատարեալ արու, եւ այլ՝ գործնական իբր զուարակ լծածիգ, կասող. եւ արհայական՝ իբր մարդադատիչ եւ առեւծ հզար: Եւ այսպիսով թուով յարմարեալ մինչեւ ի կատարեալ թիւն երկոտասան:

(ՄՇ ԺԲ, էջ 978.6, 25, էջ 983.15, 71-73):

Այս օրինակներով հանդերձ՝ Փիլոնեան ազդեցութիւնը կարելի է նկատել որպէս կրթական կեանքի կամ վանական միջավայրի ազդեցութիւն, մշակութային ժառանգ՝ մանաւանդ Նարեկեան դպրոցէն ներս³¹, որ անարգել կը թողէ հեղինակային ստեղծագործութիւնը: Այս անխուսափելի ազդեցութեան անդրադարձութիւնը միաժամանակ կ'օգնէ որոշ շահով պարզաբանել Նարեկեան դժուարահասկանալի թուող կարգ մը բարդութիւններ:

ABRAHAM TERIAN

PHILONIC PRECURSORS OF CERTAIN IMAGES IN ST. GREGORY OF NAREK

Keywords: Gregory of Narek, Philo of Alexandria, image, allegory, Hellenistic Judaism, Early Christianity, Patristics, exegetical literature.

The Philonic influence on St. Gregory of Narek is both direct and indirect. The direct influence comes from having nearly half of the Philonic corpus translated into Armenian in the sixth century, which includes works extant in Armenian only. The indirect influence is associated with the inevitable impact of Greek patristic writings translated into Armenian as of the fifth century, especially of works by

³⁰ Աստղագիտութեան մէջ «կենդակ» եւ «կենդանաբեր» հոմանիշ բառեր են (բաղդ. «կենդանակամար»):

³¹ Ինչպէս նշգրտաբար կը նկատէ Թամրազեանը՝ Հ. Թամրազյան, *Նարեկյան դպրոցը*, էջ 183-186:

the Cappadocian Fathers who were themselves influenced by Clement of Alexandria and Origen, the transmitters of the Philonic tradition of allegorical reading of the Bible. Illustrative of this influence, some ten examples are given which also help illumine hard-to-understand images in the festal works of St. Gregory of Narek: his odes, litanies, and encomia, to which these examples are limited. The allegorized images here considered include the Logos as the Image and Breath of God in humans, the dew as divine descent with implications for incarnational Christology, Trinitarian formulae, Ecclesiological / cosmological images, even mundane images of insects and the fat of sacrifices. Gregory broadens the significance of these allegorized images with perspectives of his own.

АБРААМ ТЕРЬЯН

ФИЛОНОВСКИЕ АРХЕТИПЫ НЕКОТОРЫХ ОБРАЗОВ У СВ. ГРИГОРА НАРЕКАЦИ

Ключевые слова: Григор Нарекаци, Филон Александрийский, образ, аллегория, эллинистический иудаизм, раннее христианство, Патристика, экзегетическая литература.

Влияние Филона на Григора Нарекаци двоякое – прямое и опосредованное. Прямое влияние определяется переведенной в шестом веке на армянский язык почти половиной филоновского корпуса, включающего также произведения, сохранившиеся только на армянском. Опосредованное влияние связано с неизбежным воздействием трудов греческой Патристики, которые переводились на армянский начиная с пятого века, в особенности – произведений Каппадокийских отцов, в свою очередь подвергшихся влиянию Климента Александрийского и Оригена, передатчиков филоновской традиции комментирования Библии. В статье это влияние иллюстрируется на десяти примерах, в частности способствующих прояснению трудных для понимания образов в праздничных сочинениях св. Григора Нарекаци – его одах, литаниях и панегириках, которыми ограничиваются эти примеры. Рассмотренные здесь аллегорические образы включают Логос как образ и как Вдыхание Богом жизни в человека, росу как божественное нисхождение, с отнесением его к христологии воплощения, формулы, касающиеся Троицы, экклесиологические / космологические образы, даже мирские образы насекомых и жира жертвенных животных. У Григора собственное, более широкое видение значения этих аллегорических образов.

ՀԱՅԿ ՍՐԿ. ԻԹԻԻՃԵԱՆ¹

ԴԷՊԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ ՏԱՂԻՑ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ. ԱՍՊԱՐԷՋՆԵՐ ԵՒ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Կացից յաղօթս եւ հոգով, կացից յաղօթս եւ մտօք.
սաղմոս սասցից հոգով, սաղմոս սասցից եւ մտօք:

(Ա. Կորնթ. ԺԴ. 15)

Բանալի բառեր՝ խաղաղություն, տաղ, միջնադարեան եկեղեցական բանաստեղծություն եւ երաժշտություն, ճիւղագրություն, տոհմաժառք, քննական բնագիր, տաղաշափային կառույց, եղիա Տնտեսեան:

Տաղից հրատարակութեանց պատմութիւն

Հնագոյն տպագիր հատորը, որուն մէջ կրնանք Սրբոյն տաղերէն գէթ մին գտնել՝ Յակոբ Մեղապարտի 1513-ին ի լոյս ընծայած Վենետիկոյ Տաղարանն է, որ մեր ժողովրդեան հնագոյն գիրքերէն մին է. «Մայրիկի տաղ»ը կը պարունակէ, եւ նոյնիսկ մինչեւ վերջերս՝ այս տպագիրը հնագոյն աղբիւր կը համարուէր քան հնագոյն ձեռագիր վկան²: Թէեւ այն բնագիրը բաւական խստիւ քննադա-

¹ Հեղինակը երախտապարտ է հետեւալ անձանց եւ կազմակերպութեանց՝ իրենց ազնիւ օժանդակութեան եւ գործակցութեան համար. Արուսեակ Թամրազեան եւ Մաշտոցեան Մատենադարան, Աբրահամ Տէրեան, Դանիէլ Վրդ. Ֆրնտրզեան, Լեւոն Սրկ. Ալթը եւ Ս. Ներսէս Ընծայարան, Բրշ. Ճորճ-Կիրակոս Ա. Սրկ. Լէյլիեան, Theo van Lint եւ Օֆսֆորդի Համալսարանի Արեւելագիտական Հիմնարկ, Christian Troesgård եւ Կոպենհագէնի Համալսարանի Սաֆո Հիմնարկ, Martina Pičmanová, Ն. Վ. դեսպան Տիգրան Սէրանեան, Ն. Վ. դեսպան Տիգրան Մկրտչեան, Տ. Լեւոն Պ. Արք. Զէֆեան, Հ. Եղիա, Հ. Համազասպ, Հ. Վահան, Հ. Սերովբէ, Եղբ. Ակսէլ, Եղբ. Էմանուէլ ի Վենետիկ, Հ. Պօղոս, Հ. Սիմոն ի Վիեննա եւ Միսիթարեան Միաբանութիւն, Տիգրան Զարգարեան յԱզգային Գրադարան, Երեւան, Եզէն Քինդլը եւ Լոյսմիլա Քինդլըովա, Հայոց եւ Տիեզերական Կոստանդնուպոլսոյ Պատրիարքարանի եւ Տ. Գրիգոր Ա. Քննյ. Տամատեան, Տիգրան Գոյումեան, Մելինէ Փեհլիվանեան եւ Բերլինի Ազգային Գրադարան, Տ. Զարեհ Արք. Ազնաւորեան, Կարոյեան Համալսարան որ ի Պրահա, նամանաւանդ Համալսարանիս Թօշակային Գործակալութեան Թօշակը՝ GAUK թիւ 1746214 (Յունվ. 2013 – Յունիս 2016, The music of the Armenian Hymnal), եւ համալսարանիս Փիլիսոփայական Բաժանմունքի Թօշակ թիւ VG180 (Յունվ. 2013 - Դեկտ. 2014, The music of the Armenian Hymnal: the 19th-century Western Armenian School, its international context, issues of notation and of performance practice): Ս. Ղազարու ձեռագրատան գանձերէն ֆաղուած նկարները հեղինակին կողմանէ նկարուած են, եւ այսու կը վերատապանուին Միսիթարեան Միաբանութեան ազնիւ արտօնութեամբ:

² Կացութիւնը միայն վերջերս փոխուեցաւ. այս մասին՝ տե՛ս **Utidjian, H.**, “On the Printed Sources of the ‘Ode of the Little Cart’ ”, *Parrésia* 7 (2013), էջ 185-203, **Utidjian, H.**,

տուած է³, այնուհանդերձ (ինչպէս եւ պիտի տեսնենք ստորեւ) օգտաշատ եւ ուսանելի աղբիւր մըն է: Որպէս անդրանիկ հրատարակութիւն Սրբոյն տաղից գէթ գրեթէ մէկ կիսուն՝ պէտք է համարինք Աղօթամատոյց պատկերագրողեալ հատորիկը (Վենետիկ 1804): Քիչ թէ շատ ամբողջական հաւաքածոները շուտով յաջորդեցին՝ նախ 1827-ին⁴ եւ այնուհետեւ 1840-ին⁵: Այս վերջինը աւելի ամբողջական էր, թէ՛ իր պարփակած տաղից թիւով, եւ թէ՛ անոնց տանց ամբողջականութեան տեսակէտով:

Այն շնչին փոփոխութիւններով վերարտադրուեցաւ Ա. Մխիթարեանի հրատարակութեան մէջ (1957)⁶: Յաջորդը Ա. Քէօշկերեանի 1981-ի հրատարակութիւնն էր⁷ Մաշտոցեան Մատենադարանի եւ Փարիզի Ազգային Գրադարանի հնագոյն ձեռագրաց համեմատութեամբ, սակայն բաւական յենելով նաեւ Վենետիկոյ 1827-ի եւ մանաւանդ 1840-ի հրատարակութեանց աւանդին վրայ եւս⁸: Ճշգրտօրէն կատարուած աշխատանք մըն է, որմէ որոշ լրացմանց համար օգտուեցաւ նաեւ հոգելոյս Տ. Զարեհ Արք. Ազնաւորեան⁹, թէեւ Վենետիկոյ 1840-ի բնագրաց նախընտրութիւն ընծայելով: Մատենագիրք Հայոցի Հրաշեայ Թամրագեանի խմբագրութեամբ Նարեկացու նուիրուած հատորը Քէօշկերեանի բնագիրները կը վերարտադրէ¹⁰: Սակայն՝ նոյն տարին լոյս տեսած Մատենագիրք Հայոցի Գանձարան յորջորջուած հատորները¹¹ տարբեր բնագիրներ

“On the Early Venetian Manuscripts of the ‘Ode of the Little Cart’ ”, *Parrésia* 7 (2013), էջ 205-228, եւ **Utidjian, H.**, “Textual Observations on St. Gregory of Narek’s ‘Ode of the Little Cart’ ”, *ԲՄ* 21 (2014), էջ 487-502:

³ Զոր օրինակ, Van Lint զայն «պակասատ» (“defective”) աւանդութեան մը արտադրութիւնը կը համարի (տե՛ս van **Lint, T. M.**, “Grigor Narekac‘i’s Tał Yarut‘ean: The Throne Vision of Ezekiel in Armenian Art and Literature I”, *V. Calzolari Bouvier et al.*, խմբ., *Apocryphes arméniens: transmission – traduction – création – iconographie*, Lausanne: Éditions du Zèbre, 1999, էջ 105-127: Իսկ Քէօշկերեան զայն «զգալի շափով աղնատուած» կը յորջորջէ. տե՛ս **Գրիգոր Նարեկացի**, *Տաղեր եւ Գանձեր*, աշխ. *Արմինէ Քէօշկերեան*, Երեւան, 1981, էջ 251:

⁴ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնը, Վենետիկ, 1827:

⁵ Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնը, Վենետիկ, 1840:

⁶ **Գրիգոր Նարեկացի**, *Տաղեր*, աշխ. եւ թրգմ. *Արշակիր Մխիթարեան*, Երեւան, 1957:

⁷ **Գրիգոր Նարեկացի**, *Տաղեր եւ Գանձեր*, աշխ. *Արմինէ Քէօշկերեան*, Երեւան, 1981:

⁸ Ըստ մեր կարծեաց՝ Քէօշկերեանի կողմանէ Վենետիկոյ հրատարակութեանց ընծայուած կշիռը արդարացի էր:

⁹ **Ս. Գրիգոր Նարեկացի**, *Մատենան Ողբերգութեան եւ այլ երկասիրութիւնը*, հազարամեակի հրատարակութիւն, աշխ. *Զարեհ եպս. Ազնաւորեան*, Անթիլիաս, 2003:

¹⁰ *Մ*2, ԺԲ. հատոր, **Գրիգոր Նարեկացի**, խմբ. *Հրաշեայ Թամրագեան*, Անթիլիաս, 2008:

¹¹ *Գանձարան*, Գիրք Ա., *Մ*2, հ. ԺԳ. եւ Գիրք Բ, *Մ*2, հ. ԺԵ., աշխ. *Դերիկեան, Վ.*, Անթիլիաս, 2008: Մենք կը շարունակենք վերապահ մնալ «տաղ, մեղեդի, յորդորակ, փարոզ, զանձ» միատունեէ բաղկացած «կանոններ» պարունակող «զանձտետ» մատենաներու Սրբոյն

կը պարունակեն, համեմատութեանց համար նկատի առած ըլլալով նաեւ Վնտկ. 2070 (1348 թ.) փառաւոր «Տաղարանը», Մաշտոցեան Մատենադարանի կարեւորագոյն աղբերց առընթեր. դժբախտաբար, սակայն, այն դուրս ձգած է Սրբոյն «Սայլիկի տաղ»ը, որ «արտագանձարանային» յորջորջուած էր Մատենագիրքի ժՔ. հատորին մէջ:¹²

Վերջին տասնամեակներու հրատարակութեան մեթոդները՝ գէթ մասնակիօրէն նկարագրուած են համապատասխան հատորներու յառաջաբաններուն մէջ: Սակայն ուսումնասիրութեան կը կարօտի մեր հնագոյն տպագրեալ հաւաքածոներու ծագումը: Ինչպէ՞ս կազմեցին ուրեմն Մխիթարեաններ իրենց բնագիրները:

Իր յօդուածին մէջ (ուր պարականոն բնագրաց ժՔ. դարու վերջաւորութեան եւ Ի. դարու սկզբնաւորութեան Մխիթարեան հրատարակութեանց մասին կ'անդրադառնայ) *Valentina Calzolari* «շատ դիւրաւ ամփոփելի սկզբունքներու վրայ հիմնուած» կը համարի անոնց մեթոդը¹³: Սակայն նարեկացոյ տաղից պարագան բաւական կը տարբերի, եւ չենք գիտեր, թէ ինչպիսի՞ աղբիւրներ օգտագործուեցան, եւ ի՞նչ եղանակաւ կիրարկուեցան:

Հետաքրքրական է Ս. Ղազարու վերոյիշեալ հրատարակութիւնները բաղդատել Հատուն տաղի պարագային¹⁴: 1804-ի եւ 1827-ի հրատարակութիւնները տաղիս միայն ինը տունները կը պարունակեն, մինչ 1840-ի հատորը բոլոր տասներեքն ալ կ'ընդգրկէ: (1804-ի Աղօթամատոյցը հնագոյն ձեռագրաց

ժամանակին ենթադրական գոյութեան մասին (որ բաւական զգուշաւոր կերպիւ առաջադրուած էր Քէօշկերեանի կողմանէ իր հատորին յառաջաբանին մէջ):

¹² Տե՛ս էջ 727. սակայն, ինչպէս պիտի տեսնենք ստորեւ՝ այս տաղը ընդգրկող առ նուազն մէկ միջնադարեան Գանձարան հասած է մեզի. ուստի «արտագանձարանային» յորջորջումը սխալական է:

¹³ Տե՛ս **Calzolari, V.**, “Christian Apocrypha in Armenian”, *Comparative Oriental Manuscript Studies: An Introduction*, աշխ. **Alessandro Bausi** եւ աշխատակիցներ, ընդհանուր խմբ.՝ **Eugenia Sokolinski**, COMSt: Hamburg, 2015, էջ 373-376, մասնաւոր էջ 374. “The editorial methods and practices adopted by the Mekhitarist Fathers are based on principles that are very easy to sum up: the choice of a base manuscript, called the *bnagir*, and the conservative editing of a single manuscript text (best manuscript method) ; the preparation of a very succinct apparatus offering imprecise indications of readings of auxiliary manuscripts (*ōrinak mē* ‘an exemplar’, *miws ōrinak* ‘another exemplar’) ; and a study almost exclusively of the manuscripts of the easily accessible Venice collections”:

¹⁴ Համապատասխան հրատարակութեանց Ազգային Գրադարանի օրինակներէ նկարուած պատշաճ էջերու բարձրորակ լուսատիպ վերատպագրութեանց համար՝ տես **Իսփինեան, Հ.**, Հայ գրքարուեստը դարերու ընդմէջէն. Որք գծորանս Հոգւոյն արբին, Mervart, 2016, էջ 107-108 (Աղօթամատոյց, 1804, էջ 280), էջ 113-114 (Մատենագրութիւնք, 1827, էջ 383) եւ էջ 114-115 (Մատենագրութիւնք, 1840, էջ 475):

աւելի հաւատարիմ մնալով «արթընացեալ» եւ «տատըրակին» տարընթերցուածները կը պահպանէ, մինչդեռ նորագոյն երկու հատորները զանց առած են փուշ խազը կրող այդ երկու «ըթ» ձայնաւորները, նախընտրելով «արթնացեալ» եւ «տատրակին»): Կարելի է ուրեմն ակնկալել, թէ Ս. Հարք՝ գրչագիր աղբերց աստիճանաբար հարստացող հաւաքածոյ մը ունենալով՝ կարողացան աւելի լման տարբերակներ ընտրել ժամանակի ընթացքին: Այս տեսակէտով անշուշտ մեծապէս կրնանք օգտուիլ Մայր Յուցակէն¹⁵. ուր որ հնարաւոր էր, նշուած է, թէ տուեալ մատեան մը ո՛ր տարին Միաբանութեան սեփականութիւնը դարձած է, եւ ուսկից: Սակայն ըստ երեւոյթի՝ (1) Ս. Հարք ձեռագիր աղբիւրներ ունէին, որոնք չեն օգտագործուած, իսկ միւս կողմանէ՝ (2) տպագրութեանց մէջ տարբերակներու կը հանդիպինք, զորս չենք գտներ Ս. Ղազարու ձեռագրաց մէջ: Ինչպէ՞ս բացատրել այս գոյգ երեւոյթները:

Նախ՝ Մատենագրութիւնի հատորները Սրբոյն բոլոր ծանօթ գործերը կ'ընդգրկէին եւ ոչ միայն տաղերը, եւ անտարակոյս տարիներու աշխատանքի արդիւնքն են: ԺԸ. դարուն Պոլիս լոյս տեսած Տաղարանները հազիւ տաղից միայն առաջին մի քանի տողերը կը վերարտադրէին, եւ մնացեալ տուները հաւանաբար մոռացութեան մատնուած էին¹⁶: Նոյն երեւոյթին կը հանդիպինք ժամանակակից ձեռագիր Տաղարանաց պարագային եւս¹⁷: Թերեւս պէտք չէ ակնկալել, որ աշխարհի զանազան կողմերէն աստիճանաբար հաւաքուող բոլոր ձեռագիրները կարենային նկատի առնուիլ — նամանաւանդ տաղից պարագային, որոնք զանազան հաւաքածոներու մէջ ցիր ու ցան կը գտնուին: Նոյնիսկ երբ մէկէ աւելի աղբիւր ձեռքի տակ ունէին, հնարաւոր չէր բոլորը պրպտել եւ համեմատել, նամանաւանդ երբ նկատի առնենք, որ Տաղարաններու եւ Գանձարաններու մանրամասն պարունակութիւնները հաւանաբար տակաւին ցուցակագրուած չէին (ինչպէս Մատենադարանի ձեռագրացուցակների մէջ), եւ ոչ ալ այսօրուայ թուայնացման արտօնած դիրութիւնները տրամադրելի

¹⁵ Տե՛ս Հ. Սահակ Վրդ. Ճեմեմեան, Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Միթարեանց Ի Վենետիկ, Կ. Ս., Յայսմաւորք — Գանձարան — Տաղարան — Տօնացոյց, Ս. Ղազար, 1995:

¹⁶ Տե՛ս, զոր օրինակ, Տաղարան վայելուչ եւ գեղեցիկ (1701), Գիրք Դպրութեան եւ Տաղարան (1723-1724), եւ Գրքուկս որ կոչի Տաղարան (1740): Հատուն տաղի միայն առաջին երկու տուները կը գտնուին (համապատասխանաբար՝ էջ 116-117, էջ 12, եւ էջ 16): Հաւանաբար, Ս. Պատարագի ընծայից պատրաստութեան ժամանակի ընթացքին (որոնց համար այս տաղերը նախատեսուած են), բաւական ծանրացած եւ զարդարուն դարձած եղանակներով կատարուելով՝ առաջին երկու տուները արդէն բաւարար էին ծիսական կիրարկման գործնական տեսակէտով:


¹⁷ Տե՛ս, զոր օրինակ, Հատուն տաղի պարագային՝ Վիեն. 176 (ԺԸ. կամ ԺԹ. Գ.) «Տաղարան»ը («Փոքր հաւաքում զանծոց եւ մեղեդեաց»), քք. 38բ-39ա, եւ Վնտկ. 1835 չֆնաղ «Տաղարան»ը (1786 թ.), թ. 12ա, ուր նոյնպէս միայն առաջին երկու տուները կը գտնուին:

էին: Իսկ դատելով նոյնպէս 1827-ին լոյս տեսած երկու լուծմանց հատորներէն¹⁸ Ս. Հարց ճիգերը կեդրոնացած էին Մատեան Ողբերգութեան աղօթագիրքին եւ Սրբոյն այլ երկարաշունչ գործոց վրայ: Այնուհանդերձ՝ անոնք կը ջանային արագ հակազդել աննախատեսելի նորութեանց. դիպուկ օրինակ մը կը գտնենք ՆԲՀԼի¹⁹ յաւելուածին մէջ, որ բառեր կը պարունակէ, որոնց աղբիւրները մատչելի չէին տակաւին, երբ Բառգիրքի գլխաւոր մասը կը գրուէր: (Ի դէպ՝ այդ յաւելուածը եւս Նարեկացոյ բառամթերքէն նորագիւտ նմոյշներ կը ներմուծէր):

Երկրորդ՝ Վնտկ. 638 (1485 թ.) «Գանձարանի» վերջաւորութեան (գոր 1831 թ. ստացան) թերթ մը գետեղուած է 1827-ին գրուած: Ան Սրբոյն «Սայլիկի տաղ»ի մէկ ընդօրինակութենէն կը բաղկանայ, որուն հետեւեալ գրութիւնը կը յաջորդէ (տե՛ս նկ. 1).

¹⁸ «Նարեկլուծ»ի 1827-ի երկրորդ հրատարակութիւնը՝ Նարեկ աղօթից համառօտ եւ զգուշաւոր լուծմամբ, Հ. Գաբրիէլ Աւետիքեանի աշխատասիրութեամբ, բաւական ընդլայնած եւ բարելաւուած է բաղդատմամբ 1801-ի առաջին հրատարակութեան. իսկ 1827-ի Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Նարեկացոյ երկրորդ մատեան ճառից (պակաս ծանօթ, քան «Նարեկլուծ»ը), նոյնպէս աշխատասիրուած Հ. Գաբրիէլ Աւետիքեանի կողմանէ, զանց առած է տաղերը, միայն ներբողներուն եւ երեք գանձերուն ծանօթագրուած բնագիրներէն բաղկանալով:

¹⁹ Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, աշխ. Հ. Գաբրիէլ Աւետիքեան, Հ. Խաչատուր Սիրմէլեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, Ս. Ղազար, հտ. Ա., 1836, հտ. Բ. 1837. տե՛ս մանաւանդ Բ. Հատորի վերջաւորութեան «Մնացորդ նորագիւտ բառից եւ վկայութեանց յատուտ տպագրութեան ի վեր երեւոյ» (էջ 1041-1059): Սրբոյն տաղերէն քաղուած հետեւալ բառերը, որոնք մուտք չէին գրած բառարանի գլխաւոր բաժնին մէջ՝ ահա այս «Մնացորդ նորագիւտ բառից» յաւելուածի շնորհիւ մուտք գործեցին ՆԲՀԼի մէջ. *ակումբ առնուլ, աղետակոծ, աղբրագոյ, աղբրաստոր, արդինալուր, արթնաչեայ, արծուաթոխ, արփիազարդեալ, արքունաճեմ, բոսորային, դիմառ, դիմիւ ելանել, եղակ, եղաւորիմ, եռաստօխ, երագահասք, երագայից /յեռագայից, երիգապարգեւ, երիցօրեայ, երկնաշաւիղ, երփն առ երփին, երփնաթերթ, եօթնատես, լիուլլումնօրէն, խանդագորով լինել*: Սակայն ստուգելի կը մնայ՝ եթէ այս հանգամանքը կրնայ իբր ապացոյց ծառայել, որ Մատենագրութիւնքը կազմողին կամ կազմողներուն համապատասխան տաղերը 1827-ին յիշուի տակաւին անծանօթ էին կամ ոչ: Զոր օրինակ՝ «արծուաթոխը սրբնբացք» կը գտնենք, «երկինք ի յերկինս» տաղին մէջ (Մատենագրութիւնք, 1827, էջ 385): Սակայն միւս կողմանէ՝ վերոյիշեալ բառերու մեծամասնութիւնը վկայող տաղերը, գոր օրինակ՝ «Ղազարու Յարութեան», անկէ կը բացակային:



Նկ. 1
Միֆայել Բասրացոյ 1827-ի գրութիւնը

«Եւ ահա ըստ հրամանի յարգոյ եւ բանասէր ցանկալի եղբօրդ մերում, գիտնական եւ խոհեմ Յօհաննէս քաջ ուսումնասիրիդ, գաղափարեցի զայս մանուածոյ եւ միին երգս երանաշնորհ սրբոյն Գրիգորի Նարեկացույ արարեալն, զոր հոգեկիր արանց իմաստնոց միայն հասկանալի է. ուրեմն ընկալեալ քո զայս՝ ուրախութեամբ վայելեալ: Եղբայրութեանդ՝ մնամ նուաստ ծառայ՝ Միքայէլ Բասրացի»:

Ի՞նչ կրնանք հետեւցնել: Հ. Սահակ Ճեմճեմեանի պատմական ակնարկէն²⁰ յայտնի է, որ Միսիթարեաններ մեծ զոհողութեանց գնով կը ջանային զանազան տեղերէ գրչագիրներ ապահովել, անձնապէս եւ կամ ներկայացուցիչներու միջոցաւ Պատմական Հայաստանի զանազան կողմերը պտըտելով, եւ թէեւ երբեմն որոշ մատեաններ իբր նուէր կը ստանային կամ կը գնէին, սակայն երբեմն ալ իրենց շէր արտօնուէր ձեռագիրները Միաբանութեան համար ապահովել: Ըստ երեւոյթի՝ այսպիսի պարագաներուն, միաբանակիցներ կամ անոնց գործակիցները կը ջանային ձեռագիրները եւ կամ անոնցմէ բաղձալի հատուածներ՝ արտագրել եւ Ս. Ղազար ուղարկել: Վերոյիշեալ Միքայէլ Բասրացույ

²⁰ Տե՛ս Հ. Սահակ Վրդ. Ճեմճեմեան, Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Միսիթարեանց ի Վենետիկ, Ս. Ղազար, հտ. Դ., 1993, էջ Ա-ԽԷ, հտ. Ե., 1995, էջ Ա-ԺԸ եւ հտ. Զ., 1996, էջ Բ-ՁԱ:

յղած ընդօրինակությունը եւ նամակը պերճախօս օրինակ մը կը հանդիսանան երեւոյթի մը՝ որ կրնայ ցարդ կարծուածէն շատ աւելի տարածուած ըլլալ Ս. Հարց մեթոդաբանութեան մէջ: Շատ հաւանական է, որ տպագրեալ խմբագրութիւնները նաեւ օգտուած ըլլան այսպիսի աղբիւրներէ. եւ դժբախտաբար՝ շատ մը այսպիսի ձեռագիրներ ամենայն հաւանականութեամբ չպահպանուեցան: Ահա թէ ինչու կ'արժէ յատուկ կշիռ ընծայել Միսիթարեանց տպագիր հրատարակութեանց:

Իրդապատճառներ նոր հրատարակութեան, եւ հրատարակութեանց տեսակներ

Մեր առաջին ձգտումը՝ գոհացուցիչ բնագիր մը ունենալ էր, ի խնդիր Սրբոյն տաղից առաջին Չեխերէն թարգմանութեան²¹: Նախ՝ յատուկ բաժիններու թարգմանութեան համար ստիպուեցանք ձեռագիրներ որոնել, նոր տարբերակներ գտնել եւ արժեւորել, եւ յետաձգելով թարգմանութեան ամբողջացումը՝ նոր բնագրի կազմութեան առաջնահերթութիւն ընծայեցինք, իբր անհրաժեշտ նախապայման թարգմանութեան:

Յարդ տպուած հրատարակութեանց անպատեհութիւնները

Առկայ հրատարակութեանց բնագիրները խնդրական են: Միակ յստակօրէն նշուած ձեռագրաց հիման վրայ կազմուած ամբողջական հրատարակութիւնը Քէօշկերեանինն էր, ուստի կ'արժէ ատոր վրայ կեդրոնանալ: Ատիկա ընտրողային (eclectic) հրատարակութիւն մըն է, այսինքն՝ տեսակ մը խճանկար մը, որ ըստ խմբագրի դատողութեան կամ ճաշակին՝ մերթ ընդ մերթ այս կամ այն ձեռագրի տարբերակները որդեգրած է բնագրի մարմնոյն մէջ, սակայն միշտ նշելով միւս ընտրեալ աղբերց տարբերակները: Տեսականօրէն՝ այդ ծանօթագրութեանց հիման վրայ կարելի պիտի ըլլար բոլոր օգտագործուած ձեռագրաց բնագիրները վերակառուցանել, որոշ սահմանափակումներով:

Դժբախտաբար, սակայն, ի տարբերութիւն Մատեան Ողբերգութեան աղօթագիրքին՝ մեզի հասած հնագոյն ձեռագիրը²² արդէն իսկ քառորդ հազարամեակի հեռուորութիւն ունի Սրբոյն կեանքէն, իսկ երբեմն շատ աւելի²³, մանաւանդ որ, ըստ երեւոյթի՝ Քէօշկերեան զրկուած է Վենետիկոյ խիստ կարեւոր

²¹ Նոր բնագրաց հիման վրայ վերատեսակ թարգմանութիւնները իբր յաւելուած նպատակ ունին ամփոփելու մեր գրքին մէջ, որ լոյս տեսնելու է հետեւալ խորագրով. Utidjian, H., *Svĕtec básnik: svatý Řehoř z Nareku*, Koniasch Latin Press, Praha, ISBN 978-80-87773-47-5:

²² Մեզի ծանօթ հնագոյն Տաղարանը (որ Հաւուն արժընացեալ տաղը կը պարունակէ) Փրգ. 79 է (1241 թ., Իրագարկ):

²³ «Սայլիկի տաղ»ը այս տեսակէտով ծայրայեղ պարագայ մըն էր: Քէօշկերեան կը գրէր «Տաղի հին օրինակներ չեն պահպանուած: Վաղագոյնները ժէ դարից այն կողմ չեն անցնում եւ բոլորն էլ աղասաղումներով» (էջ 252):

Տաղարաններէն եւ Գանձարաններէ օգտուելու կարելիութենէն. ատկէ զատ՝ տաղից սկզբնաղբիւրները բաւական աւելի խնդրական են, քան Մատեանիները, եւ տաղից մի քանին՝ նոյնիսկ բերանացի փոխանցման հետքեր կը կրեն:

Վերոյիշեալ դժուարութեանց նաեւ որոշ անպատեհութիւններ կու գան բարդուիլ: Հրատարակութիւնը ի սպառ անտեսած է խազագրութիւնները. ինչպէս պիտի տեսնենք՝ թէեւ խազերը անհասկնալի դարձած են, սակայն մեզի անուղղակի տեղեկութիւններ կրնան հաղորդել: «Ըթ» ձայնաւորի կիրարկումը բնագրին մէջ հաւատարմօրէն արտացոլուած չէ. յաճախ անոնք ըստ կամս զանց առնուած են, երբ նոյնիսկ բոլոր ձեռագիրները զանոնք ունին (զոր օրինակ՝ «Հաւուն արթընացեալ»): Իսկ երբեմն՝ ընտրողական մեթոդը գործադրուած է մասամբ մեքենականօրէն, առանց բնագրի ամբողջական հասկացողութեան: Օրինակ՝ «Սայլիկի տաղ»ի մէջ շարականային ընդմիջարկութիւններ կան՝ «Փառք քրիստոսի ամենագոր յարութեանն» ԴԿ ՏԵՐ յԵՐԿԱՅԻԳ Յարութեան շարականէ (տե՛ս Շարական Ձեռագ, Անթիլիաս 1997, էջ 501-502): Վենետկոյ 1513-ի հրատարակութիւնը այդ պատճառաւ կը գոհանայ միայն կիսատ մէջբերում մը կատարելով («Այսար անուշահոտ բուրմ: ») այն ակնկալութեամբ, որ երգող դպիրը պիտի ճանչնայ շարականի յղումը եւ գոց (եւ կամ շարակնոցն ի ձեռին) այդ տունը կարենայ երգել: Քէօշկերեան սակայն իր բնագրին մէջ ունի «Ի յառեղէն առեալ շարժումն գունդն սայլին, / Այսար անուշահոտ բուրմամբ ընթանայ:», իսկ ծանօթագրութեանց մէջ՝ նաեւ հետեւալ տարբերակը. «Այսօր անուշահոտ բուրմամբ ընթանայ / Յառեղէն առեալ շարժուն գունդըն սայլին. »: Եթէ նմարած ըլլար տաղի առնչութիւնը վերոյիշեալ շարականին հետ, պիտի անդրադառնար, թէ խնդրոյ առարկայ հատուածը սկզբնաւորութիւնն է երրորդ տան. «Այսօր անուշահոտ բուրմամբ ընթանային սուրբ կանայքն, տեսանելով ըզհրեշտակն արեգակնակերպ փայլմամբ ի վերայ վիմին գոչէր ասելով. փառք քրիստոսի ամենագոր յարութեանն: », եւ, ի միջի այլոց՝ «ընթանայ» կամ «ընթանայ» սղագրութիւններ են անցեալ անկատար յոգնակի «ընթանային» ձեւին: Դժբախտաբար, սակայն, այս տաղի Քէօշկերեանի բնագիրը անգործածելի կը դառնայ իր ներկայ վիճակով, ստիպելով վերադառնալ Վենետկոյ գրեթէ երկու դար հին հրատարակութեան²⁴:

²⁴ Իր յօդուածին մէջ (Աբգարեան, Գ., «Վերձանոսիւն Գրիգոր Նարեկացու Յարութեան տաղի», էջմիածին, 1974 Ա., էջ 42-48, եւ 1974 Բ., էջ 39-48) Աբգարեան նշմարած է այս տողին ծագումը (տե՛ս 1974 Ա., էջ 48), թէեւ չէ անդրադարձած, թէ շարականին ամբողջ տան յղում մըն է. դժբախտաբար Քէօշկերեան՝ այս յօդուածը մէկ այլ առնչութեամբ իր ծանօթագրութեանց մէջ (էջ 253-254) նկատի առնելով հանդերձ՝ չէ օգտուած այս տեսակէտով:

Մատեան Ողբերգութեանի սովետահայ հրատարակողները առաւելութիւն մը եւս ունէին²⁵: Թէեւ իրենք ալ Աստուածաբան կամ երաժշտագէտ չէին, սակայն Մատեանի պարագային ձեռքի տակ ունէին մանրամասն լուծումներ, մանաւանդ Նալեան Պատրիարքի²⁶ եւ Հ. Գաբրիէլ Աւետիքեանի վերոյիշեալ աշխատանքները, ինչպէս նաեւ Թորգոմ²⁷ եւ Գարեգին²⁸ Պատրիարքներու Աստուածաշնչային յղմանց ցանկերը. իսկ ի տարբերութիւն Մատեանի՝ տաղերը այսպիսի օժանդակ գրութիւններով օժտուած չէին, մինչ խազաւորումները²⁹ եւ ծիսական ազգակները³⁰ շատ աւելի կարեւոր են տաղից՝ քան Մատեանի պարագային:

²⁵ Գրիգոր Նարեկացի, *Մատեան Ողբերգութեան*, աշխ. Պօղոս Մ. Խաչատրեան եւ Արշալոյս Ղազինեան, Երեւան, 1985:

²⁶ Յակոբ Նալեան Պատրիարք, *Գիրք Մեկնութեան Աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ*, Կոստանդնուպոլիս, 1745:

²⁷ Գրիգոր Նարեկացի, *Նարեկ Աղօթամատեան Ս. Գրիգոր Նարեկացւոյ*, թրգ. Թորգոմ Եպ. Գուշակեան, Անթիլիաս, 1970. վերահրատակում Կոստանդնուպոլսոյ 1926-ի հրատարակութեան:

²⁸ Ս. Գրիգոր Նարեկացի, *Նարեկ Մատեան Ողբերգութեան*, աշխ. եւ թրգ. Գարեգին Արք. Խաչատրեան («Տրապիզոնի»), Հալէպ, 2003, վերահրատակում Պոլսոյ Այրէսի 1948-ի հրատարակութեան:

²⁹ Տաղից բոլոր միջնադարեան ձեռագիրները խազաւորուած են. ընդհակառակը՝ ըստ երեւոյթի *Մատեանի* շատ փոքրաքանակ եւ յարաբերաբար նոր ձեռագիրներ միայն առողջութեան, եւ հազուադէպօրէն խազաւորուած մի քանի բաժիններ ունեն: Օրինակ՝ Բան ՁԱ.-ի երկրորդ մասի վերջաւորութիւնը, ուր հրեշտակներ մարդկութեան փրկութեան համար Աստուծոյ կ'աղերսեն («Ողորմեա՛, դո՛ւ ստեղծե՛, մի՛ կորուսանե՛», հազարամեակի հրատ., էջ 367), գոր կը գտնենք ՄՄ 2089 (1645 թ., թ. 240ա). եւ կամ մի քանի հատուածներու աւարտի «Ամէն»-ները, գորս կը գտնենք 1417 թ. մէկ այլ ձեռագրի մէջ (մանրածապալէն 447): Տե՛ս Թահմիզեան, Ն., *Գրիգոր Նարեկացին եւ Հայ երաժշտութիւնը Ե.-ԺԵ. դդ.*, էջ 74-75, եւ Շահնազարեան, Ա., *Միջնադարեան խազարուեստը Հայ երաժշտական մշակոյթի համակարգում*, հ. Ա., Երեւան, 1990, էջ 667-668:

³⁰ *Մատեան Ողբերգութեանը* մեծաւ մասամբ առանձնական աղօթից համար գործածուած է, բացառութեամբ Բան ԼԳ.-ի Ս. Հոգւոյ ուղղուած աղօթքին, որ Պատարագիչի կողմէ արտասանուած է առ նուազն ժԲ. դարէն ի վեր (տե՛ս *Խորհրդածութիւն Սրբազան Պատարագի բացատրութեամբ Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ Արք. Եպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոյ*, Երուսաղէմ, 1842, էջ 9-16), եւ մի քանի այլ հատուածներէ (ժԲ., ՂԱ.), որոնք հաղաղական ժամերգութեան առթիւ օգտագործուած են, դատելով որոշ ձեռագրաց ցանկերէ (տե՛ս Խաչատրեանի եւ Ղազինեանի հրատարակութեան «առաջաբան»ը, մանաւանդ էջ 157-168), իսկ, ըստ մեր ժամագրոց՝ ներկայիս Հանգստեան ժամերգութեան ընթացքին կը գործածուին Բան ժԲ., ԽԱ, ՂԳ. եւ Ձ: (Մատեանի համարակալութեան տարբերութեանց պատճառով՝ Երուսաղիմայ ժամագրոց մէջ՝ գոր օրինակ՝ Անթիլիասի 1969-ի եւ 1986-ի, եւ Երուսաղիմայ 2003-ի վերապրութեանց էջ 659, ուր Բան ՂԳ.-ը «Բան ՂԳ.» կոչուած է, նմանապէս՝ ստուգման արժանի կէտ մըն է, եթէ վերոյիշեալ ցանկերու Բան ՂԱ.-ն եւ մեզի ծանօթ Բան ՂԳ.-ը կրնան երկուքն ալ նոյն՝ «Աստուած յալիտենական» հատուածին վերաբերիլ, ինչ որ անհասանակական չենք համարիր: Իսկ Խաղաղականէ նորագոյն Հանգստեանի անցման մասին՝ տե՛ս Հ. Վարդան Հացունի, *Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին*, Վենետիկ,

Սակայն Նարեկացու տաղերը մանրամասն ուսումնասիրութեան արժանացած են վերջին մի քանի տարիներու ընթացքին: Հենրիկ Բախչինեանի ծանօթագրուած Արեւելահայերէն թարգմանութիւնը³¹ դասական ուղղագրութեամբ, ցարդ իր տեսակին լաւագոյնն է անտարակոյս: *Jean-Pierre Mahé*-ի նոր Ֆրանսերէն թարգմանութիւնը³² նոյնպէս մեծապէս կը գերազանցէ նախորդ փորձերը: Իսկ ըստ մեր կարծեաց՝ այս երկուքին յաջորդող Աբրահամ Տէրեանի ծանօթագրութեամբ եւ վերլուծմամբ օժտուած Անգլերէն թարգմանութիւնը³³ իր կարեւորութեամբ զուգահեռ մը կը հանդիսանայ Հ. Գաբրիէլ Աւետիքեանի կոթողային «Նարեկլուծ»ին,³⁴ եւ մեծապէս կը նպաստէ բանիմացօրէն բնագիր պատրաստելու ջանքին:

1965, էջ 33-36 եւ 38-39, որ դիտել կու տայ, որ Խաղաղական «Խաղաղական ժամու աղօթքն» կոչուած է, երբ տակաւին Հանգստեանը չէր ստեղծուած. Հանգստեան ժամերգութիւնը ստեղծուած է ԺԳ. դարուն, «մնայով առանձնական մինչեւ ԺԶ. դար, ուր հասարակաց դարձաւ», էջ 36. *Մատենի Բան Զ.*-ի Հանգստեանի մէջ ներմուծման մասին՝ տե՛ս էջ 313): Ընդհակառակը՝ եկեղեցական տաղից բազում ծիսական կիրարկութեանց մասին՝ տե՛ս Զարեհ Սրբազանի *Մեղեդիներ, Տաղեր եւ Գանձեր Հայաստանեայց Եկեղեցու* (Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1990) յառաջաբանը՝ «Քանի մը խօսք Մեղեդիներուն ու Տաղերուն եւ Գանձերուն մասին», նամանաւանդ «Մեղեդիներու, տաղերու եւ գանձերու գործածութիւնը եկեղեցական արարողութեանց մէջ» բաժինը (էջ 8-13): Սրբազանը ցոյց կու տայ, նոյնիսկ տպագիր հրատարակութեանց հիման վրայ, որ «եկեղեցական արարողութեանց մէջ անոնց գործածութեան ծիրը անկախ լայն է [հան սոսկ Ս. Պատարագի երգեցողութեան հետ առնչութիւնը], եւ տակաւին՝ կրկնապատիկ անկախ լայն էր դեռ մինչեւ մօտաւոր անցեալը, ներկայ դարասկիզբը [գրելով 1990-ին]»: Այդ յառաջաբանը վերատպուած է հետեւեալ երկու յետ-մահու հատորոց մէջ. **Զարեհ Արք. Ազնաւորեան**, *Հայ Եկեղեցին 20-րդ դարուն եւ 21-րդ դարու շեմին*, իմբ. Տ. Վարուժան Արք. *Հէրկէան*, Նիկոսիա, 2005, էջ 197-214, եւ **Զարեհ Արք. Ազնաւորեան**, *ԶԱստուած տեսնել*, իմբ. *Քորթմոսեան, Յ. եւ Նազըճեան, Գ.*, Երեւան, 2014, էջ 414-433:

³¹ **Բախչինեան, Հենրիկ**, *Գրիգոր Նարեկացու Գանձարանը. Վերծանութիւն եւ քննութիւն*, Լիբանան, 2016:

³² **Mahé, J.-P., Mahé, A.**, *Trésor des Fêtes: Hymnes et Odes de Grégoire de Narek*, Peeters, 2014.

³³ **Terian, Abraham**, *The Festal Works of St. Gregory of Narek: Annotated Translations of the Odes, Litanies, and Encomia*, Liturgical Press, Minnesota, 2016:

³⁴ Յիրաի, այս տեսակետով չափազանցութիւն չէ զՏէրեան նալեանի եւ Աւետիքեանի արժանատու յաջորդը նկատել. բաղդատութիւն մը՝ զոր կատարեցինք գրախօսականի մը միջոցաւ. տե՛ս **Utadjian, H.**, “Abraham Terian – The Festal Works of St. Gregory of Narek: Annotated Translation of the Odes, Litanies, and Encomia”, *Ecclesia orans*, Anno XXXIV – 2017/1, էջ 298-301: Անշուշտ, ի տարբերութիւն Աւետիքեանի՝ Տէրեանի գործը ծանօթագրեալ թարգմանութիւն մըն է, եւ ոչ բնագիր. այնուամենայնօք Տէրեանի ֆունկցիոնալ մօտեցումը մը կը վարէ իր ձեռքի տակ ունեցած բնագրին հանդէպ (որ Մշի վերարտադրած Քէօշկերեանի իմբագրութիւնն է), երբեմն նախընտրելով էջատակի տարբերակներէն մին կամ միւր, երբեմն երուսաղիմայ այս կամ այն ձեռագրի տարբերակը: Սակայն Տէրեանի իրագործման գլխատու արժէքը կը կայանայ իր լուսաբանութեանց մէջ. ան յաջողած է համոզիչ կերպիւ բացատրել շատ մը տողեր, որոնք ցարդ բոլորին անհասկնալի կը մնային:

Հրատարակութեան տեսակներ³⁵

Դասական բանասիրութեան մէջ կիրարկուած մօտեցումներէն մին տոնմաձառ մը կազմելու կը ձգտի, ջանալով ազգակցութիւն յայտնաբերող սխալներէ օգտուիլ. այսինքն՝ ոչ թէ հասարակ տեսակի մանր վրիպակներէ, որոնք կրնան ունենալ գրիչի մը ձեռքէն պատահաբար սպրդած ըլլալ, այլ անսովոր սխալներ՝ որոնք անկախօրէն կրկնուելու հակամէտ չեն, եւ հետեւաբար որոնց կրկնութիւնը յիշուի ազգականական կապ ցոյց կու տայ³⁶: Յոյսը այն է, որ այսպիսով կարենանք ծառին «բուն»ին՝ եւ *Lachmann*-ի բառով «նախատիպի» (*archetype*)³⁷ կամ *Draguet*-ի արտայայտութեամբ՝ ենթադրական «հիմք բնագրի» (*base text*)³⁸ մօտենալ: Ասիկա աւելի տրամաբանական կը թուի եւ աւելի համակարգային (*systematic*), քան ըստ կամս՝ ընտրողային եւ խառնածին (*hybrid*) բնագիր մը կազմելէ, ուր հրատարակողի անձնական ճաշակը եւ հակումները անխուսափելիօրէն ազդեցութիւն մը բանեցուցած կ'ըլլան՝ կամայականայ, գիտակցաբար կամ ոչ: Այնուհանդերձ, այսպիսի ծառ մը կազմելը դժուար է յաճախ (եւ, ինչպէս կ'ըսէ *Amand de Mendieta*, ինքնին «ձեռներէցութիւն մը որ անիրականալի է եւ նոյնիսկ պատրալից»³⁹): Զոր օրինակ գրիչ մը կրնայ առջեւը մէկէ աւելի բնօրինակ ունեցած ըլլալ, եւ կամ աղբիւր մը կրնայ այլ անձէ մը սրբագրուած ըլլալ՝ նախքան իբր բնօրինակ ծառայելը, որով զանազան «ճիւղերու» միջեւ տեսակ-տեսակ «տարապղծմանց» (*contamina-*

³⁵ Ջերմօրէն կը յանձնարարենք հետեւեալ գրուածը՝ “Textual Criticism and Text Editing”, աշխ. *Caroline Macé* եւ *աշխատակիցներ*, արդէն վերեւ նշուած *Comparative Oriental Manuscript Studies: An Introduction*ի մէջ, մասնաւոր էջ 321-465: Հատորիս ամփոփ գրախօսականին համար տես՝ **Utidjian, H.**, “Comparative Oriental Manuscript Studies: An Introduction”, *Parrésia* 9-10 (2015-2016), էջ 580-582:

³⁶ Որոշ չափով՝ Խաչատրեան եւ Ղազինեան այսպիսի մօտեցում մը կիրարկեցին, *Մատենանկարագրութեան* երկի հրատարակութեան մէջ. իրենց ձեռքի տակ ունեցած ձեռագիրները կրցան երեք գլխատր խումբերու բաժնել, գլխատրաբար կախեալ ստիկ՝ թէ ԿԲ. եւ ԿԳ. Բաները ինչ շարքով կը գտնուէին տուեալ ձեռագրի մը մէջ, եւ թէ Բան Զ.-ի, Բան Ժ.-ի եւ Բան ԺԲ.-ի մէջ որոշ հատուածներ կը բացակայէին կամ ոչ – տես «Առաջաբան»-ի «Ձեռագրական խմբեր» բաժինը, մասնաւոր էջ 16-18 (այս բնագրագիտական բացատրութեանց համար անհրաժեշտ է վերադառնալ իրենց 1985-ի հատորին, որովհետեւ զանց առնուած են Մ2 բնագրի վերահրատարակումն):

³⁷ Karl Lachmann (1793-1851)՝ ականատր Գերմանացի բանասէր եւ բնագրագիտութեան տեսաբանութեան ռահվիրայ:

³⁸ René Draguet (1896-1980)՝ ականատր Պելլիքիցի Աստուածաբան, Աստուածագետ:

³⁹ “Une entreprise irréalisable et même fallacieuse” – տես **Amand de Mendieta, Emmanuel**, “Un problème d'ecdotique. Comment manier la tradition manuscrite surabondante d'un ouvrage patristique”, *Texte und Textkritik. Eine Aufsatzsammlung*, աշխ. **Dummer, Jürgen**, Berlin: Akademie-Verlag (Texte und Untersuchungen zur Geschichte der altkirchlichen Literatur, 133), 1987, էջ 29-42, յատկապէս էջ 41, մէջբերուած *Caroline Macé*-ի վերոյիշեալ գրութիւն մէջ, էջ 424:

tion) կրնանք հանդիպիլ: Ինչպէս կ'ըսուի՝ *Recentiores, non deteriores*, այսինքն՝ երբեմն աւելի նոր «ճիւղ» մը աւելի լաւ տարբերացուած մը կը կրէ. այսպիսի աղբիւր մը ծառին վրայ տեղադրելը կրնայ ստայօղ տպաւորութիւն ստեղծել: Ասկէ զատ՝ կրնան մեզի հասած տարբերակները իրարմէ բաւական «հեռաւոր» եւ անհաշտելի ըլլալ, որով ծառին զանազան բաժինները իրարու հետ միացնելը անհնար կը դառնայ, ինչպէս պիտի տեսնենք:

Այս բոլոր պատճառներով շատերը հակուած են տարբեր մօտեցման մը՝ ի նպաստ դիւանային գրառմանց (*diplomatic transcription*): Ըստ այսմ՝ կը ձգտինք հրատարակութիւն մը պատրաստել, որ հիմնուած ըլլայ մէկ վկայի մը վրայ, ջանալով ատոր բոլոր առանձնայատկութիւնները հաւատարմօրէն վերարտադրել: Սակայն այս մօտեցումն ալ խաբուսիկ է: Հնարաւոր չէ ձեռագրի մը բոլոր մանրամասնութիւններ հրատարակութեան մը մէջ ներգրաւել (ի բաց առեալ լուսանկար վերարտադրութիւնը): Թէ ո՛ր տարրերը կ'ընտրենք վերարտադրման համար եւ որոնք կ'անտեսենք կախեալ է մեր նախընտրութիւններէն, եւ մեր ապրած ժամանակներու ընդունուած սովորոյթներէն: Զոր օրինակ՝ Քէօշկերեանի աշխատած շրջանին խազերը բոլորովին կ'անտեսուէին, եւ նոյնպէս բնօրինակներու կէտադրութիւնը՝ զայն հրատարակողին դատողութեան թողով: Եթէ յիշենք նաեւ, թէ տաղից հնագոյն ձեռագիր վկան նուագագոյնս քառորդ հազարամեակ մը աւելի հետագայ է քան Նարեկացու կեանքը, եւ երաշխիք չկայ, թէ ժ.Գ. դարու խազագրութիւնները ժ. դարու եղանակներուն համապատասխանեն, եւ կամ նոյնիսկ բառերը անփոփոխ մնացած ըլլան՝ ապա բացայայտ կը դառնայ, թէ նոյնիսկ այսպիսի մեթոդի մը խստագոյն գործադրութեամբ՝ անխուսափելիօրէն մեր պատրաստած բնագիրը առ նուազն երկու տարբեր մակադրուած ժամանակներու կնիքը կը թողու հեղինակի ստեղծագործութեանց վրայ:

Բարդութիւն մը եւս կայ, յատկապէս երգուած յօրինմանց պարագային: Ենթադրելի է, որ բերանացի կատարման եւ գրաւոր փոխանցման միջեւ փոխազդեցութիւններ գործած ըլլան: Արդէն տեսանք, թէ ԺԼ. դարուն տպուած բնագիրները կը բաւարարուէին մէկ-երկու տուներով, որովհետեւ ծիսական կիրարկման համար տրամադրուած անշրպետը կը լեցուէր դանդաղ ու զարգարուն երաժշտական տարբերակներու կատարմամբ, որով արդէն մի քանի բառ երգելը բաւական երկար ժամանակ կը գրաւէր: Նոյնպէս գրաւոր աւանդումը կրնայ ընդհատմանց ենթարկուած ըլլալ, եւ զանազան երգողներու յիշողութեան շնորհիւ գրաւոր փոխանցումը ընդհատող անդունդներուն վրայ կամուրջներ կառուցուած ըլլան: Երգիչի մը յիշողութիւնը սակայն կրնայ սխալական ըլլալ. տանց շարքը կրնայ խախտած ըլլալ, ամբողջ հատուածներ կորստեան մատնուած ըլլալ՝ նախքան յիշողաբար գրաւոր աւանդութեան վերադարձուելէ: Որոշ տաղից պարագային տրամաբանական կը թուի այսպիսի են-

Թաղրութեանց դիմել, կոշտ մակարդակի տարբերութեանց արդարացման համար: Այս բոլորը բնագիրը պատրաստողի պարտականութիւնը կը դժուարացնեն:

Որոշ մեքենական գործողութիւններ կրնան դիւրանալ՝ արդիական յարմարութեանց շնորհիւ: Զոր օրինակ՝ համակարգչային ծրագիրներ կան, որոնց օգնութեամբ հնարաւոր է մի առ մի բնագիրները մեքենագրել, եւ ապա համակարգիչին հրահանգել, որ այս կամ այն ձեռագրի տարբերակը իբր հիմնական բնագիրը որդեգրուի, եւ բոլոր միւսները համակարգչային կերպով իբր էջատակի ծանօթագրութիւն նշուին՝ անսխալ ու լիակատարօրէն: Ասիկա մեծ օգնութիւն է, նամանաւանդ երբ (ինչպէս երբեմն կը պատահի մեր տաղից պարագային եւս) որոշ տողեր այս կամ այն տարբերակին պարագային այլուր գետեղուած են, եւ սակայն տողերը իրենք ալ որոշ մանրամասնութեանց մէջ կը տարբերին: Միւս կողմանէ սակայն՝ համակարգիչը պարզապէս մեր հրահանգները կոյրօրէն կատարող գործիք մըն է. ուստի որակական հարցերու մասին (մէկ կամ միւս աղբիւրի յարաբերական արժանահաւատութեան կամ հարազատութեան, այս կամ այն տարբերակի նախընտրելիութեան մասին) մեզի չ'օգնէր: Եւ եթէ խնդրոյ առարկայ բնագիրները բազմաթիւ ըլլան, վտանգը կայ, որ այսպիսի օգնութեանց ապաւինելով՝ կրնանք մեր կազմած բնագիրը խեղդել անիմաստ եւ անկարեւոր տարբերակմանց հոծ բազմութեամբ: Այսպիսի դժուարութիւնները շրջանցելու համար կարելի է նախ որոշ չափանիշեր հաստատել: Զոր օրինակ՝ Աբրահամ Տէրեան՝ Մագիստրոսի ՉՄեծամեծս Աստուծոյ (ցարդ «Առ Մանուէ») խորագրով ծանօթ) գործի բնագրի համար որոշեց հետեւեալ պայմաններուն գոհացումը պահանջել՝ նախքան որոշ ձեռագրախումբէ մը ծագող տարբերակներէն որդեգրումը. (ա) ձեռագիր աղբերց բաւարար մեծ համամասնութիւն մը պէտք է յօգուտ տուեալ տարբերակներէ մը վկայէ, (բ) տարբերակներ պէտք է «մայր» ձեռագրի բացայայտ պակասներ գոցելու ծառայեն, (գ) տարբերակներ սկսի տողի մը մէջտեղէն եւ ոչ վերջաւորութեան, եւ (դ) տարբերակներ որդեգրումը նպաստէ կանոնաւոր տաղաչափութեան վերահաստատման⁴⁰: Այսպիսի մօտեցման մը տարրերը մեր նպատակին ալ կրնան օգտակար հանդիսանալ:

Արդիական յարմարութիւնները նոյնպէս մեզի ելեկտրոնային միջոցներով գերբնագիրներ (*hypertext*) կազմելու առիթ կ'ընծայեն, ուր մատի մէկ հպմամբ՝ կարելի է նոյն հատուածի ուրիշ մի աղբիւրի բնագիրը եւ կամ՝ միաժամանակ բազում տարբերակներ ներկայացնել: Վերջին տարիներուն սակայն՝

⁴⁰ Տե՛ս *Magnalia Dei – Biblical History in Epic Verse* by Grigor Magistros: Critical Text with Introduction, Translation and Commentary by Abraham Terian, Hebrew University Armenian Studies 14, Peeters, 2012, էջ 28-29: Սոյն հատուածին մեր գրախօսակա՞նին համար տե՛ս Utidjian, H., “Grigor Magistros – Magnalia Dei. Biblical History in Epic Verse by Grigor Magistros: Critical Text with Introduction, Translation and Commentary by Abraham Terian”, *Parrésia* 8 (2014), էջ 642-644:

շատ մը մասնագէտներ նախընտրած են բոլորովին հակառակ ուղղութիւն մը՝ դէպի պարզացում եւ դիւրաւ ընկալելի բնագրի նախընտրութիւն, ընթերցողային բնագիրներ (*reader's edition կամ reader's text*) ներկայացնելով (սակայն իրենց ընտրութիւնները մանրամասնօրէն նկարագրելով սովորաբար անջատ ներածականաց միջոցաւ)⁴¹:

Անհաշտելի աղբիւրներ

Այժմ մեր ուշադրութիւնը կը դարձնենք ծայրայեղ օրինակի մը, որ մեզի ցոյց կու տայ, թէ ի՛նչպէս երբեմն այն սովորական քայլերը, որոնցմով զանազան աղբիւրներ այս կամ այն կերպիւ համադրելով ու համակցելով դասական հրատարակութիւն կազմել կը ջանանք՝ կրնան անպատշաճ ըլլալ: Մեր օրինակը հոս «Սայլիկի տաղ»ն է⁴²:

«Սայլիկի տաղ»ի մասին

Մեր երեք կարեւորագոյն (եւ շատ հաւանաբար նաեւ հնագոյն) աղբիւրները հետեւեալներն են.

- Խմբագրութիւն 1 (Վենետիկ, «Գանձարան» ժՁ. , 15-16րդ դ.),
- Խմբագրութիւն 2 (Վենետիկ, «Տաղարան» Ե. , 16-17րդ դ.),
- Խմբագրութիւն 3 (Վենետիկ, «Տաղարան» Գ. , 1563 թ.)

(Այս երեք աղբիւրները մի առ մի՝ «Խմբագրութիւն» յորջորջած ենք, եւ ոչ սոսկ ձեռագիր տարբերակներ, քանզի ժամանակի ընթացքին անոնց կրած այլազան խմբագրական միջամտմանց ազդեցութեան հետքերը կարելի է տեսնել անոնցմէ իւրաքանչիւրին վրայ): Ի դէպ՝ առ նուազն երկուքը հնագոյն են քան 1981-ի հրատարակութեան համար ծառայած աղբերց ամենահինը)⁴³:

Ինչպէս ծանօթ է Խմբագրութիւն 1 ունի կարեւոր առանձնայատկութիւն մը. երկու խոշոր բաժիններ կը պարունակէ, որոնք չկան Քէօշկերեանի կամ Վենետիկոյ հրատարակութեանց մէջ, եւ որոնցմէ առաջինը ռեւէ այլ աղբերց մէջ չգտանք: Նախ՝ կ'անդրադառնայ Բեթելի լեռներու, ամուր պարիսպներու,

⁴¹ Sebastian Brock-ի Ս. Եփրեմ Ասորացոյ գործոց նորագոյն հրատարակութիւնները այս ուղղութեան համակիր են: Երբ Theo van Lint-ի հրաւերով՝ ներկայ աշխատանքի մասին Օֆսֆորդի համալսարանի Արեւելագիտական Հիմնարկի մէջ 1 նոյեմբեր 2016-ին դասախօսութիւն մը ներկայացուցինք, Brock-ը յայտնեց, որ Եփրեմ Ասորայ բանաստեղծութեանց՝ Ս. Գրիգոր Նարեկացոյ տաղից աղբերց ժամանակակից ձեռագիրները նոյնպէս բարդ, նոյնիսկ շփոթաբարոյց պատկեր մը կը ներկայացնեն. բարեբախտաբար, սակայն, մեզի Եփրեմ Ասորայ Ձ. դարու ձեռագիր վկաներ հասած են, առանց որոնց (ըստ Brock-ի) բնագրաց վերականգնումը անհնար կ'ըլլար:

⁴² Զանազան աղբիւրներ միօրինակ սկզբնատողը չ'ունին, ուստի «Սայլիկի տաղ» խորագիրը կը նախընտրենք գործածել, որ վերջին տարիներուն բաական ընդհանրացած է:

⁴³ Այդ մասին ինչպէս տեսանք՝ Քէօշկերեան կը գրէ (էջ 252)՝ «Վաղագոյնները ժէ դարից այն կողմ չեն անցնում եւ բոլորն էլ աղաաղումներով», իսկ Van Lint կը գրէ “dating from about 1622” – «չուրջ 1622 թուականէն» (նշ. աշխ. էջ 117):

«գինւոյ տուն» մուծուելու, Ադամի աւետման, եւ գերեալները ազատելու համար դժոխք իջման⁴⁴. Կ'աւարտի յորդորելով որ մե՛նք եւս նոյն փառաբանութիւնը երգելով իրենց միանանք.

Ձայն առնէր ձայն առնէր ձայն առնէր ամուլըն ձայն առնէր.

ձայն առնէր եզնամուլին հընչիւն առնէր աթոռակին:

Ի վերայ լերանց բեթելայ. դ ամուլն ձայն առնէ[ր]:

Ի վերայ ամուր պարրսպաց, ամուլն ձայն առ[նէր]:

Մուծէք զիս ի տուն գին[ւ] ոյ. ամուլն ձայն առ[նէր]:

Եւ խընծորաւ զիս ծածկեցէք. ամուլն [ձայն առնէր]:

Աւետէր նախահաւրն ամուլն 7Յա ձայն առն[էր]:

Իջանելով ի դրժոխս, ամուլն ձայն առ[նէր]:

Ազատելով ըզգերեալսն, ամուլն ձայն [առնէր]:

Ոյք նըստէին ի բանդի, ամուլն ձայն առն[էր]:

Երգեմք եւ մեք ընդ նոսին. ամուլն ձայն առ[նէր]⁴⁵:

Իսկ երկրորդ բաժինը՝ սայլիկին գլորման հանած «գիլ-գիլ» ձայնը (որ ըստ Van Lintի սերտորէն առնչելի է եզեկիէլ Մարգարէի «գեղ-գեղ»ին հետ⁴⁶) իւրաքանչիւր տողի վրայ կը կրկնէ, առաքելոց տասին անունները զոյգ-զոյգ յիշելով.

Ի գիլ գայր ի գիլ սայլիկն ի գիլ գայր ի գիլ:

Պետրոսի եւ պաւղոսի. սայլիկն ի գիլ [գայր ի գիլ]:

Յոհաննու եւ յակոբայ, սայլիկն ի գիլ գայր [ի գիլ]:

Անդրէի եւ թո[ւ]մայի, սայլիկն [ի գիլ գայր ի գիլ]:

Բարդղղիմէոսի մաթէոսի, սայլիկն ի գիլ գայր ի գ[իլ]:

Շմաւոնի թադէոսի սայլիկն ի գիլ գայր [ի գիլ]:

Սակայն այս խմբագրութիւնը իբր ինքնաբաւ բնագիր ծառայելու տեսակէտով գոհացուցիչ չէ: Զանազան մանր-մունր սխալներէ զատ, նշմարելի է, որ «բանալի» տան մէջ (ուր հեղինակը, կամ լաւ եւս՝ հետագայ բնագրի վրայ միջամտողներէն մին տաղիս այլաբանութիւնը կը բացատրէ) «այն բարդ խոլըրձան» ի մասին ակնարկուած է, սակայն տաղիս նոյն բնագիրէն կը պակսի համապատասխան «եթէ հարիւր բարդ խոլըրձան» տողը: Նոյն այս կասկածելի «բանալի» տունը վեցօրեայ արարչութեան տեղ՝ «Այն բարդ կորընկեանի աւթնարեայ գործքն աստուծոյ» տարընթերցուածը կը ներկայացնէ, որ առարկելի

⁴⁴ Այս հատուածի բոլոր յղմանց եւ անոնց խորհրդանշական արժէից մասին՝ տե՛ս Utidjian, H., “Textual Observations on St. Gregory of Narek’s ‘Ode of the Little Cart’,” *ԲՄ* 21(2014), էջ 487-502:

⁴⁵ Ամբողջական բնագրաց համար՝ տե՛ս Utidjian, H., “On the early Venetian Manuscripts of the ‘Ode of the Little Cart’ ”, *Parrésia* 7 (2013), էջ 205-228:

⁴⁶ Տե՛ս Van Lint, T. M., նշվ. աշխ., էջ 117, ծան. 38:

է, թէ՛ «բարդ» բառի կրկնութեան՝ եւ թէ՛ մանաւանդ վեցօրէի տեղ «աւթ»նօրեայ տարբերակին համար: (Իսկ կ'արժէ նշել, որ խմբագրութիւն 2-ը «հինգաւրեայ գործքն աստուծոյ» ունի):

Այսպիսի բացատրական «բանալի»-տուն մը հարագատ է երբեւիցէ Սրբոյն գրչին⁴⁷: Ըստ մեզ՝ առ նուազն «Սայլիկի տաղ»ի պարագային, զուտ բանաստեղծական գեղագիտութեան տեսակէտով՝ «բանալի» տունը ընդհանուր յօրինման որակին չի նպաստեր, սակայն արժէք ունի տաղի այլաբանութեան հասկացողութեան համար: Կարելի չէ՞ ենթադրել, որ հետագային աւելցուած ըլլայ «բանալի»ն, որպէսզի հին ատեններուն արդէն քաջածանօթ մեկնաբանութիւնը մոռացութեան եւ կորստեան շմատնուէր: Նոյն տպաւորութիւնը կը թողու նաեւ այն հանգամանքը, որ խմբագրութիւն 2-ի պարունակած «բանալի»ն կը տարբերի միւս աղբերց՝ «նահապետքն եւ մարգարէքն» «բանալի»ներէն, «հարիւր բարդ խոլըրձան»ը մեկնաբանելով՝ «հարիւր ոչխարքն են առակին» (Մատթ. ժԸ 12-14, Դուկ. ժե 3-5): Այսուամենայնիւ, (1) այսպիսի կամ այնպիսի «բանալի» տուն մը մեզի հասած բոլոր հին ձեռագիր աղբերց մէջ առկայ է, եւ սոսկ մեր անձնական նախընտրութեան հիման վրայ զայն զանց առնելը արտօնելի չէ, եւ (2) անկախ ատկէ, եթէ «բանալի»ն հարագատ է կամ ոչ, առաջին խմբագրութեան մէջ բանալույ «բարդ խոլըրձան»ի ակնարկելը ցոյց կու տայ, որ տաղիս գլխաւոր բաժնին մէջ «բարդ խոլըրձան» առկայ էր եւ կորսուեցաւ, մնալով սակայն «բանալի» տան մէջ:

Յամենայն դէպս, խմբագրութիւն 1-ի այդ նորագիւտ տարրերը պէտք չէ անտեսել: Վերեւ մէջբերուած առաջին բաժնի գերիրապաշտական ճանապարհը բաղդատելի է Հաւուն արթընացեալ տաղի հետ, եւ թէեւ ասիկա ճշգրիտ շափանիշ մը չէ, նորագիւտ բաժինները Գրիգորի ստեղծագործական ոճին հարագատ կը թուին (թէեւ, դարձեալ՝ ասիկա ինքնին ապացոյց մը չէ). անկասկածօրէն՝ զանոնք անտեսելը կամ մեր նոր հրատարակութենէն անոնց զանցառումը՝ աններելի պիտի ըլլար:

Խմբագրութիւն 2-ի ամենէն տպաւորիչ առանձնայատկութիւնը այն է, որ հոս ոչ միայն մեր արդէն հանդիպած ԴԿ ՏԷր յերկնից շարականէն մասեր ներմուծուած են, այլեւ հետեւեալ շարականներէն բաժիններ.

- Զատկուայ «Այսար մեծ աւետիք աղամայ նախաստեղծին» Հարց շարականի առաջին երեք տուները.

⁴⁷ Սրբոյն մեզի ծանօթ ոչ մի այլ տաղ այդպիսի «բանալի» մը չի պարունակեր, մասնակի բացատրեամբ Զօրք ի վերուստ իջեալ տաղին, ուր «տանարն այն ո՞ւմ նման է... մարդակն այն ո՞ւմ նման է... գերանքն այն ո՞ւմ նման է... խոյակն այն ո՞ւմ նման է... սրններն այն ո՞ւմ նման է... խարիսխն այն ո՞ւմ նման է...» հեռտորական հարցումները կը տրուին, եւ կը յաջողեն պատասխանները («մարգարէիցն, ... քերովբէիցն, ... առաւելոցն, ... սերովբէիցն, ... սրբոյ կուսին...»): Սակայն յիշելու ենք, որ այս տաղը Քէօշկերեան (տե՛ս էջ 17-18) կը համարի այն մի քանի տաղերէն միւս, որոնք «հեղինակային պատկանելիութեան առումով, տեղի են տալիս տարակուսանքի»:

• Սրբոց Հրեշտակապետացն Միքայելի եւ Գաբրիելի եւ Ամենայն Երկնային Զօրացն կանոնի «Այսաւր ուրախացեալ սուրբ եկեղեցի քրիստոսի» ձառնա շարականը, ամբողջութեամբ (երեք տուն)։

• Վարդավառի Երրորդ օրուան «Այսօր ըզխորհուրդն անձառ» Հարց շարականի Երրորդ տունը՝ «Այսօր անմահութեան հոտ անոյշ բուրեաց ի թաբօր. թըմըեալ ընդարմացոյց զգասս առաքելոցն. աստուած հարցըն մերոց»։

Այս շարականները նոյնպէս ԴԿ ձայնին կը պատկանին, որով ենթադրելի է, որ երաժշտական տեսակէտով շարակնոցէն որդեգրուած բոլոր բաժինները հեղասահօրէն եւ ողորկ կերպիւ զօգուած ըլլային։ Սակայն յիրաւի զանազան շարականներէ առնուած այսպիսի բաժիններ կրնա՞ն տաղիս բաղադրիչ մասեր նկատուիլ։ Աւելի հաւանական է, որ Սրբոյն սկսած քայլը (տաղին մէջ շարական մը միջադրելով՝ եւ կամ նոյնիսկ իր տաղը շարականի մը մէջ միջադրելով)⁴⁸ հետագայ խմբագրող մը շարունակած ըլլայ։ Տաղիս միջահիւսմամբ մի քանի շարականներէ քաղուած տանց հետ՝ միթէ կը դադրի՞ն տաղը տաղ մնալէ եւ շարականները շարական։

Վերջապէս, պատշաճ է նկատել, որ Խմբագրութիւն 2-ի այս երեւոյթը (գուցէ աւելի ուշ ժամանակներո՞ւն որդեգրուած) սովորութիւնը կը յիշեցնէ, ըստ որուն՝ Ս. Պատարագի ընթացքին իբր Մեղեդի երգուած տաղին անմիջապէս իբր թափօրի շարական կը յաջորդէ (փոխանակ Յայս յարկ շարականին, կամ անոր «Բարեխօսութեամբ» տան, ինչպէս որոշ տպագիր ժամագրոց մէջ եւ Ս. Էջմիածնայ ներկայ սովորութեան) օրուայ ձայնի Տէր յերկնից շարականներէն մին (Ս. Յարութեան կիրակիներուն) եւ կամ (տաղաւար տօներու պարագային) նոյն առաւօտուն Գիշերային ժամերգութեան երգուած Օրհնութիւն շարականին առաջին մի քանի տունը՝ աւելի ծանր եւ զարդարուն երգեցողութեամբ⁴⁹։

Իսկ Խմբագրութիւն 3-ը՝ տաղիս առաջին տան սերովբէները եւ քերովբէները (զորս միւս խմբագրութեանց մէջ կը գտնենք) զանց կ'առնէ, սակայն կը

⁴⁸ Երաժշտագետ եւ երաժիշտ՝ Գրիգոր Փիւլէնեան խնդրոյ առարկայ ԴԿ Տէր յերկնից շարականը Սրբոյն վերագրելի կը համարի. տե՛ս **Փիւլէնեան, Գ.**, Գրիգոր Նարեկացի շարականագի՞ր, Ս. Էջմիածին, 1999։

⁴⁹ Մենք մանկութենէն ի վեր այս սովորութեան ականատես եւ մասնակից եղած ենք։ ԺԲ դարու տպագրուած եւ կամ ձեռագիր Տաղարանաց մէջ եւս բաւական յանախ տաղերէ ետք շարականներ կը յաջորդեն։ Իսկ Հիսարթեան կը վկայէր (**Հիսարթեան, Արիստակէս Քենյ.**, Պատմութիւն Հայ ձայնագրութեան եւ կենսագրութիւնք երաժիշտ ազգայնոց 1768-1909, Կոստանդնուպոլիս, 1914, էջ 83), թէ նոյնիսկ ԺԹ դարու երկրորդ կիսուն, Պոլսանայ եկեղեցական երաժիշտներէն՝ Արիստակէս Յովհաննիսեան (1812-1878) Ս. Պատարագի թափօրի ընթացքին երգուելու համար որոշ *Տէր յերկնից* շարականներու այսպիսի ծանր ու զարդարուն տարբերակներ կը յօրինէր։ Իսկ Տնտեսեանի մէջբերած 1811 թ. Պատրիարքական կոնդակի շնորհիւ (տե՛ս *Նկարագիր երգոց Հայաստանեայց եկեղեցոյ, Կոստանդնուպոլիս, 1874, էջ 129*), գիտենք, որ երգեցողութիւնը կրնար փոխուիլ «ըստ վայելչութեան բանին» կատարուելով «միջակ ձայնի յորդոր ասացուածով» եւ կամ «բարձր եւ ծանր եղանակերով»։

պարունակէ «Փառք Քրիստոսի ամենագոր յարութեանն» շարականի երկրորդ տունը՝ որ ինքնին «քերովբէքն եւ վեցթեւեան սերովբէսըն» բառերը կը պարունակէ: Ուշագրաւ է նաեւ, թէ հմբագրութիւն 1-ի եւ հմբագրութիւն 3-ի մէջ՝ ի տարբերութիւն տպագիր հրատարակութեանց եւ խմբագրութիւն 2-ի՝ «ահա շարժէր»ը ոեւէ տեղ «ահա շարժէր»ի չի փոխուիր: Իսկ ի տարբերութիւն միւս երկու խմբագրութեանց՝ խմբագրութիւն 3-ը առաքեալները մի առ մի չի թուեր, այլ պարզապէս «երկոտասան առաքելոց» կ'անդրադառնայ:

Այսպիսի՝ յարաբերաբար «խոշոր» տարբերութիւններէ զատ՝ խմբագրութեանց միջեւ կը հանդիպինք շատ աւելի «մանր-մունր» տարբերութեանց: Զոր օրինակ՝ «Սալք իջանէին ի մասեաց լեռնէն» (հմբ. 1), «Սալքն իջանէին ի լեռնէն ի մասանց» (հմբ. 2), «Սալքն իջանէին ի լեռնէն մասանց» (հմբ. 3) տարբերակներուն կը հանդիպինք, որոնց աւելցնենք տպուած՝ «Սեալքն իջանէին ի լեռնէն ի մասանց» (Վենետիկ, 1513) եւ «Սալքն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց» (Վենետիկ, 1840, Քէօշկերեան, 1981) տարբերակները: Ի դէպ՝ մեր տեսած ցարդ բոլոր ձեռագիրները «սալք»ը յոգնակի թիւով կը ներկայացնեն, ուստի հնարաւոր չէ այս դժուարաւ բացատրելի հանգամանքը անտեսել: Այլ հետաքրքրական տարբերակում մը խաչին կը վերաբերի. հմբ. 1-ի եւ Քէօշկերեանի բնագրի մէջ՝ «գեղեցիկ մանկունք» զայն իրենց ձեռքը բռնած են, մինչ Ս. Ղազարու տպագրութեանց մէջ այն «ի գիրկս նոցա» կը գտնուի. իսկ հմբ. 2-ի եւ 3-ի մէջէն, ինչպէս նաեւ Վենետիկոյ 1513-ի Տաղարանէն ի սպառ կը պակսի: Հոս եւս, չկան յստակ չափանիշեր, որոնց հիման վրայ արդի բանասէրը կարենար մէկ կամ միւս տարբերակի նախընտրութիւն ընծայել:

Այս տաղը ծայրայեղ օրինակ մըն է, եւ մեր հոս հանդիպած բազմաթիւ եւ արմատական տարբերակումները բարեբախտաբար անսովոր են: Սակայն՝ ա՛յդ իսկ պատճառաւ, մեր համոզումն է ուրեմն, որ պատշաճագոյն է խմբագրական մեթոդաբանութիւնը փոխել տաղէ տաղ, եւ միօրինակ մօտեցում մը չպարտադրել, երբ պարագայք կը տարբերին: Սակայն պարտինք նաեւ հարց տալ, թէ արդեօք ինչո՞ւ այս տաղը այս աստիճանի տարբերակմանց ենթարկուած է: Մեզի կը թուի որ շարականաց միջահիւստումները, զանազան կրնկերգերու առկայութիւնը, եւ զանազան այլ կառուցային յատկանիշեր բոլորը կը վկայեն, որ տաղիս փոխանցումը հաւանաբար միմիայն գրաւոր աւանդութեամբ չէ որ կատարուած ըլլայ. հաւանականագոյն կը թուի մեզի, թէ այդ աւանդութիւնը ընդհատմանց ենթարկուեցաւ, եւ անգիր ու բերանացի աւանդութիւնը այդպիսի ընդհատմանց ընթացքին իբր կամուրջ ծառայեց: Զմոռնանք, որ հոս մեր հնագոյն ձեռագիրը բաւական պակաս հին է, քան Հաւուն արթընացեալի 1241-ի ձեռագիրը: Երգիչներ՝ իրենց հայրերէն կամ վարպետներէն լսելով երբ կը սորվէին, բնական է որ տանց շարքը կրնար խախտիլ, այս կամ այն մասը յիշողաբար կամ ենթադրաբար վերակառուցուիլ, նոր միջադրմանց եւ այլազան մեկնաբանական «բանալեաց» ներմուծմանց ենթարկուիլ, եւ այլն: Այսպիսի

անկայունությունների ժամանակամիջոցներէ ետք՝ տաղս երբ դարձեալ գրի առնուեցաւ, բնական է որ բնագիրները մէկը միւսէն բաւական հեռացած ըլլային: Բայց ինչո՞ւ արդեօք յատկապէս այս տաղին այսպիսի բաներ պատահեցան: Կրնանք միայն ենթադրութիւններ ընել: Ո՞վ գիտէ, թէ Սրբոյն տաղերէն քանիներ էր ի սպառ կորստեան մատնուած են, գրաւոր վկայից ոչնչացման պատճառաւ: Թերեւս այս տաղը սակայն, մէկ առաջուց մի քիչ աւելի բերանացի ստեղծագործութեան ձեւ ունեցած ըլլալով⁵⁰, յիշողաբար պահպանուեցաւ, երբ այլ տաղեր նոյն միջոցաւ պահպանուելու հակամէտ չէին⁵¹:

Եզրակացութիւն

Տեսանք, որ իրենց ներկայ վիճակով այս երեք տարբերակներէն ոեւէ մին ինքնին գոհացուցիչ բնագիր մը չի կրնար հանդիսանալ: Ինչո՞ւ, ուրեմն, մէկը միւսին միացնելով, ըստ մեր ճաշակին եւ դատողութեան «խառնածին» կամ «ընտրողական» բնագիր մը չկազմենք այս տաղի պարագային: Պատճառները շատ են: Նախ՝ բացայայտ կը թուի, որ մեր աղբերց ցանցառութիւնը եւ խիստ այլազանութիւնը (որմէ կը հետեւցնենք, թէ իւրաքանչիւրը իւրայատուկ գրչական աւանդութենէ մը ծագած ըլլալու է) զանոնք իրարու հետ բաւական անհաշտելի դարձուցած են: Եւ անհաշտելի տարբերակներ իրարու կցելով եւ կամ մէկուն պակասները միւսով «ամբողջացնելով» բնագիր կառուցելը ներկայ՝ «քննասէր» ժամանակներու՝ անհնար է: Երկրորդ՝ մեր տեղեկութիւնները բաւարար չեն, որպէսզի արտօնեն բաւարար վստահութեամբ վերջնական եզրակացութեանց հասնիլ ու մէկ բնագիր մը իբր հարազատագոյն ներկայացնել:

Վերջապէս՝ բնագիր կազմողի այս կամ այն որոշումը կրնայ նոյնիսկ առանց իր գիտակցութեան՝ իր ենթակայական կարծեաց եւ ճաշակի ազդեցութիւնը կրել՝ մինչեւ անընդունելի աստիճան մը. եւ նոյնպէս՝ լոյս տեսած բնագիրը կրնայ ըստ այնմ այս կամ այն տպաւորութեան՝ մինչեւ իսկ մեկնաբանութեան առաջնորդել: Զոր օրինակ՝ մեծ է փորձութիւնը՝ տուները մեր անձնական մեկնաբանութեան համեմատ կարգադրելու, եւ փոխադարձաբար՝ տանց շարքէն զանազան մեկնութեանց յանգելու: Ղազինեան⁵² հետեւեալը կը պատկե-

⁵⁰ Նման տպաւորութիւններ արտայայտած են Գարեգին Եպս. Մրուանձտեանց. «Կը տեսնե՞ս Ռշտունի հօտաղ եզնավարին սրբազնացուցեալ երգն...» (*Մանանայ, ժողովեաց եւ ի լոյս էած Գ. Վ. Մրուանձտեանց*, Կոստանդնուպոլիս, 1876, էջ 242), եւ մեր ժամանակներուն՝ Գրիգոր Փիտէնեան. «Նարեկացիի գործածած բարդումնային ոճը կու գայ զուսանական, ժողովորդական լեզուէն, որուն մէջ տակալին վառ կերպով պահուած կը մնային ժողովուրդի անգիր շրջանին յատուկ արտայայտչական կերպերը» (տե՛ս Փիտէնեան, նշ. Աշխ., էջ 28):

⁵¹ Այսինքն՝ ըստ այս ենթադրութեան՝ տաղիս բերանացի ստեղծագործական ոճի մօտիկութիւնը հետեւանք չէ՛ իր գոյութեան որոշ հանգրուաններու ընթացքին բերանացի աւանդութեան շնորհիւ պահպանուած ըլլալու հանգամանքին, այլ՝ այդ մօտիկութիւնն է որ արտօնեց, որ տաղս վերապրի՝ թէկուզ բազմաթիւ եւ արմատական տարբերակմանց ենթարկուելու գնով:

⁵² Ղազինեան, Ա., *Գրիգոր Նարեկացի. Բանաստեղծական Արուեստը*, Անթիլիաս, 1995, էջ 150:

րացնէ, Քէօշկերեանի յանգած բնագրի հիման վրայ. «Այստեղ կրկնակը հանդէս է գալիս իմաստային եւ գեղարուեստական գործառոյթի մեծ բեռով: Սայլն իջնում է Մասիս սարից՝ շքեղ ու տօնական, եւ յանկարծ կանգ է առնում, անիւներն ասես գամւում են ճամփին, եւ տաղի կրկնակը տխուր, սրտաբեկ հնչերանգով շեշտում է դադարի այդ պահը... Յաջորդ տների մէջ խորանում է ցաւի ու վարմանքի այդ զգացումը, տիրութիւնը մի տեսակ դառնում է համատարած, բայց ահա ձայն է տալիս ճորտ սայլապանը, սայլը շարժում է տեղից, եւ կրկնակն էլ հնչում է գուարթ ու թեթեւ»⁵³: Ընդհակառակը՝ ըստ մեր կարծեաց, հնագոյն ձեռագրաց (յատկապէս՝ վերոյիշեալ 1 եւ 3 խմբագրութեանց) մէկ կողմանէ քերովբէական կառքի անիւներու անշարժութեան (զի «շարժէր»ը երբէք չի փոխուիր «շարժէր»ի) եւ միւս կողմանէ խոնարհ սայլիկի յառաջխաղացքի տարօրինակութիւնը հիանալիօրէն կը ներդաշնակուին պատշաճ Քրիստոսաբանական մեկնաբանութեամբ: Այսպէս՝ նոյնաժամանակ ականատես կ'ըլլանք Քրիստոսի Աստուածութեան՝ հրեշտակաց բռնած եւ անշարժ թուող հիասքանչ կառքի կողմանէ խորհրդանշուած, ըստ եզեկիէլ Մարգարէի նկարագրութեան, եւ Քրիստոսի մարդկութեան՝ ներկայացուած խեղճուկրակ սայլիկով մը, որ ճոնչալով՝ ծուռ-շիտակ մեզի կու գայ, Յիսուսի աւանակի մը վրայ նստած Երուսաղէմի մուտքը յիշեցնելով⁵⁴: Այսպիսի նկատողութիւններ արդի բանասէրը առաւել եւս զգուշաւոր եւ շեզոք, եթէ ոչ պահպանողական, կեցուածքի մը կ'առաջնորդեն:

Անցեալին՝ այս երեք խմբագրութիւնները ի լոյս ընծայեցինք զանոնք ետեւէ-ետեւ, յաջորդական էջերու վրայ զետեղելով: Սակայն այսպիսով իրարմէ տարբերող կառուցները եւ տանց ներքին տարբեր կարգաւորումները շատ յստակ չեն ըլլար: Կա լուծում մը պիտի ըլլար երեք խմբագրութիւններ զուգահեռ սիւնակներու մէջ տեղադրել (ընդարձակ պարապ մասեր ունենալու գնով), որով իրենց յարաբերական կառուցուածքը ակնյայտ կը դառնայ⁵⁵: Սակայն տողերու երկայնքը նկատի առնելով՝ եւ սովորական էջի անբաւարար լայնքը, այսպիսի լուծում մը աւելի յարմարօրէն իրագործելի է ելեկտրոնիկ հրատարակման պարագային:

⁵³ Կրկնակներու կրկնութեանց խազագրոյթիւնները իրարմէ չեն տարբերի տուեալ ձեռագրաց մէջ (եւ սովորաբար արդէն կրկնուած բնագիրը մեծապէս կրճատուած կ'ըլլայ), ուստի Ղազինեանի երեակայած զանազան սրտաբեկ, թեթեւ կամ զուարթ «հնչերանգները» պէտք էր որ արտայայտուէին խիստ նուրբ կատարողական մեթոդներու կիրաւրով՝ ի հեռուս նոյն եղանակի կրկնութեան...:

⁵⁴ Այս Քրիստոսաբանական մեկնաբանութիւնը տե՛ս. Utidjian, H., “On the Early Venetian Manuscripts of the ‘Ode of the Little Cart’,” էջ 225:

⁵⁵ Երախտապարտ ենք Աբրահամ Տէրեանի այս գաղափարին համար, զոր մեզի բերանացիօրէն փոխանցեց:

Սակայն թնճուկը կը մնայ՝ ի՞նչ ներկայացնել ոչ մասնագէտ ընթերցողաց եւ թարգմանել օտարալեզու ընթերցողին համար: Ստորեւ պիտի տեսնենք, որ կացութիւնը տաղէ տաղ բաւական կը տարբերի: Մեր եզրակացութիւնը այն է, որ պատշաճ է բնագրի պատրաստման մեթոդաբանութիւնն ալ՝ համապատասխանօրէն տաղէ տաղ յարմարցնել, եւ մէկ միօրինակ կաղապար մը անխտիր՝ բոլոր տաղից կոչրօրէն չպարտադրել:


Սխալ հասկացողութիւններ

«Սայլիկի տաղ»ի իւզաբեր կանանց օրինակին կու գանք մի քանի օրինակ եւս մատնանշելու, որոնց լուսաբանութիւնը տողերս գրողը վերջերս հրատարակեց:

Երգ զարմանալի/Աչքն ծով


Այս տաղի սկզբնաւորութեան՝ տպուած բոլոր հրատարակութիւնները «նըշդարենի ուս՛» արտայայտութիւնը ունին: Եթէ սակայն որոշ հին ձեռագիրներ ստուգենք – տե՛ս, օրինակ, Վնտկ. 2070 (1348 թ.), «Տաղարան», թ. 152ա (նկ. 2), ՄՄ 7785 (ԺԴ. դար), «Գանձարան», թ. 392ա (նկ. 3), ՄՄ 3503 (1394 թ.), «Տաղարան», թ. 208բ (նկ. 4) – կը տեսնենք, որ բնագիրը «նըշդարենի ուս» կը պարունակէ, սակայն հետագայ ձեռք մը լուսանցքին մէջ «ուս»ը փոխարինած է «ուս՛»ով, իսկ աւելի ուշ ընդօրինակութիւնները այս տարբերացուածը որդեգրած են: Եթէ տաղիս այս մի քանի տողերուն իմաստը փորձենք թափանցել, ականյայտ է, որ Մարդեղութեան խորհրդոյն մասին է խօսքը: Մարիամ Աստուածածին (որ յաճախ Հայոց եւ Բիւզանդացոց շարականաց մէջ իբր «սափոր ոսկի» կ'ակնարկուի) եղեգնեայ տնկոյն համար իբր սափոր կամ ընդունարան ծառայած է, իր մարմնոյն մէջ կրելով Բանը: «Նըշդարենի ուս»ը նոյն երեւոյթին կ'ակնարկէ, այլ մէկ պատկերացմամբ, որ բացայայտ կը դառնայ՝ երբ ի մտի ունենանք, թէ հին ատեն այգեպաններ նշդարենի ծառը կ'օգտագործէին որպէս պատուանդան, որուն շուրջը փաթթուելով որթատունկը կրնար աճիլ, զայն իբրեւ նեցուկ գործածելով: ՆԲՀՂ այս մասին կ'ըսէ «նշդարենի» բառի բացատրութեան ներքեւ. «Տունկ անպտուղ, զորով պատի որթ»⁵⁶: Մէկ նկարը Աստուածամայրը իբր սափոր կը ներկայացնէ, որուն մէջ եղէզը կը մեծնայ, իսկ միւսը՝ իբր նշդարենի, որուն շուրջ փաթթուելով որթատունկը կ'աճի: Եւ անշուշտ՝ որթատունկը ծանօթ փոխաբերութիւն մըն է Քրիստոսի համար (տե՛ս Յովհ. Ժե 1. «Ես եմ որթն ճշմարիտ»):

⁵⁶ Աւելի մանրամասն պատմական ու գիտական ուսումնասիրութեան մը համար տե՛ս **Fuentes-Utrilla, P., López-Rodríguez, R. A., Gil, L.**, “The Historical Relationship of Elms and Vines”, *Investigación Agraria: Sistemas y Recursos Forestales* (2004) 13 (1), էջ 7-15: Տե՛րեւս իր ծանօթագրուած քարզմանութեան համար կարեւորութիւն ընծայեց այս բնագրային հարցի մասին մեր յանձնարարութեան: Այս մասին տե՛ս նաեւ **Uttdjian, H., Pičmanová, M.**, „Óda na sv. Bohorodičku Řehoře z Nareku“, *Parrésia* 8 (2014), էջ 523-530 եւ **Uttdjian, H., Pičmanová, M., Liška, L.**, „Písni podivuhodná“, *Plav*, 4/2015, էջ 21-23:




Նկ. 2

Երգ զարմանալի տաղի սկզբնատուրքին՝ ըստ Վնտկ. 2070 «Տաղարանի», ք. 152ա



Նկ. 3

Երգ զարմանալի տաղի սկզբնատուրքին՝ ըստ ՄՄ 7785 «Գանձարանի» (ՓԳ. դար), ք. 392ա



Նկ. 4

Երգ զարմանալի տաղի սկզբնատուրքին՝ ըստ ՄՄ 3503 «Տաղարանի» (1394 ք.), ք. 208ք

Հատուն արթնացեալ

«Դարձի՛ր սոմնացիդ» տողի Սոմնացոյ ինքնութիւնը զարմանալիօրէն շփոթութիւն պատճառած է: Իր 1957-ի հրատարակութեան մէջ, Արշաւիր Մխիթարեան կը բացատրէ (էջ 124). «ՍՈՄՆԱՅԻ – Գեղեցիկ եւ ջահէլ մի աղջիկ Աբիսակ անունով, որի հետ իր զառամ հասակում ամուսնանում է Դաւիթ արքան»: Նոյնիսկ Պ. Խաչատրեան, իր Գանձարան Հայ հին բանաստեղծութեան (Երեւան, 2000, էջ 890) ծաղկաքաղի մէջ նոյնը կը կրկնէ:

Աստուածաշունչ Մատեանի մէջ երեք «Սոմնացի» կանանց կը հանդիպինք: Մին (Գ թագ. Ա 3 եւ Բ 18 Հայոց եւ Եօթանասնից մէջ, իսկ Եբրայեցոց՝ Ա թագ. Ա 3 եւ Բ 17) յիրաւի Դաւիթ թագաւորի վերջին կողակիցն է: Այլ Սոմնացի մըն ալ այն կինն է, որուն մեռած մանուկը Եղիսէ վերակենդանացոյց (Հայերէն եւ LXX Գ թագ. Գ 12, այլապէս՝ Բ թագ. Գ 12): Սակայն ակնյայտ է, որ այս երկու տիկնայք տաղիս հետ կապ չ'ունին: Իսկ մեր Սոմնացին Երգ Երգոցի հարսն է (Երգ 2 12), եւ տաղիս հասկացողութեան նախապայմանն է զայս ըմբռնելը: Նոյն բանը ակնյայտ է, եթէ Սրբոյն Մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի գործը աչքի անցընելու ըլլանք:

Ի՛նչ կրնայ այսպիսի շփոթութիւն պատճառած ըլլալ արդեօք: Եբրայերէն բնագիրը Երգ Երգոցի հերոսուհին *Shulamite* կը կոչէ, իսկ միւս երկու տիկնաները՝ *Shunammite*: Սակայն Եօթանասնիցը արդէն զանոնք խեղաթիւրած է: Առաջինը՝ *Sounamitis*-ի վերածուած է (ուսկից՝ *Epistrophe epistrophe hē Sounamitis*), իսկ երկրորդը վերածուած է *Sōmanitis*-ի: Երբ անունները Եօթանասնիցի մէջ այսպիսով արդէն իրարու մօտեցած էին, մեր թարգմանիչը զանոնք նոյնացուցին, միօրինակ կերպիւ երկուքն ալ հայացնելով որպէս «Սոմնացի»⁵⁷:

Այժմ կը դառնանք նոյն տաղի սխալ հասկացողութեան ենթակայ մէկ այլ տողի՝ «Արկեալ փայտ ի հաց»: Մխիթարեան զայն կը թարգմանէ՝ «Հաց է մատուցում» (էջ 57): Նոյնիսկ Գարեգին Արք. Խաչատուրեան «Տրապիզոնի», որ Սրբոյն երկասիրութեանց իր ժամանակի մեծագոյն մասնագէտներէն էր՝ հոս սխալած է, իր 1948-ի հրատարակութեան մէջ այս տողը թարգմանելով իբր՝ «Փայտ վառեց հացի»⁵⁸: Տողիս շիտակ իմաստը ընկալելու համար՝ նշմարելի է,

⁵⁷ Զօհրապեանի Աստուածաշունչի հրատարակութենէն դատելով՝ որոշ ձեռագիրներ նաև «սողոմնացի» տարբերակը ունեն – տե՛ս Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1805, էջ 462, ուր «սողոմնացի» տարբերակն ալ կայ՝ տարբերացուածոց մէջ: Կ'արժէ ստուգել, թէ ո՛ր աղբերց մէջ որ տարբերակը կը գտնուի: Գիտենք, թէ Զօհրապեանի գլխաւոր ձեռագիրը Վնտկ. 1508ն էր (տե՛ս նաև Claude Cox-ի մանրամասն եւ ցարդ անտիպ ուսումնասիրութիւնը, “Oskan Yerevants’i and His Edition of the Bible (1666) Revisited”): Յամենայն դէպս, Ս. Գրիգոր Նարեկացի, ըլլա՛յ տաղիս մէջ, ըլլայ իր Մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի գործին մէջ «սոմնացի» կը գործածէ:

⁵⁸ Տե՛ս Հալեպի 2003-ի վերահրատակ., էջ 723:

Թէ նման արտայայտութեան մը կը հանդիպինք Սրբոյն Ս. Խաչի ներբողին մէջ, ուր կը գտնենք «...խրախոյս ի միմեանց ձայնելով. „եկայք արկցուք փայտ մահու ի հացն կենաց“»⁵⁹: Յիրաւի՝ Հայերէն Աստուածաշունչի մէջ (սակայն ոչ եբրայերէն բնագրին, եւ ոչ նոյնիսկ Յունարէն Եօթանասնիցի մէջ) կը գտնենք հետեւեալ հաստուածը. «...ոչ գիտացի թէ զինէն խորհեցան խորհուրդ շար եւ սսեն, եկայք արկցուք փայտ ի հաց նորա, եւ ջնջեսցուք զնա յերկրէն կենդանեաց» (Երեմիա ԺԱ 19): Յետակ է, ուրեմն, որ Սուրբը «արկեալ փայտ ի հաց» արտայայտութեամբ ի մտի ունի Քրիստոսի զոհաբերութիւնը, խաչափայտի վրայ իր խաչելութեան միջոցաւ⁶⁰:

Տնտեսանի առաջադրութիւնը եւ տաղաչափութեան խաւեր

Տնտեսանի առաջադրութիւնը


Հանճարեղ երաժշտագէտ եւ եկեղեցական երաժիշտ՝ Եղիա Մ. Տնտեսան (1834-1881) Շարակնոցի այլապէս անհասկնալի խազերը կրող վանկերուն համոզիչ կերպիւ ամանակային արժէքներ առաջադրած է (տե՛ս նկ. 5)⁶¹: Այսպէս՝ Տնտեսան որոշ խազեր կրող վանկեր մէկ ամանակի (կամ երաժշտական բաղման) տեւողութեան համապատասխան կը համարի, եւ որոշ այլ խազեր կրող վանկեր՝ երկու ամանակի: (Հարցը կը դժուարանայ այնպիսի վանկերու պարագային, որոնց վրայ մէկէ աւելի խազ գետեղուած է:⁶²) Իսկ խազերէ զուրկ վանկերը՝ նոյնպէս մէկ ամանակի տեւողութեան համապատասխան կը համարի:

⁵⁹ Տե՛ս Զարեհ Սրբազանի հազարամեակի հրատարակութեան մէջ, էջ 557, ուր Երեմիա Մարգարէի յղումը նշուած է:

⁶⁰ Խաչափայտը մեր Աստուածաբանութեան մէջ այս պատճառաւ՝ թէ՛ մահուան եւ թէ՛ կենաց փայտ կը նկատուի. իսկ Քրիստոս ի՛նք իր անձին մասին ըսած է. «Ես եմ հացն կենաց... եւ եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ է» (Յովհ. Զ 48-51): Այս մասին դասախօսեցիմք յընթացս “The Musician as Biblical Exegete: Theological and Musical Observations on the Example of St. Gregory of Narek’s *Hawun-hawun*” ելոյթին, 8 Հոկտ. 2011, ԱԷԱ 12-րդ Ընդհանուր Համագումարի ընթացքին (Բուրայէտի Եւրոպական Համալսարանին մէջ) եւ բազմիցս գրաւոր կերպիւ հրապարակեցիմք: Գոհունակութեամբ կը նշեմք, որ թէ՛ Հ. Բախչինեան, թէ՛ Ա. Տեւեան՝ իրենց հատորոց մէջ ազնուօրէն նշած են մեր աշխատանաց օգտակար ըլլալու հանգամանքը:

⁶¹ **Տնտեսան, Ե. Մ.**, *Նկարագիր երգոց*, Կոստանդնուպոլիս 1874, էջ 21: Խնդրոյ առարկայ զուլար յօդուածի մը վերատպութիւնն է, որ լոյս տեսաւ *Ժամանակ* հանդէսի 45 թիւի Յաւելուածին մէջ (1864 տարին), զոր սակայն չկրցանք գտնել:

⁶² Այս մասին՝ տե՛ս **Utidian, H.**, “Tntesean and the Music of the Armenian Hymnal”, Part I, *Parrésia* 5 (2011), 47-175, յատկապէս էջ 111 (մանասանդ ծան. 114):



Նկ. 6

Անուն անեղին տաղի «փայլք փաղփինտարած» հատուածի զանազան տարբերակներ հանդերձ խազագրութեամբ

Երբ առաջին հինգ վանկերը նկատի առնենք, եւ գանոնք կրող խազերու հիման վրայ Տնտեսեանի առաջադրած սկզբունքը կիրարկենք, կը տեսնենք թէ այս հինգ վանկերը եօթը բաղխմանց տեւողութիւն ունին: Վնտկ. 2070 «Տաղարանը» (1348 թ.) այս տողը կը կրէ երկու թղթոց միջեւ բաշխուած՝ 122բ-123ա: Նոյն տողը ՄՄ 3503 (1394 թ.) «Տաղարանի» մէջ կը գտնենք (թ. 170ա): Ի դէպ՝ երկուքն ալ Սիս օրինակուած են: Երկուքի մէջ բնագիրը նոյնն է եւ կը բաղկանայ «Փայլք փաղփինտարած անձայրենի լոյս» բառերէն: Առաջին հինգ վանկերը («փայլք փաղփինտարած») հետեւեալ տեւողութիւնները ունին՝ 2+1+1+1+2 բաղխում, քանզի վանկերը յաջորդաբար կը կրեն հետեւեալ խազերը. վերնախաղ (2 բաղխում), բութ (1 բաղխում), խունն (1 բաղխում), փռոյ (1 բաղխում), եւ երկար (2 բաղխում) – ըստ Տնտեսեանի աղիւսակի մէջ նշուած խազից տեւողութեանց (նկ. 5):

Սակայն ՄՄ 7785 «Գանձարանի» (Ղրիմ, ԺԴ. դար, թ. 293ա) մէջ նոյն տողը պակասաւոր կը գտնենք, զի առաջին տողը չորս վանկէ կը բաղկանայ. «փայլք ի տարած»: Ընդօրինակող դպիրը սակայն՝ շանացած է եօթը բաղխմանց տեւողութիւնը այնուհանդերձ ապահովել, երկրորդ վանկին վրայ երկար տեւողութիւն ունեցող խազ մը դնելով (ներքնախաղ մը՝ որ, ըստ Տնտեսեանի աղիւսակին՝ երկու բաղխմանց տեւողութեան կը համապատասխանէ). այսինքն՝ վանկերու տեւողութիւնը 2+2+1+2 բաղխում է. վանկերը կը կրեն յաջորդաբար՝ վերնախաղ (2 բաղխում), ներքնախաղ (2 բաղխում), փռոյ (1 բաղխում), եւ երկար (2 բաղխում) խազերը, եւ գումարը դարձեալ եօթը բաղխում է⁶⁴:

⁶⁴ Այս տեսակի «հատուցումը», որով երաժշտական լուծում մը կրնայ բառային բնագրի պակասը լրացնել, հնարատու է միմիայն պայմանաւ, որ Տնտեսեանի առաջադրած տեւողական առժեքները ընդունելու ըլլանք (ստ նուազն բութ, խունն եւ ներքնախաղ խազից հա-

Ի դէպ, վերոյիշեալ առաջին երկու ձեռագրաց տարբերակը նախընտրելի կը համարինք քան երկու գլխաւոր տպուած հրատարակութիւններուն – ուր, փոխանակ «փայլք փաղփինտարած անծայրենի լոյս»ի, ունինք կամ «փայլք փաղփինատար անծայրենի լոյս»⁶⁵ (որ գէթ 5+5 կառոյցը պահպանած կ'ըլլայ), եւ կամ ալ «փայլք փաղփինատար Աստուած անծայրենի լոյս» տարբերակը⁶⁶, որ «աւելորդ» վանկեր կը պարունակէ (5+2+5): Այս վերջինի պարագային՝ հաւանական է, որ -ած վանկը սխալ հասկացողութեան հետեւանօք՝ «աստուած» բառի սովորական կրճատումը կարծուեցաւ: Թէեւ մեր քննած ձեռագրաց պարագային՝ «պատիւ» նշանը շտեմանք այս վանկին վրայ, այնուհանդերձ կարելի է, որ այս կամ այն խազը սխալմամբ «պատիւ» նշանի հետ շփոթուեցաւ:

Տաղաչափութեան խաւեր

ա) Հաւուն արթնացեալ

Տնտեսեանի առաջադրութեան գործադրումը մեզ հետաքրքրական եզրակացութեանց կ'առաջնորդէ: Նախ՝ կ'արժէ վերադառնալ Հաւուն տաղին: Տպուած հրատարակութիւնները (գէթ տաղիս առաջին մի քանի տողերուն պարագային), որոնք ի սպառ անտեսած են միջնադարեան խազագրութիւնները, որոշ կանոնաւոր տաղաչափութիւն մը կը թուին դրսեւորել. այսպէս՝ իւրաքանչիւր տող եօթը (4 + 3) վանկէ կը բաղկանայ.

Հաւուն հաւուն արթ-նա-ցեալ,

Դիտելով [ը]զ-հե-թա-նոսս՝

Ձայնէր ձայնէր տատ-րա-կին,

Սի-րա-սը-նունդ սի-րել-ւոյն:

Սակայն ըստ հնագոյն ձեռագրաց, որոնց ամենահինը վերոյիշեալ Փրզ. 79 (1241 թ., Դրագարկ) է, Բնագիրը բաւական կը տարբերի այս կարգադրութենէն: Նախ՝ առաջին բառը չի կրկնուիր: Երկրորդ՝ ունինք ար-թը-նա-ցեալ, եւ տա-տը-րակին, ուր իւրաքանչիւր «ըթ» ձայնաւորը փոշ խազ մը կը կրէ:


Տնտեսեանի աղիւսակի չափանիշերով «երկար» վանկերը, եւ կամ խազերու համակցութիւնները, որոնց արդիւնքը մէկէ աւելի (թերեւս շատ աւելի) բաղխմանց կը համապատասխանեն, ընդհանուր տաղաչափութիւնը բաւական կը կերպարանափոխեն, ուր ընդհանուր կշռոյթը (հոլիթմոսը) կը գործէ կարճ տեւողութիւն ունեցող եւ երկար տեւողութիւն ունեցող վանկերու փոխ-յարա-

մար): Բաւական համոզիչ կոտան մըն է այս յօգուտ Տնտեսեանի առաջադրման, որովհետեւ ամենեւին շենիւր Շարակնոցի հիման վրայ կատարուած իր ենթադրութեանց, ոչ ալ յատուկ տեղայ կամ ժամանակի մը գործնական երգեցողութեանց եւ սովորութեանց փորձառութեան վրայ:

⁶⁵ Տե՛ս Քէօշկերեանի հրատարակութիւն, էջ 91:

⁶⁶ Տե՛ս Վենետիկոյ վերոյիշեալ Մատենագրութիւնը, էջ 476. որդեգրուած է նոյնպէս հազարամեակի հրատարակութեան մէջ, էջ 662:

բերութեանց շնորհիւ, ստեղծելով հետաքրքրական եւ ըմբոշխնելի երաժշտական արդիւնք մը: Այսպէս՝ ըստ Փրգ. 79ի՝ վերոյիշեալ տողերը հետեւեալ երեւոյթը կը ստանան (տե՛ս նկ. 7, որ թ. 372ա-ի պատշաճ մասը կը ներկայացնէ).



Նկ. 7

Հաւուն արթնացեալ ըստ հնագոյն պահպանուած ձեռագրի՝ Փրգ. 79 «Տաղարանի», սկզբնատուրթիւնը՝ ք. 372ա

Հա-ւո՛ւն ա՛ր-թը-նա-ցեա՛լ.

Դի՛ր-տե-լո՛ւ վ զ[հ]ե՛-թա-նո՛սս:

Չայն-ե՛ր տա՛-տը-րա-կի՛ն.

Սի՛ր-րա-սնո՛ւնդ սի՛ր-րել-լ[ւ]ո՛յն:

Սակայն ի վիճակի չենք դատելու թէ ի՞նչ է (օրինակ իմն) սոսկ երկար մը եւ կամ վերնախաղ մը կրող «երկար» վանկերու տեւողութեան, եւ (ինչպէս «Հա-ւուն») ի երկրորդ վանկին վրայի) երկար խազից շղթայի մը համապատասխան տեւողութեանց միջեւ համեմատութիւնը: Ուստի՝ բոլոր առաւել կամ նուազ աստիճանով «երկար» (այսինքն՝ մէկ բաղխումէ աւելի տեւող) վանկերը անխտիր նշած ենք՝ պարզապէս առողջանութեան «երկար» մը զետեղելով⁶⁷: Այսուամենայնիւ՝ իւրայատուկ ձեւով մը տեսակ մը կանոնաւոր տաղաչափութիւն մը կը յայտնաբերուի, որու կառուցուածքը սակայն կը «յենի» խազից վրայ (ըստ Տնտեսեանի առաջադրութեանց): Եւ այս տաղի պարագային՝ կը

⁶⁷ Աւելի մանրամասն «երկար» վանկերու կրած խազագրութիւնները մէկէ աւելի ձեռագիրներէ փառուած կը բաղդատուին այստեղ՝ Utidjian, H., „Poezie a hudba sv. Řehoře z Nareku jako zrcadlo arménské historie v druhém tisíciletí“, *Parrésia* 8 (2014), էջ 331-370, մանաւանդ էջ 353-361:


տեսնենք որ ձեռագրի տաղաչափութիւնը (նոյնիսկ նախքան խազերէ ծագող տետրոլթեանց հաշուի առնուիլը) խոտոր կը համեմատի հրատարակուած բնագրաց տաղաչափութեան հետ:

Իսկ եթէ նայինք Կոմիտասի գրի առած եղանակին⁶⁸ (տե՛ս նկ. 8), ահնայտ է, որ անոր կշռոյթը եւ տաղաչափութիւնը բոլորովին կը տարբերին մեր ցարդ քննածներէն: Նոյնպէս՝ սոսկ խազից բառերու վրայ բաշխման հետ բաղդատելով՝ ահնայտ է, որ այս եղանակը չի կրնար համապատասխանել խազագրութեանց մարմնաւորած եղանակին⁶⁹: Այսպիսով՝ ջանացինք ցոյց տալ աւելի ընդհանուր երեւոյթ մը, ըստ որուն՝ նոյն տաղը երեք տարբեր տաղաչափութեան խաւեր կրնայ դրսեւորել, կախեալ անկէ՛ եթէ նկատի առնելու ըլլանք (1) սոսկ բառային բնագիր մը, կամ (2) հնագոյն պահպանեալ ձեռագիր աղբիւրները իրենց խազագրութեամբ հանդերձ (ըստ Տնտեսեանի առաջադրութեան), եւ կամ (3) մեզի հասած այս կամ այն եղանակը:

⁶⁸ Այս եղանակը Կոմիտաս 1893-ին գրի առած է, ըստ Գեորգ Արդ. Աբրահամեան Ռշտունայ երգեցողութեան (տե՛ս **Կոմիտաս**, *Երկերի ժողովածու*, հ. Ը., Հոգեւոր Ստեղծագործութիւններ, աշխ. Աթայեան, Ռ., Գէօրգիւհեան, Գ., Գերոյեան, Գ., Երեւան, 1998, էջ 142 (եռաժողովական բնագիր՝ Եւրոպական ձայնագրութեամբ) եւ էջ 239 (տեղեկութիւններ եղանակի գրառման պարագայից մասին): Ըստ մեր կարծեաց՝ այս գեղեցիկ մեղեդին (գոր ըստ երեւոյթի՝ Կոմիտաս մակագրած է «ԴՁ եւ ԱԿ») ԴՁ կիսա-դարձուած ծանր եղանակներու ընտանիքի մը կը պատկանի, որուն ծանօթ այլ նմոյշներ են՝ (ա) Ս. Պատարագի զգեստաւորման ծանր «Նորհուրդ խորին»ը – տե՛ս *Ձայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ պատարագի*, Վաղարշապատ, 1878 (սրբագրուած վերահրատարակում 1874-ի խմբագրութեան), էջ 193 («Յոյժ Մ[ա]նր»), *Մայր եղանակ ս. պատարագի հայկական ձայնագրութեամբ վաւերացեալ պատկ. կրօնական ժողովէն*, Կոստանդնուպոլիս, 1934, էջ 1 («Մամրագոյն»), եւ երգք հայաստանեայց եկեղեցոյ յերիւրեալք ըստ կանոնաց նորոյ երաժշտութեան, աշխ. Պ. Պետրոս Պիանքինի, Վենետիկ, 1862, էջ 15 (անթուագիր), կամ *Les chants liturgiques de l'église arménienne*, աշխ. **Bianchini, Pietro**, Վենետիկ, 1877). եւ (բ) ծանր Սուրբ-սուրբը (տե՛ս *Melodies of the Holy Apostolic Church of Armenia*, **Apcar, Amy** (Ed.), 2nd enlarged edition, Vols. 1-3, Breitkopf and Härtel, Leipzig, 1920, Vol. 2, էջ 572, եւ *Մայր եղանակ Ս. Պատարագի*, էջ 11): Մեր երեք «ամենահետաւոր» նկատուած ասանդութիւններէն ծագող այս կտորները գրեթէ նոյն եղանակը կը ներկայացնեն:

⁶⁹ Տե՛ս վերեւ նշուած **Utidian, H.**, „Poezie a hudba sv. Řehoře z Nareku jako zrcadlo arménské historie v druhém tisíciletí“, յատկապէս՝ էջ 357: Անհրաժեշտ նախապայմաններ կը համարինք, որ (ա) խազից բաշխումը բնագրի վանկից վրայ խոտոր շհամեմատի եղանակի բաշխման հետ, եւ (բ) խազից հետ առնչուած տետրոլթիւնները համապատասխանեն իւրաքանչիւր վանկի կրած եղանակային հատուածոց տետրոլթեանց հետ: Կը շեշտենք սակայն՝ որ անբաւարար է վերոյիշեալ նախապայմաններու գոհացումը. մեր Շարակնոցի եղանակաց տարբերակներու ստուար մեծամասնութիւնը կը գոհացնէ զանոնք, այնուհանդերձ պարզապէս տետրոլթիւն արժէից հաւանական համաձայնութիւնը անբաւարար է այդ եղանակաց համապատասխան խազագրութեանց հետ համընկնումը փաստելու:

3. ՀԱՒՈՒՆ ՀԱՒՈՒՆ



Նկ. 8

Հաւու՛ն Կոմիտաս Վարդապետի Լիմօնեան ձայնագրութեամբ կատարուած գրառման հիման վրայ՝ Եւրոպական ձայնագրութեան փոխադրուած, երկերի ժողովածուի կազմողներու կողմանէ

բ) Գոհար վարդըն

Մեր յաջորդ օրինակը՝ Վարդավառի Գոհար վարդըն վառ առեալն է: Ինչպէս կը նշէ Տէրեան՝ երբ սոսկ բառերը նկատի առնենք՝ փոխն ի փոխ 7 եւ 8 վանկնոց տողեր զիրար կը յաջորդեն. այսպէս՝

Գոհար վարդըն վառ առ-եալ


Ի վեհից վարսիցն արփենից:

Սակայն եթէ խազերն ալ նկատի առնենք՝ զոր օրինակ ըստ ՄՄ 3540 «Գանձարան»ի (1286 թ., Յիպնայ վանք, թ. 287բ), եւ կամ Վնտկ. 275 «Գանձարան»ի (ժե.ժէ. դդ., թ. 335բ, տե՛ս նկ. 9), հետեւեալ տաղաչափութիւնը կը զրսեւորուի (Տնտեսեանի առաջադրութեան կիրարկութեամբ՝ սակայն դարձեալ՝ առանց երկու կամ աւելի բաղխում տեւող վանկից միջեւ զանազանելու, զորս բոլոր այստեղ օժտած ենք առողջանութեան երկարով). կ'ամփոփենք ՄՄ 3540 ձեռագրի ներկայացուցած պատկերը.

Գոհա՛ր վարդըն վա՛ռ առեա՛լ. կրկնէ

Ի վեհի՛ց վարսի՛ցն արփենի՛ց.

Ի վեհի՛ց վարսի՛ցն արփենի՛ց: կրկնէ



Նկ. 9

Գոհար վարդըն վառ առեալ տաղի սկզբնատրոսիւն՝ ըստ Վնտկ. 275 «Գանձարանի»,
թ. 335բ

(Վերջին երկու տողերու խազագրութիւնները իրարմէ կը տարբերին. գլխատարաբար՝ առաջին «վե-հից» բառի «ինի» ձայնաւորը՝ երկկիտաւոր սուտէ մը ետք՝ զիրար յաջորդող փոշ եւ փոքրիկ պարոյկ խազից շղթայ մը կը կրէ, որ կ'աւարտի երկարով մը. մինչդեռ երկրորդ անգամուն՝ սոսկ պարոյկ մը կը կրէ): Վենետկոյ ձեռագիրը՝ թէեւ իր խազագրութիւններով կը տարբերի (զոր օրինակ՝ նոյն «ինի»ն երկկիտաւոր խոշոր ոլորակ մը կը կրէ, կցուած խաղի մը, որուն կը յաջորդեն փոշ մը եւ ապա երկար մը), սակայն՝ գէթ կոշտ մակարդակի մը վրայ՝ նոյն «երկար» եւ «կարճ» տեւողութեանց յատակագիծը կը ներկայացնէ, այսինքն՝ նոյն տաղաչափութիւնը (յիշելով, որ «երկար» վանկից որքանո՞վ երկար ըլլալը ի վիճակի չենք հաշուելու, երբ վանկ մը մէկէ աւելի խազից համակցութիւն մը կը կրէ):

Երբ բաղդատենք սոսկ բառերէն ծագող տաղաչափութիւնը խազաւորեալ տաղաչափութեան հետ՝ ուշագրաւ է, որ այս տաղի պարագային վերջինս չհակառակիր առաջնոյն, այլ անոր շեշտուած, առաւել զարգացած մէկ տարբերակը կրնայ նկատուիլ, ուր բնականոն ընթերցման ընթացքին շեշտուած վանկերը առաւել եւս աճած են, տեւողային ընդլայնմամբ. այսինքն՝ ուժային (Յուն. dynamikē) շեշտերը զօրացած են տեւողային (Յուն. agōgikē) շեշտերով: Ուստի կարելի է ըսել, թէ երաժշտութիւնը (գոնէ վանկից տեւողութեանց

տեսակէտով) կը «գործէ» բառերու հետ «դաշնակցութեամբ», եւ ոչ անոնց «հակառակելով»: Նոյնպէս՝ կարել է նշել, որ «երկար» եւ «կարճ» վանկերու փոխ-յարաբերութիւնները «եռային» կշռոյթ մը կը ստեղծեն, որուն համահատում մը (կատ. syncope) կ'ընկերանայ, որ զուտ բառական բնագրին մէջ չի տեսնուիր: Զոր օրինակ՝ Վնտկ. 275 ունի «Գո-հար» (շէշտ, խոսրովային), «առեալ» (փուշ, երկար), «վար-սիցն» (փուշ, ոլորակ), եւ այլն, որոնք բոլորն ալ մէկ բաղխում եւ ապա երկու բաղխում, այսինքն՝ «մէկ յանդիման երկուքի» համամասնային յարաբերութիւն մը կը ներկայացնեն:

Դարձեալ՝ երրորդ խաւ մը մէջտեղ կ'ելլէ՝ երբ մեզի հասած զանազան մեղեդիներ աչքի անցընելու ըլլանք: Նախ՝ կ'անդրադառնանք էմի Աբգարի Պատարագամատոյցին (Նոր Զուղայի աւանդութեան հետ առնչուած): Նկատի առնելու է որ նոյն եղանակը հոս զանազան տարբեր բառերով մի քանի տարբեր տօներու յատուկ տաղից ծառայելու համար նախատեսուած է⁷⁰: Հետաքրքրական է համրել՝ թէ իւրաքանչիւր վանկ քանի՜ երաժշտական բաղխում կը տեւէ: «Գո-հար վար-դըն» բառերու վանկերը՝ համապատասխանաբար 5, 13, 3 եւ 7 բաղխում կը տեւեն: Ըստ խազագրեալ ձեռագրաց՝ գէթ Տնտեսեանի առաջագրութիւնը մեզի ենթադրել կու տայ սակայն՝ թէ առաջին, երրորդ եւ չորրորդ վանկերը բոլոր մէկական բաղխում ունենալու են: Այնուհանդերձ՝ երկրորդ վանկին առաջինէն աւելի երկար ըլլալը՝ գէթ «ծուռ շիտակ» համաձայն է երկրորդին «երկար» խազ կրելու հանգամանքին (որքան ալ «հինգ յանդիման տասներեքի» համամասնութիւնը տարօրինակ թուի):

Այժմ դառնանք Ի. դարու սկզբնաւորութեան ընդօրինակուած ձեռագիր հատորի մը⁷¹ կիմօնձեան ձայնագրութեամբ գրի առնուած երգեցողութիւններէ բաղկացեալ: Հատորս Գոհար վարդըն տաղի արձանագրութիւն մը կը պարունակէ⁷², ամենայն հաւանականութեամբ ԺԹ. դարուն յօրինուած՝ «առապան»

⁷⁰ Տե՛ս *Melodies of the Holy Apostolic Church of Armenia*, Vol. 1, էջ 82-87:

⁷¹ ՄՄ «Նորագոյն ձեռագիրների հաւաքածոյ», թիւ 6, էջ 255:

⁷² Բնագիրը նկարահանմամբ վերատապագրուած է հետեւալ յօդուածի վերջաւորութեան, որ այս եղանակի առկայութիւնը մատնանշուած է. **Վարդուեան, Ա.**, «Գրիգոր Նարեկացու տաղերի նորայայտ եղանակները», *Բազմավէպ*, 2004, էջ 437-461, յատկապէս՝ էջ 447: Թէեւ Վարդուեան զայն «նորայայտ» կը յորջորջէ, այնուհանդերձ նոյն եղանակը կը գտնենք նաեւ *Արմաշի Դպրեվանքը*, Բ. մաս (Երեւան, Գանձասար Աստուածաբանական Կենտրոն, 1998), հեղինակութեամբ **Աստղիկ Մուշեղեանի**, էջ 202-204. Ըստ Ա. Մուշեղեանի (էջ 160), հատորիս առաջին էջը «Անուշաւան 1907-1908 թթ. Արմաշ» մակագրութիւնը կը կրէ իր առաջին թերթին վրայ, իսկ ձեռագրի գրիչը հաւանաբար Արմաշի երաժշտապետ՝ Յակոբոս Այվազեանն (1869-1918) է, ուստի շատ հաւանաբար Համբարձում Չէշեանի (1828-1901) ուսուցած եւ կամ յօրինած եղանակներէն ըլլալու է: Իսկ գրեթէ նոյն եղանակը կը գտնուի Զարեհ Սրբազանի *Մեղեդիներ, Տաղեր եւ Գանձեր Հայաստանեայց Եկեղեցույ* մէջ (էջ 78-79), որուն յառաջաբանին մէջ նշած է, որ եղանակը փաղուած է «Վարդան Սարգսեանի հրատարակած *Արբազան Երգեցողութիւնք Հայաստանեայց Եկեղեցույ* գործի Ա. հատորէն» (Նիւ Եոթ

մաքամին վրայ⁷³. «Գո-հար» բառի առաջին վանկը շատ երկար մեղեդիական դարձուածք մը կը կրէ (36 բաղխումներէ բաղկացած⁷⁴), իսկ երկրորդ վանկը՝ յարաբերաբար շատ կարճ (6 բաղխում) – ինչ որ հակառակն է խազազրեալ ձեռագրաց ներկայացուցած պատկերին:

գ) Անուն անեղին էին

Երրորդ օրինակին համար՝ կը վերադառնանք Անուն անեղին էին տաղին, զայն բաղդատելու համար շատ սիրուած երգ զարմանալի/Աչքըն ծով տաղին հետ⁷⁵: Այս բաղդատութիւնը խիստ շահեկան է այդ պատճառաւ՝ որ, հակառակ որ առաջին տաղը ոտանաւոր է⁷⁶ իսկ երկրորդը՝ անկանոն երկայնք ունեցող տողերէ բաղկացած, այսուհանդերձ այս երկու տաղերը քիչ թէ շատ նոյն խազերը կը կրեն⁷⁷. տե՛ս Վնտկ. 2070 «Տաղարանի» համապատասխան տաղից սկզբնաւորութիւնները կրող էջերը՝ նկ. 10 (122բ-123ա) եւ նկ. 2 (թուղթ 152ա), նկարուած մեր կողմանէ:

Նախ՝ կ'արժէ Անուն անեղին էին տաղի առաջին տասը տողերը աչքի

1966, էջ 16). ստուգած ենք, որ յիշատի այս հատորին մէջ (էջ 141) կը գտնուի նոյն եղանակը: (Իրականութեան մէջ, Վարդումեանի «նորայայտ» եղանակները բոլորն ալ նախապէս լոյս տեսած են):

⁷³ Օսմանեան մաքամներու եւ մեր եկեղեցական ուրբ ձայնից մասին յարաբերութեանց մասին ամենէն բանիմաց վերլուծումը կը պատկանի Եղիա Տնտեսեանի. այդ եւ այլ ժամանակակից կարեւոր աղբերց մասին տե՛ս **Utidjian, H.**, *The Music of the Armenian Hymnal: the Tntesean Corpus*, էջ 62-71: Իսկ մասնագիտական գնահատման մը համար, որ զանազան գրաւոր աղբիւրներ քննականօրէն կը համեմատէ, նաեւ նկատի առնելով *մաքամներու* այժմեան յատկանիշները թէ՛ Պոլսահայ եւ թէ՛ Թրքական աւանդութեանց դիտանկիւններէ՛ տե՛ս **Utidjian, H., Olley, J.**, “The Armenian Octoechos and the Ottoman Makams,” զոր հեղինակները մօտիկ ապագային հրատարակութեան կը պատրաստեն:

⁷⁴ Նկատի առնելով թէ Պսակ Քինյ. Ստեփանեանի Տնտեսեանի Շարակնոցի յառաջաբանին խրատը («Հայ Զայնագրութեան մէջ ծանր մէկ բաղխումը՝ այսինքն մէկ կէտը (.) ձեռքի մը իջնելու եւ ելնելու տեսողութիւնը կ'արժէ, իսկ Եւրոպականին մէջ միայն իջնելը, հետեալաբար երբ Հայկական ծանր չափ մը Եւրոպականի վերածել ուզուի, պէտք է մէկ կէտը երկու կէտի (.) վերածել»), *Շարական ձայնագրեալ*, աշխ. *Եղիա Մ. Տնտեսեան*, Կոստանդնուպոլիս, 1934, անթուագիր էջ), Լիւսնեանի ձայնագրութեամբ ծանր կտորներու գրութիւնք երբ Եւրոպականի կը վերածուին, պատշաճ է Լիւսնեանի մէկ ուրբերոյ արժէքը Եւրոպականի մէկ չորրորդի համապատասխան սեպել, որով 18 բաղխումը 36-ի կը վերածուի, եւ 3 բաղխումը՝ 6-ի: Այսպիսով՝ բացայայտ կը դառնայ այս մեղեդիին էմի Աբգարի արձանագրածէն որքան ատէլի ծանր ու զարդարուն ըլլալը:

⁷⁵ *Աչքըն ծով* ըստ հինագոյն ձեռագրաց՝ *երգ զարմանալի* տաղին մաս կը կազմէ, սակայն իբր առանձին կտոր ծանօթ դարձած է:

⁷⁶ *Անուն անեղին էինը*՝ տասը վանկնոց (5 + 5) տողերէ կը բաղկանայ (ի բաց առեալ վերջին երեք տողերուն՝ որոնք 11, 11 եւ 13 վանկնոց են, եւ մի քանի այլ բացառութեանց, որոնց մասին՝ ստորեւ):

⁷⁷ Նոյնիսկ՝ ՄՄ 3503 ձեռագիրը *Անուն անեղին էին* տաղը սկսող էջին վրայ (թ. 170ա) էջատակին կ'արձանագրէ. «Երգ զարմանալուն ձայն է. նոյն է»: Նոյնպէս՝ ՄՄ 7785 ձեռագրի էջատակին (թ. 292բ) կը գտնենք «Երգ զարմանալի՝ ձայնի՛ն է» նշումը:

անցընել, ըստ Վնտկ. 2070-ի, գոր համեմատած ենք ՄՄ 3503 (թ. 170ա) եւ ՄՄ 7785 (թթ. 292բ-293ա) ձեռագրաց հետ.

Անուն անեղին / էին աստուած է.

է միշտ յէութեան⁷⁸ / յանհասութեան նոյն:

նոյն ինքն է նըման / նոյն մի եւ նոյն մի.

մի ոմն ի յէից / անդրէն ի նոյն թիւ:

Թիւ միշտ եռակի, / եզեռակի փառք.

փառք իմ դիմառից / էից գոյէից գունդ:

Գունդ տրամք երամից / կայք յանուրեք վայր.

վայր համբից բիւրից / ար սահմանեալ⁷⁹ գետ:

Գետք քառանիւթեայք / պաղպաջ երկնի փայլ փայլ.

փայլք փաղփինտարած⁸⁰ / անծայրենի լոյս:

Բառային վանկից հիման վրայի տաղաչափութիւնը բաւական կանոնաւոր կը թուի. տողերը մեծաւ մասամբ տասը վանկնոց են. երկու բացառութիւնները վեցերորդ եւ իներորդ տողերն են, որոնք տասնըմէկ վանկ ունին: Յառաջիկայ նկարագրութեան յարմարութեան սիրոյն՝ իւրաքանչիւր տող երկու մասի բաժնած ենք, «/» նշանի կիրարկութեամբ, որուն, ի դէպ՝ միշտ կը նախորդէ երկու բաղխում տեւող վանկ մը: Իսկ երաժշտական տեւողութեանց մասին ի՞նչ կրնանք ըսել: Իւրաքանչիւր տողի վերջին վանկը երկար մը կը կրէ (իսկ տող 6 եւ տող 10 երկարէն առաջ նոյն վանկին վրայ երկու բուրբ ալ կը կրեն): Նախ՝ բոլոր անգոյգ տողերը բաւական երկար խազային շղթայ մը կը կրեն, որուն ճշգրիտ տեւողութիւնը ի վիճակի չենք կոահելու: Նոյնպէս՝ որոշ խազերու համակցութիւններ մը կը գտնենք, իւրաքանչիւր տողի վերջընթեր (տող 1, 2, 3, 4, 5, 7, 8, 10) կամ անոր նախորդող (տող 6, 9) վանկից վրայ: Ասոնցմէ ոմանք կը բաղկանան ոլորակ, խաղ, խումն՝ կամ ոլորակ, խաղ, փուշ՝ եւ կամ ալ վերնախաղ, խումն խազերէն: Իսկ ճիշդ այն աւելի երկար (տասնըմէկ վանկնոց) տողերուն պարագային՝ խումնը այդ վանկի խազից համակցութեան վրայ չի գտնուիր՝ այլ յաջորդ վանկի վրայ: Թերեւս այսպիսով խազագրողը ջանաց ի հեճուկս «աւելորդ» վանկի ներկայութեան՝ նոյն տեւողութիւնը պահպանել. եւ

⁷⁸ ՄՄ 7785՝ է միշտ յէութեան. իսկ «յէ-» վանկը երկու բաղխում արժող վերնախաղ մը կը կրէ, ի տարբերութիւն Վնտկ. 2070 եւ ՄՄ 3503 ձեռագրին, որով բաղխատմամբ այս աղբերց՝ տողի այս մասը ինք բաղխում կը տեւէ (որ զարտուղութիւն մը կը թուի ըլլալ):

⁷⁹ ՄՄ 7785. խոնատութեան պատճառաւ յստակ չէ, թէ աջակողմը ի՞նչ գրուած է (զուցէ արբառը կը բացակայի⁷⁹):

⁸⁰ ՄՄ 3503՝ փայլ փաղփինտարած, ՄՄ 7785՝ փայլք ի տարած, այսինքն՝ հոս վանկ մը կը պակսի: Սակայն «ի» բառը ներքնախաղ մը կը կրէ, որ երկու բաղխում կ'արժէ. ատոր շնորհիւ՝ այս մասին բաղխմանց թիւը եօթը կը մնայ, ի հեճուկս մէկ վանկով պակասաւոր ըլլալու հանգամանքին:

յիրաւի՝ այսպիսով իւրաքանչիւր տողի երկրորդ մասը նոյն երաժշտական տեւողութիւնը կ'ունենայ (պայմանաւ որ ընդունինք թէ վեցերորդ եւ տասներորդ տողից վերջաւորութեան երկարներուն նախորդող երկու բառերը ունեն յաւելուածական բաղխումային արժէքով չեն օժտեր այդ վանկը: Այնուհանդերձ՝ զոյգ տողերու առաջին մասերը միշտ նոյն երաժշտական տեւողութիւնը չ'ունին. այսպէս՝ երկրորդ, վեցերորդ եւ տասներորդ տողերու առաջին մասերը՝ ունին եօթական բաղխում, իսկ չորրորդ եւ ութերորդ տողերու առաջին մասերը՝ ութական: Ասկէ զատ՝ նշմարելի է, որ անզոյգ վանկից առաջին մասերու վերջին երեք վանկերու առաջինը եւ երրորդը միշտ երկու բաղխման համապատասխանող խազեր ունեն. իսկ միջանկեալ վանկերը երբեմն առաջ մը կը կրեն, եւ երբեմն ոչ – որ այն տպաւորութիւնը կը թողու, որ այստեղ առաջ զայն կրող վանկի տեւողութեան վրայ ազդեցութիւն չ'ունենար: Եթէ այսպիսով համապատասխանութիւնը պահպանուի բոլոր անզոյգ տողերու առաջին մասերու միջեւ՝ կրնանք այն եզրակացութեան յանգիլ, որ բոլոր անզոյգ տողերը նոյն երաժշտական տեւողութիւնը ունին: Երաժշտական տեւողութեանց տեսակէտով սակայն՝ զոյգ տողերու առաջին մասերը իրարմէ կը տարբերին, ունենալով երբեմն եօթը եւ երբեմն ութը բաղխում:

Սակայն ՄՄ 7785 ձեռագրի մէջ երկրորդ եւ վեցերորդ տողերու առաջին մասերը երկու բաղխմանց համապատասխանող ներքնախաղ խազը կը կրեն («յէութեան» եւ «դիմառից») բառերու առաջին վանկից վրայ), որով այս մասերուն երկայնքը մէկ բաղխմամբ կ'աւելնայ. այսպիսով՝ վեցերորդ տողի առաջին մասը ութը բաղխում կը տեսնուի, սակայն երկրորդ տողը արդէն «աւելորդ» վանկը մը ունի («մի»), ուստի այս ձեռագրի պարագային հոս ինը բաղխմանց կը յանգինք, ինչ որ մեզի զարտուղութիւն մը կը թուի (այստեղի «է մի միշտ յէութեան» տարընթերցուածը, որ կրնայ յաջորդ տողի «նոյն մի եւ նոյն մի» մասէն «մի» բառի տարածամ ընդօրինակութեան արդիւնքը ըլլալ՝ այսպիսով սոսկ գրչական սխալի մը կրնայ վերագրուիլ): Կը մնայ միայն տասներորդ տողի առաջին մասը, որ կը շարունակէ միայն եօթը բաղխում ունենալով «պակասաւոր» ըլլալ: Ինչպէս վերեւ տեսանք՝ հոս եւս ներքնախաղ մը կայ այս ձեռագրին մէջ, սակայն որովհետեւ «փաղփինտարած»ի տեղ ունինք միայն երեք վանկ («ի տարած»), այստեղի ներքնախաղը միայն այդ պակասը կը չեզոքացնէ, եւ չի բաւեր այս մասն ալ ութը բաղխմանց հասցնելու: (Եթէ այս ձեռագիրը եւս «փաղփինտարած» ունենար, եւ դարձեալ ներքնախաղը կրէր, այն ատեն այս տողն ալ նոյն տեւողութեան պիտի հասնէր):

Արդեօք զանազան խազից վրայ զետեղուած կէտերը կրնա՞ն տեւողութեանց վրայ ազդեցութիւն մը ունենալ: Կէտերու դերը մեզի անծանօթ կը մնայ: Սակայն ոչ բոլոր ազդեցութիւնները կէտերով հարուստ են: ՄՄ 3503 ձեռագրի

խազերը հոս գրեթէ Վենետիոյ ձեռագրի խազագրութեանց յար եւ նման են (կէտերով հանդերձ). սակայն եթէ ՄՄ 7785-ի հետ բաղդատենք, կը տեսնենք որ թէեւ այստեղի խազագրութիւնները եւս շատ կը նմանին վերոյիշեալ երկու աղբերց խազագրութեանց, կէտերու մեծամասնութիւնը կը պակսի հոս (նամանաւոր այն կէտերու պարագային՝ որոնք մէկ բաղխում արժող խազերու վրայ գետեղուած էին): Ենթադրելի է, ուրեմն, որ այս կէտերը որոշ յաւելեալ տեղեկութիւններ կը հաղորդէին երգողին, սակայն պակաս հաւանական կը թուի, որ տետղութեանց եւ կամ տաղաշափութեան վրայ արմատականօրէն ազդեցութիւն ունեցած ըլլային անոնք: Նոյնը կը համարձակինք ըսելու՝ բառերու տակ գետեղուած փոքրիկ գիրերու մասին Վենետիոյ եւ ՄՄ 3503 ձեռագրաց մէջ, եւ ոչ ՄՄ 7785-ին: Կը թուի, թէ երեք աղբիւրներն ալ քիչ թէ շատ նոյն, կամ առ նուազն նման՝ եղանակներ կը ներկայացնեն, սակայն առաջին երկուքը աւելի մանրամասն են, եւ աւելի նրբութիւններ կը պարունակեն, քան երրորդը:

Կրնանք ուրեմն յանգիլ այն զգուշաւոր եզրակացութեան, որ այս կամ այն ձեւով կանոնաւոր տաղաշափութիւն մը պահպանելու ջանք մը եղած է այս տաղի համար, եւ, ըստ երեւոյթի՝ զուգահեռաբար՝ նաեւ կանոնաւոր երաժշտական կշռոյթ: (Այս վերջինը անշուշտ անհրաժեշտ տուեալ մը չէ. հնարաւոր է որ երգեցողութեան ընթացքին զանազան տաղից զանազան տողերը տարբեր տետղութեամբ երգուին: Սակայն գէթ այս պարագային՝ կը թուի թէ երաժշտական կանոնաւորութիւնը անխախտ մնացած է):

դ) Երգ զարմանալի/Աշխն ծով

Այս տաղին սկզբնաւորութիւնը՝ դարձեալ նոյն Վենետիոյ «Տաղարան»էն այսու կը ներկայացնենք «եղածին պէս» (զայն դարձեալ համեմատելով ՄՄ 3503 (թ. 208աբ) եւ ՄՄ7785 (թ. 392բ) ձեռագրաց՝ ինչպէս նաեւ Փրզ. 80 («Գանձարան», Կաֆա, 1380 թ., թթ. 304բ-305ա) ձեռագրի հետ).

Երգ զարմանալի⁸¹/երգ շարժվարժենի.

տեղի եղեր⁸²/բարեկերտի⁸³ խորհուրդ.

խորհուրդ համերամ. /զարդերամից զարդ:

նոճին⁸⁴ նոճ⁸⁵ յեռի. /սափոր եղեգնատընդոյն⁸⁶.

⁸¹ ՄՄ 7785 զարմանանիշ:

⁸² Փրզ. 80 եղակի. այսպիսով այս մասը միւս աղբերց բաղդատմամբ վանկ մը եւս ունի, սակայն նոյն երկու երկար խազերը կը կրէ, որով այս մասին բաղխմանց թիւը մէկ հատով աւելի կ'ըլլայ:

⁸³ ՄՄ 7785 բարեկերտին ՄՄ3503 բարեկերտի Փրզ. 80 բարեկերտին:

⁸⁴ ՄՄ 7785 Փրզ 80 նոճի ՄՄ 3503 նոյճին:

⁸⁵ Ի տարբերութիւն միւս աղբերց՝ ՄՄ 7785 հոս երկար խազի տեղ միայն բուր խազը կը կրէ, որ միայն մէկ բաղխման տետղութեան կը համապատասխանէ:

⁸⁶ ՄՄ 7785 եղեգնատընդոյն Փրզ. 80 եղեգնեա տընդոյն:

մատն աւրի աւրէն⁸⁷. /նըժդարենի⁸⁸ ուռ⁸⁹:
 Յանից⁹⁰ նըրբենից. /կիցիմ ի կից կամար.
 նեճեմ⁹¹ թէ⁹² նեճեմ. /միջարէի⁹³ ժամ:
 Աչքըն ծով ի ծով /ծիծաղախիտ⁹⁴
 ծաւարենայր⁹⁵ յառաւաւտէն⁹⁶.
 եր⁹⁷/կու փայլակնաձեւ /արեգական նըման.
 շողնիշմին⁹⁸ իջեալ. /յառաւաւտէն⁹⁹ լոյս:
 Յայտէն¹⁰⁰ առենի¹⁰¹. /սարդիտունկ¹⁰²

⁸⁷ Փրգ. 80 յաւրէն:

⁸⁸ Փրգ. 80 նըժդարենի:

⁸⁹ Փրգ. 80 ուռ. Վնտկ. 2070 ՄՄ 7785 ՄՄ 3503 լուսանցքի սրբագրութեան մը միջոցաւ «ուռ» բառը փոխարինած են «ուան»ով:

⁹⁰ ՄՄ3503 Յունից Փրգ. 80 Յանիցըն, որով վանկ մը կ'աւելնայ, սակայն այս մասի բաղիւմանց թիւը նոյնը կը մնայ, որովհետեւ այս ձեռագրի յաջորդ բառի առաջին վանկը միայն մէկ բաղիւմով կը տեւէ, միայն բուրձ մը կրելուն շնորհիւ:

⁹¹ ՄՄ 3503 հետագայ ձեռք մը գայս «սրբագրած» է՝ «նէնեմ». Փրգ. 80 էճեմ:

⁹² Փրգ. 80 թէ:

⁹³ Փրգ. 80 մէջարէի:

⁹⁴ Փրգ. 80 ծիծաղախիթ:

⁹⁵ Փրգ. 80 ծաւարենայր:

⁹⁶ ՄՄ 7785 Փրգ. 80 յառաւաւտուն:

⁹⁷ Այստեղ՝ առաջին երկարատե խազը (*վերնախաղ*), ի տարբերութիւն նախորդ համեմատելի պարագաներու՝ «երկու» բառին երկրորդ վանկին վրան է, ուստի որոշ իմաստով մը՝ առաջին վանկը տողիս իսկական սկզբնատրոսիւնը նախորդող «աւելցում» մըն է. այսինքն՝ երաժշտական իմաստով՝ թերեւս իբր «վերահարում» (*anacrusis*):

⁹⁸ Փրգ. 80 շողն ի շմէն ՄՄ 7785 «շմին»ը (կամ թերեւս «իշմին»ը) լուսանցքի սրբագրութեան մը միջոցաւ կը փոխէ «շմաթէն»ի:

⁹⁹ Փրգ. 80 յառաւաւտէ:

¹⁰⁰ Փրգ. 80 Աչքըն:

¹⁰¹ ՄՄ 7785 Փրգ. 80 նըռենի:

¹⁰² Փրգ. 80 սարդիտունկ. ըստ երեւոյթի, հոս ալ վանկ մը եւս ունինք, սակայն «ինի» գիրը միայն կէտատու փոքր բենկորճ մը կը կրէ, փոխանակ միւս աղբերց երկար (*զարկ*) խազին. եթէ կարելի է փոքր բենկորճին մէկ բաղիւման արժէք վերագրել՝ այս մասի բաղիւմանց գումարը նոյնը կը մնայ: Սակայն այս հարցին վրայ վստահ չենք կրնար ըլլալ: (Իր աղիւսակին մէջ՝ Տնտեսեան թէ փոքր եւ թէ մեծբենկորճներուն երկու բաղիւմով կ'ընծայէ: Սակայն ուեւ տեղ այս խազերու տետոլոսեանց վրայ շ'անդրադառնար, եւ ոչ ալ զանոնք իր *Նկարագիր երգոցի* մէջ ներկայացուցած օրինակներուն մէջ կը տեսնենք: *Բենկորճի* տետոլոսեան մասին յստակ եզրակացութեանց յանգիլը դժուար է, որովհետեւ գրեթէ անկարելի է այս խազը առանձինը գտնել, իսկ ի վիճակի չենք խազերու համակցութեանց տետոլական արժէք հաշուելու: *Բենկորճի* մասին՝ տե՛ս նաեւ Հ. Անտօն Իշգարտաշեանի խազագիտական ուսումնասիրութիւնը, որ մաս կը կազմէ *Երաժշտականութիւն* խորագիրը կրող իր 1801-ին Թրիէսք ամբողջացած անտիպ ստուար աշխատանքին, էջ 86-87: Այս մասին հրատարակաւ դասախօսեցինք 6 Յուլիս 2017-ին, Միջազգային Միջնադարեան եւ Վերածննդեան Երաժշտութեան Գիտաժողովի (Medieval and Renaissance Music Conference) ԽՆ. Տարեկան նիստին («Armenian Sacred Chant from Rome to Vienna: Athanasius Kircher,

գեղաշիտակ¹⁰³ ծայրից ծաղկանց.

ս¹⁰⁴/րոյ սիւնն ի սըրտին. /նուսխայարէն

կարկաշուհի¹⁰⁵ սաթբերունի սէր:

Նկ. 10-ն եւ 2-ը իրարու հետ բաղդատելով կը տեսնենք թէ ինչպէս երկու տաղից խազագրութիւնները իրարու կը նմանին: Կը նշմարենք սակայն, որ ներկայ տաղի կառուցուածքը աւելի բարդ է: Ի տարբերութիւն նախորդ տաղին՝ հոս ունինք՝ երեք տողնոց տուն մը (տող 1-3), որուն երկու տուներ կը յաջորդեն՝ երկուքն ալ երկու տողնոց (նախորդ տաղին պէս): Տող 8-էն ետք դարձեալ պատկերը կը բարդանայ: Ունինք դարձեալ երկար տուն մը (որուն առաջին տողը հոս երկուքի բաժնած ենք, իր երկայնքին պատճառաւ), իսկ մեր վերարտադրած վերջին տունը երկու երկար տողերէ կը բաղկանայ, զորս դարձեալ երկուքի բաժնած ենք:


Նախորդ տաղի իւրաքանչիւր տան առաջին մասը հետեւալ կառուցուածքը ունէր. նախ՝ խազից շղթայ մը (զոր հոս ալ կը տեսնենք), ապա մէկ բաղխում տեսող վանկ մը (զոր նոյնպէս հոս կը գտնենք), եւ այնուհետեւ երեք վանկեր, որոնց առաջինը եւ երրորդը երկու բաղխում կը տեսնեն, իսկ միջանկեալը՝ մէկ վանկ: Նոյնը հոս ալ կը գտնենք, սակայն պակաս հետեւողականօրէն. նաեւ՝ ձեռագիրները իրարմէ կը տարբերին, նամանաւանդ Փարիզինը:

Antōn Iwč'gartašean and the Mediaeval Neumes? խոնարհով), Պրահա, Ս. Ազնէսի Վանուց մէջ:

¹⁰³ ՄՄ 3503 գեղայ շիտակ (կամ գեղայշիտակ):

¹⁰⁴ Գարձեալ՝ առաջին երկարատեւ խազը (վերնախաղի բաւական մամնող, սակայն աւելի ոլորակի մամնող սկզբնատուրութեամբ) «որոյ» բառին երկրորդ վանկին վրայ է, ուստի՝ առաջին վանկը երաժշտական տեսակէտով տողիս իսկական սկզբնատուրութեան կը նախորդէ, թեեւ իբր երաժշտական «վերահարում»:

¹⁰⁵ ՄՄ 3503 կարկաշահոս ՄՄ 7785 լուսանցքի սրբագրութիւն մը «կարկաշունի»ն կը փոխարինէ «կարկաշահոս» բառով:



Նկ. 10

Անուն անեղին տաղի սկզբնատուրին՝ ըստ վնակ. 2070 «Տաղարամ»ի, քր. 122բ-123ա

Այսպէս՝ հետաքրքրական է նախ եւ առաջ նշել, որ Փրզ. 80 ձեռագիր միւս աղբերց բաղդատմամբ կը տարբերի «գարմանալի» բառին երկրորդ վանկին վրայ երկու բաղխում տեւող խազ մը կրելով (պարոյկ), ինչպէս նաեւ (միւս աղբերց նման) վերջին վանկին վրայ երկար մը կրելով: Փրզ. 80 այսպիսով «Երգ գարմանալի» բառերուն վրայ նախորդ տաղի «Անուն անեղին» բառերուն տաղաչափութիւնը վերարտադրած կ'ըլլայ: Ընդհակառակը, սակայն՝ երկրորդ տան սկիզբը Փրզ. 80 այս պատկերէն կը շեղի, երբ «նոճ յեռի» երեք վանկերու առաջինին վրայ միմիայն փոշ մը ունի (իսկ հոս՝ ՄՄ 7785 միայն բոլոր մը ունի. այս երկու խազներն ալ մէկ բաղխման տեւողութիւն ունին): Սակայն ամենէն ուշագրաւ տարբերութիւնը այն է, որ Փրզ. 80 երրորդ տան սկզբնատուրութեան՝ երկար խազից շղթան չի կրեր տան առաջին վանկին՝ այլ երկրորդին վրայ: Նաեւ ի տարբերութիւն միւս աղբերց՝ հոս ունինք «Յանիցըն» – այսինքն՝ «ըն» վանկը աւելցուած է, մինչդեռ միւս աղբերուները «Յանից» կամ «Յունից» երկավանկ բառերը ունին: Թերեւս «Յանիցըն»ի երկրորդ վանկը շեշտած ըլլալու համար է, որ Փարիզի ձեռագրի երաժիշտը խազից երկար շղթան այս վանկին վրայ նախընտրած է դնել: Իսկ «աւելորդ» վանկին ներկայութիւնը չեզոքացուցած է ի տարբերութիւն միւս աղբերց միայն մէկ բաղխում տեւող բոլոր մը դնելով «նրբենից» բառի առաջին վանկին վրայ: (Տարբերութիւն մը եւս՝ յաջորդ տողի առաջին մասին «թէ» բառը, միայն Փրզ. 80ի պարագային՝ դարձեալ մէկ բաղխման համապատասխանող բոլոր խազը կը

կրէ): Այլ կարեւոր տարբերութիւն մը կը գտնենք՝ յաջորդ տան սկիզբը. հոս մեր բոլոր ձեռագիրները առաջին մասի վերջին երեք վանկից վերոյիշեալ «երկու-մէկ-երկու» բաղխմանց ծրագիրը կը խախտեն: Վնտկ. 2070, ՄՄ 3503 եւ ՄՄ 7785 գայն կը խախտեն՝ միայն վերջին վանկը երկարելով, այսինքն՝ «մէկ-մէկ-երկու» բաղխում կարգադրելով: Սակայն Փրգ. 80 միակն է, որ «ծով ի ծով» բառերուն վրայ ունի «երկու-երկու-երկու» բաղխմանց արտասովոր յաջորդութիւն մը (համապատասխանօրէն կրելով հետեւալ խազերը՝ երկար, կէտաւոր պարոյկ, երկար): Իսկ հետաքրքրական է, որ բոլոր ձեռագիրները՝ միմիայն «երկու» եւ «որոյ» բառերով սկսող տողերուն պարագային՝ «կարճ» (այսինքն միայն մէկ բաղխման համապատասխանող) վանկերով կը սկսին, եւ «երկար» խազերը այս բառերուն երկրորդ վանկից վրայ դրուած են: Վերջապէս՝ վերջին տան սկզբնաւորութեան պարագային՝ բացառութիւն մը կը կազմէ ՄՄ 7785, որուն «նըռնենի» բառին առաջին վանկը միմայն մէկ բաղխում տեսող շեշտ մը կը կրէ, ի տարբերութիւն միւս աղբերց:

Երեք այլ ձեռագրաց կարեւորագոյն տարընթերցուածները արձանագրած ենք առանց նշելու բառերու տարբեր տրոհումները — գոր օրինակ՝ ՄՄ 7785 ունի «զարդ երամից», «շողն ի շմին», «սարգիտունկ», «նուխայարէն», եւ այլն: Հոս մեր նպատակը բնագիր կազմել ու ներկայացնել չէ՝ այլ պարզապէս գաղափար մը տալ տարընթերցուածոց մասին, նշելով երբ վանկից թիւը կը փոխուի, եւ երբ իբր հետեւանք՝ այդ փոփոխութեան կ'ընկերակցի նաեւ բաղխմանց թիւին փոփոխութիւնը, եւ կամ երբ ընդհակառակը՝ բաղխմանց թիւը անփոփոխ կը մնայ տարբեր տեսողային արժէք կրող խազից օգտագործման շնորհիւ. եւ, վերջապէս՝ ցոյց տալու համար, թէ որքա՛ն աստիճանով այս տաղի տաղաչափութիւնը անկանոն ու փոփոխական է, անկախ ատկէ, թէ ո՛ր ձեռագրին վրայ յենելու ըլլանք: Նոյնաժամանակ՝ ակներեւ է, թէ ձեռագրաց բառային բնագիրներէն ոչ մին ամբողջովին ճիշդ չէ, եւ մին կամ միւսը հոս-հոն ակնյայտ քերականական եւ ուղղագրական սխալներ կը ցուցաբերեն: Այսպիսով՝ հասկնալի կը դառնայ, թէ ինչո՛ւ Քէօշկերեան իր հրատարակութեան մէջ «ընտրողային» ճամբու մը հետեւած է, ջանալով, ըստ իր դատողութեան՝ շիտակ ընթերցուածները ընտրել իր բնագրի գլխաւոր մարմնոյն մէջ, խճանկարի մը պէս (սակայն միշտ նշելով, թէ ո՛ր ձեռագիրները տուեալ ընտրութենէն կը շեղին):

Այս տաղի պարագային ուրեմն՝ կը թուի թէ ոչ բանաստեղծը, եւ ոչ ալ Ժ.Գ. դարուն տաղս խազագրող երաժիշտը կանոնաւոր տաղաչափութեան հետամուտ եղած չեն: Ուրեմն Երգ զարմանալի / Աչքին ծով տաղի պարագային աւելի դժուար է զանազան տարընթերցուածոց միջեւ նախընտրութիւն ունենալ տաղաչափային գետնի վրայ, եւ ըստ այնմ՝ խազագրութեանց ծառայութիւնը

բնագրային ընտրութեանց համար աւելի սահմանափակ է: Սակայն նոյնիսկ հոս՝ խազերը պէտք չէ անտեսել: Խազերը մեզի առ նուազն գաղափար մը կու տան՝ թէ դասոյթներու (*phrase*) յանգման կէտերը ո՛ր են, եւ թէ ո՛ր մասերը նոյն եղանակը կը կրկնեն՝ այդպիսով տաղից կառուցուածքը ցայտուն դարձնելով: Վենետկոյ «Խորհուրդ խորհուրդ համերամ» տողը (վերարտադրուած նաեւ Քէօշկերեանի հրատարակութեան մէջ) պէտք է սրբագրուի, առաջին «խորհուրդ»ը զայն նախորդող տողի վերջաւորութեան ազուցելով, զի առաջին «խորհուրդ»ին երկրորդ վանկը երկաւ մը կը կրէ եւ անմիջապէս միջակէտ մը կը յաջորդէ: Իսկ «ծիծաղախիտ» եւ «ծաւալենայր» (կամ «ծաւալանայր») բառերը տակ-տակի դրած ենք, որովհետեւ երաժշտական եւ տաղաչափական տեսակէտով իրարու կը նմանին – քանզի իրենց վերջին վանկերը նոյն խազից համակցութիւնը կը կրեն, եւ լման բառերը նոյն տաղաչափութիւնը կը դրսեւորեն: Նոյնը կարելի է ըսել «սարդիտունկ» եւ «գեղաշիտակ» բառերու պարագային¹⁰⁶, ինչպէս նաեւ «նուսխայօրէն» եւ «կարկաշուհի» (կամ «կարկաշահոս»):

Եզրակացութիւն

Վերջապէս ինչպէ՞ս հնարաւոր է, որ այսչափ մեծ տաղաչափային, եւ ընդհանուր առմամբ՝ վանկերու քանակի տեսակէտով տարբերութիւններ ցուցաբերող երկու տաղեր կարենան իրարու նման եղանակներ ունենալ: Բայց նման երեւոյթի մը բազմիցս կը հանդիպինք մեր Շարակնոցին մէջ, ուր զանազան արձակ շարականներ իրարմէ բաւական տարբեր վանկերու թիւ կը ցուցաբերեն եւ այնուհանդերձ նոյն երաժշտական ընտանիքին կը պատկանին, նոյն եղանակային բներգները (*motifs*) կրելով՝ դատելով խազից որոշ խիստ յատկանշական շարքերէ (զիրար յաջորդող վանկերու վրայ) եւ համակցութիւններէ (յատուկ վանկից վրայ)¹⁰⁷: Սակայն զարմանալին այն չէ սոսկ թէ իրարմէ տարբեր երկայնք ունեցող տողեր քիչ թէ շատ նոյն մեղեդիական դարձուածքները

¹⁰⁶ Շեշտենի, որ թէւ «սարդիտունկ»ի մէկ վանկը կը պակսի – Վենետկոյ հրատարակութիւնները եւ Փրգ. 80 «սարդիտունկ» տարբերակը կը կրեն – սակայն «սարդիտունկ»ի «ինի» գիրը երկար մը կը կրէ (երկու բաղխմանց տետրոսիտան համապատասխանելով), ուստի «սարդիտունկ» եւ «գեղաշիտակ» նոյն տաղաչափութիւնը կը դրսեւորեն, ի հեճուկս վանկից թուոց անհասարութեան: Նոյնպէս՝ ինչպէս տեսանք՝ Փրգ. 80ի «սարդիտունկ»ը նոյն բաղխումնային ընդհանուր տետրոսիւնը կրնայ ունենալ, պայմանաւ որ հոս «ինի» գիրի կրած *փոքր բենկորճի*ն մէկ բաղխման տետրոսիւն մը վերագրենք:

¹⁰⁷ Այս մասին՝ տե՛ս **Utidjian, H.**, “Tntesean and the Music of the Armenian Hymnal”, Part II, *Parrésia* 6 (2012), էջ 79-129, ինչպէս նաեւ մեր գլովար՝ **Utidjian, H.**, “A Brief Survey of Systems of Musical Notation in Armenian Sacred Music”, խմբ. **Esche-Ramshorn C.**, *Reflections on Armenia and the Christian Orient: Studies in Honour of Vrej Nersessian*, Երեւան, Անկիւմաֆար, 2017, էջ 261-284:

կը կրեն, այլ այդ հանգամանքը, որ շափածոյ ստեղծագործութիւն մը եւ մեծաւ մասամբ արձակ ստեղծագործութիւն մը նմանօրինակ եղանակներով կ'երգուէին:

Ի՞նչ եզրակացութեանց կրնանք յանգիլ: Այն տաղից պարագային, որոնց համար որոշ եղանակներ հասած մեզի են, երեք տարբեր խաւեր կրնանք զանազանել, յարաբերական տեւողութեանց արժէից տեսակէտով: Նախ՝ բառային բնագիրը (այսինքն՝ իւրաքանչիւր վանկի մէկ ամանակային արժէք տալով) ինքնին կրնայ կանոնաւոր տաղաչափութիւն մը ունենալ, որոշ տաղից պարագային: Երկրորդ՝ տաղաչափութեան մը կը յանգինք՝ Տնտեսեանի առաջադրանքի հետեւողութեամբ խազից տեւողական արժէից հիման վրայ: Երրորդ՝ մեզի հասած եղանակներու շափերը եւ մեղեդիական դարձուածքներու բաշխումը բառերու վանկից վրայ նկատի առնելով՝ տարբեր տաղաչափութեանց կը յանգինք, որոնք եղանակէ եղանակ կը տարբերին, եւ անկանոն կը թուին — ա՛յն աստիճան, որ գրեթէ այլեւս բառերու տաղաչափութեան հետ ոեւէ յարաբերութիւն մնացած չէ: Այս եղանակները մեծաւ մասամբ ծանր եւ զարդարուն են, եւ երբեմն լման էջ մը կարելի է երգել, միայն մի քանի բառերու վրայ (եւ արդէն տեսանք, որ ժէ. դարու Տաղարանները ստէպ կը բաւականանան առաջին երկու տողերը տալով). միջնադարեան խազագրութեանց հետ երբէք չեն առնչուիր, ոչ ալ բառերուն ունեցած ոեւէ տաղաչափութեան. եւ հաւանաբար իրենց ծագումը շատ աւելի նոր է, քան խազագրութիւնները, որոնք իրենց կարգին՝ վկայուած են ձեռագրաց միջոցաւ, որոնք արդէն երկուհարիւր յիսուն տարի աւելի նոր են, քան Սրբոյն յօրինումները:

Անկարելի է, սակայն, գիտնալ, թէ «Նարեկացի ինչպէ՛ս կ'երգէր», այսինքն՝ եթէ վերոյիշեալ առաջին թէ երկրորդ խաւը իր յօրինմանց կը համապատասխանէ: Հաւունի պարագային, կը թուի, թէ բառային կրկնութեանց եւ «ըթ»ի հոս-հոն խմբագրային զետեղման եւ ձեռքագատման միջոցաւ ստեղծուած տաղաչափութիւնը կրնայ շինծու ըլլալ. առ նուազն՝ կրնանք հաստատել, թէ կը հակառակի հնագոյն ձեռագրաց: Սակայն այդ հնագոյն ձեռագիրները արդէն բաւական «նոր» են, եւ կրնան տաղից ստեղծագործութենէն բաւական աւելի ուշ ժամանակ յօրինուած եղանակներու համապատասխանել, իսկ Սրբոյն եղանակները (կամ նախատեսած եղանակները՝ եթէ ինքը միայն բառերը յօրինեց, ականալելով որ ուրիշներ իր գրածը եղանակաւորէին¹⁰⁸) աւելի

¹⁰⁸ Տաղից երգեցողութեան համար նախատեսուած ըլլալը կը հետեցնենք մեզի հասած գրաւոր վկայութեանց եւ աւանդութեանց հիման վրայ, որ միշտ ենթադրուած է, որ տաղը երգուած, երաժշտական ստեղծագործուած տեսակ (genre) մըն է. տե՛ս, զոր օրինակ՝ ՆԲՀԼ-ի սահմանումը. «Բան շափաբերական. ոտանաւոր երգ. ֆերթուած նուագելի»: Բաղգիրֆու նոյնիսկ Բան ԿԱ. ի սկզբնաւորութենէն «Ընդէ՛ր է ինձ գրնաւն համապագ երգել իմովֆս տաղիւֆ» մէջբերումը կ'ընէ: Թէև *Նարեկուծի* (էջ 311, 1827-ի հրատարակութեան մէջ) եւ ասկէ ի վեր ընդունուած եւ տպուած բնագիրը «Յւ ընդէ՛ր է ինձ բնաւն [...] համապագ երգել իմովս տաղօֆ» տարբերակը կը պարունակէ, «տաղիւֆ» տարբերակը վկայուած է զանազան ձեռագրաց մէջ, իսկ Լամբրոնացոյ պատուիրած եւ մեզի հասած հնա-

պարզունակ եղած կրնան ըլլալ քան որոնք՝ զորս խազագրութիւնները կը մարմնաւորեն¹⁰⁹: «Գոհար վարդըն» տաղի պարագային՝ հիմնական հակասութիւն չկայ այս երկու խաւից միջեւ¹¹⁰, եւ ոեւէ կերպ չ'ունինք ստուգելու, թէ «Նարեկացի ինչպէ՛ս կ'երգէր»: Հետեւաբար՝ բնագիր կազմելու տեսակէտով առաջին երկու խաւերը կրնան մեզի օգտակար հանդիսանալ, սակայն ոչ երրորդը: Իսկ երկրորդ խաւը, որ, ցարդ անտեսուած է, կրնայ մեծ դեր խաղալ, ինչպէս որ պիտի բացատրենք՝ յօդուածիս յաջորդ բաժինով: Նոյնիսկ եթէ որոշ ընթերցողներ համոզուելու ըլլան, թէ Սրբոյն յօրինումները տարբեր են քան ձեռագիր աղբերց վկայութիւնները, այդ ձեռագիրները ցարդ մեր հարազատագոյն աղբիւրներն են, եւ այս ձեռագրաց տեղեկութեանց մէկ մասը լիովին անտեսելով՝ շատ վտանգաւոր է ենթադրական ուսումներ ընել ու դէպի աւելի հեռուոր անցեալը ձգտիլ, երբ տարաբախտօրէն՝ հնագոյն գրաւոր աղբիւրներէ զրկուած ենք:

Տաղաչափութիւն եւ տոհմաձան

Սեա եւ գեղեցիկ տաղը


Այժմ՝ դառնանք Սեա եւ գեղեցիկ տաղին: Ի դէպ, այս տաղի ձեռագիր աղբիւրները կարելի է երկու խմբից բաժնել (հակառակ որ իրարու միջեւ որոշ փոխ-վարակում ներկայացնող նմոյշներու ալ կը հանդիպինք երբեմն): Ներկայ քննարկման համար պիտի աշխատինք ձեռագրի մը վրայ կեդրոնանալով, որ կը պատկանի այն խումբին, ուր տաղս կը ներկայանայ իբր Յորդորակը (այս-

գոյն *Նարեկի* (ՄՄ 1568, 1173 ք., ք. 204ա) եւ Վենետիկ հնագոյն *Նարեկի* մէջ (Վնտկ. 2636, 1236 ք., Սկետա, ք. 190բ) «տաղամբ» տարբերակը կը գտնենք: Սրբոյն երաժիշտ ըլլալուն մեր համոզումը հիմնուած է մասամբ աւանդութեան վրայ (տե՛ս, զոր օրինակ Մարգարեանցոյ Կոստանդնուպոլիս 1730-ին ի լոյս ընծայած հոյակապ *Յայսմաւորքը*, վերաւտարութիւն 1706-ի հրատարակութեան, եւ նկարագրուած մեր վերոյիշեալ *Հայ գրքարուեստը դարերու ընդմէջէն. Որք զժորանս Հոգւոյն արբին* հատորին մէջ, էջ 70-77 – ուր հետեւալը կը կարդանք Սրբոյն ստեղծագործութեանց մասին. «մեղեդիով [sic] եւ տաղերով անոյշ եղանակաւ եւ ձայնիւ», էջ 46դդ), եւ մասամբ տաղից երգուած ըլլալու հիման վրայ, այն ենթադրութեամբ՝ որ բառերը յօրինողը հաւանաբար նոյնաժամանակ եղանակներն ալ յօրինած ըլլայ (որ անտրամաբանական ակնկալութիւն մը չէ, սակայն հարիւր առ հարիւր վստահութիւն մըն ալ չէ): Իսկ իր *Մատեան Ողբերգութեանի* մէջ հեղինակը յանախ երաժշտութեան մասին կ'ակնարկէ, ընթերցողին վրայ այն տպատրոպիւնը թողլով, որ երաժշտութիւնը կարեւոր դեր ունեցած է իր կենաց մէջ («արտօրածին նուագ», «երգ», «եղանակ», «ջնար», «չութակ», եւ այլն): Այս մասին՝ տե՛ս մեր լոյս տեսնելիք մենագրութիւնը՝ **Utidjian, H.**, *Světec básnik: svatý Řehoř z Nareku*, Praha: Koniasch Latin Press, ISBN 978-80-87773-47-5, յատկապէս Svatý Řehoř a hudba գլուխը, ինչպէս նաեւ Շահնազարեանի վերեւ նշուած հատորը:

¹⁰⁹ Այսպէս անհնար է վստահութեամբ հերքել այն կարելիութիւնը, թէ ի հեռուկա հնագոյն ձեռագրաց «արբնացեալ»ին, հեղինակին բնօրինակը կրնար «արբնացեալ» եղած ըլլալ:


¹¹⁰ Այս պարագային՝ երկրորդ խաւը կրնանք առաջինին զարգացումը, կամ զայն մասամբ «անդրանցող» տարբերակումը նկատել:

ինքն տեսակ մը կցորդ մը, որ աւելի արագ եւ վանկային է քան զայն նախորդող կտորը) Աշխն ծով տաղի, յատկապէս՝ ՄՄ 3540 «Գանձարան»ը (Յիպնայ վանք, 1286 եւ 1408 թթ.): Տաղիս առաջին էջը (թ. 62բ) կը վերարտադրենք նկ. 11:



Նկ. 11

Սեա եմ գեղեցիկ տաղի սկզբնատրոփիւն՝
բստ ՄՄ3540 «Գանձարանի», ք. 62բ



Նկ. 12

Սեա եմ գեղեցիկ տաղի կշռոյթը՝
հիմնուած խազից տետրոփեանց վրայ

Իւրաքանչիւր տուն երկու տողէ կը բաղկանայ¹¹¹, եւ թէեւ ամէն մի տող 5+4 վանկերով կը սկսի, յաջորդող վանկերու թիւը կը տարբերի: Սակայն եթէ խազից հիման վրայ իւրաքանչիւր վանկի ամանակային արժէք մը ընծայելու ըլլանք (ըստ Տնտեսեանի առաջագրութեան)՝ շատ աւելի հետեւողական պատկեր մը մէջտեղ կ'ելլէ (նկ. 12), հակառակ որ խազերը իրենք տողէ տող կը տարբերին: Այսպիսով՝ իւրաքանչիւր տող կը բաղկանայ նախ՝ 4/2 հատածէ (bar) մը, ապա 3/2 հատածէ մը, այնուհետեւ՝ 4/2 հատածով մը աւարտելով: Տեւողութեան տեսակէտով՝ կարելի է առաջին հատածը միշտ ներկայացնել՝ յաջորդաբար երկու-չորրորդ (minim), մէկ-չորրորդ (crotchet), դարձեալ մէկ-չորրորդ (crotchet), եւ երկու-չորրորդ (minim) ձայնանիշերով – թէեւ, ինչպէս

¹¹¹ Ձեռագիրս, ինչպէս Ս. Գրիգոր Նարեկացու բոլոր գործերու միջնադարեան գրոփունները, արձակ ձեւով արձանագրուած է, սակայն որոշ կտոյց մը բացայայտ կը դառնայ ընթերցման ժամանակ, խազագրութեանց եւ մանաւանդ կետադրութեան շնորհիւ (որ միշակետեէ կը բաղկանայ). ատոր հիման վրայ հնարատր կը թուի պատշաճ տողատման մը յանգիլ:

տեսանք, տարբեր խազերով է, որ տարբեր տանց մէջ նոյն այս արժէքները կ'իրագործուին: Իսկ երկրորդ հատածը միշտ կը բազկանայ երկու մէկ-չորրորդ եւ մի երկու-չորրորդ ձայնանիշերէ: Արդ, այս երկու հատածները անփոփոխ կշռոյթ մը կը ներկայացնեն, իրենց վանկից անփոփոխ թիւին շնորհիւ: Կարելորդ այն է, թէ երրորդ հատածի պարագային ամանակային կանոնաւորութիւնը կ'ապահովուի միմիայն, եթէ որոշ տողերուն՝ երկու մէկ-չորրորդ ձայնանիշեր ունենանք, մի երկու-չորրորդ ձայնանիշի տեղ: Յիրաւի՝ Տնտեսեանի տեւողային արժէից կիրարկութեամբ՝ կը տեսնենք ուրեմն, որ երրորդ հատածը եւս անփոփոխ երկայնք ունի, ի հեճուկս վանկից փոփոխական թիւին: Այսպէս՝ սովորաբար ունինք, յաջորդաբար՝ մի երկու-չորրորդ, եւ վեց մէկ-չորրորդ ձայնանիշեր, եւ կամ մի երկու-չորրորդ, երկու մէկ-չորրորդ, մի երկու-չորրորդ եւ երկու մէկ-չորրորդ ձայնանիշեր — նաեւ երբեմն զիրար յաջորդող տանց միջեւ enjambement երեւոյթը յիշեցնող «շղթայում»ով մը, ըստ որուն՝ յաջորդ տան սկզբնաւորութեան պատկանող առաջին բառերը կամ վանկերը արդէն իսկ ներկայ տան վերջին հատածին մէջ կը գտնուին¹¹²:

Այսպիսով տաղիս ինը տուներէն միայն երկուքը ամանակային տեւողութեանց տեսակէտով անկանոն կը մնան: Այս հանգրուանին՝ այդ երկու բացառութիւնները աւելի լաւ հասկնալու համար՝ հետաքրքրական է դառնալ տաղիս ձեռագրաց տոհմածառի ուսումնասիրութեան:

Տոհմածառ

Տեսանք, որ տաղիս ձեռագիր աղբիւրները կարելի է երկու խմբից բաժնել: Աւելի մանրամասնօրէն անդրադառնանք անոնց մասին: Գլխաւոր յատկանիշերը ասոնք են.

- Ա. խումբ — հոս իւրաքանչիւր տան առաջին տողի վերջաւորութեան կը հանդիպինք Հանա տարբերակին (յապաւում «Ահա նա» բառերո՞ւն), եւ տաղս սովորաբար կը ներկայացուի որպէս Փոխ՝ Անուն անեղին էին տաղի.

- Բ. խումբ — հոս իւրաքանչիւր տան առաջին տողի վերջաւորութիւնը կը կրէ Ահա նա բառերը, իսկ տաղս կը ներկայացուի որպէս Յորդորակ՝ Աչքն ծով տաղի (որ ինքնին կը ներկայանայ կամ որպէս առանձին տաղ՝ եւ կամ իբր մաս Երգ շարժվարժենի տաղին):

Սակայն բացառութիւններ, եւ զանազան երկրորդական յատկանիշեր ընդհանուր պատկերը կը բարդացնեն, եւ նոյնաժամանակ՝ աւելի հետաքրքրական կը դարձնեն: Պարզապէս անոնց համը տալու համար՝ մի քանի օրինակներով պիտի ջանանք ընդհանուր տպաւորութիւն մը թողուլ:

¹¹² Ընդհակառակը՝ enjambementը կը վերաբերի նախադասութեան մը երկարելուն եւ յաջորդ տողի կամ տան սկզբնաւորութեան աստեղծում:


Առաջին խումբին կը պատկանին ՄՄ 3503 «Տաղարանը» (Միս, 1394 թ.), ՄՄ 7785 «Գանձարանը» (Ղրիմ, ԺԳ. դար), եւ Վնտկ. 2070 «Տաղարանը» (Միս, 1348 տարի): Նոյն խումբին կը պատկանի նաեւ Փրգ. 80 «Գանձարանը» (Կաֆ-ֆա, 1381 թ.), սակայն հոս՝ տաղս ներկայացուած է որպէս Փոխը Աւետիս միշտ աւետեաց հընչումն տաղի մը (զոր Նարեկացու վերագրելի չենք համարիր): Առաջին խումբը, ի տարբերութիւն երկրորդին՝ նոյնպէս հետեւեալ յատկանիշերը կը ցուցաբերէ. կը պակսին «հարսն ի մայրեաց կիբանանէ» բառերը. «խայծեալ զիս պատեցէք» ունի փոխանակ «խայտեալ խնձորով զիս պատեցէք»-ի. եւ ունի «լար» բառը եւ ոչ «լայն», եւ այլն: Առաջին խումբը ունի նաեւ «հինաուրցն ած. է մանկացեալ» բառերը, զորս չ'ունի երկրորդ խումբը, զանոնք զանազան տարբեր բառերով փոխարինած ըլլալով (եզակի բացառութեամբ մը, որուն շուտով պիտի անդրադառնանք):

Երկրորդ խումբին առաւել կամ նուազ շարժում կը պատկանին կամ սերտորէն անոր հետ կ'առնչուին հետեւեալ Գանձարանները՝ ՄՄ 5328 (Յիպ-նայ վանք, ԺԳ. դար), ՄՄ 3540 (Յիպնայ վանք, մեծաւ մասամբ 1286 թ.), ՄՄ 4117 (Կրծանիս, 1436 թ.), ՄՄ 5521 (Աղթամար, 1445 թ.), ՄՄ 4011 (Ժե. դար), ՄՄ 5423 (Ժե. դար) եւ Վնտկ. 382 (1394 թ.): Բայց զանազանութիւններ կան: Նախ՝ ՄՄ 5521 ձեռագիրը առանձնապատկութիւններ մը ունի, եւ ակնյայտորէն կը տարբերի այս ձեռագրախումբի «մայր հոսանքէն»։ մեծագոյն շեղումը այն է, որ այստեղ տաղիս 19-20 տողերը¹¹³ տեղափոխուած են, եւ զետեղուած 15-16 տողերու տեղը (եւ փոխադարձաբար). դիւրութեան համար՝ այս երեւոյթը կ'անուանենք «խառնակում (ա)»: Իսկ ՄՄ 3540 թէեւ կը նմանի ՄՄ 5521-ին, նոյնպէս խառնակում (ա)-ի ենթարկուած ըլլալով, սակայն երկու գլխաւոր տարբերութիւններ ունի անկէ. տաղիս 17-18 տողերը 24րդ տողէն ետք զետեղուած են («խառնակում (բ)»), եւ՝ զարմանալիօրէն՝ երկրորդ խումբին պատկանելով հանդերձ՝ առաջին խումբի 23րդ տողի «հինաուրցն ած. » տարբերութեամբ կը կրէ, առաջին խումբի ձեռագրաց պէս (թէկուզ իւրայատուկ «էր մանգացեալ» շարունակութեամբ, որ կը տարբերի երկու խմբից ալ բոլոր միւս մեզի ծանօթ ձեռագիրներէն): Իսկ ՄՄ 5423 եւ Վնտկ. 382 մեր խումբի մայր հոսանքէն կը տարբերին՝ տաղիս վեցերորդ տունը կորսնցուցած ըլլալով:

Ուրեմն՝ հնարաւոր է նախատիպ մը երեւակայել (նկ. 13), որմէ մեզի անծանօթ կերպիւ ծագած կրնան ըլլալ առնուազն երկու գլխաւոր ճիւղեր, որոնցմէ ո՛ր մէկուն հնագոյն կամ հարազատագոյն ըլլալը այլեւս ստուգելի չէ: Ուրեմն տեսաբանական, կամ երեւակայական կատարեալ «նախատիպ»է մը՝ կոպիտ հաշուով հետեւեալ երկու ճիւղերուն արձակուած ըլլալը կրնանք պատկերացնել (գէթ ներկայիս մեզի հասած ձեռագրաց հիման վրայ): Մէկ ճիւղը

¹¹³ Յարմարութեան սիրոյն՝ Քէօղկերեանի տողերու թուագրութեան կը հետեւինք, շեղուելով սակայն, որ իր տողատման հետ չենք կրնար համաձայնիլ (տե՛ս նկ. 12):

Խումբ 1-ին կ'առաջնորդէ: Միւս ենթադրելի ճիւղը՝ մեզ կը տանի դէպի ենթադրելի «Նախա-խումբ 2» մը: Այս վերջինը վկայող ձեռագիրները մեզի բնաւ չեն հասած, եւ կարելի է ենթադրել, թէ «հինաւուրց ած. » ընթերցուածը տակաւին կը պարունակէին: Այնուհետեւ կարելի է ենթադրել, թէ «Նախա-խումբ 2»-էն ծագեցաւ խմբակ մը՝ տողերու (ա) խառնակմամբ, իսկ այս վերջին խմբակէն ալ ծագեցան երկու ճիւղեր՝ մին տաղս (բ) խառնակման ենթարկելով եւ զմեզ ՄՄ 3540 ձեռագրին առաջնորդելով, իսկ միւսը՝ պարզապէս «հինաւուրց ած. »-ի կորստեամբ (եւ այլ բառերով փոխարինմամբ):



Նկ. 13

Սեաւ եմ գեղեցիկ տաղի ճիւղագրութեան նախնական փորձ մը

«Նախա-խումբ 2»-էն ծագեցաւ նաեւ այլ ճիւղ մը, որ խառնակումներէն զերծ մնաց, սակայն «հինաւուրց ած. »ը կորսնցուց: Զայն կը յորջորջենք մեր «զուտ» խումբ 2-ը, որ ՄՄ 5328 եւ ՄՄ 4117 ձեռագրաց տաղիս տարբերակները կը պարունակէ: Իսկ՝ դիրին է պատկերացնել, որ ՄՄ 5423 եւ Վնտկ. 382 կրնան ծագած ըլլալ առ նուազն երկու տարբեր ճամբով – ուղղակիօրէն՝ «Նախա-խումբ 2»-էն, եւ կամ անուղղակիօրէն՝ «զուտ» խումբ 2-ի միջնորդութեամբ:

Սակայն այս ճիւղագրութեան ուրուագիծը պարզապէս հնարաւորութիւններէն մին կամ երկուքը կը պատկերացնէ, եւ հեռու կը մնայ բոլոր տրամաբանական կարելիութիւնները սպառելէ¹¹⁴, ոչ ալ բոլոր տարբերութեան շնորհիւ:

¹¹⁴ Մեզի հասանական կը թուի, որ շատ մը միջանկեալ տարբերակներ կրնան գոյութիւն ունեցած ըլլալ առաջին եւ երկրորդ խումբերու միջեւ, եւ այդպիսով աւելի բնական է բացատրել ՄՄ 3540 ձեռագրի տարբերակը, որ երկրորդ խումբի յատկանիշներով օժտուած ըլլալով հանդերձ՝ չ'է գրկուած առաջին խումբի «հինաւուրց ած. մանկացեալ» արտայայտութենէն: Իսկական յարաբերութիւնը կարելի է արտայայտել զանազան աղեղներով՝ զանազան ենթադրական միջանկեալ փուլեր վկայող ձեռագրաց զետեղմամբ, որոնք սակայն գոյութիւն չ'ունին այսօր:

թիւնները նկատի կ'առնէ: Սպառիչ կերպիւ հետապնդելու համար այսպիսի խնդիրները՝ փափաքելի է պատշաճ համակարգչային ծրագիր գործածել, որ պէսզի զանազան հնարատր ծառերը կազմենք, առանց ոեւէ կարեւոր կարելիութիւն զանց առնելու, եւ զանոնք քննելով՝ ջանանք դատել, թէ որո՞նք աւելի հաւանական կը թուին (սովորաբար նախընտրելով աւելի աստիճանական կամ մանր փոփոխութիւնները): այսպիսով կրնանք խուսափիլ կարեւոր հնարաւորութիւններ անտեսելէ, զանազան տրամաբանական ծուղակներու մէջ իջնալէ, եւ խնդրոյ բարդութեան բեռին տակ՝ անուշադրութեան սխալներ գործելէ¹¹⁵:

Մեր նախնական եզրակացութիւնը այն է, որ նոյնիսկ սահմանափակ թիւով ձեռագիրներ ունենալով, եւ յարաբերաբար փոքրիկ թիւով տարընթերցուածներով օժտուած յարաբերաբար կարճ տաղի մը պարագային՝ կացութիւնը բարդ կը դառնայ, եւ դժուարաւ ընկալելի մարդկային անօգնական աչքերով:

Իսկ ի՞նչ կրնանք ըսել տպուած հրատարակութեանց մասին: Մինչեւ Քէօշկերեան բնագիրները շատ շէն փոխուած: Կը սկսին Վնտկ. 1804-ի Աղօթամատոյցով (էջ 286-287), ուր իւրաքանչիւր տուն միակտոր կը ներկայանայ, առանց տողատմանց¹¹⁶: Վենետիկոյ 1827-ի հրատարակութիւնը (էջ 378) առաջին երկու տուները իբր եռեակ տողատած է, իսկ մնացեալները՝ իբր քառեակներ, մինչ 1840-ի հրատարակութիւնը բոլոր տուները քառեակներու վերածած է: Նաեւ այն ունի պարզապէս «Միովնի» (էջ 465-466), մինչ նախորդ երկուքը՝ «Նոր Միովնի»: Այս բոլոր խմբագրութիւնները մեր երկրորդ խումբին հետ սերտօրէն առնչուած են, ունենալով «հա նա» տարբերակը, պարունակելով «հարսն ի մայրեաց» բառերը, եւ առաջին խումբի «հինաւուրցն Աստուած է մանկացեալ» բառերու տեղ այլ տարընթերցուած մը ունենալով: Նոյն եզրակացութեան կը նպաստէ նաեւ այն հանգամանքը, որ 1804-ի հրատարակութեան մէջ՝ յիրաւի տաղս ներկայացուած է իբր «Յորդորակ նորին» (ակնարկելով զայն անմիջականօրէն նախորդող «Աչքըն ծով»ին): Հաւանական կը թուի, ուրեմն, որ մեր երկրորդ խումբի պատկանող աղբերց վրայ հիմնուած ըլլայ:

Զարեհ Սրբազան իր հազարամեակի հրատարակութեան մէջ (էջ 646-647) Վենետիկոյ 1840-ի հրատարակութեան կը հետեւի, սակայն նախընտրած է «լար» փոխանակ «լայն»ի (տող 14). եւ թէեւ (տող 26) նախընտրած է «Միովնի» փոխանակ «Նոր Միովնի» տարբերակին՝ վերջին տարընթերցուածը տողատակի ծանօթագրութեան մը միջոցաւ նշած է: Իսկ Քէօշկերեան՝ թէեւ կը թուի թէ իր բնագրի կառուցը կաղապարած է գլխաւորաբար Վենետիկոյ 1840-ի հրա-

¹¹⁵ Տե՛ս Tara Andrews-ի ստեղծած համակարգչային ծրագիրը (<http://stemmaweb.net/> կայքէջը), որ արդէն իսկ յաջողապէս գործածուած է պատմական բնագրաց նիւագրութեան ուղղութեամբ (տե՛ս *Comparative Oriental Manuscript Studies: An Introduction*, էջ 337):

¹¹⁶ Այս հնագոյն հրատարակութիւնը Ս. Ղազարու խմբագրութեանց միակն է, որ հատորի վերջատրութեան (էջ 296) մի քանի տարընթերցումներ կը պարունակէ՝ միայն մի քանի բառեր, քերտօրէն տարբեր ուղղագրութեամբ:

տարակուսեան վրայ, այդպիսով անուղղակիօրէն յենած ըլլալով աւելի երկրորդ խումբի ձեռագրաց վրայ, չէ վարանած պատշաճ դատած ատեն առաջին խումբի ձեռագիրներէն օգտուելու իր բնագրին համար:

Շարք մը կարեւոր հարցումներ անպատասխան թողուցինք: Ինչպէ՞ս պիտի տարբերէր խազագրութեանց տարբերակները ներկայացնող ճիւղագրութիւնը բառային բնագրաց ճիւղագրութենէն: Եւ ի՞նչ յարաբերութիւններ ունի այս տաղի ճիւղագրութիւնը այլ տաղից եւ կամ իւրաքանչիւր հաւաքածոյի պարունակութեան տեսակէտով կազմուած հնարաւոր ճիւղագրութեանց հետ¹¹⁷: Ասոնք ապագայ հետազոտութեանց առարկայ պէտք է մնան, պայմանաւ, որ յաջողինք բաւարար թիւով ձեռագրաց պատճէններու տիրանալ, որպէսզի որոշ իմաստալից հակումներ կամ օրինաչափութիւններ եթէ գոյութիւն ունին՝ կամաց-կամաց մէջտեղ ելլեն¹¹⁸:

Ամանակային զարտոնութեանց զուգադիպում տոնմածառի նիւաւորմանց հետ

Տաղիս տոնմածառին վրայ ականարկ մը նետելէ ետք՝ վերադառնանք տաղաչափութեան:

Նախ՝ ինչպիսի՞ պատկեր կը ներկայացնեն առաջին խումբի ձեռագիրները: Տաղիս ՄՄ3503, ՄՄ 7785, Փրզ. 80 եւ Վնտկ. 2070 ձեռագրաց խազագրութիւնները իրարու բաւական կը նմանին, սակայն բաղխումնային տեսողութեանց մասին աւելի դժուար է յստակ եզրակացութեանց յանգիլ, որովհետեւ որոշ խազերէ ետք սուղ խազը զետեղուած է, որուն իմաստը այսպիսի միջավայրի մը մէջ մեզի անծանօթ կը մնայ. այլապէս՝ կշռոյթը աւելի բարդ կը թուի քան ՄՄ 3540 «Գանձարան»ինը: Կը թուի սակայն, թէ առաջին խումբի ձեռագիրները ոչ միայն իրենց բառային բնագրի տեսակէտով, այլեւ խազագրութեանց տեսակէտով եւս կ'անջատուին երկրորդ խումբի ձեռագիրներէն, առ նուազն այս տաղի պարագային¹¹⁹:

¹¹⁷ Այս հարցը հետազոտելու համար անհրաժեշտ է ամբողջական մատեաններ ունենալ, եւ ոչ սոսկ ընտրեալ էջեր:

¹¹⁸ Ինչպէս Christian Troesgård նշեց, մեր՝ Գանիական Ազգային Բիւզանդագիտական Յանձնախումբի հրաւերով տուած դասախօսութեան վերջաւորութեան, որ տեղի ունեցաւ Կոպենհագէնի Մայր Տանարի մէջ 2 Փետրուար 2016-ին, նմանօրինակ հետազոտութիւններ Բիւզանդագիտական բնագաւառին ներս կը կատարուին ոչ թէ տասնեակ մը՝ այլ աւելի քան ութսուն ձեռագրաց օգտագործմամբ...:

¹¹⁹ Տաղարաններ կամ Գանձարաններ արժանի են այս տեսակէտով՝ իբր հաւաքածոներ բաղդատուելու, մինչդէռ ցարդ նկարագրուած աշխատանքը կը վերաբերի մէն մի տաղի: Երկրորդ՝ կը զգուշանանք երկրորդ խումբի ձեռագրաց խազագրութեանց մասին խօսելէ, որովհետեւ այս խումբէն ձեռքի տակ ունինք միայն ՄՄ 3540, ՄՄ 4011 եւ Վնտկ. 382. Թէեւ այս երեք բաւական միօրինակ կշռութային պատկեր մը կը ներկայացնեն, այնուհանդերձ մնացեալ ձեռագրաց խազագրութիւնները տեսնելու առիթը չեն ունեցած, իսկ անոնց բա-

Վերադառնանք մեր մանրամասնօրէն քննարկած ՄՄ 3540 «Գանձարան»ի խազագրութեանց կշռութային պատկերին, որ՝ ինչպէս տեսանք՝ պարզ ու կանոնաւոր է, ի բաց առեալ երկու տեղ նշմարուած զարտուղութեանց (նկ. 13)՝ երրորդ տան առաջին կիսուն եւ երկրորդ կիսուն վերջաւորութեանց, այսինքն՝ հոն ուր առաջին եւ երկրորդ խումբը իրարմէ կը տարբերին: ՄՄ 3540 հոս ունի՝ «հարսն ի մա[յ]րեաց կիբանանէ», իսկ առաջին խումբի ձեռագիրները՝ «իմ հարսնուհի»: Եւ ապա՝ ՄՄ 3540 ունի «խայտար խընձորով», մինչ առաջին խումբի ձեռագիրները՝ «խայծեալ»: Խիստ հետաքրքրական է, որ ճիշդ հոն ուր երկու խումբերը իրարմէ կը տարբերին՝ հոն է որ ունինք նաեւ կշռութային կանոնաւորութեան խախտումը: Ինչո՞ւ արդեօք:

Կրնանք միայն ենթադրութիւններ ընել: Գուցէ նախատիպէն որոշ մասեր փճացան, եւ դպիրներ երկու կիսկատար մնացած տողեր կամ տուներ միացնելով՝ չափէն աւելի բազմաթիւ վանկերով տարբերակի յանգեցան, զոր մեր ձեռագրի պարագային՝ երաժիշտները հանդուրժեցին, այս տողերը աւելի երկար թողլով, կշռոյթի խախտման գնով: Սակայն առաջին խումբի տարբերակի պարագային՝ երաժիշտ մը որոշ փուլի մը ընթացքին չհանդուրժելով կշռութային շեղումը՝ որոշեց մի քանի վանկեր յապաւել, երաժշտական կանոնաւորութեան սիրոյն որոշ բառեր գոհելով: «Խնձորով զիս պատեցէք» նախադասութիւնը, որ Երզ Երզոցէ յղում¹²⁰ մըն է (որուն «Սայլիկի տաղ»ի առաջին ձեռագրի մէջ ալ հանդիպեցանք), անիմաստ կը դառնայ, երբ առանց խնձորի՝ հրահանգը սոսկ «զիս պատեցէք» կը դառնայ: Իսկ կիբանանի մայրի ծառերը արդեօք ուրկէ՞ մէջտեղ ելան. կարելի չէ՞ արդեօք որ հոս ալ ձեռագրախմբից ճիւղաւորման մէկ պահուն՝ յաւելուածական վանկեր պարունակող բնագիր մը դիմագրաւելով՝ տարբեր երաժիշտ դպիրներ իրարմէ տարբեր լուծումներ որդեգրեցին: Սակայն առաջին խումբին լուծումն ալ ըստ երեւոյթի՝ խնդրական տարրերէ զուրկ չէր: Փրզ. 80 ձեռագրի մէջ զայդ կը տեսնենք (թ. 196ա, նկ. 14). «խայծեալ զիս պատեցէք» դասոյթով չէր կրնար սկսիլ երաժշտական տունը, այլ [խայ-]«ծեալ զիս պատեցէք» վանկերով, որպէսզի կշռութային «երկար, երկար, կարճ, կարճ, երկար» կառուցին շեշտերուն հետ համընկնին այս վանկերը («ծեալ զիս պատեցէք»), եւ խուսափելու անճարակ եւ անբնական «խայ-

նային բնագրաց մասին մեր տեղեկութիւնները փառած են միմիայն Քէօշկերեանի ծանօթագրութիւններէն: Լիայոյս ենք, որ ՄՄ 4117, ՄՄ 5521 եւ ՄՄ 5423 ձեռագիրները ֆինելու պատեհութիւնը մօտիկ ապագային կ'ունենանք: Իսկ վերջերս բարեբախտութիւնը ունեցանք Ս. Ղազարու մատեաններէն տաղս պարունակող մի քանի աղբիւրներ եւս նկարել կը մտադրենք այդ աղբերց տեղեկութիւններն ալ մեր ուսումնասիրութեանց համար օգտագործել:

¹²⁰ «Կուտեցիք յիս խնձոր» հրահանգի (Երզ Բ 5) յարասութիւնն է, զոր նաեւկացի իր Երզ Երզոցի մեկնութեան մէջ կը մեկնաբանէ «Խնձոր՝ զբարի գործոց գեղեցկութիւնն ասէ» բացատրութեամբ (տե՛ս հազարամեակի հրատարակութիւնը, էջ 472): Իսկ «Սայլիկի տաղ»ին մէջ՝ հանդիպեցանք «Եւ խնձորաւ զիս ծածկեցիք» յարասութեան:

ծեալ զիս պատե՛-» շեշտաւորումը ստեղծելէ: Ստիպուած եղած է, ուրեմն, դպիրը, «խայծեալ» բառի առաջին վանկը նախորդ տողի «'հանա»ին կցել, իբր «հանախայ-»: Ըստ մեր կարծեաց՝ այս պատճառաւ է, որ երկար խազը զետեղուած է բառի երկրորդ վանկի վրայ, բառին առաջին վանկը խազէ զուրկ թողլով: Ուրեմն անհնար չէ ենթադրել, թէ նախապէս տաղիս երրորդ տան տեղ երկու տուներ կային, որմէ միայն զանազան մնացորդներ մեր դպրաց ձեռքը հասան, զիրենք երկու տարբեր այլընտրանաց որդեգրման մղելով, որ սակայն առանց որոշ երաժշտական հետքերու չմնաց:

Սեաւ եմ գեղեցիկ զուարեացի երուն
 աղեմ. հանա հարսն սիրելի՛ սիրուլ. կա
 պեալ ընդփե՛սային. Լը մանեալ եղբար
 որդին իմայ՛ ծեանց որ թ ու զեղանց. հա
 նա՛ ճայն եղբար որդայն խանդաղատեալս
 րով լըցեալ. Եհեմ սիրելի՛. եհ մերձաւ
 որ ի՛ն՛ հարսնու հի. հանա խայծեալ
 զիս պատեցէք. տարեալ մուծէք իտո՛նսգի՛
 նուց. Լը չքիւր աղանոյ թե լար կար
 մի մանեակ ուկայ. հանայել ի լեաուն
 կընդըկի. հոտ սարդ ոսի ե՛ զըմբոսի
 հանայել ի լեաունդիտարան, շուշան
 ծաղկաց հոյկիտ դաշտաց. Չէ՛ նագեղէ
 գոյելի. մանուկ ան հաս ան ժամանակ. Կի
 նաւորցն եկեալ ե՛ մանկացեալ մարմ ին
 զքեցեալ. Դա՛ սաք մարդարեկցն երգին ի
 յայն բժըրն պերայ. Որ՛ դէք սիրնի՛ սրեք է
 Լէք ի՛ բե՛ թղէ հեմ. Եյայր ին երկիր պար
 էք այն նորածին թագաւորին. Լոր մե
 նուկ ծընաւ այն որ արհեստ է՛ յաւիտեան.
 յաւիտեանս յաւիտենից քնակեալէ՛ յարուցեալն

Նկ. 14

Սեաւ եմ գեղեցիկ տաղի Փրգ. 80 «Գանձարան», ք. 196ա

Վերջաբան

Նկատի առնելով որ Ս. Գրիգոր Նարեկացի մեր մեծագոյն գրողը կը համարինք, պարտինք մենք զմեզ սպառազինել բոլոր հնարաւոր եւ արդիական մօտեցումներով, եւ մեզի հասած բոլոր աղբերց բանիմաց օգտագործմամբ, որպէսզի կարենանք քայլ մը եւս կատարել վստահելի բնագրի մը տեսլականին մօտենալու: Խաղաղութեանց ընձեռած օգտակար տեղեկութիւնները ցայսօր անտեսուած են: Ջանացինք նոյնպէս ցոյց տալ, թէ զանազան տաղից պարագային բնագրագիտական տեսակէտով պարագայք բաւական կը տարբերին, եւ ուստի պարտինք մեր մեթոդաբանութիւնն ալ ըստ այնմ պատշաճեցնել, փո-

խանակ յամառօրէն միօրինակ մեթոդաբանութիւն մը պարտադրելու ամենուրեք, մասնաւոր պարագայից առթող յատուկ պահանջները անտեսելով: Վերջապէս՝ ներկայիս արհեստավարժային դիւրութիւններ գոյութիւն ունին, զորս մեր նախորդները չ'ունէին: Ըստ մեր կարծեաց, սակայն՝ ամենակարեւորը բնագրաց պարունակութեան լաւագոյն հնարաւոր հասկացողութեամբ օժտուած ըլլալն է (ըստ յօդուածիս բնաբանին). այս տեսակէտով վերջերս լոյս տեսած կոթողային աշխատութեանց ընձեռած օգնութիւնը մեր եւ նոր սերնդեան վայելած մեծագոյն առաւելութիւնը կը համարինք:

HAIG UTIDJIAN

TOWARDS A NEW EDITION OF THE ODES OF GRIGOR OF NAREK.
NEW PERSPECTIVES

Keywords: St. Gregory of Narek, neumes, odes, mediaeval sacred poetry and music, stemmatics, phylogenetic trees, critical text, metrical structure, Elia Tntesean.

The present article is an introduction to the work carried out by the author on the textual, theological and musicological aspects of the neumes of St. Gregory of Narek. It commences with a history of editions, discusses the motivation behind a new critical edition, expounds the possible editorial approaches and procedures, and summarises the shortcomings of editions currently available. We argue that it would be inappropriate to impose a uniform editorial approach indiscriminately over the whole corpus, as the transmission of manuscript witnesses differs considerably from one ode to another, thus requiring a flexible, tailor-made approach in each case. Indeed, in one extreme instance the extant variants seem mutually irreconcilable. We also discuss misunderstood passages, and endeavour to clarify obscurities in the texts. We then turn to the neumatological conjectures made by Elia Tntesean according to which metrical durations are associated with syllables bearing particular neumes or none; we demonstrate, by considering several examples, the extent to which layers of metre can thereby emerge. Finally, we seek to associate the metre emerging from such an approach with points of bifurcation of the phylogenetic tree, in the case of a particular example. Through the detailed analysis of concrete examples, the article hopes to offer a taste of some of the challenges and conundrums faced by the modern editor, as well as some novel perspectives.

ԱՐՈՒՄՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՆԱՐԵԿԱՑԻԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Abraham Terian, *The Festal Works of St. Gregory of Narek, Annotated Translation of the Odes, Litanies, and Encomia*, A Pueblo Book, Liturgical Press

2016 թ. Liturgical Press հրատարակչությունը a Pueblo Book մատենաշարի ներքո Աբրահամ Տերյանի աշխատասիրությունները լույս է ընծայել Գրիգոր Նարեկացու տոնական ստեղծագործությունների՝ տաղերի, գանձերի, ներբողների անգլերեն թարգմանություն-ուսումնասիրությունը: Այն ուղեկցվում է ընդարձակ առաջաբանով, յուրաքանչյուր ստեղծագործությանը նախորդող թարգմանչի ներածական մեկնությամբ, ծավալուն ծանոթագրություններով: Հավելվածական բաժնում թարգմանված և ծանոթագրված են Գրիգոր Նարեկացու կենսագրության փաստերն ամփոփող պահպանված բոլոր աղբյուրները՝ չորս հեղինակային հիշատակարանները (հոր՝ Խոսրով Անձևացու ժամակարգության մեկնությանը կցված հիշատակարանը, Երգ երգոցի մեկնության, Սուրբ Կուչսին նվիրված ներբողի Ա և Բ տարբերակների հիշատակարանները, «Մատեան ողբերգութեան» երկի հիշատակարանը), Ներսես Լամբրոնացու շարադրած Գրիգոր Նարեկացու կենսագրությունը՝ հարուստ ծանոթագրություններով, գուգահեռներով և հետաքրքիր դիտարկումներով: Վերջում զետեղված է Գրիգոր Նարեկացու, ինչպես նաև Մոկք նահանգի եպիսկոպոսների ազգաբանական ծառը, ներկայացված աղբյուրների, գրականության ցանկ:

Առաջաբանն անդրադարձ է Գրիգոր Նարեկացու կյանքին՝ հիմնված իր հիշատակարանների, «Մատեան»-ի և այլ երկերի մեջ պահպանված ակնարկների՝ ուսուցիչ (Անանիա Նարեկացի)-աշակերտ առնչակցություններ ցուցանող վկայությունների վրա¹: Հաջորդող ենթագլուխներում ամփոփված են տաղերի ու գանձերի՝ առհասարակ հայ հոգևոր հիմներգության, Շարակնոցի, գանձարանի առաջացման մասին դիտարկումներ (գանձերի ստեղծումը, «գանձ» անվան առաջացումը. չնայած արտաքին նմանությունը ասորական՝ նեստորական

¹ Մատեան-ի ԻԸ. Զ. հատվածը գովաբանություն է իր ուսուցիչ Անանիային (ՄՀ, ԺԲ հատոր, էջ 202-203. Terian, XXI), նույնի վկայությունն ենք տեսնում Գրիգոր Նարեկացու ներբողում «Վասն վարդապետաց և իմաստուն ֆահանայից վախճանի բան գովութեան և մխիթարութեան» (ՄՀ, Ժ հատոր, էջ 1103-1105. այս մասին տե՛ս նաև Հ. Թամրազյանի ներածականը նույն հատորում՝ էջ 1095-1105):

հիմների զեզա-զազա՝ գանձ եզրույթին, հեղինակը սրանց ծագումը վերագրում է բացառապես Գրիգոր Նարեկացուն): Քննված է տաղերի և գանձերի կառուցվածքը, Գրիգոր Նարեկացու տաղերն ու գանձերը, ներբողները, նրան վերագրվող այլ ստեղծագործությունները (ըստ ՄՀ ԺԲ, ՄՀ Ժ հատորների), աշխատասիրողի թարգմանության սկզբունքները, որին հաջորդում է բուն նյութը:

Այս իսկապես հանրագիտարանային աշխատությունը Ժան-Պիեռ Մահեի և Աննի Մահեի ֆրանսերեն թարգմանության և ուսումնասիրության հետ միասին² Նարեկացու ամենախորհրդավոր ստեղծագործական ոլորտի՝ գանձերի և հատկապես տաղերի խորքը թափանցելու նոր, հաճախ շրջադարձային հորիզոններ է բացում: Աբրահամ Տերչանի ուսումնասիրության մեջ առաջին անգամ թարգմանված են Գրիգոր Նարեկացու բոլոր տոնական ստեղծագործությունները՝ ինչպես տաղերն ու գանձերը (հայերեն բնագիրը՝ աշխատասիրությամբ Արմենուհի Քյոշկերյանի), այնպես էլ յոթ ներբողները՝ «Պատմութիւն Ապարանից Սուրբ Խաչի» երկը, Սուրբ Խաչի և Սուրբ Կույսի ներբողներն իրենց զույգ տարբերակներով, «Ներբող ի Սուրբ առաքեալսն», «Ներբող ի Սուրբն Յակոբ Մծբնայ» գրվածքները (աշխատասիրությամբ Մարթա Արաբչանի): Հեղինակն օգտագործում է Գրիգոր Նարեկացուն և Նարեկյան դպրոցին նվիրված «Մատենագիրք Հայոցի» երկու հատորները (կազմող և խմբագրող՝ Հրաչյա Թամրազյան³), հնարավորինս ընթերցողի գործը դյուրին դարձնելու նպատակով պահպանում է ոչ միայն տաղերի ու գանձերի հայերեն հրատարակության հերթագայումն ու համարակալումը, այլև տողատումը կամ դրա համարակալումը:

Նարեկացու տաղերը հատկապես հագեցած են տեսիլների, խորհրդապատկերների, այլասացությունների շարաններով, որոնք այս մտահղացքները հաճախ վերածում են անմեկին, մանվածապատ բնագրերի, բանաստեղծական խորհրդավոր անոթների՝ հանճարեղ բռնկումներով և առեղծվածային բառահյուսվածքներով: Այս առումով Նարեկացու տաղերի թարգմանությունն իսկ, որ հատկապես հարուստ են բառաբարդումներով, ռիթմական տարատեսակ

² *Trésor des fêtes hymnes et Odes de Grégoire de Narek*, Introduction, traduction et notes par Annie et Jean-Pierre Mahé, Peeters, 2014, p. 93.

³ Տե՛ս Մատենագիրք Հայոց, Հատոր Ժ, Անթիլիաս-Լիբանան, 2009, Մատենագիրք Հայոց, Հատոր ԺԲ, Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս-Լիբանան, 2008: Այս երկու հատորներում ընդգրկված Նարեկյան դպրոցի ամբողջացված մատենագրությունը՝ Անանիա և Գրիգոր Նարեկացիներին վերագրված և նոր փաստարկներով նրանց որդեգրված ստեղծագործությունները (ինչպես Գրիգոր Նարեկացու «Ով է դա»-ի մեկնությունը, տե՛ս ՄՀ, ԺԲ հատոր, էջ 885-910, Անանիա Նարեկացու ներբողը՝ «Ներբողեան ասացեալ ի սուրբն կաթողիկէ եկեղեցի», տե՛ս ՄՀ, Ժ հատոր, էջ 619-646), օգտագործվում են նաև Գրիգոր Նարեկացու տաղերի, գանձերի, նրա այլ ստեղծագործությունների հետ զուգահեռների, Գրիգոր Նարեկացու կենսագրության բաժնում, այս ստեղծագործություններին հեղինակը նվիրում է նաև իր առաջաբանի մի ենթագլուխը:

լուծումներով, պատկերների քողարկումով, բարդագույն խնդիր է և պահանջում է բանաստեղծության մեջ թափանցելու բացառիկ կարողություն ու խորագագացություն, բայց հատկապես՝ նոր լեզվի մեջ վերակերտման բանաստեղծական կարողություն: Մյուս կողմից, այստեղ ծածկագրված տեսարանների բնության, տիեզերական պատկերների ու այլ ակնարկների խորքերը վեր հանելը այս բացառիկ ուսումնասիրություն-թարգմանությունը վերածում է մեկնության:

Բոլոր տաղերն ու գանձերը, ինչպես նշեցինք, ունեն ներածական, որտեղ աշխատասիրողը բացում է սրանց ծիսական-աստվածաբանական խորհուրդը, մտահղացքը՝ խորհուրդների և դրանք արտացոլող պատկերների ամբողջությունմբ, նրանց բաշխումը ստեղծագործության մեջ (տող առ տող կամ հատված առ հատված), անդրադառնում է տաղի կամ քարոզի կառուցին, սրանից բխող տաղը կատարելու ձևին (փոխասացություն և այլն), ձեռագրերում նրա դրսևորման ձևին, բանաստեղծական լուծմանը (առձայնույթ, ոտք, հարակրկնություն, ծայրակապ, դադարներ և այլն):

Յուրաքանչյուր տաղի պատկերային-խորհրդաբանական շերտերը բացվում են զարմանալի նրբահայացությամբ՝ ի վերջո հառնելով իրենց բացառիկ ամբողջականության մեջ: Ըստ բովանդակության՝ այս տաղերը մեկնության տարբեր կերպեր են թելադրում:

Ա. Ներածություններում ուսումնասիրողը հաճախ ցույց է տալիս գլխավոր խորհրդաբանական հանգույցը, որի լուծումից այնքան բնականորեն բացվում է ողջ տաղի իրական հոգևոր պատկերը:

Այսպես, Ջորջինեքի տաղում Աբրահամ Տերյանը վեր է հանում բազմաբարդ ածականներով փոխերի՝ շրջապատող աշխարհի նկարագրություն ներկայացնող իրական նշանակությունը, նրանց կապը բուն տների հետ, որ պատկերում են Մկրտության և Ծննդյան խորհուրդը: Ամբողջովին բնության ներշնչված տեսարաններ նկարակերտող Ծննդյան տաղում բացահայտում է գլխավոր խորհրդակիր մասնիկի՝ ցողի՝ որպես Լոգոսի նշանակությունը, որից բացվում է ողջ տաղի խորհրդաբանական կրկնատեքստը՝ Լոգոսի էջբլ ամպ, անձրև, ցող պատկերներում:

Քառասնորյա գալստյան տաղի սկզբնատողերում պատկերված է անեզրի եզերման, մարդեղացման ընթացքը, այլևայլ պատկերներով թափանցված (վարդանման ներկված կարծրատեսակ լիճ և այլն) «Սրբոց Քառասնից և այլ վկայից» տաղում՝ նրանց նահատակության, տանջանքների իրական պատմությունը և սրանց աղբյուրը (Բարսեղ Կեսարացի, *Hom. xix, PG 31. 507ff*⁴):

⁴ Տե՛ս նաև՝ *Trésor des fêtes hymnes et Odes de Grégoire de Narek*, Introduction, traduction et notes par **Annie et Jean-Pierre Mahé**, Peeters, 2014, p. 93.

Բ. Երբեմն խրթնածածուկ ակնարկներում Աբրահամ Տերյանը բացահայտում է ամբողջական տեսարաններ, որոնց համաբնագրի մեջ են դրվագվում մյուս բոլոր պատկերները՝ հարստացնելով այս գլխավոր տեսարանը նոր հեռանկարներով: Այսպես Ղազարոսի Հարուսթյան տաղի (Եա) առեղծվածային հյուսվածքի մեջ ուսումնասիրողը տեսնում է գրախտային տեսարանների խորքը՝ հայտնաբերելով մարդու արտաքսման և դրան հետևող սպեղանու՝ մարդեղացման ակնարկները.

«Սկզբնազարգ գոյիւ անայր երբեմն ի Աւուրք ակնաքթիթ հրաւէր, ճարակող ի նոյն ի լրոյն,
 Վայր ճոխ ճեմէին տաւիղ, ամին բերե- Լրոյն անդրէն այժմ միշտ նորոգ, սէր լոյ արհաս. սիրեցելոյ սրտի...»

Աւրհաս վաղավէտ վճիռ, սէր համբերապատ մահին

Մահինաբողբոջ ժամին, ժամին ժամանեալ աւուր:

Այս համաբնագրի մեջ են դրվագվում Ղազարոսի մահն ու Քրիստոսի Բեթանիա և Երուսաղեմ գալստյան պատկերները՝ ցուցանելով նաև Հայ եկեղեցում այս երկու՝ Ղազարոսի Հարուսթյան և Ծաղկազարդի տոների կապը.

Այր դիտին ի նոյն դիտին, տան յերուսաղեմ երթամք,

Երթամ զարթուցանել զՂազար՝ զայն զչորեքաւրեայ զմեռեալն...» («Տաղ ի Յարութիւն Ղազարոս», ՄՀ ժԲ, էջ 641):

Այս տոների կապն է արտացոլված և Ղազարոսի Հարուսթյան մյուս տաղում (Եգ), ուր դեպքերը ներկայացված են հակառակ ընթացքով (Քրիստոսի աստվածությունն և կարագրությունն, նրա մուտքը Երուսաղեմ, այստեղից էլ՝ Ղազարոսի հարուսթյուն), որ մեկնվում է ծիսական և խորհրդաբանական համատեքստերում (այս երեք վայրերի փոխկապակցվածությունը, Ղազարոսի և Ծաղկազարդի տոների իրար մոտ լինելը, առաջինի՝ երկրորդից առաջ տոնելը Հայ եկեղեցում): Ծիսական ծագումնաբանությամբ է հեղինակը բացատրում և որոշ տաղերի խորհրդաբանական շեշտերը. Եկեղեցուն նվիրված տաղերում հաշելության պատկերների առկայությունը պայմանավորված է նրանով, որ ի սկզբանե սրանք նվիրված էին Երուսաղեմում առաջին եկեղեցիներին՝ այդ թվում Քրիստոսի Գերեզմանի եկեղեցու կառուցման հիշատակությանը, բացի այդ եկեղեցիների նավակատյաց տոնը նախորդում է հաշվերացի տոնին:

Գ. Որոշ տաղերի մեկնություններում վերհանվում են ոչ միայն առանձին խորհուրդներ, այլև դրանց միակցումների հանգույցները, որ բացահայտվում են տաղի իրական, ամբողջական մտահղացքը և այն արտացոլող կառույցը:

Այսպես, ուսումնասիրողը զարմանալի խորաթափանցությամբ վերականգնում է էջքի և վերելքի գոյաբանական-խորհրդաբանական շարժումների փոխթափանցումները, որ ընկած են Նարեկացու շատ ստեղծագործությունների խորապատկերում, բայց ամեն անգամ, ըստ տոնի խորհրդի և բանաստեղծական մտահղացման, յուրովի, տարբեր հանճարեղ լուծում են ստանում: Հարույցի տաղում (Ձա) Երրորդությունից հետո մեկնիչը նկատում է երկնային ոլորտներում Քրիստոսի Համբարձման սպասումի պատկերումը.

«Փառք իմ դիմառից էից գոյից գունդ.

Գունդ տրամք երամից կայք յանուրեք վայր,

Վայր համբից բիրից ար սահմանեալ գետ.

Գետ քառանիթեայք պաղպաջ երկնի փայլ փայլ,

Փայլք փաղփինատար անծայրենի լոյս» («Տաղ Յարութեան», ՄՀ ժԲ, էջ 647):

Սրան հաջորդող տեսարանները բացում են աստվածային էջքի և հառնումի, միմյանցով թափանցված լինելու ողջ տարողությունը (գերեզմանի վեմի՝ որպես միաժամանակ արքայական աթոռին բազմելու [«Քայլ վեմ շարժելով տեղիաբան նիստ, նիստ աբխունանեմ անապատի տալթ»], խաչին՝ որպես աշտարակի դիտանոց բարձրանալու, թաղման ու դժոխք իջնելու ու հաջորդող Համբարձման շրջապատկերները):

Ուսումնասիրողը թափանցում է տաղի տեսիլաշարերի, նրանց միջև թաքցված հղումների ու աղերսների, համաշափույթությունների դաշտը. Համբարձման մեկ այլ տաղում (Ըբ) նա նկատում է հայրական ծոցից դուրս եկող և վերադարձող Լոգոսի պատկերները (4 և 21-րդ տողերում), դարձյալ՝ էջքի և վերելքի արտացոլումները միմյանց մեջ: Բացառիկ է այս տեսակետից Վարդավառի տաղի մեկնությունը. այստեղ հեղինակը զուգահեռում է բոլոր այլ տաղերի տեղիները, որ բնության պատկերների շարժանքում ցուցանում են իրական՝ Ծննդյան, Պայծառակերպության և Հարություն խորհուրդների միավորումը մեկ տեսիլաշղթայի մեջ՝ դարձյալ վայրէջք, վերելք զուգադրապատկերով: Սա նկարակերտվում է բազում միջոցներով՝ ծաղիկների գույներում՝ տաղի սկզբում կարմիր վարդի (մարդեղացած և զոհաբերվող Քրիստոս), երկրորդ կեսում սպիտակ շուշանի (աստվածային Քրիստոս) և կենտրոնական հաստվածում այս երկուսի՝ վայրէջքի վերջին կետից վերելքի սկզբի կիզակետում երկու գույների խառնուրդի՝ ծառերի (Խաչի) վարդագույն ծաղիկների խորհրդապատկերներով («Ի փունջ խուռներամ վարդից գոյնգգոյն ծաղկունք ծաղկեցան... վարդագոյն

ոստս արձակեցին... զարդ առեալ վարդըն շուշանին. շուշանըն շողէր հովտին»։ «Տաղ վարդավառին», ՄՀ ԺԲ, էջ 704)։ Այս շրջադարձից վերելքից առաջ ներմուծվում է քամու՝ որպես Սուրբ Հոգու, այլաբանությունը, որպեսզի տաղի հոգևոր համապատկերում ամբողջացվի Երրորդությունը («Հով հարեալ գոհար շուշանին. յայն հարաւային լեռնէն քաղցր աւոյով ցաւդէր շուշանին»)։ Վերջապես, Պայծառակերպության առնչությամբ միայն լեռան ակնարկով (որի վրա տեղի է ունեցել Պայծառակերպությունը՝ «յայն հարաւային լեռնէն...») սկսվում է վերելքը («աստղունքդ ամէն շուրջ առին դէմ լուսնին՝ գունդ-գունդ բոլորին. Գունդ-գունդ խաշաձև գնդակ, յարինուած երկնից շրջանակ»)։ Այս խորհրդավոր տիեզերական տեսարանում, ըստ հեղինակի՝ պատկերված է *Globus Cruciger*-ը («Խաչագագեցիկ երկրագունդը». որ ներկայացնում է երկրագունդը՝ գագաթին ոսկե խաչով, շրջանակված լուսատուները պատկերող անգին քարերով. միջնադարյան մանրանկարներում հաճախ է Քրիստոսը պատկերվում որպես Տիեզերակալ՝ ձախ ձեռքում պահած այն)։

Այսպես պատկերներով գերհագեցած Վարդավառի տաղին ուսումնասիրողն օժտում է մեկնության կրկնաբնագրերի, խորհուրդների փոխթափանցումների նույնպիսի առատությամբ։

Նույն խորագրաց մեկնությամբ վեր է հանում Հարություն մյուս տաղի (արտագանձարանային՝ ՄՀ ԺԲ, էջ 727. «Սալն այն իջանէր») խորհրդաբանական հղացքը՝ դարձյալ վայրէջքի ծայրագույն կետում վերելքի փոխակերպման հանճարեղ մարմնավորմամբ։ Այս երկվությունը ուսումնասիրողը ցույց է տալիս ինքնին արդեն սայլի խորհրդապատկերի մեջ՝ բերելով սայլ - խաչ - Քրիստոսի աթոռ, միաժամանակ նրա ոտքերի վայր (վերջին երկուսը՝ դարձյալ վերելքի և էջքի որպես բարձրի ու ցածրի զուգահեռավասարություններ), սայլ՝ խաչելություն, սայլ՝ Համբարձում արքայական աթոռին բազմում, բոլոր հնարավոր խորհրդաբանական աղերսները։ Այս շարժումները տաղում արտահայտվում են սայլի էջքի վերջին կետում կանգառով անշարժությամբ, որ կրկնվում է տաղի առաջին կեսի տան ավարտների դարձերում «Եւ ահա շարժէր սայլիկն այն, Եւ ահա չխաղայր անինն այն» («Տաղ Յարութեան», ՄՀ ԺԲ, էջ 727-729)։ Բանաստեղծության գագաթնակետը նրա վերստին շարժումն է վերելքի ուղիով. «Եւ ահա շարժէ՛ր սայլիկն այն, և ահա խաղա՛յր անինն այն»՝ Հարությունը ժամանումը երկնային երուսաղեմ, բազմելը գահին։

Դ. Նարեկացու ստեղծագործության միասնականությունը. Հեղինակը մատնանշում է «Մատեան»-ում Գրիգոր Նարեկացու հղումներն իր իսկ տոնական ստեղծագործություններին (Մատեան, Զ՝ բարեխոսության աղոթք ուղղված Մարիամին՝ Բան Զ. 20-21-ում ակնարկ նրան նվիրված իր ներբողին, Բան ԶԲ.

1. 6-11.-ում ակնարկ առաքյալներին նվիրված իր ներբողին. հետաքրքիր է նաև հեղինակի դիտարկումը Նարեկացու ներբողների մեջ ներդրվագված ամբողջական տաղերի վերաբերյալ): Աբրահամ Տերյանը զուգահեռներ է անցկացնում ոչ միայն տաղերի, գանձերի և «Մատեան»-ի միջև (օրինակ՝ եկեղեցի-Մարիամ նույնացումը «Մատեան»-ում Բան Հե. 12.2. և ամբողջովին Մարիամին պատկերող եկեղեցու տաղը՝ ԺԴ ա), այլև տաղերի, որոնք հասկապես հեղեղված են Երգ երգոցի պատկերներով և Երգ երգոցի Նարեկացու մեկնության միջև (օրինակ՝ ամբողջությամբ Երգ երգոցի հարասությունների վրա հյուսված Հարություն տաղի փոխի՝ Զբ, վերլուծությունը, որ, ինչպես Երգ երգոցի այս տեղիի Նարեկացու մեկնությունում, փոխակերպվում-շրջվում է Քրիստոսի մարդեղացման, շարժարանքների ու Հարություն խորհրդի), մեկ տեղ՝ տաղի և «Ով է դա»-ի Նարեկացու մեկնությունների միջև («Հաւուն», հմմտ. Յոբ. ԼԳ. 39): Առհասարակ, պատկերներն ու բանաստեղծական լուծումները ներդրվագվում են Նարեկացիական այլ տաղերի համատեքստում, համեմատվում միմյանց հետ, ճշտվում միմյանցով (ինչպես օրինակ, Ծննդյան քարոզում հայտնվող այսօր մորենին նույն տոնի տաղում վերակերտվում է վառվող թփի, որից ծնունդ է առնում քերթությունը, նույն Ծննդյան տաղի Լոգոս-ցողը ներկայացված է այլուր, սալի՝ Բանի Ժամանման համարժեքը Ա. Տերյանը բերում է Նարեկացու Հարության «Սալի» և Ղազարոսի Հարության տաղերում):

Յուրաքանչյուր տաղի կամ գանձի այս ներածությունը հաջորդում է թարգմանությունը, որտեղ գրեթե յուրաքանչյուր բառ, եզրույթ, համեմատություն, արտահայտություն և խորհրդաբանություն ծանոթագրվում է՝ իր կիրառության բոլոր սուրբգրային օրինակներից, հայրաբանական մեկնությունից մինչև հայ մատենագրության նմուշները (օրինակ՝ Հոր ծոց, Եվայի դատապարտություն, Արուսյակ-Մարիամ, ծովի աստղ, ծովային ծաղիկ, Խաչի վրա առյուծի հրեական-մեսսիական, սուրբգրային, պարականոն ակունքներ և այլն): Ուսումնասիրությունն ունի 1465 մանրամասն ծանոթագրություններ, որոնք կառուցված են հետևյալ սկզբունքով. տրվում է հինկտակարանային տեղին, այնուհետև՝ սրա ավետարանական վերաիմաստավորումը (եթե կա այդպիսին), հայրաբանական գրականության մեջ համեմատության սկզբնաղբյուրը, և ամենակարևորը՝ զուգահեռ պատկերները Նարեկացու մյուս բոլոր տաղերում: Այս տեսակետից ուսումնասիրությունն իսկապես խորհրդաբանական շտեմարան է, որ ամփոփում է գրեթե բոլոր միավորների տարողությունը և քարտեզագրությունը (քանի որ Նարեկացու տաղերն ու գանձերը, ըստ էության, հայ միջնադարյան մատենագրության մեջ խորհուրդներով և պատկերներով ամենահագեցած գլուխգործոցներն են): Սրանք, թերևս, ծանոթագրություն-ուսումնասիրություններ են:

Այսպես, օրինակ, հեղինակը մի հակիրճ ծանոթագրության մեջ միայն՝ նույնիսկ ծանոթագրության մի հատվածում, առաջարկում է թոնդրակյան շարժման, որին հարելու մեջ մեղադրվում էին և Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները, նրա անվան առաջացման, ըստ այդմ էության բոլորովին նոր մեկնություն (կապում է այն խաղաղարարական շարժման մեջ արմատացած «թեոսիս»-ի և միստիցիզմի, Դիոնիսիոսին վերագրվող բնագրերում «թեանդրիկոս») «աստվածամարդկային» լինելու հասկացության հետ. *A. Terian, Introduction, p. XXI*):

Հեղինակը պարզ, մեկին, սեղմ ձևով բացում է կծիկը Նարեկացու բազմաբարդ և բազմաշերտ բնագրի հյուսվածքներում գաղտնագերծումների ճանապարհով, գրեթե յուրաքանչյուր էջում գյուտերով: Նա ոչ միայն բացահայտում է առանձին միավորների խորհուրդները, այլև փորձում թափանցել բանաստեղծական նուրբ զուգորդումների ու ակնարկների՝ սրանցից հյուսվող ամբողջական տեսարանների մեջ, գտնել սրանց իմաստաբանական խորքը, միմյանց տարողություններով հարստացումը: Հակիրճ, հաճախ բանաձևային շարադրանքի մեջ ներկայացված են ամենախորքային, նրբահայացություն պահանջող հանգույցները, որ ենթադրում են ոչ միայն քրիստոնեական ավանդույթում ողջ աստվածաբանական-խորհրդաբանական գանձարանի, նրա միավորների կապերի ու շրջանառության պատմության հանրագիտարանային իմացություն մատենագրական ահռելի ժառանգության մեջ, այլև զուտ բանաստեղծական և հոգևոր ընկալում ու հայեցում: Այս բացառիկ ուսումնասիրությունը, որից բազում հորիզոններ են բացվում և հեռանկարներ գծագրվում, հիմք է հետագա նմանատիպ ոչ միայն Գրիգոր Նարեկացուն, այլև առհասարակ միջնադարյան խորհրդաբանությունը վերաբերող ցանկացած ուսումնասիրության համար:

Հրաչյա Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, Գիրք Գ

Գրիգոր Նարեկացուն և Նարեկյան դպրոցին նվիրված Հրաչյա Թամրազյանի Ա (Երևան, 2013) և Բ (2015), նրա մտահղացած Գ (2017) հատորներն ամփոփում են տասնամյակների իր ուսումնասիրություններն այս ոլորտում: Առաջին հատորը բնագրագիտական ուսումնասիրությունների շարք է, հեղինակը վերակերտում է այն նյութական հենքը, որի մեջ սահմանվում են Նարեկյան դպրոցի երեք ներկայացուցիչների փոխազդեցությունների ու փոխանցումների, վերակերպումների սահմանները՝ նրանց հոգևոր կենսագրությունների և այդ հոգևոր կենսագրությունների միեղենացման հանգույցը: Հեղինակը Նարեկյան դպրոցի «համաբնագրի» տիրույթում (իր սահմանած եզրույթը) ընդգրկում, սահմանում է և որդեգրում որոշ գրվածքներ տեսական և բառանյութեղեն հենքի վրա (օգտվելով նաև Հ. Միրզոյանի ուսումնասիրություններից): Երկրորդ հատորը ներառում է Գրիգոր Նարեկացու հոր՝ Խոսրով Անձևացու և նրա ազգականի ու ուսուցչի՝ Անանիա Նարեկացու կյանքի և ստեղծագործությունների քննությունը: Այստեղ, մասնավորապես, բացահայտվում է այն տեսական նախահիմքը, որ պատրաստել է Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը: «Մատեանն» այս համաբնագրում դիտարկվում է որպես Նարեկյան դպրոցի ներկայացուցիչների երկարամյա ստեղծագործական խմբումների, հոգևոր փորձառությունների կուտակումների արգասիք, բացառիկ թուիչք, որ նախահղացվել է դեռևս Անանիա Նարեկացու ստեղծագործության ու բանավեպի տեսության մեջ: Գարձյալ տեսական հիմքի վրա հառնում են այս գործիչների հոգևոր կենսագրությունների և բնագրերի սերտաճման «վայրերը»:

Երրորդ հատորը (կազմող՝ Ա. Թամրազյան) ամփոփում է Գրիգոր Նարեկացուն վերաբերող այն բոլոր ուսումնասիրությունները, որ ներառված չեն Ա և Բ գրքերում: Տարբեր տարիների այս աշխատությունները ներկայացված են մեկ միասնական, ամբողջական բնագրով, ըստ որի անհրաժեշտություն է առաջացել ներհյուսել այդ բնագրերը, բխեցնել միմյանցից, ներմուծել առանձին հատվածների հղացքի մեջ այն, ինչ սրանց նոր մի հանգույցն է, միմյանցով կրճատել և լրացնել, հավելել առաջաբաններ և վերջաբաններ (օգտվելով բացառապես հեղինակի բնագրերից)՝ պահպանելով հնարավորինս քիչ խառնվելու սկզբունքը: Նման ամբողջականացում թելադրում են առաջին հերթին Հրաչյա Թամրազյանի բնագրերը՝ այն ներշնչումը, միեղեն շարադրանքն ու ձևի ամբողջականությունը, որ նրանց գլխավոր առանձնահատկությունն է: Մինչ գրքի բովանդակությանն անցնելը, թերևս, անհրաժեշտ է նշել նյութի մոտեցման և այս շարադրանքի, ըստ մեզ, հեղինակին հատուկ կարևորագույն մի քանի կետերը:

Կան բնագրեր՝ ինչպես Նարեկացու ստեղծագործությունը, որ, հակառակ գիտություն համար սահմանված օբյեկտիվության և հայեցողության տարածության պահպանման շափանիչներին, պահանջում են անընդհատական մերձեցումներ, և միայն աստիճանական նույնացման ճանապարհին են բացում իրենց շղարշները: Հավանաբար, Թամրազյանի ուսումնասիրությունները բերում են առաջին հերթին ինքնին այդ աստիճանական մերձեցմանը, գիտելիքին զուգահեռ՝ նրա հանդեպ որոշակի վերաբերմունքի ձևավորմանը, և գիտելիքից առաջ՝ նրա ներկայության լարմանը: Նրանք իրենց շարադրանքի ութմով իսկ, ռճով, բնագրերի շուրջ ստեղծում են այն միջավայրը, որտեղ սրանք կարող են հնչել, և այնպես օրգանապես են ներհյուսված Նարեկյան բնագրերին, բխում են նրանցից կամ նախապատրաստում նրանց, որ նաև թելադրում է անշտապ մի ընթացք՝ մեր՝ տեքստի մեջ խորասուզմանը զուգընթաց:

Սրանից բխում է մյուս հատկանիշը՝ հեղինակի վերաբերմունքն «այլ» բնագրի հանդեպ: Թամրազյանն այնպես է բաշխում, «բացում» ուսումնասիրության ենթակա բնագիրը՝ Դավիթ Անհաղթի կամ Փիլոնի, Անհաղթի մեջ Փիլոնի արտացոլումների, արեոպագիտյան բնագրերում այս երկուսի արտացոլումների, սրանց՝ Նարեկացու մեջ բունկումների, որ սրանք սկսում են ոգեշնչել ու «հրահրել» միմյանց, ոգեղեն կամարներ գծագրել միմյանց միջև: Սրան ներհյուսում է ի՛ր բառերն ու դրվագումները, որոնց մեջ սրանք ավելի խորքային երկխոսություններ են ծավալում և տեսիլներ դառնում միմյանց հայեցումների առաջ: Ըստ սրա՝ նա չի սիրում ընդմիջել ներբերվող բնագիրը, որ պետք է շարադրվի իր բոլոր ծալքերով: Այստեղ ուսումնասիրությունը դառնում է կրկնատեքստ, և գիտական զննումը հասնում է ներքին հայեցողության սահմաններին:

Երրորդ հատկանիշը բնագրերի ընկալման ու մեկնության ամբողջականությունն է, «ճարտարապետականությունը»: Հրաշա Թամրազյանը վերհանում է հոգևոր հատակագծեր, հոգևոր կապի ոսկե շղթաներ բնագրերի մեջ, նրանցից քաղված ամբողջություններ ու կառույցներ, նրանց միջև՝ արահետներ, որ ստեղծում են մի դպրոցի հոգևոր ճակատագիրը: Եվ Նարեկյան դպրոցի իր տեսլականն ու այդ դպրոցի «համաբնագիրը»՝ փոխանցումների, խորին գիտելիքների ու ազգեցությունների գաղտնամուտքերով, բանաստեղծական բունկումներով, հոգևոր տարփանքի հեղումներով, ենթաբնագրերի նոր ծավալներով, ու բնագրերի՝ միմյանց մեջ նոր դրվագումներով, այնքան ճարտարապետականորեն է հառնում ընթերցողի առաջ:

Այժմ ներկայացնենք այն բովանդակային շեշտերը, որ ընդգրկում են Գրիգոր Նարեկացուն նվիրված Հրաշա Թամրազյանի ուսումնասիրությունները (որոշ կարևորագույն միավորներ գրքում ներկայացված են երկու անգամ առանձին և արեոպագիտյան բնագրերի համատեքստում):

1. Հեղինակը Գրիգոր Նարեկացու կենսագրության մեջ սահմանում է հոգևոր առնչակցության հանգույցները՝ Գրիգորի և իր եղբայրներ Հովհաննեսի ու Սահակի, Գրիգորի և իր հայր Խոսրովի, և ամենակարևորը՝ Գրիգորի և Անանիա Նարեկացու: Նարեկյան դպրոցը ներկայանում է որպես գրական մի ընտանիքի հոգևոր միասնական ճակատագիր, ծրագիր, հոգևոր տաճարի կերտման մի բացառիկ կամք, «կեսդարյա ներքին խմորումների և կուտակումների, հոգևոր և բանական մեծ խտացումների խաշասերումների» արդյունք:

Այս գլխի երկրորդ առանցքը՝ որպես կենսագրության գերագույն փաստ, մշտանդով արարման գաղափարն է, սրա մեջ է Նարեկացին դրվագում իր անձը՝ ներքին մարդն արարում է խոսքը, և միաժամանակ խոսքն է արարում ներքին մարդուն, և սրանով նա ներում ու թափանցում է սեփական անձի և համաշխարհի հոգևոր կենսագրության մեջ՝ ընդգրկելով այն ծայրեծայր. «սա մշակույթի պատմության մեջ այն եզակի դեպքերից է, երբ ներքին խոսքը, իբրև հոգևոր ընթացք, համընկնում է անհատի կենսագրության հետ» (էջ 71), «Այդ բնագիրն է, որ ուղղորդում է նրան, դառնում հոգևոր կենսագրություն, որ պիտի թափանցի նաև սերունդների կենսագրության մեջ՝ դառնալով հոգևոր փաստ և առնչակցություն Անիմանալիի հետ» (էջ 68): «Անգամ պատմական միջավայրը, իրադարձային ետնախորքերը, թափանցելով հոգևոր այդ ընթացքի մեջ, դառնում են ներքին կենսագրության փաստեր... վերածվում են պատկերաշարերի, փոխաբերությունների, վերառաքվող խոսքի, բանաստեղծության, որն այս դեպքում դառնում է նրանց գերագույն իմաստը... Դրանք (կենսագրությունն ու ստեղծագործությունը Ա. Թ.) ներհյուսված են իրար՝ իբրև հավիտենական հարասություն և հոգևոր կենսագրություն, որ վերածվում է վերժամանակյա բնագրի և անանձնական համայնապատում մի ողբամատյանի» (էջ 71-72): Հոգևոր կենսագրության նույնականացման այս տարածական ու խորհրդագրած ընկալման հետ են, ըստ էության, կապվում հաջորդող մյուս կետերը, որ ասես դուրս են գալիս, ծավալվում այս կիզակետից, անցնում բանաստեղծական-խորհրդաբանական-հոգևոր փորձառությունների կերպափոխումների իրենց շարանով: Հրաշյա Թամրազյանն այլուր ունի մի շարք արտահայտություններ, որ շեշտում են այս ընկալումը: Այս նույնականացումն իր հնարավոր բացարձակացման աստիճանին է հասնում Հրաշյա Թամրազյանի՝ Նարեկացուն նվիրված վերջին անդրադարձի մեջ (տե՛ս Գիրք Գ, «վերջաբանի փոխարեն»):

2. Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները Հրաշյա Թամրազյանի ուսումնասիրություններում հառնում են առաջին հերթին որպես խոշորագույն, հանճարեղ նորարարներ՝ հոգևոր բացառիկ, անհատական փորձառության, մտազննումների ու հայեցողությունների կրողներ, որոնք անվերջ նորարարության գաղափարը վերածում են գլխավոր սկզբունքի: Իրենց ծավալայնության մեջ,

ազատախոհությունը՝ բառի ամենաներքին, հոգևոր առումով, ամենը դպրոցի ծիրում ներառելու կարողությամբ նրանք պատկերանում են որպես վերածննդի գործիչներ, նոր՝ «հոգևոր արվեստների համակարգը» կերտողներ:

3. Այս ծավալային-տարածական շերտավորումների արդյունքում Հրաչյա Թամրազյանը ստեղծում է կամ շեշտում առանցքային հասկացություններ, որ ընկած են Նարեկյան դպրոցի հոգևոր խտանյութի հիմքում, ինչպես՝ բանական ճամփորդություն, ազատ արարման պաշտամունք, անվերջ ստեղծարարում, ստեղծագործություն խոհական հուզման կամ հուզական խոկման սահմանին, բառի ծիսականացում, գերլեզու, խոսքի մարդեղացում, բառային քաղց, ներքին մարդ, լեզվական տեսիլք, լեզվական հափշտակություն, հոգևոր տարփանք, Աստծո հետ համաշնչապես արարում, հարակա բնագիր, և այլն: Նարեկյան դպրոցի բնագրերի քննությունն ու հայեցողությունը հյուսվում է այս առանցքների շուրջ:

Լեզուն՝ որպես կենսագրություն. Լեզվի բացարձակացում. Ամենաշատն այստեղ մշտաշարժ ստեղծաբանությանն ու սրա ծիրում լեզվարարչությանը վերաբերող արտահայտություններն են, ուր շնչավոր ու հոգեկիր բառերը՝ բառ-նշանն ու բառ-առեղծվածը «անվերջ նոր հոգևոր խորքեր ու տարածություններ են ստեղծաբանում» (էջ 76): Լեզվի և ստեղծագործության ձևակերպումներից են նաև՝ բանական խոռվք ու արարման խոլ տարերք, անընդհատ շարժման մեջ գտնվող պատկերամտածողություն, որ տանում է անընդհատ բառային գլուտերի, ավանդական բառաշերտերի հաղթահարում և ինքնարարիչ հղացման մեջ «խորին խոսքի» գոյավորում, լեզվի ճյուղավորում, խոսքի անսովոր գալարքներ, ոգորումներ ու բռնկումներ, բանաստեղծության ներքնատարածության վրա լույս սփռող հոգևոր հոսքի կիզակետեր, հանապազ ինքնարարում, մշտահոլով բառաշխարհ: Ընդ որում, սրանց մեծ մասը սահմանված են Նարեկացու կենսագրությանը վերաբերող գլխում՝ այն տարածքում, ուր ներքին ու արտաքին կենսագրությունը դառնում է բացարձակ մի բնագիր:

Նարեկացին, ըստ Հրաչյա Թամրազյանի, «ստեղծաբանում» ստեղծագործում է իր լեզուն և առնելով իր հոգեզգայական աստվածահաղորդության մեջ, ծիսականացնում է խոսքը: Նա «գոյավորում, շնչավորում է մի խորհրդավոր բառաշխարհ, ուր աներևույթն, անտեսանելին ներկայանում է մարմնառյալ, բառային կերպարանքով, խոսքի հսկայական, զանգվածեղ տեսիլադաշտով: Գրիգոր Նարեկացին ստեղծում է մի գերլեզու, մի յուրատեսակ միջնաշխարհ... որ կապող օղակ է հանդիսանալու բոլոր մահկանացուների և գալիք սերունդների համար»: Ուսումնասիրողը դուրս է բերում այն բոլոր բնորոշումները, որ վերաբերում են տեքստի հարակայության մասին Նարեկացու վկայություն-

ներին, ինչպես նաև լեզվի բնորոշումներին (օրինակ՝ կենդանի խոսք, չքնաղ խոսք, խոսքի լրուծյուն և այլն), որ, ըստ ուսումնասիրողի՝ ցուցանելով ընթացք կամ գաղափար, աստիճանակարգություն, խորքեր ու նրբերանգներ, կարևոր նիշեր են աղոթասացության շարժումն ըմբռնելու համար:

4. Հրաչյա Թամրազյանը բառի բացարձակացումից ու ծիսականացումից հետո սահմանում է Գրիգոր Նարեկացու ստեղծագործության կառուցվածքային մյուս կարևորագույն ենթաշերտը՝ տեսիլները, որոնց մասին կան և հեղինակային վկայություններ: Այս հատվածի առանցքային ձևակերպումներից են՝ կենդանի հաղորդություն, տարփանք, հիացատեսություն, բառային տեսիլք, տեսիլը՝ որպես բնագրի խորապատկերի կիզակետ, նրա խորքը կերպաձևող խորին խորհուրդ, հուզական սահմանին բերող պատկերներ, պատճառ-օրինակներ, բառ-պատկերների ենթարկում ներքին հուզական տարերքին, բառաշխարհների տեսիլաշղթաների հոսքերի ետնախորքում ընկած բանական հսկում:

5. Հրաչյա Թամրազյանը սահմանում է «հոգևոր կենցաղավարություն» եզրույթը՝ որպես միատիկ արարողակարգի, սրան ներհյուսվող բնագրային-սերտողական և արտաքին-ծիսական դրսևորումների՝ ներքին ու արտաքին փորձառության ամբողջություն: Սա այն է, ինչ ընկած է տեսիլներից ու տարերային թվացող բառահեղեղների հոսքից անդին՝ որպես բանական հսկում: Այս բանական հսկումը տարբեր տարիների ուսումնասիրություններում հեղինակը շեշտում է երկու կողմով՝ որպես Անանիա Նարեկացու աղոթքի, ներքին մենախոսության հյուսման համար ընտրության արվեստի կիրառություն և որպես «ներքին» ու «արտաքին» միասնական աղոթքի ամբողջություն:

Ըստ Հրաչյա Թամրազյանի՝ Անանիա Նարեկացու բանարվեստի տեսությունը՝ որպես իրերը հուզականորեն վերապրելու, ապաշխարության, հուզական լարման խտացում առաջացնելու համար սրանք բանաստեղծական ազատությամբ միմյանց ազուցելու հմտություն (Անանիա Նարեկացի, «Յաղագս զղջման և արտասուաց»), Նարեկյան դպրոցի հոգևոր կենցաղավարության հիմքն է: Ընտրության արվեստի միջոցով հասարակաց աղոթքից տարանջատված այս ներանձնական, հանապազ աղոթք-բանաստեղծության տեսության մեջ ուսումնասիրողը, ինչպես ամենուր, շեշտում է ստեղծագործական ընթացքի ազատությունը և անընդհատականությունը: Ներքին աղոթքին վերաբերող արտահայտություններն են՝ ներքին մենախոսություն, անվերջ հոլովվող ներքին խոսք, հարասության գեղարվեստական արտահայտություն ու վերամարմնավորում, որի միջոցով արվեստի շնորհն արմատանում է ստեղծագործողի մեջ:

Այս տեսությունից է բխում, ըստ աշխատասիրողի, Մատեանի մտահղացքի երկու առանցք՝ ա. Նարեկացու իր գործերի ընկալումը, որպես մի ամբողջություն՝ բաղկացած բազում մասերից «հատկություններից, հանգամանքներից,

պատճառներից, որոնք փոխկապակցված են, տանում են ստեղծագործողին ընտրության, ներշնչանքի, զգացմունքային լարման ճանապարհով», երբ բանաստեղծի խնդիրն է հասցնել ներաշխարհն այդ այս լարման կիզակետին (էջ 107): Այս առնչությամբ ուսումնասիրողը բերում է Մատեանի հիշատակարանի հայտնի խոսքերը՝ «ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի...» և այլ օրինակներ: Բ. Տեսության մյուս արտացոլումն է Մատեանում տարբեր ժանրերի հերթագայումը, որտեղ խոսքը հաճախ դուրս է գալիս «աղոթքի ժանրային հսկողությունից»: Ժանրերի՝ ներքին մենախոսության և աղոթքի այս միահյուսումը, ուսումնասիրողը սահմանում է «համադրական աղոթք» եզրույթով: Բերում է օրինակներ, երբ բանաստեղծը խոսքն ուղղում է վանականներին, այնուհետև իրեն, հաճախ դիմում է քնարական մենախոսության՝ իրեն պատրաստելով բուն աղոթքին, «զորացնելով զղջական լիցքերը, որոնց կուտակումից հետո անցնում է աղոթքին» և այլն (էջ 109-112): Այս տեսության ծիրում է զղջական զգացումի խտացման համար սուրբգրային հարասությունների ընտրության հմտությունը, որ բազմաթիվ տարբերակներով առկա են, օրինակ, «Մատեանի» Կ-ԿԲ գլուխներում: Սրանք «վերածվել են զուգակշիռ տեքստի, երբ սաղմոսն ու հեղինակային խոսքն ընթանում են զուգադիր, կամ համամասնությունը խախտվում է հեղինակային խոսքի ծավալման հաշվին: Այսպիսով հեղինակի խոսքը վերածվում է սաղմոսի հարասության կամ գեղարվեստական մեկնաբանության» (էջ 114): Գրիգոր Նարեկացին, ըստ ուսումնասիրողի, մոնումենտալության է հասցնում Անանիայի այս գաղափարը «աղոթքի ընտրականության, հուզական լիցքերի կուտակման սկզբունքը», «զգացմունքային լարումը պահպանելու, պաթետիկ հոգևոր հոսքերը ներքին հսկողության ու չափին ենթարկելու մղումով է գոյանում երկի ներքին, հոգևոր կառույցը» (էջ 125): Եվ այս բոլոր հոսքերն ընդրկող բառաշխարհը կառավարվում է, չափակշռված է, լուսավորված «ներքին տեսողությամբ, հսկվում և ուղղորդվում է ներհմտությամբ և բանականությամբ» (էջ 126): Գ. Վերջապես, Անանիա Նարեկացու բանաստեղծական նմուշներն առհասարակ, ըստ ուսումնասիրողի, նախաձևեր են հանդիսացել Գրիգոր Նարեկացու «Մատեանի» համար:

Հոգևոր կենցաղավարության մյուս ոլորտն է աղոթքի՝ որպես արտաքին-ներքին բոլոր հնարավոր ծիսականացումների ամբողջության իրագործումը, որ կենտրոնացնում է բոլոր ստեղծագործական ուժերը: Նարեկացու բնագրերը դիտարկվում են նաև այս՝ նարեկյան դպրոցի հասարակաց աղոթքների կանոնակարգված վարժանքների, ուսուցում-աղոթքների շերտում:

Այսպես ստեղծագործությունը դրվագավում է ներքին աղոթքի ծիրում, վերջինս էլ՝ ներքին մարդու աստվածացման ծիրում: Եվ այս ամենն անմիջականորեն կապվում է զղջման և արտասովաց շնորհի, ընտրության արվեստի, ինքնա-

գննումի ու ինքնակառավարման, ներհայեցողության մշտատե լարումի հետ: Այս մշտահոլով ինքնարարման (կապում է նաև աստվածանմանության Պլատոն-Անհաղթ տեսության հետ), ներքին մաքրագործումներին ու կերպավորումներին զուգընթաց պետք է զարգանա խոհական-բանական աշխարհը, գիտական-ստեղծագործական մղումները, որով մարդ հասնում է աստվածանմանության:

6. Վերջապես, Գրիգոր Նարեկացու ողջ ստեղծագործությունն ու հայեցողական աշխարհը ներդրվազվում է աստվածամերձեցման շորս փուլերում, ըստ Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող բնագրերի, որոնք են՝ պատկերի տեսություն, մերձակա աստվածաբանություն, էքստատիկ-տարփողական աստվածաբանություն և խորհրդական աստվածաբանություն: Առավել ուշ շրջանի ուսումնասիրություններում այս մտահոգևոր վերելքի բոլոր հանգույցներին Հրաչյա Թամրազյանը կցում է օրհներգությունը (ներկայացված են մեկ գլխում)՝ դիտարկելով Դիոնիսիոսի բոլոր գրքերը որպես փառատրություններ: Այս հանգույցներին են ներհյուսվում և զարմանքի, պանթեիզմի հասկացությունները (քրիստոնեական վերահիմաստավորմամբ «պանթեիզմը» հեղինակը սահմանում է որպես աստվածության համասփռում և նրան զգայական նշանների, աշխարհների զեղումների միջոցով արտահայտելու բանաստեղծական զգացում): Հ. Թամրազյանը Նարեկացու ստեղծագործ տարերքի ահռելի օվկիանոսից դուրս է բերում այս շորս փուլերին համապատասխան բառազանգվածներն ու տեսիլաշարերը:

Բուն արվեստի, հոգևոր ստեղծաբանության ընկալման ոլորտում դիոնիսիոսյան բնագրերի ազդեցությունը սահմանում է հիմնականում երեք ոլորտում ա. Դիոնիսիոսի ազատ արարման պաշտամունքը, տիեզերական հիերարխիայի՝ ամենայն ինչի աստվածայինով թափանցված լինելու տեսությունը Նարեկացու տաղերի բանաստեղծական զգացումի հիմքն է: Բ. Այս տեքստերը «միստիկ բանաստեղծին ազատ մտածողության և ստեղծագործության անսահմանափակ հնարավորություններ էին ընձեռում», որի բացարձակ արտահայտությունն է Նարեկացու ստեղծագործությունը՝ մասնավորապես տաղերը: Ուսումնասիրողը բերում է բերկրանք, տարփանք, հիացում, սեր հասկացությունների, որ տիեզերական սկիզբներ են արեոպագիտյան տեսության մեջ, տաղերի մեջ ներթափանցման օրինակներ: Մարդը՝ աշխարհների հանգույցը, մասնակցում է նրանց գնդաձև, բոլորակաձև շարժումներին, էությունների գաղափարների աշխարհին հաղորդակից հոգևոր շրջագայությամբ կամ պատկերների հեղումների մեջ (Նարեկացու տաղերում շրջանաձև պատկերները, նորպլատոնական գոյաբանական տեսությունը):

Այդ ազատությունն է բերում և աստվածակերպության և անվերջ կատարելագործման, աստվածայինով ներթափանցված բնության զգացումը. ներքին մարդը պայծառացնում է, հոգևոր էքստազի պահին շնչավորում է բնության պատկերները՝ բարձրացնելով պատկերաշարը մի նոր հոգևոր մակարդակի (էջ 210): Լուսեղեն բխումների, տեսիլների, պատկերահոսքերի կենտրոնում, ներքին պայծառացման ու էքստազի մեջ բանաստեղծը վերապրում է միեղենության այդ խորհուրդը և արտահայտում աստվածայինը զգայական պատկերների մեջ: Փոխակերպություններն այստեղ «ոչ միայն սոսկական գեղարվեստական հնարանք են, այլև գոյաբանական անցումներ՝ իմանալից դեպի զգայական աշխարհ և հակառակը» (էջ 211): Տաղերում այս զգացումը հատկապես շեշտված է խորհրդավոր վերելքի և վայրէջքի արտահայտություններով, որ ևս ամբողջությամբ հոգևոր զգայարանի նման ներիմացության արտահայտություններ են: Հոգևոր գմայլանքն ու բերկրանքը, աստվածային ներշնչանքի, Սուրբ Հոգու շնորհի անվերջանալի ու անընդհատական ներկայության արգասիքն են, աղոթքի միջոցով անմիջական այդ ազդեցության մեծացման, ներշնչանքի ծավալումը: «Աստվածազգացողությունը ոչ միայն անմիջական, մերձավոր հպում ու կապ է ենթադրում, այլև մի ներգործություն, որ հեղինակի մտապատկերում ուրվագծվում է իբրև հեռազգայություն» (էջ 164): Տարփանք հասկացության վերաբերյալ Հ. Թամրազյանի արտահայտություններն են՝ «լուսերևություն», լուսերգություն, տարփերգություն, հոգևոր, վերառաքող հոգեկիր կենդանի նշանակ, աստվածային տարփանքի շավիղներով շրջագայություն, տարփողական աստվածաբանությունը՝ որպես աստվածայինի մերձեցման ու միախառնման միջոց, տիեզերական հոգևոր շարժման կարևորագույն ազդակ (սրա բանաստեղծական զգացողության մի շարք արտահայտություններով տաղերում):

Վերջապես, Դիոնիսիոսի Ճառելի ու անճառելի աստվածաբանությանը նվիրված գլուխները, ըստ հեղինակի, օրհնաբանությունների ու փառատրությունների նախօրինակներ են Նարեկացու «Մատեանի» համար, որից բերում է համապատասխան դրվագներ՝ աստվածային գերանունությունների շարքերով:

7. Ըստ մեզ՝ ուսումնասիրության ամենաարժեքավոր հատվածն է Նարեկյան բնագրերի վերձանումը պլուրազորա-պլատոնական թվի գոյաբանական տեսության ետնախորքով սրա խորին արձագանքներով Գրիգոր Նարեկացու այն տաղերում, որ պատկերում են Լոգոսի էջքը, նյութեղացումը՝ դարձյալ բնության պատկերների և թվերի միջոցով (Քառասնօրյա գալստյան տաղ, Հարություն տաղ, Դազարոսի Հարության տաղը՝ տիպ, կերպ, շուք, կետ, մետ՝ շափ, բառերով աստիճանական նյութեղացման բանաստեղծի ակնարկներով, դարձյալ վերընթաց վայրընթաց շարժմամբ, նյութեղեն ու աննյութեղեն աշ-

խարհների շրջապտույտով, տիեզերական բոլորակաձև, գնդաձև շարժման պատկերներով՝ արտահայտված նաև տաղի ու թմբերում):

Այսպես Դիոնիսիոսի բնագրերի տեղանքների վրա ուսումնասիրողը բոլորովին նոր ետնախորքեր ու տարածություններ, ծավալային ընդգրկումներ է բացում Նարեկացու ստեղծագործության մեջ: Թերևս որպես բանաստեղծ, նա ասես քննում է Նարեկացու ինքնին հոգևոր-բանաստեղծական զգացումի խորքերը և սրանց գոյաբանական կերպափոխումները: Սա է, թերևս, Թամրազյանի՝ Նարեկացու ուսումնասիրությունների մեծագույն շնորհը՝ վերակերտել հոգևոր-բանաստեղծական ապրումների այն շարանը, որ կարող է ընդգրկել գոյաբանական նման խորքեր: Նա ամենուր ձգտում է թափանցել բնագրի ստեղծմանը նախորդող կամ ուղեկցող այն ներզգացողությունների ոլորտը, որոնցից հեղվել է բնագիրը ամենաներքին աստվածայինով թափանցված մի տարածության մեջ: Եվ ամենուր ասես բանաստեղծությունից առաջ դիմում է հոգուն, երբ այն բանաստեղծում է:

Եվ իր վերջին ուսումնասիրության մեջ հեղինակը վերջին սահմանին է հասցնում այս ներզգացողությունը՝ բնագրի հարաշարժության ու հարակայության, ժամանակների հետ մշտափոփոխության, սրանից հյուսվող կամ սա հյուսող ներքին մարդու բացարձակության. «ներքին մարդը ներքաշված է արարչագործ ծիրի շրջապտույտների մեջ... Ներքին մարդն է՝ իբրև տիեզերական փորձանոթ, մաքրագործում համաշխարհը... Ներքին մարդու հոգեֆիզիկական զգացողության շնորհիվ մարդը նոր, հոգևոր դեմք էր ստանում... Դա զարգացնում էր նրա ինքնակերպավորման ձիրքը... Նա բնության երևույթների, Արարչի և նրա արարածների հետ խոսում էր «բարառնաբար», «գիմառնաբար», այսինքն կերպավորելով և դիմելով նրանց, բայց այս «բարդ ու պարզ» խաղում հաճախ ինքն էր հայտնվում իր դիմաց՝ ներքին մարդն ու արտաքին մարդը երկխոսում էին իրար հետ»: Այս ամենի հատման կետը բնագիրն է. «Բանաստեղծի անձը տարրալուծվում է աստվածային խոսքի նախախնամության ծիրում, իր ստեղծագործության և գալիք սերունդների մեջ՝ նրանցից ոգեկոչվելու հույսով... Նա ապագային է հղում իր «Մատյանը»՝ իբրև հոգևոր անոթ, որն ամփոփում է նրա կենդանի բարբառը, ձայնը, պատկերը, հարակա շունչը: Բոլոր գալիք սերունդների, «Մատենանով» աղոթողների հետ պետք է խոսեն նաև բանաստեղծի շուրթերը, համբառնան իր ձեռքերը, միախառնվի իր ձայնը...»:

Հավանաբար, գլխավոր ավանդներից մեկը, որ թողել է գիտնականը, կենդանի մարդեղացող և երբեք չհեռացող ու դադար չառնող այս խոսքի, բանաստեղծական խոսքի գոյաբանական իրողության ձևակերպումն է, արարման ձևակերպումը, որ երբեք այլևս չի կասեցվի, և հոգու սերտաճում-

ների՝ Նարեկյան դպրոցի այնքան պայծառ տեսլականը, որ երբեմն այնքան հար և նման է թվում Մատենադարանի իր տեսլականին:

Հաճախ այս բնագրերի մեջ որսում ես և այդ նույնականացումը՝ հեղինակի մեծ երազանքի և «ներհայեցողության» ստեղծելու մի նոր ոգեղեն մարմին, տարածական ու խորքային իր համաբնագրով, մի հառնող Մատենադարան՝ ծավալվող, տարածվող, արձագանքող, մարդկային հոգիների ու ձեռագրերի մի մեծ Մատյան՝ ձեռագրերի, որոնց վրա բարձրանում է այդ տեքստերի վրա կքած, այդ տեքստերին նայող պայծառ հայացքների կամ կուրուլթյունների, այս բոլոր հոգիների շտեմարանը, մի «հոգևոր մարմնի», որի շառավիղները գծում են մարդիկ:

Եվ ուրեմն թող այս աշխարհները, իրենց մեջ ամփոփված պայծառ արահետներով ու ճարտարապետական կառույցներով հարթեն իրենց ճանապարհը, որ գիտական հայեցողության իր կերպով նկարակերտել է Հրաչյա Թամրազյանը:

Եվ թող մեզ երբեք չլքեն այն ձայները «ի խորոց սրտի», որ դարձել են այլևս հավերժ հսկողներն այդ կառույցների, ձայները, որ կոչված են ոգեղենացնելու և ոգեկոչելու, բանաստեղծելու, ձայները, որ այնքան ձգտեցին «համաշնչության», ձայները, որ այլևս դարձել են մեր խիղճը: Եվ թող մեզ, որ ի վերջո, մի օր նշան ենք դառնում մարդեղացած ձեռագրերի մեջ, երբեք չլքի ներշնչանքը, որ համակել է մեզ, երբ այդ ձայները մեզ հետ էին:

**«ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
(19 սեպտեմբերի, 2017) նյութերից**

ԱՆԻ ԵՆՈՔՅԱՆ

**ՌՈՒՍԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ՆԿԱՐԱԶԱՐԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Քանալի բառեր՝ հայ հնատիպեր, ռուսահայ տպագրություն, Գրիգոր Խալիզարեանց, Հովսեփ Արղունթեան, գրքի նկարագրողում, պատկերագրություն:

Ռուսաստանում հայկական առաջին տպարանը հիմնել է Գրիգոր Խալիզարեանցը (Խալիզարեանց) 1780 թ., և այն մինչև դարավերջ ճամփորդել է ռուսահայությունների երեք խոշոր կենտրոններով՝ Սանկտ-Պետերբուրգ (1780-1789 թթ.), Նոր Նախիջևան (1789-1795 թթ.) և Աստրախան (1795 թ-ից): Քսանամյա գործունեության ընթացքում տպարանի հրատարակած շուրջ քառասունչորս անուն գրքերն իրենց թեմատիկ ընտրությամբ և նկարագրողումներով ամբողջացնում են մեր պատկերացումները ժամանակի ռուսահայ մտավորականության և Հայ առաքելական եկեղեցու համագործակցության, կրթական-լուսավորչական գործունեության, արտաքին ու ներքին կապերի մասին:

Հիմնականում տնտեսական-առևտրային կապեր ունեցող հայ գաղթօջախները միմյանց հետ առնչվում էին նաև մշակութային և գաղափարական ոլորտներում, և հաճախ գեղարվեստական ձևերն ու մտահղացումները տարածվում էին այդ ընդարձակ ցանցի ներսում: Խոշոր նավահանգստային քաղաքներ Ամստերդամը, Մարսելը, Վենետիկը, Կ. Պոլիսը, Նոր Զուղան, Մադրասը, Կալկաթան, Պետերբուրգը, Աստրախանը XVI-XVIII դարերում դառնում են հայ տպագիր գրքի ստեղծման ու տարածման հիմնական կենտրոնները¹:

XVII դարում հայկական միջավայրում, հիմնականում Հայաստանից դուրս գտնվող գաղթօջախներում, կատարվում է ուժերի վերադասավորություն, որ նախանշում է նոր ժամանակների սկիզբը հայոց համար²: Քաղաքական և մշակութային նորաստեղծ հոսանքները, գիտատեխնիկական նորույթնե-

¹ **Sebouh D. Aslanian**, “Port Cities and Printers, Reflections on Early Modern Global Armenian Print Culture”, *Book History*, Volume 17, 2014, pp. 51-93.

² **Dickran Kouymjian**, “From Disintegration to Reintegration: Armenians at the Start of the Modern Era, XVIth-XVIIth Centuries,” *Revue du Monde Arménien*, vol. I (1994), pp. 9-18.

րը, որոնք մեծամասամբ արևմտյան ծագում ունենին, հայկական գաղութներ էին թափանցում և շրջանառության մեջ դրվում գլխավորապես անհատների միջոցով ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ: Միաժամանակ հոգևոր դասի գործունեության ապահովման հարցում էապես մեծանում է հայ առևտրավաշխառուական կապիտալի դերը (ինչպես, օրինակ՝ նոր Զուղայում և Կոստանդնուպոլսում), թերևս այն պարզ պատճառով, որ անգամ եկեղեցական պաշտոնների հաստատման համար հոգևորականները ստիպված էին պատկառելի գումար վճարել իշխանություններին, ինչի հնարավորությունը երբեմն շունենալով դիմում էին հայ մեծահարուստ երևելիների դրամական օժանդակությանը³: Գերերի այսպիսի փոփոխությունը, հայ գաղթօջախների մտավոր և ֆինանսական ներուժի հզորացումն ու ազդեցությունն ակնհայտ նոր երանգներ են հաղորդում հայկական մշակութային դիմագծին. նոր շունչ են ստանում հայ գրչարվեստն ու մանրանկարչությունը, հիմնվում և զարգանում է տպագրությունը, լայնածավալ չափեր է ընդունում եկեղեցաշինությունը⁴: Հայ խոջայամիրայական խավի դերը նշանակալի է նաև մշակութային փոխհարաբերություններում: Գրեթե «ամբողջ աշխարհը ոտքի տակ տվող» հայ վաճառականների կարևոր դերակատարումն այս ոլորտում կարելի է համարել Արևմտյան քաղաքակրթության սերմերի տարածումն արևելյան ազգերի մեջ: Այս մասին Լեոն գրում է. «Ինքը Զուղան իր քաղաքական դրուության փոփոխություններով դառնում էր այն քամին, որ ուրիշ տեղերից սերմեր էր բերում և արգասավորում խոջայական մտքի ծերպերում», այսպիսով ձևավորելով հասարակության այնպիսի շերտեր, «որոնք ներկայացնում էին նախատիպն այն հասարակական հոսանքի, որին տրվում է ինտիլիգենցիա անունը⁵»:

Հայ վաճառականները հովանավորում էին ձեռագիր մատյանների, իսկ տպագրության առաջ գալուց հետո՝ նաև տպագիր գրքերի հրատարակությունները՝ երբեմն պատվիրատուից վերածվելով գրքի տպագրիչի⁶: Այս գործի նվիրյալներից էր նաև մեծահարուստ վաճառական, մտավորական-բանասեր ջուղայեցի Գրիգոր Խօջամալեան Խալդարյանցը⁷: Նա Լոնդոնում Զոն Ռիվինգ-

³ Ա. Խառաթյան, Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը, XV-XVII դարեր, Երևան 2007, էջ 273-274:

⁴ Dickran Kouymjian, *op. cit.*, pp. 9-18.

⁵ Լեո, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Յերևան, 1934, էջ 94-95:

⁶ Ա. Աղախանյան, «Վաճառականության դերը հայ տպագրության գործում», ԲեՀ, № 50, 2012, էջ 3-14:

⁷ Գրիգոր Խալդարեանց (հավանաբար Գրիգոր Խալդարեանցի պապը՝ Խօջա Գրիգորը) անունը հայ տպագրության էջերում առաջին անգամ հայտնվում է 1713 թ. Ամստերդամում Ղուկաս Վանանդեցի Նուրիջանյանի տպագրած Հայելի Աստուածաշունչ Հին Կտակարանին գրքի հիշատակարանում: Այստեղ «Կարձեալ՝ յիշեցիք ի Տէր զազնուամեծար Աղէն զԽալ-

թընի տպարանում, 1780 թ. հաջողում է տպագրել իր առաջին երկու գրքույկները՝ «ԱՂՕԹՔ ՏԵԱՌՆ ՆԵՐՄԵՍ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ» հայերեն, լատիներեն, գաղղիերեն(ֆրանսերեն), և անգլերեն, և «ԴԱԽԱՆՈՒԹԻԻՆ ՀԱԽԱՏՈՅ ԵԿԵՂԵՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ» հայերեն և լատիներեն: Վերջինիս տիտղոսաթերթից հայտնի է դառնում, որ այս գիրքը գերմանացի Յոհան Յոախիմ Շրյոդերի (Joachim J. Schroeder) 1711 թ. Ամստերդամում տպագրված «ԱՐԱՄԵԱՆ ԼԵՂՈՒԻՆ ԳԱՆՁ» բանասիրական աշխատության վերատպությունն է: Տիտղոսաթերթը հաղորդում է մեկ այլ կարևոր տեղեկություն ևս, ըստ որի՝ գիրքը «վերստին տպեցեալ ի խնդրոյ Գերապայծառ Տեառն Յովսեփայ Աստուածաբան վարդապետի, և Առաջնորդի Աշտարխանու և Նոր Նախջեանու⁸»: Հետևաբար կարող ենք եզրակացնել, որ Հովսեփ Արքեպիսկոպոս Արղուժյանի և Գրիգոր Խալդարյանցի համագործակցությունն սկսվել է դեռևս վերջինիս՝ Լոնդոնում գտնվելու ժամանակ, և հավանաբար Արղուժյանի հորդորով կամ հրավերով է Գրիգորն իր տպարանը 1780 թ. տեղափոխել Ռուսական կայսրության մայրաքաղաք⁹:

XVIII դարասկզբին նոր կառուցվող մայրաքաղաք Սանկտ-Պետերբուրգում հայերը բնակություն են հաստատել դեռևս քաղաքի հիմնադրման առաջին տասնամյակներում: Այդ մասին են վկայում Իսրայել Օրու գինակից Մինաս Վարդապետի 1714 և 1722 թվակիր դիմումները՝ ուղղված Պետրոս I-ին և կայսրության այլ բարձրագույն ատյաններին՝ Պետերբուրգում հայկական եկեղեցի կառուցելու և Օսմանյան կայսրությունից, Պարսկաստանից ու Լեհաստանից հայ վաճառականներին կայսերանիստ մայրաքաղաք հրավիրելու խնդրանքով¹⁰: Հետագա տասնամյակներում ոռոսաց կայսեր հրավերով արդյունաբերական և մշակութային ճանաչված կենտրոն դարձած Պետերբուրգ են տեղափոխվում մեծահարուստ հայ ընտանիքներ՝ Նոր Զուղայից, Զմյուռնիայից, Ամստերդամից¹¹: Չնայած հայկական փոքրամիավ բնակչությանը, քաղաքի XVIII դարի

դարէնց Խօջայ Գրիգորն» նախադասության մեջ Գրիգոր Խալդարյանը հիշատակվում է որպես տպագրության մեկենասներից մեկը, տե՛ս Հայ Գիրքը 1512-1800 թվականներին, Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Երևան 1988, էջ 203:

⁸ Հայ Գիրքը 1512-1800 թվականներին, էջ 521:

⁹ Կարելի է ենթադրել, որ հայերը հատուկ կառավարական թույլտվություն են ստացել՝ 1780 թ. իրենց տպագրատունն ունենալու, քանի որ Ռուսաստանում անկախ տպարաններ հիմնելու հրամանը՝ «Указ о вольных типографиях», հրապարակվել է միայն 1783 թվականին: **Е.И. Кацпржак**, *История письменности и книги*, изд. «Искусство», 1955, с. 205:

¹⁰ **Վ. Բարխուդարյան**, *Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դարի կես-XX դարի սկիզբ)*, Երևան, 2010, էջ 46-47:

¹¹ Նույն տեղում, էջ 47-49: Առավել մանրամասն տե՛ս **Շ. Լ. Խաչիկյան**, *Նոր Զուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում*, Երևան 1988:

հայ գաղութը կենտրոնական դիրք էր գրավում ռուսահայ այլ համայնքների համեմատ՝ ավելի մոտ կանգնած լինելով ռուս կառավարական շրջանակներին: Այստեղ էին ընթանում նաև Հայաստանի ազատագրման և նրա ապագա կացության վերաբերյալ բանակցությունները՝ ռուսական իշխանության և հայ գործիչների միջև¹²:

Գրիգոր Խալդարեանցը 1783 թ. Պետերբուրգում հրատարակած «ՓԱՄԱ-ԳԻՐՔ»-ի հիշատակարանում ներկայացնում է իր տպագրական գործունեությունը. թե ինչպես է Հնդկաստանից տեղափոխվել Լոնդոն՝ հայ տպագրության իր երազանքը իրագործելու: Այստեղ մնալով տասը տարի՝ համագործակցել է անգլիացի մի փորագրիչի (անունը հայտնի չէ) հետ և մեծ դժվարություններով ու գումարներով ձեռք է բերել հայերեն տառերի «մայրեր» և «հայեր»¹³: Սակայն հետագայում պարզվում է, որ պետերբուրգյան տպարանի համար անհրաժեշտ են նոր տառատեսակներ, և հայ տպագրիչները նույն անգլիացի վարպետին հրավիրում են Ռուսաց կայսերանիստ մայրաքաղաք՝ ավելի խոշոր տառատեսակներ փորագրելու, ինչպես նաև՝ «քանդակմանց պատկերաց չքնադագեղից» համար¹⁴: Այսպիսով, ռուսահայ առաջին տպարանի տառատեսակները և փորագիր պատկերները ստեղծվել են անգլիացի վարպետի ձեռքով:

Թերևս, ռուսական մշակութային միջավայրի հետ առնչության ուշագրավ օրինակ է այն փաստը, որ Ներսես Շնորհալու «ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱՍՄԱՆ» գրքում հեղինակի դիմապատկերի ներքևում իր ստորագրությունն է թողել ժամանակի հայտնի ռուս փորագրանկարիչ Ալեքսեյ Կոլպաշնիկովը (*Алексей Яковлевич Колпашиков, 1744-1804*): Չի բացառվում, որ հետագա տարիներին տպարանի հրատարակիչները ձեռք բերեին նաև հայ փորագրիչների աշխատանքներ՝ հաշվի առնելով ոչ միայն Կ. Պոլսի հետ սերտ համագործակցությունը¹⁵, այլ նաև այն փաստը, որ նոր նախիջևանը ևս հայտնի էր իր արհեստավորներով և նկարիչներով¹⁶: Այսպես, օրինակ՝ 1797-1799 թթ. Աստրախանում տպար-

¹² Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան 1972, էջ 428-432:

¹³ Ամուս մետաղից (սովորաբար պողպատ) պատրաստված ձողիկի ծայրին ֆանդակվում էր տառը հայեկային արտացոլմամբ, որ կոչվում էր «հայր» կամ «տառահայր», ապա այն խփվում էր պղնձյա սալիկին, ստացվում էր տառածև փոսիկ, որ կոչվում էր մայր տառ: Տառի մայրը դրվում էր տառածեղակված գործիքի հատակին, և ստացվում էր կաղապար, որի մեջ լցվում էր հեղուկ կապարը: Այդպես պատրաստվում էին տպատառերը: **Ռ. Իշխանյան**, Հայ գրքի պատմություն, հ. 1, Երևան 1977, էջ 22:

¹⁴ Հայ Գիրքը 1512-1800..., էջ 547, 626:

¹⁵ Այդ ժամանակ Կ. Պոլսին արդեն բավական առաջատար դիրք ունեւ հայ տպագրական աշխարհում: 18-րդ դարում այստեղ գործում էր ավելի քան երկու տասնյակ հայկական տպարան, ձևավորվել էր հայ փորագրիչ վարպետների պոլսյան դպրոցը: տե՛ս **Ռ. Իշխանյան**, Հայ գիրքը 1512-1920, Երևան 1981, էջ 72-82:

¹⁶ **Վ. Բ. Բարխուդարյան**, Նոր-Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան 1967, էջ 195:

գրված «էֆիմէրտէ» գրքի առաջին էջերին տեղադրված «Աստղագուշակի» փորագրապատկերը գծագրական վարպետությամբ զիջում են նույն տպարանի նախորդ հրատարակությունների պատկերներին և, հավանաբար, փորագրվել են հայ վարպետի ձեռքով:

Տպարանի պետերբուրգյան շրջանի գործունեության վերաբերյալ ստույգ վավերագրեր են Գրիգոր Խալդարյանցին Արղուսթյանի գրած բազմաթիվ նամակները, որոնցում արքեպիսկոպոսը հիմնականում տեղեկացնում է իր ձեռք բերած գրքերի խմբագրման, սրբագրման, դրանք Պետերբուրգ ուղարկելու և տպագրելու մասին¹⁷: Հետևելով Հովսեփ Արղուսթյանի նամականիին՝ համոզվում ենք, որ ռուսահայ առաջնորդը փորձել է հետևողականորեն և անմիջականորեն ուղղորդել տպարանի աշխատանքները՝ գրքերի ընտրության և պատկերագրագրման առումով: Այսպես Արղուսթեանն Աստրախանից Գրիգոր Խալդարեանցին ուղարկելով Կ. Պոլսում տպագրված կարմիր կազմով մեծ Ավետարան, պահանջում է նույնությամբ տպագրել՝ նախանշելով անգամ արտաքին տեսքը. «մեծագույն դրուսթեամբ և գեղեցիկ ծաղկօք, յսկիզբն խորանս կարելի է Թադէոս և Բարդուղիմէոս լինիլ որպէս օրացոյցն կայ»: Մեկ այլ օրինակ է Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի Սբ Կաթողիկէն» պոեմը, որն Արղուսթյանը պատվիրում է տպել և առաջին էջում տեղադրել էջմիածնի (Մայր Աթոռի) պատկերը, իսկ երկու տետր ոտանավոր՝ «Խրատ վասն մանկանց» խորագրով, առաջարկում է դնել «ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ»-ի մեջ և «կից տպեալ զբոսարանն լուսահոգի Սիմեոն կաթողիկոսի արդեամբ տպեսցես պատշաճաւոր պատկերօք և ծաղկօք զի ոչ գտանի ազգի մերում¹⁸»: 1788 թ. վերոհիշյալ «ԹՈՒՂԹ ԸՆԴՆՆՐԱԿԱՆ» գիրքը դեռևս տպագրության ընթացքում էր, սակայն արդեն Գրիգոր Խալդարյանցի փոխարեն տպագրությանը հետևում էր Թադէոս վարդապետը, որին ուղղված նամակներում Արղուսթյանը հրահանգում է գրքում անպայման հիշատակել Թագավորի՝ Պավել I-ի (1754-1801) անունը, լուսանցքները լայնարձակ անել, կնիքը հարմար տեղ դնել, իսկ իր ուղարկած ոտանավորները գետեղել ներսես Շնորհալու, Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի պատկերների ներքո¹⁹:

Խալդարյանցի մահից հետո (1787 թ.) Հովսեփ Արղուսթյանին հաջողվում է 1790 թ. տպարանը տեղափոխել հարավ նոր նախիջևան²⁰, որ ավելի շահա-

¹⁷ Հովսեփ Արղուսթյանի նամակներից հայտնի է, որ, օրինակ, Կ. Պոլսից տիրացու Գևորգին հրավիրել և ուղարկել է Պետերբուրգ՝ սխալները վերացնելու և տպագրությանը հետևելու (ՄՄ 4496, ք. 271): 1787 թ. Կ. Պոլսից էր հրավիրվել նաև Թադէոս վարդապետ Մարումյանը, որն արքեպիսկոպոսի ֆառտուարն էր և հրատարակությունների սրբագրիչը:

¹⁸ ՄՄ 4496, ք. 286:

¹⁹ ՄՄ 2949, ք. 123:

²⁰ Հովսեփ Արղուսթյանի 1781-1785 թթ. նամակագրությունից հայտնի է, որ նա բազմիցս դիմել է Գրիգոր Խալդարյանցին՝ փորձելով համոզել վերջինիս տպարանը տեղափոխել Աստրախան կամ նոր նախիջևան: «Ի նախիջևան յոյժ պատշան է տպագրատունդ, քանզի

վեստ էր Կ. Պոլսի, էջմիածնի և հնդկահայ գաղութի հետ կապերի պահպանման և ամրապնդման համար: Ռուսահայ տպարանի հրատարակություններից բազմաթիվ օրինակներ ուղարկվում էին հայաշատ այդ վայրերը²¹: Հնդկահայ և ռուսահայ գործիչների՝ Հայաստանի ազգային-ազատագրական պայքարի շուրջ համագործակցության հետաքրքիր խորհրդանիշ է «Նշանք Թագաւորացն Հայոց» վերտառութեամբ հայկական գինանշանի դաջումը Մադրասում տպագրված հայերեն առաջին ամսագրում «ԱԶԴԱՐԱՐ»-ում, որի նախատիպը կա ռուսահայ տպարանի հրատարակություններում (նկ. 1, 2): Այս գինանշանը, որ ժամանակի հայկական շրջանակներում բավական տարածված տարատեսակներ ուներ, բազմիցս հայտնվում է ռուսահայ առաջին տպարանի հրատարակություններում՝ հաջորդող մի քանի էջում դրա յուրաքանչյուր դետալի պատմական նշանակությունը մանրամասնող բացատրությամբ:



Նկ. 1
 «Նշանք Թագաւորացն Հայոց» հայկական գինանշանը, Ներսես Շնորհալի «Թուղթ Ընդհանրական», Պետերբուրգ, 1788 թ, տպագրիչ՝ Գրիգոր Խալպարեանց

Ստամպոլու և Անատոլու մերձ է, ուր էս եմ, միանգամայն և դու պարտիս լինել», – գրում է Արղուպյանը, տե՛ս ՄՄ 4496, ք. 287:
²¹ Վ. Բ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 431:



Նկ. 2

«Նշանք թագաւորացն Հայոց» հայկական զինանշանը, Ազգարար ամսագիր, Մարտի, 1794 թ., թիվ 1, էջ 2, տպագրիչ՝ Հարություն Շմավոնյան

1795-ի վերջին կամ 1796-ի սկզբին Հովսեփ Արղութեանը տպարանը նոր նախիջևանից տեղափոխում է Աստրախան, որտեղ գտնվում էր ռուսահայ թեմի առաջնորդարանը: Այսպիսով, տպարանի նոր նախիջևանյան անվան՝ «Ի տպարանի Սուրբ Խաչ վանիցն»՝ Սբ. Խաչ վանքում լինելու փոխարեն, գրվում է «ընդ Յովանեաւ սբ. Աստվածածնայ եկեղեցոյն ի յԱթղարխան»²²: Յավոք, տպարանի աստրախանյան շրջանն այնքան էլ բարեհաջող և երկարատև չի լինում: Մեծ դժվարություններով հաջողվում է տպագրել միայն վեց անուն գիրք, որոնցից երկուսը՝ ռուսական կառավարական հրովարտակներ, նաև՝ «ԷՅԻՄԷՐՏԷ» (1797-1799 թթ.), Վարդան Բարձրբերդցու «Մեկնութիւն ՍԱՂՄՈՍԱՅ ԴԱԽԹԻ» (1797 թ), «ՏԱՐԵՅՈՅՅ ԵՒ ՕՐԱՅՈՅՅ» (1797): Դժբախտաբար,

²² Վ. Խաչատրյան, «Հայ տպագրությունն Աստրախանում: 18-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ», էջեր հայ գաղթավայրերի պատմության, Երևան 1996, էջ 205-224: Հետաքրքրական է, որ ինչպես միջնադարյան հայ գրչության կենտրոնների դեպքում, նոր ժամանակներում ևս, հայ գործիչները հնարավորության դեպքում ձգտում էին տպարանները հիմնել «ընդ հովանեաւ» հայ եկեղեցիների: Ինչպես օրինակ՝ Աբգար թոխատեցու կոստանդնուպոլսյան տպարանը հիմնվել է Սբ. Նիկողայոս եկեղեցուն կից, Հովհաննես Քարմատանեցը հայկական տպարան է հիմնել Լվովի Սբ. Աստվածածին եկեղեցու տարածքում, Խաչատուր Կեսարացին՝ Նոր Զուղայի Սբ. Ամենափրկիչ վանքում:

տպարանի գործունեությունն ընդհատվում է 1800 թվականին՝ պայմանավորված ռուսահայ առաջին տպարանի ղեկավարներ Հովսեփ Արղուիթեանի և Թադեոս վարդապետ Մարուքյանի մահվամբ²³:

Ռուսահայ առաջին տպարանի թողարկած գրքերի մեծ մասը հոգևոր-ծիսական բնույթի են: Սակայն նկատելի է, որ տպագրիչները ջանում էին աստիճանաբար գրքի ազդեցիկ ուժը ծառայեցնել ազգային-ազատագրական պայքարին, հայրենասիրական գաղափարների սերմանման առաքելությանը: Ինչպես նշեցինք, այս ժամանակահատվածում Ռուսաստանի հայ մտավորականներն ու անվանի հայերը՝ Հովհաննես Լազարյանը²⁴, Մովսես Սառաֆովը (Բունիաթյան), Հովհաննես Շերիստանովը, Միքայել Նազարովը և այլք, ռուսահայության հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղուիթեանի հետ համատեղ բանակցություններ էին վարում ռուսական կառավարության և Կովկասում կայսրության գործերի հրամանատար նշանակված Ա.Վ. Սուվորովի հետ՝ հայ պետականության վերականգնման շուրջ²⁵: Հրատարակվում են Վարդանանց պատերազմի մասին «ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ԵՂԻՇԵԻ ՊԱՏՄԱԳԻՐՔ» (1787 թ.) երկը, Վառլամ Վահանովի թարգմանությունը Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց Մեծաց» երկի վերջին մասը «ՈՂՔ»-ը (1786 թ.), Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի Սբ Կաթողիկեն» չափածո պոեմը «ՈՂՔ ԵՒ ՀԱՌԱՉԱՆՔ» վերնագրով:

Տպարանի երրորդ կարևոր գործառույթը կրթական-լուսավորչական բնույթի էր: Ռուսաստանում վաղուց հաստատված և նոր արտագաղթող հայերի՝ ռուսերենի ուսուցմանը, լեզվական խոչընդոտը հաղթահարելուն էին ուղղված հայ-ռուսերեն և ռուս-հայերեն բառարանների մեծաթիվ հրատարակությունները: Հիշատակելի են Պետերբուրգում տպագրված ռուսերենի ուսուցման առաջին հայերեն ձեռնարկները Կլեոպատրա Սառաֆյանի²⁶ «ԳԻՐՔ, ՈՐ ԿՈՉԻ ԲԱՆԱԼԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ» (1788 թ.) լեզվագիտական ձեռնարկը, Գրիգոր Խալաբեանցի «ԳԻՐՔ, ՈՐ ԿՈՉԻ ՇԱԽԻՂ ԼԵՉՈՒԱԳԻՏՈՒԹՅԱՆ» (1788 թ.) հայ-ռուսերեն բառարանը: Այս երկու հրատարակությունները լույս են տեսել պետերբուրգյան

²³ Նույն տեղում, էջ 210:

²⁴ Լազարյան ընտանիքը հայ տպագրության հովանավորն ու ջատագովն էր: Հայտնի է, որ Հովհաննես Լազարյանը Պետերբուրգից ութ վերստ հեռավորության վրա գտնվող իր դաստակերտում ուներ թղթի ֆաբրիկա, որն արտադրում էր պատկերազարդումների համար օգտագործվող բարձրորակ թուղթ, տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, Երևան, 2003, էջ 334:

²⁵ Նույն տեղում, էջ 334-335:

²⁶ Կլեոպատրա (Մարիամ) Սառաֆեանը (Սառահեան) աստրախանցի արքյունաբերող Մովսես Սառաֆովի (Բունիաթյանի) դուստրն էր, ինչպես նշված է իր հեղինակած գրքի տիտղոսաբերում: Նա առաջին հայ կինն է, ում գրվածքը տպագրության է արժանացել: Վերոնիշյալ գիրքը բովանդակում է այբբենարան, բառարան և բարոյագիտական որոշ կանոններ:


տպարանում արդեն հանգուցյալ Գրիգոր Խալդարյանցի կողակից Կատարինե Զաքարովնայի տնօրինության տարիներին²⁷:

Ռուսահայ առաջին տպարանի գրքերի նկարագրագումների մի մասը հետևում է նախկինում տպագրված հայերեն գրքերի պատկերագրական համակարգին՝ հիմնականում ազդված ոսկանյան կամ վենետիկյան տպագրություններից: Օրինակ՝ 1781 թ. Պետերբուրգի տպարանի հրատարակած առաջին գրքի՝ «ՏԵՏՐԱԿ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ»-ի տիտղոսաթերթի դարձերեսի փորագրապատկերը կոմպոզիցիայով կրկնօրինակում է 1675 թ. Մարսելում Ոսկան Երևանցու տպագրված «ԳԻՐՔ ԱՅԲՈՒԲԵՆԻՅ»-ի փորագրապատկերը (նկ. 3, 4): Անշուշտ, ընդօրինակություններ են կատարվել նաև հայատառ առաջին տպագիր (ոսկանյան) Աստվածաշնչի՝ նկարագրագումներով հարուստ հրատարակությունից (1666-1668 թթ., Ամստերդամ), որի «Երեք մանուկները հնոցում», «Լեռան քարոզը. Ինը երանիներ» փորագրապատկերների կրկնօրինակումները կան 1791 թ. Նոր նախընթանում տպագրված «ՍԱՂՄՈՍԱՐԱՆ»-ում (նկ. 5-8): Այսպես, գրեթե մեկ դար անց էլ ոսկանյան շքեղ հրատարակությունը ներշնչման աղբյուր և գեղարվեստական նախատիպ է ծառայել հայ տպագիր գրքարվեստը հեռավոր Ռուսաստանում զարգացնող հրատարակիչների համար: Սուրբ-թում բնակվող հնդկահայ բարերար՝ «բարեպաշտ պարոն» Ստեփաննոս Աղաբաբեանի «արդեամբք եւ ծախիւք» տպագրված այս Սաղմոսարանում տեղ գտած 10 լիաէջ փորագրապատկերներն ընդօրինակված են տարբեր հայկական հրատարակություններից: Հանդիպում են մինչև անգամ Վենետիկյան հայ գրքերից վերցված պատկերատիպեր՝ ինչպես, օրինակ, տավիղ նվագող Դավիթ Թագավորի կերպարի նույնատիպ վերարտադրությունը (նկ. 9, 10):

²⁷ С. Г. Арешян, *Армянская печать и царская цензура*, Ереван, 1957, с. 17.



Նկ. 3
Գիրք Այբուբենից, Մարտի, 1675 թ., տպագրիչ՝ Ոսկան Երևանցի



Նկ. 4
Այբենարանն, Պետերբուրգ, 1781 թ., տպագրիչ՝ Գրիգոր Խաղարեանց



Նկ. 5

«Երեւ մանուկները հնոցում», Աստվածաշունչ, Ամստերդամ, 1666-1668 թթ., տպագրիչ՝ Ոսկան Երևանցի



Նկ. 6

«Լեռան քարոզը. Ինը երանիներ», Աստվածաշունչ, Ամստերդամ, 1666-1668 թթ., տպագրիչ՝ Ոսկան Երևանցի



Նկ. 7

«Ներեմ մանուկները հնոցում», Սաղմոսարան, Նոր Նախիջևան, 1791 թ., տպագրիչ՝ Հովսեփ Արղուրեան



Նկ. 8

«Վեռան Բառողը. Ինը Երանիներ», Սաղմոսարան, Նոր Նախիջևան, 1791 թ., տպագրիչ՝ Հովսեփ Արղուրեան



Նկ. 9

«Դավիդ տաղերգու», Ժամագիրք, Վենետիկ, 1742 թ., տպագրիչ՝ Անտոնիո Բորթոլի



Նկ. 10ա

«Դավիդ տաղերգու», Սաղմոսարան, Նոր Նախիջևան, 1791 թ., տպագրիչ՝ Հովսեփ Արղուսեան

Աշխարհագրորեն սիւոված հայ տպարանների պատկերագրական և գաղափարական շղթայական ազդեցության օրինակ է Նոր Նախիջևանում 1794 թ. տպագրված «ԵՈՐՀՐԴԱՏԵՏԻ»-ի տիտղոսաթերթի պատկերագրությունը, որ իր նախատիպերն ունի համանուն գրքի Վենետիկի, ապա՝ Կ. Պոլսի և Էջմիածնի հրատարակություններում (նկ. 11-14): Առաջին անգամ տիտղոսաթերթի այս

տիպը հայտնվում է 1686 թ. Վենետիկում խոշա Գասպար Սահրադեան-Շահրիմանեանի տպագրած *Խորհրդատետրի առաջին էջին*: Անվանաթերթի բավական բարդ կոմպոզիցիայում «Տիրամայրը մանկան հետ» և շորս ավետարանիչների ու նրանց խորհրդանիշների պատկերների կողքին հայտնվում են նաև հայ կաթողիկոսական հանդերձներով անձինք, հավանաբար՝ Գրիգոր Լուսավորիչը և Հովհաննես Մանդակունի կաթողիկոսը, որոնք, ըստ հաստատված ավանդության՝ ընդհանրական Խորհրդատետր-Պատարագամատուցը մշակեցին և դարձրին Հայոց եկեղեցու համար կիրառելի²⁸: Տիտղոսաթերթի այս կոմպոզիցիան, պահպանելով ընդհանուր նկարագիրը, փոփոխություններ է կրում և ավելի հարստանում Կ. Պոլսի և Էջմիածնի կրկնօրինակներում: Պարզ համեմատությունից պակաս է դառնում պատկերի կոմպոզիցիոն զարգացումը՝ ըստ տպարանների, ինչպես նաև այն, որ Նոր Նախիջևանի օրինակն ազդվել է Էջմիածնի 1788 թ. տպագրությունից, որտեղ ներմուծված են Էջմիածնի ֆոնին Գրիգոր Լուսավորչի տեսիլքի և ծնկաչոք Տրդատ Գ-ի պատկերները: Խորհրդատետր գրքի այս տիտղոսաթերթերի օրինակով տեսնում ենք, որ որոշակի պատկերագրական ավանդույթ է ստեղծվում նաև հայ տպագիր գրքի պատկերագրողման համակարգում, և ռուսահայ հրատարակություններն անմասն չէին այդ միտումներից:



Նկ. 11
«Տիտղոսաթերթ», *Խորհրդատետր, Վենետիկ, 1686թ.*, տպագրիչ՝ խոշա Գասպար Սահրադեան-Շահրիմանյան



Նկ. 12
«Տիտղոսաթերթ», *Խորհրդատետր, Կոստանդնուպոլիս, 1706 թ.*, տպագրիչ՝ Գրիգոր Մարզվանցի

²⁸ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 445:



Նկ. 13

«Տիաղոսաբերք», Խորհրդատեւոր, էջմիածին, 1788 թ., տպարան՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի



Նկ. 14

«Տիաղոսաբերք», Խորհրդատեւոր, Նոր Նախիջևան, 1794 թ., տպագրիչ՝ Հովսեփ Արղուբեան

էջմիածնի տաճարի ֆոնին Գրիգոր Լուսավորչի տեսիլքի, մկրտվողի խոնարհությամբ ծնկաչոք աղոթող Տրդատ Գ թագավորի և արքայական ընտանիքի պատկերագրությունը ժամանակի հայկական արվեստում ամենատարածված և սիրելի մոտիվն էր²⁹: Այս տեսարանի ամբողջ էջով տպագրված փորագրատվերի հետաքրքիր մի օրինակ է հանդիպում 1790 թ. Նոր Նախիջևանում տպագրված «ՈՂԲ ԵՒ ՀԱՌԱՉԱՆՔ» (Ստ. Օրբելյանի «Ողբ ի Սբ. Կաթողիկեն» պոեմը) գրքում (նկ. 15): Երկրային և երկնային ոլորտները միավորող էջմիածնի տաճարը պատկերված է ճարտարապետական մանրամասներով, որի շնորհիվ շահեկանորեն իշխող դիրք ունի պատկերի կոմպոզիցիայում: Վերևում անկյունագծային ուղղությամբ Սբ. Երրորդությունն է պատկերված՝ ներկայացնելով Հայր Աստծո, աղավնակերպ Սուրբ Հոգու և հրեշտակների բազմությամբ ուղեկցվող, մուրճը ձեռքին Միածնի էջբը:

²⁹ Ն. Ղափյան, Ա. Ենոյան, «Հայ պատմավարճաբանական հնատիպերի նկարագրումն համակարգը 17-18-րդ դդ.», Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք, Երևան 2016, էջ 109-132:



Տարձոր լուսակերտ՝ յարկ սարսի Երեւանի
 յատկապէս պարտանք՝ արամեան աղ զին
 ժողովեալ առ քեզ՝ ըզմանկուերս քո
 որք՝ էքն մեկնեալ՝ կանայժմ արտա քոյս

Նկ. 15

«Գրիգոր Լուսավորչի տեսիլքը», Ողբք եւ Հառաչանք, Նոր Նախիջևան, 1790 թ., տպագրիչ՝
 Հովսեփ Արղուսեան

Գրիգորի տեսիլքի հետևյալ պատկերի նախատիպերը հանդիպում են էջմիածնի տպարանի երեք հրատարակություններում՝ փորագրված տեղացի վարպետների ձեռքով, որոնց առաջին օրինակը 1774-75 թթ. «ՏՕՆԱՅՈՅՅ»-ում է (էջ 225): Հայոց պատմության իրադարձություններին ու կերպարներին առնչվող թեման շարունակելով՝ նշենք առանձին հանդիպող յուրահատուկ մի փորագրապատկեր՝ տպագրված 1793 թ. Նոր Նախիջևանում: Այս մեկ-էջանոց տպագրությունը Լևոն Գ-ի պատանեկության պատկերի հայտնի մանրանկարի (ՄՄ 8321, Ավետարան, ԺԳ դ., նկարիչ՝ Թորոս Ռոսլին) տպագիր կրկնօրինակն է՝ ներդրված ձեռագիր Մաշտոցի մեջ (ՄՄ 3585, թ. 11բ, Ժէ դ., Վասպուրական)³⁰: Իսկ տպագիր դիմապատկերի ներքևում տեղ է գտել Հովսեփ Արղուսեանի մակագրությունը, որտեղ նշվում է, որ պատկերը նկարվել է Նոր Նախիջևանում պահվող Ավետարանից³¹: Այս օրինակը հայկական մանրանկարի կոմպոզիցիան կրկնօրինակող սակավաթիվ փորագրապատկերներից է:

Բացի պատկերագրական ընդօրինակություններից՝ ուշագրավ են նաև ուսասանյ առաջին տպարանի հրատարակությունների այն պատկերները, որոնք յուրահատուկ են հայ գրքի ձևավորման արվեստում: Այդպիսին են Ներսես Շնորհալու «ԹՈՒՂԹ ԸՆԳՆԱՆՐԱԿԱՆ»-ի 1788 թ. (կազմակից է Ներսէս Լամբրոնացու «Դրուատ պատմագրաբար» գրքին) հրատարակությունում Մեսրոպ

³⁰ Ա. Գևորգյան, «Լևոն Գ թագավորի նորահայտ տպագիր դիմապատկերը», էջմիածին, 1995, թիվ Ա, էջ 72-75:

³¹ Նույն տեղում:

Մաշտոցի և Ներսես Շնորհալու՝ ամբողջ հասակով կանգնած, պաշտոնական դիմանկարչության ժանրին հետևող դիմապատկերները (նկ. 16, 17): Սա նոր զարգացող ճյուղ էր XVIII դարի հայ գեղանկարչության մեջ³²:



Նկ. 16

«Մեսրոպ Մաշտոց», Ընդհանրական, Պետերբուրգ, 1788 թ., տպագրիչ՝ Գրիգոր Խալդաբեան



Նկ. 17

«Ներսես Շնորհալի», Ընդհանրական, Պետերբուրգ, 1788 թ., տպագրիչ՝ Գրիգոր Խալդաբեան

Մի շարք փորագրապատկերներ կրում են եվրոպական արվեստից ազդված և ժամանակի ռուսական գեղարվեստական միջավայրում հունցված կլասիցիստական ոճի կնիքը: Ժամակաշրջանին բնորոշ այս ոճի աչքի զարնող փորագրապատկեր է «ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ԵՂԻՇԵԻ ՊԱՏՄԱԳԻՐՔ»-ում տեղ գտած Վարդան Մամիկոնյանի հերոսական կերպարը՝ ներկայացված հռոմեական զորահրամանատարի հանդերձներով (նկ. 18): Ուշագրավ է նաև Ֆրանսուա Ֆենելոնի XVII դարի վերջին գրված «ԹԵԼԵՄԱՔԻ ԱՐԿԱՄՆԵՐԸ» ֆրանսիական վեպի հայերեն թարգմանությամբ երկհատորյա տպագրությունը՝ նոր Նախիջևանի տպարանում 1793, ապա 1794-95 թթ: Գիրքը իտալերեն թարգմանությունից հայերեն էր փոխադրել ժամանակի բանիմաց, բազմաթիվ լեզուների տիրապետող մտավորական Մարգար Խոջենց Երևանցին: Այս էպիկական, կլասիցիստական՝ քաղաքական այլաբանություններով հարուստ վեպը XVIII դարի ամենատարածված գրական ստեղծագործություններից էր: Ըստ պոեմի՝ Թելեմաքը հորը՝ Ուլիսեսին³³ փնտրելու ճանապարհին ճանաչում է տարբեր կառավարման ձևերով ղեկավարվող հասարակարգեր և ի վերջո նախընտրելի տարբերակը համարում լուսավորչալ միապետական իշխանությունը: Այստեղ Ֆենելոնը քննադատաբար հակադրվելով ֆրանսիական միապետությանը՝ ուտոպիստական թագավորության գաղափարն է ներկայացնում՝ բարեփոխված, լուսավորչալ, համեստ ու ժուժկալ միապետի կերպարով³⁴: Հավանաբար, այսպիսի միապետության մասին էին երազում նաև Լազարյանները, Հովսեփ

³² Ա. Ենոֆյան, «Հայ տպագիր գրքի փորագրապատկերների ազդեցությունը Հովնաթան և Մկրտում Հովնաթանյանների արվեստում», *Էջմիածին*, 2017, քիվ ԺԱ, էջ 67-77:

³³ Ուլիսեսի լատինականացված Ուլիսես անունն է, իսկ գրքում «Յուլիս»:

³⁴ Л. Галицкий, “Фенелон”, *Литературная энциклопедия*, Том 11, 1939.

Արդությանը և մյուս ուսուցիչ գործիչները ապագա անկախ Հայաստանի համար: Գրական գործին միանգամայն համահունչ է գրքում տեղ գտած միակ փորագրապատկերը, որ նույնպես կլասիցիստական ոճի է (նկ. 19): Տեսարանը ներկայացնում է իդեալականացված բնության հետնախորք ունեցող բազմամարդ, հագեցած կոմպոզիցիա՝ գործող անձանց թատերականացված դիրքերով, մարմինների՝ անտիկ քանդակագործությունը հիշեցնող կազմվածքներով:



Նկ. 18
«Վարդան Մամիկոնյան», Պատմութիւն Վարդանանց, 1787 թ., տպագրիչ՝ Գրիգոր Խաղարեան



Նկ. 19
Թելեմաքի Արկածները, Նոր Նախիչևան, 1793 թ., հտ. Ա-Բ, 1793 թ., տպագրիչ՝ Հովսեփ Արդութեան

Գրքի պատկերագրությունը՝ որպես գեղարվեստական ամբողջական մտահղացման ուսումնասիրությունն ընդգրկում է նաև տպագիր գրքերում տեղ

գտած տիտղոսաթերթերը, խորանագարդերը, լուսանցազարդերը, գլխատառերը, վերջնազարդերը: Զարդանախշային առումով նույնպես, ռուսահայ առաջին տպարանի գրքերը հաղորդում են ժամանակի գեղարվեստական միջավայրի շունչը: Թեև հայերեն տպագիր գրքերի փորագրիչները առաջին օրինակներից սկսած՝ օգտվել են հայ մանրանկարչական զարդանախշերից³⁵, սակայն հետագայում սկսել են կիրառել նաև արևմտաեվրոպական արվեստին բնորոշ զարդաձևեր: Ռուսահայ առաջին տպարանի հրատարակություններում բարոկկո ոճի ծաղկային բարդ զարդանախշերն ազդված են վենետիկյան հրատարակություններից, իսկ կլասիցիստական ոճի ավելի պարզ, հստակ, հին հռոմեական քանդակազարդումները հիշեցնող ձևերը՝ ժամանակի եվրոպական, ռուսական նախշերից: Ուշագրավ է նաև պատկերագրական թարմ ու նոր շունչը, որ տպագրությունը հաղորդեց ուշ շրջանի հայ ձեռագրարվեստին, որից անմասն չի մնացել նաև Ռուսաստանի հայ համայքներում ստեղծված հայ ձեռագիր գրքարվեստը: Որպես օրինակ կարող ենք նշել Աստրախանում ստեղծված մի ձեռագիր մատյանի (Ժողովածոյ, 1761-1762 թթ., գրիչ՝ Գալուստ սարկաազ Զուլայեցի, Երուսաղեմ 49, թերթ 127) խորանային ձևավորումը, որի ծաղկային զարդանախշումն ազդված է ժամանակի տպագիր գրքերի ձևավորումներից³⁶ (նկ. 20):



Նկ. 20

Ժողովածոյ, Աշտարխան, 1761-1762 թթ., գրիչ՝ Գալուստ սարկաազ Զուլայեցի, Երուսաղեմ 49, թերթ 127

³⁵ Այդ թեմայի շուրջ մենք այժմ ուսումնասիրություն ենք ձեռնարկել:

³⁶ Տպագիր գրքի հայ ձեռագրարվեստի վրա ունեցած ազդեցության մասին տես՝ **S. Merian**, “Illuminating the Apocalypse in Seventeenth-century Armenian Manuscripts: The Transition from Printed Book to Manuscript,” *The Armenian Apocalyptic Tradition*, ed. **K. Bardakjian and Sergio La Porta**, Leiden, Boston, 2014, pp. 603-639:

Այսպիսով, նոր ժամանակների շեմին աշխարհի տարբեր կողմերում հաստատված հայություն համար, հատկապես՝ հնդկահայ և ռուսահայ համայնքներում, օրակարգային էր հայ պետականության վերականգնման, ազգային ինքնագիտակցության զարթոնքի խնդիրը: Եվ շատ հաճախ, այս շարժման առաջնագծում կանգնած հայ գործիչները³⁷ եվրոպական քաղաքական-փիլիսոփայական մտքից ազդված՝ հայոց ազգային ազատագրության երաշխիքը տեսնում էին կրթամշակութային գործունեության մեջ, որ հաջորդ՝ XIX-XX դարերում պետք է բյուրեղանար որպես մշակութային «Ռուսահայաստանի» կերտման նախագիծ³⁸: Ըստ այդ տեսլականի՝ միայն կրթության շնորհիվ ժողովուրդը ձեռք կբերեր սեփական մշակութային առանձնահատկության գիտակցություն, և այդպիսով համամարդկային առաջընթացին մասնակից լինելու հնարավորություն: Կրթված և բանիմաց հայության կերտման ճանապարհին տպագրությունը ծանրակշիռ ու էական նշանակություն ուներ: Գիրքը դիտվում է որպես ազատագրման և մշակութային կորսված ինքնությունը վերածնող գործիք: Ինչպես Թոմաս Վանանդեցին է լատիներեն իր մի ուղերձում նշում, որ ցանկացել է լատինահայկական դպրոց հիմնել և այդ նպատակով եվրոպա բերել իր երեք ազգական պատանիներին՝ կրթվելու և տպագրական արվեստում հմտանալու համար. «Տպարանը անհրաժեշտ էր իմ ծրագրած դպրոցին գրեանք հասցնելու համար: ...Այժմ մնում է, որ նրանք էլ հնարաւորութիւն ունենան կրթել մեր այն թշուառ քրիստոնեաներին, որոնք գտնւում են խաւարի մէջ եւ ապրում են բռնաւորական լուծի տակ: Այս նպատակի համար պէտք է որ իմ հայրենիքում այսպիսի մի դպրոց բացուի եւ տպարանս էլ այնտեղ փոխադրուի...»³⁹:

Այս առումով, ռուսահայ տպագրությունը և գրքերի նկարագրողունները ուշագրավ տեղ են զբաղեցնում հայ տպագիր գրքի պատմության մեջ: Տպարանի պատմությունը զուգահեռվում է այն ղեկավարող գործիչների քաղաքական, լուսավորչական և հասարակական հայեցակարգերի հետ, արտահայտում ժամանակի հայության մտահոգություններն ու գաղափարական հղացքը: Ռուսաստանում հայերեն առաջին տպարանի թողարկած գրքերի պատկերագրության

³⁷ Չնայած ռուսահայ և հնդկահայ գործիչները համագործակցում էին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ, որն էր Հայաստանի անկախության երազանքը, բայց նրանք հակադիր հասարակական հոսանքներից եկող աշխարհայացքի տեղ էին, տարբեր ֆաղափական ծրագրեր ունեին: Առաջինների իղձն էր, որ Հայաստանը լինի անկախ կալվածատիրական պետություն ինքնակալ թագավորով, իսկ երկրորդների երազանքը Հայաստանի դեմոկրատ հանրապետության կառուցումն էր: տե՛ս Թ. Ավդալբեգյան, «Հայ ազատագրական շարժման երկու հոսանք XVIII դարի վերջում», Հայագիտական հետազոտություններ, Երևան 1969, էջ 215-225:

³⁸ Վ. Ազատյան, Արվեստաբանություն և Ազգայնականություն, Երևան 2012, էջ 255-261:

³⁹ Սարուխան, «Բելգիա եւ Հայերը, Բ. Գլուխ», ՀԱ, 1935, թիվ 3-4, էջ 122:

ուսումնասիրությունը գաղափար է տալիս ռուսական միջավայրում հայություն մշակութային կապերի մասին: Ինչպես պարզվեց, հայ տպագրիչներն ընդօրինակում էին արդեն մեկգարյա ավանդույթ դարձած ռուսական տպագրությունների պատկերագրական համակարգը, վենետիկյան շքեղ հրատարակությունները, Կոստանդնուպոլսում և նույնիսկ էջմիածնում հրատարակված գրքերի փորագրապատկերները՝ որպես համընդհանուր հայկական մշակութային դաշտի մի մասնիկ: Այդուհանդերձ, հիշատակելի են մի շարք պատկերային նորություններ, որ հանդիպում են միայն այս տպարանի գրքերի նկարազարդումներում: Ինչպես սովորաբար կարելի է նկատել մյուս գաղթօջախների պարագայում, այստեղ ևս տպագրիչները տուրք են տվել հյուրընկալող երկրում տիրող գեղարվեստական ճաշակին և ժամանակի տարածված ոճական ուղղություններին:

ANI YENOKYAN

THE HISTORY OF BOOK ILLUSTRATION IN THE FIRST ARMENIAN PRINTING HOUSE IN RUSSIA

Keywords: Armenian printed books, Armenian printing house in Russia, Grigor Khaldaryants, Hovsep Arghutyan, book illustration, iconography.

The first Armenian printing house in Russia was founded in 1780 by Grigor Khaldaryants, who moved it from London to St. Petersburg. After the death of Khaldaryants, in 1789, Hovsep Arghutyan, the spiritual leader of the Armenians of Russia, moved the printing house to New Nakhichevan, and in 1795, to Astrakhan.

During its existence, the printing house published about forty books on religious, educational, and historical topics.

The study of the book illustrations of the first Armenian printing house in Russia allows us to form an idea about the artistic tendencies and influences of the time, which were developed due to the political and cultural ties between the Diaspora and Armenia. As a result, various artistic influences were spread among Armenian printing houses in different countries, including Russia. The printing house in Russia, however, stood out with its unique book illustrations, influenced by the European and Russian art of the time.

**АНИ ЕНОКЯН
ИЛЛЮСТРАЦИИ ИЗДАНИЙ ПЕРВОЙ АРМЯНСКОЙ
ТИПОГРАФИИ В РОССИИ**

Ключевые слова: Армянская печатная книга, армянская типография в России, Григор Хандарянц, Овсеп Аргутян, книжная иллюстрация, иконография.

Первая русско-армянская типография была основана в 1780 году Григором Халдарянцем, который перенёс типографию из Лондона в Санкт-Петербург. После смерти Гр. Халдарянца духовный лидер армян России Овсеп Аргутян (Иосиф Аргутинский-Долгорукий) в 1789 году перенёс типографию в Новую Нахичевань, а в 1795 – в Астрахань. За период своего существования, эта типография издала около четырёх десятков книг религиозного, образовательного и исторического содержания.

Изучение иллюстраций книг первой российской армянской типографии даёт представление о художественных тенденциях и влияниях, которые сформировались благодаря культурным и политическим связям армянской диаспоры с родиной. Благодаря этим связям, художественные приёмы распространялись среди армянских типографий разных стран, доходя и до российско-армянской среды. Эта типография выделяется рядом уникальных иллюстраций, в которых явно усматривается европейское и русское художественное влияние.

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐԱՅԱՅՏ ՀՆԱՏԻՊ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բանալի բառեր՝ Հայերէն նորայայտ հնատիպ գիրքեր, Իննովէնցիոս ԺԱ. Պապ, Յովսէփ Արք. Արղութեան, Հերակլ արքայ, Աղէքսանդր Ա. ցար, Նիքոլայ Ա. ցար, Սամուէլ Անեցի:

Երկար ու հետաքրքրական ճանապարհ անցած է հայ տպագիր գիրքի մատենագիտութիւնը: Շնորհիւ տասնամեակներու վրայ երկարած հոյլ մը նուիրեալներու անդուլ պրպտումներուն ու աշխատանքին, ստեղծուած են հայ տպագիր գիրքի ու մանաւանդ՝ հայ հնատիպ գիրքի մատենագիտութեան բազմաթիւ մնայուն ու մեծարժէք գործեր:

Բարձր գնահատելով հանդերձ հին շրջանի մատենագէտներն ու անոնց վաստակը, պէտք է առանձնապէս մատնանշել Հայաստանի Ազգային Գրադարանի հայ գիրքի մատենագիտութեան բաժնի այն հրատարակութիւնները, որոնք կ'ընդգրկեն հայ գիրքի մատենագիտութիւնը 1512-1930 թուականներուն, եւ որոնց մէջ արտացոլուած են հին ու նոր հայ մատենագէտներու պրպտումներու արդիւնքները: Սպասելի է որ Ազգային Գրադարանը շարունակէ իր հրատարակութիւններու օգտակար այս շարքը եւ յաջորդական հատորներով հայ գիրքի մատենագիտութիւնը հասցնէ մինչեւ մեր օրերը:

Ուրախալի է նաեւ, որ վերջին տասնամեակներուն, Հայաստանի ու մանաւանդ արտասահմանի մէջ հրատարակուեցան հայկական տարբեր գաղթօճախներու տպագրական աւանդին նուիրուած բազմաթիւ մատենագիտութիւններ, որոնց շնորհիւ ունեցանք բաւական խնամուած գործեր, նուիրուած՝ Սուրիոյ, Լիբանանի, Եգիպտոսի, Պուլկարիոյ, Երուսաղէմի, Պարսկաստանի եւ հայկական այլ գաղթօճախներու:

Հակառակ այս բոլորին, տակաւին շատ հեռու ենք հայ տպագիր գիրքի ամբողջական մատենագիտութիւն մը ունենալէ, որովհետեւ մեր բոլոր մատենագիտական հատորներն ալ ունին բացթողումներ եւ թերութիւններ, որոնց հիմնական պատճառը ոչ թէ՛ գանձնք կազմողներու անբաւարար աշխատանքն է, այլ մեր գրապահոցներուն ոչ այնքան կատարեալ եւ երբեմն նոյնիսկ անմխիթար վիճակը:

Հայ տպագիր գիրքի ամբողջական մատենագիտութիւն մը ունենալու համար տակաւին երկար ճանապարհ ունինք կտրելիք. մինչ այդ, պէտք է պատրաստել տպագրական հարուստ աւանդ ունեցող գաղթօճախներու յատուկ մատենագիտութիւններ, որուն պէտք է լծուին թէ՛ տեղացի եւ թէ՛ հայրենի մաս-

նագէտները: Փաստօրէն ցարդ շունինք Կ. Պոլսոյ, Թիֆլիսի, Սանկտ Փետերսպուրկի, Մոսկուայի, Արեւելեան Եւրոպայի, Ֆրանսայի եւ բազմաթիւ այլ բնակավայրերու մէջ տպուած հայերէն գիրքերու մատենագիտութիւններ, իսկ այլ վայրերու առկայ գործերէն շատեր արդէն կարիքն ունին վերանայումի եւ ամբողջացումի: Առանձնապէս պիտի նշել հայ տպագիր գիրքի ստեղծման երկու կարեւորագոյն կեդրոններու՝ Մխիթարեան միաբանութեան Վենետիկի Սբ. Ղազար կղզիի եւ Թրիէսդի ու Վիեննայի վանքի հրատարակութիւններու պատրաստման անհրաժեշտութիւնը, որոնք եւս չեն կատարուած ցարդ:

Մեծ աշխատանք ունինք կատարելիք նաեւ հայ եւ օտար դիւաններու մէջ, ուր պահուող արխիւային փաստաթուղթերը բաւարար ձեւով չեն ուսումնասիրուած եւ իրենց մէջ կը թաքցնեն մեծարժէք նորութիւններ հայ տպագրիչներու գործունէութեան եւ հայ գրատպութեան պատմութեան մասին ընդհանրապէս:

Անհրաժեշտ է նաեւ, որ հայ գիրքի մեծ գրապահոցները առանձին հատորներով հրատարակեն կամ համացանցի վրայ տեղադրեն իրենց հաւաքածոներու ցուցակները:

Այս բոլորէն ետք է միայն, որ պիտի ունենանք նուազագոյն թերութիւններով եւ կատարելութեան այնքան մօտ հայ տպագիր գիրքի մատենագիտութիւնը, որ սեղանի գիրքը պիտի ըլլայ բոլոր հայ պատմաբաններուն ու բանասէրներուն եւ գլխաւոր ուղեցոյցներէն մէկը հայ մշակոյթի արժէքները պեղելու եւ անոր ծանօթանալու ուղղութեամբ:

Հետագայ էջերով կը ներկայացնենք ութը գիրքեր, որոնք չեն յիշատակուած Հայաստանի Ազգային Գրադարանի հրատարակած հայ տպագիր գիրքի մատենագիտութեան առաջին երկու հատորներուն մէջ, որոնք յաջորդաբար կ'ընդգրկեն 1512-1800 եւ 1801-1850 թուականներուն միջեւ լոյս տեսած հայերէն գիրքերը¹:

Հոս ներկայացուող գիրքերէն երեքին մասին մեր տեղեկութիւնները քաղած ենք զանազան աղբիւրներէ, իսկ հինգի մասին տուեալները վերցուցած ենք հայերէն ձեռագրացուցակներէ, որովհետեւ, ինչպէս ծանօթ է շատերուն, ուշ միջնադարու մեր գրիչները ունեցած են գեղեցիկ սովորութիւն մը. երբ գիրենք հետաքրքրող տպագիր գիրքէ մը օրինակ չեն կրցած ունենալ, ընդօրինակած են զայն ամբողջութեամբ, պահելով անոր անուանաթերթն ու տպագրական յիշատակարանը: Այսօր, դարեր ետք, հարիւրաւոր օրինակներով

¹ Հայ գիրքը 1512-1800 թուականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտութիւն (յետ այսու՝ Հ. Գ. 1512-1800 թ.), կազմեցին Ն. Ա. Ոսկանեան, Ք. Ա. Կուրկուտեան, Ա. Մ. Սաւալեան, խմբագրութեամբ Ռ. Ա. Իշխանեանի, Երևան, 1988, LII, 865 էջ, եւ Հայ գիրքը 1801-1850 թուականներին, կազմեց՝ Հայկ Դաւթեան, խմբագրութեամբ Յակոբ Անասեանի, Երևան, 1967, LXXXIII, 540 էջ:

տպագրուած այդ հրատարակութիւններէն շատերը կորած են անհետ, ու մեզի հասած են միայն գրիչներու կատարած ընդօրինակութիւնները:

Հայերէն իւրաքանչիւր նորայայտ հրատարակութիւն բնականաբար իր հետ կը բերէ հայ մշակոյթի, գրականութեան, պատմութեան եւ յարակից այլ ոլորտներու մասին բազմաթիւ կարեւոր նորութիւններ. կը յայտնուին նոր հեղինակներ, թարգմանիչներ, մշակութային գործիչներ ու տպարանատէրեր, կը յստակացուին տպարաններու գործունէութեան մանրամասներ եւ բազում այլ տուեալներ:

1. «ԿԵՐՊ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆՅ ԶՈՐ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԻՆՆՈՉԷՆՅԻՈՍԻ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴԻ...»: Հոսմ, տպարան Սրբոյ Ժողովոյն Տարածման Հաւատոյ («Փրոփականտա Ֆիտէ»ի), 28 Յունուարի ՌՉՃՁԸ. (= 1688):

Այս գիրքը ամբողջութեամբ ընդօրինակուած է Զմմառու Հայոց Վանքի հայերէն թիւ 140 ձեռագրին մէջ («Հաւաքածոյ», գրիչ՝ Տիրացու Ստեփաննոս Ղազարեան Գաղատացի, օրինակուած Մեծն Հոսմ, 1745-ին), թթ. 26ա-29ա²:

Զայն նկարագրողը, տալէ ետք անոր վերնագիրը, կ'աւելցնէ, թէ ան «խաչերու, մետաղներու, վարդարաններու վրայ ներողութիւն դնելու կամ շահելու պայմաններ» են, ապա կը մէջբերէ գիրքի տպագրութեան տուեալներուն վերաբերող գիրքի վերջին հատուածը՝ «Ի Հոսմ ներ տպարանում սրբոյ Ժողովոյն Տարածման Հաւատոյ յամի Տեառն ՌՉՃՁԸ. (= 1688), յունվարի ԻԸ., ի փառս Աստուծոյ ամէն»:

«Հ. Գ. 1512-1800 թ.» հատորը, Հ. Արսէն Ղազիկեանէն առնելով իր տեղեկութիւնները³, «Անթուակիր գրքեր» բաժնին մէջ, թիւ 1019-ի տակ տուած է նկարագրութիւնը նոյն Պապի «Համառօտութիւն ներողութեանց շնորհեցելոց ի զանազան վեհապետաց» խորագրով եւ իր բովանդակութեամբ այս հրատարակութիւնը յիշեցնող 33 էջանի գիրքի մը, որուն տպագրական տուեալները մնացած են անծանօթ:

Այս եւ վերոյիշեալ գիրքը թէեւ նման՝ բայց յայտնապէս տարբեր հրատարակութիւններ են:

2. «ԲԱՆ Ի ՎԵՐԱՅ ՕԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՅԻՈՅ Ի ՍԱՆԿԴ ԲԵՏՐԲՈՒՐԳ ԿԱՌՈՒՅԵԼՈՅ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՒՀԻՈՅ ՄԵԾԻ ՆԱՀԱՏԱԿՈՒՀԻՈՅՆ ԵԿԱՏԱՐԻՆԷԻ, ԱՍԱ-

² Մեսրոպ Վրդ. Քէլիշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի Վանքի մատենադարանին, [Ա. հատոր], Վիեննա, Մխիթարեան տպարան, 1964, էջ 296:

³ Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, կազմեց՝ Հ. Արսէն Ղազարոս Ղազիկեան, Ա., Վենետիկ, Սր. Ղազար, 1909-1912, էջ 1448: Տես նաեւ Հ. Գաբելին Զարբանալեան, Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1883, էջ 321:

ՅԵԱԼ ՅՈՎՍԵՓԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՀԱՅՈՅ, ՅԱՄԻ ՓՐԿՉԻՆ 1780 ՓԵՏՐՈՒԱՐԻ 18, Ի ՊԵՏՐՐՈՒՐԳ, ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏՊԱԳՐԱՏԱՆԵՆ ՏՊԵՅԵԱԼ»: Հեղինակ՝ Յովսէփ Արք. Երկայնաբազուկ Արղութեան, Սանկտ Փեթերսպուրկ, Կայսերական տպագրատուն, 1780:

Այս գիրքը ամբողջութեամբ ընդօրինակուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մատենադարանի թիւ 204 ձեռագրին մէջ, որ «Ժողովածոյ» մըն է, ընդօրինակուած Ստամպուլ 1769ին, Ակընցի Մկրտիչ Յումրիճանենցի կողմէ: Գրչութեան աւարտէն ետք, անոր վրայ աւելցուած են քանի մը գործեր եւս, որոնք թուագրուած են 1770, 1779 եւ 1780 թուականներով: Աւելի ետք աւելցուած այդ գործերէն մէկն է «Բան ի վերայ օծման...»ը, որ կը գրուէ ձեռագրի 139բ-144ա թերթերը⁴:

«Բան ի վերայ օծման...»ը 18 Փետրուար 1780-ին Ռուսաստանի հայոց առաջնորդ Յովսէփ Արք. Երկայնաբազուկ Արղութեանի արտասանած խօսքն է Սանկտ Փեթերսպուրկի հայոց Սրբուհի Եկատարինէ եկեղեցոյ օծման առիթով, որ հրատարակուած է նաեւ առանձին գիրքով:

Ձեռագիրը նկարագրողը Արղութեանի գիրքէն տուած է փոքրիկ հատուած մը՝ «Յանուն Հօր... Ոչ ի սպառ բարկանայ մեզ Տէր... — Զգամ յինէն զպակասութիւն պատկանաւոր զօրութեանց առ արժանաւոր կոչմանս հանդիպման... հովանաւորութեան սորա բնակողաց, ի յերկրիս Ռուստաց Հայոց արքեպիսկոպոսի հայկազնից»⁵:

3. «ԳԻՐՔ, ՈՐ ԿՈՉԻ ԿՏԱԿ ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹԻՆ»: Մբ. էջմիածին, 1787:

Նոր Զուղայի Մբ. Ամենափրկիչ Վանքի հայերէն ձեռագիրներու ցուցակի Բ. հատորի Նոր Զուղայի մասնաւորներու մօտ պահուող ձեռագիրներու բաժնին մէջ, թիւ 5-ի տակ, բանասէր Լեւոն Գ. Մինասեան նկարագրած է Նոր Զուղայի բնակիչ մի ոմն օր. Վարդուհի Դաւիթխանեանի մօտ պահուող՝ 1787ին Բասրայի (Իրաք) մէջ ընդօրինակուած «Ժողովածո» մը, որուն գրիչն է երէց Անդրէաս Պողոսի:

⁴ Անուշաւան Վարդապետ Դանիէլեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1984, էջ 519:

⁵ Յիշեալ եկեղեցոյ հիմնարկութեան արարողութեան մասին տես՝ Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ., Յովսէփ Կաթողիկոս Արղութեան, մասն առաջին, 1778-1800, հրատարակեց Գիւտ Ա. Քահ. Աղանեանց, Թիֆլիս, Էլեկտրաշարժ տպարան Օր. Ն. Աղանեանցի Պոլից, 1911, էջ 26:

Յիշեալ ձեռագիրը ժողովածու մըն է, որ կը մէկտեղէ վեց տարբեր գործեր, որոնցմէ երեքը նախապէս Աբ. Էջմիածնի տպարանին մէջ տպուած գիրքերու ընդօրինակութիւններ են.

– «Գիրք, որ կոչի Պարտավճար»: Ընդօրինակուած էջմիածնի 1779 թուականի հրատարակութենէն:

– «Գիրք աղօթից, որ կոչի Զբօսարան հոգեւոր»: Ընդօրինակուած էջմիածնի 1772 թուականի հրատարակութենէն:

– «Գիրք, որ կոչի Կտակ մեծի ուրբաթին»: Ընդօրինակուած էջմիածնի 1787 թուականի հրատարակութենէն⁶:

Յիշեալ երեք գիրքերէն առաջին երկուքը ծանօթ են հայ տպագիր գիրքի մատենագիտութեան («Հ. Գ. 1512-1800 թ.», յաջորդաբար թիւ 693 եւ 644), իսկ երրորդը՝ ոչ:

Ձեռագրին մէջ իր գրաւած էջերուն քանակը նկատի առնելով (թերթ 193բ-262բ), եւ բաղդատելով տպագիր միւս երկու գիրքերու էջաթիւերուն ու անոնց տպագիր օրինակներու էջաթիւերուն հետ, կրնանք ենթադրաբար ըսել, որ «Գիրք, որ կոչի Կտակ մեծի ուրբաթին»ի տպագիր օրինակը բաղկացած պիտի ըլլայ աւելի քան 200 տպագիր էջերէ:

4. ՀԵՐԱԿԼ ԱՐՔԱ ՎՐԱՍՏԱՆԻ ՈՐԴԻ ԹԱՄՐԱԶ ԱՐՔԱՅԻ ՅԵՍՍԵԱՆ ԴԱԻԹԵԱՆ ԱՌՂՈՄՈՆԵԱՆ, ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՆ:

«Հ Ա Վ [ՀԵՐԱԿԼ ԱՐՔԱՅ ՎՐԱՍՏԱՆԻ] ՕՐԻՆԱԿ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՇՆՈՐՀԱՅ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՕԳՈՍՏԱՀԱՍ ՏԵԱՌՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԱԿԼԱՅ ՇՆՈՐՀՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱԽՈՐԻՆ ՎՐԱՅ ԿԱՆԻՅ ԵՒ, ԵՒ, ԵՒ, ԱՌՀԱՍԱՐԱԿ ՅԱԶԳ ՀԱՅՈՅ»: Վրացերէն բնագրէն թարգմանեց՝ Տէր Դաւիթ Տէր Յօհանեան, Մազրաս, տպարան Տէր Յարութիւն Քհնյ. Շմաւօնեան Շիրազցոյ, 1792, 1000 օրինակ:

Վրաստանի Թամրազ արքայի որդի Հերակլ Բ. թագաւորի Թիֆլիսէն «առ համայն ազգս հայոց, որ բնակեալ էք ի հեռաւոր երկիրս» յղած 4 Դեկտեմբեր 1790 թուակիր հրովարտակին թարգմանութիւնն է, որ իր վրացերէն բնագիրէն հայերէնի վերածած է արքայի հայ գրագիր եւ թարգման Տէր Դաւիթ Տէր Յօհանեանը:

Այս հրովարտակով Հերակլ արքայ կոչ կ'ուղղէ օտար ափերու վրայ բնակող բոլոր հայերուն եւ մանաւանդ՝ Նազիր Շահի բռնութիւններուն հետեւանքով աղէտեալ գօտիէն «հեռագոյն երկիրս» մեկնածներուն, որ վերադառնան «ի բնիկ երկիրս ձեր ի ներքոյ հովանաւորութեան մերոյ», փոխարէնը անոնց

⁶ Լ. Գ. Միմասեան, Յուցակ ձեռագրաց նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան Վանաց թանգարանի, խմբագրութեամբ Օ. Ա. Եգանեանի, Բ. հատոր, Վիեննա, Միսիթաբեան տպարան, 1972, էջ 194:

խոստանալով շնորհել արքայական ամէն ձեւի պաշտպանութիւն եւ հովանաւորութիւն ու բաւականանալ գանձելով միայն հարկերն ու մաքսերը՝ «ըստ արքայական օրինի», ճիշդ այնպէս ինչպէս կը վճարէին երկրի վրացի քաղաքացիները:

Հրովարտակի աւարտին կան անոր տպագրական տուեալները՝ «Տպագրեցաւ ի մայրաքաղաքն Մադրաս ի տպարանի Տէր Յարութիւն Շմաւօնեան Շիրազցոյ, հազար հատ ի վայելումն Ազգին Հայոց, Յամի Տեառն մերոյ 1792»:

Բանասէր Արամ Երեմեան, որ իր տրամադրութեան տակ ունեցած է այս տպագիր հրովարտակէն օրինակ մը, առանց յիշելու սակայն թէ ո՞ր կը գտնուի ան, պատմական հակիրճ ներածականով մը հրատարակութեան տուած է զայն ամբողջութեամբ⁷, զոր մենք հոս վերատպելու կարիքը չենք տեսներ:

5. ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐ ՌՈՒՍԱՅ

«ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ Ա[ՄՏՈՒԾՈ]Յ. ՄԵՔ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄ[ԵՆԱՅՆ] ՌՈՒՍԱՅ...»: Աժտարխան (Աստրախան), Տպարան Առաջնորդարանի (Սբ. Էջմիածնի անուան), հաւանաբար 1814 թ.:

Այս հրովարտակը ամբողջութեամբ ընդօրինակուած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մատենադարանի թիւ 2019 ձեռագրին մէջ («Ժողովածոյ», գրիչ եւ գրչութեան վայր՝ անծանօթ, թուական՝ 1814-էն ետք), էջ 15-18⁸:

Հրովարտակին ռուսերէն բնագիրը տպուած է Սանկտ Փետրսպուրկ, տպարան Սենսիթի, 24 Դեկտեմբեր 1813 թ., «Եւ յայնմանէ թարգմանեալ ի հայ բարբառ՝ տպեցաւ կրկին ի յառաջնորդարանի Հայոց որ ի յԱժտարխան»:

Հրովարտակին հայերէն թարգմանութիւնը տպուած պիտի ըլլայ հաւանաբար 1814 թ.:

6. «ՕՐԻՆԱԿ ԹՂԹՈՅՆ ՈՐ Ի ՓԱՐԻՉՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆՔՆ ԳՐԵՅԱԻ ԱՌՉՈՐՄՆ ՖՐԱՆՍԸՉԱՅ, ՈՐՔ ԸՆԴ ՊՕՆԱԲԱՐԴԻԻ ԷԻՆ Ի ՓԱՐԷՉ, Ի 2 ԱՊՐԻԼԻ, 1814 ԱՄԻ»: Ռուսերէնէ հայերէնի թարգմանող՝ Ալեքսան Դպիր Սիմէօնեան, Աժտարխան (Աստրախան), տպարան Սբ. Էջմիածնի, հաւանաբար 1814 թ.:

Այս թուղթը ամբողջութեամբ ընդօրինակուած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մատենադարանի թիւ 2019 ձեռագրին մէջ («Ժողովածոյ», գրիչ եւ գրչութեան վայր՝ անծանօթ, թուական՝ 1814-էն ետք) էջ 19-20⁹:

⁷ Ա. Երեմեան, «164 Տարուայ պատմական մի կարեւոր հրովարտակ», Էջմիածին, 1954, թիւ 4, էջ 37-40:

⁸ Նուրայր Արֆէպ. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Է., Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1974, էջ 51:

⁹ Նոյն տեղը:

Այն ուսերէնէ հայերէնի թարգմանուած է Ռուսաստանի հայոց առաջնորդ Յովհաննէս Արք.ի հրահանգով, անոր պաշտօնեաներէն Ալեքսան Դպիր Սիմէօնեանի կողմէ:

Թուղթը կը սկսի հետեւեալ բառերով.

«Ով գօրականք, Ֆրանսիայն ի բաց հերքեաց յինքենէ զլուծն՝ ընդ որով տառապէր յայսքան ամս...»:

Թարգմանեալ ի ռուսաց լեզուէ ի հայկական բառ, հրամանաւ առաքելաշաւիղ առաջնորդի հիւսիսային կողմանս Հայոց, տեառն Յօհաննու սրբազան արքեպիսկոպոսի.

ի նորին իսկ պաշտօնէէ յԱլեքսան դպրէ Սիմէօնեան, ի տպարանի Սրբոյ էջմիածնի, որ ի յՍտարխան»:

Թուղթը տպագրուած պիտի ըլլայ հաւանաբար 1814-ին:

7. ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՅԻ

«ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ»: Կալկաթա, Տպարան Եպիսկոպոսական Ճեմարանի, հրատարակութեան պատասխանատու՝ Մեսրոպ Դ. Թաղիադեան, 1831:

ԺԲ. դարու պատմիչ Սամուէլ Անեցիի ժամանակագրութեան առաջին տպագրութիւնը ընդունուած է համարել 1893ի Վաղարշապատի հրատարակութիւնը¹⁰, որ մինչեւ 2011 կը համարուէր գործին միակ տպագրութիւնը, երբ նոյն թուականին լոյս տեսաւ անոր գիտական խնամուած բնագիրը Մաշտոցեան Մատենադարանի գիտաշխատող Անահիտ Հայրապետեանի աշխատասիրութեամբ¹¹. մինչդեռ Անեցիի «ժամանակագրութիւն»ը առաջին անգամ տպուած է ոչ թէ Վաղարշապատի, այլ Հնդկաստանի Կալկաթա քաղաքի Եպիսկոպոսական Ճեմարանի տպարանին մէջ, դեռ 1831 թուականին:

Գիրքին տպագրութեան հսկած ու անոր տպագրական փորձերը սրբագրած է հայ մեծանուն բանաստեղծ, խմբագիր եւ կրթական-մշակութային գործիչ Մեսրոպ Դ. Թաղիադեան, որ 1830-1831 թուականներու իր օրագրութեան մէջ բազմիցս յիշատակութիւն ձգած է առ այդ եւ տուած է տպագրական աշխատանքին առնչուող որոշ մանրամասնութիւններ: Անեցիի գիրքին տպագրութեան վերաբերող Թաղիադեանի գրառումները կը տարուբերին 28 Հոկ-

¹⁰ Սամուէլի Քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, տպարան Սր. էջմիածնի, 1893, Լ. + 302 էջ:

¹¹ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ. բնագիրը կազմեց Անահիտ Հայրապետեանը, առաջաբանը Կարէն Մաթեոսեանի, խմբագրութեամբ Գէորգ Տէր-Վարդանեանի, Երեւան, «Նայիրի», 2011, 154 էջ:

տեմբեր 1830 — 7 Յունուար 1831 թուականներուն միջեւ: Կը մէջբերենք այդ մասին իր օրագրութենէն հետեւեալ գրառումները.

Հոկտեմբեր 28 [1830] Հինգշաբթի. «Գնացի ի տպարանն, սրբագրեցի զՍամուէլ Անեցի»:

Նոյեմբեր 6 [1830] Շաբաթ. «Գնացի ի ձեմարան անդր, հետեւել տպագրութեան»:

Նոյեմբեր 11 [1830] Հինգշաբթի. «... եւ եկեալ ի Կալկաթա, անցի ի ձեմարանն, եւ հոգ տարայ տպագրութեանն «Սամուէլի Անեցույ»»:

Նոյեմբեր 30 [1830] Երեքշաբթի. «... եկի յԵպիսկոպոսական ձեմարան խնամ տանել տպագրութեան ժամանակագրութեան Սամուէլի»:

Եւ վերջին գրառումը՝ Յունուար 7 [1831] Չորեքշաբթի. «Ելի ի ձեմարան անդր, եւ աւարտեցի զվերջին սրբագրութիւն Սամուէլի եւ ստացայ զվարձ ամսեան Դեկտեմբերի»¹²:

Վերեւի մէջբերումներէն պարզ կը դառնայ, որ Մեսրոպ Դ. Թաղիադեան եղած է Անեցիի «ժամանակագրութիւն» գիրքի առաջին տպագրութեան հսկողն ու անոր տպագրական փորձերը սրբագրողը, որուն համար ալ իր օրագրութեան մէջ նշած է, թէ տպարանէն գանձած է Դեկտեմբեր 1830-ի իր աշխատավարձը:

Թաղիադեանի կեանքին քաջածանօթ երկու բանասէրներ՝ Մեսրոպ Յ. Ալթ եւ Յովհաննէս Քհնյ. Մկրեան, որոնք իրենց տրամադրութեան տակ ունեցած են անոր ձեռագիր օրագրութիւնը, Թաղիադեանի մասին իրենց կենսագրական բնոյթի գործերուն մէջ տողատակի ծանօթագրութիւններով նշած են՝ թէ իրենք չեն տեսած Անեցիի գործին Թաղիադեանի տպած այս օրինակը¹³:

Ճ. ՆԻԿՕԼԱՅ ՊԱԻԼՈՎԻՉ ԿԱՅՍԻ

[«ՀՐՈՎԱՐՏԱԿ ՆԻԿՕԼԱՅ ՊԱԻԼՈՎԻՉ ԿԱՅՍԵՐ»], հաւանաբար Սանկտ Փետերսպուրկ, 1850:

Ներսէս Ե. Աշտարակեցի Ամենայն Հայոց Կաթողիկոս, հնդկահայոց յղուած 31 Դեկտեմբեր 1850 թուակիր կոնդակով կ'իմացնէ, թէ ինք այդ կոնդակին հետ Հնդկաստան կը ղրկէ Նիքոլայ Պաւլովիչ Կայսեր հայութեան ուղղած հայերէն եւ ռուսերէն տպագիր զոյգ հրովարտակներէն մէկական օրինակ: Կաթողիկոսը հրովարտակներուն մասին տուած է մանրամասնութիւններ, զորս կը մէջբերենք աստ. «Առաքեմ ընդ այսմ տպեալ Հայերէն եւ Ռուսերէն զօրինակն երկուց հրովարտակաց յաղագս ազատութեան ամենայն անշարժ կալուածոց

¹² Դիւան Մեսրոպ Դ. Թաղիադեան, խմբագիր՝ Մեսրոպ Եպս. Աշճեան, Նոր Զուլա, 1979, էջ 59, 63, 64, 69, 71-72:

¹³ Նոյն տեղը, էջ 69, 71-72, 499:

վանօրէից եւ եկեղեցեաց Հայոց յամենայն հարկաց քաղաքականաց՝ ըստ օրինի եկեղեցական կալուածոց յունադաւանից, եւ յաղագս ընդարձակութեան յստակ մոմավաճառութեանց յամենայն եկեղեցիս Հայոց՝ ՚ի կրպակսն իւրաքանչիւր նոցա մերձ առ եկեղեցիս վասն եկեղեցական եւ համազգական Հայազնէից օրինակատարութեանց եւ սօնական հանդիսից, զոր հրովարտակաւ կայսերութեան վայելէր ցարդ վիճակային կառավարութիւնն յունադաւանից...», ապա կը շարունակէ կայսեր կողմէ հայութեան տրուած առանձնաշնորհումներու թուարկումը:

Այս մանրամասնութիւնները տալէ ետք, հնդկահայոց «Ազգասէր Արարատեան» երկշաբաթաթերթը կ'աւելցնէ, թէ «Այս տպեալ Հրովարտակը Նորին Կայսերական Մեծութեան դեռ չհասին առ մեզ»¹⁴:

Թերթի յաջորդ թիւերուն մէջ եւս անոնց ստացման մասին ակնարկութիւններ չկան:

МИРАН МИНАСЯН НОВООБНАРУЖЕННЫЕ СТАРОПЕЧАТНЫЕ АРМЯНСКИЕ ИЗДАНИЯ

Ключевые слова: Новообнаруженные старопечатные книги, папа Иннокентий XI, архиепископ Иосиф Аргутинский, царь Грузии Ираклий, царь Александр I, царь Николай I, Самуэл Анеци.

В статье рассматриваются общие вопросы библиографии армянской печатной книги. Для создания полной библиографии необходимо иметь специальные списки изданий крупных центров армянского книгопечатания, досконально изучить документы армянских и иностранных архивов, содержащие важные сведения о деятельности армянских печатников и об истории армянского книгопечатания, ввести в оборот каталоги крупных собраний армянской книги, и т.д.

Статья содержит сведения о восьми книгах, изданных за 1688-1850 гг., не вошедших в библиографические списки армянской книги. Эти недавно обнаруженные книги были изданы в Риме, Санкт-Петербурге, Эчмиадзине, Мадрасе, Астрахани и Калькутте. Пять из них дошли до нас в рукописных копиях, сведения об остальных трех почерпнуты из различных источников.

Авторы этих книг – папа римский Иннокентий XI, архиепископ Иосиф Аргутинский-Долгорукий, грузинский царь Ираклий II, сын

¹⁴ Ազգասէր Արարատեան, Կալկարա, Գ. հաստը, թիւ 72, 30 նոյեմբեր 1851, էջ 573:

царя Теймураза, русские цари Александр I и Николай I, а также армянский историк XII в. Самуэл Анеци.

MIHRAN MINASSIAN

NEWLY DISCOVERED OLD ARMENIAN PUBLICATIONS

Keywords: Newly discovered rare Armenian books, Pope Innocent XI, King of Georgia Heraclius, Hovsep Archbishop Arghutian, Tzar Alexander I, Tzar Nicolay I, Samuel Anetsi.

The article discusses the bibliography of Armenian printed books and related questions. In order to create a comprehensive bibliography, it is necessary: to have special lists of publications from large Armenian printing centers, to study in detail the documents kept in Armenian and non-Armenian archives that contain important data about the activities of Armenian printing houses and the history of Armenian printing, and finally, to put the catalogues of large collections of printed Armenian books into circulation.

The article contains information about 8 Armenian books, published between 1688 and 1850, which are not mentioned in the bibliographies of rare Armenian books.

These newly discovered books were published in Rome, Saint Petersburg, St. Etchmiadzin, Madras, Astrakhan, and Calcutta. Five of them were copied in manuscripts and thus have reached us, while information about the other three has been gathered from various sources.

The authors of these books are well-known Armenian and non-Armenian personalities: the Pope Innocent XI of Rome, Archbishop Hovsep Arghutian, the Georgian king Heraclius, son of king Teimuraz, the Russian Tzars Alexander I and Nicolay I, and the 12th century historiographer Samuel Anetsi.

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՈՍԿԱՆՅԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ¹

Քանալի բառեր՝ Աստվածաշունչ, Վուլգատա, Հին կտակարան, Նոր կտակարան, Ոսկան Երևանցի, Ամստերդամ, Սուրբ Էջմիածնի և Սուրբ Սարգիս Զորավարի տպարան, փորագրապատկերներ, գրաքննություն:

1966 թ. ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ հայկական սփյուռքում հանդիսավորությամբ նշվեց հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 300-ամյակը, ինչի առիթով հրապարակ իջան մի շարք արժեքավոր գեկուցումներ, հետազոտություններ և հոդվածներ², որոնցից շատերը խիստ կարևոր են հայ գրքի տպագրության պատմության ուսումնասիրության համար³:

2016 թ. նշվեց հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 350-ամյակը, որը շարունակվեց նաև հաջորդող երկու տարիներին, քանի որ Աստվածաշնչի տպագրությունն սկսվել է 1666 թ. և ավարտվել 1668 թ.՝ հայ տպագրության մեծ երախտավոր Ոսկան վարդապետ Երևանցու⁴ և իր համախոհների ջանքերով:

Հայ տպագրության մեջ բեկումնային իրադարձություն էր հայերեն Աստվածաշնչի առաջին հրատարակությունը, որը հայ գրատպությունը բարձրաց-

¹ Հողվածիս գրությանն աջակցելու համար իմ շնորհակալական խոսքն եմ հղում Հայաստանի ազգային գրադարանի (այսուհետ՝ ՀԱԳ), հայաստանյան և արտերկրի մի շարք գրադարանների պաշտոնյաներին, նաև փոխգործակցության պատրաստակամություն ցուցաբերած անհատ անձանց: Հատուկ շնորհակալություն ՀԱԳ-ի Մատենագիտության և գրադարանագիտության բաժնի աշխատակից Ստյոպա Պետոյանին՝ թեմայի մտահղացման և հետազոտական աշխատանքի ընթացքում տված օգտակար խորհուրդների համար:

² Այս հոդվածի պատրաստման շարժառիթը Նիկեյ Ոսկանյանի և Քնարիկ Կորկոտյանի մի արժեքավոր ուսումնասիրությունն էր, որը դեռևս կարող է նոր պարզաբանումների, տե՛ս Քնարիկ Կորկոտյան, Նիկեյ Ոսկանյան, «Հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրությունը և նրա տարբերակը», *Էջմիածին*, 1966, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 168-175:

³ Մանրամասն տե՛ս *Էջմիածին*, 1966, նոյեմբեր-դեկտեմբեր, *Հասկ*, Պէյրոս, 1966, ք. 3-5, *Գլաձոր*, Անթիլիաս, 1967, Թ. Է. Ժ. Տարի, 1966-1967, *Սիոն*, Երուսաղեմ, 1966, ք. 2-3, *Բազմավէպ*, Վենետիկ, 1966, ք. 11-12, *Մարմարա*, Կ. Պոլիս, 1966, ք. 8101, 1-2 նոյեմբ., *Երաժշտահանդես* (26-րդ տարեկան ձեռնարկ նուիրուած Աստուածաշունչի հայերէն առաջին տպագրութեան 300 ամեակին), New York, 1966, *Տիրայր ծայրագոյն վարդապետ Տէրվիշեան*, *Երեքհարիւրամեակ հայերէն Աստուածաշունչի առաջին տպագրութեան*, Los Angeles, 1966:

⁴ Ոսկան Երևանցու կենսագրական հակիրճ ակնարկը տե՛ս Ներսես ծայրագոյն վարդապետ Պողոսյան, «Ոսկան վարդապետ Երևանցի», *Էջմիածին*, 1966, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 20-27, *Վարդան Գեղիկյան*, *Ոսկան վարդապետ Երևանցի* (կյանքը և տպագրական գործունեությունը), Երևան, 2015, էջ 82:

րեց համաշխարհային մակարդակի: Հայ իրականության մեջ առաջին անգամ փորձ արվեց ամբողջական կերպով տպագրության պատրաստել Աստվածաշունչ մատյանը, որը երկարատև և բարդ մի գործընթաց էր ոչ միայն տպագրական գործի առումով, այլև պատրաստի բնագիր ունենալու տեսանկյունից: Դյուրին չէր հեռավոր օտար ափերում Ամատերդամում, հիմնել հայկական տպարան՝ նախաձեռնելով հայերեն Աստվածաշնչի տպագրությունը, որն իրավամբ համարվում է հայ հին տպագրության գլուխգործոցներից մեկը:

Աստվածաշնչի տպագրության համար կարևոր նախադրյալ էր պատրաստի բնագիր ունենալը, ինչի մասին Ոսկանը նույնպես հոգացել էր: Լինելով Ուշի Սուրբ Սարգիս վանքի վանահայրը՝ նա այդ վանքից Եվրոպա էր բերել 1295 թ. Ստեփանոս գրչի ընդօրինակած Հեթում Բ.-ի աստվածաշնչյան ձեռագիրը⁵, որի վրա բավական աշխատել էր⁶ լրացրել լատիներենից թարգմանված մի քանի բնագրով⁷, տնատել և տպագրության վերջնական տեսքի բերել⁸: 1666 թ. մարտի 11-ին Ոսկանն իր աշակերտներ Կարապետ Անդրիանացու և Օհան Երևանցու հետ սկսում է Աստվածաշնչի տպագրությունը, որը տևում է 2 տարի 7 ամիս՝ մինչև 1668 թ. հոկտեմբերի 13-ը⁹:

Ոսկանյան Աստվածաշունչը բաղկացած է մոտ 1500 երկսյուն էջից կամ 3000 սյունակից: Տպագրությունը խնամքով է կատարված, սակայն զերծ չէ վրիպակներից ու սրբագրական աշխատանքների թերությունից: Տպագրության որակով էլ այս հրատարակությունը գերազանցեց մինչ այդ եղած հայոց բոլոր տպագրությունները՝ արժանանալով Գարեգին Զարբհանալյանի (1827-1901), Լեոյի (1860-1932), Արսեն Դազիկյանի (1870-1932), Գարեգին Լեոնյանի (1872-1947), Թեոդիկի (Թեոդորոս Լափչինճյան) (1873-1928), Ռաֆայել Իշ-

⁵ Այն այժմ պահվում է Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում 180 համարի տակ:

⁶ Հեթում բազավորի արքայական Աստվածաշնչի մասին առավել մանրամասն տե՛ս **Սուրեն Քոթանջյան**, «Հեթում Բ-ի ձեռագիր Աստվածաշունչը և ոսկանյան հրատարակությունը», *Էջմիածին*, 1966, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 103-109:

⁷ Դոմինիկյան միաբանության լատին կրոնավոր ֆարզիչ Պողոս Պիրոմալի Սիդեոնացին 1642 թ. այցելել է Հայաստան և ներկայացել Փիլիպպոս կաթողիկոսին: Էջմիածնում եղած ժամանակ Պիրոմալին Ոսկան Երևանցուն լատիներեն սովորեցրեց, իսկ վերջինս էլ նրան հայերենի դասեր ավանդեց: Ապա նա Ոսկանի հետ սկսեց համեմատել հայկական Աստվածաշունչը լատինականի հետ՝ միաժամանակ կատարելով անտեղի սրբագրումներ և այդպես հեռանալով Սուրբ Գրքի ոսկեդարյան թարգմանությունից: Տե՛ս **Առաֆել Սարուխան**, *Հոլանդացի և հայերը ԺԶ-ԺԹ դարերում*, Վիեննա, 1926, էջ 76-77, **Մ. Զամչեանց**, *Պատմութիւն հայոց*, հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 621:

⁸ Մանրամասն տե՛ս **Ս. Քոթանջյան**, «Հեթում Բ-ի ձեռագիր Աստվածաշունչը և ոսկանյան հրատարակությունը», էջ 109-126:

⁹ *Աստուածաշունչ*, «Յիշատակարան», տպագր. *Ոսկան Երևանցու*, Ամատերդամ, 1666-1668, էջ 833-834 (նույնի երկրորդ տպագրության էջ 807-808): Տե՛ս նաև «Հիշատակարան (Ոսկանյան Աստվածաշնչի)», *Էջմիածին*, 1966, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 14-15:

խանյանի (1922-1995), Նինել Ոսկանյանի (1923-2005), նաև եվրոպական մի շարք ուսումնասիրողների բարձր գնահատականին¹⁰:

Այս բոլորով հանդերձ, Ոսկանն ու նրա մտերիմներն ունեցել են նաև հակառակորդներ, զրպարտիչներ և քննադատներ: Ոսկանին մեղադրել են հայերեն Աստվածաշնչի «Յոթանասնից» հունարեն թարգմանությունից բնագրային, լեզվական շեղումներ անելու, հատկապես Աստվածաշնչի լատինական թարգմանությունը՝ Վուլգատային հետևելու համար: Քննադատությունների թիրախում են հայտնվել նաև Ոսկանի օգտագործած Քրիստոֆել Վան Զիխեմի¹¹ փորագրապատկերները, որոնց փայտափորագիր տախտակները գնել էր ոչ թե Ոսկանը, այլ՝ Մատթեոս Ծարեցին¹²: Ոսկան երևանցին ջանքեր էր գործադրել ոչ միայն Աստվածաշնչի բարձրորակ տպագրության համար, այլև ուշագրություն դարձրել նրա արտաքին ձևավորման վրա: Մի շարք օրինակներ նա հանձնել էր Հոլանդիայի գեղագետ-կազմարար Ալբերտ Մանգուսին՝ դրանց տալով կազմերի դրոշմվածների հայկական զարդեր ու պատկերներ¹³:

Հ. Անասյանը ցույց է տվել, որ Ոսկանի հրատարակած բնագրում Աստվածաշնչի հայերեն դասական թարգմանությունից բնագրային շեղումները շատ

¹⁰ Տե՛ս **Գարեգին Զարբհանալեան**, Պատմություն հայկական տպագրության սկզբնաւորութենէն մինչև առ մեզ, Վենետիկ, 1895, **Ա**, Հայկական տպագրութիւն: Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում, հտ. Առաջին, արտատպած Մշակ լրագրից, Թիֆլիս, 1901, **Ա**, երկերի ժողովածու տասը հատորով, հտ. հինգերորդ, Երևան, 1986, **Ա. Ղազիկեան**, Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի: Պրակ առաջին Ա-Խ, Վենետիկ, 1909-1912, **Գ. Առնյան**, Հայ գիրքը և տպագրության արվեստը: Պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը, Երևան, 1958: **Թեոդիկ**, Տիպ ու տառ (Հայ գրերու գիտին 1600-ամեակի յոթելեանին), Հալէպ, 2006, **Ռ. Իշխանյան**, Հայ գրքի պատմություն, նույնի՝ «Հայ հին տպագրության խոշորագույն դեմք», *Գիտություն և տեխնիկա*, 1988, ք. 9, էջ 34-40:

¹¹ Քրիստոֆել Վան Զիխեմ Կրասերը ԺՁ.-ԺԷ. դդ. հոլանդացի (ծագումով՝ գերմանացի) հայտնի գրանդուղ էր, իր ժամանակի շնորհաշատ նկարիչ-փորագրիչներից մեկը: Նրա ստեղծած շատ փորագրապատկերների վրա նշված է հեղինակի անվան (Christoffel van Sichem) սզկբնատառերով կապգիր-մակագրությունը՝ «CVS»: Տե՛ս **Հ. Քիստեան**, «Ոսկանի Աստուածաշնչային փայտափորագրեալ պատկերները», *Սրոն*, Երուսաղէմ, 1966, փետրվար-մարտ, էջ 105: **Արփինէ Սիմոնեան**, *Ոսկանեան Աստուածաշնչի պատկերները*, Ս. Էջմիածին, 2017, էջ 12-15:

¹² Տե՛ս **Ռ. Իշխանյան**, *Հայ գրքի պատմություն*, էջ 434:

¹³ Ներկայումս աշխարհի մի քանի գրադարաններում որպես շատ քանկագին ցուցանմուշներ, պահվում են Ալբերտ Մանգուսի շֆեղ կազմերով Ոսկանյան Աստվածաշնչի օրինակներից: Մեկը Վատիկանի կենտրոնական արխիվում է, մյուսը՝ Ֆրանսիայի ազգային գրադարանում: Մրանք այն օրինակներն են, որոնք Ոսկանը պաշտոնական ընդունելությունների ժամանակ նվիրել է Հռոմի Կլիմենտ Թ. Պապին և Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս ԺԳ-ին՝ սկզբում զետեղված լատիներեն հատուկ ուղերձով: Ուղերձի հայերեն թարգմանությունը տե՛ս **Խ. Սամվելյան**, «Ոսկան երևանցին ապավինում է Լյուդովիկոս XIV թագավորին», *Էջմիածին*, 2003, 2, էջ 61:

չեն, առավելաբար վերաբերում են արտաքին ձևին՝ զույգ Կտակարանների գրքերի դասավորությանը, տնատմանը և այլն: Լեզվական շեղումները, լատինաբանություններն այնքան էլ զգալի տոկոս չեն կազմում, և ընդհանուր առմամբ պահպանված է մեսրոպյան գեղեցիկ հայերենը: Իսկ փոքրաթիվ շեղումներն էլ պայմանավորված էին այն նրանով, որ բնագիրը Ոսկանը պատրաստել էր կաթոլիկ Իտալիայում տպագրելու համար¹⁴: Բացի դրանից՝ նա ավելացրել է պարականոն գրքեր՝ ձգտելով հարազատ մնալ Վուլգատայի կառուցվածքին:

Ոսկան Երևանցին Աստվածաշնչի բնագիրը համաձայնեցրել է լատիներեն թարգմանության հետ, նրա հետևությունները տեքստը բաժանել գլուխների ու տներին՝ ավելացնելով ցանկեր: Հայկական ձեռագիր Աստվածաշնչերում յուրաքանչյուր գիրք բաժանված էր փոքր գլուխների՝ համաձայն Ամոնյան կամ Եվթաղյան բաժանման: Ոսկանը կիրառեց Հոգունյան կոչված լատինական բաժանումը. յուրաքանչյուր գրքի գլուխներն ավելի ընդարձակ էին և համարակալված: «Առ ընթերցողսդ» խորագրով գրության մեջ նա մանրամասն խոսում է բնագրային այն տարբերությունների մասին, որոնց հանդիպել է Աստվածաշնչի հայերեն բնագիրը պատրաստելիս:

Այսպես, Ստեփանոս Լեհացու հետ լատիներենից թարգմանել է Սիրաքի երկրորդականոն գիրքը, քանի որ հայերեն թարգմանությունը լիակատար չէր: Ըստ Լեոյի վկայության՝ «Սիրաքի նոր թարգմանած գիրքն էլ կրում էր լատինամոլների բոլոր նորամուծությունները»¹⁵: Լատիներենից թարգմանել է նաև Չորրորդ Եզրասի գիրքը, որը խիստ հազվագեպ էր պատահում հայերեն լեզվով և տեղ չի գտել հայկական կանոնում: Նաև լատիներենից թարգմանել է աստվածաշնչական ցանկերը, որոնց օգնությամբ ընթերցողը հեշտությամբ կարող է գտնել իրեն հետաքրքրող սուրբգրային տեղիները: Գիրքն ունի 3 ցանկ՝ ա. «Յանգ վկայութեանց ի Քրիստոսէ և յառաքելոց ներ նորում կտակարանում համառօտեցելոց ի հնոյն» (էջ 760-765), բ. «Եբրայեցւոց, Քաղզէացւոց և Յունաց անուանց թարգմանութիւն» (էջ 765-773), գ. «Յանգ մատենական» (էջ 774-829): Վերջում գետեղել է մի քանի հատված թարգմանված Ս. Հերոնիմոսից, որոնք հավանաբար իր իսկ հեղինակած գործերն են¹⁶:

Գործն իրականացնելիս Ոսկանը մեծ նեղություն և տառապանք է կրել «ի սուտակասպասից և ի բարձրայօնից իմաստակաց, յեկեղեցականաց և յաշխարհականաց, մերձակայից և հեռաւորաց»: Սրան գումարվում էր Կաթոլիկ եկեղեցու խստապահանջ գրաքննությունը, որին միջնադարյան Եվրոպայում պատկանում էր գրատպության մենաշնորհը և որի ներկայացուցիչները խոշոր

¹⁴ Տե՛ս Գ. Զարբհանալեան, Պատմութիւն հայկական տպագրութեան, էջ 107-108:

¹⁵ Լեօ, Հայկական տպագրութիւն, էջ 268:

¹⁶ Տե՛ս Լեօ, Հայոց պատմություն, հտ. 3, Երևան, 1946, էջ 448:

տպարանատերեր էին: Որևէ կրոնական բնույթի գիրք տպագրվելուց առաջ պետք է անցներ գրաքննության ճանապարհով, և, եթե հայտնաբերվեր կաթոլիկ դավանանքին հակասող հատված, տպագրությունն արգելվում էր և վերատեսույթյան պիտի ենթարկվեր¹⁷:

Աստվածաշունչը պարունակում է այն գրքերը, որոնք ընդունելի են համարվել եկեղեցական համապատասխան ժողովների կողմից¹⁸: Նախապես Հին կտակարանն ընդգրկել է եբրայական կանոնի 22 գրքերը, որոնց համապատասխանում են ներկայիս նախականոն 39 գրքերը¹⁹, որոնցից էլ ծագում է հինկտակարանյան հայկական կանոնը՝ ասորերեն թարգմանության՝ Պեշիթոյի միջնորդությամբ: Մինչդեռ հունարեն «Յոթանասնից»-ը, բացի վերոհիշյալ նախականոն գրքերից, ընդգրկում է նաև եբրայական կանոնից բացակա երկրորդականոն գրքեր, որոնք առկա են նաև հայկական կանոնում:

Նախականոն գրքերի թվում են նաև եզրի (եզրասի) Բ. և Գ. գրքերը: Գ. եզրասի գիրքը հայկական կանոնում հայտնի է նաև որպես Գիրք Նեեմիայի: Ա. եզրասի գիրքը տեղ է գտել երկրորդականոն գրքերի ցանկում, որը համապատասխանում է Ուղղափառ եկեղեցու կանոնի Բ. եզրասի գրքին, իսկ Վուլգատայում, որտեղ եզրասի և Նեեմիայի գրքերն անվանվում են Ա. և Բ. եզրասի գրքեր, այն հիշատակվում է միայն հավելվածում՝ որպես Գ. եզրասի գիրք: Կանոնում տեղ չունի նաև Մանասեի աղոթքը: Դ. եզրասի կամ եզր-Սաղաթիելի գիրքը Սիրաքի գրքի հետ տեղ է գտել Վուլգատայի հավելվածում: Ընդհանուր առմամբ, Ոսկանն իր Աստվածաշնչի համար հետևել է հին եկեղեցիների ընդունած «Յոթանասնից» Աստվածաշնչի կանոնին՝ զիջելով միայն Ա. և Գ. եզրասի գրքերի հարցում²⁰: Ոսկանը Ա. եզրասի գիրքն ընդգրկել է հայերեն որոշ ձեռագիր Աստվածաշնչերի հետևողությամբ, իսկ Դ. եզրասի գիրքը թարգմանաբար վերցրել է Վուլգատայի հավելվածից:

Տարածված կարծիք կա, որ ԺԳ. դարում Աստվածաշնչի հայերեն թարգմանության բնագիրն սկսել էր խաթարվել Վուլգատայի ազդեցության տակ: Դա

¹⁷ Տե՛ս Ռ. Իշխանյան, «Ոսկանյան տպարանը և նրա հրատարակած Աստվածաշունչը», էջ-միածին, 1966, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 137-138:

¹⁸ Աստվածաշնչական գրքերի կանոնի մասին տե՛ս նաև Գ. Գարբինյան, *Ներածություն Հին կտակարանի*, Ս. էջմիածին, 2000, էջ 11-22:

¹⁹ Ք.ա. Գ. դարում հրեա Բանանա և օրենսգետ եզրասը համադրեց Հին կտակարանի եբրայական կանոնի գրքերը և հաստատեց դրանց ցանկը: Հրեաները կամեցան իրենց Սուրբ Գրքի 39 կանոնական գրքերը հարմարեցնել սեփական այբուբենի 22 տառերի թվին: Ուստի մի շարք գրքեր միավորեցին, և ստացվեց 22 գիրք: Եբրայական կանոնը ցարդ անփոփոխ է:

²⁰ «Յոթանասնից» կանոնում հիշվող Ա. և Բ. եզրասի գրքերը համապատասխանում են Աստվածաշնչի հայկական կանոնի Բ. եզրասի և Նեեմիայի (Գ. եզրաս) գրքերին:

կապում են Կրիկյան Հայաստանի Հեթում Բ. թագավորի հետ²¹: Այդ ազդեցության արտահայտությունը լատինական գլխաբաժանումների ներմուծումն էր, որը վերջնական տեսքի բերվեց 1295-ին Հեթումի համար գրված «արքայական» Աստվածաշնչում²²:

Բացի դրանից՝ հայերեն բնագիրը սրբագրվել ու խմբագրվել է Վուլգատայի հիման վրա²³: Առաջին անգամ այս ձեռագրում է Սիմաքոսի երբայական լուսանցային ընթերցվածը տեղափոխված աստվածաշնչական բնագրի մեջ, ինչպես Վուլգատայում է: Այդուհանդերձ, վերջինս չի կարելի համարել բնագրային իրական փոփոխություն, քանի որ Սիմաքոսի ընթերցվածն այնտեղ համատեղված է հին ընթերցվածի հետ: Ուստի սա բավարար հիմք չէ պնդելու համար, թե Հեթում Բ.-ն խաթարել է Աստվածաշնչի հայերեն թարգմանության բնագիրը²⁴:

Մ. Վ. Լա Կրոզը (ժ.Ն.-ժ.Ը. դդ.) պնդում էր, որ Ոսկանյան Աստվածաշնչի բնագրում Վուլգատայի հիման վրա բնագրային խախտումների հեղինակը ոչ թե Ոսկան Երևանցին է, այլ Հեթում թագավորը, ով անգամ թարգմանել է Հերոնիմոսի նախադրություններն ու առաջաբանը: Մինչդեռ Հակոբ Անասյանն այդ աշխատանքը վերագրում է հենց Ոսկան Երևանցուն, քանի որ Հեթումի ձեռագրում դրանք բացակայում են²⁵: Համաձայն Լա Կրոզի՝ հեթումյան այս ձեռագիրն այնուհետև հիմք էր հանդիսացել Աստվածաշնչի հետագա ընդօրինակությունների համար: Ուստի հայերեն Աստվածաշնչի անեղծ բնագիրը գտնելու համար այն հարկ է փնտրել նախահեթումյան շրջանում ընդօրինակված ձեռագրերում²⁶: Սակայն Ոսկանյան Աստվածաշնչի համեմատությունը Հեթում Բ.-ի Աստվածաշնչի հետ ցույց է տալիս, որ վերջինս անաղարտ պահպանել է «Յոթնանանից»-ից արված հին թարգմանությունը²⁷:

Ոսկան Երևանցին իր Աստվածաշնչի բնագիրը պատրաստելիս թեև հիմք է ընդունել Հեթում Բ.-ի Աստվածաշնչի «արքայական» ձեռագիրը, սակայն լիո-

²¹ Հեթում Բ. թագավորն իր փաստացի կառավարման 18 տարիների ընթացքում վեց անգամ հրաժարվեց գահից՝ մտնելով վանք և նույնքան անգամ էլ վերադարձավ արժունիք: Ի վերջո, նա ընդունեց կաթոլիկ դավանանք և, հարելով ֆրանցիսկյան միաբանությանը, լքեց պետության կառավարումը: Միաժամանակ նա երկրում գլխավորում էր լատինասերների հոսանքը՝ պահանջելով, որ հայերը նույնպես ընդունեն կաթոլիկություն:

²² Ս. Քոբանջյան, «Հեթում Բ-ի ձեռագիր Աստվածաշնչը և ոսկանյան հրատարակությունը», էջ 103:

²³ Նույն տեղում, էջ 129:

²⁴ Տե՛ս Հ. Անասյան, «Աստվածաշնչի մատյանի հայկական բնագիրը», էջ 83, նույնբեր-դեկտեմբեր, էջ 83:

²⁵ Նույն տեղում, էջ 84:

²⁶ Նույն տեղում, էջ 85:

²⁷ Նույն տեղում, էջ 84-85:

վին հարազատ չի մնացել վերջինիս՝ մի շարք փոփոխություններ մտցնելով Վուլգատայի հետևողությամբ: Մասնավորապես այդ խմբագրումների զոհ են դարձել Ղևտական Գ. 16, Առական Լ. 30, Սաղմոսների ԿԳ. 7, Բարուքի Ա. 17, Հոռմեացիս Ը. 38, Ա. Կորնթացիս ԺԲ. 29 և մի շարք այլ սուրբգրային համարներ: Բացի դրանից՝ Հեթումի ձեռագրում ամենուրեք պահպանված են հատուկ անունների դասական ձևերը, որոնք նույնը չեն Ոսկանի հրատարակության մեջ: Այսպես, «Յովսիա»-ն դարձել է «Յոսիա», «Յովհաննէս»-ը՝ «Յոհաննէս», «Յովսէփ»-ը՝ «Յոսէփ», «Մովսէս»-ը՝ «Մոսէս», «Ահարովն»-ը՝ «Ահարոն», «Աեգովր»-ը՝ «Աեգոր», և այլն²⁸:

Միքայել Չամչյանը նկատում է, որ Ոսկանը «նախ՝ թարգմանեաց ի լատինէ ի հայս այլատարազ իմն շարագրութեամբ զգիրս Չորրորդ եզրասայ և զգիրս Յեսուայ որդու Սիրաքայ», «այլայլեաց և զբանս Աստուածաշնչին՝ բաղդատելով զայն ընդ լատինականին. և այս այն է՝ զոր արար ընդ Պողոս կրօնաւորի Լատինացուց», «փոփոխեաց զշարագրութիւնս իւրաքանչիւր գրոց ըստ նոր ոճոյ ոմանց, բաց ի Սաղմոսէն. թէպէտև յայն ևս հասոյց ձեռն. որով և եղծաւ քաղցրութիւն քերթուածոց նոցին»²⁹: «Խանգարված» այս բնագիրն էր, որ տեղ գտավ 1666-1668 թթ. Ամստերդամում հրատարակված հայերեն առաջին տպագիր Աստվածաշնչում:

Ոսկան երևանցին վկայում է, որ Հեթումի գրչագիրը չէ իր հրատարակության նախագաղափարը: Ինքն էր պատրաստել բնագիրը, և իրեն ծանոթ են եղել գլուխների բաժանումներ պարունակող այլ ձեռագրեր, ինչպես Շոշում ընդօրինակված Ղազար վարդապետ Վալաքացու (Բաբերդացու)³⁰ Վուլգատայի հիման վրա խմբագրած Աստվածաշնչը³¹ և այլն³²: Այն տարբերվում է Աստվածաշնչի դասական թարգմանությունների բնագրից, որն արվել էր հունարեն «Յոթանանից»-ից: Ոսկանը չի ընդգրկել «արքայական» ձեռագրում հանդիպող եվթաղի աղերսը, Եպիփանի գրությունը, Պողոս առաքյալին ուղղված կորնթացիների նամակը և Պողոս առաքյալի երրորդ նամակը՝ ուղղված կորնթացիներին: Այս գրքերի փոխարեն Ոսկանը Աստվածաշնչի Հին կտակարանի բաժնում ներառել է իր թարգմանած Սիրաքի գիրքը, իսկ հավելվածում

²⁸ Նույն տեղում, էջ 86-87:

²⁹ Մ. Չամչյանց, Պատմութիւն հայոց, էջ 660:

³⁰ Նրա մասին տե՛ս Գրիգորիս վարդապետ Գալսեֆեարեանի ընդարձակ ծանոթագրությունը, ՀԱ, 1906, էջ 227, նաև Պետրոս Տէր-Պողոսեան, «Ղազար վարդապետ Բաբերդացի», ՀԱ, 1966, էջ 17-30, 129-140:

³¹ Այս Աստվածաշնչը և նրա՝ Թորոս գրագրի ընդօրինակությունն այժմ ՄՄ 201 և ՄՄ 351 ձեռագրերն են:

³² Տե՛ս Ս. Քոբանջյան, «Հերոս Բ-ի ձեռագիր Աստվածաշնչը և ոսկանյան հրատարակությունը», էջ 107:

տեղ են գտել Մանասեի աղոթքը և Չորրորդ եզրասի գիրքը՝ դարձյալ թարգմանված Վուլգատայից: Ոսկան Երևանցին Պողոս Պիրոմալիի հետ Հեթումի ձեռագրի լուսանցքերում «օտար գրչով» համաբարբառ են ավելացրել, տողամեջ սրբագրություններ արել, տնատեղ՝ շատ տեղերում լատիներենի հետևողություններ աղճատելով «արքայական» օրինակը և կամայական փոփոխություններ մտցնելով բուն ձեռագրի մեջ³³: Աստվածաշնչի գրքերը նա դասավորել է լատիներենի համեմատ, հայերեն ձեռագրի մեջ եղած ցանկերի ու նախագրությունների փոխարեն լատիներեն Աստվածաշնչից թարգմանել է մի քանի բացատրական հավելվածներ ու ցանկեր: Միքայել Չամչյանը, Հովհաննես Զոհրայանը և ուրիշներ քննադատել են այդ աշխատանքը՝ անգամ այն անվանելով «խառնարան»³⁴: Փորձենք բացատրել Ոսկանի Աստվածաշունչը Վուլգատային համապատասխանեցնելու պատճառը:

Ոսկանը պատրաստվում էր Աստվածաշունչը հրատարակել որևէ կաթոլիկ երկրում, սակայն Կաթոլիկ եկեղեցին հայ եկեղեցական գրականության հանդեպ կիրառում էր խիստ գրաքննություն: Ուստի Կաթոլիկ եկեղեցու բարեհաճությունը շահելու և Աստվածաշնչի տպագրության արտոնությունն ստանալու համար նա ստիպված էր անել այդ փոփոխությունները: Ոսկանը ցանկանում էր, որ իր հրատարակած Աստվածաշունչը դառնար հայության բոլոր հատվածների սեփականությունը, այդ թվում և՛ կաթոլիկ համայնքի, որն այդ ժամանակ բավական ազդեցիկ էր³⁵: Ուստի Հռոմ ուղարկվեց Ոսկանի օգնական Կարապետ վարդապետը՝ նորատիպ Աստվածաշնչի մի օրինակ «Հավատո տարածման» ժողովի³⁶ քննությանը ներկայացնելու համար, «որպեսզի առաքելական հաւանութեան կնիքով օժտուի եւ Հռոմէական եկեղեցուն միացած հայերն էլ առանց մոլորութեան վտանգի կարենան կարդալ»³⁷:

³³ Տե՛ս Կ. Տէր-Մկրտչեան, «Աստուածաշունչի նոր հրատարակութիւնը», Արարատ, 1902, ժԱ-ԺԲ, էջ 1070-1071:

³⁴ «Աստուածաշունչ իւր՝ ըստ իմաստիցն ձեւացաւ խառնարան այլ եւ այլ թարգմանութեանց՝ հելլենականին եւ լատինականին. իսկ ըստ քերթողական արուեստին՝ խառնաձայնութիւն նախնի հայկական վայելչաբանութեան՝ ընդ նորահնար օտարալուր բարբառոյ»: **Նույն տեղում**, էջ 8:

³⁵ Այդումանդերձ, լվովահայ կաթոլիկ համայնքի հոգևոր ղեկավարները ֆինադատաբար ընդունեցին նրա Աստվածաշունչը:

³⁶ «Հավատո տարածման» (լատ. *De Propaganda fide*) ժողովը հիմնադրվել է 1622 թ. Հռոմի Գրիգոր ԺԵ. Պապի կողմից՝ կաթոլիկ հավատքը փարոգելու նպատակով:

³⁷ Archivio della Propaganda Fide, Rome, *Scritture referite nei S. Congressi*, Vol. 419. fol. 315. Հմմտ. Ա. Սարուխան, *Հոլլանդան և հայերը ԺՁ-ԺԹ դարերում*, էջ 81-82:

Ուշագրավ է Ամստերդամում 1668 թ. նոյեմբերի 15-ին գրված Ոսկանի լատիներեն նամակը³⁸ Կղեմես Թ. Քահանայապետին: Ոսկանը, «խոնարհված նրա երանելի ոտքերի առջև», Պապին տեղեկացնում էր Ամստերդամում իրականացրած Աստվածաշնչի առաջին տպագրության մասին. «Հոգացի՞ որքան հնարավոր է, անսխալ լինեն օրինակները՝ ի փառս մեծն Աստծու, ի տարածումն Կաթողիկե եկեղեցու և հօգուտ մեր Հայկազյան ազգին: Սրանցից մի օրինակ՝ որպես հիշատակ իմ մեծագույն հնազանդության և հպատակության ու հարգանքի հոժարության, և՛ ցանկացա, և՛ պարտք համարեցի խոնարհաբար ուղարկել ու նվիրել Ձերդ Սրբությանը՝ մեղմաձայն աղերսելով, որ ինձ՝ եպիսկոպոսների մեջ հետինիս, և իմ հայ ազգիս՝ ճշված թուրքերի ծառայության լծի տակ, արժանացնես Քո ողորմածությանն ու շնորհներին»³⁹ ... Ապա նույն քահանայապետին գրած 1669 թ. հունվարի 1-ի նամակում⁴⁰, ավելի շատ մեծարանքի խոսքեր շռայլելով, երախտագիտություն է հայտնում պապին, որ «մինչ Պետրոսի Գահից՝ Ձերդ ամենաբարձր դիտանոցից, դիտում ես աշխարհի ծագերը, իմ կարիքներն էլ տեսար և օգնեցիր ինձ, որ Ամստերդամում ինքս ինձ նվիրել էի գրին ու գրականությանը»: Ապա Ոսկանն իր հնազանդությունն է հայտնում ինչպես Հռոմի պապի գերագահությանը՝ նրան անվանելով «տիեզերական Հովիւ ... որ փոխանորդն է Հովիվների Իշխանի...», այնպես էլ՝ Քաղկեդոնի ժողովի վճիռներին ու հավատքին՝ դատապարտելով «եվտիքեսի ամբարիշտ վարդապետությունն ու Դիոսկորոսի սրբապիղծ արարքները»:

Ոսկան երևանցին նպատակ ունեւր իր տպագրած Աստվածաշնչի տարածման միջոցով հայ գրի հետ կապել հայկական բաժանված գաղթավայրերում ձուլման ենթակա մեծաթիվ դավանափող հայերին: Սակայն այն չէր կարող տպագրվել Վատիկանի Ուրբանյան տպարանում ոչ միայն դավանաբանական գրաքննության, այլև հայերեն այդպիսի մի բարդ բնագրի հետ կապված խմբագրական, սրբագրական և տպագրական հնարավորությունների պակասի պատճառով⁴¹: Իսկ Լվովի քարոզիչները ատելությանմբ էին լցված Ոսկանի գործունեության հանդեպ, անգամ նրան արգելեցին որևէ գիրք վաճառել, «քանզի էին ի մատենին բանք բազումք անպատշաճք զլատինացւոց և զհռովմէական հաւատոց, այլև գովութիւնք ուռուցիկք վասն այլադաւան Հայոց»⁴²:

³⁸ Լատիներեն բնագիրն ու հայերեն թարգմանությունը տե՛ս Պօղոս Անանեան, «Ոսկան վարդապետի նամականին», *Բազմավէպ*, 1966, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 294-295:

³⁹ **Նույն տեղում**, էջ 295: Արևմտահայերեն մեջբերումը ներկայացրել ենք արևելահայերեն փոխադրությամբ:

⁴⁰ Լատիներեն բնագիրն ու հայերեն թարգմանությունը տե՛ս **նույն տեղում**, էջ 295-296:

⁴¹ **Տե՛ս Ռ. Իշխանյան**, «Ոսկանյան տպարանը և նրա հրատարակած Աստվածաշունչը», էջ 138:

⁴² *Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ*, Պետերբուրգ, 1884, էջ 215-216:

Անգամ բողոքական ազատամիտ, այսպես կոչված «հերետիկոսական» Հռոմի հակառակը Ռսկանը տպագրեց ոչ թե Աստվածաշնչի դասական բնագիրը, այլ Վուլգատային հարմարեցված տարբերակը, քանզի այստեղ էլ նա հանգիստ չէր կարող գտնել լատին գրաքննիչների սպառնալիքներից:

«Հավատո տարածման» ժողովի նախագահին 1670 թ. նոյեմբերի 17-ին իր հղած իտալերեն նամակում⁴³ նա առիթը բաց չի թողնում գովերգելու Կաթոլիկ եկեղեցին, ինչի հետևանքով հալածվել է ոչ միայն հայոց կաթոլիկոսից, եպիսկոպոսներից, անգամ իր արյունակիցներից, և, տեղից տեղ փախչելով, հասել է Հռոմ, որտեղ չհաջողելով իրականացնել տպագրությունը՝ մեկնել է Ամստերդամ: Թեև իր կարողացածի շահով Աստվածաշունչը վերածնվել է Վուլգատայի համաձայն, սակայն Հնգամատյանին ու պատմական գրքերին հասնելով՝ քաջություն չի ունեցել դրանք ևս փոփոխել: Իսկ տպագրական ծախսերը հոգում էր պարտքերի գնով⁴⁴: Մարգարեական գրքերում Վուլգատայից տարբերությունները քիչ էին, ուստի դրանք բոլորը, Նոր կտակարանի հետ միասին, Ռսկանն ուղղել է և հարմարեցրել Վուլգատային՝ որոշ գրքեր նորովի թարգմանելով:

Նամակում նշում է, որ վախենալով, թե իրեն փոխարինելու համար հայոց կաթոլիկոսն ուրիշ վարդապետ կուղարկի Ամստերդամ, տպարանը տեղափոխում է կաթոլիկ երկիր՝ որպես ավելի ապահով մի վայր: Հասնում է Փարիզ և, գտնելով Լյուդովիկոս ԺԴ. Թագավորի բարեհաճությունը, ցանկանում է այդտեղ շարունակել իր գործը: Սակայն Վատիկանի ժողովի հրավերով տեղափոխվում է Լիվոռնո: Այստեղ էլ զրկանքներ է կրում, իսկ ապրուստը հոգում է պարտքերով, որոնք պիտի մարեր մաքսատանն ի պահ տված 20 օրինակ Աստվածաշնչի վաճառքի եկամուտով, սակայն հավատաքննության ժողովի Լիվոռնոյի տեղապահը հափշտակում է այդ գրքերը՝ այն պատրվակով, թե այնտեղ կան պարականոն գրքեր: Ռսկանի համար այս պատճառաբանությունն անհասկանալի էր, քանի որ լատինական հին Աստվածաշնչերի մեջ նույնպես պատահում են ոչ կանոնական գրքեր: «Եթե գրաքննության արգելքն այն բանի համար է, որ հայերեն Աստվածաշունչը տարբերվում է Վուլգատայից, ապա «Յոթանասնից» թարգմանությունն էլ է տարբերվում Ս. Հերոնիմոսի թարգմանությունից, ինչպես մյուս բոլոր թարգմանությունները՝ եբրայականը, հունականը, քաղղեականը, որոնք ունեն տարբերակներ. և սակայն դրանցից ոչ մեկի վրա արգելք դրված չէ»⁴⁵:

Սակայն կա մի առեղծվածային հանգամանք: Խոսքը Ռսկանյան Աստվա-

⁴³ Իտալերեն բնագիրն ու հայերեն թարգմանությունը տե՛ս Պ. Անանեան, «Ռսկան վարդապետի նամականիք», էջ 299-301:

⁴⁴ Տե՛ս Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, էջ 471:

⁴⁵ Պ. Անանեան, «Ռսկան վարդապետի նամականիք», էջ 301:

ծառնչի մեկից ավելի տպագրությունների մասին է: Մեզ հայտնի Աստվածաշունչը բաղկացած է 8 չհամարակալված, 628 (ոիր), 834 (պլդ) էջերից՝ երկսյուն զույգ էջակալությամբ, տառային և թվային համարներով: Անհասկանալի պատճառով առաջին էջակալությունն սկսվում է Հին կտակարանի Ծննդոց գրքով և ավարտվում Երրորդ Մակաբայեցիների գրքով (1-628 էջեր), որն, ի դեպ, բացակայում է լատինական Վուլգատայի կանոնից⁴⁶, իսկ երկրորդ էջակալությունն սկսվում է Հին կտակարանի Հոբի գրքով և ավարտվում Նոր կտակարանով, նրան կից «Յաւելուած»-ով, ցանկերով և «Յիշատակարան»-ով (1-834 էջեր): Յուրաքանչյուր էջակալություն ունի առանձին մամուլանիշեր՝ աչ էջերի երկրորդ սյունակի տակ: Մեկ մամուլը 4 թերթ կամ 8 էջ է: Ողջ գրքում նոր մամուլի սկզբում աչ էջի ձախ սյունակի ներքևում գրվում է մամուլի հերթական համարը, իսկ աչ էջի աչ սյունակի ներքևում այդ թվի տառային համարժեքը: Միայն առաջին էջակալության առաջին և երկրորդ մամուլներում մամուլների թվահամարը և հայկական տառը գրված են կողք կողքի:

Բացի այս տարբերակից՝ Ոսկանը հրատարակության է պատրաստել մեկ այլ բնագիր՝ բաղկացած 8 չհամարակալված, 628 (ոիր), 808 (պլ) էջերից: Այս տարբերության մասին առաջինը նկատել է դրամագետ Փոլ Զավեն Պտուկյանը⁴⁷: Համեմատելով իր ունեցած երկու Ոսկանյան Աստվածաշունչ գրքերը՝ նա պարզել է, որ մեկը մյուսից պակաս է 26 էջով: Հավանաբար չկարողանալով գտնել հարցի պատասխանը՝ նա մանրաժապավենի վրա պատճենել է իր մոտի «պակասավոր» օրինակը և ուղարկել Հանրային գրադարանի (ներկայումս՝ ՀԱԳ) Հայ գրքի մատենագիտության բաժին՝ ուսումնասիրելու համար⁴⁸: Հայ հնատիպ գրքի մասնագետներ Նինել Ոսկանյանի և Քնարիկ Կորկոտյանի մի հողվածում⁴⁹ ներկայացված են երկու տարբերակի՝ առաջին հայացքից աչքի զարնող տարբերությունները՝ երկրորդ էջակալության 719-րդ էջից սկսած բովանդակային և «Յիշատակարան»-ի վերջին էջի բնագրային որոշ անհամաձայնություններ (կցված են այդ էջերի լուսապատճենները): Մենք նկատել ենք նաև այլ տարբերություններ:

⁴⁶ Աստվածաշնչի հայկական կանոնում Ա., Բ., Գ. Մակաբայեցիների գրքերը, ինչպես նաև Ա. Եզրասի, Հուդիթի, Տոբիթի, Սողոմոնի Իմաստության, Սիրաբի և Թուլթ Բարուբի գրքերը համարվում են երկրորդականոն:

⁴⁷ 2000 թ. Պտուկյանն իր հազվագյուտ մետաղադրամների և անձնական գրադարանի, այդ թվում՝ հնատիպ գրքերի հավաքածուն նվիրաբերել է Ամերիկայի հայկական թանգարանին, տե՛ս “Donation of Bedoukian Coin and Library Collection”, <https://www.armenianmuseum.org/history/> (ստ 08.09.2017): Թանգարանի հասցեն է՝ **Armenian Museum of America**: 65 Main Street, Watertown, MA 02472, USA:

⁴⁸ 1666 թ. Ոսկանյան Աստվածաշնչի երկրորդ տարբերակի մանրաժապավենը կրում է № 005411 արտադրական համարը և 467 ԱՀ գրադարանային գրանցահամարը:

⁴⁹ Տե՛ս Ք. Կորկոտյան, Ն. Ոսկանյան, «Հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրությունը և նրա տարբերակը», էջ 168-175:



Նկ. 1
Հայաստանի ազգային գրադարանի օրինակը



Նկ. 2

Երուսաղեմի Կյուպենկյան Մատենադարանի օրինակը

Պակասավոր այդ էջերը վերաբերում են Նոր կտակարանի հավելվածին, որտեղից գգուշորեն դուրս են թողնված «Աղօթք Մանասէի արքայի Յուզայի» և «Գիրք Եզրասայ չորրորդ» հատվածները՝ վերցված Վուլգատայի հավելվածից, քանի որ պարականոն գրքեր են: Դ. Եզրասի գրքի մասին Ոսկանը վկայում է, որ այն մեր Աստվածաշնչում գոյություն չունի, միայն Սաղմոսավանքի որոշ ձեռագրերում՝ ծայրաքաղ արված, ուստի ցանկերի հետ մեկտեղ այն ևս թարգմանել է լատիներենից և ներմուծել Աստվածաշնչում, նաև նշում, որ լատիներենի մոտ այս գիրքը համաձայնություն չունի լատին կանոնի հետ⁵⁰: Ուս-

⁵⁰ Աստուածաշունչ, «Առ ընթերցող», տպագր. Ոսկան Երևանցու, էջ 832 (նույնի երկրորդ տպագրության էջ 806), նաև «Առ ընթերցող», էջմիածին, 1966, նույնբեր-դեկտեմբեր, էջ 12:

տի Վուլգատայում այն դարձյալ դրված է Աստվածաշնչի հավելվածում Գ. Եգրասի⁵¹ գրքի հետ:

«Պակասավոր» այս Աստվածաշունչը չունի էջակալման խախտում: Ոսկանը ոչ թե տպված Աստվածաշնչից պոկել-հանել է Մանասեի աղոթքն ու Գ. Եգրասի գիրքը, այլ նախապես պահած լինելով իր տպած Աստվածաշնչի շարվածքը՝ գաղտնաբար դուրս է թողել հիշյալ երկու պարականոն գրքերը և փոխել էջակալումը: Թերևս Ոսկանը ցանկացել է ձեռքագատվել լատինամոլի հավանական պիտակից՝ Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական կենտրոններին ու հայաշատ համայնքներին տրամադրելով հայկական կանոնի համաձայն տպված Աստվածաշունչ: Իսկ առաջին տպագրությամբ փորձել էր շահել Լատին եկեղեցու և կաթոլիկ համայնքների բարեհաճությունը:

Այս փոփոխությունն այսօր էլ հայ հնատիպ գրքի շատ ուսումնասիրողների տեսադաշտից դուրս է մնացել և տեղ չի գտել մատենագիտական որևէ ցանկում՝ իբրև առանձին տպագրություն, քանի որ նրանց հասու չի եղել երկրորդ տարբերակի բնօրինակը: Մինչդեռ երկարատև պրպտումների շնորհիվ կարողացանք վեց գրադարանում գտնել Ոսկանյան Աստվածաշնչի երկրորդ տարբերակի՝ առաջին տպագրությունից տարբերվող ամբողջական կամ թերի օրինակներ⁵², որոնք բավարար հիմք են առանձին նկարագրությամբ այն ընդգրկելու մատենագիտական ցանկերում:

Հայաստանի որևէ գրադարանում չգտանք Ոսկանյան Աստվածաշնչի երկրորդ տարբերակի տպագիր (կամ գեթ թվայնացված) ամբողջական օրինակ: Մեզ հաջողվեց պարզել, որ երկրորդ տարբերակի՝ Զ. Պտուկյանի հավաքածուի նմուշը, ի թիվս նրա հավաքածուի մյուս կտորների, պահվում է Բոստոնին մերձակա Ուոթերթաունի հայկական թանգարանում, որտեղ առկա է հինգ Ոսկանյան Աստվածաշունչ⁵³: Ոսկանյան Աստվածաշնչի երկրորդ տարբերակի տպա-

⁵¹ Լատինաց Գ. Եգրասի պարականոն գիրքը հայկական կանոնում Ա. Եգրասի երկրորդականոն գիրքն է:

⁵² Երկրորդ տարբերակի օրինակները բացահայտելու նպատակով Հայաստանի և արտերկրի գրադարան-մատենադարաններում «առ աչօք» (լատ. *de visu*) կամ նամակագրական կապով և խնդրո առարկա էջերի լուսանկարների փոխանակմամբ ուսումնասիրվել են հարյուրի հասնող Ոսկանյան Աստվածաշունչ գրքեր, իսկ այլ գրադարաններում ուսումնասիրությունը թողել ենք մոտ ապագային: Հանրային և անձնական գրադարաններում, նաև թանգարաններում Ոսկանյան Աստվածաշնչի առկայության մասին տե՛ս Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, էջ 50:

⁵³ «Bedoukian Hall» սահմում ցուցադրվող Պտուկյանի օրինակի տիտղոսաթերթին կա ձեռագիր մակագրություն՝ «յիշ[ա]տ[ա]կե ի դոտն ս[ու]ր յ[ա]կ[ո]բայ Ե[րուսաղե]մ», իսկ վերևի մասում համարակալված է «-17-»: Տիտղոսաթերթն ունի նաև կնիք. «Յիշատակ ... Սրբոց Յակովբեանց ... 1687», նաև անընթեռնելի բառեր: Ըստ այդմ՝ սույն օրինակը Ամստերդամից հասել է Երուսաղեմ, պահվել Սրբոց Հակոբյանց վանքում, ապա անհայտ ուղիներով հանգրվանել Պտուկյանի հավաքածուում: Տե՛ս նաև Special Collections - Early printings, <https://www.armenianmuseum.org/library/> (ստ 17.09.2017):

գիր մյուս օրինակը պահվում է Սրբոց Հակոբյանց վանքի Կյուլպենկյան մատենադարանում: Մեզ հաջողվեց պարզել, որ այդ տարբերակի մեկական օրինակ կա Երևանի, Էջմիածնի, Երուսաղեմի, Նոր Զուղայի և Վենետիկի հայկական մատենադարաններում⁵⁴, ընդ որում Երևանի, Էջմիածնի ու Նոր Զուղայի օրինակները սկզբից կամ վերջից թերի են: Մինչ օրս հնարավոր չեղավ ճշտել այդ տարբերակի առկայությունը Զմմաուի Արծիվյան հայ կաթողիկե միաբանության մատենադարանում:


Աստվածաշնչի առաջին մեծաքանակ տպագրության համեմատ երկրորդն այնքան սակավաթիվ է եղել, որ հետքերն այսօր հազիվ են նշմարվում: Քիչ տպաքանակի պատճառներից մեկն այն էր, որ այն հույժ գաղտնի պայմաններում էր կատարվել, և օրինակներ են նվիրաբերվել միայն հատուկենտ երևելի անձանց (կաթողիկոս, պատրիարք) ու Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական Աթոռներին: Սակայն ուսումնասիրության է կարոտ՝ արդյո՞ք Ոսկանը երկրորդ խմբագրության մեջ հարազատ է մնացել սահակ-մեսրոպյան թարգմանության բնագրին, թե՞ պահպանել է Աստվածաշնչի առաջին խմբագրության լատինացված տարբերակը՝ միայն հանելով Մանասեի աղոթքն ու Դ. Եզրասի գիրքը:

Առաջին տպագրության օրինակների «Յիշատակարան»-ում երկրորդի «Յիշատակարան»-ի համեմատ կան բնագրային տարբերություններ (տե՛ս ստորև ցանկերը): Մեզ հաջողվել է պարզել, որ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի անձեռնմխելի ֆոնդում պահվող 22 Ա79 գույքահամարով և Ա/872 դասիչով Աստվածաշունչը վերջանում է 832 (պլբ) էջով («Յիշատակարան»-ի 833-րդ և 834-րդ էջերը բացակայում են), որին կցված են Աստվածաշնչի երկրորդ տարբերակի մեկ այլ օրինակի «Յիշատակարան»-ի 807 (պէ) և 808 (պը) էջերը:

Նույն իրավիճակն է Օքսֆորդի համալսարանի Կինքոլնի քոլեջի գրադարանում պահվող K.9.34 դասիչով և N12079402 գծիկավոր կողով օրինակում⁵⁵: Այս երկրորդ տարբերակի «Յիշատակարան»-ի, ինչպես նաև Վենետիկում պահվող երկրորդ տարբերակի «Յիշատակարան»-ի 808-րդ էջում չկան բնագրային այն տարբերությունները, որոնք առկա են երկրորդ տարբերակի այլ օրինակների (Երևանի Մատենադարան, Ուոթերթաուն, Երուսաղեմ) «Յիշատակարան»-ների 808-րդ էջում, այլ նույն տեքստն է, որն առկա է Ոսկանյան Աստվածաշնչի առաջին տարբերակի «Յիշատակարան»-ներում:

⁵⁴ Չկա Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի «Օրմանյան» գրադարանում, Վիեննայի Մխիթարյան հայկական մատենադարանում և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի թանգարանում:

⁵⁵ Տե՛ս Բողլեյան գրադարանի կայքէջում՝ [Bible in Armenian](http://solo.bodleian.ox.ac.uk), <http://solo.bodleian.ox.ac.uk> (ստ 17.09.2017):



Նկ. 3
ՕՖսֆորդի համալսարանի Լինֆոլնի ֆոլշի օրինակը



Վ. Ե. Բ. Ք.
Վենետիկի Սր. Դագարի Մատենադարանի օրինակը



Նկ. 5

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի օրինակը

Ավելի ուշ՝ 1705 թ. Կ. Պոլսում տպագրվեց հայերեն Աստվածաշունչ՝ նույն-
 նույնությամբ վերարտադրելով ոսկանյան առաջին հրատարակությունը. «...Ի
 յօրինակս հնոյ տպեցեալ լուսաւորեալ հոգի Ոսկան վարդապետի՝ յար եւ նման,
 ո՛չ աւելի եւ ո՛չ նուազ, սակայն մանր գրով...»⁵⁶: 1733 թ. Մխիթար Սեբաստա-
 ցին Վենետիկում իրականացրեց Աստվածաշնչի երրորդ տպագրությունը՝

⁵⁶ Աստվածաշունչ, տպագր. Պետրոս Կաղինացու, Կ. Պոլիս, 1705-1707, էջ 647՝ «Յիշատա-
 կարան»:

«որոշ բարեփոխումներով, բնագրական դիտողություններով, որոնք նշված են լուսանցներում, և բնագրում կատարված սրբագրություններով»⁵⁷, ինչպես բացատրված է «Յիշատակարան»-ում⁵⁸: Մխիթարն Աստվածաշնչում ներառել է Մանասեի աղոթքը և Չորրորդ եզրասի պարականոն գրքերը, սակայն ծանոթագրել⁵⁹: Հովհաննես Զոհրապյանի աշխատասիրությամբ 1805 թ. Վենետիկում տպագրվեց մեկ այլ հայերեն Աստվածաշունչ, որը բովանդակում է հայկական կանոնի Հին և Նոր կտակարանների գրքերը՝ «բացառությամբ Միրաքի, որ հրատարակիչը համարել է կանոնից դուրս՝ ձեռքի տակ չունենալով նրա հնագույն և ընտիր թարգմանության որևէ նմուշ»⁶⁰: Իսկ «Յաւելուած Աստուածաշունչ մատենիս» բաժնում ծանոթագրությամբ⁶¹ գետեղել է մի շարք արտականոն գրքեր, որոնց թվում են Մանասեի աղոթքը և «Եզր երրորդ» գիրքը: 1817 թ. Մանկտ-Պետերբուրգում լույս տեսավ հաջորդ հայերեն Աստվածաշունչը, որը կրկնում է Մխիթար Աբբահոր հրատարակությունը⁶² անգամ ներառելով վերջինիս հավելվածի երկու պարականոն գիրքը՝ «Աղօթք Մանասէի արքայի» և «Գիրք եզրասայ չորրորդ»⁶³: 1817 թ. Հնդկաստանում հրատարակվեց Աստվածաշունչ, որը կրկին հետևում էր 1733 թ. Վենետիկի Աստվածաշնչին, սակայն առաջին անգամ այստեղ բացակայում են Մանասեի Աղօթքն ու Չորրորդ եզրասի ոչ կանոնական գրքերը⁶⁴:

Սակայն սույն երկրորդ խմբագրության հետ ունեցած տարբերությունը երկու պարականոն գրքի բացակայությամբ չի ավարտվում: Պտուկյանի ուղարկած մանրաժապավենը⁶⁵ միաժամանակ համեմատել ենք ՀԱԳ-ում պահ-

⁵⁷ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ժԸ դդ, հտ. Բ, Երևան, 1976, էջ 368:

⁵⁸ Աստուածաշունչ, հրատ. Մխիթար Աբբաստացու, Վենետիկ, 1733, էջ 1271-1279 «Բան առ ընթերցողս. և Յիշատակարան մատենիս»:

⁵⁹ «Եւ աստ գիտելի է. զի ի սմին յիշեցեալ երրորդ եզրասն՝ որ ընդ չորրորդին արտաքոյ կանոնական գրոց դնիլ ասի՝ ՚ի մեզ է առաջին եզրաս», նույն տեղում, էջ 1170:

⁶⁰ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ժԸ դդ, էջ 369:

⁶¹ Ըստ որի՝ իր գետեղած Երրորդ Եզրասի գիրքը, որը լատինական ավանդության մեջ համարվում է Չորրորդ Եզրասի գիրքը, անհայտ անձի թարգմանություն է, որը գրեթե նմանություն չունի միևնույն գրքի ոսկանյան թարգմանության հետ: Ուստի այդ երկու թարգմանության միջև նկատելով բնագրային ու կառուցվածքային մեծ թվով զանազանություններ՝ Զոհրապյանն այն գետեղել է հավելվածում՝ Ոսկանի թարգմանած Չորրորդ Եզրասի գրքի փոխարեն: Տե՛ս Աստուածաշունչ, «Նախաբանութիւն առ վերձանօղս» («Հանգամանք գրչագիր օրինակաց, և ոսկանեան տպագրութեան»), հրատ. Յովհաննէս Զոհրապեանի, Վենետիկ, 1805, էջ 2 (837), 13-25 (849-861):

⁶² Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ժԸ դդ, էջ 374:

⁶³ Տե՛ս Աստուածաշունչ, տպագր. Յովսէփ Յովհաննիսեանի, ՄանկտՊետերբուրգ, 1817, էջ 1101-1126:

⁶⁴ Նույն տեղում: Հմմտ. Աստուածաշունչ, Կալկաթա «ի գիլաւաղաւն Սիրամիութ», 1817, էջ 1307:

⁶⁵ Պտուկյանի ուղարկած մանրաժապավենն ուսումնասիրելիս դեռևս տեղյակ չէինք Ոսկանյան Աստվածաշնչի երկրորդ տարբերակի որևէ օրինակի գտնվելու վայրին, և դրանց

վող Ոսկանյան Աստվածաշնչի առաջին խմբագրության 12 օրինակի հետ, և ի հայտ են եկել մի շարք բնագրային և շարվածքի տարբերություններ ևս՝ ոչ միայն հիշատակարաններում⁶⁶, այլև տեքստերի⁶⁷, մամուլանիշերի⁶⁸, էջակալումների⁶⁹, վերնախորագրերի⁷⁰, մեծատառ-փոքրատառի⁷¹ մի շարք վրիպակներ և սրբագրումներ՝ ինչպես առաջին խմբագրության որոշ օրինակներում, այնպես էլ երկրորդ խմբագրության մանրաժապավենի օրինակում: Երբեմն էլ տարբեր էջերի լուսանցքերում հանդիպում են ձեռագրի նմանվող նշումներ, որոնք պարզաբանում են սուրբգրային տեքստերի որոշ դժվարիմաստ բառերի նշանակությունը⁷²: Այդ տարբերությունները ներկայացրել ենք աղյուսակների տեսքով:

Պտուկյանի մանրաժապավենում արձանագրված Ոսկանյան Աստվածաշունչը, առաջին տարբերակի նմանությամբ, ունի զույգ երկայուն էջակալում հայերեն տառերով և թվանշաններով կրկնակի համարակալմամբ (օրինակ՝ 805 – պե, 806 – պզ, ևն): Առաջին էջակալությունն սկսվում է Հին կտակարանի Ծննդոց գրքով և ավարտվում երրորդ Մակաբայեցիների գրքով (1-628 էջեր), իսկ երկրորդ էջակալությունն սկսվում է Հին կտակարանի Հոբի գրքով և ավարտվում Նոր կտակարանով, նրան կից «Յաւելուած»-ով, ցանկերով և «Յիշատակարան»-ով (1-808 էջեր): Նոր կտակարանի առաջին գիրքը՝ «Աւետարան ըստ Մատթէի», սկսվում է 431-րդ էջով: Բովանդակ Աստվածածնաշունչը բաժանված է գլուխների, տների և համարների: Գլուխներն ու տները նշված են տառերով, իսկ համարները՝ թվերով: Աստվածաշնչային գրքերի վերնագրերը բերված են նաև երբայերենով: Բոլոր էջերում կան վերնախորագրեր:

մասին իրագել դարձանք ավելի ուշ: Հետևաբար այն ուսումնասիրելու միակ հնարավորությունը մնում էր հիշյալ մանրաժապավենի առկայությունը ՀԱԳ-ում:

⁶⁶ Օրինակ՝ 808^բ էջի վերևից 16-րդ տողում գրված է «Երևանիցի», այլ ոչ թե՛ «Երևանեցի», ինչպես ՀԱԳ-ի օրինակներում:

⁶⁷ Օրինակ՝ Պտուկյանի օրինակի 390^բ էջի 7-րդ գլխի 8-րդ համարում *նկան* բառի **ն** տառը պոկվել է իր բառից և միացել *եփրեմ* բառին՝ «Եփրեմն կան», որի պատճառով 387-րդ էջում կատարվել է սրբագրություն՝ «նակիւ. եղև եփրեմ նկան շղար»: Իսկ ՀԱԳ-ի բոլոր օրինակներում 390^բ էջի 7-րդ գլխի 8-րդ համարում այդ սրբագրությունն արվել է սխալ տողի վրա նորը փակցնելով:

⁶⁸ Օրինակ՝ 139 էջի ներքևի ձախ մասում սխալմամբ նշված է 12 մամուլանիշ, ինչը չպետք է լինեք, մանավանդ որ այդ էջի ներքևի աջ մասում մամուլանիշը նշված է ժը2, որ նշանակում է, թե այն 18-րդ մամուլի 2-րդ թերթն է:

⁶⁹ Օրինակ՝ 96 էջի թվանշանային և տառային համարակալումների տեղերը փոխված են:

⁷⁰ Օրինակ՝ 517-518 էջերի վերնախորագրերում կա տառասխալ: Գրված է «Գիրք Տօրիգայ», պետք է լինի՝ «Գիրք Տօրիթայ»:

⁷¹ Օրինակ՝ 308 էջի «ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԳ ՍԱՄՈՒԻԼԻ» տողի վերջին ի-ն փոխառառ է:

⁷² Օրինակ՝ 327^բ էջի լուսանցում կա ձեռագրի նմանվող նշում. «պատրուհակ որ է ոչխար»:

Տպագրված երկու՝ Պտուկյանի օրինակի 808 (երկրորդ տարբերակ) և ՀԱԳ-ի օրինակների 834 էջով (առաջին տարբերակ) ավարտվող տարբերակների մեր համեմատության արդյունքները ներկայացրել ենք աղյուսակների տեսքով, որոնցում Պտուկյանի մանրաժապավենում հանդիպող վրիպակներն առանձին համարակալված են, կողք-կողքի տեղադրված են ՀԱԳ-ի օրինակների համապատասխան հատվածներից դրանց տարբերությունները՝ «առկա չէ», կամ նմանությունները՝ «առկա է» նշումներով: Տարբերությունների դեպքում մեջբերված են նաև տարբերվող մասերի անհամապատասխանությունները՝ որպես ծանոթագրություն: Մնացած հատվածները, որտեղ Պտուկյանի օրինակում վրիպակներ չենք նկատել, հետևաբար և՛ չենք համեմատել ՀԱԳ-ի օրինակների հետ, աղյուսակներում վանդակները թողել ենք դատարկ:

**ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ Զ. ՊՏՈՒԿՅԱՆԻ «ՈՍԿԱՆՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՁԻ»
ՄԱՆՐԱԺԱՊԱՎԵՆՈՒՄ ԵՎ ՀԱԳ-Ի «ՈՍԿԱՆՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՁԻ» 12
ՕՐԻՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԿԱՏՎԱԾ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

<p>1666 թ. Ոսկանյան Աստվածաշնչի երկրորդ տարբերակի մանրաժապավեն № 005411 (Զ. Պտուկյանի ուղարկած, ՀԱԳ-ում պահվող - Գրանցան. 467 ԱՀ)</p>	<p>1666 թ. Ոսկ. Աստվ.-շնչի՝ ՀԱԳ-ի օրինակներ՝ ա. Գույքահամ. 8770-57, Գրանցահամ. 1842 ԱՀ, բ. Գույքահամ. 28757-63, Գրանցահամ. 1849 ԱՀ¹, գ. Գույքահամ. 8769-57, Գրանցահամ. 1845 ԱՀ, դ. Գույքահամ. 19855-58, Գրանցահամ. 1848 ԱՀ, ե. Գույքահամ. 1347-50, Գրանցահամ. 1844 ԱՀ</p>
<p>1. Տխողոսաբերքին կա ձեռագիր մակագրություն². «յիշ[ա]տ[ա]կէ ի դուռն ս[ուր]բ յ[ա]կ[օ]բայ ե[րուսաղէ]մ», իսկ վերևի մասում համարակալված է՝ -17: Տխողոսաբերքն ունի նաև կնիք. «Յիշատակ ... Սրբոց Յակովբեանց... 1687»: Կնիքի արձանագրության մեջ կան անընթեռնելի բառեր:</p>	
<p>2. ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ ԱՌ ՎԵՀԱԳՈՅՆ... Այս խորագրի 2 էջը բացակայում է (գուցե պոկված է կամ նկարված չէ): Նախորդ էջում «ԲԱ» հիշագրի են է, որ վերաբերում է հաջորդ էջի վերնագրի «ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ» բառին:</p>	<p>ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ ԱՌ ՎԵՀԱԳՈՅՆ... Այս խորագրի 2 էջն առկա է:</p>
<p>3. ԿԱՐԳ ԳՐՈՅ ՀՆՈՅ ԿՏԱԿԱՐԱՆԻ ցանկում պահպանված է «Եզրաս չորրորդ» գրքի վերնագիրը՝ բաղկացած 16 գլխից: Հավանաբար Ոսկանը մոռացել և ցանկից չի հանել այդ գրքի վերնագիրը, մինչդեռ «Եզրաս չորրորդ» գիրքը հանված է մանրաժապավենի տարբերակում: Ցանկում կա աստվածաշնչային գրքերի թվարկման հերթականության տարբերություն՝ Աստվածաշնչի գրքերի տեղադրման հետ համեմատ: Օրինակ՝ երրորդ եզրասի գիրքը</p>	

¹ Վերջից թերի օրինակ:

² Ձեռագրի նմանվող նշումներ կան նաև 253^բ, 255^բ, 269^բ, 292^ա, 296^ա, 306^ա, 308^ա, 373^բ, 382^ա, 383^բ, 387^բ, 388^ա, 480^ա, 508^ա, 554^ա, 556^ա և 610^ա էջերի լուսանկարում:

<p>ցանկում նախավերջինն է, իսկ Աստվածաշնչում այն դրված է <i>Երկրորդ եզրասից</i> հետո: Մակարայեցիների 3 գրքերը ցանկում մարգարեական գրքերից հետո են, իսկ Աստվածաշնչում <i>Եսթերի</i> գրքից հետո: Այսպե՛ս <i>Գիրք Յորայ</i>:</p>	
<p>Առաջին էջակալություն 4. <i>Գիրք Ծննդոց</i> / էջ 1-56, գլ. Ա-Ծ³: 1 էջի լուսանցում կա կյուր կնիք: 54-55 էջերը կրկնվում են⁴:</p>	
<p>5. <i>Գիրք Ելից</i> / էջ 56-101, գլ. Ա-Խ: 72-73 էջերը կրկնվում են: 96 էջի թվանշանային և տառային համարակալումների տեղերը փոխված են:</p>	<p>Ե՛.՝ 72 էջի փխ գրված է 71 հբ, պետք է լինի՝ 72 հբ: Ա., բ., գ.՝ առկա է, դ., ե՛.՝ առկա չէ:</p>
<p>6. <i>ՂեեՏԱԿԱՆՔ</i> / էջ 102-132, գլ. Ա-ԻԷ: 103 էջի վերնախորագրում գրված է. «Գիրք Ղևտական», մնացյալ էջերում «Գիրք Ղևտական»: 110-111 էջերը կրկնվում են:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե՛.՝ առկա է:</p>
<p>7. <i>Գիրք Թոռոց</i> / էջ 133-176, գլ. Ա-ԼԶ: 139 էջի ներքին ձախ մասում սխալմամբ նշված է 12 մամուլանիշ, մինչդեռ էջի ներքևում աջից մամուլանիշը նշված է ժրՁ, այսինքն՝ այն 18-րդ մամուլի 2-րդ թերթն է:</p>	<p>Ա., բ., գ., դ.,՝ առկա չէ, ե՛.՝ առկա է:</p>
<p>8. <i>Գիրք Բ. Օրենք</i> / էջ 177-214, գլ. Ա-ԼԴ: 201 էջի ներքին մասում մամուլանիշերը սխալ են գրված: 25 իե-ի փոխարեն պետք է լինե՛ր 26 իգ:</p>	<p>Ա., բ., ե՛.՝ առկա չէ, գ., դ.,՝ առկա է:</p>
<p>9. <i>Գիրք ՅեՍՈՒՍ</i> / էջ 215-242, գլ. Ա-ԻԿ: 234-235 էջերը կրկնվում են:</p>	
<p>10. <i>ԳԱՏԱԽՈՐԱՅ</i> / էջ 243-269, գլ. Ա-ԻԱ: 258-259, 266-267 էջերը կրկնվում են:</p>	
<p>11. <i>Գիրք ՀՈՒԻԹԱՅ</i> / էջ 269-272, գլ. Ա-Դ:</p>	

³ Ծննդոց գրքի գլուխների անվանումները տրված են ոչ թե տառերով, այլ բառերով՝ «Առաջներորդ»-ից մինչև «Յիսներորդ», իսկ մնացյալ գրքերինը՝ տրված են հայկական տառերով (օրինակ՝ Բ., ԻԿ. և այլն), իսկ առաջին գլխինը մեկ բառով է (Առաջներորդ): Առաջին էջակալության էջերի՝ տառերով համարակալումն սկսվում է 9-րդ էջից: Միօրինակության համար համեմատական ցանկերում բերել ենք տառային անվանումները:

⁴ Մանրաժապավենում Աստվածաշնչի կրկնվող էջերը հավանաբար արդյունք են կրկնակի, երբեմն է՛լ եռակի լուսանկարման, մինչդեռ Ոսկանյան Աստվածաշնչի «պակասավոր» տարբերակի տպագիր մեկ այլ օրինակում (Մաշտոցի անվան Մատենադարանի թերի օրինակ. սկսվում է երկրորդ էջակալության էջ 1-ից) էջերի կրկնություն չկա:

<p>12. ԳԻՐՔ Ա. ՍԱՄՈՒԻԼԻ (Ա. ԹԱԳԱՒՈՐՈՒ-ԹԵԱՆՅ) / էջ 273-308, գլ. Ա-ԼԱ: 280^ա էջի լուսանցում⁵ անհայտ նշումներ: 284-285 էջերը կրկնվում են:</p>	
<p>13. ԳԻՐՔ Բ. ՍԱՄՈՒԻԼԻ (Ա. ԹԱԳԱՒՈՐԱՅ) / էջ 308-336, գլ. Ա-ԻԿ: 308 էջի «ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԿ ՍԱՄՈՒԻԼԻ» տողի վերջին ի-ն փոփոխություն է: 308-309, 310-311, 322-323 էջերը կրկնվում են: 327^բ էջի լուսանցում կա ձեռագրի նմանվող նշում. «պատրուհակ որ է ոչխար»⁵:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ առկա չէ: Բոլոր տառերը մեծատառ են:</p>
<p>14. ԳԻՐՔ Գ. ԹԱԳԱՒՈՐԱՅ / էջ 337-371, գլ. Ա-ԻԲ: 362-363 էջերը կրկնվում են:</p>	
<p>15. ԳԻՐՔ Դ. ԹԱԳԱՒՈՐԱՅ / էջ 371-401, գլ. Ա-ԻԵ: 372^բ էջի աջ մասում գրված է յճՉ յճԲ-ի փոխարեն, այսինքն՝ տառային համարժեքում բ-ն փոխարինված է 2-ով: 372-373 էջերը կրկնվում են երկիցս: 374-375, 396-397 էջերը կրկնվում են:</p>	<p>Ա., բ., գ., ե.՝ առկա է, դ.՝ առկա չէ:</p>
<p>16. ԳԻՐՔ ԱՌԱՋՆԵՐՈՐԿ ՄՆԱՅՈՐԿԱՅ / էջ 402-431, գլ. Ա-ԻԹ: 410-411 էջերը կրկնվում են:</p>	
<p>17. ԳԻՐՔ Բ. ՄՆԱՅՈՐԿԱՅ / էջ 431-467, գլ. Ա-ԼԶ: 444-445, 454-455 էջերը կրկնվում են:</p>	
<p>18. ԳԻՐՔ Ա. ԵԶՐԱՍԱՅ / էջ 468-486, գլ. Ա-Թ:</p>	
<p>19. ԳԻՐՔ Բ. ԵԶՐԱՍԱՅ / էջ 486-496, գլ. Ա-Ժ:</p>	
<p>20. ԳԻՐՔ ՆԷՆՄԵԱՅ (Գ. ԵԶՐԱՍԱՅ) / էջ 497-511, գլ. Ա-ԺԳ: 501 էջի վերնախորագիրը՝ «Գիրք Երրորդ Եզրասայ»⁶: 510-511 էջերը կրկնվում են:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ առկա չէ, 501 էջի վերնախորագիրը՝ «Գիրք ՆԷՆՄԱՅ»:</p>

⁵ Այսինքն՝ ընթերցողը, բնագրում հանդիպելով անծանոթ և դժվարհասկանալի բառերի, լուսանցում նշել է դրանց բացատրությունները:

⁶ Քանի որ Նեեմիայի գիրքը կոչվել է նաև Երրորդ Եզրասի գիրք, ապա ձախ էջի վերնախորագիրն է «Գիրք ՆԷՆՄԱՅ», իսկ աջինը՝ «Գիրք Երրորդ Եզրասայ»: ՀԱԳ-ի որոշ օրինակներում այդ սկզբունքը խախտված է:

<p>21. ԳԻՐՔ ՏՕՐԻԹԱՅ / էջ 512-522, գլ. Ա-ԺԳ: 21^ա. 517-518 էջերի վերնախորագրերում կա տառասխալ՝ «Գիրք Տօրիդայ»՝ փոխ. «Գիրք Տօրիթայ»: 21^բ. 520^ա էջում կա վերնագրի վրիպակ՝ «ԺԼ. ԺԲ.» փոխ. «ԳԼ. ԺԲ.»:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ սոկա է: Ա., բ., գ., դ., ե.՝ սոկա է:</p>
<p>22. ԳԻՐՔ ՅՈՒԴԻԹԱՅ / էջ 523-539, գլ. Ա-ԺԶ: 522-523 էջերը կրկնվում են: 535^բ էջի վերնագրում տառասխալ կա՝ «ԺԼ. ԺԲ.» փոխ. «ԳԼ. ԺԲ.»:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ սոկա է:</p>
<p>23. ԳԻՐՔ ԵՍԹԵՐԱՅ / էջ 540-552, գլ. ԺԱ-ԺԲ, Ա-Գ, ԺԳ, Դ, ԺԵ, Դ, ԺԳ-ԺԵ, Ե-Ը, ԺԶ, Ը-ԺԱ⁷: 540-541 էջերը կրկնվում են: 542 էջի համարը սխալմամբ գրված է 142:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ սոկա է:</p>
<p>24. ԳԻՐՔ Ա. ՄԱԿԱՔԱՅԵՅԻՈՅ / էջ 552-588, գլ. Ա-ԺԶ: 550-551, 552-553 էջերը կրկնվում են: 565 էջի համարը սխալմամբ գրված է 465: 566-567 էջերը կրկնվում են երկիցս:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ սոկա է:</p>
<p>25. ԳԻՐՔ Բ. ՄԱԿԱՔԱՅԵՅԻՈՅ / էջ 589-616, գլ. Ա-ԺԵ: 593^ա էջի ներքևի մասում մամուլանիշը սխալմամբ գրված է 45՝ փոխ. 75: 593 էջից հետո 584-593 էջերը կրկնվում են: 608-609, 612-613 էջերը կրկնվում են:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ սոկա է: Բ.՝ 600-609 էջերի փոխաբեմ սխալմամբ բերված են 441-448 էջերի կրկնությունները:</p>
<p>26. ԳԻՐՔ Գ. ՄԱԿԱՔԱՅԵՅԻՈՅ / էջ 616-628, գլ. Ա⁸: 26^ա. 620 էջի թվային և տառային համարների տեղերը փոխված են: 626-627 էջերը կրկնվում են: 26^բ. 628 էջի վերնախորագրում կա վրիպակ՝ «Գիրք Երկրորդ Մակաբայեցոց» փոխ. «Գիրք Երրորդ Մակաբայեցոց»: 628 էջը կրկնվում է երկիցս:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ սոկա է: Ա., բ., գ., դ., ե.՝ սոկա է:</p>
<p>27. Առաջին էջակառուցումն ավարտվում է 628 էջով:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ սոկա է:</p>

⁷ Հին Կտակարանի Եսթերի գրքի գլուխների համարակալումը խառն է, իսկ գլուխների համարները երբեմն կրկնվում են՝ տարբեր բովանդակությամբ:

⁸ Հին Կտակարանի Գ. Մակաբայեցիների գիրքը բաղկացած է մեկ գլխից՝ առանց տնատումների:

<p>Երկրորդ էջակալություն 28. ԳԻՐՔ ՅՈՐԱՅ / էջ 1-27, գլ. Ա-ԽԲ:</p>	
<p>29. ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՅ / էջ 27-91, գլ. Ա-ՃԾ: 36-37, 66-67 էջերը կրկնվում են:</p>	
<p>30. ԳԻՐՔ ԱՌԱԿԱՅ / էջ 92-117, գլ. Ա-ՎԱ:</p>	
<p>31. ԳԻՐՔ ԺՈՂՈՎԹՂ (ԳԻՐՔ ԷԿՂԷՍԻԱՍՏԻԿԱՅ) / էջ 117-125, գլ. Ա-ԺԲ: 121 էջի վերնախորագրում կա վրիպակ՝ «Ֆկղ՝եսիաստիկեայ», փոխ. «Ֆկղ՝եսիաստիկեայ»:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ առկա է:</p>
<p>32. ԳԻՐՔ ԵՐԳ ԵՐԳՈՅ / էջ 126-130, գլ. Ա-Ը: 127 էջի վերնախորագրում կա վրիպակ: Գրված է «Երգ Երկոց», պետք է լինի՝ «Երգ Երգոց»:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ առկա է:</p>
<p>33. ԳԻՐՔ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ / էջ 130-145, գլ. Ա-ԺԹ:</p>	
<p>34. ԳԻՐՔ ՍԻՐԱՔԱՅ (ԷԿՂ՝ԷՍԻԱՍՏԻԿՈՍ) / էջ 146-188, գլ. Ա-ԾԱ: 152-153, 170-171 էջերը կրկնվում են:</p>	
<p>35. ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ / էջ 189-240, գլ. Ա-ԿԶ: 206-207 էջերը կրկնվում են:</p>	
<p>36. ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ / էջ 241-298, գլ. Ա-ԾԲ: 255^ա էջում մամուլանիշը գրված է 33, իսկ 255^բ էջում՝ 14 (ճիշտ ձևով)⁹: 266-267 էջերը կրկնվում են:</p>	<p>Ա., բ., դ.՝ առկա է, գ., ե.՝ առկա չէ:</p>
<p>37. ՈՂԲ ԵՐԵՄԻԱՅԻ (ԹՐԷՆԻ) / էջ 299-304, գլ. Ա-Գ: 298 էջի տառային համարը սխալմամբ գրված է մղթ, իսկ 299 էջինը՝ մղը (տեղերով փոխված են): Աղօթք Սրբոյն Երեմիայի / էջ 305</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ առկա է:</p>
<p>38. ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՒՔԱՅ / էջ 305-312, գլ. Ա-Զ:</p>	

⁹ Մամուլանիշերի տեղերը փոխված են (ըստ համարակալման սկզբունքի՝ պետք է լինի նախ թիվը, ապա տառը), ուրեմն նոր շարվածք է, չնայած տեքստում շարվածքի տարբերություն չկա:

<p>39. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ԷԶԷԿԵԼԻ / էջ 313-365, գլ. Ա-ԽԸ: 320-321 էջերը կրկնվում են: 39^ա. 337^բ էջում հիշագրիրը՝ տերա 39^բ. 338^ա էջում գլուխ 24-ն ավարտվում է «Ի վերայ որդուցն ամօնայ» տողով, որ շարունակությունը չէ նախորդ նախադասության: 39^գ. 342^ա էջում գլուխ 28-ն ավարտվում է «Ի վերայ եգիպտոսի և փարաօնի թագաւորի եգիպտացոց» տողով. <i>եգիպտացոց</i> բառը սլոնական կենտրոնում է:</p>	<p>Ա., բ.՝ առկա չէ՝ տերազ, գ., դ., ե.՝ առկա է: Ա.՝ առկա չէ. «Ի վերայ որդուցն ամօնայ» տողը շարունակությունն է նախորդ նախադասության: Բ., գ., դ., ե.՝ առկա է: Ա.՝ առկա չէ, «Ի վերայ եգիպտոսի և փարաօնի թագաւորի եգիպտացոց» տողի <i>եգիպտացոց</i> բառը տողասկզբին է: Բ., գ., դ., ե.՝ առկա է:</p>
<p>40. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ԳԱՆԵՂԻ / էջ 366-387, գլ. Ա-ԺԳ: 376-377, 384-385 էջերը կրկնվում են: 40^ա. 371 էջի համարը սխալմամբ գրված է 571: 40^բ. 387 էջում զարդանկարի վերևի հոծ գիծն ընդհատված է և ավելացված «նակիր. եղև եփրեմ նկան շղար» սրբագրությունը¹⁰:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ առկա չէ: Ա., բ., գ., դ., ե.՝ առկա է:</p>
<p>41. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ՈՎՍԵԱՅ / էջ 387-394, գլ. Ա-ԺԳ: 390^բ էջի 7-րդ գլխի 8-րդ համարում <i>նկան</i> բառի ն տառը պոկվել է իր բառից և միացել <i>եփրեմ</i> բառին՝ «եփրեմն կան», որին և վերաբերում է 387 էջի սրբագրությունը:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ առկա չէ: 390^բ էջի 7-րդ գլխի 8-րդ համարում հիշյալ սրբագրությունն արվել է՝ սխալ տողի վրա նորը փակցնելով:</p>
<p>42. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ՅՈՎԵԼԵԱՅ / էջ 394-397, գլ. Ա-Գ:</p>	
<p>43. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ԱՄՈՎՍԱՅ / էջ 397-403, գլ. Ա-Թ:</p> <p>402-403 էջերը կրկնվում են:</p>	
<p>44. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ԱԲԳԻՈՒ / էջ 403:</p>	
<p>45. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ՅՕՆԱՆՈՒ / էջ 404-405, գլ. Ա-Դ:</p>	
<p>46. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ՄԻՔԵԱՅ / էջ 406-410, գլ. Ա-Է:</p> <p>406-407, 408-409 էջերը կրկնվում են:</p>	
<p>47. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ՆԱԽՈՒՄԱՅ / էջ 410-412, գլ. Ա-Գ:</p>	

¹⁰ Սրբագրված հատվածը տե՛ս *Մարգարէութիւնն Ովսեայ* է. 8:

48. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ԱՄԲԱԿՈՒՄԱՅ / էջ 412-414, գլ. Ա-Գ:	
49. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ՍՕՓՕՆԻԱՅ / էջ 414-416, գլ. Ա-Գ:	
50. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ԱՆԳԵԱՅ / էջ 417-418, գլ. Ա-Բ:	
51. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ԶԱՔԱՐԻԱՅ / էջ 418-426, գլ. Ա-ԺԳ	
52. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ՄԱՂԱՔԻԱՅ / էջ 427-429, գլ. Ա-Գ:	Ա., Բ., Գ., Դ., Ե.՝ 427 էջի համարակալման մեջ կա վրիպակ՝ գրված է 227:
53. Կարգ եւ թիւ նորոց կտակարանաց ¹¹ : Հանդերձ գլխովք / էջ 429:	Ա., Գ., Դ., Ե.՝ առկա է, Բ.՝ էջը բացակայում է:
54. ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷԻ / էջ 430-471, գլ. Ա-ԻԸ: 440-441, 444-445, 456-457 էջերը կրկնվում են:	
55. ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ / էջ 472-497, գլ. Ա-ԺԶ: 486-487, 490-491 էջերը կրկնվում են:	
56. ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՅ / էջ 498-538, գլ. Ա-ԻԳ: 510-511 էջերը կրկնվում են: 510 ^բ էջի 7-րդ գլխի 11-րդ համարում բացակայում է <i>անուն</i> բառը. «...ֆաղափ մի՛ որում էր նային...»: 511 էջի ներքում կա շարվածից դուրս սրբագրություն. «Եւ եղև ՚ի վաղին, երթայր ՚ի ֆաղափ մի՛ որում անուն էր նային, երթային» (Ղուկ. 7:11): Սույն մեջբերումը գլխիվար շրջված է ¹² : 512-513, 520-521 էջերը կրկնվում են:	Ա., Բ., Գ., Դ., Ե.՝ առկա չէ: 510 ^բ էջի 7-րդ գլխի 11-րդ համարում սրբագրությունն արվել է սխալ տողի վրա նորը փակցնելով:
57. ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՕՀԱՆՆՈՒ / էջ 539-568, գլ. Ա-ԻԱ: 538-539, 546-547 էջերը կրկնվում են:	
58. ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ / էջ 569-604, գլ. Ա-ԻԸ: 592-593 էջերը կրկնվում են:	

¹¹ Մանրաժապավենի Նոր Կտակարանի գրքերի ցանկը (27 գիրք) չի տարբերվում ՀԱԳ-ի օրինակներից:

¹² Զ. Պտուկյանի օրինակում այդ սրբագրություններն արված են տող փակցնելու նույն սկզբունքով, սակայն՝ ուրիշ էջերում և անփոփոխ կերպով:

59. ԱՌ ՀՈՏՄԱՅԵՅԻՄՆ / էջ 605-618, գլ. Ա-ԺԶ:	
60. ԱՌ ԿՈՐՆԹԱՅԻՄՆ Ա. / էջ 618-631, գլ. Ա-ԺԶ:	
61. ԱՌ ԿՈՐՆԹԱՅԻՄՆ Բ. / էջ 631-640, գլ. Ա-ԺԳ: 631 էջում վերնագրի մեջ կա վրիպակ՝ <i>Կիրորդ</i> , փոխ. <i>Կրկրորդ</i> : 636-637 էջերը կրկնվում են:	Ա., Բ., Գ., Դ., Ե.՝ առկա է:
62. ԱՌ ԳԱՂԱՏԱՅԻՄՆ / էջ 640-644, գլ. Ա-Զ:	
63. ԱՌ ԵՓԵՍԱՅԻՄՆ / էջ 645-649, գլ. Ա-Ձ:	
64. ԱՌ ՓԻԼԻՊՊԵՅԻՄՆ / էջ 649-652, գլ. Ա-Դ: 648-649 էջերը կրկնվում են:	
65. ԱՌ ԿՈՂՈՍԱՅԻՄՆ / էջ 652-655, գլ. Ա-Դ:	
66. ԱՌ ԹԵՍԱԿՈՆԿԵՅԻՄՆ Ա. / էջ 655-658, գլ. Ա-Ե:	
67. ԱՌ ԹԵՍԱԿՈՆԿԵՅԻՄՆ Բ. / էջ 658-660, գլ. Ա-Գ:	
68. ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ Ա. / էջ 660-664, գլ. Ա-Զ:	
69. ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ Բ. / էջ 664-666, գլ. Ա-Դ:	
70. ԱՌ ՏԻՏՈՍ / էջ 667-668, գլ. Ա-Գ:	
71. ԱՌ ՓԻԼԻՄՈՆ / էջ 668-669, գլ. Ա:	
72. ԱՌ ԵՔՐԱՅԵՅԻՄՆ / էջ 669-679, գլ. Ա-ԺԳ:	
73. ՅԱԿՈԲՈՒ ԹՈՒՂԹ / էջ 680-683, գլ. Ա-Ե:	
74. Ա. ՊԵՏՐՈՍԻ ԹՈՒՂԹ / էջ 684-687, գլ. Ա-Ե: 684 էջի վերնագրում կա վրիպակ՝ <i>Պերտոսի</i> , փոխ. <i>Պետրոսի</i>	Ա., Բ., Գ., Դ., Ե.՝ առկա է:
75. Բ. ՊԵՏՐՈՍԻ ԹՈՒՂԹ / էջ 687-690, գլ. Ա-Գ:	
76. Ա. ՅՕՀԱՆՆՈՒ ԹՈՒՂԹ / էջ 690-693, գլ. Ա-Ե:	
77. Բ. ՅՕՀԱՆՆՈՒ ԹՈՒՂԹ / էջ 694, գլ. Ա:	
78. Գ. ՅՕՀԱՆՆՈՒ ԹՈՒՂԹ / էջ 694-695, գլ. Ա:	
79. ՅՈՒԿԱՅԻ ԹՈՒՂԹ / էջ 695-696, գլ. Ա: 694-695 էջերը կրկնվում են:	
80. ՅԱՅՏՆՈՒԹԻԻՆ ՅՕՀԱՆՆՈՒ ¹³ / էջ 697-718, գլ. Ա-ԻԲ: 80 ^ա . 701 էջի վերնախորագրում կա վրիպակ՝	Ա., Բ., Գ., Դ., Ե.՝ առկա է:

¹³ «Յովհաննու Յայանութիւն»-ը մանրաժապավենում և Ոսկանյան Աստվածաշնչի մյուս օրինակներում վերջանում է 90-րդ մամուլով: Ապա բոլոր տարբերակներում շարունակվում են հերթական մամուլանիշերը՝ մանրաժապավենից տարբեր բովանդակությամբ:

<p>«Յայտնութիւն Առաքելոյ» փոխ. «Յօհաննու Առաքելոյ»: 708-709 էջերը կրկնվում են: 80^բ. 718 էջի վերջում ներքևի աջ մասում, հիշագիր՝ Աղօթք¹⁴:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ առկա է: Ա., բ., գ., դ., ե.՝ 81^բ. ԱՂՕԹՔ ՄԱՆԱԱՆԻ ԱՐՔԱՅԻ / էջ 719:</p>
<p>82^ա. ՋԵՐՕՆԵՄՈՍԻ ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻԻՆ ՍԱՂԱԽԱՐՏԵԱԼ / էջ 719-720¹⁵: 720-721 էջերը կրկնվում են:</p>	<p>Ա., բ., գ., դ., ե.՝ 82^բ. ԳԻՐՔ ԵՉՐԱՍԱՅ ՉՈՐՐՈՐԳ / էջ 719-744, գլ. Ա-ԺԶ:</p>
<p>83^ա. ՋԵՐՕՆԵՄՈՍԻ ՊԱՌԻՎԻՆԱՅԻՈՅ / էջ 721-728:</p>	
<p>84^ա. Նունոյ Յաւետարանիչսն առ Դամասոս // Նախադրութիւն / էջ 729-730:</p>	
<p>85^ա. Նունոյ ի թուարանութենէ գրոց եկեղեցականաց / էջ 730-731-732-733:</p>	
<p>86^ա. Նախադրութիւն Մատթէոսի Աւետարանին: Նախադրութիւն Մարկոսի Աւետարանին: Նախադրութիւն Դուկայ Աւետարանին: Նախադրութիւն Յօհաննու Աւետարանին / էջ 733:</p>	<p>Ա.՝ 87^բ. 734-735 էջերի արանքում կան թղթի մնացորդներ:</p>
<p>87^ա. ՅԱՆԳ ՎԿԱՅՈՒԹԵԱՆԳ Ի ՔՐԻՍՏՈՍԷ. և յառաքելոց ներ նորում կտակարանում համառօտեցելոյ ՚ի հնոյ / էջ 734-739:</p>	
<p>88^ա. Եբրայեցոց, Քաղդէացոց և Յունաց անուանց թարգմանութիւն / էջ 739-747: 744 էջի թվանշային և տառային համարների տեղերը փոխված են¹⁶:</p>	
	<p>89^բ. ՋԵՐՕՆԵՄՈՍԻ ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻԻՆ ՍԱՂԱԽԱՐՏԵԱԼ / էջ 745-746¹⁷:</p>
<p>90^ա. ՅԱՆԳ ՄԱՏԵՆԱԿԱՆ¹⁸ / էջ 748-803: 786-787 էջերը կրկնվում են:</p>	<p>90^բ. ՋԵՐՕՆԵՄՈՍԻ ՊԱՌԻՎԻՆԱՅԻՈՅ / էջ 747-754</p>

¹⁴ Քանի որ հաջորդ՝ 719 էջն սկսվում է «Ջերօնիմոսի Առաջաբանութիւն սաղասարտեալ» վերնագրով, ապա 718 էջում հիշագիրը պետք է լինէր Ջերօ, այլ ոչ թե՛ Աղօթք, որը «Աղօթք Մանասէի արքայի» վերնագրի հիշագիրն է և սխալմամբ մնացել է 718-րդ էջում: Սա ևս մեկ վկայություն է, որ այս օրինակի շարվածից դուրս են թողնված «Աղօթք Մանասէի արքայի յորժամ գերեալ կալանաւորիւր ի Բաբելոն» և «Գիրք Եգրասայ շորրորդ» պարականոն գրքերը, որոնք Ոսկանյան Աստվածաշնչի մնացած օրինակներում 719-744 էջերում են, իսկ «Ջերօնիմոսի Առաջաբանութիւն սաղասարտեալ» գիրքը 745 էջում է, որը կազմում է 95-րդ մամուլը: Սա նշանակում է, որ մանրածապակներում 4 մամուլ (91, 92, 93, 94) պակասում է:

¹⁵ 91-րդ մամուլ: 719 էջից սկսած փոխված են բոլոր էջերի հայկական տառերով համարակալումները, մամուլանիշերը, իսկ լուսանցանիշերը պահպանվել են նույնությամբ:

¹⁶ Այս փոփոխությունը բացակայում է Ոսկանյան Աստվածաշնչի ՀԱԳ-ի օրինակների ոչ միայն 744 էջում, այլև տվյալ բնագրի 770 էջում:

¹⁷ 95-րդ մամուլ:

	Ա., Բ., Գ., Դ., Ե.՝ 748-749 էջերի համարները սխալմամբ գրված են 948-949:
	91 ^բ . Նունոյ Յաւետարանիչն առ Դամասոս // Նախադրութիւն / էջ 755-756:
	92 ^բ . Նունոյ ի թուաբանութենէ գրոց եկեղեցականաց / էջ 756-757-758-759:
	93 ^բ . Նախադրութիւն Մատթէոսի Աւետարանին: Նախադրութիւն Մարկոսի Աւետարանին: Նախադրութիւն Լուկայ Աւետարանին: Նախադրութիւն Յովհաննու Աւետարանին / էջ 759:
	94 ^բ . ՅԱՆԳ վկայութեանց ի Քրիստոսէ. և յառաքելոց ներ նորում կտակարանում համառօտեցելոյ ՚ի հնոյ / էջ 760-765:
794-795 էջերը բացակայում են:	95 ^բ . Երբայեցոց, Քաղղէացոց և Յունաց անուանց թարգմանութիւն / էջ 765-773:
	96 ^բ . ՅԱՆԳ ՄԱՏԵՆԱԿԱՆ / էջ 774-829: Ա., Բ., Գ., Դ., Ե.՝ 793 էջի մամուլանիշերի թվանշային և տառային համարների տեղերը փոխված են:
96 ^ա . Ոտանաւոր բարեպաշտի թագաւորին հալոց հեթմոյ / էջ 803-805:	96 ^բ . ՅԱՆԳ ՄԱՏԵՆԱԿԱՆ / էջ 774-829:
97 ^ա . Առ Ընթերցողսդ / էջ 805-807:	Ա., Բ., Գ., Դ., Ե.՝ 793 էջի մամուլանիշերի թվանշային և տառային համարների տեղերը փոխված են:
98 ^ա . Յիշատակարան / էջ պէ 807-պը 808: 807 էջի տեխտի վերջում մամուլանիշը՝ 102 – նբ: 808 ^ա էջի վերևից 7-րդ տողում « իսկ ըստ» (իսկ-ը՝ փոքրատառով) ... 808 ^ա էջի վերևից 17-րդ տողում «գպէս պէս» (առանց հապավման) ... 808 ^ա էջի վերևից 19-րդ տողում «Յիշեսչիք» (նոր տող չէ) ... Այստեղից սկսած՝ շարվածքի խախտում	

¹⁸ «Յանգ մատենական»-ը նույնությամբ կրկնվեց նաև Ոսկանյան Աստվածաշնչի մյուս օրինակներում: Երկու տարբերակներում էլ (Պտուկյան, էջ 802-803 և ՀԱԳ, էջ 828-829) «Օր վերջին և դատաստան յետին» տողի դիմացի համարներում կարդում ենք նաև 4 եզրա. 2.27⁷/13.32: Նշանակում է՝ դուրս թողնելով Չորրորդ եզրասի գիրքը Պտուկյանի օրինակում, Ոսկանը մոռացել է վերնագիրը ցանկից հանել:

մինչև պարբերության ավարտը՝ «...մերձա-տուս նորին» ... 808 ^բ էջի վերևից 16-րդ տողում՝ «երևանիցի» (ոչ թե՛ «երևանեցի»): Սույն էջը վերջանում է նույն զարդանախշով:	
	99 ^բ . Ոտանաւոր բարեպաշտի թագաւորին հայոց հեթմոյ / էջ 829-831:
	100 ^բ . Առ Հնթերցոզսդ / էջ 831-833:
	101 ^բ . Յիշատակարան / էջ 833-834: Բ.՝ Յիշատակարան-ը բացակայում է, քանի որ գիրքն ավարտվում է 830 էջով:
102 ^ա . Երկրորդ էջակալումը վերջանում է 808 էջով:	102 ^բ . Ա., բ., գ., դ., ե.՝ երկրորդ էջակալումը վերջանում է 834 էջով, բ.՝ գիրքն ավարտվում է 830 էջով:

	1666 թ. Ոսկ. Աստվ.-շնչի՝ ՀԱԳ-ի օրինակներ՝ գ. Գույֆահամ. 1319-50, Գրանցան. 1846, է. Գույֆահամ. 7796-56, Գրանցան. 1847 ԱՀ, ը. Գույֆահ. 28758-63, Գրանցան. 1850 ԱՀ ¹⁹ , թ. Գույֆահամ. 2886-50, Գրանցան. 1843 ԱՀ ²⁰ , ժ. Գույֆահ. 2215-2007, Գրանցան. 2241 ԱՀ ²¹ , ժա. Գույֆահ. 958-2000, Գրանցան. 2165 ԱՀ ²² , ժբ. Գույֆահամ. 418-86, Գրանցան. 1851 ԱՀ ²³
5.	Զ., բ., թ.՝ առկա չէ, է.՝ առկա է, ժ., ժա., ժբ.՝ էջը բացակայում է:
6.	Զ., է., բ., թ.՝ առկա է, ժ., ժա., ժբ.՝ էջը բացակայում է:
7.	Զ., է., բ., թ., ժ., ժա.՝ առկա չէ, ժբ.՝ էջը բացակայում է:
8.	Զ., ժա.՝ առկա չէ, է., բ., թ., ժ., ժբ.՝ առկա է:
9.	ժ.՝ 222-231 էջերի փոխարեն՝ ձեռագիր էջեր:
13.	Զ., է., բ., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա չէ:
15.	Զ., բ., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա է, է.՝ առկա չէ:
20.	Զ., բ., ժա.,՝ առկա է, է., թ., ժ., ժբ.՝ առկա չէ:
21 ^ա	Զ., է., բ., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա է:

¹⁹ Թերի օրինակ:

²⁰ Թերի լրացված օրինակ:

²¹ Թերի օրինակ:

²² Թերի օրինակ:

²³ Թերի օրինակ:

21 ^F	Զ., է., ը., թ., ժա., ժբ.՝ առկա է, ժ.՝ էջը բացակայում է:
22.	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա է:
23.	Զ., է., ը., թ., ժ., ժբ.՝ առկա է, ժա.՝ էջի թվահամարը բացակայում է:
24.	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա է:
25.	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա է:
26 ^ա	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա է:
26 ^բ	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա է:
27.	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա է:
31.	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա է:
32.	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա է:
36.	Զ., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա չէ, է., ը.՝ առկա է:
37.	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա է:
39 ^ա	Զ., թ., ժ., ժբ.՝ առկա չէ, է., ը., ժա.՝ առկա է:
39 ^բ	Զ., թ., ժ., ժբ.՝ առկա չէ, է., ը., ժա.՝ առկա է:
40 ^ա	Զ., է., ը., թ., ժ.՝ առկա է, ժա., ժբ.՝ էջի թվահամարը բացակայում է:
40 ^բ	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա չէ:
41.	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա չէ:
52.	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա չէ:
53.	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա է:
56.	Զ., է., ը., թ., ժ., ժբ.՝ առկա չէ, ժա.՝ 510 էջը չկա:
61.	Զ., է., ը., թ., ժ., ժա., ժբ.՝ առկա է:
74.	Զ., է., ը., թ., ժ., ժա.՝ առկա է, ժբ.՝ էջը բացակայում է, ֆանի որ գիրքն ավարտվում է 666 էջով:
80 ^ա	Զ., է., ը., թ., ժ., ժա.՝ առկա է, ժբ.՝ էջը բացակայում է, ֆանի որ գիրքն ավարտվում է 666 էջով:
80 ^բ	Զ., է., ը., թ., ժ., ժա.՝ առկա է, ժբ.՝ էջը բացակայում է, ֆանի որ գիրքն ավարտվում է 666 էջով:
90 ^բ	Զ., է., ը., թ.՝ առկա է, ժ., ժա., ժբ.՝ էջը բացակայում է, ֆանի որ ժ.՝ գիրքն ավարտվում է 720 էջով, ժա.՝ 734 էջով, ժբ.՝ 666 էջով:
101 ^բ	Զ., է.՝ Յիշատակարան / էջ 833-834: Ը., թ., ժ., ժա., ժբ.՝ Յիշատակարան-ը բացակայում է, ֆանի որ ը.՝ գիրքն ավարտվում է 830 էջով, թ.՝ 814 էջով, ժ.՝ 720 էջով, ժա.՝ 734 էջով, ժբ.՝ 666 էջով:

АРМЕН ХАЧАТРЯН

ЗАГАДКА ПЕЧАТНЫХ ИЗДАНИЙ БИБЛИИ ВОСКАНА

Ключевые слова: Библия, Вульгата, Ветхий Завет, Новый Завет, Воскан Ереванци, Амстердам, типография “Святой Эчмиадзин и святой полководец Саргис,” гравюры, цензура.

Первая печатная армянская Библия была опубликована в 1666-1668 годах в Амстердаме усилиями архимандрита Воскана Ереванци (1614-1674), с иллюстрациями и орнаментом. Библия Воскана Ереванци считается одним из лучших образцов старой армянской печати. Статья содержит результаты наших библиографических и научных изысканий в области различных печатных изданий Библии Воскана Ереванци.

ARMEN KHACHATRYAN

THE ENIGMA OF THE PRINTINGS OF VOSKAN'S BIBLE

Keywords: Bible, Vulgate, Old Testament, New Testament, Voskan Yerevantsi, Amsterdam, publishing house “Holy Echmiadzin and St. Sargis,” engravings, censorship.

The first printed Armenian Bible was published in 1666-1668 in Amsterdam by Archimandrite Voskan Yerevantsi (1614-1674), with illustrations and ornaments. The Bible by Voskan Yerevantsi is considered one of the finest examples of early Armenian printing. This article discusses issues regarding the two printed versions of Voskan's Bible.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԻ ՄԱՄՅԱՆ

«ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱԽՏԱՐԱՆ»-Ը՝ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐԳԵԼՎԱԾ ԳՐՔԵՐԻ ՑԱՆԿԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Գիրք Տղայութեան Քրիստոսի, ծածուկ, նզովյալ և սուտ գրվածքներ, առաջալսների պարականոն թղթեր և գործեր, հայ և համաշխարհային մատենագրություն:

«Մանկութեան աւետարան»-ը՝ պատկանում է այն պարականոնների շարքին, որոնք, թեև հայ միջնադարում շատ մեծ տարածում և մեծ ժողովրդականություն են վայելել (ինչի ապացույցն են մեզ հասած բազմաթիվ ձեռագրերը), այնուամենայնիվ, այն հիշատակվել է հայ միջնադարում արգելված գրքերի՝ մեզ հայտնի գրեթե բոլոր ցանկերում: Սրա պատճառը, հավանաբար, ժ. դարի ժամանակագիր Սամուել Անեցու վկայությունն է այն մասին, որ 588 թ. մի խումբ ասորիներ Հայաստան են ներթափանցել և փորձել այստեղ նեստորականություն քարոզել. «Ի Լէ. թուականիս եկին ի Հայս Ասորիք՝ արք քաջաբանք՝ եւ կամէին սերմանել զաղանդն Նեստորի՝ եւ նզովեալք հալածեցան»²: Հեղինակի վկայության համաձայն՝ վերոնշյալ ասորիներն իրենց հետ բերել են նաև մի շարք «սուտ» գրքեր, այդ թվում՝ մեզ հետաքրքրող «Մանկութիւն Տեառն»-ը, որոնք, չնայած արգելքին, շուտով թարգմանվել են հայերեն. «Բայց ոմանք ընկալան՝ նոքա թարգմանեցին նոցին գիրս սուտս»³: Ըստ այդմ՝ «Մանկութեան աւետարան»-ը, որպես հերձվածողական միջավայրի ծնունդ, գիտարկվել է որպես մերժելի պարականոն:

¹ Հայերեն բազմաթիվ ձեռագրերում պահպանված այս պարականոնին շատ հաճախ հանդիպում ենք «Աւետարան Մանկութեան Տեառն», «Մանկական Աւետարան», «Տղայաւետարան», «Գիր տղայութեան Քրիստոսի», «Մանկութիւն Յիսուսի» և երբեմն էլ՝ «Աւետարան մանկութեան» խորագրով, ինչպես օրինակ՝ Եղմ. 3062 ձեռագրում պահպանված երկը, տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմ. Ն. Պողարյան, հ. 9, Երուսաղէմ, 1979, էջ 282: Տե՛ս նաև՝ Ս. Վրդ. Մխսեան, «Մանկութեան աւետարաններ», Սրոն, 1972, ք. 46, էջ 235: Միօրինակությունը պահպանելու համար մենք կգործածենք «Մանկութեան աւետարան» անվանումը:

² Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, աշխ. Ա. Հայրապետեանի, Կ. Մաթևոսեանի, խմբագրութեամբ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, Նաիրի, 2011, էջ 95:

³ Նույն տեղում, էջ 95:

Սամուել Անեցու նշած «սուտ» և «նզովյալ»՝ «եւ որ հաւատայ նոցա՝ նզովի»⁴ տաս գրքերը՝ «զ Գաւրտոսակ եւ Կիրակոսակ, զՊաւղոսի տեսիլն, զԱդամայ ապաշխարութիւնն եւ Գիաթեկ, զՄանկութիւն Տեառն եւ զՍեբիոս եւ Ճիւն աւրհնութեան եւ զանթագչելի մատեանն եւ աւետարանի մեկնութիւն զՄանեայ», որ գրեթէ նույնությամբ հիշատակվում են ինչպես պատմիչ Կիրակոս Գանձակեցու⁵ (1201-1272 թթ.), այնպես էլ նշանավոր բաբունապետ Գրիգոր Տաթևացու⁶ (1346-1409 թթ.) աշխատություններում, գիտնականների ուշադրության կենտրոնում են հայտնվել դեռևս ԺԹ. դարում: Առաջին անգամ այս երկերին անդրադարձել է Թ. Յանը և իր աշխատության մեջ ընդարձակ տեղ հատկացրել դրանց քննությանը⁷: Գիտնականի առաջ քաշած վարկածները ներկայացրել է Հ.Տաշյանը իր «Ս. Գրոց կանոնական եւ անվաւեր գրքերուն քանի մը հայերէն ցուցակներուն մասին»⁸ գրախոսականում:

Յանկի առաջին «Գաւրտոսակ» անունը կրող գրքի մասին Թ. Յանը դժվարանում է որոշակի եզրակացություններ անել: Երկրորդ՝ «Կիրակոսակ» անվանումով երկը նա կապում է հունարեն *KYPIAKÓΣ* («տերունական») ծածկանի կամ *KYPIAKÓΣ* (Կիրակոս) հատկանվան հետ՝ նույնացնելով այն հայերեն թարգմանված Կիրակոսի և Հուդիտայի (Յուդիտայ) վկայաբանության հետ⁹: Վերջինս, որպես հերետիկոսական ծագում ունեցող աշխատություն, ընդգրկվել է Գելասիոս պապին (492-496 թթ.) վերագրվող «Ընդունելի և անընդունելի գրքերի դեկրետ»-ում (Pseudo-Gelasianum Decretum de libris recipiendis et non recipiendis)¹⁰: «Պողոսի տեսիլ»-ը և «Ադամի ապաշխարություն»-ն, ըստ Թ. Յանի՝ մեզ հասած հայտնի աշխատություններ են, իսկ «Գիաթեկ»-ը (հուն. *Διαθήκη* – «ուխտ, կտակ, կտակարան») գիտնականը նույնացնում է ասորերեն «Ադամգրքի» հետ, որն, ըստ նրա՝ ասորական բնա-

⁴ Նույն տեղում, էջ 95:

⁵ Պատմիչը գրեթէ նույնությամբ հաղորդում է Սամուել Անեցու այս պատմությունը, միայն ավելացնում, որ վերոնշյալ ասորիները Հայաստան են եկել «ի տասներորդ ամի տեառն Աբրահամու, և յլէ թովն հայոց...», տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատ. 4. Մէլիք-Յանջանյանի, Երևան, 1961, էջ 51:

⁶ «Այլ որ ճՄ ամա եկին ի Հայք Ասորիք քաջաբանք...», տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 544:

⁷ **Th. Zahn**, *Forschungen zur Geschichte des neutestamentlichen Kanons*, Vol. 5.1, Erlangen & Leipzig: Deichert, 1893, SS. 109-115.

⁸ **Յ. Տաշեան**, «Սուրբ Գրոց կանոնական եւ անվաւեր գրքերուն քանի մը հայերէն ցուցակներուն մասին», ՀԱ, 1895, թիվ 1, յունուար, էջ 1:

⁹ Տե՛ս **Մ. Ապտեբեան**, «Վկայաբանութիւն սուրբ Կիրակոսի և մօրն նորա Յուդիտայի», Կիսկատար վարք և վկայաբանութիւն սրբոց, որք կան ի հին Տօնացոցի եկեղեցոյ Հայաստանեայց, Բ. 1. Վեներաիկ, 1810, էջ 170-178:

¹⁰ **W. Shneemelckher**, *New Testament Apocrypha, Gospels and Related Writings*, Eng. trans. by **McL. R., Wilson**, London, 1991, pp. 38-39.

գրում ունի «Տիաթեկ հօրն մերոյ առաջնոյն Ադամայ»¹¹ խորագիրը: Մեզ հետաքրքրող «Մանկութիւն Տեառն»-ի առնչութեամբ Թ. Յանը զերծ է մնում որևէ եզրակացութիւն անելուց այն մասին, թե վերոնշյալ «Դեկրետ»-ում նշված բազմաթիւ «մանկութեան» ավետարաններից որ մեկին է այն համապատասխանում: Նա միայն նշում է, որ ասորական միջավայրում «Թովմայի ավետարան»¹²-ը ևս հայտնի է «Մանկութիւն Տեառն մերոյ Յիսուսի» խորագրով: Հ. Տաշյանն իր հերթին կասկած չի հայտնում այն մասին, որ այս ավետարանը հայերեն ձեռագրերում հաճախ հանդիպող «Տղայաւետարան»-ն է, որ վերագրվում է տեառնեղբայր Հակոբոսին¹³: «Սեբիոս եւ ձիոն արհնութեան»-ը Թ. Յանն աներկբայորեն կապում է Հակոբ Մծբնեցու (Ափրահատ) և նրան վերագրվող «Ձգօն»¹⁴ գրքի վերջին՝ 23-րդ ճառի հետ՝ համարելով, որ «Սեբիոս»-ը նույն Nisibenus (Մծբնեցի) անվան աղավաղված ձևն է: Ըստ հեղինակի՝ վերոնշյալ «ձիոն արհնութեան» երկը չի ընդգրկվել Ե. դարում հայերեն թարգմանված «Ձգօն»-ի մյուս ճառերի մեջ, այդ իսկ պատճառով թարգմանվել է միայն 588 թ. Հայաստան բերվելուց հետո: Հ. Տաշյանը կասկածի տակ է դնում Թ. Յանի այս տեսութիւնը, նախ՝ քանի որ դժվար է սերտ առնչութիւն գտնել այս ճառի և նեստորական ուսմունքի միջև, և ապա՝ ավելի հավանական է մտածել, որ այս երկը հայերենով պակասող մյուս երեք ճառերի հետ միասին թարգմանվել է Ե. դարում, սակայն հետագայում կորել է: Ինչ վերաբերում է «Անթաքչելի մատեանք»-ին և «Աւետարանի մեկնութիւն զՄանեայ»-ին, ապա առաջինը Թ. Յանը համարում է կրոնական ազանդի կանոնական գրութիւնների հավաքածու, իսկ երկրորդը թողնում է մանիքեական ուսմունքի գիտակներին քննութեանը¹⁵:

¹¹ E. Renan, "Fragment du livre gnostique intitulé: Apocalypse d'Adam, ou Pénitence d'Adam, ou Testament d'Adam, publiés d'après deux versions syriaques..." *Journal Asiatique*, V^e série, t. II, dec. 1853, pp. 427-471.

¹² Պարականոնի ամբողջական անվանումն է «Թովմա Իսրայելացի Փիլիսոփայի պատմությունը Քրիստոսի մանկության մասին», տե՛ս **И. С. Свенцицкая**, *Тайные писания первых христиан*, Москва, 1980, с. 172: Պարունակում է Հիսուսի 5-12 տարեկանն ընկած ժամանակաշրջանը և նրա՝ այդ տարիների ընթացքում գործած բազմաթիւ հրաշխները: Հայերեն ձեռագրերում «Թովմայի ավետարան»-ը չի պահպանվել կամ մինչ այժմ չի հայտնաբերվել:

¹³ **Յ. Տաշեան**, «Սուրբ Գրոց կանոնական եւ անվաւեր գրքերուն քննութեան մասին», էջ 2:

¹⁴ «Ձգօն»-ի և դրա հեղինակային պատկանելիության հարցերի մասին տես **Ե. Տեր-Մինասյան**, ««Ձգօն» կոչուած գրքի հեղինակի շուրջ», *Պատմա-բանասիրական հետազոտութիւններ*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ. 1971, էջ 411-424:

¹⁵ **Յ. Տաշեան**, «Սուրբ Գրոց կանոնական եւ անվաւեր գրքերուն քննութեան մասին», էջ 2:

Աստվածաշնչի կանոնի ուսումնասիրության շրջանակներում Մամուել Անեցու մեջբերած ցանկը քննության է առել նաև Մ. Տեր-Մովսիսյանը: Ըստ նրա՝ Հայաստանում նեստորական ասորիների ծավալած ամենաեռանդուն գործունեության ժամանակից շուրջ վեց հարյուրամյակ անց ապրած Մամուել Անեցին նեստորական գրքերի ցուցակը պետք է վերցրած լիներ ինչ-որ հին, անհետացած աղբյուրից, և քանի որ հերձվածողական համարվող այդ գրքերը մեծամասամբ արդեն ոչնչացվել էին և մեզ են հասել միայն երկուսը՝ «Աղամայ ապաշխարութիւն»-ն¹⁶ և «Մանկութիւն Տեան»-ը¹⁷, նա դրանց մասին որևէ այլ տեղեկություն հաղորդել չէր կարող: Ուստի, անդրադառնալով այս երկերի վերաբերյալ Թ. Յանի ուսումնասիրությանը, Մ. Տեր-Մովսիսյանը համարում է, որ գիտնականի բոլոր բացատրությունները զուրկ են որևէ լուրջ հիմնավորումից և կարող են ընդունվել լուրջ որպես վարկած, քանի որ հիմնված են միմիայն մեզ չհասած երկերի անվանումների վրա¹⁸:

¹⁶ Աղամին վերաբերող հայերեն պարականոն բնագրերի մի մասը լույս է տեսել *Թանգարան հին ու նոր նախնեաց-ի Ա. հատորում* 1) «Պատմութիւն վարուցն Աղամայ և Եւայի նախաստեղծիցն» (էջ 1-23), 2) «Մահ Աղամայ» (էջ 24-26), 3) «Պատմութիւն ստեղծման և յանցմանն Աղամայ» (էջ 307-311), 4) «Պատմութիւն ելանելոյն Աղամայ ի դրախտէն» (էջ 312-314), 5) «Այս է պատմութիւն Ռդուցն Աղամայ Աբելի եւ Կայէնի» (էջ 314-319), 6) «Վասն աւետեացն Սէթայ, զոր պարտ է մեզ ունկն դնել» (էջ 319-324), 7) «Պատմութիւն ապաշխարութեան Աղամայ և Եւայի նախաստեղծեաց» (էջ 325-330), 8) «Բանք Աղամայ առ Սէթ» (էջ 331-332), տե՛ս *Թանգարան հին ու նոր նախնեաց, հտ. Ա, Անկանոն գիրք Հին Կտակարանաց* (այսուհետ՝ *Անկանոն գիրք Հին Կտակարանաց*), կազմ. Ս. Յովսէփեան, Վենետիկ, 1896: Վենետիկյան հրատարակչությունում շնորհակցված բնագրերը լույս է ընծայել Մ. Սթոունը, տե՛ս Մ. Է. Սթոուն, *Պարականոն բնագրեր և ավանդություններ*, Երևան, 2014, էջ 7-38:

Աղամական գրականության, և հատկապես՝ Սեթին վերաբերող երկերի առնչությամբ ուշագրավ են գերմանացի հետազոտող Է. Պրոյզենի դիտարկումները, որոնց համաձայն՝ մեծ աղերսներ կան *սեթյան* կոչվող ուսմունքի և այս գրքերում տեղ գտած վարդապետության միջև: Վկայակոչելով Եպիփան Կիպրացու տեղեկությունն այն մասին, որ *սեթյան* աղանդի ներկայացուցիչները ներթափանցել են նաև Հայաստան՝ գիտնականը համարում է, որ վերոնշյալ գրվածքները հենց նրանք են Հայաստան բերել, տե՛ս E. Preuschen, *Die apokryphen gnostischen Adamschriften aus dem Armenischen übersetzt und untersucht*, Giessen, 1900, SS. 842-843, ամփոփումն ըստ Հ. Բ. Պ.-ի, «Դոկտ. էրվին Պրոյզենն նոր հայագիտին աշխատասիրությունները», *ՀԱ*, հունվար, 1902, էջ 8-9: Պարականոնում արժարժված աստվածաբանական գաղափարների մասին տե՛ս Տ. Գ. վրդ. Թումանյան, «Ծննդ. Գ. 1-7-ի աստվածաբանական մոտիվները հայ պարականոն գրականության մեջ», *էջմիածին*, 2013, ժ, էջ 23-33:

¹⁷ Ըստ Տեր-Մովսիսյանի՝ ցանկի մյուս գրվածքներն անհայտ են ոչ միայն հայ, այլ նաև համաշխարհային գրականության մեջ: Պարզ չէ, թե ինչու գիտնականը պահպանված գրքերի շարքում չի նշում «Պողոսի Տեսիլ»-ը, որ մեզ է հասել բազմաթիվ ձեռագրերով: Երկի մի քանի տարբերակները լույս են ընծայել Մխիթարյան հայրերը, տե՛ս *Թանգարան հին ու նոր նախնեաց, հտ. Գ, Անկանոն գիրք Առաքելականք* (այսուհետ՝ *Անկանոն գիրք Առաքելականք*), կազմ. Զ. Ջրաբեան, Վենետիկ, 1904, էջ 62-110:

¹⁸ М. Тер-Мовсисян, *История перевода Библии на армянский язык*, СПб, 1902, с. 251-252.

Մեզ հետաքրքրող գրքերին հպանցիկ անդրադարձել է նաև Ե. Տեր-Մինասյանը և, հրաժարվելով որևէ մեկնաբանություն անել «Գաւրտոսակ», «Կիրակոսակ», «Սեբիոս» և «Ճիռն աւրհնութեան» անունների նշանակության մասին՝ դրանք համարել է նեստորականների գրքերի անվանումների աղավաղումներ: Յանկում առկա մյուս գրվածքների անուններից դատելով (ինչպես օրինակ՝ «Պաւղոսի տեսիլն», «Աղամայ ապաշխարութիւնն», «Իրաթեկ», «Մանկութիւն Տեառն» և այլն)՝ հեղինակը եզրակացրել է, որ դրանք մասամբ նեստորական, մասամբ էլ հին գնոստիկյան աղանդավորներին պատկանող երկեր են, որ գրվել են ժողովրդի ընթերցանության համար և հետագայում օգտագործվել նաև նեստորականների կողմից¹⁹:

Բավական հետաքրքիր և յուրօրինակ են Սամուել Անեցու ցանկում ընդգրկված որոշ գրքերի առնչությամբ Լ. Զաքարյանի արած հետևյալ դիտարկումները՝

«Կիրակոսակ»-ը ծագում է հունարեն κυριακός՝ տիրական, տերունական բառից, և ըստ այդմ՝ այս երկը, ամենայն հավանականությամբ, Հիսուսին հասցեագրված աղոթքների հավաքածու է:

«Սեբեոս»-ը եվսեբիոս անվան փոփոխված ձևն է, և խոսքն այստեղ հավանաբար եվսեբիոս Կեսարացու (265-340 թթ.) մասին է, ում երկերը հայերեն են թարգմանվել դեռևս Ե. Զ. դարերում, իսկ նրա հայտնի «Քրոնիկոն»-ը պահպանվել է միայն հայերեն թարգմանությամբ:

Ինչ վերաբերում է «Ճիռն աւրհնութեան»-ին, ապա, ըստ Լ. Զաքարյանի՝ պետք է կարծել, որ հայկական ծիսակարգի այս կանոնը փոխառնված է ասորական ավանդույթներից, քանի որ ասորական ծիսակարգում նույնպես կան «բույսերի, դաշտերի, հացահատիկի, սերմերի, խաղողի այգիների և գինեգործության օրհնության» ծեսերին առնչվող կանոններ²⁰:

«Իրաթեկ» անվան նշանակության առնչությամբ հեղինակը համոզմունք է հայտնում, որ գրվածքը Տատիանոսի (120-180 թթ.) «Իրատեսսարոն»-ն է, որը երկար ժամանակ կիրառություն է ունեցել ասորիների շրջանում: Իր տեսությունը Լ. Զաքարյանը հաստատում է այն իրողությամբ, որ «Իրատեսսարոն»-ի՝ եփրեմ Ասորու մեկնությունը հայերեն է թարգմանվել դեռևս Ե. դարում, և

¹⁹ Ե. Տեր-Մինասյան, «Նեստորականները Հայաստանում», Պատմա-բանասիրական հետազոտություններ, էջ 380:

²⁰ L. Zakarian, "La miniature du Vaspurakan et les apocryphes", V. Calzolari Bouvier, J.-D. Kaestli & B. Outtier (eds.), *Apocryphes arméniens: transmission, traduction, création, iconographie. Actes du colloque international sur la littérature apocryphe en langue arménienne. Genève, 18-20 septembre 1997* (Publications de l'Institut Romand des Sciences Bibliques 1), Lausanne: Zèbre, 1999, p. 172.

այսօր այս երկը գիտական աշխարհին հայտնի է միմիայն հայերեն թարգմանութեամբ²¹:

Կանգ առնելով «Դիաթեկ» երկի վրա՝ կարևոր ենք համարում նշել, որ թեև վերոնշյալ բոլոր ուսումնասիրողները այն դիտարկել են որպես առանձին աշխատություն, այնուամենայնիվ, որոշ ձեռագրերում, ինչպես օրինակ՝ ՄՄ 708 ժողովածուում (թ. 110բ)²² այն հանդիպում ենք «զՏիադեկ մանկութիւն Տեառն» ձևով, ինչն էլ, ըստ է. Շիրինյանի՝ պետք է հասկանալ որպես «Տիրոջ Մանկութեան ավետարան»²³:

Ամփոփելով Սամուել Անեցու հիշատակած գրքերի առնչությամբ արված վերոբերյալ տեսակետները, թերևս համաձայնենք Մ. Տեր-Մովսիսյանի այն կարծիքին, ըստ որի՝ ինչքան էլ որ հավանական թվա այս կամ այն տեսության հավաստիությունը, այնուհանդերձ, անհնար է չպահպանված երկերի մասին հստակ և աներկբա եզրակացություններ անել՝ հիմնվելով միմիայն դրանց անվանումների վրա:

Արգելված կամ նգովյալ գրքերի՝ մեզ հասած մատենագիտական որոշ այլ ցանկերում Սամուել Անեցու հիշատակած գրքերի շարքի համեմատ որոշակի փոփոխություն է նկատվում: Այսպես օրինակ՝ ՄՄ 5854 ձեռագրում (ԺԵ դ.) «Յանկ գրոց հերձուածողաց»-ում «Դիաթեկ»-ին փոխարինում է «Պրակսոթայք»-ը, ավելանում են «Թումայի աւետարան»-ն և «Աստուածածնի տեսիլն»²⁴, իսկ ցանկի վերջում կարդում ենք հետևյալ մեջբերումը՝ «Բարծիմա և ընկերք իւր և այլք ի հերձուածողաց գրեցին զսոսայ» (ՄՄ 5854, թ. 1ա):

Հայաստանում Բարծիմայի կամ Բարծումայի գործունեության մասին հիմնական տեղեկությունները հաղորդում է Թ-Ժ դդ. պատմիչ Թովմա Արծրունին²⁵, սակայն նա չի խոսում Բարծումայի և նրա ընկերների ստեղծած գրականության մասին: Մ. Չամչյանը, ով իր «Պատմության» համապատասխան հատվածը շարադրելիս հիմնականում օգտվել է Թովմա Արծրունու աշխատությունից, անդրադարձել է ինչ-որ «զգիրս մոլորութեան»-ին, սակայն նրա մեջբե-

²¹ Նույն տեղում: Տե՛ս Սրբոյն եփրեմի մատենագրութիւնք, Կ. Բ, Մեկնութիւն համաբարբառ որ ըստ չորից աւետարանչաց եւ թարգմանութիւն առակաւոր բանիցն, Վենետիկ, 1838:

²² «Վասն սուտ գրեացն» խորագիրը ենթադրող այս հատվածի սկսվածից դատելով՝ «Ի Ժ-երոդ ամի տեառն Աբրահամու եկին յԱսորոց ի Հայս...», ձեռագրի գրիչն օգտվել է ոչ թե Սամուել Անեցու, այլ Կիրակոս Գանձակեցու վերոնշյալ վկայությունից:

²³ Է. Շիրինյան, ««Գիտութիւն գրոց»-ը միջնադարյան Հայաստանում («Անկանոն, Արտափին եվ Նուրբ Գրեանք»)», Տարեգիրք ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի, Երևան, 2015, էջ 36, ծնթ. 1:

²⁴ Տե՛ս Անկանոն գիրք նոր Կտակարանաց, էջ 440-451:

²⁵ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, ՄՀ, Կ. ԺԱ, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 118-119:

րած գրքերը վերագրվում են ոչ թե Բարձունային ու նրա գործակիցներին, այլ Դիոդորոս Տարսոնացուն և Թեոդորոս Մապսուեստացուն.

«Յետ վախճանելոյ երանելոյն Գիւտայ՝ եկն 'ի Հայս Բարձունա ոմն նեստորական, եւ էարկ խռովութիւն մեծ եւ եղեւ պատճառ բազում շարեաց... եւ ապա յորժամ արտաքսեալ զնոսա յնդեսիոյ Իրաբոս՝ որ եւ Բաբելոս եպիսկոպոս քաղաքին յաւուրս սրբոյն Սահակայ Պարթեւի, նոքա առեալ զգիրս մոլորութեան Դիոդորի եւ Թէոդորոս ի՝ տարան զայնս յաշխարհ տէրութեան Պարսից. որպէս եւ այլք ոմանք 'ի Հայս ըստ որում գրեցաք. Ի. 59. երես. 526. եւ իւրեանց ճարտարմտութեամբ որսացեալ զբազումս 'ի քրիստոնէից...»²⁶:

Հետագա դարերից մեզ հասած որոշ այլ գրացուցակներում, որոնց անբաժանելի մասն է կազմում նաև «Մանկութեան աւետարան»-ը, «սուտ» գրքերի թիվը հասցված է տասնվեցի: Այդպիսի մի ցանկ է պահպանվել ժՁ դարից՝ «Այս են անուանք ժՁ սուտ գրոցն, որ եկեալ ի հերձուածող Ասորոցն» խորագրով, որ իր ընդգրկած գրքերի անուններով ու դրանց դասավորութեամբ որոշ չափով տարբերվում է Սամուել Անեցունշածներից՝ «Ադամայ կտակն», «Ճիւնն օրհնութեան», «Փիփիանն», «Գորտոսակն», «Կիրակոսակն», «Ղոսիմուն», «Պետրոսի տեսիլն»²⁷, «Դիաթեկն», «Աստուածածինն պատմութիւն», «Սեբիոսն», «Փիւրհոնացիքն», «Մանկութիւն տեանն», «Լուսաւորչին տեսիլքն», «զԱնթաքչելի մատեանսն», «Գրիգորի և Բարսեղի հարցմունքն», «զՄանեայ մեկնութիւնն աւետարանի» և որ հաւատայ նոցա՝ նզովի» (ՄՄ 1869, թ. 391բ):

Հավելյալ գրքեր է պարունակում նաև Գ. Զարբհանալյանի մեջբերած ցուցակը, որի խորագրում թեև հիշատակվում է ավելագիր ութ երկ՝ «Այս են անուանք ութևտասն (ընդգծումը մերն է՝ Մ.Մ.) սուտ գրոց, որ եկեալ 'ի հերձուածող Ասորոց և ոչ յուղղափառաց Ասորոցն», այնուամենայնիվ, այստեղ առկա գրքերի քանակը նույնպէս տասնվեցն է, որոնք և անվանապէս նույնանուն են նախորդ ցուցակում եղածներին²⁸:

Ավելացված այս վեց գրվածքները Հ. Անասյանը համարել է ավելի վաղ ժամանակաշրջանի թարգմանություններ, որ կատարվել են կամ 431 թ. Նիքեոսի ժողովից հետո, կամ էլ Ձ. դարի առաջին կեսին՝ նեստորականության քարոզչության ծաղկման ժամանակաշրջանում²⁹: Հավելյալ գրքերի շարքում, սակայն, տեղ գտած գրվածքներից երկուսը՝ «Լուսաւորչին տեսիլն» և «Գրիգո-

²⁶ Մ. Զամչեան, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 152-153:

²⁷ Ինչպէս կարելի է նկատել, Սամուել Անեցու և նրա հետևողությամբ՝ Կիրակոս Գանձակեցու և Գրիգոր Տաթևացու հիշատակած նզովյալ գրքերի շարքում առկա «Պաւղոսի տեսիլ»-ին այստեղ փոխարինում է «Պետրոսի տեսիլ»-ը:

²⁸ Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Գ-ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 20:

²⁹ Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., հ. Ա, Երևան, 1959, էջ XI:

րի և Բարսեղի հարցմունքն», ամենայն հավանականութեամբ, հայկական միջավայրում դավանաբանական որոշ նկատառումներով ստեղծված բնագրեր են: «Լուսաւորչի տեսիլն», որ հավանաբար հայերեն բազմաթիվ ձեռագրերում հանդիպող «Տեսիլ և հարցումն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին ընդ հրեշտակի» խորագիրը կրող երկն է³⁰, գրվել է հետագա դարերում և վերագրվել Գրիգոր Լուսավորչին՝ գրվածքի արժեքը բարձրացնելու միտումով³¹: Իսկ «Գրիգորի և Բարսեղի հարցմունքն»-ի համար, ըստ Կ. Մուրադյանի՝ օգտագործվել են առանձին դրվագներ Գրիգոր Նազիանզացու և Բարսեղ Կեսարացու նույնաբնույթ մի երկից՝ «Հարցմունք սրբոյն Բարսղի Կեսարացոյ առ սուրբն Գրիգորի»-ից³²:

«Մանկութիւն Տեառն»-ը, կամ որ նույնն է՝ «Գիրք տղայութեան» ավետարանը մի շարք այլ գրքերի շարքում «խոտելի» է անվանել ԺԲ. դարի կիլիկյան դպրոցի նշանավոր մատենագիր Սարգիս Շնորհալին իր «Կաթողիկէ թղթերի մեկնութեան» մեջ. «Իսկ որ ամենևին խոտելիք են՝ քանզի ի հոգևոյն մոլորութեան» է արտադրեցան, պրակսաւաթայքն՝ զօր տօն Մարիամու անուանեն (և աւետարանն՝ զոր Թումային ասեն) և գիրք տղայութեան Քրիստոսի, և այլք սոյնպիսիք՝ որք ի կերպարանս ճշմարտութեանն կամեցան ի ներքս մտանել, զոր ոչ ընկալաւ եկեղեցի Աստուծոյ՝ զորումն չարութեան և զգաղձն վնասակար»³³:

Եթե ըստ Սամուել Անեցու և նրա հետևողութեամբ արված հիշատակությունների՝ ի թիվս Հայաստան բերված նեստորական մյուս գրքերի «Մանկութիւն Տեառն»-ը բնորոշվում է որպես «սուտ», իսկ Սարգիս Շնորհալին այն անվանում է «խոտելի» գրվածք, ապա նշանավոր եկեղեցական գործիչ ու մատենագիր Մխիթար Այրիվանեցու (1230/35-1297/1300 թթ.) կազմած հայտնի «Ճառընտիր»-ում տեղ գտած պարականոն գրքերի շարքում ավետարանը որակվում է որպես «ծածուկ»: ՄՄ1500 այս ձեռագիրը, որ է. Հարությունյանի գնահատմամբ «իր տեսակի մեջ ամենաճոխ և ողջ միջնադարում երբեք չգերազանցված մեզ հայտնի միակ մեծահարուստ ժողովածուն է՝ եզակի նաև իր ընդգրկած նյութերի բնույթով և դրանց բնագրերի ընտիրութեամբ, ուր ի մի են

³⁰ Տե՛ս օրինակ՝ ՄՄ11, ք. 7բ-21բ, ՄՄ39, ք. 110բ-29, ՄՄ2782, ք. 174բ-9բ, ՄՄ2576, ք. 136բ-8բ, ՄՄ2650, ք. 127բ-30բ, ՄՄ2111, ք. 281բ-5ա, ՄՄ1633, ք. 125բ-144ա, ՄՄ1682, ք. 167ա-184բ, ՄՄ588, ք. 282ա-95ա, 296բ-304բ, ևն.:

³¹ Լ. Խաչիկյան, «Օտարալեզու հայ գրականությունը չորրորդ դարում (Ներսես Պարթևի և Եպիփանի նորահայտ «Հարցման» առիթով)», ՊԲՀ, № 3, Երևան, 1973 (էջ 27-51), էջ 35:

³² Կ. Մուրադյան, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1983, էջ 60-61: Հ. Անասյանը «Գրիգորի և Բարսեղի հարցմունքն» անվավեր գրությունը համարում է վերջինից անկախ ստեղծագործություն, տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե-ժԸ դդ., հ. Բ, Երևան, 1976, էջ 1356:

³³ Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկէայց, տպեալ յամի 1828 ի Կ. Պոլիս, վերատպեալ ի տպարանի Սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, 1998, էջ 399:

հավաքված իր ժամանակին հանձնարարելի համարվող կարևորագույն գրքերը»³⁴, սկսած ժԹ. դարից բավական մանրազնին քննության է ենթարկվել³⁵: Հետազոտողների հատուկ ուշադրություն են արժանացել նաև այս ժողովածուում տեղ գտած կանոնական և պարականոն գրքերի շորս ցանկերը³⁶.

ա) Գիրք, գոր ունէին հրէայքն ի ծածուկք

բ) Սրբոյն Կղեմայ, եթէ ո՞ր գիրք ընդունելի է,

գ) Սրբոյն Եւագրեա, Կարգադրութիւն Աստուածաշունչ տառից,

ե) Սրբոյն Կիրղի Երուսաղէմի հայրապետի կարգադրութիւն Աստուածաշունչ³⁷:

Վերոնշյալ գրացուցակներից առաջինը, որի երկրորդ՝ նորկտակարանյան պարականոններ պարունակող հատվածում («Իսկ ըստ նորոյս») ընդգրկվել է նաև մեզ հետաքրքրող «Մանկութեան աւետարան»-ը, ի թիվս մյուս երեք ցանկերի տեղ է գտել նաև Մխիթար Այրիվանեցու «Պատմութիւն ժամանակագրական»-ի մէջ, որ 1867 և 1869 թ. (ռուսերեն թարգմանությամբ) հրատարակել է Ք. Պատկանյանը: Այս հրատարակությունների մէջ, սակայն, առաջին և երկրորդ ցանկերի միջև հստակ տարանջատում չի դրվել. դրանք ներկայացված են մեկ ընդհանուր «Գիրք, գոր ունէին հրէայքն ի ծածուկք» խորագրի ներքո (թիվ 33), իսկ երկրորդ ցուցակի առաջին՝ Սրբոյն Կղեմայ բառերն անջատված են «...եթէ ո՞ր գիրք ընդունելի է»-ից և ներկայացված է իբրև առանձին գրվածք³⁸: Ուստի հետագա ուսումնասիրողները, ում այս ցանկերը հայտնի են դարձել Ք. Պատկանյանի աշխատության միջոցով, «Գիրք, գոր ունէին հրէայքն ի ծածուկք» և «Սրբոյն Կղեմայ, եթէ ո՞ր գիրք ընդունելի է» գրացուցակները

³⁴ Է. Հ. Հարությունյան, Մխիթար Այրիվանեցի (կյանքն ու ստեղծագործությունը), 1985, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 100:

³⁵ Այդ ուսումնասիրությունների մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 100-145:

³⁶ Այս ցանկերը հաշորդում են Հին Կտակարանի գրքերին (Նոր Կտակարանն այստեղ նախորդում է Հինին):

³⁷ ՄՄ1500, ք. 369բ: Այս ցուցակները հրատարակվել են մի շարք աշխատություններում՝ Կ. Տեր-Մկրտչյան, «Յաւելուած Արարատի 1895 թ. Հոկտեմբեր ամսի», Արարատ, 1895, հոկտեմբեր, էջ 408, Մ. Тер-Мовсисян, նշվ. աշխ., էջ 239, Գ. Հովսեփյան, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, հա. Գ, Նիւ-Յորք, 1942/3, էջ 197-198, Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., հ. Ա, էջ XI, Ռ. Իշխանյան, Հայ մատենագիտության պատմություն, պրակ Ա, էջ 25-34 և Մ. Stone, «Armenian Canon Lists III – the Lists of Mechitar of Ayrvank' (c. 1285 C.E.)», *Harvard Theological Review* 70, 1976, pp. 290-291, տե՛ս Է. Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 131, ծնթ. 65:

³⁸ Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծ. Ք. Պ., Ս. Պետերբուրգ, տպ. Կայսերական ցեմարանի գիտութեանց, 1867, էջ 33, տե՛ս նաև նույնի՝ *Хронографическая история, составленная отцом Мехитаром, варданетом Айриванским*, СПб: Типография императорской академии наук, 1869, с. 359:

ներկայացրել և քննել են որպես մեկ ընդհանուր ցանկ³⁹: Յանկերի նման դասավորութեան հետեւանքով որոշ հետազոտողներ, այդ թվում նաև Ք. Պատկանյանն ինքը, «Սրբոյն Կղեմայ, եթէ ո՞ր գիրք ընդունելի է» ցուցակի վերջին՝ «Ջայս ես և Անանէ գրեցաք ի վիմի քաղաքին, ուր եկեղեցի օրհնեցաք» նախադասութեանից եզրակացրել են, որ ցուցակի կազմողը Մխիթար Այրիվանեցին է, իսկ ցանկում ներառված գրքերը գոյութիւն են ունեցել ԺԳ. դարի վերջին և ԺԳ. դարի սկզբին⁴⁰:

Հետաքրքրական է, որ տվյալ ժամանակաշրջանում մեզանում այս երկերի առկայութեան տեսակետը պաշտպանել է նաև Հ. Անասյանը, ով, սակայն, ցանկը ներկայացնելով ՄՄ 1500 բնագրի հիման վրա, ի տարբերութիւն նախորդների՝ ոչ միայն հստակ տարբերութիւն է դրել «Գիրք, զոր ունէին հրէայքն ի ծածուկք» և «Սրբոյն Կղեմայ, եթէ ո՞ր գիրք ընդունելի է»-ի միջև, այլև առաջին ցանկի մաս կազմող «Իսկ ըստ նորոյս» գրքերի շարքը ներկայացրել է որպես առանձին գրացուցակ⁴¹.

Գիրք զոր ունէին հրէայքն ի ծածուկք

Ադամա, Ենովքա, Սիբէլա, բժ նահապետացն, Աղաւթն Յովսեփա, Վերացումն Մուսէսի, Ելզադ և Մովդատն, Սաղմոնի սաղմոսքն, Եղիայի ծածուկքն, Դանիէլի է երրորդ տեսիլն:

Իսկ ըստ նորոյս այսոքիկ են

Գիրք մանկութեան Տեսառն⁴²,
Թոմայի Աւետարանն,
Յայտնութիւնն Պետրոսի առաքելոյ,
Գ շրջագոյ Պաւղոսի⁴³,
Կաթողիկէ թուղթքն Բառնաբա և Յովդայի և Թաւմայի⁴⁴:

³⁹ Տե՛ս օրինակ՝ Գ. Գալեփարեան, «Մխիթար Այրիվանեցի եւ իւր նորագիտ գրութիւնը», ՀԱ, 1891, թիվ 6, հունիս, էջ 162, նաև՝ “Histoire Chronique de Mkhithar d'Aïrivanck, XIII^e s.”, traduite de l’arménien sur le manuscrit du Musée asiatique, par **M. Brosset**, *Mémoires de l’Academie impériale des sciences de St. Pétersbourg*, VIIe série, t. XIII, n. 5, 1869, p. 22:

⁴⁰ Տե՛ս **К. Патканов**, *нշվ. աշխ.*, էջ 359, ծնթ. 3, նաև “Une version arménienne de l’Histoire d’Assanéth” par **A. Carrière**, *Nouveaux Mélanges Orientaux* (Publications de l’École des Langues Orientales Vivantes II 19), Paris, 1886, p. 476:

⁴¹ Հ. Անասյան, *Հայկական մատենագիտութիւն, Ե-ԺԸ դդ.*, հ. Ա, էջ XL:

⁴² Ըստ *Ժամանակագրութեան՝ «Մանկութիւնն Յիսուսի»*, տե՛ս Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական, էջ 33:

⁴³ Ըստ *Ժամանակագրութեան՝ «Շրջագան Պողի»*, նույն տեղում:

⁴⁴ Հ. Անասյանն այս ցանկը ներկայացրել է ըստ ՄՄ 1500 (թ. 369բ), ՄՄ 582(թ. 15բ), ՄՄ 9121 (թ. 73բ) և ՄՄ 8743 (թթ. 43ա-բ) օրինակների, տե՛ս Հ. Անասյան, *Հայկական մատենագիտութիւն*, հտ. Ա, էջ XL:

Հստ Ն. Անասյանի՝ առաջին սյունակում զետեղված ծածուկ գրքերն առաջին դարերում ստեղծված և քրիստոնեական մշակման ենթարկված հրեական գրքեր են: Եվ քանի որ այս գրացուցակում նշվում են միայն տաս, իսկ հրեական անվավերները թվով ութսունն են, ապա, ըստ նրա, կարելի է ենթադրել, որ ցանկում նշված են միայն այն գրքերը, որոնք գոյություն են ունեցել հայերեն թարգմանությամբ: Եվ սա, հայագետի դիտարկմամբ, զարմանալի չէ, քանի որ դրանց մեծ մասը պահպանվել է առ այսօր: Համենայն դեպս, եզրակացնում է նա, այս ցուցակը հունականներից անկախ է և ինքնուրույն կառուցվածք ունի⁴⁵: Համանման տեսակետ է արտահայտել նաև Ռ. Իշխանյանը, չնայած նա «Գիրք, զոր ունէին հրէայքն ի ծածուկք» ցանկն անպայմանորեն չի կապել Միսիթար Այրիվանեցու անվան հետ, այնուհանդերձ կարծում է, որ «հիշյալ չորս ցուցակներից այս առաջինը հայերեն թարգմանված պարականոն գրքերի, այսինքն՝ հայերեն եղած գրքերի ցուցակ է, իսկ դա նշանակում է, որ ցուցակը կազմվել է հայ մատենագետի ձեռքով»⁴⁶:

Հակառակ կարծիքն է արտահայտել Գ. Զարբհանալյանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Գիրք, զոր ունէին հրէայքն ի ծածուկք» ցուցակում առկա գրքերի հայերեն թարգմանությունները մեծամասամբ անհայտ են, և ենթադրելով, որ Միսիթար Այրիվանեցին ձեռքի տակ ունեցել է արդեն իսկ կազմված, պատրաստի ցանկ: Հայագետը սերտ աղերսներ է գտել այս ցուցակում հիշատակված գրվածքների և երկու հունարեն պարականոն ցանկերի միջև. մեկը Նիկիիոր պատրիարքի (806-815 թթ.) ժամանակագրությանը կցված պարականոն գրքերի ցուցակն է⁴⁷ (ուշագրավ է, որ այս ցանկում «վիճարկելի»՝ ὄσαι ἀντιλέγονται և «ծածուկ»՝ ἀπόκρυφα գրքերը ընդգրկված են երկու տարբեր խմբերում), մյուսը՝ հեղինակի բնորոշմամբ, «Անյայտից» գրացուցակներում տեղ գտած գրվածքները⁴⁸: Մեջբերելով նշված «ծածուկք» երկերից միայն առաջին տասի՝ հինկտակարանյան գրքերի անունները՝ նա ներկայացրել է դրանց ինչպես այլալեզու, այնպես էլ հայ մատենագիտությունը⁴⁹:

Գ. Զարբհանալյանի հիշատակած «Անյայտից» ցուցակն, ամենայն հավանականությամբ, է. դարում կազմված երեսունչորս հինկտակարանյան և քսանվեց նորկտակարանյան կանոնական վաթսուն գրքերին (ընդգրկված չէ միայն

⁴⁵ Նույն տեղում, էջ X-XII:

⁴⁶ Ռ. Իշխանյան, նշվ. աշխ, էջ 27:

⁴⁷ St' u C. de Boor, *Nicephori archiepiscopi Constantinopolitam Opuscula Historica, Accedit Ignatii diaconi vita Nicephori*, 1880, Lipsiae, pp. 134-135:

⁴⁸ Գ. Զարբհանալյան, նշվ. աշխ., էջ 187:

⁴⁹ Նույն տեղում, էջ 188-190:

Հովհանու Հայտնությունը) կցված պարականոն գրվածքների ցանկն է⁵⁰, որ մանրազնին քննության է ենթարկել թ. Յանը՝ համեմատելով այն «Գիրք, զոր ունէին հրէայքն ի ծածուկք» ցուցակի հետ⁵¹: Գերմանացի գիտնականը, հավանաբար անձանոթ լինելով Գ. Ջարբհանայանի վերոնշյալ դիտարկումներին (նա երբևէ չի մեջբերում վերջինիս աշխատությունը) եկել է միևնույն եզրահանգմանը, համաձայն որի՝ Մխիթար Այրիվանեցին իր ձեռքի տակ ունեցել է պատրաստի՝ հունարենից հայերեն թարգմանված ցանկ⁵²:

Գ. Ջարբհանայանի և թ. Յանի տեսությունը հաստատվել է հետագայում, երբ ձեռագրական նոր ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ «Գիրք, զոր ունէին հրէայքն ի ծածուկք» և «Սրբոյն Կղեմայ, եթէ ո՞ր գիրք ընդունելի են» ցուցակները «Ճառընտիր»-ում ընդօրինակված են որպես առանձին միավորներ⁵³:

Մ. Տեր-Մովսիսյանը, իր հերթին ուսումնասիրելով «Գիրք, զոր ունէին հրէայքն ի ծածուկք»-ը, նույնպես եկել է այն հետևություն, որ Մխիթար Այրիվանեցին չէ այս ցանկի հեղինակը, այլ դրա հիմքում ընկած են հունական գրացուցակները: Հակառակ դեպքում, գրում էր գիտնականը, Այրիվանեցին՝ իր ժամանակի ամենագիտուն և կրթված եկեղեցականներից մեկը, լավագույնս տարբերակելով պարականոն գրքերը կանոնականներից և քաջատեղյակ լինելով պարականոն բոլոր գրքերին, իր ցանկում կընդգրկեր նաև այն գրքերը, որոնք թեև տեղ են գտել նրա իսկ կազմած «Ճառընտիր»-ում, այստեղ ներառնված չեն (ինչպես օրինակ՝ «Եզրայ-Սաղաթէլայ»⁵⁴ և «Վասն Երեմիայի ի Բաբելոն» գրքերը, մարգարեների մահերը և այլն): Եվ հակառակը՝ իր «Ճառընտիր»-ում նա կներառեր նաև այն գրքերը, որոնք նշված են ցանկում (ինչպես օրինակ՝ «Աղամայ», «Սիբէլայ», «Ելզադ և Մովզատն» և այլն)⁵⁵: Մ. Տեր-Մովսիսյանն իր այս տեսակետը հիմնավորում է նաև այն նկատառմամբ, որ Այրիվանեցու նման բարեխիղճ մատենագիրը աչքաթող չէր անի այն կարևոր հարցը, թե իր ապրած ժամանակաշրջանում պարականոն որ գրվածքներն են գոյություն ունեցել⁵⁶:

Տեր-Մովսիսյանի այս դիտարկումը մեզ հուշում է, որ նա տարբերություն չի գրել ոչ կանոնական ու «ծածուկ» (ἄπόκρυφα) գրքերի միջև. վերոնշյալ

⁵⁰ W. Shneecmelecker, *New Testament Apocrypha, Gospels and Related Writings*, pp. 41-43.

⁵¹ Th. Zahn, *Forschungen zur Geschichte des neutestamentlichen Kanons*, 5.1, SS. 117-120.

⁵² Նույն տեղում, էջ 115:

⁵³ Է. Հ. Հարությունյան, *նշվ. աշխ.*, էջ 132:

⁵⁴ Պարզ չէ, թե եզրայի որ գրքի մասին է խոսվել, քանի որ Այրիվանեցին իր Ճառընտիր-ում ընդօրինակել է միայն եզրայի Ա և Բ կանոնական գրքերը, տե՛ս ՄՄ1500, թթ. 200բ-205ա և 205ա-211ա:

⁵⁵ М. Тер-Мовсисян, *նշվ. աշխ.*, էջ 245:

⁵⁶ Նույն տեղում, էջ 246:

«Եզրայ-Սաղաթէլայ», «Վասն Երեմիայի ի Բաբելոն» գրքերը և մարգարեների մահերը, թեև կանոնական չեն, սակայն «ծածուկ» էլ չեն համարվել, ինչի հետևանքով ընդօրինակվել են Աստվածաշունչ գրքերի հետ միասին: Ի տարբերություն դրանց՝ հայերեն ձեռագրերում «ծածուկ» գրքերը երբևէ տեղ չեն գտել Աստվածաշունչ մատյանի կազմում:

«Գիրք, զոր ունէին հրէայքն ի ծածուկք» խորագիրը կրող ցանկին անդրադարձել է նաև Մ. Սթոունը, ով, հաշվի առնելով նաև նախկին ուսումնասիրությունները՝ եկել է այն եզրակացության, որ այս ցանկը ծագում է ոչ թե հայկական, այլ հունական աղբյուրից՝ թարգմանված հայերեն ու հարմարեցված հայկական միջավայրին: Հինկտակարանյան պարականոն գրվածքների՝ ինչպես թարգմանական, այնպես էլ հայերեն ինքնուրույն բնագրերի մեծ գիտակը նշում է, որ ո՛չ «Սիրէլա»-ն, ո՛չ «Աղաթէքն Յովսեփա»-ն, ո՛չ «Վերացումն Մուսիսի»-ն, ոչ «Ելզազն ու Մովզատն» և ոչ էլ «Սողոմոնի Սաղմոսքն» հայ մատենագրությունը հայտնի չեն: Ինչ վերաբերում է ցանկում հիշատակված մյուս գրքերին, ինչպես օրինակ՝ Ազամի, Ենոքի, Եղիայի⁵⁷, ապա, ըստ Մ. Սթոունի՝ թեև հայ գրավոր ավանդությունը պահպանել է այս կերպարներին առնչվող երկեր, սակայն դրանք ավելի ուշ շրջանի ստեղծագործություններ են և չեն կարող նույնանալ ցանկում տեղ գտած համանուն գրվածքներին⁵⁸:

Մխիթար Այրիվանեցու՝ պատրաստի ցանկ ունենալու տեսակետն ամրապնդվել է նաև շնորհիվ է. Հարությունյանի մատնանշած «Գիրք, զոր ունէին հրէայքն ի ծածուկք»-ի ավելի հին օրինակի՝ Եղմ. 1288 (1279 թ., Գետիկ, գրիչ՝ Մխիթար)⁵⁹: Այս ցուցակում ներառված գրքերը նույնանում են «Ճառընտիր»-ում տեղ գտած ցանկի գրքերի հետ. երկու գրացուցակները տարբերվում են միայն խորագրով՝ «Ապա եւ ծածուկք ըստ հնոյն այսինչ» և «նորս այսոքիկ», և ինչպես կարծում է է. Հարությունյանը՝ «հնոյն» բառը «հրէայքն» բառով փոխարինել է Այրիվանեցին՝ նկատի ունենալով նրանում առկա հրեական գրքերը⁶⁰:

Այս գրչագրում տեղ գտած ցուցակի առկայությունը ոչ միայն ապացուցում է, որ Մխիթար Այրիվանեցին իր ցանկը ստացել է պատրաստի վիճակում, այլև որ ցանկի երկու՝ «Գիրք, զոր ունէին հրէայքն ի ծածուկք» և «իսկ ըստ նորոյս» մասերը կազմում են մեկ ընդհանուր բնագիր և ներկայացնում են Հին և Նոր Կտակարանների պարականոն գրվածքները⁶¹:

⁵⁷ Տե՛ս Անկանոն գիրք Հին Կտակարանաց, էջ 333-345՝ «Պատմութիւն համառոտ Եղիայի մարգարէին», էջ 378-399՝ «Տեսիլ Ենովբայ արղարոյն»:

⁵⁸ Տե՛ս M. Stone, "Armenian Canon Lists III – the Lists of Mechtitar of Ayrivank" (c. 1285 C.E.), pp. 291-292:

⁵⁹ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Ն. Պողարյան, հ. 4, Երուսաղեմ, 1969, էջ 492-493:

⁶⁰ Է. Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 132-133:

⁶¹ Նույն տեղում, էջ 133:

Ի տարբերություն «Գիրք, զոր ունէին հրէայքն ի ծածուկք» ցանկի առաջին մասի՝ հինկտակարանյան պարականոն գրվածքների, որոնք այս կամ այն շափով ուսումնասիրվել են (Գ. Զարբհանալյան, Հ. Անասյան, Մ. Սթոուն, Ա. Կարրեր), երկրորդ հատվածում տեղ գտած նորկտակարանյան պարականոնները մեծամասամբ դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից: Գրացուցակի «Իսկ ըստ նորոյս» գրվածքների քննությանն անդրադարձել է Թ. Յանը, ով զուգահեռներ է անցկացրել մեզ ծանոթ «Գեկրետ»-ի, նիկիփորյան, ինչպես նաև՝ վաթսուն գրքերին կցված պարականոնների ու դրանց միջև և ճշմարտացիորեն նշել, որ, ի տարբերություն ցանկի հինկտակարանյան երկերի, նորկտակարանյան պարականոնները փոքր-ինչ տարբերվում են օտարալեզու գրացուցակներում գետեղվածներից⁶²:

«Իսկ ըստ նորոյս» պարականոններից հայ մատենագրությանը հայտնի հազվագյուտ գրվածքներից մեկի՝ մեզ հետաքրքրող «Գիրք մանկութեան Տեառն»-ի առնչությամբ Թ. Յանը կրկնում է այն, ինչ արդեն գրել էր Սամուել Անեցու նշած սուտ երկերի քննության առթիվ՝ անհնար է հստակությամբ գատորոշել, թե Գելասիոս պապի «Գեկրետ»-ում տեղ գտած շորս համանման գրվածքներից՝ «Հակոբ կրտսերի ավետարան»-ի⁶³, «Թովմայի ավետարան»-ի, «Փրկչի մանկության» և «Փրկչի մանկության և Մարիամի կամ մանկաբարձուհու մասին» գրքերից հատկապես որ մեկն է համապատասխանում հայկական պարականոնին⁶⁴: «Թավմայի աւետարան»-ն, որ հիշատակվում է և՛ Գելասիոս պապի⁶⁵, և՛ նիկիփոր պատրիարքի ցանկերում, հայ մատենագրության մեջ հայտնի չէ: Մեզ անհայտ է նաև «Յայտնութիւնն Պետրոսի առաքելոյ» երկը, որ ներառվել է «վաթսուն գրքեր»-ին կցված պարականոնների, ինչպես նաև՝ նիկիփորյան ցանկի՝ վիճարկելի գրքերի խմբում: Այս նույն գրացուցակի, բայց արդեն պարականոնների խմբում է գետեղվել նաև «Գ Շրջագոյ Պաւղոսի»-ն՝ հունարեն համարժեք Περίοδος Παύλου անվանումով, որն իր հերթին նույնացվում է «վաթսուն գրքեր»-ի Παύλου προῶς – «Գործք Պողոսի»⁶⁶ գրվածքին⁶⁷:

⁶² Տե՛ս Th. Zahn, նշվ. աշխ., էջ 121:

⁶³ Հավանաբար նկատի ունի «Հակոբոսի նախաավետարան»-ը:

⁶⁴ Տե՛ս Th. Zahn, նշվ. աշխ., էջ 121:

⁶⁵ «Թովմայի ավետարան»-ը մեջբերելիս լատիներեն այս «Գեկրետ»-ի հեղինակն ավելացնում է, որ պարականոնը գործածվում է մանիֆեստական երկրորդ կողմից, տե՛ս W. Schneemelcker, *New Testament Apocrypha*, p. 38:

⁶⁶ Երկի տարբեր խմբագրությունները լույս են տեսել Վենետիկում, տե՛ս Անկանոն գիրք Առաքելականք, էջ 51-62:

⁶⁷ Մ. Տեր-Մովսիսյանը «Գ Շրջագոյ Պաւղոսի»-ն ենթադրաբար նույնացնում է Կորնթացիներին ուղղված Պողոսի երրորդ թղթի հետ, տե՛ս M. Тер-Мовсисян, նշվ. աշխ., էջ 241: Այս դեպքում, սակայն, ստիպված պիտի լինենք որպես «թուղթ» ընդունել նիկիփորյան ցանկի ևս երեք՝ Պետրոսի, Հովհաննեսի, Թովմայի «շրջագոյ»-ները (Περίοδοι Πέτρου,

«Գիրք, զոր ունէին հրէայքն ի ծածուկք» ամբողջական ցանկի ուսումնասիրութիւնը Թ. Յանը կատարել է դրա՝ Մ. Բրոսսէի ֆրանսերէն թարգմանութեան հիման վրա⁶⁸ (արված Ք. Պատկանյանի հրատարակութունից), որտեղ «կաթողիկէ թուղթքն» և դրան հետևող «Բառնաբայ, Յուդայ և Թովմայ» (des épîtres catholiques de Barnabé, de Jude, de Thomas) գրվածքների դասավորութիւնը ենթադրում է «կաթողիկէ թղթեր»-ի նշված առաջալներին պատկանելու հանգամանքը: Սակայն եթէ «Բառնաբայի թղթի» առկայութիւնը ցանկում զարմանալի չէ (այն տեղ է գտել նաև «վաթսուն գրքեր»-ին կցված պարականոնների շարքում⁶⁹), ապա, ըստ Թ. Յանի՝ տարակուսանք է առաջացնում նախ Հուդայի, ապա՝ Թովմայի թղթերի գոյութիւնը հայերէն ցանկում, մանավանդ, որ Գելասիոս պապին վերագրվող լատիներէն ու երկու՝ մեզ ծանոթ հունարէն գրացուցակներում դրանց մասին որևէ հիշատակութիւն չկա: Թեև «Հուդայի ընդհանրական թուղթ»-ը տարբեր եկեղեցիներում միաժամանակ չի ընդունվել՝ եվսեբիոս Կեսարացին Գ. դարում այն դասել էր «երկմտելի» գրքերի շարքին⁷⁰, անտիոքյան եկեղեցում 380-400 թթ. Թուղթը դեռևս կանոնական չէր, իսկ ասորական եկեղեցում գրվածքն ընդունվել է բավական ուշ և կիրառվել սակավադեպ, այնուամենայնիվ, ԺԳ. դարում դրա վավերականութիւնը վաղուց արդեն կասկածի տակ չէր դրվում: Ուստի շատ քիչ հավանական է, որ այս ժամանակաշրջանում Մխիթար Այրիվանեցին՝ հայ մատենագրութեան հմուտ գիտակը, «Հուդայի թուղթ»-ը դներ «ծածուկ» գրքերի շարքում: Զարմանալի է նաև «Թովմայի թղթի» առկայութիւնը ցուցակում, քանի որ ոչ միայն հայ, այլ նաև համաշխարհային մատենագրութեան մեջ Թովմայի անունով որևէ թուղթ հայտնի չէ⁷¹: Նման շփոթմունքն, ըստ Թ. Յանի՝ առաջացել է այն պատճառով, որ վերոնշյալ կաթողիկէ թղթերը կապվել են Հուդա և Թովմա անունների հետ: Այնինչ, ինչպես իրավացիորեն նկատում է հեղինակը, խոսքն այստեղ ոչ թէ նշված առաջալներին վերագրվող «թղթեր»-ի, այլ հայ և համաշ-

Περίοδος Ἰωάννου, Περίοδος Θωμᾶ, տե՛ս **C. de Boor**, նշվ. աշխ., էջ 135), որոնք իրականում վերոնշյալ առաջալների պարականոն գործերն են:

⁶⁸ **M. Brosset**, *Mémoires de l'Académie impériale des sciences de St. Pétersbourg*, VIIe série, t. XIII, n. 5, 1869.

⁶⁹ Տե՛ս **W. Shneemelckher**, *New Testament Apocrypha, Gospels and Related Writings*, p. 43: «Բառնաբայի թուղթ»-ը, «Գիրք, զոր ունէին հրէայքն ի ծածուկք»-ի գրքերի մեծամասնության նմանողությամբ, հայ մատենագրության մեջ հայտնի չէ, սակայն այն լայն հանաչում ունի համաշխարհային գրականության մեջ: Այս պարականոնի մասին մանրամասն տե՛ս **J. Rhodos**, *The Epistle of Barnabas and the Deuteronomic Tradition: Polemics, Paraenesis, and the Legacy of the Golden-Calf Incident*, Tübingen, Mohr Siebeck, 2004:

⁷⁰ Եւսեբիոսի Կեսարացոյ Պատմութիւն եկեղեցոյ յեղեալ յասորոյն ի հայ ի հինգերորդ դարու, ի յոյն բնագրէ ի ձեռն Հ. Աբրահամ Վ. Ճարեան, Վեներաիկ, 1877, էջ 199-200:

⁷¹ Տե՛ս **Th. Zahn**, նշվ. աշխ., էջ 122-123.

խարհային գրականութեանը քաջածանոթ «Թովմայի գործք» պարականոնի մասին է, որտեղ Թովմա առաքյալը երբեմն հանդես է գալիս նաև Հուդա-Թովմա կրկնակի անունով⁷²:

Թ. Յանի առաջ քաշած տեսակետը հաստատում է նաև 1279 թ. Գետիկում ընդօրինակված եղմ. 1288 ձեռագրի վերոնշյալ «Ապա եւ ծածուկք ըստ հնոյն այսինչ» ցանկի երկրորդ հատվածի՝ նորկտակարանյան պարականոն («նորս այսոքիկ») գրքերի դասավորությունը՝

Մանկութեան Յիսուսի,
Թումաի աւետարանն,
Յայտնութիւն Պետրոսի,
Շրջագո Պաւղոսի,
Բառնաբայ կաթողիկէ թուղթն,
Յուդա Թումայ:

Այստեղ «կաթողիկէ թուղթ»-ը հստակորեն վերագրվում է միայն Բառնաբային, իսկ «Յուդա» և «Թումայ» անունների անորոշ կիրառությունը հնարավորություն է տալիս նրանց վերագրելու պարականոն մեկ այլ երկ՝ տվյալ դեպքում Թովմայի հայտնի «Գործք»-ը:

Ամփոփելով Մխիթար Այրիվանեցու ցանկի մասին արված վերոբերյալ դիտարկումները՝ նշենք, որ մեզ լիովին համոզիչ են թվում այն փաստարկները, համաձայն որոնց՝ նա ձեռքի տակ ունեցել է հունարենից հայերեն թարգմանված պատրաստի ցանկ: Այնուամենայնիվ, չենք կարող պնդել, որ այս ցանկում առկա պարականոնների մեծ մասը տվյալ ժամանակը շրջանում անհայտ է եղել հայ միջավայրին: Թեև դրանցից միայն երկուսը՝ «Գիրք մանկութեան Տեառն»-ը և «Դանիէլի է երրորդ տեսիլ»⁷³-ն են, գոնե վերնագրերով, համապատասխա-

⁷² Համաշխարհային գրականության մեջ հայտնի է երկու պարականոն գրվածք՝ «Թովմայի ավետարան» և «Թովմայի գործք», որտեղ Թովման ներկայանում է կրկնակի՝ Հուդա-Թովմա անվամբ: Առաջինը, որտեղ առաջյալն իրեն անվանում է Գիդիմոս Հուդա-Թովմա, հայտնաբերվել է 1945 թ. Նագ-Համադիում՝ ղպտերենով, և համարվում է գնոստիկյան միջավայրի ծնունդ: Պարունակում է Հիսուսի 114 խոսքեր (logia) և որևէ ընդհանրություն չունի Հիսուսի մանկությունը ներկայացնող նույնանուն ավետարանի հետ, տե՛ս *The Gospel of Thomas*, Trans. and Anot. by S. Davies, Boston-London: Shambhala Publications, 2004, p. 1: Թովման մեկ այլ՝ Հուդա անունով է հանդես գալիս նաև ասորական պարականոն Գործք-ում, տե՛ս *The Acts of Thomas*, Introduction, Text and Commentary by A. F. J. Klijn, Leiden-Boston: Brill, 2003, p. 6: Այս գրվածքը հայտնի է նաև հայ մատենագրության մեջ՝ «Ի յիշատակ Ս. Առաքելոյն Թովմայի, թէ որպէս յերուսաղեմ է ի Հնդիկս չոգաւ», «Վկայութիւն Թովմայի առաքելոյ, որ կատարեցաւ ի Հնդիկս», «Պատմութիւն սուրբ առաքելոյ Թումայի», «Պատմութիւն յաղագս գիտի նշխարաց սուրբ առաքելոյն Թովմայի», «Պատմութիւն Թումայի առաքելոյն, որ վաճառեցաւ ի Հնդիկս» խորագրերով տե՛ս *Անկանոն գիրք Առաքելականք*, էջ 369-437:

⁷³ Տե՛ս «Դանիէլի է երրորդ տեսիլն», *Անկանոն գիրք Հին Կտակարանաց*, էջ 237-251:

նում մեզ հասած պարականոններին, իսկ մյուսների անորոշ վերնագրերից կարող ենք միայն ենթադրել՝ արդյոք դրանք նույնակա՞ն են պահպանված գրվածքներին, թե ոչ, այնուհանդերձ, չի բացառվում, որ այդ գրքերը, ինչպես և մեզ ծանոթ գրացուցակը, թարգմանվել են հայերեն, սակայն հետագայում կամ ոչնչացվել են որպես «ծածուկ» գրվածքներ, կամ էլ պարզապես չեն պահպանվել ինչ-ինչ պատճառներով:

Առանձին խնդիր է նաև «ծածուկ»՝ մեզ հասած սակավաթիվ գրքերի գոյատևման հանգամանքների բացահայտումը. ինչպե՞ս կարող էին հայկական վանքերում դարեր շարունակ ընդօրինակվել Հայ եկեղեցու կողմից մերժված, աղանդավորական համարվող պարականոնները, որոնց թվում առանձնակի կարևորություն ունի «Մանկութեան աւետարան»-ը: Հակառակ այն իրողության, որ այս պարականոնը մշտապես ընդգրկվել է միջնադարյան արգելված գրքերի կազմում կրելով «սուտ», «խոտելի», «հերձվածողական» և «ծածուկ» խիստ բացասական բնորոշումները, այս հանգամանքը դույզն-ինչ չի խոչընդոտել, որ այդ Ավետարանը դառնար հայ միջնադարյան ժողովրդական սուրբ գրքերից մեկը, ներթափանցեր հայկական միջավայր, և ընդհուպ, մինչև ԺԹ դարի վերջերը (1897 թ.) շարունակել ընդօրինակվել⁷⁴: Միայն երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում «Մանկութեան աւետարան»-ը ամբողջական կամ հատվածաբար, առկա է շուրջ քառասուն ձեռագրում, մի հանգամանք, որ հերձվածողական գրվածքի պարագայում բավական արտասովոր է: Անշուշտ, աղանդավորական համարվող գրքերի լիակատար ոչնչացումն անհնարին կլիներ, և ինչ-ինչ գրվածքներ կկարողանային խույս տալ բնաջնջումից, սակայն այդ դեպքում սպասելի էր, որ դրանք մեզ կհասնեին փոքրաթիվ ձեռագրերով:

Արգելված գրքերի ընդօրինակման ու տարածման պատճառ, ըստ որոշ ուսումնասիրողների, կարող էր լինել այն, որ ընդօրինակող գրիչը ծանոթ չլիներ իր օրոք եղած կանոնին և ընդօրինակել է կեղեցուց մերժված գրքեր, քանի որ Աստվածաշնչի ընդունելի և անընդունելի գրքերի ըմբռնումը հայոց մեջ տարբեր ժամանակներում միևնույնը չի եղել⁷⁵: Եվ իրոք, Սամուել Անեցու նշած սուտ գրքերից Մխիթար Այվանեցու «Ճառընտիր»-ում հայտնվել են միայն երկուսը՝ մեզ հետաքրքրող «Մանկութիւն Տեառն»-ը և «Ադամա» անորոշ վերնագրով աշխատությունը, որ կարող է նույնանալ կամ չնույնանալ նախորդ ցանկի «զԱդամայ ապաշխարութիւնն» երկին: Հիմնականում այլ է նաև անընդունելի գրքերի շարքը եկեղեցական հայ նշանավոր գործիչ ու մատենագիր Վանական Վարդապետի (1181-1251 թթ.) «Գիրք հարցմանց»-ում «Ո՛ր են անընդունելի

⁷⁴ Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմ. Ն. Պողարյան, Կ. ԺԱ, Երուսաղեմ, 1991, թիվ 3860, «Աւետարան մանկութեան», 1897, Նիւ Եօբ, ստացող՝ Ագապի Տաշեհան:

⁷⁵ Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 29:

գրեալք» «Ա. Որ պրծոցն Պաւղոսի կոչի: Բ. Յայտնութիւն Պետրոսի: Գ. Թուղթն Բառնաբայ: Դ. Աւետարանն Եբրայեցոց: Ե. Գլուխն Թումաի: Զ. Բարթողիմէի: Եւ որ սոցին նման են, Տեսիլն Աստուածածնին եւ Տեսիլն Սբ. Գրիգորի» (եղմ. 1288⁷⁶): Ուշագրավ է և այն, որ որոշ գրվածքներ, ինչպես օրինակ՝ «Պաւղոսի տեսիլն», որ առաջին ցանկում հիշատակվում է որպէս «սուտ» գրվածք, իսկ հետագա ցանկերում փոխարինվում «Յայտնութիւնն Պետրոսի» երկով, ժամանակի ընթացքում ձեռքագատվել են իրենց երբեմնի պարականոն պիտակից և դարձել ընդունելի գրվածքներ, իհարկէ, այդպէս էլ կանոնի մաս չկազմելով:

Այնուամենայնիվ, անգիտութիւնը շատ չնչին դեր կարող էր ունենալ հայոց մէջ ծածուկ ու սուտ կոչված գրքերի ընդօրինակման համար, քանի որ, ինչպէս ցույց են տալիս Սսի 1243 թվականի եկեղեցական որոշ կանոններ, եկեղեցական գրքերի ընդօրինակողից պահանջվում էին ոչ միայն դավանանքի անխափանութիւն, այլ նաև գիտելիքներ և երկարամյա փորձ. «Ժ. Գրոց դասասացք բազմաց վկայութեամբ լիցին որ գիտունք եւ ամենայն գրոց վարժք եւ տեղեակք եւ փորձ ամենայնի: Նոյնպէս եւ գրոց աշակերտքն ընտրութեամբ նորին եւ առաւել փորձիւ եւ վկայութեամբ կատարելոց»⁷⁷: Եվ իսկապէս, ինչպէս մատնանշում են «Մանկութեան աւետարան»-ի ձեռագրերի որոշ հիշատակարաններ, գրիչները հաճախ պարականոնն ընդօրինակել են գիտակցաբար՝ իմանալով, որ գիրքը պաշտոնական եկեղեցու կողմից մերժված է: Այսպէս օրինակ՝ «Մանկութեան աւետարան»-ի եղմ. 1432 ձեռագրի հիշատակարանի գրիչը տեղյակ է Սամուել Անեցու վկայութեանն այն մասին, որ գրվածքը Հայաստան ենբերել նեստորականները.

«Այս է Մանկական Աւետարանն, որ ոչ է ընդունելի ի մէնջ. ոչ միայն ի մեզ՝ այլ և երկոտասան քրիստոնէից, զորս գաղտագողի նեստորականաց թարգմանեալ է՝ զի պատրեսցեն զմանկունս ուղղափառ Սրբոյն Եկեղեցոյ: Այլ արդ, յորժամ ընթեռնոյք զսա, զի մի իբրեւ զԱւետարանն կարծիցեք: Այլ քանզի հերձուածողաց է հնարեալ՝ զի միջնորդութեամբ սորա դիւրութեամբ մուծանիցեն զհերետիկոսութիւնս ի մէջ Սրբոյ Եկեղեցոյ»⁷⁸:

Ավետարանի նույն բացասական ընկալման օրինակ է Ե. Տայեցու հրատարակած «Մանկութեան աւետարան»-ի Ա տարբերակի հիշատակարանը, որը գրվել է 1824 թ. այս բնագիրն ընդօրինակած Կարապետ վրդ. Եսայանի կողմից: Իր հիշատակարանում գրիչը հայտնում է, որ ինքն այս ավետարանն ար-

⁷⁶ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմ. Ն. Պողոսյան, Երուսաղեմ, 1969 թ. էջ 484:

⁷⁷ Ա. Պալմեան, Պատմութիւն Կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութիւն նոցա ընդ Հոռնէական եկեղեցոյ ի Փլորենտեան Սինհոդոսի, Վիեննա, 1878, էջ 269:

⁷⁸ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմ. Ն. արք. Պողոսյան, Կ. Ե, Երուսաղեմ, 1963, էջ 549:

տագրել է Բարունակ դպիր Երզնկացու կողմից ընդօրինակված մի ավելի հին օրինակից, որ «որպէս լուաք ի հաւատարիմ պատմողէ, մի ոմն փոքրաւորաց Պօղոս պատրիարգի Ազրիանպօլսեցւոյ ի հուր արկեալ է, իբրև գործ արժանի կորստեան»⁷⁹ (ընդգծումը մերն է՝ Մ.Մ.):

Հարկ է նշել, սակայն, որ պարականոնի նման բացասական ընկալումը հիշատակարաններում համընդհանուր բնույթ չի կրում. ավետարանն ընդօրինակող գրիչները, եթե նույնիսկ իմացել են դրա անընդունելի լինելու հանգամանքը, այնուհանդերձ, մեծ հետաքրքրասիրութիւն և համակրանք ունենալով մանուկ Հիսուսի ապրելակերպի, կատարած հրաշագործութիւնների և անցած ճանապարհի՝ թեկուզ և մասամբ մտացածին, այնուհանդերձ, գրավիչ և արտասովոր պատումների նկատմամբ, շատ հաճախ մեծ ջերմութեամբ ու սիրով, գրեթե կանոնական Ավետարաններին հավասար են վերաբերվել դրան՝ բնորոշելով այն որպէս «ամենահրաշ և սքանչելագործ, սուրբ տղայութեան ամենապայծառ աւետարան»⁸⁰: Ավելին, որոշ ձեռագիր հիշատակարաններում պարականոնը ոչ միայն թուլատրվել է կարգաւ ու ընդօրինակել, այլև նզովվել է նա, ով կհամարձակվեր թաքցնել այն: Այսպէս օրինակ՝ 1239 թ. Ընդօրինակված ձեռագրի՝ ՄՄ 7574 հետագայի (ԺԶ. դ.) հիշատակարանում գրիչը հավելում է.

«Այս Քրիստոսի տղայութիւնիս յիշատակ է Գրիգոր քահանայի նախնեաց և է յիշատակ ծնողաց զարմից և զաւակաց նորին ի թուականութեանս հայոց Ռին (1591) առ տէր Յոհաննէս եպիսկոպոսէն և եղի յիշատակ սուրբ Յոհաննէս աւետարանչի: Եթէ որ ուզէ կարգաւու կամ օրինակելու, չի խնայէք տագ գրաւ կնով զէրայ այս գիրկս ա տարի մի կորաւ ձեռքը ձեռք տալով, ով Աստուծոյ արհնութիւն ուզէ՝ տեղը հասուցանէ ով պահէ՛ նզովեալ եղիցի»⁸¹:

Ավետարանի նկատմամբ նույն բարյացակամ վերաբերմունքն է արտահայտված նաև Վիեն. 186 ձեռագրի հիշատակարանում. «Յիշատակ է այս Տղայական աւետարանս մղտեսի Նանաֆարին եւ մղտեսի Աշտահարին եւ Աճապ-

⁷⁹ Անկանոն գիրք նոր կտակարանաց, էջ Ը: Այս ավետարանի նկատմամբ նման անհանդուրժող վերաբերմունք է ցուցաբերում նաև «Մարեմայ աղբիւր» գրույցի անհայտ հեղինակը: Անդրադառնալով Եգիպտոս գնալու Հիսուսի և նրա ծնողների պատմությանը՝ նա գրում է. «Քրիստոսի իւր մօրը գիրկը Եգիպտոս փախչելուն հանգամանքները, որ միայն վերջին դարու եւրոպացի հեղինակած գրքերուն և այն ժամանակի վարք սրբոց ըստած գրքերուն մէջ կը գտնուէր, և մեր ազգին մէջ ալ միմիայն Քրիստոսի մանկութիւն կոչուած անպիտան գրուկովը ծանօթ է, որ այն ալ բարեբաղդաբար խիստ քիչ կը գտնուի...», Սիօն, 1866 (4), Մարիամայ աղբիւր, էջ 56:

⁸⁰ Տե՛ս ՄՄ 985, քք. 1ա-135ա՝ «Գիրք Տղայութեան Տեան», Յուցակ հայերէն ձեռագրաց, Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, հտ. Բ, կազմ. Հ. Հ. Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 572-573:

⁸¹ Տե՛ս ՄՄ 7574, ք. 250բ:

խանին, որ սոքա երեքն այլ միախորհուրդ եղեն և տվին զայս Տղայական աւետարանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ»⁸²:

Ի հավելումն այն հանգամանքի, որ միջնադարում «Մանկութեան աւետարան»-ն ընդօրինակվում և տարածվում էր բավարարելու հավատացյալների հետաքրքրությունը մանուկ Հիսուսի անհայտ տարիների հանդեպ, շատ կարևոր է նաև ընդգծել այն իրողությունը, որ, ի վերջո, արգելված այս պարականոնը չէր պահպանվի և չէր տարածվի, եթե հայ խմբագիրների կողմից չենթարկվեր բազմաթիվ վերամշակումների և սրբագրումների՝ արդյունքում ձեռբազատվելով հերետիկոսական այն գաղափարներից, որոնց պատճառով ընդգրկվել էր արգելված գրքերի շարքում: Նույն այս խմբագրությունների հետևանքով ավետարանը ձեռք է բերել Հայ եկեղեցու դավանանքին հարիր գաղափարներ, ինչն էլ, ըստ էության, հանդիսացել է պարականոնի ինչպես գոյատևման, այնպես էլ տարածման կարևորագույն գրավականներից մեկը:

Այսպիսով, հայ միջնադարում «Մանկութեան աւետարան»-ի նկատմամբ ձևավորվել է երկու հակադիր՝ բացասական ու դրական մոտեցում: Պարականոնը բացասական էր ընկալվում նախ այն պատճառով, որ Սամուել Անեցու կողմից հիշատակվել է Ասորիքից բերված հերձվածողական (նեստորական) գրքերի շարքում, և ապա այն պատճառով, որ տեղ է գտել միջնադարյան արգելված գրքերի գրեթե բոլոր ցանկերում՝ լինեն դրանք նեստորական, թե անհայտ ծագման: Հակառակ սրան, ի տարբերություն արգելված համարվող երկերի մեծամասնության, որոնք ժամանակի ընթացքում անհետացել են, «Մանկութեան աւետարան»-ը, արժանանալով մանկության շարքին դասվող մյուս ավետարանների ճակատագրին, արգելված լինելով հանդերձ, կարողացել է ոչ միայն խոյս տալ ոչնչացումից և գոյատևել, այլ նաև և մեզ հասել բազմաթիվ ընդօրինակություններով:

MARI MAMYAN

**THE “GOSPEL OF THE INFANCY” AS AN INTEGRAL PART OF THE
MEDIEVAL LISTS OF ARMENIAN PROHIBITED BOOKS**

Keywords: Gospel of the Infancy of Jesus Christ, “secret”, “anathematized” and “false” books, apocryphal Epistles and Acts of the Apostles, Armenian and World literature.

Two contrasting approaches, negative and positive, emerged in the Middle Ages with regards to the Armenian “Gospel of the Infancy”. The

⁸² Յուզակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, հ. Բ, կազմ. Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 504:

negative perception of the apocryphon is attested, on the one hand, by Samuēl Anec'i (1100/05-1185/90), according to whom, the Gospel was brought to Armenia by the Syrian heretics (Nestorians), and, on the other hand, by the fact that it was included on nearly all of the medieval lists of forbidden books. Moreover, the "Gospel of the Infancy" was not only among writings considered to be Nestorian, but also was an integral part of the prohibited books of unknown origin, such as the list of "secret" books copied by Mxit'ar Ayriivanec'i (1230/35-1297/1300). Unlike the majority of banned books that disappeared over the centuries, however, the Gospel of the Infancy was not only able to escape destruction and survive, but also gained the love and sympathy of monks and common believers, reaching us through numerous Armenian manuscripts scattered all over the world.

**МАРИ МАМЯН
АРМЯНСКОЕ "ЕВАНГЕЛИЕ ДЕТСТВА" В СПИСКАХ
СРЕДНЕВЕКОВЫХ ЗАПРЕЩЕННЫХ КНИГ**

Ключевые слова: *Книга младенчества Христа*, «тайные», «отреченные» и «ложные» книги, апокрифические послания и деяния апостолов, армянская и мировая литература.

В армянском средневековье сформировались два противоположных, позитивный и негативный, подхода к "Евангелию детства". Об отрицательном восприятии апокрифа можем судить с одной стороны по свидетельству Самуэля Анеци (1100/05-1185/90 гг.), согласно которому Евангелие было привезено в Армению сирийскими еретиками (несторианами), а с другой стороны, по тому факту, что апокриф был включен почти во все средневековые списки запрещенных книг. Речь идет не только о списках сочинений, считающихся несторианскими, но и о списках запрещенных книг, о происхождении которых нет прямых свидетельств, таких, например, как список "потаянных" книг, сохраненный Мхитаром Айриванци (1230/35-1297/1300 гг.). Однако, в отличие от большинства запретных книг, исчезнувших в течение столетий, "Евангелие детства" не только сумело избежать забвения, но приобрело любовь и симпатию монахов и обычных верующих и дошло до нас в многочисленных армянских рукописях, разбросанных по всему миру.

ԽԱՁԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ.

1. ՆՈՐԱՀԱՅՏ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ ԺԱ.-ԺԳ. ԴԱՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻՑ

Բաճալի բառեր՝ ձեռագիր, վիմագիր, միջնադարագրիտություն, արական
և իգական անձնանուններ, լեզվաբանություն, ստուգաբանություն:

Մուտք

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում վկայված մի քանի հազարի
հասնող անձնանունների զգալի մասը ժամանակին արձանագրել է Հր. Աճառ-
յանն իր նշանավոր «Հայոց անձնանունների բառարան»-ում, թեև այն հանգա-
մանքը, որ անվանի լեզվաբանի օրոք հրատարակված ձեռագրացուցակների
թիվը շուրջ հինգ տասնյակի էր հասնում [ԱնՁԲԱՅ, 1: IX], անշուշտ իր ազդե-
ցությունն է ունեցել բառարանում տեղ գտած անունների ընդհանուր թվի
վրա: Գիտնականն ինքը նշել է այս մասին բառարանի առաջաբանում՝ գրելով,
որ առաջիկայում հրատարակվելիք ձեռագրացուցակները կարող են հարուստ
նյութ տրամադրել նոր անձնանունների հարցում, քանի որ դրանց մեջ տեղ
գտած հիշատակարանները «խսկապես լավագույն և ամենաճոխ աղբյուրներն
են անձնանունների» [ն.տ.]:

Աճառյանի հնգհատորյա բառարանի հրատարակությունից անցել է ավելի
քան կես դար. այս ընթացքում մի քանի անգամ բազմապատկվել է հրատա-
րակված ձեռագրացուցակների թիվը¹, իսկ մյուս կողմից 1950-ական թվական-
ներից սկիզբ է դրվել առանձին հիշատակարանային ժողովածուների կազմ-
ման աշխատանքներին, որ անավարտ լինելով հանդերձ՝ բաղկացած է տպա-
գիր 10 հատորներից²: Հիշատակարաններից և ձեռագրացուցակներից բացի՝

¹ Ձեռագրացուցակների մատենագիտությունը տե՛ս Հ. Ս. Աճառյան, *Հայկական մատենա-
գիտություն, Ե-ԺԳ դդ.*, հ. Ա, Երևան, 1959, էջ LXXVII-XCII, **B. Coulic**, *Répertoire des
bibliothèques et des catalogues de manuscrits arméniens (Corpus Christianorum, Series
Graeca)*, Turnhout, Brepols, 1992: Նկատի պետք է ունենալ, որ մատենագիտական այս
ցանկերի հրատարակումից հետո էլ շարունակում են լույս տեսնել նորանոր ցուցակներ:

² Առանձին հատորներով հրատարակված են Ե.-ԺԲ., ԺԳ., ԺԵ. և ԺԶ. (մինչև 1660 թ.)
դդ. հիշատակարանները (տե՛ս գրականության ցանկում): Լրավշակվել և հրատարակման
է պատրաստվել ԺԴ. դարի առաջին քառորդը պարունակող հատորը, առաջիկայում
սպասվում է նաև ԺԳ. դարի հիշատակարանների ժողովածուն: Այս ժողովածուներից զատ՝
լույս է տեսել նաև Գ. Հովսեփյանի կազմած ժողովածուն, որը պարունակում է Ե.-ԺԳ. դա-

հրատարակվել և հրատարակվում են նաև այլ սկզբնաղբյուրներ, հատկապես բազմաթիվ վիճաբեր, այդ թվում՝ վիճական արձանագրությունների հայտնի մատենաշարը «Դիվան հայ վիճագրության» խորագրով, որը նույնպես հարուստ նյութ է տրամադրում հատկանվանագիտությանը:

Այս ամենը հնարավորություն է ընձեռում ոչ միայն հարստացնելու Աճառյանի կազմած սովորածավալ բառարանը, այլև մի շարք ճշգրտումներ կատարելու աղբյուրների ընծայած նոր տվյալների հիման վրա:

Հողվածում ներկայացնում ենք վիճակագրական որոշ տվյալներ հիշատակարաններում վկայված անձնանունների վերաբերյալ, քննում «Հայոց անձնանունների բառարան»-ի և հիշատակարանային ժողովածուների առնչությունները, ապա նշում ենք մի շարք նորահայտ անձնանուններ ՓԱ.-ՓԳ. դարերի հիշատակարաններից՝ անհրաժեշտության դեպքում համեմատելով դրանք «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի տվյալների և վիճագրական այլ ուսումնասիրությունների հետ:

Ա. Ո՞վքեր են սովորաբար նշվում հիշատակարաններում և ի՞նչ նպատակով.

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններին ծանոթ յուրաքանչյուր ոք կարող է փաստել, որ գրավոր այս հուշարձանները, ձեռագրին կամ նրա ժամանակին առնչվող կարևոր տեղեկություններ (գրչության վայր, ժամանակ, քաղաքական-տնտեսական զանազան հանգամանքներ, ձեռագրաստեղծմանն առնչվող մանրամասներ և այլն) պարունակելուց զատ, հարուստ են նաև հիշատակվող անուններով. առանձին հիշատակարաններում կարելի է գտնել երեք տասնյակից ավելի անձանց անուններ, որոնք այս կամ այն կերպ ծանոթ են եղել հիշատակագիրներին³, օգնել են նրանց, նպաստել գրչությանը կամ պարզապես հիշված են գրչությունից հետո ստացող-գնորդների կողմից, սակայն քիչ չեն նաև այն հիշատակարանները, որոնցում նշվում է ընդամենը մի քանի անուն: Արդ, վկայակոչենք երկու-երեք օրինակ:

րերի հիշատակարաններ (Գ. Ա. կաթողիկոս [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա. (Ն. դարից մինչև 1250թ.), 48 նմանահանութիւններով, Անթիլիաս 1951): Հիշատակարաններով հարուստ են նաև Դ. վրդ. Փիրղալեյանի «Նօտարք»-ը (Նօտարք հայոց, հաւաքեալ եւ լոյս ածեալ ձեռամբ Դ. վրդ. Փիրղալեյան Տոբեցոյ Վարագայ վանուց վանականի, ի հայրապետութեան Ս. էջմիածնի տ.տ. Մակարայ Ս. կաթողիկոսի ամենայն հայոց, ի պատրիարքութեան Ս. Երուսաղէմի տ. Յարութիւն Ս. Արքեպիսկոպոսի, ի տեղապահութեան Կ. Պօլսոյ տ. Սիմէօն Ս. արքեպիսկոպոսի, Կ. Պօլիս, 1888), Գ. Մրվանձայանցի «Թորոս աղբար»-ը (Գ. վ. Մրուանձաեանց, Թորոս աղբար. Հայաստանի ճամբորդ, Կ. Պօլիս, մասն Ա., 1879, մասն Բ. 1885) և ուրիշ նման երկասիրություններ: Անշուշտ, այս ամենով նյութը չի սպառվում. բազմաթիվ հիշատակարաններ սփռված են տարատեսակ աղբյուրներում, հանդեսներում, թերթերում ու ցուցակներում, այդ թվում՝ անտիպ:

³ Նպատակահարմար ենք գտնում հիշատակագիր բառի կիրառումը, որը կարող է լինել ցանկացած անձ, այդ թվում՝ ձեռագրի գրիչը, ծաղկողը, ստացողը կամ մեկը, որ հետագայում հիշատակարան է թողել մատյանում:

Գրչի թվագրումով հնագույն մատյանի՝ Լազարյան Ավետարանի 887 թ. հիշատակարանում 5 անուն է նշված՝ Գեորգ կաթողիկոսը (875-897 թթ.), իշխանաց իշխան Աշոտը (Աշոտ Ա. Բագրատունի, թագավորեց 885-890 թթ.), Սմբատ Բագրատունին (որդի Աշոտ Ա.-ի, թագավորեց 890-914 թթ.), Սահակ Վանանդեցի գրիչը և նրա հայրը՝ Վարդ Վանանդեցին [Հիշ. Ե-ԺԲ: 40]⁴:

1269 թ. Հռոմում ընդօրինակված Աստվածաշնչի հիշատակարանում Մարգարե գրիչը նշել է 38 հոգու [Հիշ. ԺԳ: 368-372], ովքեր միևնույն ժամանակ տեղական համայնքի գոյության վկաներն են: Ոմանք նշվում են նաև իրենց մասնագիտությամբ կամ ծննդավայրով, ինչպես՝ Վարդան փոնավարը, Սիրուն կոշկարը կամ Ստեփաննոս խլաթեցին, Գրիգոր Կիլիկեցին: Մարգարեի հիշատակած անձանց նշյալ թիվը ուսումնասիրողներին հնարավորություն է տվել անգամ պատկերացում կազմելու ժամանակին Հռոմի հայկական համայնքի անդամների մոտավոր թվաքանակի մասին⁵:

1464 թ. Ստեփանոս գրիչն իր չափածո հիշատակարանում խնդրում է հիշել Ավագ վանքի իր հոգևոր եղբայրներին՝ ընդհանուր թվով 31 հոգու [Հիշ. ԺԵ, Բ: 206-211], որն իր հերթին որոշ չափով լրացնում է տվյալ ժամանակաշրջանում վանական կյանքի մասին մեր ունեցած գիտելիքները:

Անունների առատությունը աչքի է ընկնում 1459 թ. Շատվան գյուղում (Ռշտունյաց գավառ, Վասպուրական) ընդօրինակված Ավետարանի հիշատակարանը, որում գրիչը նշել է իր և ստացողի հարազատներին՝ կենդանի և հանգուցյալ, ընդհանուր թվով 44 հոգու [Հիշ. ԺԵ, Բ: 124-125], որն էլ իր հերթին մեզ ուղղակի պատկերացում է տալիս նշյալ շրջանում ընտանիքի անդամների մոտավոր թվաքանակի վերաբերյալ⁶:

⁴ «Վազարյան Աւետարան» անվամբ հայտնի այս ձեռագրի գրչության վայրն անհայտ է. նշված չէ հիշատակարանում: Գր. Խալաթյանը գրչի և նրա հոր տեղանվանացույց մակա-նուններից ենթադրել է, որ գրչության վայր կարող է լինել հենց Վանանդը, ըստ որում հարցականով «Կարո՞ւց»: Նկատենք, որ Վանանդ անվամբ հայտնի է մի քանի տեղանուն, որոնք արձանագրված են Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում (այսուհետև՝ Տեղ. ԲԱՌ) [Տեղ. ԲԱՌ, 4: 753]: Տե՛ս Աւետարան ըստ Թարգմանութեան նախնեաց մե-րոց, գրեալ ՅԼԶ թ. հայոց Էւ յամի Տեառն 887, լուսատիպ հրատարակութիւն գրչագրի Լազարեան հեմարանի արեւելեան լեզուաց արդեամբ պատույ հոգաբարձոպ հեմարանիս իշխան Սիմէօնի Աբամէլի-Լազարեան, Մոսկուա, 1899, Ֆառաշարան, էջ Բ:

⁵ A. Sirinian, “La presenza degli Armeni nella Roma medievale: prime testimonianze manoscritte ed epigrafiche (con un’iscrizione inedita del XVI secolo)”, *Atti della Pontificia Accademia Romana di Archeologia (serie III), Rendiconti*, vol. LXXXVI, anno accademico 2013-2014, Vaticano, 2014, p. 10 (nota 18). Նկատի ունենալով անվանապես հիշված 36 հոգուն, ինչպես նաև նրանց կանանց՝ հեղինակը հանգել է այն եզրակացությանը, որ «Հայոց հանգստարանը» տվյալ ժամանակ բաղկացած է եղել անվազն 50 հոգուց:

⁶ Այս տեսանկյունից հետաքրքիր են վերջին շրջանում կատարվող ուսումնասիրությունները, որոնք միավոր են գրավոր հուշարձանների օգնությամբ բացահայտելու միջնադարում

Այսպիսի օրինակները եզակի չեն: Մեր հաշվումների համաձայն՝ գրավոր այս հուշարձաններում հիշատակվող անձանց միջին թվաքանակը, ըստ դարերի, միայն աճել է. 357 միավոր պարունակող Ե.-ԺԲ. դարերի հիշատակարանների ժողովածուի անվանացանկում արձանագրված է 932 անձ (231 անձնանուն). ըստ այսմ յուրաքանչյուր հիշատակարանին բաժին է ընկնում մինչև 3 անձնանուն ($\approx 2,7$)⁷:

Արական անուններն ամենաշատն են, հիշվում է ընդամենը 58 իգական անուն⁸: Ըստ որում հասարակական դիրքի տեսանկյունից մեծ թիվ են կազմում եկեղեցական գործիչները՝ կաթողիկոս, ուխտի առաջնորդ, վարդապետ, սարկավազ կամ միաբան, որով պայմանավորված էլ առավել տարածված են կրոնական բնույթի անձնանունները⁹: Այսպես հաջորդում են աշխարհիկ կամ ռազմական առաջնորդները (Թագավոր, իշխան, զորապետ և այլն): Եզակի են «հասարակ» մարդկանց հիշատակումները¹⁰:

ԺԳ. դարի հատորը պարունակում է 832 հիշատակարանային միավոր, որոնցում հիշված անձանց ընդհանուր թիվը 2698 է (562 անձնանուն), ուստի՝ մեկ հիշատակարանը պարունակում է 3-ից ավելի անձնանուն ($\approx 3,3$)¹¹:

հայ ընտանիքի միջին թվաքանակը: Գ. Երանյանը, այս տեսանկյունից ֆնեկով ժ. դարի հիշատակարանները, եկել է այն եզրահանգման, որ նշյալ շրջանում հայ ընտանիք բաղկացած է եղել 6-8 հոգուց՝ ծնողներ և 4-6 երեխա, տե՛ս Գ. Հ. Երանյան, *Հայ ընտանիքի անդամների միջին թվաքանակը ըստ XV դ. ձեռագրերի հիշատակարանների*, Երևան, 2015, էջ 45: Փաստորեն, այս տվյալները գրեթե համընկնում են ժ. դարին առնչվող համանման մեկ այլ հաշվարկի հետ. ընտրված 650 հիշատակարանների տվյալների համաձայն՝ նշյալ շրջանում հայոց ընտանիքը միջինում բաղկացած է եղել 7 անձից: Տե՛ս Մ. Մալխասյան, «Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում XVII դարի առաջին կեսին», *Հայագիտության հարցեր*, 2016 (1), էջ 97-98:

⁷ Ե.-ԺԲ. դարերի ժողովածուում մեկ հիշատակարանի սահմանում արձանագրված անձնանունների առավելագույն քանակը 12 է [Հիշ. Ե.-ԺԲ: 181]:

⁸ Երկուսը՝ *Տիկնաց*-ը և *Տիրատիկին*-ը, հիշատակվում են որպես Մաղարդա վանքի Սուրբ Ստեփանոս Նախավկայի ուխտի միաբաններ [Հիշ. Ե.-ԺԲ: 214]:

⁹ Նկատի ունենա՛ք հատկապես *Աբրահամ*, *Դաւիթ*, *Գրիգոր*, *Գեորգ*, *Ստեփանոս*, *Սարգիս* և նման անձնանունները:

¹⁰ 988 թ. Ավետարանը պատվիրել և ստացել է *Կիրակոս վաճառականը* [Հիշ. Ե.-ԺԲ: 69], 1171 թ. Ավետարանի կազմությանը տախտակ տրամադրելու համար հիշվում է *Պատրիկ չյուսնը* [Հիշ. Ե.-ԺԲ: 200]:

¹¹ Նույն ձևով ժ. դարի հատորը պարունակում է 845 հիշատակարանային միավոր, որոնցում վկայված անունների թիվը 4859 է. մեկ հիշատակարանին բաժին է ընկնում մինչև 6 անուն ($\approx 5,7$): Ժ. դարի հիշատակարանների երեք հատորները միասին պարունակում են 2133 միավոր, որոնցում արձանագրված անունները 17106-ն են: Այս դարի յուրաքանչյուր հիշատակարանին բաժին է ընկնում 8-ից ավելի անուն ($\approx 8,1$):

Նշյալ թվերը վերջնական լինել չեն կարող՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կան բազում անտիպ կամ հրատարակված հատորներից դուրս մնացած հիշատակարաններ. ակնհայտ է, որ դրանց ավելանալուն զուգահեռ՝ կավելանան նաև անձնանունները:

Այս դարի հիշատակարաններում համեմատաբար շատ են աշխարհիկ կամ «հասարակ» մարդկանց հիշատակումները, որը ենթադրում է նաև ձեռագրի միջավայրի որոշակի փոփոխություն: Դրան նպաստում են արհեստների զարգացումը, քաղաքային կյանքի ամրապնդումը, ընտանիքի անդամների միջին թվաքանակի աճը և վերջապես, գրքի առքն ու վաճառքը, որը երբեմն իրականացվում էր միջնորդների միջոցով¹²: Վաճառքի համար նախատեսված ձեռագրերում էլ ի հայտ են գալիս կաղապարային հիշատակարաններ, որոնցում բաց էին թողնվում երբեմն գնորդ-ստացողին կամ գնման ժամանակին վերաբերող տեղեկությունները՝ վաճառքից հետո այդ բացերը լրացնելու համար¹³: Այս նոր միջավայրով պայմանավորված՝ ավելանում են նաև հիշատակվող անձինք (հոգևոր-կրոնական ասպարեզի գործիչները շարունակում են կազմել բացարձակ մեծամասնություն):

Ստորև ներկայացվող աղյուսակում փորձել ենք ի մի հավաքել և խմբավորել հնարավոր բոլոր այն անձանց, ովքեր սովորաբար նշվում են հայերեն ձեռագրերի հիշատակարաններում առանց ժամանակային սահմանափակման¹⁴: Ըստ որում պետք է արձանագրել, որ անձանց հիշատակումը, անկախ նրանց զբաղեցրած դիրքից, շունչի կայուն հերթականություն. հիշատակագիրներն ազատ են այս հարցում¹⁵:

¹² Կ. Մաթևոսյան, «Գրչի և ստացողի միջնորդը (վաճառքի համար նախատեսված գիրք միջնադարյան Հայաստանում)», ՊՔՀ, 4 (1994), էջ 121-131:

¹³ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, Երևան, 1958, էջ 313-314: Թերևս այդպիսի մի հիշատակարանի կաղապար է ՄՄ 2335 ձեռագրում վկայվածը [Հիշ. Ե-ԺԲ: ԺԲ.], Kh. Harutyunyan, “Gli antroponomi nei colofoni armeni: gruppi semantici e nuovi nomi”, *Orientalia Christiana Analecta* 299, *Colofoni armeni a confronto, Le sottoscrizioni dei manoscritti in ambito armeno e nelle altre tradizioni scritte del mondo mediterraneo*, Atti del colloquio internazionale, Bologna, 12-13 ottobre 2012, a cura di A. Sirinian, P. Buzi, G. Shurgaia, Roma, 2016, pp. 49-50:

¹⁴ Աղյուսակը սպառիչ չէ. երբեմն կարող են արձանագրվել նաև գրչին պարզապես ծանոթ մարդիկ, որոնք ցանկություն են հայտնել հիշատակման արժանանալու՝ դրա դիմաց գրչին որոշ բաներ տրամադրելով: Այս առումով հետաքրքիր օրինակ է 1278 թ. գրչագրված Տոնականի հիշատակարանը, ուր գրիչը հիշատակում է ձուկ բերող Մարկոսին, իր համերկրացի Տերտերին, որ այժ է տրամադրել, և այլոց [Հիշ. ԺԳ: 478]: Առանձին հիշատակարաններում կարող են նշվել կոստողողները, կազմի համար կոնակներ հայթայթողները և ուրիշներ: Աղյուսակում նշվող որոշ միավորներ կարող են խտացվել նաև մեկ անձի մեջ, այսինքն՝ գրիչը միևնույն ժամանակ կարող է լինել և՛ ծաղկող, և՛ կազմող: Բազմաթիվ են նման օրինակները. դրանցից կարող ենք նշել ԺԷ. դարի երկրորդ կեսին ձեռագրաստեղծմամբ հայտնի Բարդամի որդի Միխայելին, որի գործունեության մեջ հիշվում են գրչագրված, ծաղկված և կազմված ձեռագրեր: Տե՛ս Խ. Հարությունյան, *Միքայել անվամբ ԺԷ. դարի երկու գրիչ*, Երևան, 2016, էջ 224-227: Վերոնշյալ աղյուսակում նկատի ենք առել այդ միավորներն առանձնաբար:

¹⁵ Հաշվարկելիս նկատեցինք, որ կիլիկյան միջավայրում գրված ձեռագրերի հիշատակարաններում մեր կազմած աղյուսակի Բ խմբում հաճախադեպ է հիշատակման կաթողիկոս-թագավոր հերթականությունը, որը սովորաբար ունի՝ «ի հայրապետութեան տեսան (անու-

Աղյուսակ հայերեն ձեռագրերի հիշատակարաններում նշվող անձանց

Ա. Զեռագրաստեղծմանը կամ ձեռագրի վաճառքին / գնմանը մասնակցող կամ նպաստող անձինք

- գրիչ
- ծաղկող
- կազմող
- ուղղող կամ սրբագրող
- օրինակ շնորհող
- թուղթ շնորհող
- թուղթ կոկող
- թանաք պատրաստող
- այլ օգնողներ (երբեմն հաց կամ ջուր բերողներ, հիվանդության պահին խնամողներ, գրչության գործը քաջալերողներ, գումարով կամ գրչանյութով աջակցողներ)
- ստացող կամ գնորդ (այլև՝ մեկենաս կամ նվիրատու, գնմանը կամ փրկագնմանը մասնակցած անձ)
- նորոգող
- միջնորդ

Բ. Աշխարհիկ և հոգևոր առաջնորդներ

- թագավոր / իշխան (կամ տեղական առաջնորդ, վերակացու)
- կաթողիկոս
- թեմակալ առաջնորդ

Գ. Հիշատակագրի / ստացողի արյունակցական ընտանիքի անդամներ

- պապ (հազվադեպ գրաբ. հաճեով¹⁶)
- տատ
- հայր
- մայր (հազվադեպ՝ խորթ մայր, ստնտու, սնուցող մայր¹⁷)
- կողակից (նաև կենակից և ամուսին ձևերով)
- զավակներ (որդի / դուստր)
- եղբայր
- քույր
- հորեղբայր
- հորաքույր
- մորեղբայր (ԺԳ. դարից սկսյալ՝ հաճախ քեռի ձևով¹⁸)
- մորաքույր
- թոռ

Դ. Միաբանության կամ հոգևոր ընտանիքի անդամներ և այլք

- առաջնորդ ուխտի / անապատի
- հոգևոր հայր
- հոգևոր մայր
- հոգևոր եղբայր
- հոգևոր քույր
- ուսուցիչ
- եկեղեցական այլ գործիչներ (փակակալ, ժամահար և այլք)
- այլք (պարզապես հիշատակվող անձինք, երբեմն՝ նաև մասնագիտություններով)

նր) հայոց կաթողիկոսի եւ ի քաղաւորութեան (անունը)» կաղապարը: Կիլիկիայի տարբեր վայրերում և ժամանակահատվածներում ընդօրինակված 20 ձեռագրերի հիշատակարանից (Հիշ. ԺԳ.^{ՀԻՐ} 8, 17, 52, 53, 61, 62, 63, 64, 67, 70, 218, 264, 266, 267, 275, 276, 277, 288, 295, 304) միայն վեցում (Հիշ. ԺԳ.^{ՀԻՐ} 53, 61, 218, 264, 295, 304) է առկա թագավոր-կաթողիկոս հերթականությունը:

¹⁶ «[...] ի յիշատակ [...] հատուկ իւրոյ Թաղէս քահանայի (sic!)» [Հիշ. ԺԳ: 565, այսուհետ, շեղ ընդգծումները մերն են՝ Խ. Հ.]:

¹⁷ «[...] յիշելո (sic) արժանի՝ առէք [...] զվիս սնուցանող մայր սորա՝ զՏիրանցն, որ աշխատեցաւ ի վերս սորա մինչեւ ի հասակ մեծութեան» [Հիշ. ԺԳ: 536]:

¹⁸ «[...] յիշեցէ՛ք [...] գրեւին իմ՝ զԳրիգոր» [Հիշ. ԺԳ: 558]:

Հիշատակագիրներն ամենայն պատասխանատվությամբ են մոտեցել անունների արձանագրմանն ու բանագրել բոլոր նրանց, ովքեր կփորձեին ջնջել հիշատակարանները կամ դրանցում գրված անունները. ուստի՝ հաճախ կարելի է հանդիպել հետևյալ բանաձևին՝ «[...] ով որ զհիշատակարանն ջնջէ, զԱստուած զինքն ջնջէ ի դպրութենէն կենաց. ամէն» [Հիշ. ժԳ: 138], «[...] թէ ոք զհիշատակարանս կտրէ կամ անուն քերէ, ջնջեսցի եւ ինքն ի դպրութենէ կենացն յաւիտենից. ամէն» [Հիշ. ժԳ: 615], «Եւ որ ոք զանց առնէ բանիւք մերովք եւ հանել ջանա (sic!) կամ զգիրս ջնջէ, ինքն ջն[ջ]եսցի ի գրոյն դպրութեան կենաց, եւ ընդ Կայենի եւ ընդ Ղամեքի գեթնեկին եւ գեաւթանասնեկին եւ թից վրէժս լուծցէ յայսմ եւ ի հանդերձեալն» [Հիշ. ժԳ: 381]:

Վիմագիր կամ ձեռագիր հիշատակարանում անունն ամրագրելը հավատացյալ քրիստոնյայի համար կենաց գրում բարի գործերով հիշվելու գրավական էր, քանի որ քրիստոնեական ընկալմամբ՝ դատաստանի օրը մարդկանց գործերն են միայն վկայելու նրանց մասին. «[...] ողորմեսցի գթածն Աստուած յարն կարեաց, ուր սնոտի բանքն սպառին եւ բարի գործքն թագաւորեն» [Հիշ. ժԳ: 612], «[...] մեղաց թողութիւն հայցեցէք [...], որ եւ զձերն թողու Քրիստոս ի հանդերձեալ գալստեանն իւրոյ, յորում աւուր գայ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, յորում աւուր բանք սպառին ամենեցուն եւ գործք թագաւորեն» [Հիշ. ժԳ: 211)]¹⁹:

Ներսես գրիչն իր 1279 թ. հիշատակարանում պատկերացրել է անգամ «ահեղ դատաստանի» այդ տեսարանը.

«[...] Աւուր վերջնումըն զարութեամբ

Ունի աթոռ իւր հրամանաւ դատողական,

Ի նմայ բազմի Քրիստոս ահեղ լուսոյ նման,

Փողն գոչեա առհասարակ գաբրիելեան,

Յառնեն մեռեալք փութանակի ի դատաստան,

Ի յայնմ ահեղ հրապարակին [ը]նկեալ եւ մեզ յաջակողմեան,

Խառնեայ ի դասս արդարութեան» [Հիշ. ժԳ: 491]:

Այս ընկալումն ուղղակիորեն աղերսվում է Հովհաննեսի Հայտնությունն այն հատվածին, որում նկարագրվում է, թե ինչպես են Աստծու աթոռի առջև սպասում մեռյալների հոգիները, և բոլոր նրանք, ում անունները նշված չեն կենաց մատչանում, հրե լիճն են նետվում. «[...] մեռեալս որք կային առաջի աթոռոյն

¹⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում աստվածային ողորմությանն ու մեղքերի թողությանն արժանանալու, կենաց գրում հիշատակվելու բանաձևային մի շարք կաղապարներ տե՛ս նաև հետևյալ հոդվածում՝ **A. Sirinian**, “Libri per il paradiso: aspetti di mentalita nei colofoni armeni del XIII”, *Orientalia Christiana Periodica*, 2017 (2), pp. 277-292:

Աստուծոյ. եւ գիր բանային իւրաքանչիւր գործոց: Եւ այլ գիրք բանային, որոց անուանք նոցա գրեալ են ի դպրութիւն կենաց. եւ դատաստան եղեւ մեռելոցն ի գիրս ըստ իւրաքանչիւր գործոց իւրոց. [...] եւ որ ոչ զացի ի գիրս կենաց գրեալ անկցի ի լին հրոյն» [Հայտ. Հովհ., Ի. 12-15]:

Ահա թե ինչու, աստվածավախ քրիստոնյայի համար այդքան բաղձալի էր բարի գործերով, մինչև անգամ մի բաժակ ջուր բերելով կամ թուղթ կոկելով, կենաց գրում անվանապես հիշատակվելը: Մխիթար քահանան, օրինակ, 1281 թ. թուղթ է կոկել այն հույսով, որ գրիչն իր անունն էլ նշի հիշատակարանում. «Յիշեսջի՛ք ե ի յաւարտ յիշատակիս զՄխիթար քահանայ, որ զթուղթս կոկեաց այսու յուսով, զի յիշատակեսցի անուն իւր ի զգիրս յայս» [Հիշ. ԺԳ: 519]²⁰:

Աստվածային ողորմութեանն արժանանալու ցանկությունը դրսևորվում է միջնադարյան հայ կյանքի բոլոր ծալքերում, որոնց լուռ վկաներն են ամենատարբեր արձանագրություններն ու ձեռագրաց հիշատակարանները: Այս հանգամանքով պայմանավորված՝ նշյալ աղբյուրները հարուստ են բազմաթիվ անձնանունների հիշատակումներով:

Բ. Հիշատակարաններն ու «Հայոց անձնանունների բառարանը».

Ուսումնասիրողները տարբեր առիթներով անդրադարձել են ձեռագրերի հիշատակարաններում վկայված անձնանուններին՝ ինչպես ստուգաբանական, այնպես էլ միջմշակութային փոխառնչությունների տեսանկյունից²¹, և բոլոր

²⁰ Ուման քիշատակվել են անգամ կրկնանուններով ու մականուններով, ինչպես նշում է Հ. Պետրոսյանը, որպեսզի նույն անունների դեպքում շփոթ չառաջանա: Տե՛ս Հ. Պետրոսյան, «Փառաբար և հիշատակի միջնադարյան ընկալումը», Հայոց պատմության հարցեր (Գիտական նյութերի ժողովածու), 6, Երևան, 2005, էջ 208, նույնի՝ “The Book of Life in the Armenian Culture: the Ideology and the Iconography”, *Civilization Researches*, № 13, 2015, p. 22:

²¹ Տե՛ս J. J. Weitenberg, “Cultural Interaction in the Middle East as Reflected in the Anthroponomy of Armenian 12th-14th Century Colophons”, *Orientalia Lovaniensia Analecta*, 134. *Redefining Christian Identity. Cultural Interaction in the Middle East since the Rise of Islam*, edited by J.J. Van Ginkel, H.L.Murre-Van Den Berg, T.M. Van Lint, Leuven-Paris-Dudley, MA 2005, pp. 265-273; Kh. Harutyunyan, “Gli antroponimi nei colofoni armeni”, pp. 47-72: Հիշատակարանային նյութի կիրառմամբ է նաև հետևյալ արժեքավոր հոդվածը՝ Գ. Ջահուկյան, «Բնիկ հայերեն արմատներով կազմված անձնանունները», ՊԲՀ, 1984 (4), էջ 32-44: Ի թիվս այլ անձնանունների՝ հիշատակարանային եզակի վկայությամբ ավանդված Ահգուն անվան ֆննությունն է տրված Հ. Մարտիրոսյանի հետևյալ հոդվածում՝ H. Martirosyan, “Some Armenian Female Personal Names”, “USQUE AD RADICES” *Indo-European Studies in Honour of Birgit Anette Olsen*, Edited by Bjarne Simmelkjær Sandgaard Hansen, Adam Hyllested, Anders Richardt Jørgensen, Guus Kroonen, Jenny Helena Larsson, Benedicte Nielsen Whitehead, Thomas Olander, Tobias Mosbæk Søborg, Museum Tusculanum Press, 2017, pp. 517-526:

դեպքերում ընդգծվել են գրավոր աղբյուրներիս ընձեռած լայն հնարավորություններն անձնանունների բազմակողմ քննության հարցում: Այդ հնարավորությունն առաջին հերթին ընձեռում է ԱնՁԲԱՌ-ը, որում արձանագրված է հիշատակարաններում վկայված անձնանունների կամ դրանք կազմող տարբեր բաղադրիչների մեծ մասը, թեև հրատարակված և անտիպ հիշատակարանները, նոր ձեռագրացուցակները փաստում են, որ մի շարք անձնանունների պարագայում բառարանի տվյալները ենթակա են լրացման կամ ճշգրտման (այս պետք է նկատի ունենալ առաջիկայում համանման նոր բառարանի կազմության պարագայում): Ըստ երեք խմբերի՝ դիտարկենք այդպիսի մի քանի օրինակ.

ա. Բառարանում վկայված անձնանուններ, որոնց ավելի վաղ օրինակները հաղորդում են հիշատակարանները.

ԾԱՄ – իգ., հայ. ծամ «մազ» բառից: Արձանագրված է ԱնՁԲԱՌ-ում ԺԵ. դարից [ԱնՁԲԱՌ, 2: 567]: Այս անվան ավելի վաղ հիշատակումը Մամիկ փաղաքշական ձևով գտնում ենք 1205 թ. Մշո Ճառընտիրի գնմանը մասնակցած անձանց շարքում [Հիշ. ԺԳ: 47]:

ԾԱՄՈՍԿԻ – իգ., հայ. ծամ և ոսկի բառերից: ԱնՁԲԱՌ-ում անունն արձանագրված է ԺԶ.-ԺԷ. դարերից [ԱնՁԲԱՌ, 2: 567-568]: ԺԳ.-ԺԴ. դարերի հիշատակարաններում գտնում ենք այս անվան ավելի վաղ վկայություններ՝

1. հիշվում է 1292 թ. Մոմիկի հիշատակարանում, մայր ձեռագրի ստացողներ Յովհաննէս և Թադէոս քահանաների [Հիշ. ԺԳ: 678-9],

2. կողակից Տէրունականի, որ 1310 թ. ստացավ Արատեսի վանքում ընդօրինակված մի Ավետարան [Հիշ. ԺԳ: 67]:

ՀԱԶԱՐԴԵՂ – իգ., հայ. հազար (պ՛ղ. [ՀԱԲ, 3: 6]) և դեղ բառերից՝ «հազար վերքերի համար դեղ» իմաստով (հմմտ.՝ Խոցադեղ, Սիրադեղ և այլն): ԱնՁԲԱՌ-ին այս անունը հայտնի է անթվակիր արձանագրություններից, հիշվում է նաև երկու օրինակ ԺԴ. դարից, իսկ իգական անվան տարբերակն արձանագրված է 1311 թվից ուշ [ԱնՁԲԱՌ, 3: 10]:

1236 թ. Հավուց Թառում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում արձանագրված է իգական տարբերակի ավելի վաղ գործածությունը՝ Հզարդեղ ձևով. հիշվում է որպես կին Սարգսի [Հիշ. ԺԳ: 191]²²:

ՀՆԴՈՒ – ար., ըստ Աճառյանի՝ Հնդուբէկ «բառացի՝ Հնդկաստանի իշխան», անվան կրճատ տարբերակից: Անունը ԱնՁԲԱՌ-ին հայտնի է ԺԴ. դարի երկրորդ կեսից [ԱնՁԲԱՌ, 3: 92]: Ավելի վաղ՝ 1298 թ. ընդօրինակված մի ձեռագրում անունն արդեն վկայված է [Հիշ. ԺԳ: 842]:

²² Տե՛ս նաև Կ. Մաքևոյան, Հավուց թառի վանքը, Երևան, 2012, էջ 35:

ՇԱՏԱՐԵՒ – ար., հայ. շատ և արեւ բառերից: Բառարանում այս անձնանունը վկայված է ժե. դարի երկրորդ կեսից միայն [ԱնՁԲԱՌ, 4: 148-9], մինչդեռ ժԳ. և ժԳ. դարի հիշատակարանները հաղորդում են այլ օրինակներ ևս՝

1. հիշվում է 1300 թ. Կարինում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում [Հիշ. ժԳ: 861],

2. հայր Ահարոն-Գրիգոր վարդապետի, որ ստացավ 1303 թ. երզնկայում գրչագրված մի ձեռագիր [Հիշ. ժԳ: 32]:

ՌԵՀԱՆ – իգ., արաբ. համանուն բուսանունից [ՀԱԲ, 4: 139]: ԱնՁԲԱՌ-ին անունը հայտնի է ժՁ.-ժԸ. դարերից [ԱնՁԲԱՌ, 4: 316], մինչդեռ 1280 թ. Մուղղիում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում գտնում ենք այդ անվան ավելի վաղ վկայություն (տր. ըՌԻԽԱՆԱՅ ձևով) [Հիշ. ժԳ: 513]:

ՍՊԱՀԱՆ – պրսկ. համանուն քաղաքանունից: Բառարանում արձանագրված օրինակները սկսում են ժե. դարավերջից [ԱնՁԲԱՌ, 4: 596]: ժԳ. դարի մի հիշատակարանում գտնում ենք երկու դարով ավելի վաղ վկայություն (ուղղ. Ըսպայհան, տր. Ըսպայհնայ / Ըսպայհանայ, փաղաքական՝ տր. Ըսպայհանիկայ ձևերով): Ամուսնու՝ Կատայի հետ 1267 թ. ստացան մի Ավետարան [Հիշ. ժԳ: 357]:

ՎԱԼԻ – ար., ըստ Աճառյանի՝ արաբ. valī «սուրբ, տեր, պաշտպան» անունից: Բառարանում արձանագրված է այս բառով բարդված Վալիջան անունը՝ ժՁ.-ժԷ. դարերից [ԱնՁԲԱՌ, 5: 6]: Իբրև ինքնուրույն անուն՝ Վալի-ն վկայված է ժԳ. դարի անթվական մի հիշատակարանում [Հիշ. ժԳ: 939]:

Վերոբերյալ օրինակները ցույց են տալիս, որ մի շարք անձնանուններ ունեն ավելի վաղ վկայություններ: Գաղտնիք չէ, որ Աճառյանի բառարանը ոչ միայն պատմության ընթացքում հայոց մեջ գործածված որևէ անվան ստուգաբանության հիմնական աղբյուրն է, այլև հայ մատենագրության մեջ տվյալ անունով վկայված անձանց գլխավոր տեղեկատուն, որում երբեմն կենսագրական կարևոր տեղեկություններ են հաղորդվում հիշատակված անձանց մասին: Ուստի՝ այս կարգի քննությունը լրացնում է տարբեր անձնանունների կիրառության ժամանակի վերաբերյալ մեր գիտելիքները:

բ. Անձնանունների բառարանում եզակի վկայությամբ արձանագրված անձնանուններ, որոնց այլ օրինակներ հաղորդում են հիշատակարաններ.

Ինքնին պարզ է, որ այս բնույթի անձնանունները ոչ միայն հաստատում են տարբեր, երբեմն կասկածելի թվացող անունների գոյությունը, այլև ժամանակային ու տարածքային որոշակի պատկերացում են հաղորդում տվյալ անվան վերաբերյալ: Այսպես.

Աղբերջահ անունը ԱնՁԲԱՌ-ում մեկ օրինակով արձանագրված է ժէ. դարից [ԱնՁԲԱՌ, 1: 102]: Անվան մեկ այլ վկայություն գտնում ենք 1347 թ.²³ ընդօրինակված Ճառընտիրի հետագա հիշատակագրության մեջ: Հիշվում է Աղբարջահ գինեծախը [Հիշ. ժԳ: 366]:

Զիադ (արաբ. *zīyād* «առավել, առավելություն» բառից) անունը հայկական աղբյուրներում հանդիպում է ինչպես ինքնուրույն կիրառությանմբ, այնպես էլ բաղադրյալ անձնանունների կազմում՝ Զիադփաշա, Զիադմելիք և այլն: Այս անուններն արձանագրված են ԱնՁԲԱՌ-ում ժԳ. սկսած: Բառարանում Զիադ անվան անկախ կիրառության ընդամենը մեկ վկայություն է նշված (Զիաթ ձևով) 1592 թ., անվանակրի սեռն էլ՝ ոչ հստակ [ԱնՁԲԱՌ, 2: 207]: Այս անվան ավելի վաղ վկայություն գտնում ենք 1296 թ. մի հիշատակարանում, ուր Զիադը հիշվում է որպես Մխիթար գրչի հոգևոր հայր, Աղիտու վանք [Հիշ. ժԳ: 784]:

Հ. Տաշյանի ձեռագրացուցակից²⁴ ԱնՁԲԱՌ-ում տեղ է գտել Բամկոց անունը, որի թե՛ ժամանակը, թե՛ սեռը կասկածելի են թվում Աճառյանին, որն անունը հետևյալ կերպ է բացատրում. «անշուշտ Բամբկոց (< բամբակ) ձևից» [ԱնՁԲԱՌ, 1: 379]: Աճառյանի այս մեկնությունը հաստատվում է մեկ այլ օրինակով, որ գտնում ենք ավելի վաղ՝ ժԳ. դարում գրված մի հիշատակարանում (հայց. զԲամբկոցն, սեռ. Բամբկոցին) [ՄՅՀՁՄՄ, 9: 983]:

Այսպիսի օրինակները եզակի չեն, և անձնանունների նոր վկայությունները ոչ միայն հարստացնում են դրանց պատմությունը, այլև փոփոխության են ենթարկում դրանց ժամանակային սահմանները:

գ. Բառարանում արձանագրված անձնանուններ, որոնք ունեն լրացուցիչ նշուման կարիք.

Տարբեր պատճառներով ԱնՁԲԱՌ-ում տեղ են գտել մի շարք անճշտություններ, որոնց մի մասը պայմանավորված է աղբյուրների սխալ ընթերցումներով, որ երբեմն հանգեցրել է «նոր անունների» առաջացմանը: Բավական է հիշել Կոնիբերի ցուցակում Սուղկուզ ընթերցված կեղծ անունը²⁵ (կարգալ՝ սուղ կուզէ), որ հիշում է Աճառյանն իր բառարանի առաջաբանում [ԱնՁԲԱՌ, 1: 12]: Այս հանգամանքը մեկ անգամ ևս ընդգծում է բառարանիս որոշ անունների ճշգրտման անհրաժեշտությունը, մանավանդ որ անվանի լեզվաբանն ինքն է այդ արձանագրել²⁶: Ստորև վկայակոչենք ընդամենը երկու օրինակ.

²³ Գրչության թվականի և վայրի վերականգնումը՝ Լ. Խաչիկյանի, տե՛ս [Հիշ. ժԳ: 359/ծնթ.]:

²⁴ *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, [ն. Ա.], կազմեց Հ. Յ. Վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 489բ:

²⁵ Տե՛ս *A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum*, by F. C. Conybeare, London 1913, pp. 122 և 388:

²⁶ Նկատի ունենալով աղբյուրների սխալ ընթերցումների հետևանքով առաջացող անուններն ու դրանց հիշատակումն իր բառարանում Աճառյանը գրել է. «Ինչպէ՛ն այսպիսի վրի-

ԱնՁԲԱՌ-ում միաժամանակ երկու աղբյուրների մատնանշումով արձանագրված է Հայրատեղ անունը՝ կազմված հայր և տեղ բառերից. բացատրված է այսպես. «նա, որ իր հոր տեղ բռնել է կամ պիտի բռնի» [ԱնՁԲԱՌ, 3: 47]: Նշյալ անձնանունը հիշատակվում է ՀՀ Լոռու մարզի Դսեղ գյուղի մերձակայքում Սուրբ Գրիգոր (Բարձրաքաշ) վանքի ձորափին կանգնեցված խաչքարի (հայտնի է «Սիրուն խաչքար» անվամբ) արձանագրության մեջ: Նկատի ունենալով, սակայն, Դեղ անունը, ինչպես նաև նրանով կազմված անձնանունների (Խոցադեղ, Հովադեղ, Սիրադեղ և այլն) առատությունը միջնադարյան հայկական աղբյուրներում²⁷ կասկածելի է թվում Հայրատեղ անվան գոյությունը: Անունը հեշտորեն ճշտվում է բառարանի հիշատակած և այլ աղբյուրների քննությամբ: Աճառյանի վկայակոչածներից միայն առաջինում է անունը Հայրատեղ ձևով²⁸, մինչդեռ երկրորդում «Ազգագրական հանդէս»-ում, այն ընթերցված է Հայրադեղ ձևով²⁹: Նշյալ արձանագրությունը քանիցս հրատարակվել է նաև հետագայում, և բոլոր դեպքերում էլ մեզ հետաքրքրող անունը կարդացվել է Հայրադեղ³⁰, այդ տեսքով այն տեղ է գտել նաև «Դիվան հայ վիմագրություն» Լոռվա պրակում [ԴՀՎ, 9: 395⁸⁷⁴]: Այսպիսով՝ ճշտվում է, որ Հայրատեղ անունը վրիպակ է, որն առաջացել է ինչ-որ շփոթի հետևանքով, ուստի՝ այն պետք է ուղղել Հայրադեղ-ի, որի գոյությունը հաստատվում է վիմագրական այլ վկայություններով ևս [ԴՀՎ, 3: 225⁷¹⁶, ԴՀՎ, 4: 302¹²⁵¹, ԴՀՎ, 6: 99²¹⁶]:

Ուշագրավ մեկ օրինակ ևս.

Մոմիկ անվամբ Աճառյանը հիշատակում է 4 տարբեր մարդկանց ԺԳ. -ԺԴ. դարերից, որոնք բոլորն էլ նկարիչ, գրիչ կամ քանդակագործ են [ԱնՁԲԱՌ, 3:

պակների զոն եմ գնացել արդյո՞ք [...] անհայտ և առանց մեկնության թողած անուններիս մեծագույն մասը բնականաբար այսպիսի վրիպակների արդյունք է» [ԱնՁԲԱՌ, 1: 12]:

²⁷ Մեռ ուսումնասիրությունն այս ուղղությամբ ցույց է տալիս, որ Դեղ կամ նրանով բարդված անունները, ձեռագիր և վիմագիր աղբյուրների համաձայն, հիմնականում գործածական են եղել ԺԲ.-ԺԷ. դարերում: Ընդհանուր թվով, այս խմբի մեկ տասնյակից ավելի անուններ են վկայված նշյալ աղբյուրներում: Տե՛ս **Խ. Հարությունյան**, «Դեղ արմատով բազմազան անձնանունները վիմագրերում և ձեռագրերի հիշատակարաններում», Երևանահայրական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ (Երևան, 2017 թ., նոյեմբերի 28-30), Երևան, 2018, էջ 115-133:

²⁸ **Ի. Յարութիանյան**, *Ներսիսեան հոգևոր դպրոցի սաների առաջին դպրոցական ճանապարհորդությունը (յաելուածով)*, Տփլիս, 1894, էջ 63:

²⁹ **Ե. Լալայեան**, «Նշանատու վանքեր, Ա. Հայոց [Բորչալուի գաւառ]», *Ազգագրական հանդէս*, Թիֆլիս, 1901 (7-8), էջ 424:

³⁰ **Գ. արք. Յովսէփեան**, *Հաւուց թառի Ամենափրկիչը եւ նոյնանուն յուշարձաններ հայ արուեստի մէջ (պատմա-հնագիտական ուսումնասիրութիւն)*, Երուսաղէմ, 1937, էջ 72բ, **Գ. Սարգսյան**, ««Բարձրաքաշ» վանքը և նրա վիմագրությունը», *Էջմիածին*, 1951 (11-12), էջ 51, Հ՜մբ 43, **Ա. Ն. Շահինյան**, «Հայկական խաչքարերի արվեստը», *Էջմիածին*, 1960 (8), էջ 46 և այլն:

418]: Անվանի լեզվաբանը, թեև հիշատակում է Կ. Ղաֆաղարյանի կարծիքն առ այն, որ հիշյալ Մոմիկներից առնվազն 3-ը նույն անձն են³¹, սակայն կարծես թե չի ընդունում այդ: Նշյալ վկայությունները ստուգելով կարելի է համոզվել, որ բառարանում նշված անձանցից ոչ թե 3-ը, այլ 4-ն էլ իրականում ներկայացնում են միջնադարի հայտնի ճարտարապետ, գրիչ և ծաղկող Մոմիկին. նրա առաջին գործը մեզ հայտնի է հենց 1283 թվականից, երբ մի խորան է նկարել («ՉՄոմիկ նկարիչ խորանիս յիշեցէք», Վիեն. 571³²), 1292 թ. ընդօրինակել է մի շքեղ Ավետարան (ՄՄ 2848 [ՄՅՀՁՄՄ, 9: 899-904]), որի հիշատակարանում էլ միայն մեկ անգամ իր ողջ գործունեություն ընթացքում նշել է իր սարկավազ լինելու մասին. «Եւ անարիս ի սարկաւագս եւ անարհեստս ի գրիչս Մոմիկ...» [Հիշ. ԺԳ: 679, ՄՅՀՁՄՄ, 9: 903], և ըստ Կ. Մաթևոսյանի՝ դրանից էլ պետք է եզրակացնել, որ Մոմիկը քահանայական ձեռնադրության չի արժանացել³³: Աճառյանի հիշատակած 1302 թ. Ավետարանն էլ Մոմիկը նկարազարդել է Ստեփանոս Օրբելյանի պատվերով (ՄՄ 6792), իսկ 1308 թ. էլիկում Օրբելյանի կնոջ՝ Թամթա խաթունի պատվերով քանդակել է մի գեղեցիկ խաչքար, որ ներկայումս Մայր աթոռի վեհարանում է³⁴: Անշուշտ, սրանով չեն սահմանափակվում նշանավոր վարդապետի, գրչի ու ծաղկողի գործերը, սակայն սրանք էին, որ շիտթեցրել էին Աճառյանին: Այսպիսով բառարանում արձանագրված հիշյալ 4 անձանց հարկ է ներկայացնել իբրև մեկ անձ, որով Մոմիկ անունը կունենա ընդամենը մեկ վկայություն³⁵:

Գ. Անձնանունները հիշատակարաններում. փերականակա և ուղղագրական դիտարկումներ.

Վերը Սուղկուզ-ի օրինակով հիշատակեցինք թյուրիմացաբար ստեղծվող կեղծ անձնանուններ, սակայն ավելորդ չենք համարում խնդրին առանձին անդրադառնալը՝ հարցը բաժանելով սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերի:

Հայտնի է, որ վիմագրական և ձեռագրական նյութը ժամանակի ընթացքում կարող է տարբեր պատճառներով վնասվել (վիմագրերի դեպքում հիմնա-

³¹ Կ. Ղաֆաղարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1954, էջ 11-12:

³² Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենագրանին Մխիթարեանց ի Վիեննա, [հ. Ա.], կազմեց Հ. Յ. Վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 1039բ:

³³ Կ. Մաթևոսյան, Մոմիկ, Երևան, 2010, էջ 20:

³⁴ Կ. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 34, նույնի՝ Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Երևան, 2017, էջ 49 (նկ. 80):

³⁵ Նույն կերպ նշվել է նաև, որ ԱնՁԲԱՌ-ի Ստեփաննոս անվան տակ առանձին նշումներով արձանագրված Հ^{մբ} 82, 103 և 104 Ստեփաննոսները ներկայացնում են միևնույն Տիրացու մականվամբ Ստեփաննոս Հակովբացի եպիսկոպոսին: Մանրամասն տե՛ս Գ. Տէր-Վարդանեան, «Ստեփաննոս եպիսկոպոս Յակովբացի, մականուն Տիրացու. ԺԲ. դար (Նորայայտ վաւերական դիմանկարի աոթթով)», էջմիածին, 2004, Բ-Գ, էջ 101-127:

կանում՝ կոտորվել, հողմահարվել, մամուկակալել, քայքայվել, իսկ ձեռագրերի դեպքում՝ գրանյութի աղճատում, թերթերի պատուվածքներ, գրադաշտի գունափոխում, թերթերի թանաքակերուծյուն և այլն), որը դժվարացնում է դրա ընթերցումը: Այսպիսի դեպքերում հուշարձանների վերծանողները փորձում են հնարավորինս արտացոլել առկա նյութը՝ անհրաժեշտության դեպքում դիմելով վերականգնման մեթոդին, որի համար սովորաբար նրանց օգնության են հասնում ծանոթ բառաձևերը, հուշարձաններում կամ վիմագրերում հաճախադեպ կաղապարներն ու հատուկ անունները: Բայց միշտ չէ, որ սա գործում է: Ուստի՝ այս ընթացքում որևէ բառի կամ հատուկ անվան սխալ ընթերցումն ավելի շուտ ունի օբյեկտիվ հիմքեր: Բազմաթիվ օրինակներից ընդգծենք մեկը միայն.

1297 թ. ընդօրինակված ՄՄ 522 Տոնապատճառ ձեռագրի հիշատակարանում Սարգիս գրչի հոր անունը գրեթե անընթեռնելի է. ստույգ երևում է անվան սկզբնամասի զժ տառախումբը³⁶: Զ-ն դիտարկում ենք իբրև նախդիր, և ակնհայտ է, որ անվան սկզբնատառը Ծ-ն է³⁷: Ա. Մաթևոսյանն այն վերականգնել է զԾ[առու] ձևով [Հիշ. ԺԳ: 795]: Անձնանունը, թեև տարածված չէ, բայց ԺԶ. դարի մի վկայությամբ հայտնի է նաև Աճառյանին [ԱնՁԲԱՌ, 2: 568]: Ձեռագրիս նկարագրության մեջ, սակայն, անունը վերականգնված է զԾ[առու]ր ձևով [ՄՅՀՁՄՄ, 2: 1126]: Արդ, այս վերականգնումներից ավելի վստահելի է թվում Ա. Մաթևոսյանին, քանի որ վերջինս գտել է նույն գրչի մեկ այլ հիշատակարան, ուր առանց դժվարության ընթերցվում է Ծառեք անունը (տր. Ծառերոյն ձևով): Իսկ Ծառուր-ը (Աստուածատուր անվան կրճատ տարբերակներից մեկը), թեև ավելի տարածված է հայոց մեջ, այնուամենայնիվ, տվյալ պարագայում շուտի վերականգնման անհրաժեշտ հենք, ուստի՝ վերականգնվել է ենթադրաբար: Այս պարագայում, գործ ունենք «օբյեկտիվ սխալի» հետ³⁸, քանի որ տառաշարից հայտնի էր միայն անվան Ծ սկզբնատառը, և օժանդակ նյութի բացակայության պարագայում անհնար կլիներ ստուգության մեջ պարզել անունը:

Սխալ ընթերցումների սուբյեկտիվ պատճառների մի զգալի մասն ուղղակիորեն աղերսվում է վերծանողների կողմից լեզվական որոշակի իրողությունների անտեսմանը: Վկայակոչենք մեկ-երկու օրինակ.

³⁶ Համոզվեցիմք ինքներս՝ բնագրին ծանոթանալիս:

³⁷ Այս սկզբնատառով արական անունների թիվն այնքան էլ շատ չէ: Անձնանունների բառարանում արձանագրված են ընդամենը 23-ը: Եթե նկատի ունենանք, որ դրանց մի մասն էլ միևնույն անվան փաղափշական տարբերակներն են՝ -իկ կամ -ուկ վերջավորությամբ (Ծառ/Ծառիկ/Ծառուկ, Ծեք/Ծեքիկ/Ծեքուկ), այլև Աստուածատուր անվան կրճատ ձևերը (Ծածուր, Ծատուր), ապա այդ թիվն ավելի կփոքրանա [հմտ. ԱնՁԲԱՌ, 2: 566-574]:

³⁸ Ա. Մաթևոսյանի այս վերականգնումը թեևս վրիպել է ձեռագրացուցակը կազմողների ուշադրությունից:

Վենետիկի ձեռագրացուցակի առաջին հատորում³⁹, ապա այդտեղից վերցված և Ե.-ԺԲ. դդ. հիշատակարանների ժողովածուում տպագրված հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Ջաւաւաւանուն յիշեշիփ (sic!) առաջի ահեղ ատենին» [Հիշ. Ե.-ԺԲ: 78]: Ջաւաւաւանուն-ը նույնությամբ տեղ է գտել ժողովածուի անձնանունների ցանկում՝ որպես տվյալ անվան ուղիղ ձև: Անունն անհայտ է ԱնՁԲԱՌ-ին:

Դժվար չէ նկատել, որ անվան սկզբում զ-ն գրաբարյան նախդիրն է, ուստի՝ դրա ուղիղ ձևը պետք է համարել Աւաւաւանուն-ը: Իբրև լրացուցիչ փաստարկ՝ կարող ենք մատնանշել աւաւաւ և անուն բաղադրիչներով կազմված մի շարք այլ անուններ, ինչպես՝ Աղեկանուն [Հիշ. ԺԳ: 369], Հայրանուն [ԱնՁԲԱՌ, 3: 37], Օտարտիկին [ԱնՁԲԱՌ, 5: 244] և այլն:

Դարձյալ նույն երևույթն է Ջայմելիփ անվան դեպքում, որը տեղ է գտել ԺԵ. դարի հիշատակարանների ժողովածուի ցանկում [Հիշ. ԺԵ, Ա: 697]: Անկասկած, այս անվան ուղիղ ձևը Այմելիփ-ն է՝ կազմված է թրք. ay «լուսին» և արաբ. melek «հրեշտակ» բառերից, որն էլ իր հերթին հայտնի է ԱնՁԲԱՌ-ին [ԱնՁԲԱՌ, 1: 143], իսկ զ-ն դարձյալ գրաբարյան նախդիրն է:

ԺԳ. դարի հիշատակարանների անվանացանկում արձանագրված է Ռիհանա անունը [Հիշ. ԺԳ: 972], որը դուրս է բերվել հիշատակարանի հետևյալ հատվածից. «[...] ծնողաց իմոց՝ Մելքիսէդեկ քահանայի եւ ըՌիհանայ, եւ եղբարց իմոց միշտ յիշատակ սա եղ[ի]ցի» [Հիշ. ԺԳ: 512]: Ակնհայտ է, որ անունը դրված է տրական հոլովով, ուստի՝ ուղիղ ձևը Ռիհան կամ Ռէհան անունն է (անվանս մասին տե՛ս վերը):

Բերված օրինակներն ընդգծում են աղբյուրների նկատմամբ քննական մոտեցման անհրաժեշտությունը: Ըստ որում՝ խոսքը ոչ միայն անձնանունների, այլև բառերի ու տարատեսակ բառաձևերի մասին է, որոնք հաճախ թյուրիմացությունների պատճառ կարող են լինել⁴⁰:

Ինչ վերաբերում է անձնանունների ուղղագրությանը, ապա դրանք հաճախ խիստ անմիօրինակ են. նույն անունը միևնույն հիշատակարանում անգամ կարող է ունենալ գրության տարբեր ձևեր՝ Գէորգ/Գեորգ/Գորք, Դովլաթ / Տավլաթ և այլն, որոնք հետազոտողներից լրացուցիչ ուշադրություն են պահանջում:

³⁹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Կ. Ա, յօրինեց Հ. Բ. Վ. Սարգիսեան, Վենետիկ, 1914, էջ 562:

⁴⁰ Տեղին է հիշատակել Ս. Ավագյանի դիտողությունը վիմագրերում արվող վերականգնումների աղիթով, որ նույնությամբ պետք է կրկնել նաև հիշատակարանների պարագայում: Տե՛ս Ս. Ա. Ավագյան, Վիմագրական պրպտումներ («Ի հանգոյ անձնանունների սեռական, տրական, հոլովների կազմությունը Ժ-ԺԳ դարերի վիմական արձանագրություններում»), Երևան, 1986, էջ 182:

Խնդիրն առավել բարդ է բաղադրյալ անունների ուղղագրության հարցում, ավելի ստույգ՝ այն անձնանունների, որոնց վերջադաս բաղադրիչն արտահայտում է որոշակի հասարակական դիրք, պաշտոն. դրանք առավելապես իգական անձնանունների հետ հանդես եկող լրիմաստ բառեր են, ինչպես՝ հայ. ախլին, հին ֆր. տամ, թաթար., թուրք. խաթուն, խանում, արաբ. սիթի (> սթի), չաղաթ. բիֆա > պիֆայ (> պիֆե)⁴¹ և այլն, որոնցով կազմված անունները խիստ հաճախադեպ են գրավոր հուշարձաններում⁴², և դրանց գրության միասնական մոտեցումը բացակայում է: Նույնիսկ ԱնՁԲԱՌ-ն այս հարցում, կարծես թե, որոշակի սկզբունքի չի հետևում: Գիտարկենք ամենատարածված անուններից մեկի՝ Գոհար անվան օրինակը: Բառարանն այս անձնանվան տակ դնում է 30 հոգու, որոնց մեջ անշատ գրությունք վկայված են Գոհար սթի (2^ր 2), Գոհար ախլին (2^ր 3), Գոհար խաթուն (2^ր 7) անունները: Մինչդեռ բառարանում իբրև ինքնուրույն անուններ են գրված Գոհարխաթունը (11 անուն) և Գոհարախլինը (3 անուն, որոնցից երկրորդը՝ Գոհար ախլին անշատ ձևով) [ԱնՁԲԱՌ, 1: 481-486], և պարզ չէ, թե ուղղագրական ինչ սկզբունքով են գրված դրանք: Գովարխաթուն անվան տակ հիշվում է 3 անձ, որոնցից երկրորդի անունն ունի անշատ գրություն [ԱնՁԲԱՌ, 2: 78], և այսպես շարունակ:

Այս պարագայում դժվար է գրության որևէ ձևին նախապատվություն տալը, շատ հստակ չէ նաև, թե նման անձնանուններում այդ բաղադրիչներն

⁴¹ Բոլորն էլ, ըստ էության, տիկին բառի այլաբան տարբերակներն են, որոնք, նախապես ընդգծել են տվյալ անձի հասարակական բարձր դիրքը, ազնվականությունը, սակայն ժամանակի ընթացքում իմաստն ընդլայնվել է և ընդհանուր կերպով արտահայտել է իգական անձ: Նշյալ բաղադրիչներով անունները մեզանում հիմնականում չունեն տարածական սահմանափակում: Թեև բացառություն են կազմում տամ և բիֆա / պիֆայ / պիֆե բաղադրիչներով անունները, որոնցից առաջինը, սերելով հին ֆրանսերեն *dame* (տիկին) բառից [GODEFROY 1883b: 116], հանդիպում է կիրիլյան միջավայրում՝ տամ Աւիթ [Հիշ. ԺԳ: 363], տամ Ակայ [Հիշ. ԺԳ: 184] (ըստ որում տամ Ակայ-ը հիշատակարանում գրված է միասին՝ Տամակայ (գործ. Տամակայի) ձևով, բայց անձնանունների ցանկում ուղղված է տամ Ակայ), իսկ երկրորդը՝ չաղաթ. բիֆա / պիֆայ / պիֆե [ԱնՁԲԱՌ, 1: 416], բաղադրված անուններն առավել տարածված են եղել դրիմահայոց և լեհահայոց շրջանում՝ ԺԵ.-ԺԶ. դարերից սկսյալ: Այդ լավագույն կերպով երևում է «Գիվան հայ վիմագրության» Ուրախնայի և Մոլոդայի հայկական վիմագրական ժառանգությունը պարունակող VII պրակից, որը լի է այս բաղադրիչով կազմված տարբեր անուններով՝ Այպիթե, Անապիթե, Լուսպիթե, Կրուպիթե և այլն: Նույն պատկերն է նաև ձեռագրերի հիշատակարաններում:

⁴² Արական անձնանունների դեպքում նույնպես առկա են այդպիսի մի շարք բառ-բաղադրիչներ՝ աղայ, բէգ (> բեկ), շահ, պարոն և այլն: Մրանցից բէգ և շահ բաղադրիչները, կարծես թե, հիմնականում միասին գրությամբ են հանդիպում, ԱնՁԲԱՌ-ը նույնպես դրանք միասին է դնում, մինչդեռ աղայ և պարոն բաղադրիչները դժվարություններ են հարուցում, և վիմագիր կամ ձեռագրի հիշատակարան արտագրողները անվան գրության հարցում հիմնականում գործում են ըստ տվյալ դեպքի:

իբրև ածական-մակդիրներ են գործածված, թե՞ իսկապես անվան բաղադրիչ են՝ ուղղագրական անմիօրինակությամբ⁴³:

Այստեսակ խնդիրների պարզումն առաջին հերթին կարևոր է հենց անձնանունների ճշգրիտ վերարտադրման համար, իսկ մյուս կողմից կարող է նպաստել առաջիկայում անձնանունների նոր բառարանների կազմությանը՝ բացառելով միևնույն անվան կրկնությունները:

Գ. Նորահայտ անձնանուններ.

Ձեռագրերի հիշատակարաններում (և ոչ միայն) վկայված են բազմաթիվ անձնանուններ, որոնք վերը հիշված պատճառներով տեղ չեն գտել ԱնՁԲԱՌ-ում: Ստորև ներկայացնում ենք այդպիսի մոտ երեք տասնյակ անձնանուն ԺԱ.-ԺԳ. դարերի հիշատակարաններից: Դրանց մի մասը նորահայտ է, իսկ որոշ անձնանուններ էլ ունեն ավելի վաղ վկայություններ նշյալ բառարանում արձանագրված օրինակների համեմատությամբ: Ներկայացվող ցանկում տեղ են գտել նաև այնպիսի անձնանուններ, որոնց ծագումն անհայտ է մեզ կամ կասկածելի⁴⁴:

ԱԶԳ – իգ., հայ. ազգ «ցեղ, տոհմ» բառից:

Վկայված է 1267 թ. մի հիշատակարանում (տր. Ազգին ձեռով). հիշվում է որպես դուստր Սպահանի և Կատայի [Հիշ. ԺԳ: 357]:

⁴³ Առնվազն *տիկին* բաղադրիչով անունների համար առաջարկում ենք միասին գրությունը: Բանն այն է, որ *տիկին* բառով բաղադրված անունների զգալի մասը հոլովվում է *ա*, հազվադեպ նաև *ի* արտաքին թեմամբ՝ *Փոհարտիկին* > *Փոհարտիկնայ*, *Դովլաթտիկին* > *Դովլաթտիկնայ* և այլն: Այս դեպքում *տիկին*-ը հոլովված է ոչ թե իբրև ինֆնուտյուն բառ, որի սեռ./տր.-ը - ոչ հոլովմամբ պետք է ունենար *տիկնոջ* ձևը, այլ իբրև բաղադրյալ անվան մի մաս: Օրինակ՝ «[...] բարեխաւեսեա՛ առ Տէր Աստուած վասն [...] Մարեմտիկնի» [Հիշ. ԺԳ: 544]: Ըստ այսմ միասին գրությամբ պետք է դնել օրինակ *Շնաւորտիկին* անունը, որը վկայված է 1288 թ. Հովհանավանքում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում հայց. *զՇնաւորտիկին* [Հիշ. ԺԳ: 613], սեռ./տր. *Շնաւորտիկնայ* [ն.տ.], նույն ձևով՝ *Փոխանտիկնայ* [Հիշ. ԺԳ: 735]: Այս կառույցով անձնանունների առատությամբ աչքի է ընկնում 1300 թ. Կարինում գրչագրված Ավետարանի հիշատակարանը, որում կարդում ենք. «[...] յիշատակ իւրեանց եւ [...] Հերիքտիկնայ եւ Վարդետիկնայ [...], Մայրտիկնայ, եւ Լոյստիկնայ [...], Արեւտիկնայ, Տանատիկնայ [...], Մարեմտիկնայ» [Հիշ. ԺԳ: 861]: Ըստ այսմ սրանց ուղղականները պետք է լինի՝ *Հերիքտիկին*, *Վարդետիկին*, *Մայրտիկին* և այլն: Թերևս այս նույն տրամաբանությունը կարող է գործել նաև այս իմաստն արտահայտող մյուս բաղադրիչների դեպքում ևս, ինչպես՝ *Արեւիսաթուն*, *Արեւսիթի*, *Արեւպիքայ* և այլն: Տե՛ս նաև Ս. Ավագյանի դիտարկումն այս առիթով՝ Ս. Ա. Ավագյան, *Վիճական արձանագրությունների բառաքնություն*, Երևան, 1978, էջ 21:

⁴⁴ Առանձին անունների կամ նրանց բաղադրիչների ստուգաբանության հարցում լայնորեն օգտվել ենք ԱնՁԲԱՌ-ի ստուգաբանություններից. անհրաժեշտության դեպքում գործածել են նաև այլ ուսումնասիրությունների կամ բառարանների տվյալներ: Շնորհակալություն ենք հայտնում նաև Հրաչ Մարտիրոսյանին՝ առանձին անունների ստուգաբանությունների հարցում խորհրդատվության համար:

Եթե մի կողմ թողնենք Ազգամոլը և Ազգասէր անունները, որոնք, ըստ Աճառյանի՝ նորակերտ են, ապա ազգ բաղադրիչով բառարանին հայտնի են միայն Ազգեր և Ազգատիկին անունները⁴⁵ [ԱնՁԲԱՌ, 1: 58]: Սույն օրինակը վկայում է Ազգ անձնանվան ինքնուրույն գոյություն մասին: Նկատենք, որ հիշատակարանային և վիճագրական տվյալների համաձայն՝ Ազգ կամ նրանով բարդված անուններն առավել կիրառական են եղել ժԳ.-ժԻ. դարերում և հետագա շրջանի հիշատակարաններում կամ վիճագրերում սակավադեպ են⁴⁶:

ԱԶԳԻԿ – իգ., Ազգ անվան փաղաքական տարբերակը -իկ վերջավորությունում:

Անունը (տր. Ազգկան) մեկ անգամ վկայված է Կապուսի Սուրբ Լուսավորիչ վանքում (Երզնկա) [ՏեղԲԱՌ, 2: 950դ] ընդօրինակված ձեռագրի 1230 թ. հիշատակարանում. մայր Սարգիս և Վարդան քահանաների [Հիշ. ժԳ: 165]:

ԱՂԲԵՐ – ար., հայ. եղբայր բառի ժողովրդախոսակցական տարբերակից:

Մեկ անգամ հիշված է 1209 թ. Հառիճավանքում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում. եղբայր ձեռագիրը փրկագնող Ովասափի [Հիշ. ժԳ: 65]:

ԱնՁԲԱՌ-ում արձանագրված են Եղբայրիկ, Աղբերիկ, Աղբայրիկ, Աղբարիկ ձևերը [ԱնՁԲԱՌ, 1: 102], որոնք, ըստ էության, Եղբայր / Աղբեր անվան փաղաքական տարբերակներն են: Աղբեր անվամբ են բաղադրված նաև Աղբերշահ [ԱնՁԲԱՌ, 1: 102] և Աղբերաղեղ [ԴՀՎ, 9: 145₂₆₀]⁴⁷ անունները:

ԱՇԱԽ – իգ., ծագ. անհայտ:

Մեկ անգամ վկայված է 1095 թ. Վայոց Ձորում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում. հիշվում է որպես Աւետիքի կին [Հիշ. Ե-ժԲ: 117]:

ԱՊԱՇԽԱՐՈՂ – սեռը անհայտ, հայ. ապաշխարել «մեղքերի թողություն խնդրել» բայից (իրան. փխոթ. ապաշխար արմատից [ՀԱԲ, 1: 227-228]): Գտնում ենք ժԳ.-ժԵ. դարերի գրավոր հուշարձաններում.

1. ստացող ժԳ. դարի մի ճառընտիրի, ով նաև թղթով է օգնել գրչին (ՄՄ 4871, հայց. գԱպաշխարաղ՝ 11ա, տր. Ապաշխարողին՝ 60բ),

2. հիշված է 1413 թ. Վայոց Ձորի Սուրբ Սիրն վանքի բակում կանգնեցված խաչքարին [ԴՀՎ, 3: 61₁₆₂],

⁴⁵ ԱնՁԲԱՌ-ում Ազգատիկին անունն ունի մեկ վկայություն, ևս մեկը (հայց. գԱզգատիկին ձևով) գտնում ենք 1358 թ. մի հիշատակարանում [Հիշ. ժԳ: 436]:

⁴⁶ Էջմիածնի միաբանական գերեզմանոցի անթվակիր տապանագրերից մեկում արձանագրված է Ազգուշ անունը, որը կարելի է հավանաբար դիտել իբրև Ազգանուշ անվան կրճատ տարբերակ (հմմտ. Վարդանուշ > Վարդուշ, Սիրանուշ > Սիրուշ և այլն), տե՛ս Ա. Հարությունյան, Վաղարշապատ. վանքերը և վիճական արձանագրությունները, Էջմիածին, 2016, էջ 236բ:

⁴⁷ Խ. Հարությունյան, «Դեղ արմատով բաղադրված անձնանունները վիճագրերում և ձեռագրերի հիշատակարաններում», էջ 121-122:

3. վկայված է 1700 թ. մի հիշատակարանում՝ որպես ձեռագիրը նորոգել տված պարոն Թաթևոսի քույր [ՄՅՀՁՄՄ, 5: 56]:

ԱՊՈՒԼՔԱՐԻՄ (ԱՊՈՒԼՔԱՐԱՄ) – ար., արաբ. Աբուլ «հայր» և Քարիմ (Քարամ) «ազնիվ, վեհ, բարի» բառերից [ԱնՁԲԱՌ, 5: 216-7, WEHR 1979: 2, 962]. բառացի նշանակում է «հայր Քարիմի»:

Այս կազմովյալ մի շարք անուններ հայտնի են ԱնՁԲԱՌ-ին, ինչպես՝ Աբլասադ, Աբլխարիբ / Ապլղարիբ, Աբլխասան և այլն [ԱնՁԲԱՌ, 1: 20-23]:

Նորահայտ այս անունը վկայված է երկու անգամ (Ապուլքարամ և Ապուլքարիմ ձևերով): Տր. Ապուլքարիմին) 1287 թ. հիշատակարանում՝ որպես որդի Մեծտիկինի և Կիր Վասիլի. մոր հետ մի Ավետարան ընծայեց երզնկայի Սուրբ Լուսավորիչ եկեղեցուն հոր հիշատակին [ՀԻՂ. ԺԳ: 603]:

ԱՊՍՏԱՄԲ – ար., հայ. ապստամբ «ըմբոստ, անհնազանդ» բառից, որն իրանական փոխառություն է [ՀԱԲ, 1: 242, ՀՄԲ: 71]:

Անձնանունը վկայված է ձեռագիր հիշատակարաններում և վիճագրերում.

1. հարազատ հաշաուր քահանայի. երկիցս հիշվում է (հայց. զԱպստամբն) 1217 թ. Այրիվանքում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում [ՀԻՂ. ԺԳ: 105],

2. նվիրատու Հաղարծնի վանքի. հիշվում է (ուղղ. Ապստամբ, տր. Ապստամբին) Սուրբ Գրիգոր եկեղեցուն կից գավթի անթվակիր արձանագրության մեջ [ԴՀՎ, 6: 396],

3. պատվիրատու պատարագի. հիշվում է (տր. Ապստամբին) Գոշավանքի Սուրբ Աստվածածին եկեղեցու արևելյան պատի հարավային մասի անթվական մի արձանագրության մեջ [ԴՀՎ, 6: 73₁₄₄]:

ԲԱՉՄՈՑ – իգ.: Թվում է՝ անվան հիմքում կարող է ընկած լինել հայ. բազում «շատ» բառը⁴⁸ -ոց մասնիկի հավելմամբ:

Ըստ որում -ոց վերջավորությամբ հայտնի են այլ անուններ ևս, ինչպես՝ Գիւնոց [ԱնՁԲԱՌ, 1: 472], Թանոցոց [ԱնՁԲԱՌ, 2: 277], Բամբկոց (տե՛ս վերը), Մշկոց (տե՛ս ստորև), Տիկնոց [ՄՅՀՁՄՄ, 9: 1062]: Ջահուկյանն ածանցը բխեցնում է հ.-ե. * -skO- / -ā- ածանցից [ՀՄԲ: 810]: Բազմոց անվան հիմքում «բազում, շատ» իմաստը դիտարկելու համար թերևս կարող է կռվան լինել Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի նախկինում Ղըրխբուլաղ կոչվող հին բնակատեղում կանգնեցված խաչքարի 1297 թ. արձանագրության մեջ վկայված Բազումշահ (սեռ. Բազումշաի ձևով) արական անունը [ԴՀՎ, 4: 355₁₄₂], որի առաջին բաղադրիչը Բազում-ն է: Մեր այս կարծիքը, կարծես թե, ավելի է ամ-

⁴⁸ Տեղին է նկատել. որ «շատ, բազում» իմաստն են արտահայտում նաև Շատեր կամ շատ բաղադրիչով բառված անունները՝ Շատաղէկ, Շատարև անձնանունները [ԱնՁԲԱՌ, 4: 148-149]: Հայ. բազում բառը, ըստ ամենայնի, իրանական փոխառություն է [ՀԱԲ, 1: 378, ԱՋԱՌՅԱՆ 1940: 246₁₇₀, ԱՋԱՌՅԱՆ 1987: 518, ՀՄԲ: 111]:

րապնդում 1680 թ. մի վավերագրում ինքնուրույն գործածված Բագում արական անունը, այստեղ վերջինս հիշվում է իբրև որդի աստապատցի Կոստանդի⁴⁹:

Բագվոնց-ը, իբրև երկու քույրերի անուն («գքոյրսն մեր [...] զԲագմոց եւ զմիւս Բագմոց [...] յիշման արժանի արարէք»), վկայված է 1292 թ. Նորավանքում Մոմիկի ընդօրինակած և ծաղկած Ավետարանի հիշատակարանում. քույրեր Յովհաննէս և Թադէոս քահանաների, որոնք ստացան ձեռագիրը [Հիշ. ժԳ: 678, ՄՅՀՁՄՄ, 9: 903]:

ԲԱԽՏԵՍ – ար., իրանական ծագում ունեցող հայ. բախտ «ճակատագիր» բառից՝ կազմված -ես վերջավորությունը անունների համաբանությունը, հմմտ.՝ Յովհաննէս, Վրթանէս, Խաչանէս և այլն:

Բախտ անունը հայկական աղբյուրներում վկայված է ինչպես անկախ կիրառություն, այնպես էլ բաղադրյալ անունների կազմում՝ Բախտ, Բախտաղէկ, Բախտաւոր: Բախտ-ը և նրանով բաղադրված ձևերը, իբրև անձնանուն, ժ. դարից սկսած, արձանագրված են նաև իրանական աղբյուրներում՝ Բախտիար, Բախտավե, Բախտիշան և այլն [Justi 1895:61բ-62ա, ԱնձԲառ, 1: 366-367]:

Բախտես անունը մեկ անգամ վկայված է 1211 թ. մի հիշատակարանում այլ ձեռքով արված նույն ժամանակի հավելման մեջ՝ անմիջապես Յովհաննէս (Յեվաննէս ձեռով) անվան կողքին՝ «եւ Բախտես եղբայ[ր]» [Հիշ. ժԳ: 75ճնթ., հմմտ. ՄՅՀՁՄՄ, 3: 1625]:

ԹԱՆԿՆԱԶ – իգ., հայ. քանկ «արժեքավոր» և պրսկ. նազ (nāz) «նազանք» բառերից:

Այս անվան երկու բաղադրիչներն էլ, իբրև անձնանուններ, վկայված են ինչպես անկախ կիրառություն, այնպես էլ բաղադրյալ անունների կազմում. դրանցից Թանկ-ը (ոնգային ն-ից հետո խուլ կ-ի ձայնեղացմամբ՝ Թանգ ձևով) իբրև առաջնաբաղադրիչ, իսկ Նազ-ը՝ թե՛ առաջնաբաղադրիչ և թե՛ վերջնաբաղադրիչ՝ Թանգ, Թանգխաթուն, Թանգամա, Թանգտիկին [ԱնՁԲԱՌ, 2: 274-278], Նագ, Նագխաթուն, Նագմելիք, Հերիքնագ և այլն [ԱնՁԲԱՌ, 4: 11-12 և 3: 86]:

Թանկնազ իգական անվան մեկ վկայություն ենք գտնում ժԳ. դարի մի հիշատակարանում. հոգևոր մայր Մխիթար գրչի [Հիշ. ժԳ: 908]⁵⁰:

ԹԱՆԿԹԱԳՈՒՀԻ – իգ., հայ. քանկ և քազունի բառերից:

⁴⁹ Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981 1432, 1564, 1614 և 1655-1839 թթ.), պրակ I, առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով կազմեց՝ Հ. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 128: Տե՛ս նաև Ա. Հախնազարյան, Արտագի երեք վանքերը (RAA գիտական ուսումնասիրություններ, գիրք ժե), Երևան, 2012, էջ 231բ:

⁵⁰ Անունը վկայված է ՄՄ 2021 ձեռագրի հիշատակարանում, որի գրչության թվական նշված է 1184-ը [ՄՅՀՁՄՄ, 6: 1078]: Ա. Մաթևոսյանը, սակայն, գրչության թվականը համարում է 1184-ից հետո՝ դնելով այն ժԳ. դարի հիշատակարանների շարքում [Հիշ. ժԳ: 908/ ձնթ.]:

Մեկ անգամ հանդիպում է 1296 թ. Բարջանջ գյուղում (Խարբերդ [Տեղեւո, 1: 634բ]) ընդօրինակված Ճաշոցի հիշատակարանում մայր Անանիա գրչի [Հիշ. ժԳ: 786, ՄՅՀՁՄՄ, 4: 116]:

ԽԱՄԻԼ – ար., արդյո՞ք կարելի է կապել արաբ. *ḥamīl* «երաշխավոր» բառի հետ [WEHR 1979: 207a]:

Մեկ անգամ վկայված է 1294 թ. Հավուց թառում ընդօրինակված մի Ավետարանի հիշատակարանում (սեռ. Խամիլայ): Հայր ձեռագրի գնորդ Ամենաագի [Հիշ. ժԳ: 741]:

ԽԱՉԱԽՈՒՐ – ար. և իգ., հայ. խաչ բառից և -աւոր (հ.-ե. **bher* «կրել, բերել» արմատից [ՀԱԲ, 1: 441, ՀՄԲ: 802]) վերջավորութայն հնչյունափոխված տարբերակից ($n > ու$) «խաչակիր, խաչը կրող» իմաստով⁵¹:

Քննվող անվան երկու եզրերն էլ հանդիպում են բաղադրյալ այլ անուններում ևս՝ Խաչատուր, Խաչեղբայր, Խաչանէս կամ հասարակից հատուկ անվան անցած Թագաւոր, Շնորհաւոր և այլն: Ըստ որում -աւոր-ով բաղադրված վերջին երկու անձնանուններին (նաև առհասարակ դրանցով բաղադրված բառերին) հատուկ են տարաբնույթ փոփոխությունները՝ Թագւոր, Թագոր, Շնհաւոր, Շնոֆոր և այլն:

Այս անձնանվան առնվազն հինգ վկայություն ենք գտնում ձեռագիր և վիճակագիր աղբյուրներում՝

1. Երկիցս հիշված է (սեռ. Խաչորին, Խաչորիս ձևերով) Հաղբատի Սուրբ Նշան եկեղեցու հարավային պատի 1069 թ. արձանագրության մեջ՝ որպես կին Սահակի [ԴՀՎ, 9: 143-144],

2. հիշվում է Հովհաննավանքի ժԲ. դարի մի արձանագրության մեջ՝ Խաչաւոր ձևով⁵²,

3. նույն տեղում ժԳ. դարով թվագրված մեկ այլ արձանագրության մեջ անունը հանդիպում է սեռ. Խաչա ուրի (Ղաֆաղարյանի ընթերցման համաձայն՝ ա և ո տառերի միջև առկա է բաց թողնված տարածք) ձևով⁵³,

4. վկայված է Անիում Տիգրան Հոնենցի եկեղեցու 1215 թ. նվիրատվական արձանագրության մեջ՝ սեռ. Խաչորկանն ձևով (Խաչաւոր > Խաչոր + իկ)⁵⁴,

⁵¹ Նախապես ենթադրել էինք, որ անունս կարող է բաղկացած լինել հայ. խաչ և ար բառի սեռ. աւոր ձևից: Տե՛ս Kh. Harutyunyan, “Gli antroponomi armeni”, p. 58:

⁵² Կ. Ղաֆաղարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948 էջ, 78:

⁵³ Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 97: Գիտնականը ենթադրում է, որ անունը կարելի է կարդալ նաև Խաչատուր ձևով, մինչդեռ իր վերծանումից ավելի հավանական է Խաչաւոր ընթերցումը:

⁵⁴ Արձանագրության մի շարք ընթերցումներում Խաչորիկ > Խաչորկան անձնանունը չի հասկացվել: Այն մանրամասն քննել և պարզել է Ս. Ավագյանը, տե՛ս Ս. Ա. Ավագյան, Վիճական արձանագրությունների բառաբանություն, Երևան, 1978, էջ 116-118 («Խաչորկանն, թե՛ խաչ որ կան»):

5. հիշված է 1217 թ. Այրիվանքում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում որպես կուսակրոն քահանա և ձեռագրի ստացող [Հիշ. ժԳ: 105-6],

ԽԱՐԻՖՇԱՀ – ար. (°), արաբ. ḫarīf «ընկեր, արհեստակից» [ՀԱԲ, 3: 60] և պրսկ. šāh «թագավոր» բառերից:

Մեկ անգամ հիշվում է Հոռոմայրում ընդօրինակված ձեռագրի անթվական հիշատակարանում. Զավակ պատվիրատու Յովհաննէս քահանայի [Հիշ. Ե-ԺԲ: 312]:

ԽՆՁՈՐՈՍԿԻ – իգ., հայ. խնձոր և ոսկի բառերից:

Նշյալ երկու բաղադրիչները վկայված են ինչպես բաղադրյալ անունների կազմում, այնպես էլ ինքնուրույն կիրառությամբ, հմմտ.՝ Խնձոր, Խնձորշահ [ԱնՁԲԱՌ, 2: 515], Ոսկի, Ոսկիհատիկ [ԱնՁԲԱՌ, 4: 191-5], Ծամուսկի [ԱնՁԲԱՌ, 2: 567] և այլն:

Խնձորոսկի անվան երկու վկայություն է մեզ հաջողվել գտնել՝

1. հիշվում է (սեռ. Խնձորոսկեա) ժԳ. դարի անթվակիր մի հիշատակարանում. կողակից Պատրիկ ռայիսի [ՄՅՀՁՄՄ, 9: 1060],

2. հիշվում է (սեռ. Խրնձորոսկէ) 1300 թ. Կարինում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում [ՄՅՀՁՄՄ, 9: 754]:

ՀԱՅՐԱԿԱՆ – ար., հայ. հայր բառից -ական վերջավորությամբ. հմմտ. Սիրական [ԱնՁԲԱՌ, 4: 528], Տանական [ԱնՁԲԱՌ, 5: 180] և այլն:

Մեկ անգամ վկայված է ժԳ. դ. անթվակիր մի հիշատակարանում. երեց, որ մի Ավետարան է գնել Աւաղայի որդի Վախթանգից [Հիշ. ժԳ: 904]:

ՃԱՐԱԿ – ար., պղ. ճարակ «խոտ, դեղ, դարման» բառից [ՀԱԲ, 3: 191, ՋԱՆՈՒԿՅԱՆ 1987: 532]:

Նկատենք, որ «դեղ, դարման» իմաստն արտահայտող անձնանունները, ըստ վիմագրերի և հիշատակարանների տվյալների՝ տարածում են գտնում XII դարի երկրորդ կեսից: Առավել հաճախադեպ են Դեղ կամ նրանով բաղադրված անունները (Հագարդեղ, Հայրադեղ, Խոցադեղ և այլն, տե՛ս վերը): Իմաստային այս խմբի մեջ են մտնում նաև Ճար, Բալասան, Բուժիկ, Դարման անունները, որոնք արձանագրված են ԱնՁԲԱՌ-ում:

Ճարակ անվան երկու վկայություն ենք գտնում հիշատակարաններում.

1. 1221 թ. ընդօրինակել է մի Մաշտոց [Հիշ. ժԳ: 126],

2. հիշվում է 1487 թ. հիշատակարանում որպես Գանձարանի ստացող Աւագի որդի [Հիշ. ԺԵ, Գ: 104]:

ՄԱՐԴԱՋԱՅՆ – ար, հայ. մարդ և ձայն բառերից:

Անվան մարդ բաղադրիչն ունի իրանական ծագում և վկայված է բաղադրյալ այլ անուններում ևս [ԱնՁԲԱՌ, 3: 242, JUSTI 1895: 194-196], մինչդեռ ձայն բառի ծագումը բխեցվում է հ. -ե. *ḡ^huḡi / *ḡ^huḡi «հնչել» նախաձևից

[ՀԱՔ, 3: 144, ՋԱՆՈՒԿՅԱՆ 1987: 129, ՀՍԲ: 473, MARTIROSYAN 2010: 430]: Այն խիստ հազվագեղ է անձնանուններում: Այդ բաղադրիչով բարդված Հայրաձայն անունը Աճառյանն այսպես է մեկնում. «Նա, որ ձայնը նման է հոր ձայնին» [ԱնՁԲԱՌ, 3: 37]: Եթե ընդունենք սույն բացատրությունը, ապա Մարդաձայն անունն էլ ենթադրաբար պետք է արտահայտի «մարդու ձայն» իմաստը: Բայց արդյո՞ք նույն կերպ կարելի է մեկնել նորահայտ Արևաձայն անունը, որ վկայված է (տր. Արևաձայնին) Լոռի բերդի պատմական գերեզմանոցի 1301 թ. մի տապանաքարի վրա [ԳՀՎ, 9: 455¹⁰⁵²]:

Մարդաձայն անունը մեկ անգամ վկայված է (տր. Մարդաձայնին ձևով) 1190 թ. Այրիվանքում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում [Հիշ. Ե-ԺԲ: 263]:

ՄԵԾԱՆՈՒՆ – ար., հայ. մեծ և անուն բառերից:

Երկու բաղադրիչներն էլ ակտիվորեն մասնակցում են անվանակերտմանը (Մեծխաթուն, Մեծտիկին, Մեծատուր [ԱնՁԲԱՌ, 3: 308-311], Հայրանուն, Մայրանուն [ԱնՁԲԱՌ, 3: 37]), ըստ որում մեծ-ը ունի նաև ինքնուրույն կիրառություն՝ Մեծիկ ձևով, որ արձանագրված չէ ԱնՁԲԱՌ-ում. մեկ անգամ վկայված է (տր. Մեծկան ձևով) 1351 թ. մի հիշատակարանում [Հիշ. ԺԳ: 393]:

Մեծանուն անձնանունը գտնում ենք ԺԳ. դարի մի հիշատակարանում. եղբայր ձեռագրի ստացող Ստեփանոսի [Հիշ. ԺԳ: 934]:

ՄԵԾՄԱՅՐ – իգ., բարդված է հայ. մեծ և մայր բառերով:

Մեկ անգամ վկայված է Վայոց Ձորի Աղավ անապատում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում. կին ձեռագրի ստացող Յուսամ քահանայի [ԺԳ: 674]:

ՄԾԿՈՑ – ար. (°), Մուշկ անձնանունից [ԱնՁԲԱՌ, 3: 464]⁵⁵ -ոց վերջավորություններ, ինչպես վերը նշված Գինոց, Թանգոց, Բազմոց անունները:

Իրանական ծագման մուշկ և նազ բառերի համադրումով է կազմված նաև Մշկնազ իգ. անունը, որ մեկ անգամ վկայված է (ուղղ. Մշկնազ, տր. Մշկնագին) 1658 թ. Ջուղայում գրչագրված Ավետարանի հիշատակարանում. հիշվում

⁵⁵ Պեղ. *mušk* բառը [HÜBSCHMANN 1895: 196, ԱՃԱՌՅԱՆ 1940: 273⁸³¹, ՀՍԲ: 539 և այլն] նշանակում է «մկնիկ» [ՀԱՔ, 3: 360]: ԱնՁԲԱՌ-ում Անառյանն անունը բացատրում է «բալասան, իզ, միտոն» իմաստով [ԱնՁԲԱՌ, 3: 464], որի հիմքում ընկած է վերջինիս «անուշահոտ կենդանական մի նիւթ» իմաստը, որից էլ *մշկահոտ*, *մշկաբույր* կամ *մշկահամ* բառերը [ՀԱՔ, ն.ա.]: Սակայն Հ. Մարտիրոսյանն անվան հիմքում առավել հավանական է համարում «մուկ, մկնիկ» իմաստը, մանավանդ որ *Մուկ*-ը, իբրև անձնանուն, վկայված է ոչ միայն հայկական [ԱնՁԲԱՌ, 3: 451՝ սեռ. *Մկան* ձևով], այլև մի շարք օտար աղբյուրներում ևս: Այս և իրանական ծագման այլ անուններին է նվիրված նրա զեկուցումը. տե՛ս **H. Martirosyan, Armenian Personal Names: Native and Iranian Layers**, Հայ լեզվաբանության XI միջազգային գիտաժողով՝ նվիրված Ջոն Գրեյիին Հիշատակին (1937-2016), 2-5 հոկտեմբերի, 2017, հիմնադրույթների ժողովածու, Երևան, 2017, էջ 94-95:

է՛ որպէս ձեռագրի ստացող [Հիշ. ժէ, Գ: 843-846]: Այս անվան վաղ տարբերակներից է Մուշկինազ (*Muškinaz*) անունը, որ հիշվում է Ֆիրդուսու հայտնի «Շահնամե»-ում և արձանագրված է *Justi*-ի [*JUSTI* 1895: 218], ապա և Աճառյանի [ԱնՁԲԱՌ, 3: 464] բառարաններում:

Մշկոց անունը մեկ անգամ վկայված է ժԳ. դարի անթվակիր մի հիշատակարանում՝ որպէս ստացող ձեռագրի [Հիշ. ժԳ: 934]:

ՆԱՍՐԻԿ – իգ., արաբ. ՆԱՍՐ անվան փաղաքշական ձևը -իկ մասնիկով:

Աճառյանը վկայակոչում է արաբերեն այդ անձնանվան երկու հիշատակում ժէ. դարից՝ միևնույն ժամանակ նշելով, որ այն ՆԱՍՐԱՊԻՆ անվան կրճատ տարբերակն է, որ հայոց մեջ վկայված է ժԲ. դարից [ԱնՁԲԱՌ, 4: 23]:

ՆԱՍՐԻԿ անունը մեկ անգամ հիշված է 1250 թ. հիշատակարանում. ամուսնու՝ Կոստանդ սարկավազի հետ կերակուր են տրամադրել ձեռագրի կազմող Հովհաննեսին [Հիշ. ժԳ: 256]:

ՆՈՆՈՓԱՐ – ԱնՁԲԱՌ-ին անունը հայտնի է 1428 թ. սկսյալ [ԱնՁԲԱՌ, 4: 91]:

Անվանս վկայության վաղ օրինակը (տր. Նոնոփարին ձևով) գտնում ենք 1239 թ. Սեբաստիայում գրչագրված ձեռագրի հիշատակարանում. կին ոմն Մարտիրոսի [Հի. ժԳ: 210]:

ՆՈՒՇ – իգ., իրան. ծագման ուժ կամ ոժժ «քաղցր ըմպելիք» բառից:

Անունը վկայված է *Justi*-ի բառարանում [*Justi* 1895: 231ա], իսկ դրա փաղաքշական տարբերակը՝ Նուշիկ-ը, հայտնի է Աճառյանի բառարանին [ԱնՁԲԱՌ, 4: 91]: Ըստ որում Աճառյանն այս անունը մեկնում է «բաղամ» իմաստով:

Նուշ անվան հիշատակումը (սեռ. Նշի ձևով) մեզանում գտնում ենք 1201 թ. մի հիշատակարանում [Հիշ. ժԳ: 22]: Անվան մեկ այլ վկայություն (սեռ. Նուշի ձևով) հանդիպում է ժէ. դարի մեկ այլ հիշատակարանում [ՄՅՀՁՄՄ, 1: 1197]:

ՇԱՄԵՐ – իգ., թերևս հայ. Շամամ անվան [ԱնՁԲԱՌ, 4: 136] կրճատ ձևից -եր հոգնակերտի հավելմամբ (հմմտ. Թանգեր, Շողեր):

Անունս մեկ անգամ վկայված է 1280 թ. Գեղձնուտի վանքում ընդօրինակված Տոնապատճառի հիշատակարանում. մայր ձեռագիրը ստացող Սարգսի [Հիշ. ժԳ: 497]:

ՇԱՇԹԻ – իգ., թերևս Շահսիթի կամ Շահսթի անվան հնչյունափոխված տարբերակից՝ Շահսթի > Շասթի > Շաշթի անցմամբ, որոնցից առաջինում նախ ընկել է հ-ն, ապա առնամանմամբ բառասկզբի շշական շ-ն ազդել է սուլական ա-ի վրա՝ փոխելով նրա որակը⁵⁶: Ըստ որում հայտնի է, որ Սիթի կամ Սթի

⁵⁶ Անվան այս ստուգաբանությունը, որ անձնական նամակով մեզ հուշել է Հրաչ Մարտիրոսյանը, առավել հավանական է թվում՝ հաշվի առնելով հատկապես այս կաղապարով անունների առատությունը:

անունները կամ նրանցով բաղադրվածները տարածում են գտնում հատկապես ժ.թ.-ժ.դ. սկսած՝ Սիթիխաթուն, Ալամսիթի, Մամսի, Նուսիի և այլն⁵⁷:

Շաշթի անունը մեկ անգամ հանդիպում է 1289 թ. մի հիշատակարանում. հիշվում է որպես քույր ձեռագրի ստացող Վարդան քահանայի [Հիշ. ժ.թ.: 621]:

ՎԱՐԴԵՄԱՅՐ – իգ., հայ. վարդ (պնլ. [ՀԱԲ, 4: 317]) և մայր բառերից:

Վկայված է (սեռ./տր. Վարդեմար) ժ.թ. դարում ընդօրինակված Ճառընտիրի հիշատակարանում⁵⁸ [Հիշ. ժ.թ.: 211-3]:

Այս նույն կաղապարով դարձյալ նորահայտ անուն է Վարդեհայր-ը, որ մեկ անգամ գտնում ենք 1472 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում [ՄՅՀՁՄՄ, 8: 821]:

ՏԱՔՏԻԿԻՆ – իգ., հայ. տափ «ջերմ» և տիկին բառերից:

Անսովոր է տափ բաղադրիչը, որն այլ անձնանուններում չենք հանդիպել:

Երկու անգամ գործածված է 1297 թ. Հավուց թառում գրչագրված Ավետարանի հիշատակարանում. մայր ձեռագիրը ստացող Քուրդի [Հիշ. ժ.թ.: 796, ՄՅՀՁՄՄ, 9: 848]⁵⁹:

ՏԻԿՆԱՄԱՅՐ – իգ., հայ. տիկին և ծայր բառերից:

Եթե Տիկին կամ նրանով բարդված անունները հաճախագեպ են միջնադարյան գրավոր հուշարձաններում, ապա ծայր բաղադրիչով անունները սակավագեպ են, հիմնականում վկայված են ժ.թ.-ժ.դ. դարերի վիմագրերում: Հայտնի վիմագրագետ Ս. Ավագյանը հարցիս նվիրված իր հոդվածում ի մի է հավաքել ծայր (< ծէր / ծեր) բաղադրիչով բարդված 10 անուն, ինչպես՝ Քոյրաձայր, Հարբաձայր, Տիրաձայր, Աբրամձեր, Աշտաձեր և այլն: Գիտնականի կարծիքով ծայր վերջնաբաղադրիչով անուններում արտահայտվում է «ընտանիքի, գերդաստանի լավագույն, ազնվագույն զավակ» իմաստը, որ բխեցնում է ծայր արմատական բառի «գագաթ, նորածագ արևի ճառագայթ, որևէ բանի ազնվագույն մասը» իմաստից [ՀԱԲ, 2: 442, ՀՄԲ: 358]⁶⁰:

⁵⁷ Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, էջ 291-292 («Սիթի (< Սթէ), րե՛ Սթեր, Ստէ»): Նույնի՝ Վիմագրական պրպտումներ, Երևան, 1986, էջ 194-199 («Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմությունը ժ-ժ.դ դարերի վիմական արձանագրություններում»):

⁵⁸ Ա. Մաթևոսյանը ձեռագրի գրչության ժամանակ է համարել 1239 թ.՝ նշելով դա ծանոթագրության մեջ: Այս պարագայում նպատակահարմար ենք գտնում պարզապես ժ.թ. դար նշումը. այդպես է նաև ձեռագրի նկարագրության մեջ, տե՛ս [ՄՅՀՁՄՄ, 8: 558]:

⁵⁹ Տե՛ս նաև Գ. Յովսէփեան, Հաւուց թառի Ամենափրկիչը, էջ 90ա, Կ. Մաթևոսյան, Հավուց թառի վանքը, էջ 36:

⁶⁰ Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություններ (««Մայր» բաղադրիչով անձնանուններ»), Երևան 1978, էջ 130-136:

Տիկնաձայր անունը երկիցս վկայված է Հոռոմայրում ժԲ. դարում ընդօրինակված Տոնապատճառի հիշատակարանում. մայր Յովհաննէս ստացողի [Հիշ. Ե-ժԲ: 313, ՄՅՀՁՄՄ, Գ: 37]⁶¹: Այս անունը բացակայում է Ս. Ավագյանի ցանկում:

ՓՈՒՍԱՆԱԿ – ար., հայ. փոխանակ «փոխարեն, փոխան» բառից:

Այս իմաստով ավելի տարածված է Փոխան անունը, որն Աճառյանն այսպես է մեկնում. «Երբ որդին մեռնում է, և նրանից հետո ծնողներն ունենում են մի նոր որդի, անունը դնում են Փոխան, իբր նրա փոխարեն» [ԱնՁԲԱԹ, 5: 210]:

Փոխանակ-ը հիշվում է որպես 1292 թ. Արճեշում Ավետարանի ստացող [Հիշ. ժԳ: 685]:

ՔՈՅՐՄԵԼԻՔ – իգ. (°), հայ. քոյր և հավանաբար արաբ. մելիք «հրեշտակ» բառի աղավաղված ձևից, և ոչ թե արաբ. մելիք «թագավոր» բառից (հմմտ. ԱնՁԲԱԹ, 3: 290 և 296):

Հիշված է ժԳ. դարի անթվակիր մի հիշատակարանում [Հիշ. ժԳ: 931]:

Ամփոփում

Հայերեն ձեռագրերի և նրանց հիշատակարանների, այլև տարաբնույթ ձեռագրացուցակների հետ մեր ամենօրյա աշխատանքի ընթացքում հանգել ենք այն եզրակացությունը, որ Հր. Աճառյանի փառահեղ բառարանն ունի լրամշակման անհրաժեշտություն: Այդ աշխատանքը, մեր կարծիքով, որոշակի սկզբունքների մշակումից և աղբյուրների ճշգրտումից հետո հնարավոր է կատարել մասնագետների խմբային և համագործակցված աշխատանքի շնորհիվ միայն: Թեև սույն հոդվածի առանցքում հիմնականում ձեռագրերի հիշատարաններն էին, սակայն ինքնին պարզ է, որ արվելիք աշխատանքն ու քննվելիք աղբյուրները շատ ավելին են: Մեր մատնանշած օրինակները մի աննշան մասն են այն նյութի, որ տրամադրում են գրավոր աղբյուրները:

Սույն հոդվածով մեկ անգամ ևս ցանկանում ենք մասնագետների ուշադրությունը հրավիրել այս կարևոր գործի վրա՝ նպատակ ունենալով ապագայում տեսնել աճառյանական բացառիկ հնգհատորյակի լրացյալ և հարստացյալ տարբերակը:

⁶¹ Նկարագրության համաձայն՝ ձեռագիրը ժԳ. դարի է [ՄՅՀՁՄՄ, 4: 31-40]:

Համառոտագրումներ սկզբնաղբյուրների և բառարանների

Հիշատակարաններ և ձեռագրացուցակներ՝

Հիշ. Ե-ԺԲ – Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1988:

Հիշ. ԺԳ – Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:

Հիշ. ԺԴ – ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1950:

Հիշ. ԺԵ, Ա – ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1955:

Հիշ. ԺԵ, Բ – ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1958:

Հիշ. ԺԵ, Գ – ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967:

Հիշ. ԺԶ, Գ – Հայերեն ձեռագրերի ԺԶ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.), հ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:

ՄՅՀԶՄՄ, 1 – Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զէյթունյան, Փ. Անթաբյան, խմբագրությամբ՝ Ա. Մնացականյանի, Օ. Եգանյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:

ՄՅՀԶՄՄ, 2 – Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեօշկերեան, խմբագրությամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Ա. Զէյթունեանի, ցանկերը՝ Վ. Դերիկեանի, «Նայիրի» հրատ., Երևան, 2004:

ՄՅՀԶՄՄ, 3 – Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեց՝ Օ. Եգանեան, խմբագրությամբ՝ Փ. Անթաբեանի, Յ. Քեօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ ֆհյ. Հայրապետեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դերիկեանը, «Մագաղաթ» հրատ., Երևան, 2007:

ՄՅՀԶՄՄ, 4 – Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ, կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Վ. Սուֆիասեան, Յ. Քեօսէեան, խմբագրությամբ՝ Փ. Անթաբեանի, Յ. Քեօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ ֆհյ. Հայրապետեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դերիկեանը, «Նայիրի» հրատ., ԵՊՀ հրատ., Երևան, 2008:

ՄՅՀԶՄՄ, 5 – Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե., կազմեց՝ Օ. Եգանեան, խմբագրությամբ՝ Յ. Քեօսէեանի, Ա. Ղազարոսեանի, տ. Շ. ֆհյ. Հայրապետեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դերիկեանը, «Նայիրի» հրատ., ԵՊՀ հրատ., Երևան, 2009:

ՄՅՀԶՄՄ, 6 – Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. 2. (ձեռագիր 1801-2100), խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, «Նայիրի» հրատ., Երևան, 2012:

ՄՅՀԶՄՄ, 8 – Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը. (ձեռագիր 2401-2700), խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դեռկեան, «Նայիրի» հրատ., Երևան, 2013:

ՄՅՀԶՄՄ, 9 – Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Թ. (ձեռագիր 2701-3000), խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, «Նայիրի» հրատ., Երևան, 2017:

Վիճակագրեր՝

ԴՀՎ, 3 – Դիվան հայ վիճակագրության, պր. III, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967:

ԴՀՎ, 4 – Դիվան հայ վիճակագրության, պր. IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973:

ԴՀՎ, 6 – Դիվան հայ վիճակագրության, պր. VI, Իջևանի շրջան, կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հ. Մ. Ջանփոլադյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1977:

ԴՀՎ, 9 – Դիվան հայ վիճակագրության, պր. IX, Լոռու մարզ, կազմեցին Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Ս. Սաղամյան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2012:

Բառարաններ և այլ ուսումնասիրություններ՝

ԱՃԱՌՅԱՆ, Հ. 1940 – Հայոց լեզվի պատմություն, I մաս, Պետական համալսարանի հրատ., Երևան,:

ԱՆՁԲԱՌ – Հր. Անադյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 1-5, Երևանի պետական համալսարանի հրատ., Երևան, 1942-1962:

ՀԱԲ – Հր. Անադեան, Հայերէն արմատական բառարան, հ. 1-4, Երևան, 1926, վերահրատ. Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1971:

ՀՍԲ – Գ. Ջահուկյան, Հայերէն ստուգաբանական բառարան, խմբագրութեամբ և առաջաբանով՝ Վ. Սարգսյանի, «Ասողիկ» հրատ., Երևան, 2010:

ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր Հ. Գ. Աւետիսեան, հ. Խ. Սիրմէլեան, հ. Մ. Ազեբեան, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837, վերահրատ. Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1979:

ՋԱՀՈՒԿՅԱՆ, Գ. Բ. 1987 – Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան:

ՏԵՂԲԱՌ, 1 – Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախլյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1986:

Տեղ.Ֆ.Ռ., 2 – Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1988:

Տեղ.Ֆ.Ռ., 4 – Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1998:

GODEFROY, F. 1883b – *Dictionnaire de l'ancienne langue française et de tous ses dialectes du IX^e au XV^e siècle, composé d'après le dépouillement de tous les plus importants documents manuscrits ou imprimés qui se trouvent dans les grandes bibliothèques de la France et d'Europe e dans les principales archives départementales municipales, hospitalières ou privées*, tom deuxième, Paris.

HÜBSCHMANN H., 1895 – *Armenische Grammatik*, I Theil. Armenische Etymologie. I. Abtheilung: Die Persischen und Arabischen Lehnwörter in Altarmenischen, Leipzig, Druck und Verlag von Breitkopf & Härtel.

JUSTI, F. 1895 – *Iranisches Namenbuch*, Marburg, N. G. Elwert'sche Verlagsbuchhandlung.

MARTIROSYAN, H. 2010 – *Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon*, Brill, Leiden-Boston.

WEHR, H. 1979 – *A Dictionary of Modern Written Arabic (Arabic-English)*, edited by J. Milton Cowan, Fourth Edition, Considerably enlarged and amended by the author, Spoken Language Services, Inc. Urbana, IL.

KHACHIK HARUTYUNYAN

PERSONAL NAMES IN ARMENIAN COLOPHONS:

1. NEWLY DISCOVERED PERSONAL NAMES IN THE COLOPHONS OF 11TH-13TH CENTURY ARMENIAN MANUSCRIPTS

Keywords: manuscript, inscription, medieval studies, male and female personal names, linguistics, etymology.

The colophons of Armenian manuscripts are the primary sources for the many-sided study of the Armenian medieval life. They are important not only for the clarification or identification of specific issues within the historical, political and social contexts, but also for the study of different linguistic phenomena. The colophons also include numerous personal names, the majority of which can be found in Hr. Ačaryan's famous dictionary of Armenian personal names ("Hayoc' anjnanunneri bařaran",

vols. 1-5, Yerevan, 1942-1962). However, new research is needed in this area, which will help to expand Ačařyan's dictionary.

In this article we examine the interrelation between the personal names registered in Ačařyan's dictionary and those found in the colophons of Armenian manuscripts. The names are presented in three groups:

a. personal names found in the dictionary that had been earlier attested in the colophons,

b. personal names included in the dictionary in single examples, while the colophons provide other examples of the same names,

c. personal names found in Ačařyan's dictionary that need additional clarification with the help of colophons.

The article also contains some statistical data and a number of new personal names (for example, *Apařxaroł*, *T'anknaz*, *Xnjoroski* etc) from 11th- 13th century colophons, which have not been included in Ačařyan's dictionary.

ХАЧИК АРУТЮНЯН

ЛИЧНЫЕ ИМЕНА В КОЛОФОНАХ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ:

1. НОВОВЫЯВЛЕННЫЕ ЛИЧНЫЕ ИМЕНА В КОЛОФОНАХ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ XI-XIII ВЕКОВ

Ключевые слова: рукопись, надпись, медиевистика, мужские и женские личные имена, лингвистика, этимология.

Колофоны армянских рукописей являются первичными источниками для многостороннего изучения средневековой армянской действительности. Эти источники имеют важное значение не только для уточнения или идентификации отдельных вопросов в историческом, политическом и социальном контексте, но и для изучения различных языковых явлений.

Армянские колофоны богаты личными именами, большая часть которых вошла в известный словарь личных имен Р. Ачаряна ("Նայօս՝ այճանսննէրի Բաբարան", т. 1-5, Ереван, 1942-1962). Тем не менее требуются новые исследования в этой области, которые могут обогатить словарь Ачаряна.

В статье мы рассматриваем взаимосвязь личных имен, зафиксированных в словаре Ачаряна и в армянских колофонах, представляя их в виде трех групп:

а. личные имена, зафиксированные в словаре, более ранние свидетельства которых представлены в колофонах армянских рукописей,

б. личные имена, которые зафиксированы в словаре по одному примеру, в то время как памятные записи предоставляют другие свидетельства тех же имен,

в. личные имена, засвидетельствованные в словаре Ачаряна, нуждающиеся в дополнительном уточнении, возможность которого предоставляют колофоны.

В статье мы представляем также некоторые статистические данные и ряд новых личных имен (например, *Apařxaroł*, *T'anknaz*, *Xnjoroski* и др.) из колофонов XI-XIII веков, которые не зафиксированы в словаре “Армянских личных имен” Р. Ачаряна.

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ, ՔՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՐԿՈՒ ՆՈՐԱՀԱՅՏ ԾԱԾԿԱԳԻՐ

Բանալի բառեր՝ հայերեն ձեռագիր, գաղտնագրություն, նորահայտ ծածկագիր, բանալի, վերծանություն, այբուբեն, բժշկական բաղադրատոմսեր, հիշատակագրություն:

Ծածկագրությունը, լինելով պատմական գիտությունների կարևոր սկզբնաղբյուրներից մեկը, գիր ու գրչության պես հին պատմություն ունի: Բոլոր ժողովուրդների պես, հայերն էլ ունեցել են իրենց գաղտնագրությունը, որը գրականության մեջ հայտնի է տարբեր անուններով «փակագրություն», «գրափակություն», «գաղտնագրություն», «ծածկագրություն»¹:

ԺԹ. դարից սկսած՝ հայ և օտարազգի մասնագետները գիտական հանրության ուշադրությանն են ներկայացնում տարբեր դարերից վկայված ծածկագրեր՝ ամսագրերում, գիտական հանդեսներում պարբերաբար հրատարակելով դրանք և դրանց վերծանությունները:

Հայկական ծածկագրության ուսումնասիրությամբ և վերծանությամբ շատերն են զբաղվել², սակայն այն առաջին անգամ խմբավորել, համակողմանի ուսումնասիրել և տարբեր բանալիներով ներկայացրել է Հ. Աճառյանը իր «Հայոց գրերը» աշխատությունում³:

Ծածկագրված տարատեսակ բնագրեր կան հայերեն ձեռագրերում, որոնց վերծանությունները հրատարակված են ձեռագրացուցակներում: Հայկական ծածկագրության ուսումնասիրությանն ու հրատարակությանը նվիրված մի շարք հոդվածներ ու աշխատություններ ունի մեծանուն պատմաբան Աշոտ Աբրահամյանը, որը հետագայում այդ ամբողջը խմբավորեց և ամփոփեց իր «Հայկական ծածկագրություն» աշխատության մեջ, շուրջ 400 ծածկագիր (ավելի քան 300-ն իր վերծանությամբ), դրանք 36 տեսակների բաժանելով, տալով բանալիները, ենթատեսակները և որոշ օրինակներ: Նա առանձնացնում է գաղտնագրերի բովանդակային չորս խումբ՝ քաղաքական, գրչածածուկ, արհեստագործական, առեղծվածագիր: Ձեռագրերում վերոնշյալներից առավել

¹ Տե՛ս Ա. Աբրահամյան, *Հայկական ծածկագրություն*, Երևան, 1967, էջ 5:

² Տե՛ս Միաբան (Գ. ՏԷՐ-ՄԼԻՐԱՅԵԱՆ), «Ներսիսեան ծածկագիր», *Արարատ*, թիւ Ա, 1888, էջ 35-49, Գ. ՏԷՐ-ՄԼԻՐԱՅԵԱՆ, «Աջից ձախ գրոսփին», *Շողակաթ*, գիրք I, Վաղարշապատ, 1913, էջ 137-141:

³ Հ. Աճառյան, *Հայոց գրերը*, Երևան, 1984, էջ 663-676:

շատ հանդիպում են գրչածածուկ գաղտնագրերը, որոնք գրիչները գործածել են հիմնականում իրենց անուններն ու գրչության թվականը գրելիս: Այս հնարքին գրիչները դիմում էին՝ նպատակ ունենալով գաղտնի պահել իրենց հիշատակը խարդախներից և ցանկանալով, որ այն հայտնի լինի միայն գիտուններին⁴: Հանդիպում են նաև այնպիսի ծածկագրեր, որոնք գաղտնագրված են մի քանի բանալիներով: Այնուամենայնիվ, աշխատությունում հայ մատենագիտություն մեջ հայտնի և հրատարակված բոլոր ծածկագրերը չեն ներկայացված, որովհետև, ինչպես հեղինակն է գրում. «մեր նպատակը չի եղել կազմել հայ ծածկագրություն ամբողջական դիվանը (կորպուսը): Մենք այդ հնարավոր չենք համարել, որովհետև մեզ դեռ հայտնի չէ հայկական ձեռագրերի մեծ մասի բովանդակությունը և չգիտենք, թե նրանցում ուրիշ ինչպիսի ծածկագիր բնագրեր դեռ կարող են լինել»⁵:

Եվ միանգամայն իրավացի է գիտնականը, քանի որ այսօր էլ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի նկարագրության ժամանակ բացահայտվում են բազմաթիվ ծածկագրեր, որոնց մեծ մասի բանալիներն արդեն հայտնի են, իսկ որոշ մասինը՝ ոչ: Այլ կերպ ասած, հայկական ծածկագրությունը ձեռագրերի համակարգված նկարագրության շնորհիվ ավելանում է ոչ միայն արդեն հայտնի տեսակների նոր օրինակներով, այլև նոր տեսակներով, որոնցից երկուսին է նվիրված մեր հոդվածը⁶:

Ծածկագրերը հանդիպեցինք ձեռագրերի նկարագրության հերթական աշխատանքի ժամանակ, Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) երեք տարբեր ձեռագրում, ի դեպ՝ երկուսը նույն հեղինակի, իսկ երրորդը մեկ այլ հեղինակի պատկանող:

Առաջինը ՄՄ 3441 (Ժողովածու, Ժէ դ.) և 3609 (Բժշկարան, 1833 թ.) ձեռագրերում⁷ հանդիպած ծածկագրերն են: ՄՄ 3441 ձեռագրի 19ա էջում ծածկագրված բնագիրը ԺԹ. դարի հիշատակագրություն է: Իսկ ՄՄ 3609 ձեռագրի 28ա, 49ա-51ա էջերում այդ նույն ծածկագրով բժշկական բաղադրատոմսեր են. ծածկագրի բանալին գտնվում է ՄՄ 3609 ձեռագրի 49բ էջում, որն, ի դեպ, ներկայացված է նաև սյունակետագիր տեսակի գաղտնագրով⁸, հավանաբար, ուսումնասիրողների աշխատանքն ավելի դյուրացնելու նպատա-

⁴ Տե՛ս Ա. Աբրահամյան, էջ 8:

⁵ Նույն տեղում, էջ 10:

⁶ Շնորհակալություն եմ հայտնում Երևանի Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գ. Տեր-Վարդանյանին երկրորդ ծածկագրի մասին մեզ հայանելու, աջակցության և արժեքավոր դիտողությունների համար:


⁷ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյբունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1965, էջ 1013, 1049:

⁸ Տե՛ս Ա. Աբրահամյան, էջ 79-94:

կով: Ծածկագրությունը անվանում ենք «Բալասան բժշկի»⁹ ըստ ՄՄ 3609 ձեռագրի 1ա հիշատակարանի. «... Գիրք, որ կոչի բժիշկ Բալասանի...»¹⁰:

Ստորև բերում ենք վերոնշյալ ձեռագրերի ծածկագրությունների բանալին, այնուհետև բնագրերի նկարները, կից նաև ծածկագրված նյութերը¹¹: Այսպես՝

ԲԱՆԱԼԻ ԲԱԼԱՍԱՆ ԲԺՇԿԻ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅԱՆ



Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Զ Գ Ղ
Ճ Մ Յ Ն Շ Ո Ճ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Յ Ի Փ Ք
և Օ Ֆ

Ինչպես նկատելի է, երեքական նշաններով տրված է 13 խումբ՝ ընդամենը 39 ծածկագիր, որը համապատասխանում է հայերեն այբուբենի տառերին՝ Ա-Ֆ: Ծածկագրերից երկուսը՝ Ա և Դ նշանակողները, բաղկացած են գծից և նրա շուրջ դասավորված կետերից, որով որոշակիորեն հիշեցնում են սյունակետագիր ծածկագիրը, բայց և տարբերվում են, քանի որ միայն այս երկուսն են, ապա կետերի ու գծի դասավորությունը կամայական է և ոչ օրինաչափ: Մյուս ծածկագրերի մեջ նկատելի են հայերենի այբուբենի այս կամ այն գլխատառը հիշեցնող գծագրություններ, ինչպես՝ Ճ (=Ճ), Զ (=Ն), Ռ (=Ռ), Ս (=Ս), Վ (=Վ), Խ (=Լ), Փ (=Յ), Բ (=Ի), Ք կամ Գ (=Ք):


⁹ Բալասան բժշկից միայն այս ձեռագիրն է մեզ հասել, որով էլ պայմանավորված հեղինակի մասին մանրամասն տեղեկություններ չունենք:

¹⁰ Ե՛վ այս, և՛ մյուս ծածկագրի անվանումները պայմանական են. դրանք կոչում ենք տվյալ ձեռագրի գրչի անունով:

¹¹ Նյութերը բերում ենք հարազատ մնալով բնագրի ուղղագրությանը, հապավումները բացում ենք՝ ֆառանկյուն փակագծում լրացնելով բացթողած տառը կամ տառերը, գրչագրական սխալների դեպքում անմիջապես տվյալ բառի կողքին կրկին ֆառանկյուն փակագծում տալիս ենք ճիշտ տարբերակը, իսկ ամբողջական բառերը երկու տողի մեջ բաժանված լինելու դեպքում, նշում ենք տողափոխի շեղ գծով:


ԾԱԾԿԱԳՐՎԱԾ ԲՆԱԳՐԵՐ

1. ՄՄ ձեռ. 3441, 19ա




Այս գիրս
տաի, Տէր յար/
ուրապտին
եղից դաս [=ասս] նմայ:

2. ՄՄ ձեռ. 3609, 28ա




Ա. Այս է քաշի ազարին դեղն, որ ծո/
խդաս ժամն կէս մ[ա]ս մէծին
և երկու դանկ փոքրին տո՛ւր:

3. ՄՄ ձեռ. 3609, 28ա




Բ. Այլ դեղ քաշի ազարի, որ է ծուխ
դալի Ա. առատուն, Ա. իրկունն:

4. ՄՄ ձեռ. 3609, 49ա




Գիր ջրման գրէ, քին ծուխ տո՛ւր:

5. ՄՄ ձեռ. 3609, 49ա




Գիր ջերմն կապելոյ Գ. հետ սսի և
 Գ. հետ կապի, ըբամբկի քոդն կոտն
 կապի:

6. ՄՄ ձեռ. 3609, 49բ





Ա. Վախցած է, գրուխն կցաի, աչն կու
 մթնի, երեսն կղեղնի, պոշներն
 կցամաֆի, ոսկերն դովաթ չի մնալ:

7. ՄՄ ձեռ. 3609, 49բ




Բ. Սիրոն կծակի, լեզուն կը ցաի, ե/
 րեսն կղեղնի կ[ա]մ կդաֆանայ [=կտաֆանայ] կ[ա]մ կը
 մսի, աչն կմթնի, ուշն կտանի,
 գրուխն կցաի, ոչ ողջ և ոչ հի/
 ւանդ, միտն կշաշվի, ուրբաթ օր:

8. ՄՄ ձեռ. 3609, 49բ-50ա




Գ. Սիրան իւրանից կգնայ կ[ա]մ ուշա/
թափ կլինի, գլուխն կցաւի, ոչ ողջ
և ոչ հիւանդ, միտքն տարակոյս մնայ:

9. ՄՄ ձեռ. 3609, 50ա




Դ. Վախցած է, ոսկերքն կցաւի, գլուխն
և անդամքն կբռնենք, գիշեր և
ցերեկ բուն չի լինիլ, երազ կը
տեսնու և կվախենայ, օրն Բ.Ղ[ա]բ.:

10. ՄՄ ձեռ. 3609, 50ա




Ե. Ուշն կտանի, աչքն կմթնի, իւելքն
կգնայ, ամենեւեկն դուրսը չի մն/
ալ, թինա մէջն գլուխ, սիրան կը
ցաւի, իւր բարի օրն կիակի [=կիրակի] է:

11. ՄՄ ձեռ. 3609, 50ա




Ձ. Մազն կփոշանայ, սիրտն կդողայ,
 ուն կտանի, աչն կմթնի, երեսն
 կդեղնի, ի դահն կապ կլինի:

12. ՄՄ ձեռ. 3609, 50բ




Է. Վախցած է, որ ոսկերն դուվար չի
 մնալ, գվ[ա]րմինն կբռնեմք,
 որ գրոխն կցավի և կհակատանայ:

13. ՄՄ ձեռ. 3609, 50բ




Ը. Որ ձեռնն և ոտնն կդ[ո]ղայ, անձն,
 գրոխն կցաւի, բազվախտ խիւն
 կգնայ, բազվախտ կբացվի, ոչ
 ողջ և ոչ հիւանդ, օրն Դ.շար.:

14. ՄՄ ձեռ. 3609, 50բ




Թ. Վախց[ա]ծ է անձն, գլուխն կցա/
 փ, աչքն կմթնի, ուշն կտանի,
 սիրուն կտողայ [=կողողայ], երեսն կդեղնի,
 իւր բարի օրն Ե.շաբ[ա]թն է:

15. ՄՄ ձեռ. 3609, 51ա




Ժ. Վախցած է անձն, կդաբանայ [=կտաբանայ] կ[ա]մ կը
 մոսի, ամ[ենայն] տեղն կցափ, ուշն կդանի [=կտանի],
 երեսն կդեղնի, սիրուն կգնայ, շ[ա]բ.:

16. ՄՄ ձեռ. 3609, 51ա



ԺԱ. Ոսկերքն դուվար շի մնայ, անձն
 կողողայ և կջերմի, սիրուն կգնայ, ու/
 շն կտանի, աչքն կմթնի, իւր Ե.շ[ա]բ.:

17. ՄՄ ձեռ. 3609, 51ա




ԺԲ. Վախցած է, գլուխն կցաւի, սիրտն տեղն չի մնալ, ուշն կղանի [=կտանի] և քունն չի դանիլ [=տանիլ], բազվախտ լաւ կը լինի և բազվախտ վատ, օրն ուրբաք

Երրորդ՝ ՄՄ 10853 ձեռագրում (ժողովածու, Կ. Պոլիս, 1786-1788 թթ.)¹² առկա ծածկագիրը բոլորովին տարբեր է նախորդներից: Ծածկագրով գրված ամբողջական նյութերը գտնվում են 11բ և 174բ-175ա էջերում (վերջինիս շարադրանքում կան նաև չծածկագրված բառեր, մեկ-երկու տառ), իսկ 173աբ էջերում առկա նյութերում կան այս ծածկագրով գրված մեկից ավելի բառեր: Ծածկագիրը անվանում ենք «Ղունկիանոս Աշտարակեցու»¹³. Նրա անունը ծածկագրված է 11բ էջի հիշատակարանում: Ծածկագրի բանալին տրված է 11բ էջում 4 տողով, յուրաքանչյուրից առաջ համապատասխանաբար գրված ա, ծ, չ, փ: Այսպես՝

¹² Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Գ, կազմեց Ա. Մալխասյան, Երևան, 2007, էջ 129-130:

¹³ Հեղինակի մասին առավել մանրամասն տե՛ս Ա. Հարությունյան, «Գրիչ Ղունկիանոս Աշտարակեցու տապանագիրը և մատենագրական վաստակը», Վէժ համահայկական հանդես, քիվ 2, Երևան, 2016, էջ 105-119:

ԲԱՆԱԼԻ ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅԱՆ




Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ
Ծ Կ Ը Թ Ժ Ի Լ Խ
Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Ց Ի
Փ Ք և Օ Ֆ ՈՒ

Ինչպես երևում է, 40 նշան կա. ծածկագրեր են հորինված ոչ միայն այբուբենի 39 տառի, այլև առանձին Ու-ի համար: Ծածկագրերը հորինված նշաններ են. որոշները հիշեցնում են հայերենի տառեր՝ պ, ո, լ, հ, շ, ընդ որում մի մասը արտահայտված է միայն նշաններով, իսկ մյուսները՝ նշանների և կետի համադրությամբ:

ԾԱԾԿԱԳՐՎԱԾ ԲՆԱԳՐԵՐ


Այս ձեռագրում հատկապես ուշագրավ են 11ա էջի ծածկագրերը, որոնք ներկայացնում են հայերեն այբուբենը տարբեր դասավորությամբ. առաջին տարբերակում տառերը բաժանված են խմբերի՝ յուրաքանչյուրում երեքական տառ: Ամեն խումբը սկսվում է այբուբենի տառերի հաջորդականությամբ, այսպես 12 խումբ, իսկ վերջում էլ և, օ, ֆ, ու տառախումբն է: Երկրորդ տարբերակում սկզբունքը նույնն է, սակայն տառախմբերը բաղկացած են չորսական միավորից (Ա Ժ Ը Ռ = 1, 10, 100, 1000... Ե Ծ Շ Ր = 5, 50, 500, 5000...), ընդ որում յուրաքանչյուր խումբ ընդգրկում է մեկական տառ համարժեք միավորների, տասնավորների, հարյուրավորների և հազարավորների:

18. ՄՄ ձեռ. 10853, 11բ




Ա Խ Զ Բ Ծ Պ Գ Կ Զ Դ Ը Ռ Ե Չ Ս
Զ Ղ Վ Է Ը Տ Ը Մ Ր Թ Յ Յ Ժ Ն Ի Ի Շ Փ
Լ Ո Ք և Օ Ֆ ՈՒ

19. ՄՄ ձեռ. 10853, 11բ




Ա ժ ճ Ռ Բ Ի Մ Ս Գ Լ Յ Վ Դ Խ Ե Տ
Ե Մ Շ Ր Զ Կ Ո Յ Է Հ Ձ Ի Ը Ձ Պ Փ
Թ Ղ Զ Ք Լ Օ Ֆ Ո Ի

20. ՄՄ ձեռ. 10853, 11բ



Ի վայելումն Դունկիանոս նուաստիս:


21. ՄՄ ձեռ. 10853, 174բ



Մ[ա]հ[տես]ի Հազար մեծ պապ
Մկրտիչ եղբոր որդին
մ. Յակոբ հայրն մահտեսի Ամիրայի

Երեմիայ
 Գրիգոր Խորեղբայր
 Յօհաննէս մեծ պապի որդի
 մ. Սուկիաս [=Սուքիաս]
 Առաքել
 մ. Յօհան Էր պապն մօր
 մ. Թուրվանտայ տատ Էր[=էր]
 մ. Հռիփսիմէ ծնօղն
 Մարիամ գրկմայր գաս [=գալիս էս]
 Սրբուհի
 Մանուշ
 Թուռլու
 Յարգու
 մ. Նոնանայ
 մ. Նունօֆար զոկանչն [=զոքանչն] եմ¹⁴:

22. ՄՄ ձեռ. 10853, 175ա



Պողոսի որդի Խէչան, Գէորգ:
 Զունն Էկէխ, ծախ Էղէխ,
 Խեզուս Բերնումս խախ Էղէխ,
 Մուկն շրբընօղ կատուն
 Յետսս ընկէխ գախ Էղէլ¹⁵:

¹⁴ Չծածկագրված բառերը և տառերը տալիս ենք ուղիղ:

Աստուծով զօրացեալ կենդանիքն մեր՝
 մ[ա]հ[տես]ի Ստեփաննոզ [= Ստեփաննոս] մեծ ամիր[ա]յ,
 մ. Խաչատուր,
 մ. Յարու[թ]ի[ւն],
 Բ. Երեմիայ,
 Բ. Գրիգոր,
 Յօհաննէս և Յակոբ,
 Մկրտիչ,
 Առաքել,
 Կարապետ,
 Մարտիրոս,
 Ղազար,
 Անդրէաս,
 Բ. Հռիփսիմէ,
 մահացաւ Մանուշ,
 մ. Եղիսաբեթ,
 մ. Բրաբիոն,
 Խուրաթ,
 Նունանայ,
 աղօթք, պահոց¹⁶:

Ամփոփելով վերը շարադրածը՝ կարող ենք արձանագրել, որ ձեռագրերի գիտական աշխատանքների ժամանակ ՄՄ 3441, 3609, 10853 մատյաններից երևան եկած ծածկագրերը չեն մտնում մինչ այժմ հայտնի շուրջ 400 տեսակներից որևէ մեկի մեջ, երկու առանձին խումբ են կազմում իրենց բանալիներով: Այս ծածկագրերը պայմանականորեն կոչում ենք տվյալ ձեռագրերի հեղինակի և գրչի անուններով Բալասան բժշկի և Ղունկիրանոս Աշտարակեցու: Սույն հոդվածով այս ծածկագրերի բանալիները և նրանցով վերծանած բնագրերը դնելով գիտական շրջանառության մեջ՝ նպատակ ունենք նպաստելու հետազայում նման գաղտնագրերի վերծանման դյուրացմանը:

**ТАТЕВИК МАНУКЯН, КНАР АРУТЮНЯН
 ДВЕ НОВОНАЙДЕННЫЕ КРИПТОГРАММЫ**

Ключевые слова: Армянская рукопись, криптография, новонайденная криптограмма, ключ, расшифровка, алфавит, медицинские рецепты, колофон.

В статье представлены два типа армянских криптограмм, обнаруженные нами при описании рукописей. Армянская криптография

¹⁵ Բոլոր բառերում լ տառի փոխարեն գործածված է խ-ի ծածկանիշը:

¹⁶ Արտաքին լուսանցում գրված գրչափորձեր:

привлекала внимание филологов, начиная с XIX века. С тех пор было опубликовано множество криптограмм из средневековых рукописей, с ключами и расшифровкой текстов. Криптограммами занимались Грачья Ачарян и Ашот Абраамян. Последний в опубликованной в 1967 г. монографии обобщил все известные криптограммы: около 400 единиц, 36 типов, показал ключи, привел примеры. В наши дни обнаруживаются не только новые образцы уже известных криптограмм, но также и новые типы.

Мы обнаружили две криптограммы нового типа в рукописях ММ 3441, 3609 и 10853. Их авторы – врач Баласан и Гункианос Аштаракети. Кроме зашифрованных текстов, в рукописях присутствуют ключи к их шифрам, а также колофон. В статье представлена каждая криптограмма, приведен ключ к ней и расшифрованный текст.

**TATEVIK MANUKYAN, KNAR HARUTYUNYAN
TWO NEW-FOUND CRYPTOGRAMS**

Keywords: Armenian manuscript, cryptography, new-found cryptogram, key, decryption, alphabet, medical prescriptions, colophon.

The article discusses two types of Armenian cryptograms that we have discovered while describing manuscripts. Armenian cryptography has attracted scholarly attention since the 19th century. Many cryptograms found in medieval manuscripts have been published with keys and decrypts. Hrachya Acharyan and Ashot Abrahamyan are the scholars who dealt with this material. The latter summarized all the known cryptograms in his monograph published in 1967: about 400 units and 36 types. He also presented their keys and provided examples. Nowadays, both new examples of known cryptograms and new types come to light.

We have found two cryptograms of a new type in manuscripts M3441, M3609 and M10853. Their authors are physician Balasan and Ghunkianos Ashtaraketsi. Besides the encoded texts, the manuscripts also contain their keys, as well as a colophon. In this article, each cryptogram is presented separately, its key is provided, and the texts are decrypted.

ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՐՈՇ ՃՇՏՈՒՄՆԵՐ ԳԵՎՈՐԳ ԴՊԻՐ ՊԱՂԱՏԱՑՈՒ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՏՈՂՄԱԾԱՌԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քանալի բառեր՝ Գևորգ Դպիր Պալատացի, լեզվաբան, թարգմանիչ, գրիչ, բառարանագիր, մտավորական, պատմաբան, տապանագիր:

ԺԸ. դարի գիտնական Գևորգ Դպիր Պալատացին ծնունդն է այն դարաշրջանի, երբ հայ գիտական միտքը, երկարամյա ավերածություններից հետո, զարթոնքի նոր ծիլեր ստանալով, զարգացման յուրօրինակ ուղի էր բռնել: ԺԶ. դարում տեղի ունեցած թուրք-պարսկական ավերիչ պատերազմից հետո ԺԷ. դարում հայ մշակութի վերելքի համար նպաստավոր պայմաններ էին ստեղծվել, որոնք էլ ԺԸ. դարի հոգևոր կյանքի ծաղկման հիմնաքարը դարձան: Կոստանդնուպոլիսը, լինելով կենտրոնական և ժամանակի զարգացած քաղաքներից, առաջինն արձագանքեց վերածննդի այդ ալիքին՝ հայ գիտական մտքին տալով մի շարք մտավորականներ՝ Հովհաննես Կոլոտ, Հակոբ Նալյան, Պաղտասար Դպիր և ուրիշներ, որոնց թվում էր նաև Գևորգ Դպիր Պալատացին¹:

Թարգմանիչ, բառարանագիր, լեզվաբան, պատմաբան, նաև կրոնագետ ու բազմակողմանի ընդունակությունների տեր Գևորգ Դպիր Պալատացին արժանանում էր Բաբերդից էր: Նրա հայրը՝ բնիկ բաբերդցի Երկայն² տեր Հովհաննեսը, և հորեղբայրները Պոլիս են գաղթել ջալալիների ապստամբության տարիներին: Այստեղ նրանք բնակություն են հաստատել Սուրբ Նիկողայոս, իսկ ավելի ուշ՝ Սուրբ Հրեշտակապետ եկեղեցու մերձակայքում: Երկայն տեր Հով-

¹ Հայ մատենագրությանը հայտնի է մեկ այլ Գևորգ Պալատացի ևս, այն է՝ Գևորգ Մխլաթիմ: Գևորգ Մխլաթիմ Պալատացին նույնպես ծնվել է Կ. Պոլսում (1681-1758). նրա մատենագրական ժառանգության զգալի մասը կրոնադավանաբանական բնույթի երկեր են: Գևորգ Մխլաթիմի մասին տե՛ս **Ա.Տեր-Ստեփանյան**, «Գևորգ Մխլաթիմ», *էջմիածին*, 1984, Ե, էջ 36-44: Այս և Գևորգ Դպիր Պալատացուն վերաբերող մեր նախորդ հոդվածի համար (տե՛ս **Մ. Սարգսյան**, «Գևորգ Դպիր Պալատացին լեզվաբան-բառարանագիր (1737-1811)», *ԲՄ* 20, Երևան, 2014, էջ 203-221) մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Մատենադարանի գիտաշխատող Արմեն Տեր-Ստեփանյանին:

² «Երկայն»-ը տոհմական անվանումն է, որը տրվել է նաև գերդաստանի մյուս անդամներին, հավանաբար երկար հասակ ունենալու պատճառով: Ինչպես կոտեսենեֆ հետագա շարադրանքում, տե՛ս Հովհաննեսի եղբոր՝ դերձակ Աբրահամի տապանագրում նույնպես «Երկայն» մականունը կա թուրքերեն տարբերակով՝ «Ուզուն» (տապանագրի բնագիրը տե՛ս ստորև):

հաններ, որն ընտանիքի միակ կրթված զավակն է եղել, քահանա է ձեռնադրվել. նրա եղբայրներից Դավիթը ջրկիր էր, Աբրահամը՝ դերձակ³:

Երկար ժամանակ՝ մինչ Գ. Բամպուքճյանի Պոլսի էտիրնէ-Գաբուրի հայոց գերեզմանատան տապանաքարերի արձանագրությունների հավաքումը, Գևորգ Պալատացու հոր՝ Երկայն տեր Հովհաննես քահանայի մահվան թվական է համարվել 1770-ը⁴: Գ. Բամպուքճյանի կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Երկայն տեր Հովհաննեսը մահացել է ոչ թե 1770 թ., այլ՝ 1785 թ. (ՌՄԼԳ.). նման շփոթության հիմք են եղել հավանաբար հետևյալ հանգամանքները.

1. Գևորգ Պալատացու առաջին կենսագիր Ա. Այվազյանը նրա մահվան թվական է համարել 1770, հետագա ուսումնասիրողներն էլ, հիմնվելով այս տեղեկության վրա, ընդունել են այդ թվականը:

2. Հաջորդ թյուրիմացություն առիթ են հանդիսացել էտիրնէ-Գաբուրի գերեզմանատանը թաղված 2 այլ նույնանուն քահանաների տապանաքարերը. նրանք, լինելով Երկայն տեր Հովհաննեսի ժամանակակիցները, մահացել են 1770 թ.⁵:

Պալատացու հոր տապանաքարի արձանագրության համաձայն՝ Երկայն տեր Հովհաննեսը մահացել է 1785 թ. հունիսի 14-ին, իսկ ծննդյան թվականն է՝ 1711-ը, որը հստակ երևում է տապանագրից, եթե մահվան թվականից հանենք ապրած 74 տարիները. ահա այն՝

«Այս է տապան հանգրստեան
Երկայն Տէր Յոհաննէս քա-

³ Մի շարք աշխատություններում երրորդ եղբոր՝ Դերձակ Աբրահամի մասին խոսք անգամ չկա (ինչպես Ա. Այվազեան, *Շար հայ կենսագրութեանց*, Պ. Պոլիս, 1893, Գ. Գասպարյան, *Հայ բառարանագրության պատմություն*, Երևան, 1968). Վերջին հեղինակը գրում է (էջ 159). «Կ. Պոլսի Պալատ թաղամասում բնակվում էին 2 եղբայրներ, որոնցից ավագը՝ Դավիթը, ջրկիր էր, իսկ կրտսերը՝ Հովհաննեսը Պալատ թաղամասի Ս. Հրեշտակապետ եկեղեցու ավագ ֆահանան»: Ի դեպ, այլ կերպ է ներկայացվում նաև տեր Հովհաննեսի ընտանիքը (էջ 159-160). «1737 թ. Տեր-Հովհաննեսի ընտանիքում ծնվում է Գևորգը, որ մեծ ուրախություն է պատճառում ծնողներին, քանի որ Տեր-Հովհաննեսը 2 աղջիկ ուներ և Գևորգը նրա առաջին արու զավակն էր»: Հեղինակը չի նշում տեղեկությունների աղբյուրը:

⁴ Տե՛ս Պիմեն Զարդարեան, «Գևորգ Դպիր Տեր-Յովհաննէսեան 1737-1812», *Ժամանակ*, Ստամբուլ, 11-15, դեկտ., 1944, թիւ 13947-13951 (հմմտ. Գևորգ Բամպուքճեան, «Պալատեցի Գևորգ Դպրի գերդաստանը», *Հայաստանի կոչնակ*, Նիւ Եորք, 1952, 19 ապրիլ, թիւ 16, էջ 368), Ա. Այվազեան, նշվ. աշխ., էջ 12 և ուրիշներ: 1770 թ. Պալատացու հոր մահացած լինելու հանգամանքը կասկածանքով է ընդունում Բ. Զուգասզյանը, տե՛ս Բ. Զուգասզեան, *Գէորգ Դպիր Պալատեցու կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւն 1737-1811* (այսուհետև՝ Տարեգրութիւն), Երևան, 1994, էջ 31:

⁵ Տե՛ս Ս. Հրեշտակապետի ֆահանաների անվանացանկը (թիվ 35 և 41) հետևյալ գրքում՝ *Երեքդարեան պատմութիւն Ս. Հրեշտակապետ եկեղեցոյ Պալատու (1627-1931)*, կազմեց Մելգոն Ասատուր, Կ. Պոլիս, 1931, էջ 136:

հանային. որ գորով ամաց
 իբր եօթանասուն եւ չորից
 հանգեաւ ի Քրիստոս:
 Ի թուականին
 ՌՄԼԳ. (1785) Յունիսի ԺԳ. (14)»⁶:

Այս փաստն ապացուցող երկու արժեքավոր և անհերքելի աղբյւր ևս կա. դրանք Գևորգ Դպիրի՝ Ստ. Ազոնցին գրած նամակներն են: Դրանցից առաջինը 1785 թ. դեկտեմբերի 22-ի նամակն է, ուր կարդում ենք. «Եւ թէ ասիցէք ընդէ՞ր խոստումն կանուխ եւ կատարումն իրացս անագան եղեւ, գիտասջիք զի դիպուած մահուան ծնողին իմոյ վրիպեցոյց զիս ի նպատակէ անտի...»⁷: Երկրորդը 1786 թ. փետրվարով թվագրված նամակն է, որտեղ ասված է. «Գիտութիւն լիցի քեզ, ո՛վ Հայր պատուական, զի Մեկնութիւն Աւետարանին (խոսքը Ներսէս Շնորհալու «Մեկնութիւն Աւետարանին Մատթէի» գործի մասին է, որ Դպիրը խոստացել էր օրինակել և, համեմատելով Պոլսի Պատրիարքարանում գտնվող օրինակի հետ՝ ուղարկել Վենետիկ. ավելի ուշ խոստումը կատարում է) ոչ ել ի գլուխ եւ ոչ իսկ սկսեալ եղեւ, վասն ընդ առաջ ելանելոյ ինձ ձախողակ կրից ոմանց եւ վասն յաստի կենաց շուելոյ ծնողին իմոյ, եւ ինձ իբրեւ ամիսս քանի մի ի քաղաքէ աստի ի բացեայ լինելոյ»⁸: Այս հանգամանքը վրիպել է Բ. Զուգասզյանի ուշադրությունից. նա իր «Տարեգրութեան» մեջ 1785 թ. մահացած է համարում Գևորգ Դպիր Պալատացու մորը⁹:

Գևորգ Դպիրը տան միակ զավակը չէր: Նա ուներ եղբայր՝ Կարապետ անունով և քույր՝ Համասիյուուր: Գևորգ Դպիրի և իր եղբոր (ծնվ. մոտավորապես. 1760 թ.) ու քրոջ (ծնվ. 1764 թ.) ծննդյան տարեթվերի միջև գոյություն ունեցող տարիքային հսկայական տարբերությունը (համապատասխանաբար 23 և 27 տարի) ենթադրել է տալիս, որ Երկայն տեր Հովհաննեսը ամուսնացել է երկիցս: Հետևաբար ենթադրելի է նաև, որ Գևորգ Դպիրը ծնվել է առաջին կնոջից, իսկ մյուս 2 զավակները՝ երկրորդ:

Գևորգ Դպիրի եղբոր՝ Կարապետի մասին իմանում ենք նրա վեցամյա մահացած որդու տապանաքարի գրությունից՝

«Մկրտիչ վեցամեայ որդի

⁶ Գ. Բամպուֆեան, նշվ. աշխ., էջ 368:

⁷ Ս. Ճեմնեմեան, Գևորգ Դպիր Տէր Յոհաննիսեան (Պալատեցի) եւ Մխիթարեանները, Վենետիկ-Ս. Ղազար, 1984, էջ 100 (նույնը տե՛ս նաև՝ Բազավէպ, 1983, Հ^մ 1-4):

⁸ Նույն տեղում, էջ 102:

⁹ Բ. Զուգասզյան, նշվ. աշխ., էջ 73: Ի դեպ, Գևորգ Դպիր Պալատացու մոր և մայրական կողմի մասին ոչ մի տեղեկություն չունենք: Նրա մայրը, շատ հավանական է, մահացել է երիտասարդ հասակում, քանի որ հայրը, ինչպես կտեսնենք ստորև, ենթադրաբար՝ ամուսնացել է երկրորդ անգամ, երբ Գևորգն արդեն չափահաս էր:

Կարապետի եւ թոռն

երկայն Տէր Յոհաննիսին:

ՌՄԼ Թ. (1790)»¹⁰:

Գևորգ Գպիրի քույրը՝ Համասիյուռը, ամուսնացած է եղել տեր Մարտիրոս քահանայի հետ (1760-1824 թթ.)¹¹: Համասիյուռը մահացել է երիտասարդ տարիքում 1792 թ. հունիսի 27-ին, երբ 28 տարեկան էր՝

«1792

Այս է տապան Համասիւրին

որ էր կողակից Տէր Մարտիրոսին

որ հանգեաւ ի թուականին

ՌՄՆԱ. (1792) Յունիսի Իէ-ին (27):

Գոլով իբր ԻԸ. (28) ամաց¹²»:

Նրանց ամուսնությունից ծնվել է մի տղա: Պալատացու քրոջ որդու անվան կապակցութեամբ ևս թյուրիմացություն կա. Հ. Ուղուրյանի աշխատության մեջ նրա անունը Մեսրոպ է¹³, իսկ Ա. Այվազյանի գրքում Անտոն¹⁴ (տե՛ս նաև ծան. 10):

¹⁰ Գ. Բամպոմբեան, նշվ. աշխ., էջ 369:

¹¹ Ըստ որոշ աղբյուրների՝ Գևորգ Գպիրի բեռայրը՝ Մարտիրոս ֆահանան, Պալատացու ծերության օրերի միակ ընկերակիցը լինելով, Գպիրի մահից հետո նրա թողած ողջ ժառանգությունը հանձնում է Մխիթարյաններին: Այս մասին իմանալով՝ Պողոս Ադրիանապոլսեցի պատրիարքը նրան կարգազուրկ է անում. վերջինս էլ իբրև թե ընդունում է պապականություն (տե՛ս Ա. Այվազեան, նշվ. աշխ., էջ 62-63, Հ. Ուղուրեան, «Գևորգ Գպիր Պալաթեցի (1737-1812)», *Երեքդարեան պատմութիւն Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Պալաթու (1627-1931)*, էջ 219: Կարծում ենք, սա մտա չէ իրականությանը: Անհավանական ենք համարում նաև այն, որ ըստ այս հեղինակների՝ տեր Մարտիրոսը Գպիրի մահից հետո յուրացնում է նրա թողած «25.000 դրուշի հարստությունը»: Հարց է առաջանում. եթե Պալատացին ուներ այդքան գումար, ինչու՞ պետք է ապրեր եկեղեցում և այն էլ շատ համեստ կերակուրով ու դժվարին պայմաններում: Հավելենք նաև Գ. Բամպոմբեյանի այն միտքը, որ այս տեղեկություններն ու տեր Մարտիրոս ֆահանայի տապանաբարի արձանագրությունը հակասում են միմյանց (Մարտիրոս ֆահանայի տապանաբարի արձանագրությունը տե՛ս Գ. Բամպոմբեան, նշվ. աշխ., էջ 369): Ուղուրյանի ուսումնասիրության մեջ կա մեկ այլ հակասություն ևս. հեղինակը Պալատացու ծերության օրերի միակ ընկերակիցն ու սենեկակիցն է համարում մեկ Պալատացու ֆրոշ ամուսնուն, մեկ ֆրոշ որդուն՝ տեր Մեսրոպ ֆահանային: Վերջինս «իր վերջին օրերը Գևորգ Գպիրի հետ անցուցած է եկեղեցւոյ խցիկին մէջ ու միասին ապրած»: այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ Պալատացու ֆրոշ որդին ևս մահացել է երիտասարդ տարիքում, այն էլ մորեղբորից առաջ: Ընդ որում, Գ. Բամպոմբեյանը էտիրնէ-Գաբուի գերեզմանատան արձանագրությունները հավաքելիս չի հանդիպել այնպիսի մի տապանագրի, ուր նշված լինի մինչև 1811 թ. մահացած Մեսրոպ անունով մեկը:

¹² Գ. Բամպոմբեյան, նշվ. աշխ., էջ 369:

¹³ Հ. Ուղուրեան, նշվ. աշխ. (Տե՛ս Ա Մեղգոն Ասատուր, նշվ. աշխ., էջ 219):

¹⁴ Ա. Այվազեան, նշվ. աշխ., էջ 57:

Գևորգ Դպիրի հորեղբայր դերձակ Աբրահամը, մահացել է 1772 թ. հոկտ. 11-ին: Նրա տապանագրում հստակ նշված է Երկայն տեր Հովհաննեսի եղբայրը լինելու հանգամանքը.

«Այս է տապան Հանգրստեան

Դերձակ ուզուն Աբրահամին

եղբորն Տէր Յօհաննիսին

Որ հանգեաւ ի Քրիստոս:

ՌՄԻԱ. (1772) Հոկտեմբերի ԺԱ. (11)»:¹⁵

Դերձակ Աբրահամի և Թուրվանտա (Թուրֆանտա) խաթունի ամուսնությունից ծնվել է մի աղջիկ՝ Թերեզան, ում մահվան թվականը Բամպուքճյանին չի հաջողվել ճշտել՝ Գևորգ Դպիրի տապանաքարը նրա տապանաքարի վրա կքած լինելու պատճառով:

Ըստ Այվազյանի, Բ. Չուգասզյանի և այլոց՝ Երկայն տեր Հովհաննեսի մյուս եղբայրը ջրկիր Դավիթն է: Նրա տապանագրում, ըստ որի՝ սախա (թրք.՝ «ջրկիր»)՝¹⁶ Դավիթը ջրկիրների պէօլիւք պաշըն (թրք.՝ «խմբի գլխավոր, մեծավոր») է եղել և մահացել է 1798 թ. սեպտեմբերի 10-ին, հիշատակություն չկա Երկայն տեր Հովհաննեսի եղբայրը լինելու մասին.

«Այս է տապան հանգստեան

Պէոլիւք պաշի սախա Դավիթն

Վօր հանգեաւ:

Թվին ՌՄԽԷ. (1798), սեպ. Ժ. (10)»:¹⁷

Ըստ Հ. Ուղուրյանի՝ Դավիթը Բաբերդից Տրապիզոն է գաղթել, որտեղ ամուսնացել և առաջին կնոջը կորցնելուց հետո մեկնել է Պոլիս: Այստեղ երկրորդ անգամ ամուսնացել է Տիրուհի անունով մի աղջկա հետ: Այս ամուսնությունից ծնվել են Տեր Հովհաննես Հյունքեարպեյենտյան քահանան¹⁸ և ուրիշ զավակներ, որոնք իրենց հոր արհեստի անունով հետագայում Սագայան են կոչվել: Ջրկիր Դավիթի սերունդը բնակություն է հաստատել Գարակէօմրյուկի շրջակայքում՝ Չարշամպայի մոտ:

Գևորգ Դպիրի այս հորեղբոր ընտանիքից հայտնի է եղել Տեր Հովհաննեսը՝ աշխարհական անվամբ Սերովբե: Ըստ Ուղուրյանի՝ այս երևույթը ժառանգ-

¹⁵ Գ. Բամպուքեան, նշվ. աշխ., 1952, 26 ապրիլ, թիվ 17, Բ մաս, էջ 391:

¹⁶ Այս և հաջորդ թուրքերեն բառի բացատրությունը՝ ըստ Հ. Աճառյանի «Թուրքերենի փոխառեալ բառեր հայերէնի մէջ», էմինեան ազգագրական ժողովածու, Մոսկուա-Վաղարշապատ, 1902:

¹⁷ Գ. Բամպուքեան, նշվ. աշխ., էջ 392:

¹⁸ Այս մասին մեզ որոշ տեղեկություններ է տալիս Հ. Ուղուրյանը իր «Հայր Հիմնեարպեյենտիեան Յովհաննէս Բահանայ (Սէլէսի) եւ Սերոբեան Յակոբոս Պատրիարք» հոդվածում (տե՛ս ՄԵԳՈՆ ԱՍԱՏՈՒՐ, նշվ. աշխ., էջ 223-229):

գական էր գերդաստանում. ցեղի Սերովբե անուն ունեցողները քահանա ձեռնադրվելիս կոչվել են Հովհաննես՝ սկսած Գևորգ Դպիրի հորից: Հյունքյարպեյենտի¹⁹ անունը նա ստացել է շնորհիվ իր ճարտար լեզվի և տաճկագիտության: Նրա համբավը, իբրև աշուղ եւ թուրքաբան, հասնում է սուլթան Մահմուտ Բ.ին, ով իր մոտ է կանչում նրան. նա շատ է հավանում Հովհաննեսին, վերջինս էլ մի կողմ դնելով Սագայան ազգանունը, սկսում է հանդես գալ «Հյունքյարպեյենտի» մականվամբ: Նա իբրև աշուղ ու թուրքաբան հայտնի էր նաև Սէլէսի (Սէլիսի) ծածկանունով, որն արաբերեն նշանակում է «պերճ, քաղցր»: Հավանաբար այս մականունը ևս նրան տվել են իր ճարտար լեզվի և խաղաղասեր բնավորության համար:

Աշխարհական Սերովբեն ուշիմ և խելացի լինելով փոքր հասակից հետևել է հորեղբոր որդուն՝ Գևորգ Դպիրին՝ նրա մոտ սովորելով գրաբար և տաճկերեն: Հստ իր տապանագրի՝ ապրել է 1773-1837 թթ., եղել է Ս. Հրեշտակապետ եկեղեցու աթոռակալ և ավագերեց: Ունեցել է 2 որդի՝ արհեստով փեշտիմալճի (թուրք. փէշտմալ – բաղնիքի դեշակ՝ գոգնոց) մահտեսի Օհանը և փոքր տեր Հովհաննես Հյունքյարպեյենտյանը (1818-1894), որոնց միջև ևս տարիքային մեծ տարբերություն կա:

Ինչպես նկատել է Գ. Բամպուքճյանը, Գևորգ Դպիրի գերդաստանի տապանագրերից և ոչ մեկում արձանագրված չէ նրանցից որևէ մեկի բաբերդցի լինելը: Այս զանցառումը անհասկանալի է և հակասում է ժամանակի ընդունված ավանդույթին:

Այժմ անդրադառնանք Գևորգ Պալատացու կենսագրությանը: Գևորգ Դպիր Պալատացին ծնվել է 1736 /1737 թ.²⁰, Կոստանդնուպոլսի Պալատ թաղամասի Սուրբ Հրեշտակապետ եկեղեցու ավագերեց Երկայն տեր Հովհաննես քահանայի ընտանիքում: Մեծանալով հոգևորականի ընտանիքում Գևորգ Դպիրը դաստիարակվել է քրիստոնեական և ազգասիրական ոգով: Երկար տա-

¹⁹ «Հիւնֆեար պէյէնտի» քուրթերենից քարգմանաբար նշանակում է «խորոված պատին-հան», որը նշանակում է, թե «թագաւոր հանեցաւ» (տե՛ս Հր. Ահառեան, Թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեանի բարբառներում, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 215):

²⁰ Եթե հիմք ընդունենք Պալատացու տապանագիրը՝ ՌՄԿԱ. (1261) և հայոց մեծ թվական հաշվելու համար հավելենք ընդունված 551-ը, ապա մահվան թվականը կհամարվի 1812-ը: Սակայն, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, մահվան ստույգ թվական է համարվում 1811-ի նոյեմբերի 23-ը: Հավանաբար ՌՄԿԱ.-ն տապանաբարի տեղադրման տարեթիվն է: Եվ եթե 1811-ից հանենք նրա ապրած տարիների թիվը՝ 75, ապա ծննդյան թվականը կլինի ոչ թե 1737, այլ 1736: Այս հանգամանքը նկատել է Գ. Բամպուքճյանը իր *Յակոբ Նալեան պատրիարք (1706-1764). կեանքը, գործերը և աշակերտները* (Ստանպոլ, 1981) գրքի 252 էջում տեղադրված «Անձնանունների ցանկ»-ում, սակայն 204-րդ էջում նրա կյանքի տարիները մնացել են անփոփոխ՝ 1737-1812:

րիններ լինելով ընտանիքի միակ զավակը՝ եղել է հոր՝ տեր Հովհաննես քահանայի ուշագրություն կենտրոնում: Պալատացին, սակայն, իր գիտելիքների մեծ մասին հասել է ինքնակրթության շնորհիվ: Լինելով ուշիմ և խելացի տղա՝ նա իր ջանասիրության և համառության շնորհիվ կարողացել է սովորել մի շարք լեզուներ, բնականաբար, գերազանց տիրապետելով նաև գրաբարին. ահա թե ինչպիսի բնորոշում է տալիս Ա. Այվազյանը. «Փէորգ-Դպիր՝ սքանչելագիր հայկաբան լինելով հանդերձ, քաջ գիտէր Տաճկերէն, Պարսկերէն, Արաբերէն, Եբրայերէն, Հելլենաբէն, Լատիներէն և այլ լեզուներ, որոց ի նմոյշ՝ պարբերաբար հրատարակած է պատմական եւ այլ կարեւոր գործեր՝ ինքնուրոյն եւ թարգմանական»²¹:

Նա իր համեստ կյանքով, վարք ու բարքով մեծ համբավ էր վայելում հայ ամիրաների շրջապատում: Մեծ հարգ ու պատիվ ուներ նաև հույն, հրեա հոգևոր և աշխարհիկ առաջնորդների միջավայրում: Հունարեն էր դասավանդում նույնիսկ ազգությամբ հույն պաշտոնյաների զավակներին²²: Բացի այն, որ հայ ամիրաներն իրենց որդիների դաստիարակության և կրթության հարցը վստահում էին Գևորգ Դպիրին, նրան նաև իրենց խորհրդականն էին դարձրել ազգային գործերի կառավարման մեջ: Պալատացին շատ լավ գիտեր ոչ միայն բազմաթիվ լեզուներ, այլև քաջատեղյակ էր պատմությանը, աշխարհագրությանը, փիլիսոփայությանը, կրոնագիտությանը: Այսպես՝ 1810 թ., երբ քննության առարկա էր դարձել կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների միության հարցը, Պալատացին պաշտպանել է հայ ուղղափառ եկեղեցուն՝ «Ի հօրէ բղխի եւ Որդւոյ ելանէ» մեկնաբանությունը²³:

Բազմաբնույթ է Գևորգ Պալատացու մատենագրական ժառանգությունը: Տիրապետելով մի շարք լեզուներին՝ նա ոչ միայն թարգմանություններ է արել այդ լեզուներից, այլև դրանցից մի քանիսի համար կազմել քերականական

²¹ Ա. Այվազեան, նշվ. աշխ., էջ 12-13: Այվազյանն իր գիրքը գրել է Դպիրի մահից մոտ 80 տարի անց՝ հիմնվելով նրա շուրջ հյուսված գրույցների և ծեռունիների վկայությունների վրա: Բնականաբար, գրքում կան հատվածներ, որոնք հեռու են ճշմարտությունից: Գևորգ Դպիրի անձի և աշխատությունների շուրջ կատարված ուսումնասիրությունները ցամաքիվ են, երբեմն նույնիսկ կցկտուր: Մինչ Այվազյանի՝ Գևորգ Դպիրին անդրադառնալը Պալատացին՝ որպես գիտնական, բանասեր, սովերի մեջ էր և անհայտ: Նրա այս աշխատությունը հիմք դարձավ հետագա մի շարք ուսումնասիրությունների համար:

²² Նույն տեղում, էջ 16-18, նաև Արտ. Գալփաֆեան, «Գևորգ Դպիր Պալատացի», *Մարմարա*, Պոլիս, Բ տարի, թիվ 690, 14 հունիս, 1945, էջ 2 (հոդվածաշարի 6-րդ մասը լույս է տեսել 20 հունիս, 1954, թ. 696): Վերջինս որևէ նորություն չի բերում և գրեթե բառացի կրկնում է Ա. Այվազյանին:

²³ Ըստ Ա. Այվազյանի՝ Պալատացին, Սուրբ Երրորդությունը նյութ ընտրելով, գրել է մի աշխատություն, որը մինչ օրս անհայտ է (էջ 22): 1810 թ. Պոլսի Մայր եկեղեցում գումարված 5 ժողովների մասնակիցների անունները տե՛ս Հրանտ Ասատուր, *Կոստանդնուպոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները*, Ստամպոլ, 2011, էջ 142-3:

ձեռնարկներ, բառարաններ, գրել պատմական աշխատություններ՝ օգտվելով օտար սկզբնաղբյուրներից: Կատարել է սրբագրական բազում աշխատանքներ: Մեծ է նրա ավանդը նաև ձեռագրերի հայթայթման ու ընդօրինակման բնագավառում: Իր կյանքի ողջ ընթացքում Պալատացին զբաղվել է ձեռագրեր ընդօրինակելով և սրբագրություններ անելով, որն էլ եղել է նրա օրվա ապրուստը հոգալու հիմնական միջոցը: Նա թողել է լեզվաբանական և պատմական կարևոր աշխատություններ: Գրել է բանաստեղծություններ, որոնցից միայն մի քանիսն են մեզ հասել. դրանցից մեկն էլ գրված է Նարլը-Գափուի ազգային հիվանդանոցի դռանը կախված նպաստընկալ գանձանակի վրա²⁴: Անգնահատելի է նաև Գևորգ Պալատացու թողած ժառանգությունը բժշկության ասպարեզում. «Գէորգ Դպիր Պալատացին... պարծանքն էր Պալատու հայ թաղին. նաև ամբողջ Ազգին, իր թողած երկերով: Սակայն անուն մըն ալ ունի ժԸ. [դարի] Հայ Բժշկական Պատմութեան մէջ, վասն զի անոր աղքատիկ գրականութեան ծառայութիւն մատուցած է»²⁵, – գրում է Վ. Թորգամյանը: Պալատացին հայ բանասիրության պատմության մեջ անմահացել է իր պարսկերեն-հայերեն բառարանով, որն իր կառուցվածքով և բովանդակությամբ ինքնատիպ է և անկրկնելի: Պալատացու թողած ժառանգության մի մասը մեզ չի հասել, իսկ եղածն էլ կարոտ է ուսումնասիրության:

Պալատացու կյանքի մի զգալի հատվածը կապված է Մխիթարյան Միաբանության գործունեության հետ: Նրանց հետ կապն առաջին անգամ եղել է 1776 թ. Ս. Ղազարում ուսանող Ալեքսանդր և Ղուկիոս (Ղուկաս) Ինճիճյան եղբայրների միջոցով: Այս կապը պատահական բնույթ չուներ, ընդհակառակը՝ Պալատացին, երկար ժամանակ հետևելով և հավանություն տալով Մխիթարյանների գործունեությանը, հարմար առիթի էր սպասում, որպեսզի անձնապես կապ հաստատեր նրանց հետ: Այն, որ Պալատացին հետաքրքրված էր Մխիթարյանների հայագիտական գործունեությամբ, շատ հստակ երևում է իր իսկ նամակներից: Կապը Մխիթարյան Միաբանության հետ Պալատացին շարունակել է մինչև իր մահը՝ 1811 թ.: Այդ ընթացքում նրան հաջողվել է բազմաթիվ ձեռագրեր, լավագույն տպագիր օրինակներ ձեռք բերել և ուղարկել Վենետիկ: Հայերեն հնագույն և լավագույն ձեռագրեր ժողովելու, խավարի ճիրաններից դրանք փրկելու միտքը Պալատացուն մղում է մի քանի կարևոր և հրատապ ճամփորդություններ կատարելու²⁶: Մտադրվելով մեկնել հայաբնակ տարածք-

²⁴ Տե՛ս տոմբ. Վ. Թորգոմեան, «Յիշատակ մը Նարլը-Գափուի հիւանդանոցէն», Թէոզիկ ամէնուն տարեցոյց, Կ. Պոլիս, 1922, էջ 315:

²⁵ Նույնի «Ս. Հրեշտակապետի երեհնարիւսամեակը եւ Գէորգ Դպիր Պալատեցին» (տե՛ս Մեղզոն Ասատուր, նշվ. աշխ.), էջ 204:

²⁶ Գևորգ Պալատեցու Մխիթարյանների հետ ունեցած առնչության մասին, ինչպես նաև նրա նամակների բնագրերի հրատարակությունը տե՛ս Ս. Ճեմհեմեան, Գևորգ Դպիր Տէր Յովհաննիսեան (Պալատեցի) եւ Մխիթարեանները, Վենետիկ-Ս. Ղազար, 1984:

ներ՝ վանքերի խորշերից դուրս հանելու հազվագյուտ ձեռագրեր, նա այդ մասին 1777 թ. դեկտ. 20-ի նամակով հայտնում է Ինճիճյան եղբայրներին: Սակայն միայն 1781 թ. գարնանն է Պալատեցին կարողանում կյանքի կոչել իր այս մտադրությունը: Ահա այս մտորումների ժամանակ էլ Գևորգ Դպիրը գրում է իր առաջին նամակը Մխիթարյան Միաբանության արքայազրը՝ Ստեփանոս Ազոնցին՝ խնդրելով 300 դահեկան, որը պետք է ծառայեր ձեռագրեր գնելուն կամ ընդօրինակելուն: Այս և հաջորդ ճամփորդություններն անցնում են լուռ և անշշունջ, կարելի է ասել՝ նույնիսկ գաղտնի: Այս էր Պալատացու պայմանը. այդ մասին գիտեին միայն ինքը՝ Պալատացին, Ստ. Ազոնցը, Ինճիճյան եղբայրների հայրը՝ Պողոս աղան, ով Դպիրի հայթհայթած ձեռագրերը սնդուկի մեջ դրած ուղարկում էր Ս. Ղազար, իբրև թե իր որդիներին, և այդ գործին առնչվող ևս մեկ-երկու հոգի: 1781-1782 թթ. շուրջ 14 ամիս տևած շրջագայության ընթացքում նա այցելել է Այրարատ (Հաղբատ, Սանահին, Էջմիածին), Տարոն, Դերջան, Մուշ, Վասպուրական (Աղթամար), ուսումնասիրել տեղի վանքերում պահվող գրչագրերը՝ լավագույն և հնագույն ձեռագրերը ընդօրինակելով կամ էլ նրանց տարընթերցումները նշելով արդեն տպագիր աղբյուրների լուսանցքներում տպագիրը դարձնելով արժեքավոր ու անփոխարինելի: Պալատացին Մխիթարյանների հետ իր համագործակցության ողջ ընթացքում Վենետիկ է ուղարկել 42 միավոր ձեռագիր՝ ըստ Ս. Ճեմճեմյանի²⁷, և 50 միավոր գրականություն՝ ըստ ձեռագրացուցակի²⁸:

Մխիթարյանների համար հայթհայթած ձեռագրերի մեծ մասը Պալատացին անձամբ էր ընդօրինակում²⁹ իսկ ծայրահեղ դեպքում հանձնարարում էր ուրիշներին, վերջում համեմատելով բնօրինակն ու ընդօրինակված ձեռագիրը՝ կատարում էր սրբագրական աշխատանքներ: Գևորգ Դպիր Պալատացու և նրա՝ Վենետիկի Մխիթարյան Միաբանությանը մատուցած ծառայություններին սույն գնահատանքն է տալիս Ս. Ճեմճեմյանը. «Որքան ալ հիւսելու ըլլանք գովասանք և ուզենք դուրս ցայտեցնել իր արժանիքները՝ միշտ քիչ պիտի ըլլայ, հանդէպ այն հսկայ նպաստին՝ որ բերած է Գէորգ Պալատացի, Ձեռագիրներ հայթհայթելու նուիրական գործով»³⁰:

²⁷ Գևորգ Դպիր Տէր Յոհաննիսեան (Պալատեցի) և Մխիթարեանները, Վենետիկ-Ս. Ղազար, 1984, էջ 13-44:

²⁸ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Կ. Գ, Վենետիկ-Ս. Ղազար, 1993, էջ 1Ը:

²⁹ Հայտնի է, որ Գևորգ Դպիր Պալատացին իր համփորդություններից մեկի ժամանակ Շամախիում մի առիթով գտնում է եվսեբեոս Կեսարացու՝ հունարեն սկզբնագրով կորսված ժամանակագրության հայերեն միակ պահպանված ձեռագիրը, ընդօրինակում և ուղարկում Մխիթարյաններին, որը հրատարակում է Մկրտիչ Ավգերյանը՝ լատիներեն քաղմատությամբ և պատմական ծանոթագրություններով հանդերձ (տե՛ս Ա. Այվազեան, նշվ. աշխ., էջ 50-51): Սա մեծ իրադարձություն էր համաշխարհային պատմագիտության համար:

³⁰ Ս. Աճեմյան, Մայր ցուցակ..., Կ. Գ, էջ 1Ը.:

Պալատացին այս ամենն անում էր ամենայն պատրաստակամութեամբ, ծանր պայմաններում՝ երկար ժամանակ տրամադրելով դրան: Այս աշխատանքի դիմաց նրան վճարում էր Վենետիկի Միաբանությունը Պոլսում գտնվող Մխիթարյանների միջոցով³¹:

Գևորգ Դպիր Պալատացին ամուսնացած չի եղել, վարել է առաքինի ու համեստ կյանք՝ իր ապրուստը վաստակելով գրչով և ուսուցչութեամբ: Նա իր ողջ կյանքն անցկացրել է հին ձեռագրեր ընդօրինակելով ու ստեղծագործելով: Ծերություն վերջին տարիներն ապրել է Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցու խցերից մեկում՝ առանձնացած, խորասուզված գրքերի ու իր աշխատությունների մեջ, միաժամանակ նաև կապ պահպանելով արտաքին աշխարհի հետ:

Գևորգ Պալատացին մահացել է 1811 թ. նոյեմբերի 23-ին: Նա իր գրական ամբողջ ժառանգությունը կտակել է Վենետիկի Մխիթարյան Միաբանությանը՝ մտահոգվելով, որ Պոլսում մնալու դեպքում այն անուշադրության կմատնվի և կոչնչանա:

Գևորգ Դպիր Պալատացին այն բանասերներից էր, ում աշխատություններն ու թարգմանությունները ընդօրինակվել են դեռևս իր կենդանության օրոք, իսկ որոշ գործեր՝ նաև տպագրվել: Նրա աշխատանքները բարձր գնահատանքի են արժանացել ժամանակակիցների կողմից. ահա թե ինչպես է արտահայտվել Հակոբ Տյուզյանը Դպիրի մասին. «... ի ծաղկափթիթ տիոց մինչ յալիս ծերութեան՝ անխոնջ վաստակեալ ի ճգունս ուսումնասիրութեան, գիտնականաց արդեամբք ունէր ժառագեալ զյարգ, և ի համազգեաց համարումն և պատիւ: Տեղեակ բազմասեռն լեզուաց, յունականին, եբրայերէնին, պարսկականին, արաբացուցն, լատինականին և հայկականին գրաւորական ուսման, սրտեռանդն նուիրեալ զաւուրս իւր և գիշերս ողջոյն յօգուտ իւր ազին, ի թարգմանութիւնս, ի պատմականս և յայլս շահաւէտս և իմաստալից գրուածս... ժառանգութիւն անմահական թողեալ առ համազգիս զիւրն քրտանց բազմադէմ և անգին վաստակս»³²:

³¹ Պոլսի Մխիթարյան միաբաններն այնքան էլ բարյացակամ չէին Պալատացու նկատմամբ: Դա առավել ցայտուն դրսևորվում է 1785 թ., երբ տնտեսական ծանր պայմանները Միաբանությանը ևս դժվարին կացության մեջ էին դրել: Պալատացու նկատմամբ բարեհոգի և սիրալիր վերաբերմունքի վերանայման կողմնակից էին միաբանության Պոլսի անդամներ Սուփաս Աղամալյանը, Յարոբյուն Մաղաֆյանը և ուրիշներ, ովքեր ձգտում էին ամեն կերպ սահմանափակել նրան վճարվելիք գումարի չափերը: Բնականաբար, նրանց այս փորձին ընդդիմանում են միաբանության Վենետիկի անդամները, հանձին Մելֆոնյան աբբահոր, ով գրում է, որ «Տիրացու Գէորգի» արած աշխատանքը նպաստում է գիտության զարգացմանն ու «Նոր Հայկազյան բառարանի» ստեղծմանը:

³² Գևորգ Դպիր, Բառարան պարսկերէն..., Կ. Պոլիս, 1826, էջ Է.:

Գևորգ Դպիր Պալատացու աճյունն ամփոփված է Պոլսի Էտիրնէ-Գաբուրի հայոց գերեզմանատանը՝ Էյուպ նայող կողմի վրա: Մահից մի քանի տարի անց, Դպիրի մտերիմ բարեկամ Հարություն Պեզճյան ամիրան պատրաստել է տվել նրա տապանաքարը, որի արձանագրությունը շարադրել է Հովհաննես Եզեկյանը:

«է

Մահարձան

ՊԱԼԱՏՅԻ ՏԻՐԱՅՈՒ ԳԷՈՐԳ ՊԱՏՈՒԵԼԻ

Տ[է]Ր. ՅՈՂԱՆՆԷՍԵԱՆ

ՅԱՄԻ Տ[ԵԱՌ]Ն. 1812

Է՞ր դառնահամբոյր ձայն եղերերգուաց

Պատէ տիրութեամբ՝ ըզդաշտ դամբանաց:

Է՞ր երկնահանդէս մուգայք դպրութեաց

Հեծեն վշտահար յաւերակս հայկեանց

Զի աղօտանայ պարծանքն հայրենեաց

Եւ հետախաղաղ գաղի շուք նախնեաց:

Ծաղկընկէց թօշնի բոյսըն բարեզգեաց,

Յոր ջահ հիմէնին ազգել ո՛չ գօրեաց:

Նոր հանդիսարանն հին յիշատակաց

Շքեղ թանգարան բազմազան լեզուաց:

Թարգմանիչ տառից Եբրայականաց,

Նոյն Արաբացուց, Պարսից և Յունաց:

Այն որ խոյացաւ յեթեր լուսարծարծ

Եթող ի մըթան զիւր կոյտ ոսկերաց:

Այն որ արժանի յաւերժ սարդենեաց

Ոչ գոյր ցարդ նորա հետ յիշատակաց


Մինչև բազմերախտ Յարութիւն Պէզճեանց

Յանմահ յիշատակ զայս արձան կանգնեաց:

Վախճանեցաւ 75 ամաց, ի թուին Հայոց ՌՄԿԱ. ծն. 1737»:³³

Ամփոփելով նշենք, որ Գևորգ Դպիր Պալատացին ԺԸ. դարի այն բանասեր-մտավորականներից էր, ում բազմաբեղուն գրիչը երբևէ չդադարեց գործել: Թողնելով բազմաբնույթ արժեքավոր աշխատություններ՝ նա իր մասնակցու-թյունն ունեցավ ԺԸ. դարի գիտական մտքի վերածննդին, իսկ նրա գրական-գիտական ժառանգությունը դեռևս կարոտ է լուրջ ուսումնասիրության:

³³ Գ. Բամպուֆեան, նշվ. աշխ., մաս Բ, էջ 393: Այլ ընթերցումներ տե՛ս Ա. Այվազեան, նշվ. աշխ. էջ 66, Հ. Ուղուրյան, նշվ. աշխ., էջ 220 և այլուր:



**МАРИНЕ САРГСЯН
УТОЧНЕНИЕ НЕКОТОРЫХ ФАКТОВ ИЗ ЖИЗНИ И
ГЕНЕОЛОГИЧЕСКОГО ДРЕВА ГЕВОРКА ДПИРА ПАЛАТАЦИ**

Ключевые слова: Геворк Дпир Палатеци, лингвист, переводчик, переписчик, составитель словарей, интеллектуал, историк, эпитафия.

Геворк Дпир Палатеци был одним из тех филологов-интеллектуалов, чье плодovitое перо никогда не прекращало трудиться. Владея целым рядом языков (греческим, арабским, персидским, древнееврейским, латинским и другими), он переводил, корректировал, составлял грамматические пособия (как для грабара так и для арабского и персидского языков), словари и писал исторические труды, а также содействовал собиранию и спасению многочисленных рукописей. Оставив разнообразные ценные труды, он принял участие в возрождении научной мысли XVIII века.

Основываясь на изданных письмах и исследованиях, в статье сопоставляются и уточняются сведения о жизни самого Геворка Дпира Палатеци и его родных (как, например, дата смерти его отца, Тер Оганеса Еркайна, и ряд других фактов).

MARINE SARGSYAN
PRECISION OF SOME FACTS ABOUT THE LIFE AND
GENEALOGICAL TREE OF GEVORG DPIR PALATETSI

Keywords: Gevorg Dpir Palatetsi, linguist, translator, scribe, author of dictionaries, intellectual, historian, epitaph.

Gevorg Dpir Palatetsi was one of those philologists and intellectuals of the 18th century whose fruitful pen never ceased writing. Having mastered several languages (Greek, Arabic, Persian, Hebrew, Latin, etc.), he translated, proofread and composed grammatical manuals (for Grabar, as well as for Arabic and Persian) and dictionaries, wrote historical works and contributed to the gathering and saving of numerous manuscripts. Leaving behind many valuable works, he contributed to the revival of scholarly thought in the 18th century. Based on the published letters and studies, this article compares and clarifies the available data about the life and family of Gevorg Dpir Palatetsi (for instance, the date of his father Ter Hovhannes Yerkeyn's death, and a number of other facts).

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՈՐՈՇ ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՏՈՀՄԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԸՍՏ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Բանալի բառեր` Անգեղ աստված, Տուրք Անգեղյա, Միհր, տոհմական վեպ, երվանդունիներ, Բագրատունիներ, Արծրունիներ, Գնունիներ, Ալկունիներ:

Բագրատունիներ. *Սեբեոսի պատմության առաջին գլխում հայոց արևմուտքի և Ծովք-Անգեղ տան իշխանների ծննդաբանությունը հանգեցվում է Փառնավազին, Հայկի որդի Արամանյակի սերնդից.*

«Սա ծնաւ զԲագամ եւ զԲագարատ. եւ Բագարատ ծնաւ զԲիրատ, եւ Բիրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեւմտից, այս ինքն է Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագարատ եւ Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին»¹:

Բագարատը և Բյուրատը Բագրատունիների մեջ հանդիպող անձնանուններ են, իսկ Ասպատը նրանց տոհմի «Թագադիր ասպետ» տիտղոսի էպոնիմն է: Ակնհայտ է, որ Բագարատ-Անգեղի լեզենդը ներկայացնում է Բագրատունիների ծննդաբանությունը` «տոհմական վեպը»: Դա հենց այն ժողովրդական լեզենդն է, որի մասին Խորենացին (I ԻԲ) զգուշացնում է Սահակ Բագրատունուն, որ չհավատա այն մարդկանց, ովքեր ասում են, թե Բագրատունիները սերում են Հայկից²:

¹ Ձեռագրերում այս անունները ներկայացված են «Բագարամ» և «Բիրամ» ձևերով, որոնք հետևանք են միջին երկարագիր Մ և Տ տառերի շփոթության և արդեն հայագիտության արշալույսին Ք. Պատկանյանի կողմից նշովել են որպես Բագարատ և Բիրատ, տե՛ս *История императора Иракла. Сочинение епископа Себеоса* (перевод **К. Патканьяна**), Санкт Петербург, 1862, <http://vehi.net/istoriya/armenia/sebeos/>, прим. 33, *Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն* (աշխատասիրությամբ **Ս. Մալխասյանի**), Երևան, 1939, էջ 6-7, 168, ծան. 11, **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Ա, էջ 355, 416, **Մ. Աբեղյան**, *Երկեր*, հ. Ա, Երևան, 1966, էջ 57, ծան. 8:

² Խորենացին իր աղբյուր Մար Աբասի հետևությամբ և Բրիտանական մղումներով հրեական ծագում է վերագրում Բագրատունիների նախնուն (տե՛ս **Մ. Աբեղյան**, *Երկեր*, հ. Ը, Երևան, 1985, էջ 203) և պատմում, թե նրանցից շատերը կուտե՛ր չպաշտելու համար աստվածապաշտությամբ վերջացրին իրենց կյանքը: Իսկ այն մարդիկ, որոնք Հայկից են ծագեց-

Խորենացու մոտ (II Ը) Անգեղ տան էպոնիմը «Տուրք Անգեղեան» է (որոշ ձեռագրերում՝ «Տորք Անգեղեայ»)՝, Հայկի տոհմից, Մեծ Հայքի արևմուտքի առաջին կուսակալը: Պատմել են, որ նա ձեռքով որձաքար ապառաժներ է ձեղքել, եղունգներով տաշել և դրանց վրա արծիվներ քանդակել: Իր հայտնի առասպելում նա հսկայական քարեր է նետում Պոնտոսից հարձակվող ավազակների նավերի վրա:

Բագարատ (իրան. Bagadāta) նշանակում է «baga-ի՝ (աստծու) տուրք»: Անգեղ-Բագարատ «աստծու տուրք (որդի)» և Տուրք Անգեղեայ «Անգեղ (աստծու) տուրք» անունները համադրելի են, որը ցույց է տալիս նրանց համապատասխանությունը⁴: Բայց Բագարատ անունը, որպես «աստծու տուրք / որդի», առավել կհամապատասխաներ Անգեղ աստծու որդուն, մինչդեռ, ըստ աղբյուրի՝ Բագարատն ինքն է կոչվել Անգեղ: Պետք է կարծել, որ հայրանունը դարձել

նում Բագրատունիներին, անվտանգելի են և «Հայկի և նմանների մասին էլ կակազում են վայրիվերո»: Բագրատունիների ծագման վերաբերյալ եղած կարծիքների ֆնուրյունը տե՛ս Մ. Գրիգորյան, «Բագրատունիների ծագման հարցի շուրջ», ՊԲՀ, 2010, 2, էջ 116-129, նաև Տ. Գալստյան, «Հայ իշխանական տների հետքերը հարավարևմտյան Հայաստանում (ֆրդական որոշ ցեղանունների և ցեղերի ծագման հարցի շուրջ)», ՊԲՀ, 2004, 2 (էջ 174-196), էջ 189-193:

³ Մեզանում շատ տարածված «Տորք» տարբերակը, դատելով ձեռագրերից՝ սխալ ձև է, ճիշտն է՝ «Տուրք» (տե՛ս Մ. Աբեղյան, հ. Ը, էջ 154-158): «Տորք»-ը «Տուրք»-ի սխալ գրչության՝ ի բացթողնման հետևանք է (մինչդեռ ի հավելումն անբացատրելի կլինեն): Գիտական գրականության մեջ շատ հաճախ, Ն. Ադոնցի հետևությամբ՝ «Տորք» անունը կապվել է փոխառյալ խեթալուվիական ամպրոպի աստծու անվան հետ, համապատասխան կերպարային մեկնաբանությամբ (N. Adontz, “Tarkou chez les anciens arméniens,” *REArm*, 1927, 1, Ն. Ադոնց, *Երկեր*, հ. 1, Երևան, 2006, էջ 79-96): Այդ անունները՝ հիերոգլիֆային լուվիերեն Tarhunt (< Tarhuwant-), Tarhunza (< Tarhunts-), խեթ. Tarhunn(a), երբեմն՝ կրեատ՝ Tarku-, ծագում են հնդեվրոպական *terh₂- «հաղթել, անցնել» արմատից: Անունը բազում ձևերով ի հայտ է գալիս հինփոհրասիական, բալկանյան և իտալյան անվանաբանության մեջ (հնչել է տարիս-, հմմտ. հունական գրչությամբ ավանդված էտրուսկների փոհրասիացի նախնու Τάρχων-, Τάρκων- անունը, Strabo 5.2.2, հմմտ. և լիկ. Τρῦα-, Τρῦα-, լատ. Tarquinius ևն): Այս ձևերը, որոնք տարբերվում են ամպրոպի աստծու հնդեվրոպական անուններից, ձևավորվել են խաթական՝ «նախախեթական» ամպրոպի աստված Տարուի անվան ազդեցությամբ, տե՛ս D. Schwemer, “The Storm-Gods of the Ancient Near East: Summary, Synthesis, Recent Studies (Part II),” *Journal of Ancient Near Eastern Religions*, 2008, 8, p. 19: Հայ. «Տորք»-ն այնքան էլ նման չէ անատոլիական Tarhun-ին, որը հայերենում կանոնավոր կերպով պիտի փոխառվեր որպես *Տարխո/ուն-, իսկ Tarku-ն՝ *Տարկ/գ/ֆ-: Այսպիսով, կարծում ենք, որ Տորք Անգեղայի Ադոնցի առաջարկած անատոլիական ծագումը, որը կրկնվել է բազմաթիվ աշխատություններում, պետք է վերանայել, թեև հնարավոր է, որ անունների նմանությամբ պայմանավորված որոշ կապեր առաջանային, տե՛ս Ա. Պետրոսյան, «Ն. Ադոնց. Երկեր, հ. Ա, Գրախոսություն», ՊԲՀ, 2006, 3, Նոյնի՝ «Հայերենի և Փոհր Ասիայի հնագոյն լեզուների առնչություններ», *Հայկազեան հայագիտական հանդես*, 2011, էջ 398-399 և ստորև:

⁴ Մ. Աբեղյան, հ. Ա, էջ 58-59, հ. Ը, էջ 157:

է մականուն, ինչպես մեզանում ընդունված է ասել Տուրք/Տորք Անգեղ՝ «Անգեղեայ»-ի փոխարեն:

Խորենացին Տուրքին ներկայացնում է որպես սաստիկ տգեղ («խոժոռագեղ և բարձր և կոպտարանձն և տափակաքիթ, խորակն և դժնահայեաց») և, ըստ այդմ՝ Անգեղ անունը մեկնաբանում է որպես «տգեղ»՝ ան-գեղ հնդեվրոպական *Պ- ժխտականով *wel- «տեսնել» արմատից, «անտես, անտեսանելի» «անտեսք» և նման իմաստներով, հմմտ. գեղեցիկ, որպես «տեսքոտ»: Սա երբեմն համարվել է «ժողովրդական ստուգաբանություն», բայց, ինչպես կտեսնենք, այն կասկածի ենթակա չէ⁵:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ Անգեղը հանդես է գալիս բնագրի ներգալ աստծու փոխարեն (Դ Քազ. Ժէ 30): Ներգալը հնագույն հյուսիսմիջագետքյան աստված էր, կապված մահվան և պատերազմի հետ, անդրաշխարհի տիրակալը, որի պաշտամունքը հետագայում տարածվել է նաև այլուր⁶: Անգեղ աստծու վերաբերյալ ուղղակի տեղեկություններ չկան՝ այդ անունը հանդես է գալիս միայն տեղանուններում և Տուրքի անվան մեջ: Ծոփք նահանգի հարավ-արևելյան գավառը, ներկայիս Դիարբեքիրից հյուսիս-արևմուտք, կոչվում էր Անգեղ տուն, որի կենտրոնն էր Անգ(ե)ղ բերդաքաղաքը (հուն. Ἰγγίληνη, լատ. Ingilena), որտեղ գտնվում էր հնագույն հայ արքաների մի գերեզմանոցը (Փավստոս IV ԻԴ): Իսկ ներգալը հնում Ուրկեշի (Դիարբեքիրից հարավ-արևելք) մեծ աստվածն էր: Պաշտամունքի վայրերի մերձակա տեղայնացումը և արքաների գերեզմանոցը փաստում են Անգեղի կապը ներգալի հետ և անդրաշխարհի աստված լինելու հանգամանքը:

Հնդհանրապես, կյանքի և մահվան աշխարհների հարաբերությունը բնորոշվում է նրանց բնակիչների փոխադարձ անտեսանելիությամբ⁷, որը համադրվում է կուրություն, կամ աչքի և հայացքի այլ թերությունների հետ, և անդրաշխարհի աստվածությունները կարող են պատկերացվել որպես կույր, միաչքանի կամ շիլ: Կարելի է ասել՝ Ֆիզիկական թերությունները («տգեղությունը») ճաղատությունը, կաղությունը, շլությունը, ապա և տեսքի ու տեսողության թերությունների առավել ուժեղ արտահայտված ձևերը՝ մեկ աչք ունենալը, կուրությունն ու անտեսանելիությունը, անդրաշխարհի աստվածությունների բնորոշ հատկանիշներ են: Այսպես, առասպելի մի դրվագում ներ-

⁵ Հնդեվրոպական *wel- արմատի՝ ամպրոպային առասպելում և մահվան պատկերացումներում ունեցած էական դերի մասին տե՛ս В. Иванов, В. Топоров, *Исследования в области славянских древностей*, Москва, 1974, М., 31-75, А. Petrosyan, “Indo-European *wel- in Armenian Mythology,” *Journal of Indo-European Studies*, 2016, 1-2, pp. 129-146 հարցի գրականությամբ:

⁶ F. Wiggermann, “Nergal”, *Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie* 9, Berlin, 1998-2001, S. 215-226.

⁷ В. Пропп, *Исторические корни волшебной сказки*, Ленинград, 1946, сс. 58-61.

գալն անտեսանելի է անդրաշխարհի դիցուհու վեզիրի աչքին: Ավելին, նա շիլ է, կաղ և ճաղատ⁸, այսինքն՝ ֆիզիկական թերություններով, ինչը միանգամայն համապատասխանում է հայոց Անգեղին և Տուրք Անգեղյայի «անտեսք, տգեղ» մեկնաբանությանը:

Հայերենը հնդեվրոպական լեզուների մեջ առավել մոտ է հունարենին⁹: Հունական մահվան աստված Հադեսի անունը ստուգաբանվում է որպես *Hwīd-՝ «ան-տես», «անտեսանելի»¹⁰: Անգեղը, ըստ այդմ, պետք է մեկնաբանվի որպես Հադեսի անվանը զուգահեռ մի կազմություն¹¹:

Բազարատ անվան առաջին մասը՝ իրանական *baga*-ն կիրառվել է մի քանի՛ այդ թվում և գերագույն աստված Ահուրա Մազդայի համար, բայց հաճախ և սովորաբար, և հատկապես հայոց մեջ, վերաբերել է մեկ աստծո՝ Միհրին: Այսինքն՝ Բազարատ նշանակում է «Միհրի տուրք»¹²: Բագ(ա)-ի մանավանդ հայոց մեջ Միհրին վերաբերելու մասին է խոսում Հայաստանում Միհրի պաշտամունքի կենտրոնի Բագայառիճ կամ Բագառիճ անվանումը: Ապա՝ հեթանոսական տաճարը կոչվել է «բագին» կամ «մեհեան», իսկ վերջինս նույնպես Միհրի անվան հետ է կապվում¹³: Ընդհանրապես, էպիկական մեծ հերոսները հաճախ լինում են աստծու որդիներ, ինչպես հունական Հերակլեսը, Թեսևսը, Պերսևսը, Աքրիլեսը և մյուսները: Հնդեվրոպական *dō-ro- «տուր(ք)» տարրով անունները բազում են հնդեվրոպական, հատկապես հայկականին առավել մոտ՝ հունական և իրանական անվանաբանության մեջ՝ ինչպես հուն. Թեոդո-

⁸ В. Афанасьева, И. Дьяконов, *Я открою тебе сокровенное слово*, Москва, 1981, сс. 88-89. Հատկանշական է, որ Տուրք Անգեղյայի՝ թշնամիների նավերի հետևից ժայռեր նետող կերպարը (հորեմաջի II Ը) համեմատվում է հին հունական առասպելի միաշխանի (և այդ մեկ աչքից էլ զրկված) կիկլոպ Պոլիփեմոսի հետ (Ն. Արմեց, *նշվ. աշխ.*, էջ 81), ինչը կարող է ևս մի փաստարկ համարվել Անգեղի այս մեկնաբանության օգտին:

⁹ H. Martirosyan, “The Place of Armenian in the Indo-European Language Family: the Relationship with Greek and Indo-Iranian”, *Journal of Language Relationship*, 10, Moscow, 2013, pp. 85-137 գրականությամբ:

¹⁰ R. Beekes, “Hades and Elysiion,” *Mir curad: Studies in honor of Calvert Watkins*, Innsbruck, 1998, p. 17-19, նույնի՝ *Etymological Dictionary of Greek*, Leiden/Boston 2010, p. 34, V. Ivanov, “Old Novgorodian Nevide, Russian nevidal’: Greek ἀΐδηλος,” *UCLA Indo-European Studies*, vol. 1, Los Angeles, 1999, p. 284, հարցի գրականությամբ:

¹¹ Անգեղի այս մեկնաբանությունը տե՛ս А. Петросян, “Отражение индоевропейского корня *wel- в армянской мифологии,” *ԼՀԳ*, 1987, 1, էջ 56-70 1987, А. Петросян, “Indo-European *wel- in Armenian mythology,” p. 132-133.

¹² Իրանական *baga*-ի, նրա՝ Միթրա/Միհրի փոխաբեր և այլ կիրառությունների վերաբերյալ տե՛ս H. Bayley, Sims-Williams N., Zimmer S., “Baga”, *Encyclopaedia Iranica*, London/New York, 1989, III, p. 403-406, *Мифы народов мира*, т. 1, Москва, 1980, сс. 155-156: Բազարատի՝ որպես «(Միհր) աստծու տվածը կամ ստեղծածը» մեկնաբանությունը տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Ա, էջ 355:

¹³ Հ. Աճառյան, *Հայերեն արձատական բառարան*, հ. Գ, Երևան, 1973, էջ 296:

րոս, Ապոլլոդորոս, հայ. Աստվածատուր, Խաչատուր, և նույն արմատի այլ ածանցներով հուն. Թեոդոտոս, Հերոդոտոս, իրան. Բագադատա, Տիրիդատա/-Տրդատ, հմմտ. և սլավ. Բոգդան են: Հայոց մեջ հայտնի է նաև Տուր անունը, որի կրողը վիպական ավանդության մեջ հանդես է գալիս որպես Տրունիք տոհմի հիմնադիր (Խորենացի II Խէ), հմմտ. նաև իրանական նույնարմատ և նույնիմաստ Դատ անունը¹⁴:

Անգեղը, դատելով նրա բնիկ հայկական անունից, պետք է լիներ հայոց հնագույն, իրանական ազդեցությունից առաջ ունեցած դիցարանի աստվածներից, որը, նման հատկանիշների պատճառով, նույնացվել է Միհրի հետ: «Կրտսեր Ավեստան» Միթրա/Միհրին մեռյալների հոգիների անդրշիրիմյան դատավորի գործառույթ է վերագրում, որին հետևում են պահլավական տեքստերը: Հենց Միհրն է, որ Չինվատ կամրջի վրա սպասում է հանգուցյալի հոգուն («Մենոգ ի խրատ» 2.119)¹⁵: Եվ դա արդեն բավարար էր, որ նա նույնացվեր հայոց մահվան և անդրաշխարհի հնագույն աստծու հետ: Բայց հին կերպարի առանձնահատկությունները մնացել են: Այսպես, ի հակադրություն իր իրանական անվանակցի, որը, գոնե հելլենիզմի դարաշրջանում, հիմնականում արևի աստված էր և նույնացվել է հունական Հելիոսի և Ապոլոնի հետ, հայոց Միհրը նույնացվել է Հեփեստոսի հետ (Խորենացի II ԺԳ): Ըստ այդմ, նա արևի աստված չէր, ինչպես շատ հաճախ համարվել է մեզանում, կամ նրա արևային հատկանիշները հավանաբար թույլ արտահայտված են եղել: Հեփեստոսը ստորերկրյա կրակի, հրաբխի (և դարբնության) աստված էր: Եվ հայոց Միհրը, դատելով հին պաշտամունքի վայրից պահպանված մնացորդներից, առաջին հերթին հենց ստորերկրյաքի և ստորերկրյա կրակի աստված է եղել¹⁶:

Բագարատ և Բագամ անունները, անկասկած, հանգում են միևնույն «բագա-» արմատին, թեև Բագամ անունն այլուրեք հայտնի չէ (հնարավոր է, որ այս անունը պետք է ուղղել Բագատի՝ ըստ մյուս անունների վերջավորության): Կարծիք կա, որ այն «բագա-» արմատով անունների մի կրճատ ձև է¹⁷: Սրանք

¹⁴ Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Ա, էջ 173, հ. Բ, էջ 18:

¹⁵ Տե՛ս օրինակ II. Рак, *Зороастрийская мифология: мифы раннего и средневекового Ирана*, СПб., 1998, с. 297, 490: «Մենոգ ի խրատ»-ի տեքստի անգլերեն քարզմանությամբ՝ <http://www.avesta.org/mp/mx.html#chapter2>: Անդրաշխարհի հայ ավանդական պատկերացումները, հին իրանականի համադրությամբ, տե՛ս Ս. Հարությունյան, *Հայ առասպելաբանություն*, Բեյրութ, 2000, էջ 439-440:

¹⁶ Այն, ինչ պահպանվել է հին Բագատի տեղում (ժայռի լանջին ներքև տանող աստիճաններ են), հիշեցնում է հռոմեական Միթրասի ստորերկրյա անձավային պաշտամունքը, տե՛ս J. Russell, "On the Armeno-Iranian Roots of Mithraism," *Studies in Mithraism*, Rome, 1994, p. 183-184, A. Petrosyan, "Haldi and Mithra/Mher", *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*, 2006, 1, p. 229:

¹⁷ Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Ա, էջ 355:

հիշեցնում են առասպելաբանության մեջ հաճախ հանդիպող երկվորյակների կամ երկվորյակային տիպի հերոսների անունները, որոնք սովորաբար նույն-արմատ են, կամ ուղղակի համահունչ են իրար (հմմտ. հայ. Երվանդ և Երվազ, Սանասար և Բաղդասար, լատ. Ռեմոս և Ռոմուլոս ևն):

Արծրունիներ և Գնունիներ. Այս տոհմերը, ըստ Խորենացու և Թովմա Արծրունու՝ ծագում են Ասորեստանի Սենեքերիմ արքայի որդիներ Սանասարից (Սարասար) և Արգամոզանից կամ Ազրամեղեքից (Խորենացի I ԻԳ, Թովմա I Ա, Գ): Եվ հայոց մեծ էպոսը՝ «Սասնա ծռերը», կարելի է ասել, ներկայացնում է Արծրունիների տան՝ Սանասարի սերնդի տոհմական վեպի հետագա ձևափոխությունը: Ինչպես տեսանք, երկվորյակային Բագարատն ու Բագամն «անտեսանելի», «անտես» կամ «աներևույթ» Անգեղի կամ նրան նույնացված բազաՄիհրի որդիներն են: Քրիստոնեության ընդունումից հետո Միհրն անցել է աստվածայինից ավելի ցածր՝ էպիկական հերոսների մակարդակ: Միհրի տարբերակային մի ձևն է Մհեր անունը, որը կրում են Սասունի էպոսի երկու հերոսներ (այսինքն՝ Միհրն էպոսում երկփեղկվել է երկու՝ Մեծ և Փոքր Մհերների կերպարների): «Սասնա ծռերի» երկվորյակները ծնվում են ջրից կամ թշնամի երկրի տիրակալից (վաղնջական տարբերակներում Ասորեստանի Սենեքերիմ թագավոր, ավելի նորերում՝ Բաղդադի խալիֆ): Թշնամի երկիրն առասպելական պատկերացումներում հաճախ համադրվում կամ նույնիսկ նույնացվում է մահվան աշխարհի, անդրաշխարհի հետ: Եվ ահա, մ.թ. VI դարի մի ասորական աղբյուրի համաձայն, Անգեղ տան Անգեղ քաղաքը կոչվել է Ասորեստանի Սինախերիբ (= հայ. Սենեքերիմ) արքայի քաղաք¹⁸: Այսինքն՝ Սենեքերիմը հին Անգեղի նոր անունն է նա ներկայացնում է Անգեղի վերանվանված, վիպականացած կերպարը: Պետք է հիշել, որ Անգեղ բերդը և Անգեղ տուն գավառն էպոսի վիպական աշխարհագրության մեջ մտնում են թշնամի երկրի՝ Մսրրի կազմի մեջ¹⁹: Իսկ Արծրունիները, ըստ ուսումնասիրողների՝ սկզբնապես պիտի եղած լինեին Ծոփքի տերերը²⁰:

«Սասնա ծռերում» երկվորյակները հաճախ ծնվում են իրենց մոր խմած ջրից: Իսկ ո՞վ է այդ «ջուր-սերմի» տակ հանդես եկող իրական հայրը, կարելի է միայն ենթադրություններ անել: Ինչո՞ւ է առաջին երկվորյակի՝ Սանասարի որդու անունը Մհեր, այսինքն՝ Միհր, արդյո՞ք նա չի կրկնում Սանասարի անհայտ, «թաքնված» հոր անունը (պապի անունը որդուն տալը հաճախ շեշտում են «Սասնա ծռերի» ասացողները): Երկու տարբերակում երկվորյակները հան-

¹⁸ St' u J. Markwart, *Südarmerien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen*, Wien 1930, S. 98, 110:

¹⁹ Մ. Աբեղյան, և. Ա., 335-336, 347, և. Ղ., 23:

²⁰ Н. Адонц, *Армения в эпоху Юстиниана*, СПб., 1908, с. 415, J. Markwart, նշվ. աշխ., էջ 176:

դես են գալիս որպես Մհերի որդիներ²¹: Բայց Մհերի իրական, առավել հայտնի որդիներն են էպոսի մեծ հերոսը՝ Դավիթը և նրա գլխավոր հակառակորդ Մարա Մելիքը: Երկվորյակների հակադրությունը բնորոշ է նրանց նախնական առասպելին (հայկական համատեքստում հմմտ. Սանասարի և Բաղդասարի կովի դրվագը): Դավիթը և Մելիքը երկվորյակներ չեն, այլ սերում են տարբեր մայրերից, բայց և կարող են դիտվել իրենց պապ Սանասարի և նրա «հակադիր երկվորյակի» երկրորդ դրսևորումներ²²:

Երվանդունիներ. Ըստ Խորենացու՝ Արտաշեսից առաջ թագավորած Երվանդը և նրա եղբայր Երվագը ծնվում են արքայական ընտանիքի մի կնոջից «յանկարգ խառնակութենէ, որպես Պասիփաէ (ծնանի) Մինոտավրոս» (Խորենացի II 1է): Հունական առասպելում Պասիփայեն Մինոտավրոսին հղանում է ցլից, և նման մի պատմություն է ակնարկում Խորենացին: Այս Երվանդից շատ սերունդներ առաջ հիշվում է մեկ այլ Երվանդ՝ Երվանդ Սակավակյացը, Հայկակի որդին և Տիգրան Երվանդյանի հայրը: Խորենացու Պատմության այս հատվածների աղբյուրը հայոց հնագույն «Վիպասանք» առասպելախառն էպոսն է: Առասպելում հերոսի անունը և կերպարն անբաժանելի են իրարից: Վիպականացած պատմության մեջ դինաստիական անունները ձեռք են բերում կերպարային հատկանիշներ: Նույնանուն հերոսների կերպարները խառնվում են իրար և, օրինակ, Տիգրան Երվանդյանն իր մեջ ամփոփում է իրենից դարեր անց թագավորած Տիգրան Մեծի կերպարի գծերը²³: «Վիպասանքի» Երվանդը, ակնհայտորեն, հայոց հին արքայատոհմի՝ Երվանդունիների էպոնիմն է: Ակնհայտ է նաև, որ տոհմի հիմնադրին և ոչ դինաստիական անվան վերջին կրողին պիտի պատշաճեր առասպելական ծնունդը: Ըստ այդմ, առաջին Երվանդի՝ Տիգրան

²¹ Մ. Աբեղյան, Կ. Մելիք-Օհանջանյան, *Ճյուղագրություն, Սասնա ծուր*, հ. Բ, 2, Երևան 1951, էջ 889, 893 (ասացողներ Առաֆել Շակոյան և Մկրտիչ Պետրոսյան):

²² Л. Абраамян, “Парные образы «Сасна црер»: близнецы, сводные братья, двойственные герои”, *Հայկական «Սասնա ծուր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը*, Երևան, 2004, էջ 63-67. Երկվորյակների հակադրման առասպելի վերաբերյալ տե՛ս Л. Абраамян, А. Демирханян, “Мифологема близнецов и мировое дерево”, *ՊՐՀ*, 1985, 4, էջ 66-84: Ի միջի այլոց, կարելի է այլ հետաքրքիր կապեր ցույց տալ Տուրք Անգեղյայի առասպելի և «Սասնա ծուրի» միջև: Այսպես, Սանասարի՝ ջրից ձեռք բերած ձին և թուր կեծակին արդյոք նրա «թափնված» հոր՝ Միհր/Մհերի ժառանգությունը չե՞ն: «Ավեստայում» հիշվում են Միթրայի «արագ ձիերը», և նրան են պաշտում ձիավորները («Միհր Յաշտ» 3, 11): Անգեղ Բագարատի թոռան՝ Ասպատի անունը (< հին պրակ. *asparati «ձիերի տեր») ակնարկում է նրա՝ ձիու հետ ունեցած կապը: Ընդհանրապես, էպոսում Տուրքի հետ համեմատելի կերպար է Փոֆր Մհերը: Նա է, որի ձեռքերի տեղը մնում է երբ ֆարին է դիպչում, և նա է, որ Տուրքի նման հսկայական ֆար է նետում ջրի մեջ (որը Տիգրիսը բաժանում է երկու մասի), տե՛ս Մ. Աբեղյան, հ. Ա, էջ 61:

²³ Մ. Աբեղյան, հ. Ա, էջ 104-115:

Երվանդյանի հոր առասպելն է, որը Խորենացու մոտ անցել է Արտաշեսի նախորդ Երվանդին²⁴:

Երվանդ Սակավակյացի հոր Հայկակ անունը հայոց նախնի Հայկի անվան նվագական ձևն է: Եվ նրա հակառակորդի անունն է Բելոքոս, այսինքն՝ Հայկի հակառակորդ Բելի մի ածանցյալը: Խորենացու մոտ Երվանդյան տոհմը հենց Հայկյաններն են, բայց այս ծննդաբանություն մեջ Հայկը կրկնվում է երկրորդ անգամ, որպես Հայկակ՝ արքայատոհմի հայկյան ծագումն առավել շեշտելու համար: Հատկանշական է, որ Տուրքն էլ, ըստ որոշ ձեռագրերի՝ ոչ թե Հայկի, այլ Հայկակի սերնդից է²⁵: Թեև Խորենացին չի նշում, բայց Երվանդն ու Երվազը երկվորյակային կերպարներ են: Դա են ակնարկում նրանց նմանահունչ անունները և վեպի այլևայլ մանրամասներ²⁶: Առաջին Հայկյանների վեպում ևս Հայկին հաջորդում են երկվորյակային տիպի կերպարներ՝ Արամանյակը և նրա որդի Արամայիսը (առասպելական երկվորյակները հաճախ հանդես են գալիս որպես ծեր ու երիտասարդ, հայր ու որդի, որը խորհրդանշում է նրանց հիերարխիկ տարբերակումը)²⁷:

Երկվորյակները հնդեվրոպական ավանդույթներում հանդես են գալիս որպես աստծու որդիներ²⁸: Ըստ այդմ, Հայկակը և ցուլը՝ երկվորյակային Երվանդ անունով հերոսների հայրերը, պետք է որ աստծու վիպականացած կերպարը և նրա սիմվոլը լինեն: Մյուս կողմից, նրանք համապատասխանում են մյուս երկվորյակների հորը՝ Անգեղին: Սա թերևս արձագանքն է Անգեղի՝ նաև Հայկի հետ համապատասխանություն²⁹: Ըստ այդմ, որոշակի զուգահեռներ կարելի է փնտրել որպես Հայկի կամ Հայկակի սերունդ ներկայացվող երկու երկվորյակային կերպարների՝ Տուրք Անգեղյայի և Երվանդի մեջ: Անգեղը, ինչպես տեսանք, կարող է բնութագրվել ոչ միայն որպես «անտեսանելի», այլև տեսքի և

²⁴ Այս հարցի վերաբերյալ տե՛ս Ա. Պետրոսյան, Հայկական էպոսի հնագույն ակունքները, Երևան, 1997, էջ 31, Լ. Ղուկասյան, Երկվորյակների առասպելը և դրա տարբեր դրսևորումները հայ վիպական ավանդության համակարգում, Երևան 2012, էջ 48:

²⁵ Մովսես Խորենացի, 1913, էջ 114:

²⁶ Տե՛ս հատկապես Մ. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, էջ 341-348:

²⁷ Այսպես, «Տարոնի պատմության» մեջ Գիսանեն ու Դեմետրը հանդես են գալիս մերք որպես եղբայրներ, մերք որպես հայր ու որդի: Այլ օրինակներ տե՛ս *Петросян А., Армянский эпос и мифология*, Ереван, 2002, с. 78: Արամանյակի և Արամայիսի երկվորյակային բնույթի մասին տե՛ս Ա. Պետրոսյան, Ն. Տիրացյան, «Հայոց առաջին մայրաքաղաք Արմավիրը պաշտամունքային կենտրոն», *ՊԲՀ*, 2012, № 1, էջ 169-184:

²⁸ Տե՛ս օրինակ *Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы*, Тбилиси, 1984, с. 777:

²⁹ Անգեղի և Հայկի հնարավոր համապատասխանության մասին տե՛ս Ա. Պետրոսյան, «Հայոց Անգեղ աստվածը», *Շիրակի պատմաճշակութային ժառանգությունը. հանրապետական հինգերորդ գիտաժողով*, Գյումրի 2002, էջ 22-24, նույնի՝ Արամազդ. պաշտամունք, կերպար, նախատիպեր, Երևան, 2006, էջ 88:

հայացքի այլևայլ թերուժյուններ ունեցող, իսկ Տուրքը՝ լրիվ համապատասխան դրան, նկարագրվում է որպես «դժնահայեաց»։ Տուրքի մասին երգել են, որ նա ձեռք էր զարկում որձաքար ասպառաժներին և ճեղքում ուզածի պես («բուն հարկաներ զորձաքար վիմաց ձեռօք [...] և ճեղքել ըստ կամաց մեծ և փոքր»)։ Իսկ Երվանդի մասին ասվել է, որ նրա դժնյա հայացքից քարերը պայթում էին («հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթեր որձաքար վիմացն»)։ Նկատենք, որ օգտագործվում են նույն բառերը և արտահայտությունները՝ «դժնահայեաց»/«հայեցուածոցն դժնութենէ», «որձաքար վիմաց»։ Ուրեմն, հայ առասպելաբանության համատեքստում Տուրքը և Երվանդը, կարելի է կարծել, որ նույն նախնական «դժնահայեաց», «որձաքար վիմաց» ճեղքող կերպարի երկու տարբեր դրսևորումներ են (Անգեղի երկվորյակ որդիներից առաջինը)։ Գատելով Անգեղ դիցանվան ստուգաբանությունից՝ դժնյա/դժնահայաց լինելը հենց Անգեղ աստծու բնորոշ հատկանիշն է, որը ժառանգում է նրա որդին³⁰։ Ընդ որում, նախնականը դժնյա հայացքով քարերը ճեղքելն է, որը Տուրքի դեպքում ավելի «ուսցիտնալ» հիմքի է բերվել։ Վերին աստիճանի հատկանշական է, որ Տուրք Անգեղայի՝ «գեղ-» արմատով բնորոշվող հատկանիշը՝ շեշտված տգեղությունը, նույնպես ի հայտ է գալիս Երվանդի առասպելում որպես նրա մոր բնութագրիչ՝ նա կոչվում է խոշորագեղ՝ «տգեղ, խոժոռագեմ, ահագնատեսիլ» (Խորենացի II ԼԳ)։

Այսպիսով, Երվանդունիների առասպելական նախահայրը՝ Երվանդը, իր ամենից աչքի ընկնող հատկանիշով համապատասխանում է Տուրք Անգեղային։ Եվ այս երկու հերոսները, ըստ ավանդական տոհմաբանության, ծագում են նույն Հայկյան տոհմից (Հայկից կամ Հայկակից)։

Սկլունիներ. Խեթական մի արձանագրության մեջ (KUB XXVI, 39, IV, 26) թվարկվում են հայկական լեռնաշխարհում XIV-XIII դդ. գոյություն ունեցող հնագույն պետության՝ Հայասայի աստվածները³¹։ Առաջին տեղում հիշվում է Հայասա «քաղաքի» (= երկրի) U.GUR-ը, որը միջագետքյան Ներգալ աստծու գաղափարագիրն է։ U.GUR-ը, կարծում են, որ սկզբնապես եղել է հինմիջագետքյան մահվան և պատերազմի աստված Ներգալի թրի անվանումը՝ աքաղ. Uqur «կործանի՛ր» իմաստով, որն աստվածացվել է որպես Ներգալի

³⁰ Դժնյա հայացքը դիցաբանական համատեքստում մեկնաբանվում է որպես ամպրոպի աստծու հատկանիշ, տե՛ս Ս. Հարությունյան, *Նշվ. աշխ.*, էջ 106: Հարկ է նշել, որ հայոց մեջ ամպրոպի աստվածը և նրա վիպականացած տարբերակները (Երվանդ, Սանասար) ի հայտ են գալիս որպես երկվորյակային կերպարներ, տե՛ս Ա. Петросян, *Армянский эпос и мифология*, с. 23-32:

³¹ Ս. Քոսյան, «Հայասայի աստվածները (KUB XXVI 39)», *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, XXIV, Երևան, 20015, էջ 444-457՝ գրականությամբ:

«վեզիրը»³²: Արդեն մ.թ.ա. երկրորդ հազարամյակի սկզբից նա նույնացվել է ներգալին և դարձել նրա հիմնական անուններից մեկը: Խեթական և լուվիական աղբյուրներում U.GUR-ը համարյա միշտ հիշվում է որպես Հայասայի աստված³³: Այսպիսով, Հայասայի մեծ աստված U.GUR-ը, կարելի է ասել, որ համապատասխանել է հայոց Անգեղ-Ներգալին:

Խեթա-խաթական ավանդույթում երկրորդ հազարամյակի կեսից Ներգալ / U.GUR-ը նույնացվել է խաթական Šulikatte «Սուլի արքա», կամ Šulikatte՝ «Սուլիի արքա» աստծուն³⁴, որի «արքա» լինելը նորից շեշտում է U.GUR-ի տիրող դիրքը դիցարանում: Թուր-U.GUR-Šulinkatte նույնացումը հնարավորություն է տալիս Šuli(n)katte դիցանունը մեկնաբանել որպես «թուր-արքա» կամ «թրի արքա»: Šuli-ն («սուլի», քանի որ խեթերեն սեպագիր š-ն արտացոլում է S հնչյունը) համադրելի է հնդեվրոպական *k'u-, *k'ō- «սուր» արմատին, որից, l- և r- աճական/աժանցներով «սուր զենք» նշանակությամբ տերմիններ են ստեղծվել, հմմտ. հայ. սուր՝ «թուր, որևէ սուր գործիք», սլաք < սուլ-աք (-աք աժանցով)՝ «նետ, նիզակ», հնդ. Cūla՝ «նիզակ» ևն: Եթե դա այդպես է, ապա այս դիցանվան առաջին մասը հնդեվրոպական է: Ի միջի այլոց, դատելով Անգեղակոթ դժվար մեկնաբանելի, այսինքն՝ վաղնջական տեղանունից, հայոց Անգեղը նույնպես կարող էր նույնացված լինել սուր զենքի շեղբի հետ (հմմտ. դանակի կոթ):

Šulikatte-ն համարվում էր հայրը խաթական ամպրոպի աստված Taru-ի, որը խեթերենում հանդես է գալիս Tarawa- ձևով (այս աստվածը նաև կոչվում է «Ներիկ քաղաքի ամպրոպի աստված»): Ներգալ-Անգեղ-Սուլիկատտե կերպարային նույնությունը հուշում է Տարուի և Տուրքի համադրման հնարավորությունը³⁵: Կա նաև անունների որոշ նմանություն գործոնը: Հատկանշական է, որ Տուրք Անգեղայի՝ թշնամիների նավերի վրա քարեր նետելու առասպելը տեղայնացվում է ոչ թե Ծոփքում, ինչպես կարելի էր սպասել Խորենացու և Սեբեոսի տվյալներից, այլ Պոնտոսում, այսինքն՝ Հայասայի մերձակայքում: Սակայն այն, ինչ գիտենք Ներիկի ամպրոպի աստծու բավական հայտնի կերպարի մասին, այնքան էլ չի հիշեցնում Տուրքի առասպելը (միայն մի բավական վնասված տեքստից³⁶ ինչ-որ ենթադրություններ կարելի է անել)³⁷:

³² W. Lambert, “Studies in Nergal. Review of E. Weiher, *Der Babylonische Gott Nergal*”, *Bibliotheca Orientalis*, 1973, 30, S. 356.

³³ B. Van Gessel, *Onomasticon of the Hittite Pantheon*, Leiden/New York/Köln, 1998, p. 839.

³⁴ E. Forrer, “Hajasa-Azzi”, *Caucasica*, 1931, 9, S. 6 ff., V. Haas, *Geschichte der hettitischen Religion*, Leiden/New York/Köln 1994, S. 367, 599.

³⁵ Այդ մասին տե՛ս Ս. Հարությունյան, *նշվ. աշխ.*, 2000, էջ 92-103:

³⁶ H. Hoffner, *Hittite Myths*, Atlanta, 1991, p. 23.

Մյուս կողմից, ըստ մի կարծիքի, հօգուտ որի վերջերս նոր փաստարկներ են բերվում, Հայասան տարածվել է մինչև Վանա լիճ, ներառելով նաև Տարոնը³⁸: Ըստ *Խորենացու (II Ը)*, Տարոնի հին տերերի՝ Սլկունիների էպոնիմ-նահապետն էր Սլաքը, սերված Հայկից, կամ Հայկից էլ առաջ Հայաստանում արողներից: Սլաքի անունը, կարծում են, ծագում է հին Սուլի(ն)կատտեից (որպես սղված ձև կամ *Sulək^hat^he > *Սուլաքայ > Սուլաք < Սլաք գարգացմամբ)³⁹: Տարոն՝ հնում Տարան տեղանունը պարզորոշ համադրելի է Տարու դիցանվան հատկապես Tarawa ձևի հետ⁴⁰: Սլաք-Տարան՝ նահապետ-տեղանուն կապը համադրելի է Šulikatte-Tarawa ծննդաբանությունը և, կարելի է կարծել, որ այստեղ մենք գործ ունենք տեղի հնագույն առասպելաբանական մի հանգույցի հետ, որը հետագայում վերափոխվել է նախարարական տան ծննդաբանության: Եվ Սլաքը, որ Անգեղի խաթական զուգահեռի՝ Սուլիկատտեի հավանական հայկական արտացոլումն է, ինչպես վայել է Անգեղին և նրա սերնդին, *Խորենացու մոտ հանդես է գալիս «դժնեայ» մականունով (II Ը): Այսինքն, դժնեայ՝ «դժնդակ, դաժան, խիստ» իմաստով, բառն այստեղ ևս ի հայտ է գալիս որպես Անգեղի տոհմը բնորոշող տերմին:*

Հայկական նշանավոր տոհմերի ավանդական ծննդաբանության սխեման միակերպ է նրանք ծագած են համարվում դիցաբանական հատկանիշներով երկվորյակային հերոսներից⁴¹: Բացի վերը քննված օրինակներից, հիշենք, որ Արշակունիները համարվում են ծագած Արշակից ու Վաղարշակից, Մամիկոնյանները՝ Մամիկից ու Կոնակից, Տարոնի իշխանները՝ Գիսանեից ու Դեմետրից:

³⁷ Այս աստծու (նեբկայացված որպես խեթական, և ոչ խաթական) և Տորի համադրման մասին տե՛ս **J. Russell**, “Ancient Anatolians and Armenians”, *The Second International Symposium on Armenian Linguistics. Proceedings*, Yerevan, 1993:

³⁸ Հայասայի տեղայնացման վերաբերյալ եւս կարծիքներ տե՛ս **Ա. Քոչյան**, *Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական աղբյուրների)*, Երևան, 2004, էջ 48-50. Երկրի՝ նաև Տարոնն ընդգրկելու վերաբերյալ **Ա. Քոչյան**, «Վանից մինչև Եփրատ (հայոց վաղ պետականության ակունքներում)», *Հայկագունիներ*, Երևան, 2013, էջ 48-63, **Ռ. Ղազարյան**, «Տուրուբերանում Հայասայի տեղորոշման հարցի շուրջ», *Հայկագունիներ*, Երևան, 2013, էջ 113-117:

³⁹ **J. Russell**, “Ancient Anatolians and Armenians”, p. 75, **А. Петросян**, *Армянский эпос и мифология*, с. 34-35.

⁴⁰ Տարոնի՝ Տարու դիցանունից ծագելու վերաբերյալ տե՛ս **Ս. Հարությունյան**, *նշվ. աշխ.*, էջ 92-103, **А. Петросян**, *Армянский эпос и мифология*, с. 156, **Հ. Հմայակյան**, «Հայկական Տուրուբերան տեղանունը խեթա-հայկական փոխառնչությունների համատեքստում», *Հայկագունիներ*, էջ 118-122 (նկատենք, որ մյուս հեղինակները երբեմն շեն տարբերակով խաթական և խեթական, թեև նմանահունչ, բայց տարբեր դիցանուններ):

⁴¹ **А. Петросян**, *Армянский эпос и мифология*, с. 124-131, **Ա. Պետրոսյան**, «Հայ ժողովրդական հերոսական էպոսը», *ՀԱ*, 2017, էջ 427-442:

Ակնհայտ է, որ տոհմական վեպերը, կրկնելով նույն սխեման, չեն կարող ամեն ինչում համընկնել: Սակայն որոշ ամենանշանավոր տոհմեր կարծես ուղղակի ներկայացվում են որպես Անգեղ աստծու սերունդներ՝ Բագրատունիները՝ Անգեղ-Բագարատի, Արծրունիները՝ Անգեղ-Սենեքերիմի որդի Սանասարի, իսկ Երվանդունիները և Սլկունիները՝ անուղղակի կերպով՝ իրենց նախնիների հայացքի և տեսքի «դժնյա» բնութագրով, որը նրանք կարող էին ժառանգել Անգեղից: Այսինքն, նրանց վերագրվել է միասնական ծագում: Իհարկե, տոհմական վեպը մի բան է, իսկ պատմությունը՝ այլ: Բայց Բագրատունիների՝ Արշակունի արքաներին թագադրելու գործառույթը և Արծրունիների մշտական կենտրոնախույս ինքնուրույնության ձգտումը արդյոք չէ՞ն ակնարկում նրանց ծագումը հայոց հին արքաների տոհմից: Եվ իրոք, պատմական փաստերի մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ Բագրատունիները և Արծրունիները, ամենայն հավանականությամբ, Երվանդունիների արքայատոհմի ճյուղերն են⁴² (ի միջի այլոց, իր արամեերեն արձանագրություններում իրեն «Երվանդական»՝ RWNDKN է անվանում նաև Արտաշեսյան արքայատոհմի հիմնադիր Արտաշես Ա): Ըստ այդմ, «դժնյա» Անգեղի հետ կապը, հնարավոր է, սկզբնապես վերագրված է եղել Երվանդունիներին և հետո միայն անցել այդ տոհմի կողմնակի ճյուղերին:

ARMEN PETROSYAN
THE ORIGINS OF SOME PROMINENT ARMENIAN FAMILIES
ACCORDING TO LEGENDS

Keywords: God Angel, Turk‘ Angeleay, Mihr, dynastic saga, Eruanduni, Bagratuni, Artsruni, Gnumi, Slkuni.

The article discusses the legends about the origins of some ancient Armenian royal and princely families: the Eruandunis, the Bagratunis, the Artsrunis and the Slkunis. The Bagratunis originate from the god Angel, while the Artsrunis from the King Sennacherib of Assyria, who, being the second eponym of the city of Angel, may be regarded as the epic version of the god Angel. The legendary eponyms of the Eruanduni and Slkuni families are described by the word *džneay* ‘fierce’ (referring to the glance), which in myths is presented as a characteristic of the god Angel. This shows that they also share the same origin. It is likely that all these princely houses constituted the branches of the royal Eruanduni dynasty (C. Tumanoff). Accordingly, the origin from the god Angel was, in all probability, initially attributed to the Eruandunis.

⁴² C. Tumanoff, *Studies in Christian Caucasian History*, Georgetown, 1963, p. 294 ff; 298 ff. գրականության:

АРМЕН ПЕТРОСЯН
ПРОИСХОЖДЕНИЕ НЕКОТОРЫХ ЗНАМЕНИТЫХ АРМЯНСКИХ
РОДОВ ПО ЛЕГЕНДАРНЫМ ДАННЫМ

Ключевые слова: Бог Ангех, Турк Ангехский, Михр, династийная сага, Ервандуни, Багратуни, Арцруни, Гнуни, Слкуни.

В статье рассматриваются легенды о происхождении некоторых древнеармянских царских и княжеских семей: Ервандуни, Багратуни, Арцруни и Слкуни. Багратуни возводятся к богу Ангеху, Арцруни к царю Сеннахерибу Ассирийскому, который, в свою очередь, как второй эпоним города Ангеха, может рассматриваться как эпическая версия бога Ангеха. Легендарные эпонимы родов Ервандуни и Слкуни описываются словом *džneau* «свирепые» (имеется в виду взгляд), что в мифах выступает как характеристика бога Ангеха. Это показывает, что им приписывалось то же происхождение. Вполне вероятно, что все эти княжеские дома составляли ветви царской династии Ервандуни (К. Туманов). Соответственно, происхождение от бога Ангеха скорее всего первоначально относилось к Ервандуни.

ԱՐԿԱԴԻ ԱԿՈՊՈՎ

ԿԻՍԿԻՄԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՅ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 30-70-ԱԿԱՆ ԹԹ.¹

Քանալի բառեր՝ ճորոխ, գավառ, գյուղեր, բնակչություն, Տայք, կեսկեսներ, հայ կաթոլիկներ, մահմեդականներ, վիճակագրություն:

Կիսկիմի գավառը տեղագրվում է պատմական Մեծ Հայքի Տայք աշխարհի Արսեաց փոքր գավառի հարավային և կենտրոնական շրջաններում: Գավառն ընկած էր ճորոխի ափերին և հանդիսանում էր «...յետին սահմանք Հայոց ընդ արևմտեանն հիւսիս և սահմանակիցք Պոնտոսի...»²: Կիսկիմի սահմաններն արևմուտքում հասնում էին մինչև Սպերի հովիտ, հարավում և հարավ-արևելքում՝ Թորթում, հյուսիսում և հյուսիս-արևմուտքում՝ «Պարխար լեռինք անջրպետեն ընդ Համշէն յարեւմուտս հյուսիսոյ»³:

XVI դարի վերջերից մինչև 1828-1829 թթ. ուս-թուրքական պատերազմը Կիսկիմի գավառը գտնվում էր Օսմանյան կայսրության Ախալցխայի նահանգի (էյալեթ) կազմում: 1831 թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած վարչական փոփոխությունների արդյունքում Կիսկիմի գավառն ընդգրկվեց էրզրումի նահանգի նույնանուն սանջակի կազմի մեջ⁴ իբրև կազա (գավառակ): Համաձայն ֆրանսիացի արևելագետ Վ. Կյուլինեի՝ XIX դ. II կեսին այն բաժանված էր 12 գյուղախմբի⁵ (նահիե), ուր հաշվվում էր 61 գյուղ⁶, որոնց ստվար մասն իրականում ամառանոցներ ու ձմեռանոցներ էին:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 16YR-6A035 ծածկագրով «Տայքը 1830-1878 թթ. (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» գիտական թեմայի շրջանակներում:

² Վ. Ալիշան, *Տեղագիր Հայոց մեծաց*, Վենետիկ, 1856, էջ 38:

³ Վ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 39:

⁴ K. Karpat, *Ottoman Population, 1830–1914. Demographic and Social Characteristics* (= Turkish and Ottoman Studies), Madison: University of Wisconsin Press, 1985, p. 14. Վարչական այսպիսի բաժանումը երկարաժամկետ չի լինում, իսկ էրզրումի նահանգը XIX դ. ընթացքում պարբերաբար ենթարկվում է վարչական վերաբաժանումների:

⁵ Նա հայտնում է 12 գյուղախմբերի մասին, սակայն թվարկում է դրանցից միայն 6-ը՝ Խոտորչուրի, Որչնհաղի, Հունգամեֆի, Բերդագրակի, Արսիսի և Վակուֆի գյուղախմբերը: Sté V. Guinet, *La Turquie d'Asie : géographie administrative, statistique, descriptive et raisonnée de chaque province de l'Asie-Mineure*, tome premier, Paris, 1892, p. 134:

⁶ V. Guinet, նշվ. աշխ., էջ 205:

Գավառի վարչական կենտրոնը սկզբնապես Կիսկիմ գյուղն էր: Հետագայում թուրքերը վարչական մարմինները տեղափոխեցին ոչ հեռու գտնվող Արսիս (էրսիս) գյուղ՝ այն պարզ պատճառով, որ այն ավելի մեծ թվով մահմեդական բնակչություն ուներ⁷:

Կիսկիմի գավառի գյուղերը տեղաբաշխված էին ճորոխի երկայնքով: XIX դ. կեսերին Առնոդ Ալիշանը հետևյալ կերպ է նկարագրում գավառը. «Բերդագրակ եւ Կիսկիմ. սա յաջմէ կայ ճորոխի մերձ ի սահմանս Թորթումայ. եւ մերձ նմին Արսիս, որ թուի գլխաւոր տեղի Արսեացիոր գաւառի Տայոց. իսկ Բերդագրակ յահեկէ գետոյն ի հիւսիսոյ Արսեաց. որոց մերձ է Օշնախ կամ Որջնհաղ գիւղ...: Կուտրաշէն, Կարմիրք հայաբնակ գէօղք, ի յետնումն բնակեն Հոովմէական Հայք, վասն որոյ եւ Ֆռենկ քէօյի կոչի: Բազմութիւն Հոովմէական Հայոց բնակէ եւ յարեւմտից Բերդագրակայ ի հոտորջուր կամ հոտուջուր վիճակի յեօթն կամ յութ գիւղից գումարելոյ...»⁸:

1843-1844 թթ. տարածաշրջան այցելած գերմանացի ճանապարհորդ Կ. Կոխի նկարագրությամբ, Կիսկիմի գավառն ուներ 20 գյուղ՝ Կարմիրք (Կարմենիկ), Կուզրաշեն, Նիխաղ, Որջնհաղ, Ջորկանց, Կիսկիմ, Արսիս, Ջոշեք (Կոշեք) և Քոլիկ գյուղերը ճորոխի աջ ափին, Քամրուտ, Կիցփորուտ, Դյորթքիլիսա, Գուռնառ, Բերդագրակ, Հունգամեք, Իցաձոր, Վերին և Ստորին Մոխուրկուտներ, Խևակ գյուղերն ու հոտորջրի գյուղախումբը՝ ձախ ափին⁹:

Կիսկիմի գավառի էթնոկրոնական պատկերին անդրադառնալով Հ. Տաշյանը նշում է, որ XIX դ. կեսերին հոտորջուրի հետ մեկտեղ գավառի գյուղերից զուտ հայաբնակ էին Կարմիրքը, Կուզրաշենը և Ծետկունցը: Մոխուրկուտներն ունեին միայն մի փոքր մահմեդական թաղ: Մի շարք գյուղեր խառը բնակչություն ունեին՝ հայ-քրիստոնյա և կեսկես¹⁰: Խոսքն առաջին հերթին Բերդագրակ, Նիխաղ, Որջնհաղ, Կիսկիմ, Փրթիկներ և Արսիս գյուղերի մասին է: Մյուսները (Կիցփորուտ, Իցաձոր, Հունգամեք, Քոլիկ, Գուռնար, Սալորջուր, Ջորկանց, Լազուգետ և այլն) դժբախտաբար լիովին մահմեդականացած էին¹¹:

⁷ **Յ. Տաշեան**, Հայ բնակչությունը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, էջ 53:

⁸ **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 39:

⁹ **K. Koch**, *Wanderungen Im Oriente Während Der Jahre 1843 Und 1844. Reise Im Pontischen Gebirge Und Türkischen Armenien*, Weimar, 1846, S. 76. Խևակ գյուղը, որը կազմված էր 5 թաղից և ուներ 1000-1200 հոգի բնակչություն, Կ. Կոխը սխալմամբ վերագրում էր Կիսկիմի գավառին: Տե՛ս **K. Koch**, նշվ. աշխ., էջ 98:

¹⁰ Կեսկեսներն այն հայերն էին, որոնք օսմանյան իշխանությունների սպառնալիքի տակ էին ընդունել իսլամը: Նրանք պաշտոնական վիճակագրություններում հորջորջվում էին «թուրք», «լազ» կամ պարզապես «մահմեդական», սակայն պահպանել էին հայկական բազմաթիվ սովորույթներ: Տե՛ս **Ս. Ակոպով**, «Թորթումի գավառի վարչաժողովրդագրական պատկերը (XVI դ. - XVII դ. I կես)», *ՔՄ* 23, 2016, էջ 167:

¹¹ **Յ. Տաշեան**, Հայ բնակչությունը Սեւ ծովէն մինչեւ Կարին, էջ 56:

1843 թ. այստեղ այցելած Կ. Կոխին Կիսկիմի գավառատեր Դուրախ-Ալի բեգը պատմել է, թե գավառի մահմեդականները մինչև XVIII դ. վերջերը քրիստոնյա էին: Գավառի հայ իշխանը սպանվել էր «հավատի համար մղված կռվում»: Նրա որդին Կ. Պոլսում մահմեդական կրթություն էր ստացել և վերադարձել հայրենի իշխանություն: Գավառի բնակչության մահմեդականացումը սկսվում է կոտորածով, ինչպես ամեն տեղ, ուր ներմուծվելու էր Մուհամեդի վարդապետությունը¹²: XIX դ. սկզբին այդ մասին էր վկայում նաև Ղ. Ինճիճյանը. «...բնակիչը նոցա առհասարակ էին յազգէս Հայոց, այլ ապա ըստ մեծի մասին դարձան ի տաճկութիւն. և սակաւ մնացին ի քրիստոնէից»¹³:

Ըստ Ատրպետի՝ կրոնի և լեզվի փոփոխությունը տայեցի հայի համար տարազի նման են եղել. հետևել է իշխողներին: Ոչ մի կրոն այստեղ չի հիմնավորվել, այլ միմիայն հպատակության ձև է եղել: Կրոնական համոզմունքներն ու հավատալիքները չեն քարացել կամ ամրացել Կիսկիմում, այլ ծիսականության ձևեր են դարձել: Իսլամացած թրքախոս ժողովուրդն ավելի շատ ջրապաշտ էր ու արևապաշտ, «աւելի մեծ յարգանք է տալիս սրանց պարարտացրած եւ կենդանացրած հողին, քան թէ Ղուրանի պատուիրաններին»¹⁴: Հայության մեջ իսլամի տարածվելուն ավելի շատ նպաստում էր «Ղուրանի աշարը (տասնորդական հարկը), քան թէ Մահմեդի խոստացած դրախտի մշտնջենական խրախճանքը»¹⁵:

XIX դ. կեսերին իրավիճակն ավելի վատթարացավ: Ըստ Կ. Կոխի գավառում հայերն անխառն բնակվում էին միայն խոտորջրում, Կուզրաշենում և Կարմիրքում, մինչդեռ մյուս գյուղերում հայերն ապրում էին մահմեդականների հետ խառը¹⁶: Հայաշատ էին նաև Կիսկիմը, Նիխաղը, Փրթիկները և Բերդագրակը¹⁷:

Այն, որ Կիսկիմի գավառի մահմեդական ազգաբնակչությունը գերազանցապես կրոնափոխված հայեր էին, երևում է այն իրողությունից, որ նրանք ծանոթ էին հայկական տեղանուններին, այդ թվում մահմեդական գյուղերի, նրանց գյուղամասերի և թաղերի անվանումներին: Հայկական էին նաև աշխարհագրական օբյեկտների անվանումները: Օտարականին կարող էր թվալ, թե երկրի մեծ մասը թրքախոս է: Սակայն հայ մահմեդականը, հատկապես հա-

¹² К. Koch, նշվ. աշխ., էջ 75:

¹³ Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մաս Ա, հ. Ա, Ասիա, Վենետիկ, 1806, էջ 132:

¹⁴ Ատրպետ, Ճորոխի աւազանը, Վիեննա, 1929, էջ 117:

¹⁵ Նույն տեղում, էջ 118:

¹⁶ К. Koch, նշվ. աշխ., էջ 81, 59:

¹⁷ Տէ՛ս Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի քանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Գ. Սրվանձաթյանի ֆոնդը, գ. 23, ք. 12, Ա.ՊՌ, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 199, А. Ерицов, «Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном управлении России,» *Известия Кавказского отдела императорского русского географического общества*, т. 8, Тифлис, 1884-85. Дополнения, с. 84:

միդյան միին շրջանում, ստիպված էր «խորշիլ հայութեան արտաքին երեւոյթներէն» և չհալածվելու համար թուրքերեն խոսել¹⁸: Գավառի մահմեդականները խիստ տարբերվում էին իրենց թուրք կրոնակիցներից: Նրանք լինելով կեսկեսներ՝ խոսում կամ լիովին հասկանում էին հայերեն, շունեին խիստ մահմեդական սովորություններ և բարեկամական հարաբերությունների մեջ էին հայության հետ¹⁹:

Կիսկիմի գավառի հայաշատ բնակավայրերի բնակչության թվաքանակի վերաբերյալ Հ. Տաշյանն իրավացիորեն նշում է, որ գյուղացիները, հատկապես մահմեդականները, բնավ չէին հետաքրքրվում իրենց թվաքանակով հարցնողներին շատ հաճախ պատասխանելով Աստված գիտի: Շատ էին դեպքերը, երբ նրանք գիտեին որևէ մի թիվ, որը պարբերաբար կրկնում էին, այնինչ իրական թվերը կարող էին բավականին փոփոխված լինել²⁰:

Կիսկիմը Տայքի մյուս գավառների համեմատությամբ ամենաշատ քրիստոնյա բնակչություն ուներ շնորհիվ հոտորչորի գյուղախմբի և նրա հարակից հայկական գյուղերի, որոնք «քրիստոնեայ ովասիս մը կը կազմեն»²¹: Բացի մասնավոր դրսևորումներից, գավառի հայությունը շատ քիչ էր մասնակցել 1830 թ. վերաբնակեցմանը: Էրզրումի հայ կաթոլիկների հոգևոր առաջնորդ եփրեմ Սեթի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ գաղթի ճանապարհին հայ կաթոլիկներին ուղեկցում էին խոտորչուրցի քահանաները, որոնք սակայն «թողին նոքա և մեկնեցան ի գաւառ իւրեանց»²²:

Գավառի բնակչության թվաքանակի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների ենք հանդիպում Գ. Սրվանձտյանի 1878 թ. կազմած վիճակագրություններում, որտեղ տրված էր գավառի բնակավայրերի նկարագիրը՝ ծխերի թիվը, հայ և օտարազգի բնակչության թվաքանակը, նյութական միջոցները, կրթօջախները, գրանց հասույթը, սովորողների թիվը և այլն: Այսպես, ըստ Սրվանձտյանի՝ 1878 թ. գավառի բնակչության թիվը հասնում էր 13440-ի, որից «... ի Կիսկիմ հայք են 8350, թուրք են 5000, հույնք՝ 90»²³: Կիսկիմի

¹⁸ Յ. Տաշյան, Հայ բնակչությունը Սեւ ծովէն մինչեւ Կարին, էջ 79:

¹⁹ Յ. Տաշյան, Տայք, գրացիք և հոտորչուր, հ. Բ, Վիեննա, 1980, էջ 290:

²⁰ Նույն աղբյուր, էջ 219: Այս առումով լավագույն օրինակ է Խաչի գյուղը, որի բնակչության թիվը թե՛ XVIII դ. վերջերին, թե՛ 1843 թ. և թե՛ 1878 թ. «կազմել է» 200 տուն:

²¹ Յ. Տաշյան, Տայք, գրացիք և հոտորչուր, հ. Բ, էջ 275: Ըստ Վ. Կյուլինեի՝ XIX դ. վերջերին Կիսկիմի կազայում կար 2 առաքելական և 10 կաթոլիկ հայկական դպրոց, այնինչ մահմեդականների դպրոցների թիվն ընդամենը 5-ն էր: Տե՛ս V. Cuinet, նշվ. աշխ., էջ 206:

²² Մ. Կարապետյան, «Եփրեմ Սեթը արևմտահայության 1829-1830 թթ. գաղթի մասին», ՊԲՀ, 1997, N 2, էջ 290:

²³ Է. Կոստանդյան, «Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերի վերաբերյալ Գ. Սրվանձտյանի կազմած վիճակագրություններից», Բանբեր Հայաստանի արխիվների, 1976, № 2, էջ 87:

առանձին գյուղերի բնակչության թվաքանակի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում նաև Կ. Կոխը և Ա. Երիցյանը:

Հայաշատ էր գավառի կենտրոն Կիսկիմը: 1878 թ. հայության թիվը կազմում էր 41 տուն՝ 400 բնակչով, այնինչ թուրքերն ընդամենը 50-ն էին: Գյուղում գործում էր Հայկազյան վարժարանը, որն ուներ 50 սան²⁴: Կիսկիմից ոչ հեռու գտնվող Նիխաղում ևս Սրվանձտյանը հիշատակում է հայերի՝ 15 տնով և 135 բնակիչներով: Գյուղի Փրկչյան վարժարանն ուներ 17 աշակերտ²⁵:

Գավառի հայախառը բնակչություն ունեցող գյուղերից էր Որջնհաղը: Այն XVIII դ. վերջին մահմեդականացել էր, սակայն 1830-ականներին 42 ընտանիք կարմիրքցիներ հաստատվել էին այնտեղ և եկեղեցի կառուցել²⁶:

Գավառի հայաբնակ բնակավայրերի շարքում Ա. Երիցյանը թվարկում է Արսիսը, Կոչեքը և Բերդագրակը: Այս գյուղերում հայերի հետ խառը բնակվում էին թուրքեր և լազեր: 1872 թ. տվյալներով Արսիսում կար 28 տուն (224 մարդ), Կոչեքում՝ 13 տուն (մոտ 104 մարդ), իսկ Բերդագրակում՝ 39 տուն (312 մարդ) հայ²⁷:

Կիսկիմի գավառի հայկական բնակավայրերից Վերին և Ստորին (Վարի) Մոխուրկուտները, որոնք թեև բոլոր կողմերից պատկանում էին Խոտորչրի գյուղախմբին, սակայն նրանից բաժանված էին Երանավող լեռով: Կաթոլիկ մոխուրկուտցիները խոսում էին Խոտորչուրի բարբառով: Ըստ Տաշյանի՝ Մոխուրկուտները կազմված էին 3 գյուղերից կամ թաղերից: Դրանք էին Վերին Մոխուրկուտը, Գորգանցը և Վարի Մոխուրկուտը²⁸: Վերջինում բնակվել են 30 տուն մահմեդականներ, որի համար Կ. Կոխը Մոխուրկուտն անվանում էր խառը բնակչություն ունեցող գյուղ՝ բաղկացած 200 տնից²⁹ (մոտ 1600 մարդ): Հետաքրքիր է այն, որ Ղ. Ինճիճյանն այս գյուղի բնակիչների թվում չի հիշատակում մահմեդականների, ուստի նրանց հաստատվելը Մոխուրկուտում անմիջապես կապվում է 1830 թ. արևմտահայության վերաբնակեցման հետ, երբ հեռացած հայության փոխարեն մահմեդականներ հաստատվեցին այստեղ: Վերջիններս հաստատվել էին նաև Վերին Մոխուրկուտում, սակայն մի քանի տարվա ընթացքում մոխուրկուտցիները ձեռք են բերում նրանց տներն ու հո-

²⁴ Նույն տեղում, էջ 85:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Յ. Տաշեան, *Տայք, դրացիք և Խոտորչուր*, հ. Բ, էջ 83:

²⁷ А. Ерицов, նշվ. աշխ., էջ 84: Բերդագրակի մասին խոսելիս Ա. Երիցյանը նշում է, որ գյուղի մահմեդականների շատերը կրում են հայկական անուններ՝ Խաչատուր, Կարապետ, Սերոբ և այլն:

²⁸ Յ. Տաշեան, *Տայք, դրացիք և Խոտորչուր*, հ. Բ, էջ 286:

²⁹ К. Koch, նշվ. աշխ., էջ 81.

ղերը, որից հետո մահմեդականներն ստիպված էին հեռանալ գյուղից³⁰: Կ. Կոխի այցելության ժամանակ՝ 1843-1844 թթ., մահմեդական թաղ ուներ միայն Վարի Մոխուրկուտը: Ըստ Գ. Սրվանձադյանի վիճակագրության՝ 1878 թ. Վերին Մոխուրկուտն ուներ 40 տուն (300 հոգի), իսկ Վարի Մոխուրկուտը՝ 15 տուն (100 հոգի)³¹: Բնակչության թվի անկումը, մեր կարծիքով, կապված է 1870-ական թթ. Կիսկիմի գավառում Շարիֆօղլի Հուսեյն բեգի, Թուլլօղլի Դուրսուն բեգի և Կակալօղլու ավագակային խմբերի լայն թափ ստացած գործունեության հետ³², որոնցից խուսափելով, մոխուրկուտցիները կամ ապաստան էին գտնում հարևան հոտորջուրում, կամ էլ հեռանում էրզրում:

Մոխուրկուտից հարավ Ճորոխի աջ ափին էին գտնվում հայկական Ծետկունց, Կուզրաշեն և Կարմիրք կաթոլիկաբնակ գյուղերը: Կ. Կոխի հաղորդմամբ՝ Կարմիրքը «Ֆիրենգի» գյուղ էր, ինչը ենթադրում է վերջինիս հայ կաթոլիկ լինելը³³: Գյուղն ուներ 2 եկեղեցի՝ Սբ Հայր Հովսեփի և Սբ Աստվածածին³⁴: 1878 թ. Կարմիրքում կար 150 տուն՝ 1200 հոգի բնակչությամբ³⁵: Ինչ վերաբերում է Կուզրաշենին, եթե 1843 թ. Կ. Կոխն այն հիշատակում է որպես 100 տնից (մոտ 800 բնակիչ) բաղկացած զուտ հայկական գյուղ³⁶, ապա 1878 թ. վիճակագրության համաձայն՝ նրա բնակչության թիվը նվազել էր մեկ երրորդով և կազմում էր ընդամենը 66 տուն (650 բնակիչ)³⁷: Կուզրաշենի Լուսավորչան վարժարանում ուսանում էր 60 աշակերտ³⁸: Ի տարբերություն Կուզրաշենի և Կարմիրքի՝ Ծետկունցն ավելի փոքր գյուղ էր, որը XIX դ. կեսերին ուներ ընդամենը 15 տուն (մոտ 120 բնակիչ). «սեպհական քահանայ չըլլալով՝ մերձակայ Կարմիրքէ կը հոգացուի»: Բնակիչները խնամիական կապերով կապված էին կարմիրքցիների հետ³⁹:

Ճորոխի ձախ ափին Կիսկիմի գավառը հասնում էր մինչև հոտորջուր կոչվող գյուղախումբը⁴⁰: Այն բաղկացած էր ինը հիմնական գյուղերից՝ Ճիճապաղ,

³⁰ Զ. Տաշեան, *Տայք, գրացիք և հոտորջուր*, հ. Բ, էջ 288:

³¹ Տե՛ս է. Կոստանդյան, նշվ. աշխ., էջ 85:

³² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1407, ց. 2, գ. 17, ք. 2:

³³ K. Koch, նշվ. աշխ., էջ 57-58:

³⁴ Ս. Էփրիկյան, *Պատկերագրող բնաշխարհիկ բառարան*, հ. Բ, Վենետիկ, 1907, էջ 332:

³⁵ Տե՛ս է. Կոստանդյան, նշվ. աշխ., էջ 85:

³⁶ K. Koch, նշվ. աշխ., էջ 59:

³⁷ Տե՛ս է. Կոստանդյան, նշվ. աշխ., էջ 85: Կուզրաշենի բնակչությունը 19-րդ դ. ընթացքում անընդհատ նվազել է: 1843 թ. 100 տնից 1878 թ. իջել է 66-ի, իսկ 19-րդ դարավերջին՝ 40-ի: Տե՛ս Ա. Դո, նշվ. աշխ., էջ 199:

³⁸ Տե՛ս է. Կոստանդյան, նշվ. աշխ., էջ 85:

³⁹ Զ. Տաշեան, *Տայք, գրացիք և հոտորջուր*, հ. Բ, էջ 292:

⁴⁰ հոտորջուրի տարածքը մինչև VIII դարը պատկանել է Մամիկոնյաններին, այնուհետև՝ Բագրատունիներին, իսկ XIII-XVI դարերում ընդգրկված է եղել Սամցխեի արաբեկության

Կրման, Կիսակ, Միջինթաղ, Խնդածոր, Սունինց, Կախմուխուտ, Վահնա, Քեղուտ-Յուցուլա և երկու փոքր թաղամասերից՝ Արեգի և Մասրուտ: Գյուղախմբին էին պատկանում նաև 33 բարեշեն ամառանոցները և 10 ձմեռանոցները⁴¹:

Երբ Օսմանյան կայսրությունը ձեռնամուխ եղավ իսլամացնելու Ճորոխի հովիտը, խոտորչուրը կարողացավ դիմադրել, որով երկար տարիներ նորադարձ մահմեդականների համար դարձավ մի տեսակ փարոս, հույս և ապավեն: Տևական ժամանակ կեսկեսները չէին խզում քրիստոնեության հետ հոգևոր կապը և գաղտնի գալիս էին խոտորչուր՝ ծեսեր կատարելու: Ինչպես խոտորչուրցին էր ասում. «Նրանց մի ոտքը ժամի մեջ էր, մյուսը՝ ջամին (մզկիթ) էր մտել»⁴²:

խոտորչուրի վարչական և հոգևոր ղեկավարները միշտ եղել են ընտրովի և անպայման խոտորչուրցի: Ճիճապաղ գյուղի Ֆենդա թաղամասի մոտ մի հատուկ տեղ հատկացված էր ժողովների համար: Այն կոչվում էր ժողովայտ: Ընդհանուր ժողովը համարվում էր խոտորչուրի համայնքի գերագույն մարմինը⁴³: Ընդհանուր ժողովում քննության էին առնվում բուն խոտորչուրի 9 գյուղերին վերաբերող համաժողովրդական, առավել կարևոր հարցերը:

խոտորչուրի բնակչության թվի վերաբերյալ կան տարբեր վկայություններ: Կ. Կոխը որևէ տվյալ չի հաղորդում, քանի որ նրան և նրան ուղեկցող թուրք պաշտոնյաներին հայերը թույլ չեն տվել մտնել խոտորչուր: XIX դ. կեսերին գյուղախմբի բնակչության թվի վերաբերյալ Ղևոնդ Ալիշանը հետևյալ տեղեկությունն է հայտնում. «400 տունք եւ 2000 կամ ավելի ոգիք»⁴⁴: Երեք տասնամյակ անց՝ 1878 թ., Գ. Սրվանձտյանը, որն անձամբ շրջել է գավառակում և վիճակագրական տեղեկություններ հավաքել, այլ տեղեկություններ է հաղորդում: Այսպես, ըստ Սրվանձտյանի՝ խոտորչուրում 1878 թ. ընդհանուր առմամբ կար 642 տուն՝ 5650 բնակչով, որից գյուղախմբի կենտրոն Ճիճապաղ գյուղն

կազմի մեջ: Ղ. Ինճիեյանն այսպես է նկարագրում խոտորչուրը. «Յրտուի օդոյ սրա ի լեռնային վայրս, գրեթէ նման է գաւառին Էրզրոումայ. իսկ ի ձորավայրս առաւել ջերմ է քան գնորայն: Երկիրն լեռնային և ապառաժուտ, ունի և ձոր բազում և լեռինս հողայինս, յորս բազում աղբերակունմ գտանին քաղցր և պատուական ջուրց. այլ և խոտաւէտ արօտս անասնոց. ի տեղիս տեղիս ունի և անաստ զանազան ծառոց: Բաց ի Հայոց օտար ազգ ոչ գտանի ի խոտրչուր...»: Տե՛ս Ղ. Ինճիեյան, նշվ. աշխ., էջ 133:

⁴¹ Տե՛ս Թ. Գևորգյան, «խոտորչուր», ԲԵՀ, 1971, № 3, էջ 205:

⁴² ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 24, ք. 4:

⁴³ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 22, ք. 1-3: խոտորչուրի կառավարչական գործառույթներն իրականացնելու համար ժողովայտն ընտրում էր մի հոգևորականի, որին անվանում էին «մեծավոր», իսկ թուրքերը՝ «մուրախաս»: Մեծավորն անպայման պիտի լիներ հոգևորական, քանի որ ոչ մահմեդական ազգային փոքրամասնությունները համարվում էին կրոնական համայնքներ, իսկ կրոնական առաջնորդը՝ նրանց օրինական ներկայացուցիչը: Մեծավորի աշխարհիկ իշխանությունը սահմանափակվում էր միայն ժողովայտով, իսկ կրոնական-ղեկական հարցերում Կարնո հայ կաթոլիկների առաջնորդով:

⁴⁴ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 39:

ուներ 95 տուն՝ 830 բնակչով, Կրմանը՝ 60 տուն 450 բնակչով, Քեղուտը՝ 75 տուն 750 բնակչով, Խնդաձորը՝ 96 տուն 800 բնակչով, Սունինցը 82 տուն՝ 770 բնակչով, Կախմուխուտը՝ 80 տուն 770 բնակչով, Վահնան՝ 30 տուն 230 բնակչով, Կիսակը՝ 41 տուն 350 բնակչով, Միջինթաղը՝ 63 տուն 550 բնակչով, Արեգինը 20 տուն՝ 150 բնակչով⁴⁵: Մեր կարծիքով հոտորչրի վերաբերյալ Ղևոնդ Ալիշանի տվյալներից կասկածելի է հատկապես բնակչության թվի մասին տեղեկությունը: Դժվար է պատկերացնել, որ 30 տարիների ընթացքում գյուղխմբի բնակչության թիվն ավելանար մոտ 200 %-ով: Չնայած հոտորչրի Մեծավոր Տեր-Կարապետ Ա Չախալյանին հաջողվել էր մինչև 1840 թ. շոշափելի առավելության հասնել ավազակապետեր Կիսլանչու, Կրճելի, Ղարադերելի, Օնբաշու նկատմամբ և 1840-1860-ական թթ. հոտորչրի բնակչության համար բարենպաստ պայմաններ ապահովել⁴⁶:

Իրենց կենցաղով խոտորչուրցիները շատ ավելի բարձր էին կանգնած, քան նրանց շրջապատող գյուղերի բնակիչները, չնայած այն հանգամանքին, որ հոտորչրի հողը հագիվ կբավարարեր 200 տուն բնակչությանը գյուղական հանգիստ կյանք վարելու համար, ուստի գրեթե բոլոր խոտորչուրցի տղամարդիկ, պատանեկությունից սկսած մինչև ծերություն, կյանքի մեծագույն մասն անցկացնում էին պանդխտության մեջ⁴⁷:

Խոտորչուրը նշանակալի դեր է խաղացել նաև հարևան մահմեդական գյուղերի քաղաքական և մշակութային կյանքում: Տեղին է հիշել, որ Կիսկիմի գավառի միակ թուրքական դպրոցը կառուցված էր խոտորչուրցիների ծախսերով: Կիսկիմի գավառի փաստացի կենտրոն Արսիա խմելու ջուր բերելու համար էլ տեղացիները դիմել էին հոտորչրի նյութական օգնությանը⁴⁸:

Այսպիսով, համադրելով մեր ձեռքի տակ եղած նյութերը՝ կարող ենք փաստել, որ 1830-1870-ական թթ. Կիսկիմի գավառում կար ավելի քան 1100 տուն հայ (շուրջ 9800 մարդ), որոնք զբաղված էին խաղաղ և ստեղծագործ աշխատանքով:

⁴⁵ Տե՛ս է. Կոստանդյան, նշվ. աշխ., էջ 85:

⁴⁶ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 2, գ. 17, ք. 2:

⁴⁷ «Տեղագրութիւն Խոտորչոյ», Քաղմավէպ, Վենետիկ, 1875, հ. 19, էջ 334:

⁴⁸ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 24, ք. 3:

Հավելված
Կիսկիմի գավառի հայ բնակչությունը 1878 թ.

Բնակավայրը	Ծխերի թիվը	Բնակչության թիվը	№	Բնակավայրը	Ծխերի թիվը	Բնակչության թիվը
Խոտորչրի գյուղախումբ	642	5650	8	Նիխաղ	15	135
Կարմիրք	150	1200	9	Որջնաղ	42	336
Կոտրաշեն	66	650	10	Փրթիկներ	30	240
Ծեռկունց	15	120	11	Ա.սսիս	28	224
Վերին Մոխուրկուտ	40	300	12	Կոչեֆ	13	104
Վարի Մոխուրկուտ	15	100	13	Բերդագրակ	39	312
Կիսկիմ	41	400		Ընդամենը	1136	9771

АРКАДИЙ АКОПОВ
АРМЯНСКОЕ НАСЕЛЕНИЕ КИСКИМСКОЙ ОБЛАСТИ В
30-70-Х ГГ. XIX ВЕКА

Ключевые слова: Чорох, область, селения, население, Тайк, “кескесы”, армяне-католики, мусульмане, статистика.

В 1831 г. в Османской империи произошли административные перемены, в результате которых одна из провинций исторической Армении – Тайк, полностью вошла в состав Эрзурумского эялета. Среди тайкских регионов самой армянозаселенной стала Кискимская каза (область), которая располагалась в бассейне реки Чорох. Известными армянскими селениями Кискимской казы являлись Верхний и Нижний Мохуркуты, Кармирк, Цеткунц, Кудрашен, а также Хоторджурская община.

В середине XIX в. состояние армян Кискимской казы ухудшалось. Согласно К. Коху, только два армяно-католических селения – Кармирк и Хоторджур, были полностью заселены армянами, а в остальных селениях армяне проживали рядом с мусульманами. Согласно историческим источникам и архивным материалам, во второй половине XIX века в Кискимской казе проживало более 1100 дворов армян с населением 9800 человек.

ARKADI AKOPOV

**THE ARMENIAN POPULATION OF THE KISKIM DISTRICT IN THE
1830s-70s**

Keywords: Chorokh, district, villages, population, Tayk, “keskeses”, Armenian Catholics, Muslims, statistics.

In 1831, the Ottoman Empire implemented administrative changes, as a result of which, Tayk, one of the provinces of historical Armenia, became a part of the Erzurum Eyalet. Among the regions of Tayk, the Kaza (district) of Kiskim, located in the basin of the Chorokh River, had the largest Armenian population. The most famous Armenian villages of the Kiskim district were Upper and Lower Mohurkuts, Karmirk, Tsetkunts, Tandzut, Kudrashen, as well as the Khotorjour community.

In the mid-19th century, the living conditions of the Armenians of Kiskim worsened. According to K. Koch, only two Armenian-Catholic villages, Karmirk and Khotorjour, were completely inhabited by Armenians, while in the rest of the villages Armenians lived alongside Muslims. According to historical sources and archival documents, in the second half of the 19th century, there were more than 1100 Armenian households made up of some 9800 Armenians in the district of Kiskim.

ՎԵՆԵՐԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՐԻԱՅԻՒ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XVI-XVIII ԴԴ.)

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, սիրիահայություն, համայնք, թուրք, արաբ, քրիստոնյա, իսլամ, իսլամական օրենսդրություն, ռայա, զիմմի:

Մինչև XVI դարի սկիզբը Օսմանյան կայսրությունը մուսուլմանական պետություն էր՝ ոչ մեծ թվով մուսուլման բնակչությամբ: Հատկապես Բալկանների նվաճումից հետո կայսրության բնակչության մեծամասնությունը քրիստոնյաներ էին, և միայն Արաբական երկրների նվաճումից հետո, քրիստոնյա և մուսուլման բնակչության թվականակի հավասարակշռություն ստեղծվեց:

Օսմանյան կայսրության ռազմական բնույթն ինքնին ապացուցում է, որ նրա հիմնական գործառույթը պատերազմն էր, և դրա հետևանքով ձեռք բերված տարածքները «ծածկելը», այլ ոչ թե իր ժողովրդի բարեկեցությունը²: Իսկ օսմանյի ժողովուրդները «դաստիարակված» էին հետաքրքիր մի հոգեբանությամբ. սուլթանների անունների հետ «արդար» և «բարեգուլթ» մակդիրների մշտական գործածումն, ինքնին «պարտավորեցնում» էր նրանց. բնակչության մեջ արմատացրել էր այն համոզմունքը, որ սուլթանների հիմնական պարտականությունը արդարության և արդարադատության իրականացումն է: Դա էլ իր հերթին, պարտավորեցնում էր հպատակներից յուրաքանչյուրին պահպանել հասարակական կարգը և ճանաչել իր տեղը սոցիալական որոշակի խմբում³:

¹ Պատմաաշխարհագրական կամ պատմական Սիրիա ասելով (Բիլադ ալ-Շամ), բացի այսօրվա Սիրիայից, ի նկատի ունենմ ժամանակակից Պաղեստինի որոշ հատվածներ, ներկայիս Իսրայելի տարածքը և Հորդանանի մի մասը, ինչպես նաև Լիբանանի լեռնային մասը, որն ավելի շատ հայտնի էր Լեռնայիքանան անունով, տե՛ս Ն. Հովհաննիսյան, *Արաբական երկրների պատմություն*, հ. 2, Զանգակ 97, Երևան, 2004, էջ 77: Այս մասին տե՛ս նաև Հ. Թովուզյան, *Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946)*, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1986, էջ 7, Գ. Գապայենեան, «Սուրիա», Փաղափական, կրոնա-պատմական, կրթական և տնտեսական տնտեսական տեսակետով, Ա.-Փաղափական», «Տաթև» կրօնական տարեցույց, Բ տարի, 1926, Հավելյա-Սուրիա, Տպագրություն «Արաբ»-Բ. Յ. Թովալեան (էջ 274-312), էջ 287:

² Ph. Hitti, *History of the Arabs*, 90 Tottenham Court Road, Printed in China, London, 2002, p. 716.

³ М. Мейер, «Новые явления в социально-политической жизни Османской империи во второй половине XVII-XVIII вв.», *Османская империя, система госу-*

Կայսրության հասարակությունը բաժանված էր երկու դասակարգերի: Առաջին՝ զինվորականների (ասկյարների) խումբ, որի մեջ էին մտնում սուլթանի իշխանությունը ներկայացնող անձինք՝ պալատականները, զինվորականները, աշխարհական պաշտոնյաները և հոգևորականությունը (ուլեմա), այսինքն՝ ոչ հարկատու «միասնական հողատերերը և բոլոր նյութական արժեքների տերերը»: Երկրորդ խումբը կազմված էր ռայաններից՝ ինչպես մուսուլման, այնպես էլ ոչ մուսուլման (զիմմի), որոնք անմիջական արտադրողներն ու հարկատուներն էին: Հարկատու բնակչությունն էլ իր հերթին բաժանվում էր մուսուլմանների և ոչ մուսուլմանների (զիմմի), քաղաքացիների և գյուղացիների, նստակյացների և քոչվորների⁴:

Կազմավորման առաջին օրվանից կայսրությունում ստեղծվել էին այնպիսի սոցիալական կարգեր, որտեղ առաջին սանդղակի վրա գտնվում էր թուրքը⁵, ապա մուսուլմաններն առհասարակ: Սակայն հստակ բաժանարար գիծ կար նաև թուրքի և այլ ազգության մուսուլմանի, օրինակ՝ թուրքի և արաբի միջև⁶:

Օսմանյան շրջանում ոչ մուսուլմանների իրավական նորմերի մշակման հարցում թերևս անկրկնելի է Շեյխուլիսլամ էբուսսուուզ էֆենդիի դերը (1545-1574 թթ.): Նրա ֆեթվաների հավաքածուն լավագույնս ներկայացնում էր օսմանյան օրենսդրությունը և շրջանառության մեջ մնաց նույնիսկ նրա մահից հետո: Այդ ֆեթվաները ներկայացնում էին կայսրության մուսուլմաններին, քրիստոնյաներին և հրեաներին առնչվող սոցիալական հարաբերությունները կարգավորող հստակ կարգերի մի ամբողջություն, որոնց հիմքում ընկած է համայնքային պահպանության և միջհամայնքային համերաշխության գլխավոր խնդիրը: Նրա համոզմամբ՝ «Համայնքները պետք է առանձնացված լինեն» և պահպանեն միջհամայնքային համերաշխությունը, այլապես այն կվերաճի բռնության, ոչ միայն մուսուլմանների և ոչ մուսուլմանների միջև, այլ նաև՝ քրիստոնյաների և հրեաների⁷: Ըստ նրա՝ կայսրության միջհամայնքային հարաբերություններում արդարության պահպանման համար պահանջվում էին սոցիա-

дарственного управления, социальные и этнорелигиозные проблемы, Сборник статей. Москва: Издательство “Наука”, главная редакция восточной литературы. Академия наук СССР, 1986 (с. 155-185), с. 156-157.

⁴ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 157-158, 160-162:

⁵ Դեռևս XVII դարում եվրոպացիները Օսմանյան կայսրությունը համարում էին «Թուրքական կայսրություն», իսկ նրա բնակչությունը կամ գոնե նրա մուսուլման բնակչությունը՝ «թուրք», տե՛ս **C. Imber**, *The Ottoman Empire, 1300-1650, the Structure of Power*, Printed and bound in Great Britain by Mackays of Chatham, Palgrave Macmillan, 2002, p. 1:

⁶ **Ph. Hitti**, նշվ. աշխ., էջ 716:

⁷ **B. Masters**, *Christians and Jews in the Ottoman Arab World*, Cambridge University Press, 2001, pp. 29-30.

լական հստակ կարգեր (ինչպես օրինակ՝ մուսուլմանը չպետք է խոսեր ոչ մուսուլմանի լեզվով, որոնք չէին խաթարի այդ համայնքների միջև բաժանումը⁸:

Մակայն պատմական Սիրիայի մուսուլման-ոչ մուսուլման միջհամայնքային հարաբերություններն այլ զարգացում ստացան կայսրության մյուս, մասնավորապես Արևմտյան Հայաստանի հետ համեմատ: Վերջինիս թուրք բնակչության կողմից հաղթող-նվաճողի ակնհայտ վերաբերմունք կար հպատակ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ, թեև, մասնավորապես արևմտահայության համար, այդ տարածքներն իրենց դարավոր հայրենիքն էին: Ուստի, այստեղ խորը ճեղք էր բացված քրիստոնյայի և թուրք մուսուլմանի միջև հարաբերություններում:

Պատմական Սիրիայում իրավիճակն այլ էր. թուրքերն իրենց մեծ տիրույթում իշխող փոքրամասնություն էին մնում և առհասարակ արաբական երկրներում մեծածավալ վերաբնակեցման ու ճնշող մեծամասնություն դառնալու ոչ մի փորձ չարեցին⁹: Թուրք բնակչության մի զանգված Սիրիայում հաստատվեց Սելիմ 1-ի հրամանով, մի մաս էլ հետագայում՝ որպես քաղաքացիական աշխատողներ և առևտրականներ¹⁰: Մակայն նրանց մեծամասնությունը բնակվում էր միայն այն քաղաքներում, որտեղ նրանք ունեին որոշակի զինված ուժեր¹¹:

Իսկ ինչ վերաբերում է տեղի մուսուլման արաբ բնակչությանը, ապա վերջիններս, թեև գտնվում էին իրենց հայրենիքում և որպես մուսուլման որոշակի առավելություններ ունեին տեղի ոչ մուսուլման բնակչության համեմատ, սակայն նրանք քրիստոնյա և հրեա համայնքների հետ, որպես օսմանահպատակ բախտակիցներ, հանդես էին գալիս ի հակակշիռ տեղի թուրք բնակչությանը: Այս մասին վկայում է նաև Ալ. Ռասսելը, որի հաղորդմամբ. «...Քրիստոնյաները ուրիշ ժողովուրդների հետ ենթակա են ճնշման և բռնության, մինչդեռ թուր-

⁸ Էբուստուպի խուսափում էր օրինապես ընդունված և չեզոք «զիմմի» տերմինից, փոխարենը նախընտրելով՝ «ֆաֆիր» (անհավատ) տերմինը, որն ավելի մոտ էր գործածական բուրբերենին (օսմաներեն): Հետաքրքիրն այն է, որ նա իր մի շարք ժամանակակիցների նման օգտագործում է այդ բառը բացառապես ուղղափառ քրիստոնյաների համար՝ հույների և հայերի, որոնք ներկայացված էին ըստ իրենց համայնքային պատկանելիության, տե՛ս **B. Masters, Christians and Jews in the Ottoman Arab World**, էջ 29: Էբուստուպի գործունեության մասին առավել մանրամասն տե՛ս **C. Imber, Ebu's-su'ud, The Islamic Legal Tradition**, Stanford University Press, Stanford, California, 1997:

⁹ **Ph. Hitti**, նշվ. աշխ., էջ 716:

¹⁰ **R. R. Madden**, *The Turkish Empire, in Its Relations with Christianity and Civilization*, Vol II, London: T. Cautley Newby, Publisher. 30, Welbeck Street, Cavendish Square, 1862, p. 14;

أ. وب. راسل، تاريخ حلب الطبيعي في قرن الثامن عشر، مجلد 1، ترجمة خالد الجبيلي، 1997، ص. 114.

¹¹ **R. R. Madden**, նշվ. աշխ., էջ 14:

քերն էլ նույնչափ տառապում են դրացիների արհամարհական վերաբերմունքից...»¹²:

Պատմական Սիրիայում հիմնականում բնակչության ըստ ազգային կամ կրոնական պատկանելության, տեղաբաշխում չկար: Անգամ Հալեպում կամ Երուսաղեմի հին քաղաքում, որտեղ տարբեր էթնո-կրոնական խմբերը ձևավորել էին առանձին թաղամասեր, այնուամենայնիվ այդ թաղերից և ոչ մեկում նրանք, չնայած թվաքանակի տոկոսային մեծ առավելության, բացարձակ մեկուսացած չեն ապրել¹³: Օրինակ Հալեպում հրեաների տները գտնվում էին

¹² راسل و ب. أ., نزل. աշխ., հ. 2, էջ 238, տե՛ս նաև՝ Ա. աբ. Սյուրմեյան, Պատմութիւն Հալեպի Հայոց, հ. Բ., «Հալեպ», Տպարան Մ. Մագսուտեան, Բեյրութ, 1946, էջ 434:

¹³ D. Quataert, *The Ottoman Empire, 1700-1922*, Second Edition, Cambridge University Press, 2005, p. 180: Մի ավանդության համաձայն՝ սուլթան Սելիմ 1-ինը (1512-1520 թթ.), երբ գրավել է Հալեպը, տեղի վաճառականությունը աշխուժացնելու հեռանկարով, կիբանանից Հալեպ է տեղափոխել ֆառասուն ֆրիստոնյա ընտանիք, որոնք հիմնել են ֆաղաֆի թաղամասերից «Չոֆալ ալ-Արբաաին»-ը («Քառասունի փողոց»), որը հայտնի է նաև Սալիբեդ Ջիդայդե կամ Ջիդայդե, Չոֆալ ալ-Կալ, Հարաթ ալ-Կանիսսե անվանումներով, տե՛ս L. D'Arvieux, *Mémoires du Chevalier d'Arvieux, envoyé extraordinaire à la Porte, Consul d'Alep, d'Alger, de Tripoli et autres Échelles du Levant*, tom sixième, par le R.P. Labat, Paris, 1735, p. 437;

كامل بن حسين بن مصطفى بالي الحلبي الشهير بالغزي, نهر الذهب في تاريخ حلب, الجزء الاول, طبع في المطبعة المرونية بحلب, 1923, ص. 197.

Հ. Ազեգեան, Արաբական զարթոնքը և հայ գործիչները. Հալեպ, 2008 թ., «Այգ» մատենաշար, Հրատ. Բերիոթեմի, տպ. Արևելք, էջ 30-31, R. André, “Alep à l'époque ottomane (XVIème-XIXème siècles)”. In: *Revue du monde musulman et de la Méditerranée*, n° 62, 1991. Alep et la Syrie du Nord. pp. 93-109, at 97: Սակայն, պետք է նշել, որ այս արվարձանում հայերը հաստատվել էին ավելի վաղ շրջանում դեռևս Կիլիկյան հայկական թագավորության կործանումից և Սև ծովի ջենովացի առևտրականների հեռացումից հետո, երբ, որպես Արևելք-Արևմուտք առևտրային շարժման իրականացնող միջնորդ ֆաղաֆ, Հալեպը սկսեց շատ արագ զարգանալ: Այս ժամանակ էլ ֆարավանային հանապարհների երկարությամբ ձևավորվեցին հսկայական արվարձաններ: Այս արվարձաններից մեկում հաստատվեցին ֆրիստոնյաները՝ մարոնիները և հատկապես հայերը, որոնք ծառայում էին որպես միջնորդ և թարգմանիչ եվրոպացի գնորդների համար, տե՛ս J. Sauvaget, “Alep”, *Essai sur le développement d'une grande ville syrienne, des origines au milieu du XIXème siècle*, Librairie Orientaliste Paul Geuthner (12, Rue Vavinm, VI), Paris, 1941, p. 99: նույն երևույթի մասին կարելի է խոսել նաև Հալեպի հրեա բնակչության պարագայում. «Բաբ ալ-Նասար»-ին («Հաղթանակի դուռ») կից գտնվում էր հրեական մի թաղ՝ «Բաբ ալ-Յահուդ» («Հրեաների դուռ») անվանումով, տե՛ս է. Սեմերեան, «Հայկական կեանքը արդի Հալեպի վաղ օսմանեան ժամանակաշրջանին, Ուսումնասիրական փորձ մը՝ հայ ընկերային կեանքի պատմութեան կառուցման համար՝ իսլամական աղբիւրներու օգտագործման առնչութեամբ», «Տաթեւ» հայագիտական տարեգիրք, թ. 1, Հալեպ, 2008 (էջ 257-290), էջ 274: Բնակչության թվային գերակշռության պատճառով, հրեական էին համարվում նաև Բանդարա և Մասաբին թաղերը: Իսկ ֆաղաֆի պարիսպներից ներս գտնվող Բանսիդա թաղամասի ժողովարանի շուրջ բնակվող հրեաները կազմում էին թաղի ընդհանուր բնակչության 90 տոկոսը: Այդ պատճառով Հալեպի Շարիա դատարանների ար-

մզկիթի կողքին, այն դեպքում, երբ մուսուլմանների տները կից էին սինագոգներին: Սակայն, պետք է նշել նաև, որ կայսրության մյուս և մասնավորապես կենտրոնական շրջաններում, իշխանություններն արգելում էին քրիստոնյաներին բնակություն հաստատել մուսուլմանական թաղամասերում՝ որպես փաստարկ ներկայացնելով Շարիաչի սկզբունքները¹⁴:

Առհասարակ, Արաբական երկներում բնակություն հաստատելու օրինաչափությունները հիմնված էին ոչ թե կրոնական, այլ սոցիալական դասակարգման վրա¹⁵: Արաբական քաղաքների բնակիչները նախընտրում էին բնակվել իրենց կարգավիճակին համապատասխան այլակրոնների կողքին, քան համակրոնակիցները՝ ի տարբերություն Կ. Պոլսի և Անկարայի, ուր հարուստները, աղքատներն ու միջին դասն ապրում էին միասին¹⁶:

Պատմական Սիրիայի մուսուլման-ոչ մուսուլման համայնքների միջև նման հարաբերությունների զարգացումը պայմանավորված էր նաև հետևյալ հանգամանքով. հիմնականում ընդգրկելով առևտրային (Սիրիա), ուխտագնացության համար նշանավոր քաղաքներ (Պաղեստին), տնտեսական և քաղաքական համագործակցության շփումներ ծավալելով Եվրոպայի հետ (Լեռնալիբանան), ինչպես նաև մեծ թվով օտարեկրացիների մշտական բնակության պայմաններում, տեղի բնակչությունը գտնվում էր զարգացման այլ, ավելի բարձր մակարդակի վրա: Հետևաբար այդ քաղաքներն ավելի ապահով էին և համեմատաբար ավելի հանգիստ: Միմեռն Լեհացին, նկարագրելով ամբողջ կայսրությունում հայ ժողովրդին, հոգևորականությանը պատուհասած աղետները, խտրականությունները, Դամասկոսի մասին հայտնում է. «Այլ եւ Տաճիկքն քաղքին այնորիկ յոյժ երկեղած եւ մարդասէր են եւ աստուածավախ, զքրիստոնեայս սիրեն

ձանագրություններում այն նշվում է «հրեական թաղ», տե՛ս **նույն տեղում**, էջ 274-275: Կամ Հալեպի Քրդական թաղամասում ֆրդեր շին ապրում: Միջնադարյան մամլուֆյան շրջանում այնտեղ սկզբնապես բնակեցված ֆրդերից գրեթե մաքր չէր մնացել, այդ, այսպես կոչված ֆրդական թաղամասի բնակիչների 93 տոկոսը, ֆրիստոնյաներ էին, տե՛ս **D. Quataert**, նշվ. աշխ., էջ 180: Երուսաղեմի մասին տե՛ս **A. Cohen**, "On the realities of the Millet System: Jerusalem in the Sixteenth Century", in *Christians and Jews in the Ottoman Empire: the Functioning of a Plural Society*, eds. **Benjamin Braude and Bernard Lewis**, vol 2, pp. 7-18. New York: Holmes & Meier Publishers, 1982, pp. 9-10:

¹⁴ Առավել մանրամասն տե՛ս **Ա. Փափազյան**, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դդ.), ԵԳԵԱ, Երևան, 1999, նաև՝ Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ-մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.), Զանգակ 97, Երևան, 2002, էջ 42, հմմտ.՝ **H. T. Cinliodlu**, *Tokat tahiri, 3-ci kisim*, 1950, s. 55:

¹⁵ **D. Quataert**, նշվ. աշխ., էջ 180, տե՛ս նաև **D. Chevallier**, "Non-Muslim Communities in Arab Cities", in *Christians and Jews in the Ottoman Empire: the Functioning of a Plural Society*, ed. **Benjamin Braude and Bernard Lewis**, vol 2, New York: Holmes & Meier Publishers, 1982, pp. 159-165, at 160.

¹⁶ **D. Quataert**, նշվ. աշխ., էջ 180:

եւ բնաւ շասեն «կավուր» կամ «տինսիզ», այլ «էսակուլի» կամ «հաճի»: Եւ թէ զոք աւան շոպանն նեղէ՝ ամէնքն վրան թափին եւ ազատեն. չթողուն սուխրայ բանիլ կամ այլ ինչ անիրաւ: Այլ տեղ այսպէս մարդիկ քաղցր եւ բարի շտեսի. քրիստոնէութեան լայեխ»¹⁷:

Սիրիահայությունը, կրոնական և մշակութային սերտ կապերի շնորհիվ, Արևմուտքի հետ սկսեց համագործակցել տարբեր ոլորտներում ավելի վաղ, քան մյուս ազգերը: Նրանցից շատերը ստացան արևմտյան կրթություն և մասնագիտացան օտար լեզուներում՝ ի տարբերություն կայսրության մուսուլմանների: Ուստի նրանք սկսեցին մոդեռնիզացվել ավելի վաղ, քան թուրքերը: Եվ, համաձայն Մարգարեթ Ուիգոմիրսկու՝ շնայած օսմանյան թուրքերի հետ ոսոսայական, լեզվական և կրոնական տարբերությունը, հայերը, այնուամենայնիվ, ինչպես նաև կայսրության մյուս քրիստոնյա և հրեա համայնքները, հասարակության մեջ զբաղեցնում էին տնտեսական էլիտայի կարգավիճակ: Եվ երկու կողմերի միջև ոչ միայն արժեհամակարգի ոչ մի ընդհանրություն չկար, այլև նրանցից յուրաքանչյուրը մշակում էր «ազգայնականության բրենդ», որը բացառում էր մյուսին¹⁸: Հասնելով բարձր դիրքերի, իհարկե, ինչպես Լեոն է նշում, «նա չի դադարում «անհավատ քաֆիր» և ուրիշ այսպիսի բազմաթիվ արհամարհական և հայհոյական անուններ կրող ստրուկ լինելուց», սակայն արդեն, մասնավորապես հայ ամիրաների (սարրաֆներ, լուժայափոխներ) առաջ «ստրկատերը կամա ահամա ստիպված ե գլուխ իջեցնել իր ստրուկի առաջ»¹⁹:

Օսմանյան իշխանություններն իրականում «հասկանում էին» թուրքերի զարգացման ցածր մակարդակը՝ հպատակ ժողովուրդների համեմատ, և հաշվի առնելով վերջիններիս ներուժի անհրաժեշտությունը կայսրության հետագա առաջխաղացման համար, նրանց թողնում էին «ապրել այնպես, ինչպես ոչխարներին ու մեղուներին՝ նրանց կաթի ու մեղրի համար»²⁰: Կայսրության թուրքերը, նույնիսկ XIX դարի վերջին և XX դարի սկզբին չափազանց քիչ էին մասնակցում երկրում կապիտալիստական կացութաձևի զարգացմանը: Ինչպես նշում է խորհրդային պատմաբան Ա. Միլլերը. «Արդյունաբերական արտադրության մեջ, բանկային գործում, արտաքին և ներքին խոշոր առևտրում տիրա-

¹⁷ Սիմեոն դպիր Լեհացայ Ուղեգրություն, Տարեգրություն եւ հիշատակարանք, ուսումնասիրեց և հրատարակեց Հ. Ներսես Վ. Ակինյան Մխիթարեան ուխտէ, Վիեննա, Մխիթարյան տպարան, 1936, էջ 313:

¹⁸ M. Wyszomirski, “Communal Violence: The Armenians and the Copts as Case Studies”, *World Politics*, Vol. 27, No. 3 (Apr., 1975), Cambridge University Press, pp. 430-455, at 441, 451.

¹⁹ Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 247:

²⁰ M. Febvre, *Theatre de la Turquie, où sont représentées les choses les plus remarquables qui s’y passent aujourd’hui touchant les Mœurs, le Gouvernement, les Coutumes et la Religion des Turcs ; et de treize autres sortes de Nations qui habitent dans l’Empire Ottoman*, Chez Edme Couterot, Paris, 1682, p. 217.

պետում էին օտարերկրյա և այլազգի կապիտալիստները: Աննշան էր նաև թուրք ազգի բանվորների թիվը: Այսպիսով, կապիտալիստական հասարակարգի հիմնական դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորումը օսմանյան ֆեոդալիզմի ընդերքում տեղի էր ունենում առանց թուրքերի ակտիվ մասնակցության»²¹:

Սակայն կայսրությունը բարձր ինքնագիտակցությամբ օժտված հպատակ ժողովուրդների դեգրադացումը թուրքական հետամնաց, բայց արտոնյալ դիրք ունեցող թուրք հասարակության հորձանուտում, իշխանությունների՝ արտաքին ճակատում ունեցած անհաշտությունների պատճառով առաջադրված ծանր հարկային պայմանները, անարդարությունն և իշխանությունների անտարբերությունը իր քաղաքացիների նկատմամբ, ի վերջո՝ XVII դարի վերջին հանգեցրեց հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների տարածմանը:

Փաստորեն, պատմական Սիրիայում ազգային և կրոնական համայնքների համեմատական ազատ ինքնադրսևորմանը և բարիդրացիական հարաբերություններին նպաստում էին միմյանց սերտորեն կապված պայմանականությունների հետևյալ շղթան՝ տարածաշրջանի նշանակությունը կայսրության ֆինանսատնտեսական ոլորտում, օտարերկրյա պաշտոնյաների մշտական ներկայությունն ու հսկողությունը պատմական Սիրիայի մի շարք քաղաքներում, դրանց ազդեցությունը տեղի պետական կառավարման մարմինների գործունեության և հասարակության կենսաձևի վրա, տեղական վարչահամակարգի ինքնավար գործունեությունը և դրանով պայմանավորված՝ ոչ մուսուլմաններին ընձեռնված որոշակի ազատությունները և վերջապես տեղի հայ վերնախավի դերն ու կշիռը Սիրիայի քաղաքների զարգացման և կառավարման գործում:

Բարեփոխումների շրջանում (XIX դարի 30-ական թվականներից մինչև 70-ական թվականներ), սակայն, քաղաքական և տնտեսական գործոններով պայմանավորված, խաթարվեցին նաև պատմական Սիրիայի քրիստոնյա, հրեա և մուսուլման համայնքների միջև XVI-XVIII դդ. հաստատված բարիդրացիական հարաբերությունները, որոնք վերաճեցին միջհամայնքային հակամարտությունների²²:

²¹ Ա. Հովհաննիսյան, «Արտոնյալ վաճառականության» (Hayriye tüccarlari) նախաձեռնումից մինչև «Տնտեսության բուրժուազիան» ֆազաբախանություն, *Արևելագիտության հարցեր*, N 10, Երևան, 2015 (էջ 17-50), էջ 19, հղում 6, հմմտ.՝ **А. Миллер**, “Турецкая революция и Мустафа Кемаль Ататюрк (Младотурецкая революция)”, в кн. **А. Ф. Миллер**, *Турция: актуальные проблемы новой и новейшей истории*, Москва, 1983, с. 53: Այս մասին մանրամասն տե՛ս նաև՝ *The Cambridge History of Turkey*, Vol. 3, 1603- 1839, էջ 283-289:

²² Այս մասին առավել մանրամասն տե՛ս **М. Ма‘оуз**, “Communal Conflict in Ottoman Syria during the Reform Era: The Role of Political and Economic Factors”, in *Christians*

ВЕНЕРА МАКАРЯН
СТАТУС РЕЛИГИОЗНЫХ ОБЩИН ИСТОРИЧЕСКОЙ СИРИИ И
МЕЖОБЩИННЫЕ ОТНОШЕНИЯ (16-18 ВВ.)

Ключевые слова: Османская империя, сирийские армяне, община, турки, арабы, христиане, ислам, исламское законодательство, райя, зимми.

С первых дней формирования Османской империи, были установлены четкие социальные категории: первое место занимали турки, затем – другие мусульманские народы. Но и между мусульманами, например, между турками и арабами, проходила четкая разграничительная линия.

Однако мусульманско-немусульманские межобщинные отношения в Исторической Сирии и в других провинциях Империи, в частности в Западной Армении, развивались не одинаково. Если в Западной Армении турки выступали как победители над армянским населением (несмотря на то что для армян эти земли являлись многовековой родиной), то в Сирии ситуация была иной: там турки были правящим меньшинством и в целом не стремились к заселению арабских стран. А что касается арабского населения Сирии, то следует подчеркнуть, что они наряду с немусульманами (несмотря на некоторые привилегии, которые они имели как мусульмане) выступали в качестве противовеса местным туркам.

В связи с некоторыми политическими и экономическими факторами, а также в результате относительного свободного самовыражения и дружелюбных отношений между национальными и религиозными общинами Сирии, армяне Сирии были модернизированы намного раньше, чем другие народы Империи. И даже на фоне этнических и религиозных дискриминационных классификаций им удалось достичь высокого положения.

and Jews in the Ottoman Empire: the Functioning of a Plural Society, ed. **Benjamin Braude and Bernard Lewis**, vol 2, New York: Holmes & Meier Publishers, 1982, pp. 91-105, տե՛ս նաև՝ **S. Khalaf**, “Communal Conflict in Nineteenth-Century Lebanon”, նույն գրքում , էջ 107-134, **D. Chevallier**, նշվ. աշխ., էջ 160-163:

VENERA MAKARYAN

THE STATUS OF RELIGIOUS COMMUNITIES IN HISTORICAL SYRIA AND INTER-COMMUNAL RELATIONS (16th-18th centuries)

Keywords: Ottoman Empire, Syrian Armenians, community, Turks, Arabs, Christians, Islam, Rayah, *zimmi*.

Since the establishment of the Ottoman Empire, a social order was formed in which the Turks were at the forefront, followed by other Muslim nations. However, a distinct boundary was drawn between the Muslims, the Turks and the Arabs.

The Muslim-non-Muslim inter-communal relations in historical Syria were different from the other regions of the Empire, in particular from Western Armenia. While in Western Armenia, the Turks prevailed over the Armenian population (despite the fact that these lands had been the homeland of Armenians for centuries), in Syria the situation was different: the Turks were the ruling minority and did not seek the colonization of Arab territories in general. Besides, the Arabs of Syria, despite having some privileges as Muslims, along with the non-Muslims, acted as a counterbalancing force to the local Turks.

Due to certain political and economic factors, and as a result of a relative freedom of expression and friendly relations between the national and religious communities of Syria, Syrian Armenians were modernized much earlier than the other peoples of the Empire and managed to achieve a higher status, even against the background of ethnic and religious discrimination.

ՍԱՄՎԵԼ ՌԱՄԱԶՅԱՆ

«ՔՅՈՈՂԻ» ԷՊՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՆՔԸ ԵՎ XVII-XVIII ԴԴ. ՀԱՅԵՐԵՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Քյոոզլի, ջալալի, մանր ժամանակագրություններ, էպոս, Գզիրոզլի Մուստաֆա, ժամանակագիր, Գրիգոր Դարանազցի, քուրդ:

«Քյոոզլի» էպոսն ուշ ժամանակաշրջանի (XVII դ.) ստեղծագործություն լինելով՝ թյուրքական մյուս էպոսների ու հերոսական ասքերի համեմատ իր տարածվածության տեսակետից նախադեպ չունի և համընդհանուր ընդունելություն է արժանացել ամենատարբեր ազգերի շրջանում: Հետազոտողների մեծամասնության կարծիքով (Վ. Մ. Ժիրմունսկի, Բ. Ա. Կարրիև, Ն. Փ. Բորաթավ ևն), էպոսի ձևավորումը սկսվել է XVII դ.-ից և մինչև XIX դ. վերջերը ենթարկվել գեղարվեստական բազմաբնույթ մշակումների ու փոփոխությունների¹: Բանավոր կերպով սերնդեսերունդ փոխանցվելով և հիմնականում ասացողների (աշուղների) կողմից ավանդվելով՝ այն սկսել է գրի առնվել համեմատաբար նոր ժամանակներում (գլխավորապես XIX դ. առաջին կեսից սկսած մինչև XX դ. սկզբները), իսկ Կենտրոնական Ասիայում տարածված պատումները՝ XX դ. 30-40-ական թթ. և ավելի ուշ:

էպոսի արևմտյան խմբում ընդգրկված տարբերակները (թուրքական, ադրբեջանական, հայկական, քրդական, վրացական, դաղստանյան ևն) հիմնականում հանգում են ատրպատականյան (կամ այսպես կոչված «վաղադրբեջանական») «Քյոոզլու» էպոսին, ինչպես գտնում է հետազոտողների մեծամասնությունը: Դրանք, հիմնավորապես պահպանելով պատմական իրադարձությունների իրական արձագանքները և շերտերը, սկզբնավորվելով անմիջական պատմական հենքից՝ ճշմարտացիորեն են վերարտադրել Փոքր Ասիայում

¹ Ցարդ ուսումնասիրողների մեծամասնության կողմից ընդունված է նման տեսակետը, բացի, թերևս, Խ. Կորոգլուց, որի կարծիքով՝ էպոսի միջուկը ձևավորվել է դեռևս հերոսի, իմա՝ պատմական Քյոոզլու կենդանության օրոք (XVI դ. երկրորդ կես), «կամ ավելի ուշ՝ նրա վախճանից հետո: Դրան նպաստել են... հերոսի ժողովրդականությունը և ասացողների վարպետությունը: Հետագայում, ինչը բնորոշ է բանահյուսական գործընթացին, կատարվել է հերոսի և նրա անվան հետ կապված բոլոր իրադարձությունների տևական վիպականացումը: Այդ կերպ, ստեղծվել են մեծաբանակ տարբերակներ՝ մշակույթով և ծագումնաբանությամբ տարբեր ժողովուրդների մոտ» (X. Г. Короглы, «Туркменский эпос «Гёр-оглы» и особенности его историзма», *Специфика фольклорных жанров*. Москва, 1973, с. 144):

և Հարավային Կովկասում XVI-XVII դդ. տեղի ունեցած անցքերը, այն է՝ ջալալիների ապստամբությունները: Վերոհիշյալ խմբի տարբերակները հիմնականում գերծ են առասպելական և հեքիաթախառն գծերից, ինչն ինքրստինքյան վկայում է կաշուն պատմական հիմքի առկայության մասին: Արևելյան տարբերակներում (թուրքմենական, ուզբեկական, տաջիկական, դազախական, կարակալակյան, Բուխարայի արաբների, տոբոլ-թաթարական, ուլդուրական ևն) արևմտյան խմբին բնորոշ պատմավերական աստղծր գրեթե անհետանում է իր տեղը գիջելով վաղնջական հեքիաթախառն ու նախախայամական տարրերով հավելված գրույցների շարքին և իրանական առասպելաբանությունը:

Հայոսի գրառումից ի վեր՝ հետազոտողներին մշտապես զբաղեցրել են դրանում արտացոլված իրադարձությունների և գործող անձանց, մանավանդ Քչոռոզլու կերպարի պատմականության, Հայոսի ձևավորման ժամանակաշրջանի և տարածաշրջանի հարցերը: Նմանօրինակ հարցեր քննարկվել են XIX դ. վերջի և XX դ. սկզբի ռուս և եվրոպացի բազմաթիվ հեղինակների աշխատություններում: Պատմական իրականությունից դուրս դիտարկվելով երբեմն ժխտվել է նաև Հայոսի ինքնօրինակությունը²: Թեև Հայոսի վերաբերյալ իրարամերժ և հակասական կարծիքներ հայտնել են նաև խորհրդային շրջանի ուսումնասիրողները, սակայն հնարավորություն ունենալով վերահասու լինել պատմական (հիմնականում՝ հայկական) աղբյուրներին և օգտագործելով դրանք՝ լրացվել է այն բացը, որն առկա է հիշատակված հեղինակների գործերում: Սույն հանգամանքն էլ հենց թույլ է տվել կատարել և ամրագրել մի շարք իրավացի եզրահանգումներ Հայոսում արտացոլված պատմական իրադարձությունների, նրա ստեղծման և ձևավորման ժամանակաշրջանի, ինչպես նաև գլխավոր հերոսների պատմականության և այլ հարցերի վերաբերյալ:

Համեմատության համար նշենք, որ բավականաչափ տեղեկություններ օտար աղբյուրներում չեն հանդիպում: Միայն XVII դ. օսմանյան պատմիչ էվլիյա Չելեբին է իր Ուղեգրության մեջ («Սեյահեթ-նամէ») հաղորդում Քչոռոզլու մասին որոշ հատվածական տեղեկություններ, որոնք հիմնականում աղոտակնարկներ լինելով՝ բազմաթիվ թյուր կարծիքների տեղիք են տվել³:

² **И. Шопен**, “Кер-Оглу. Татарская легенда – Маяк современного просвещения и образованности.” *Труды ученых и литераторов, русских и иностранных*, ч. III, СПб., 1840 (сс. 12-25), с. 22; **G. Dumézil**, “Les légendes de «Fils d’aveugles» au Caucase et autour du Caucase,” *Revue de l’Histoire des Religions*, Vol. 117, ed. **E. Leroux**, p. 50-74, Paris, 1938; **Ս. Կանայեանց**, *Ջոջանց տուն կամ Սասմալ ծուր վկայի երեք փոփոխակ*, Վաղարշապատ, 1910, էջ 2, ԺԳ, ԺԵ, Ի ևն:

³ **Pertev Naili Boratav**, *Köroğlu Destanı, Bütün Eserleri - 6*, Bilgesu, Ankara, 2016, s. 54, 71.

Վիպական Քյոոզլու և նրա զինակիցների պատմական նախատիպերի, ինչպես նաև նրանց գործունեության տարածքի հարցը որոշելու տեսանկյունից առավել արժանահավատ և վավերական աղբյուրներ են Օսմանյան կայսրության պետական արխիվներում պահվող և XVI դ. վերջով թվագրվող փաստաթղթերը (*Mühimme Defterleri*), որոնք հիմնականում հրամանագրեր են և նահանգային իշխանությունների գեկուլյցներ: Ընդամին, 1579-1581 թթ., 1588 թ. և 1593-1595 թթ. Բոյիի, Գերեղեյի, Իչեյի, Կարամանի և այլ շրջանների բարձրաստիճան պաշտոնյաներին հասցեագրված հրամանագրերում նկարագրվում են Քյոոզլու և նրա գործակիցների ավագակային գործողությունները, նշվում դրանց վերացման և Քյոոզլու ձերբակալության անհրաժեշտությունը⁴:

Ինչպես արդեն վերը նշվել է, էպոսի հիմքում ընկած պատմական գլխավոր իրադարձություններն առնչվում են XVI-XVII դդ. Օսմանյան կայսրությունը ցնցած ջալայիների ապստամբություններին, որոնք մի իսկական պատուհաս են եղել կայսրության ժողովուրդների, հատկապես, քրիստոնյաների և հայերի համար: Օգտվելով Իրանի հետ պատերազմների ընձեռած հնարավորությունից և օսմանյան պետության թուլությունից՝ ջալայիներն ավարի ու ավերի են մատնել ողջ Փոքր Ասիան, մանավանդ, հայության մի զգալի հատված հարկադրված գաղթի ճանապարհն է բռնել:

Հայ մատենագրության էջերում առկա են բազմաթիվ հաղորդումներ ջալայիների արշավանքների մասին: Տվյալ ժամանակաշրջանի պատմության կարևոր սկզբնաղբյուրներն են XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ը, Գրիգոր Դարանաղցու (Կամախեցի) «Ժամանակագրութիւն»-ը, Երեմիա Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ Դձ տարույ Օսմանցոց թագաւորացն» աշխատությունը, Ազարիա Սասնեցու Ողբը («Ողբ ի վերայ հարուածոց արեւելեան գաւառացն եւ աշխարհին հայոց ի ձեռաց ձելալեանց»), ինչպես նաև XVI-XVIII դդ. մանր ժամանակագրությունները:

Հայկական աղբյուրներն, ի տարբերություն ժամանակի օտար սկզբնաղբյուրների՝ ոչ միայն արժեքավոր տեղեկություններ են հաղորդում, այլև թույլ են տալիս պատասխանել էպոսի ուսումնասիրության հետ կապված բազմազան հարցերի: Մասնավորապես, հայ մատենագիրների երկերում համապատասխան տեղեկություններ կան ինչպես Քյոոզլու, այնպես էլ էպոսի պատմական նախատիպեր ունեցող մյուս գործող անձանց (Գլիրօղլի Մուստաֆա, Քոսա Սաֆար, Թանղրի Թանիմագ, Դելի Հասան ևն) մասին:

⁴ F. Sümer, “Köroğlu, Kiziroğlu Mustafa ve Demircioğlu İle İlgili Vesikalar”, *Türk Dünyası Araştırmaları*, Şubat, İstanbul, 1987 (s. 9-46), s. 46; X. Г. Короглы, ук. соч., с. 144.

Թեև իր հաղորդած տեղեկությունների հակիրճ և ամփոփ լինելուն, ցայսօր էլ Առաքել Դավրիժեցու երկը «Քյոռուլի» էպոսի ուսումնասիրության հետ կապված՝ մնում է հնագույն վավերական և հավաստի պատմական աղբյուրը: Դավրիժեցու հաղորդումներին հայ բանասիրությունը վաղուց է անդրադարձել՝ նշելով վերջիններիս հավաստիությունը⁵: Օտար մի շարք հեղինակներ ևս ընդգծում են դրանց ճշմարտացի արժեքը⁶: Սակայն, Քյոռուլու և նրա զինակիցների մասին հիշատակությունների հարցին անդրադառնալիս ուսումնասիրողները հայ մատենագիրներից մշտապես նշել են հենց միայն Դավրիժեցուն և լավագույն դեպքում նաև XVIII դ. հեղինակ եղիա Մուշեղյանին: Այնինչ, այդ կերպ անտեսվում են մանր ժամանակագիրները, որոնց երկերից հաճախ օգտվել է Դավրիժեցին ինքը: Ըստ այդմ, թեմայի ուսումնասիրությունն անհնար է առանց մանր ժամանակագրությունների հաշվառման:

Ջալալիների առաջնորդներին հականե-հանվանե հիշատակում է XVII-XVIII դդ. ժամանակագիր Ավետիքը կամ Ավետիք Տիգրանակերտցին (Ավետիք Ամդեցի, Ավետիք Պաղտասարյան), իր «Ժամանակագրութիւն կամ գաւազանագիրք, աշխատասիրեալ յԱւետիքայ ումեմնէ» երկում, որը հայտնի է նաև «Գիրք պատմութեանց, որ կոչի Գաւազանագիրք» վերնագրով: Ժամանակագրությունը գրվել է 1701-1712 թթ. ընթացքում, ապագա կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցու պատվերով⁷:

Թեև Տիգրանակերտցու ժամանակագրության ջալալիներին վերաբերող երկրորդ մասի և Դավրիժեցու «Պատմութեան» համապատասխան հատվածի միջև բազմաթիվ նմանություններ կան, այնուամենայնիվ, ինչպես կարծում է Վ. Հակոբյանը, այն մի առանձին բնագիր է և կապ չունի պատմագրի երկի հետ⁸: «Մյուս կողմից, – գրում է Հակոբյանը, – այս ժամանակագրության հեղինակը

⁵ Քաջբերունի, «Ճանապարհորդական նկատողութիւնք», Փորձ հանդէս, ք. IV, II տարի, էջ 321-368, Տփղիս, 1877-78, էջ 327, Հ. Պեպելեան, Արշակ Բ. և Քեռուղլու, Փարիզ, 1938, էջ 34-35, Ա. Ալաջաբեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հտ. Ա, Գահիրէ, 1937, էջ 604, Քյոռուլի, ժողովրդական վիպասանություն, հավաքեց և գրի առավ Գ. Քարվերդյան, առաջաբանը՝ Խ. Սամվելյանի, Երևան, 1941, էջ 13:

⁶ В. М. Жирмунский, *Народный героический эпос*, М.-Л., 1962, с. 214; Б. А. Каррыев, *Эпические сказания о Кёр-оглы у тюркоязычных народов*. М., 1968, с. 5; *Гуругли, Таджикский народный эпос*, составитель И. Брагинский, Москва, 1987, с. 21; P. N. Boratav, “L’Épopée et la “hikaye”, *Philologiae Turcicae Fundamenta*, T. 2, p. 11-44, Wiesbaden, 1965, p. 26 հմ:

⁷ Պ. Չոբանյան, «Նոր նյութեր Ավետիք Տիգրանակերտցու մասին», ԼՀԳ, 1973, ք. 7 (էջ 96-104), էջ 98:

⁸ Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ. (այսուհետ՝ ՄԺ), կազմեց Վ. Հակոբյան, հ. Բ, Երևան, 1956, էջ 506-507:

ժամանակակից է և ականատես իր նկարագրած դեպքերին, նշանակում է ջալալիների մասին մենք ունենք մի ուրիշ սկզբնաղբյուր»⁹:

Քյոռօղլու և էպոսում հիշվող նրա զինակիցների վերաբերյալ Ավետիքը հետևյալ վկայությունն է տալիս. «Եւ Ռեմլ (1599) թուին Հուսեյին փաշա ապստամբեցաւ եւ հետ սորա Քոսա Սաֆարն... Եւ Թաւուլն ՌՄԲ (1603)-ին ժԲՌ (12.000) ձիաւորով, եւ Թաւուլի եղբայրն Մահմետ փաշայն ԻՌ (20.000) մարդով, Մանօղլի, Ջանփօլատ օղլի Ալի փաշա եւ սորին եղբայրն, աշըխ Քօրօղլի եւ սորա ընկեր Գզիր օղլի Մուսթաֆա բեկ, միւս Մուսթաֆա բեկ, Ղարաղաշ, Տէլու Նասիբ, Իօլա Սղմազ, Թանդրի Թանհիմազ, Կէօկէպախան, Չիլախ, Քեասաքեաս, Քրլու, Ղարասահաթ, Աղաշտանփիրի»¹⁰:

Ջալալի առաջնորդների մասին Ավետիք ժամանակագրի սույն մեջբերմանը հաջորդում է նրանց բնութագրող «Սոքա ամենիքեան Ջալալիք էին...» տողով սկսվող հատվածը¹¹, ինչը բառացիորեն կրկնվում է Դավրիժեցու երկում¹²: Ընդհանրապես, որոշ հատվածների համեմատությամբ, Պ. Չոբանյանը եզրակացնում է, որ Ավետիքը քաղվածքներ է արել Դավրիժեցուց, որն էլ «Գաւազանագրքի» աղբյուրն է¹³: Այնուամենայնիվ, երկու բնագրերի ուշադիր համեմատությունը ցույց է տալիս, որ Դավրիժեցու «Պատմութեան» մեջ բացակայում են Ավետիքի մոտ առկա որոշ տվյալներ հենց ջալալիների վերաբերյալ: Օրինակ, ջալալի առաջնորդներից Թավուլի (օսմանյան աղբյուրներում Թավիլ կամ Թավիլ Հալիլ) եղբոր անունը նշվում է հստակ՝ «Մահմետ փաշայն» (օսմանյան աղբյուրներում Թավիլ Մեհմեդ կամ Թավիլ Մեհմեդ փաշա), այնինչ Դավրիժեցուն այս տվյալն անձանոթ է մնացել («զորոյ անունն ոչ գտաք») ¹⁴, և տվյալ անձի մասին Դավրիժեցին առանձին է խոսում: Անձնանունների ձեռագրային տարբերակները (Մահմատ/Մահմետ, Քոռօղլի/Քօրօղլի, Գզիրօղլի Մուստաֆայ բէկ/Գզիր օղլի Մուսթաֆա բեկ, Դալունասիպ/Տէլու Նասիբ, Գօկապախան/Կէօկէպախան ևն) իրենց հերթին վկայում են միանգամայն տարբեր տարածաշրջաններից սերող գրիչների մասին:

Ավետիքը Դավրիժեցու նման ևս նշում է ապստամբ Քյոռօղլու աշուղ, իսկ Գզիրօղլի Մուստաֆայի՝ նրան ընկեր լինելը, Քոսա Սաֆարի ապստամբելու միևնույն (1599 թ.) տարեթիվը (այս դեպքում Հուսեյին փաշայի հետ), նաև հաստատում ջալալի առաջնորդներից Թանդրի Թանհիմազի պատմականությունը:

⁹ Նույն տեղում, էջ 535:

¹⁰ Նույն տեղում, էջ 517:

¹¹ Նույն տեղում:

¹² Առաֆել Դարիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ Լ. Խանյարեանի, Երևան, 1990, էջ 108, 15գ-25:

¹³ Պ. Չոբանյան, նշվ. աշխ., էջ 104:

¹⁴ Առաֆել Դարիժեցի, էջ 108:

նր: Սա չափազանց կարևոր է, քանի որ, փաստորեն, միայն Դավրիժեցին չէ, որ վկայում է վերոհիշյալ իրողությունների մասին:

Ջալալիների ապստամբության արժեքավոր սկզբնաղբյուր է նաև XVII դ. ժամանակագիր Գրիգոր վրդ. Դարանաղցու (Կամախեցի, 1576-1643 թթ.) «Ժամանակագրությունը»: Դրանում, մասնավորապես, ջալալիների արշավանքները նկարագրելիս, պատմագիրը հաճախ որպես անմիջական ականատես է հանդես գալիս: Թեև Դարանաղցին չի հիշատակում Քյոոզլուն և էպոսի մյուս կարևոր գործող անձանց, սակայն արժեքավոր տվյալներ է հաղորդում քուրդ Գզիրոզլի Մուստաֆայի մասին:

Ընդհանրապես, ինչպես Լեոն է դիպուկ նշել, «հրոսակային արշավանքների մեջ, ինչ խոսք, անմասն չէին կարող մնալ քրդերը»¹⁵: Առավել քան ականհայտ է քրդերի խաղացած դերը ջալալիների ապստամբության սկզբնավորման գործում: «Երբ բանակը զբաղված էր էնգերուսի (Հունգարիայի) դեմ մղվող սրբազան պատերազմով, – գրում է XVII դ. օսմանյան պատմիչ Քյաթիբ Չելեբին, – անգիտակից թուրքերից և խավարամիտ քրդերից մի խումբ ավազակներ, առիթից օգտվելով, հպատակությունից դուրս եկան և դիմեցին դավաճանության ու ապստամբության»¹⁶: Դարանաղցին Դարանաղի-Կամախի և Տիվրիկի միևնույն քրդական գյուղերից («ի նոյն գեղորէիցն քրդաց») երեք քուրդ ավազակապետի է հիշատակում, որոնցից Քյոոզլու զինակից Գզիրոզլի Մուստաֆան «ժամանակով քիչ առաջ է ջալալիական շարժումներից»¹⁷. «Թվ. Ռև. (1591) նախ ել ոմն քուրդ, որ Գզիր Օղլի ասէին: էր սա ի սահմանացն Տիւրիկոյ եւ Կամախոյ, ի գեղջէն՝ որ Տոստալի կոչի, եւ են ամենեքեան գողք եւ աւազակք: Ի սոցանէ ել Գզրի տղան այն եւ զօրացաւ, որ ահ եւ երկիւղ համբաւոյ նորա տարածեցաւ ընդ երկիր՝ մինչեւ յԼստամբօլ, որ ծանուցին թագաւորին՝ Սուլթան Մուրատին, որ ամենայն փաշայից եւ պարոնացն հրաման զրկեց թէ՛ ինչ հնարիւք որ է՝ բռնէք եւ յԼստամբօլ զրկէք: Որ որսացին բազում ժամանակս, մինչեւ միայն գտին ի զօրացն զինքն եւ զքոհիան»¹⁸, եւ ըմբռնեցին ի գիշերի ի տուն կնոջ մի, որ շնութեան աղագաւ էին գնացեալ, եւ Տիւրիկոյ պարոնն ըմբռնեաց զԳզիր Օղլին եւ զքոհիան ի միասին եւ տարաւ յԼստամբօլ առ թագաւորն Սուլթան մեծ Մուրատն եւ անդ եղին ի վերայ ուղտոյ եւ նաւթեցին, հրով տոչորեցին եւ զքոհիան ի շանկալն հարին եւ շար մահուամբ սպանին զերկոսինն եւ բարձին ի միջոյ»¹⁹:

¹⁵ Լեո, Երկերի ժողովածու, հտ. Գ, Երևան, 1969, էջ 230:

¹⁶ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց Ա. Սաֆրաստյան, հ. Բ, Երևան, 1964, էջ 79:

¹⁷ Լեո, նշվ. աշխ., էջ 230:

¹⁸ «Քոհիա» (թրք.՝ kâhya) առավելապես գործածված է մերձավոր գործակցի իմաստով:

¹⁹ Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցուց կամ Դարանաղցուց (այսուհետև՝ Ժամանակագրություն), հրատարակեց Մեսրոպ վրդ. Նշանեան, Երուսաղեմ, 1915, էջ 32-33:

Մատենագրական տարաբնույթ հաղորդումներից Քյոռօղլու այս զինակցի մասին որևէ նմանօրինակ մանրամասն վկայություն հայտնի չէ, և Դարանաղ-ցու այս տեղեկությունը հնարավորություն է ստեղծվում իրական պատկերացում կազմել Գզիրօղլի Մուստաֆայի մասին: Ընդամին, նշվում է նրա ապստամբելու միևնույն թվականը, ինչը որ Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» ԾՁ անխորագիր գլխում է՝ 1591 թ.²⁰: Կրկին հիշատակվում է նրա ազգությունը քուրդ լինելը, ինչով վերջնականապես հերքվում է էպոսի թուրք հետազոտողներից շատերի (Ն. Փ. Բորաթավ ևն) թյուր կարծիքը Գզիրօղլու իբր թուրքմեն բեկ լինելու մասին²¹: Ավելին, Դարանաղցին հիշատակում է Կամախի և Տիվրիկի սահմաններում գտնվող նրա ծննդավայր քրդական Տոստալի (Դոստալի) գյուղը, որը *Dostal* անվամբ նշվում է 1909 թ. գերմանացի հայտնի քարտեզագիր Ռիխարդ Կիպերտի (*Richard Kiepert*) կազմած Փոքր Ասիայի քարտեզում, ավելի հստակ՝ Եփրատի և Ղարաբուլաղի միացման կետում: Միևնույն Դոսթալ անվամբ տվյալ բնակավայրը ներկայումս առկա է Թուրքիայի էրզինջան (Երզնկա) շրջանի Իլիչ գավառակի կազմում:

Կարևոր է նաև, որ ժամանակագրի հաղորդած տեղեկությունները Գզիրօղլու ավազակային գործունեության մասին («ա՛հ եւ երկիւղ համբաւոյ նորա տարածեցաւ ընդ երկիր՝ մինչեւ յԼստամբօլ, որ ծանուցին թագաւորին», «Որ որսացին բազում ժամանակս») լիովին համընկնում են էպոսի բանահյուսական համապատասխան հատվածների հետ:

Դարանաղցին չի նշում, թե քանի տարի է տևել Գզիրօղլու ապստամբությունը՝ մի անորոշ ակնարկ անելով երկար ժամանակ նրան որսալու փորձերի մասին: Սակայն հաշվի առնելով, որ 1603 թ. Բաբերդն ու Գյումուշխանեն ասպատակող Երզնկայում հաստատված ջալալի առաջնորդների շարքում նրա անունը բացակայում է, ապա պարզ է, որ այդ ժամանակ նա արդեն ձեռքա-կալվել և մահապատժի էր ենթարկվել, ինչպես գրում է պատմիչը: Օսմանյան արխիվների հետազոտողները Ստամբուլում Գզիրօղլու մահապատժի ենթարկվելը (գլխատվելու միջոցով) հավանական են համարում մինչ այդ թվականը, և անգամ դրանից հետո նրա խմբերն ակտիվ են եղել Նիզդեյի, Քըրշեհիրի,

²⁰ Առաջիկա Գառիթեցի, էջ 475:

²¹ Ըստ ամենայնի՝ նման թյուր տեսակետի հիմք է հանդիսացել Գզիրօղլու (Քիզիրօղլու, Գրիզօղլու) Մուստաֆա-բեկի անվան «գզրի» (թրք.՝ kizir) կարծեցյալ կապը Կարսի շրջանի համանուն Քիզիր գյուղի հետ, որը թուրքմենական թերեֆեմե գեղախմբի բնակավայրերից է: Թուրքական պատումներից մեկում Քյոռօղլու այս զինակիցը հենց նշված գյուղում է բնակվում (**M. Gökalp**, “Kiziroğlu ve Köroğlu”, *Türk Folklor Araştırmaları*, s. 279, Erzurum, Ekim 1972 (s. 6445-6447), s. 6445): Այս և այլ համանուն ենթադրություններն ինքստիմնական հերքվում են հենց Գրիգոր Դարանաղցու վկայությամբ, որ սերում է միևնույն տարածաշրջանից, ինչ Գզիրօղլի Մուստաֆան:

Կեսարիայի և Մալաթիայի շրջաններում²²: Ուշագրավ է նաև, որ օսմանյան պետական գրագրության փաստաթղթերից մեկում հիշատակվում է Մալաթիայի շրջանում գործած Գզիրօղլու մերձավոր գործակիցը՝ Քելփ Իլյասօղլու Ալի²³ կամ Ալի բին Քելփ Իլյաս անվամբ²⁴:

Հայ մատենագրության մեջ Քյոռօղլին և Գզիրօղլի Մուստաֆան բազմիցս են միասին հիշատակվում: Ավելին, ինչպես տեսանք, Դավրիժեցին և Ավետիքը հստակ նշում են նրանց գինակցության հանգամանքը: Տվյալ դեպքում, սակայն, դժվար է ասել, թե ինչու ոչ մի խոսք չկա Քյոռօղլու մասին: Պետք է նշել, որ Դարանաղցին մյուս այլ հայ պատմիչների ու ժամանակագիրների նման ևս հարկ չի համարել հիշատակել բոլոր ջալալի ավագակապետերի անբարեհունչ և երբեմն անարգական մականունները, իսկ «Քյոռօղլին» էլ, ամեն պարագային, անարգական մակդիր է. «Եւ այլ բազում զօրպա պաշիք, խայտառակ անուամբ ըստ շար գործոց իւրեանց, ի պարծանս վարկանելով ինքեանց, որոց Սլասրխմագ, որոց Շէթան Չաքուչի, այլ եւ այլ անուանս այլոց, զոր աղտելի է յիշելն զպիղծ անուանս նոցա...»²⁵:

Ընդհանրապես, ջալալիների ապստամբության նախնական շրջանի առաջնորդները մեծամասամբ անարգական մականուններ էին կրում, որոնց անգամ հիշատակությունը որևէ բարոյական նորմից դուրս է: Համեմատաբար արտաբերության համար նվազ խնդրահարույց մականուններով ջալալի առաջնորդներ ի հայտ են գալիս ապստամբության երկրորդ փուլում, այն է՝ XVII դ. սկզբին²⁶:

Գրիգոր Դարանաղցին առավել մանրամասն է նկարագրում նաև Գզիրօղլու ապստամբությունից մեկ տարի առաջ՝ 1590 թ., Եկեղյաց գավառում ծագած քրդական խժոժությունները, որոնց մասին վկայում են նաև Դավրիժեցին և այլ հեղինակներ: Խոսելով այդ թվականի հուլիսին արևի խավարման մասին՝ ժամանակագիրը նշում է դրան տրված մեկնաբանությունը. «Եւ այս էր գուշակումն՝ որ ի սոյն ամի յելսն օգոստոսի ամսոյն ազգն քրդաց զօրաժողով եղեն, ոչ ի մեծաց երեւելի արանց, այլ յաննշանից՝ ի գողոց եւ յաւազակաց եւ ի հովուաց եւ յըռամիկ շինականաց, գնալով ի վերայ Կեղու պարոնին, սպանանելով զնա եւ զտուն նորա աւար հարկանելով:

²² M. Akdağ, *Türk Halkının Dirlik ve Düzenlik Kavgası, Celali İsyanları*, İstanbul, Cem Yayınevi, 1995, s. 317.

²³ Նույն տեղում, էջ 342:

²⁴ I. Aslanoğlu, “Kiziroğlu Mustafa Bey”, *FÜ Fırat Havzası Folklor ve Etnografya Sempozyumu 24-27 Ekim 1985*, Elazığ, 1992, s. 8.

²⁵ Ժամանակագրություն, էջ 46:

²⁶ M. Akdağ, “Celali isyanlarından büyük kaçgunluk 1603-1606”, *Ankara Üniversitesi Dil ve Tarih-Coğrafya Fakültesi Tarih Bölümü Tarih Araştırmaları Dergisi*, Cilt: 2, Sayı: 2-3, Ankara, 1964 (s. 1-51), s. 21-22.

Եւ ապա դարձեալ դիմեցին ի վերայ եկեղեաց գաւառին Երզնկոյ եւ շատ վնասակարութիւն եւ հրրձգութիւն արարին: Եւ ոչ ոք էր իշխան եւ կամ պարոն, որ ընդդէմ գնայր նոցա: Եւ Հարգուլումի փաշան հեռի գոլով, մինչեւ որ ազդ լինէր նորա, նոքա զաշխարհն բնաջինջ կառնէին»²⁷: Այնուհետեւ նկարագրվում է «ոմն իսպահի» Իբրահիմ բեկի՝ խռովարարներին պարտության մատնելն ու հալածելը:

Միևնույն բովանդակությամբ տեղեկությունը կրկնվում է XVII դ. մատենագիր և տաղասաց Ամիրաս Երզնկացու ժամանակագրության («Անարժան Ամիրասէ Երզնկացույ արարեալ է ժողուածոյ»), ինչպես նաև ավելի ուշ՝ XVIII դ. խմբագրության ենթարկված Երուսաղեմի ժամանակագրության մեջ: Նույն դեպքերի մասին վկայում է նաև XVII դ. մատենագիր Հակոբ քահանա Կարնեցին՝ իր հորը նվիրված կենսագրական երկում («Պատմութիւն վասն հօրն մերում Գէորգա քահանային...»)՝²⁸: Հարց է առաջանում՝ արդյո՞ք Քյոռօղլու զինակից քուրդ Գզիրօղլի Մուստաֆան չի ունեցել որևէ մասնակցություն իր ազդեցության գոտում 1590 թ. բռնկված այս քրդական խռովությանը:

Կարծես, հենց այս հարցին է պատասխանում XVII դ. երկրորդ կեսի նշանավոր մատենագիր Վարդան վարդապետ Բաղիշեցին 1659 թ. իր կազմած ժամանակագրության մեջ, որն ընդգրկում է 1070-1657 թթ. պատմական իրադարձությունների համառոտ շարադրանքը. «Եւ ի ՌՂԳ (1585) թուին Օսման փաշան առաւ զՇրուան, որ է Աղուանք, եւ զԹարէզ քաղաք, եւ յետ հինգ ամի Քուրտն գլուխ քաշեց եկեալ յԵզնկայն, Գզիր օղլին էր գլխաւորն»²⁹:

Բաղիշեցին, փաստորեն, նույն հակիրճ ու ամփոփ տեղեկությունն է հայտնում, ինչն առկա է Դավրիժեցու երկում և մանր ժամանակագրություններում: Էականն այստեղ, սակայն, այն է, որ հիշատակվում է քրդական խռովության ղեկավարը, որը ոչ այլ ոք է, քան Գզիրօղլի Մուստաֆան: Ակնհայտ է, որ նա անհնազանդություն սկսել է ցուցաբերել մինչև 1590 թ., իսկ 1591 թ. նրա անունն արդեն հուշակված էր՝ որպես խռովարար ավազակապետի: Այս տեսակետից, Գզիրօղլու ապստամբելու սկիզբը ժամանակով էլ ավելի առաջ է ընկնում, քան Կարա Յազըջիի ղեկավարած բուն ջալալիական առաջին ելույթները: Դարանաղցին միանգամայն հստակ նշում է այդ փաստը. մասնավորապես, խոսելով Գզիրօղլու և նրա հայրենակից, 1595 թ. ապստամբած մեկ այլ ջալալի քուրդ առաջնորդ Սարդար Մահմուդի մասին՝ վերջում ժամանակագիրն ավե-

²⁷ Ժամանակագրություն, էջ 23-24:

²⁸ ՄԺ, կազմեց Վ. Հակոբյան, հտ. Ա, Երևան, 1951, էջ 246-247:

²⁹ ՄԺ, հտ. Բ, էջ 394, Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, Մանր մատենագիրք ժե-ժԹ դար, կենսագրական տեղեկութիւններով եւ ծանօթագրութիւններով, հրատարակեց՝ Գիւտ քահ. Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 72:

լացնում է. «Եւ նախ սոքա երկոքին եղեն սկիզբն ամենայն ջալալոցն»³⁰: Էպոսի արևմտյան խմբի տարբերակներում ևս անուղղակիորեն վկայված է այս պատմական իրողությունը:

Ինչպես արդեն նշվել է, 1588-1589 թթ. օսմանյան պետական գրագրության փաստաթղթերում, այսինքն՝ մինչև բուն ջալալիական ելույթների սկզբնավորումը, Գզիրոզլի Մուստաֆան բազմիցս հիշատակվում է որպես Մալաթիայի և Սվազի միջև գործած ավագակապետ³¹: Որոշ հետազոտողների կարծիքով, Գզիրոզլին անհնազանդություն է սկսել ցուցաբերել նույնիսկ 1584 թ.-ից՝ որպես Մալաթիայի և Սվազի միջև գործող ու 250 հեծյալ ունեցող քրդական աշիրեթի առաջնորդ³²:

Եթե բառացի ընդունենք Վարդան Բաղիշեցու հաղորդումը, ապա, քանի որ Թավրիզն օսմանյան զորքերի կողմից գրավվել է 1585 թ. սեպտեմբերի 21-ին (993 թ. ռամազանի 26), Գզիրոզլու նշված ապստամբության սկիզբն ինքնաբերաբար ընկնում է 1590 թ. նույն ամսին: Այս տարեթիվը («ի սոյն ամի (ՌԼԹ-1590) յելան օգոստոսի ամսոյն») Դարանաղցին նշում է Երզնկայում քրդերի խռովության առիթով, ինչը մանրամասն նկարագրվում է նրա, Ամիրաս Երզնկացու և Երուսաղեմի ժամանակագրություններում, իսկ ամփոփ հաղորդվում Դավրիժեցու և մանր ժամանակագիրների կողմից: Տվյալ դեպքում, սակայն, որոշակի հակասություն է առաջանում, քանի որ Բաղիշեցու վկայության մեջ փաստացի ձուլվել են նշված մյուս հայ մատենագիրների մոտ առկա 1590 թ. Երզնկայում բռնկված քրդերի խռովության (ինչը որ ժամանակագրի մոտ կրկնվում է բառացի) և մեկ տարի անց քուրդ Գզիրոզլի Մուստաֆայի ջալալիական ելույթի մասին երկու տարբեր ու առանձին հաղորդումները: Հնարավոր է՝ հետագայում շփոթի հետևանքով Բաղիշեցին իրար է կցել աղբյուրներից քաղված և շուրջ մեկ տարվա տարբերությամբ տեղի ունեցած այս իրադարձությունների մասին ամփոփ տեղեկությունները, մանավանդ, ինքն էլ որոշ ժամանակագիրներից (մասնավորապես, Դարանաղցուց) կարող էր տեղյակ լինել Երզնկայի մերձակայքից Գզիրոզլի Մուստաֆայի ծագման մասին:

Հավանական է թվում, թե Գզիրոզլի Մուստաֆայի ծննդավայրում Դարանաղցու հիշատակած Տիվրիկի և Կամախի միջև գտնվող Դոսթալ (Տոստալի)

³⁰ Գզիրոզլի Մուստաֆայի հայրենակից Սարգար Մահմուդը՝ «ի նոյն գեղօրէիցն քրդաց», որոշ ժամանակ ասպատակություններ գործելուց հետո անցնում է Իրան, ապա թուրք-իրանական պատերազմի ընթացքում «եկն ի վերայ թուրքաց զօրացն եւ բմբուռեցին գնա եւ կենդանոյն հանին գմորթն եւ լցին խտով եւ ուղարկեցին յԼստամբոյ առ թագատրն» (ժամանակագրութիւն, էջ 34): Ըստ էպոսի բազմաթիվ պատումների՝ թղնամու ձեռքն ընկնելով՝ կենդանի մորթագերծ է արվում Քյոնոյու զինակիցներից Դեմիրշիօղլին, որին փորձում են ազատել Գզիրոզլի Մուստաֆան և մյուսները:

³¹ Aslanoglu, s. 7-8.

³² Sümer, s. 36 կն:

քրդական գյուղում, գոյություն է ունեցել Գզիրօղլիների տոհմ կամ Մուստաֆայի հայրն, իրոք, զբաղեցրել է համապատասխան պաշտոնն իր գյուղում, որով Բաղիշեցու հաղորդումը կապվում է էպոսի թուրքական և ադրբեջանական բազմաթիվ պատումներում հիշվող հերոսի «գզիր» հոր՝ սուլթանին ընդդիմանալու և մահապատժի ենթարկվելու մասին պատմությանը: Հենց դրանից հետո է Մուստաֆան իր 40 հեծյալներով քաշվում լեռները և վրեժխնդիր լինում հորը կախաղան հանած թշնամիներից: Հատկանշական է, որ ջալալի դառնալով՝ վրիժառու գործունեություն ծավալելու նմանատիպ դրդապատճառներ Դարանաղցին նշում է Գզիրօղլուց հետո իր հիշատակած վերջինիս հայրենակից երկու այլ քուրդ ջալալի առաջնորդների մասին (Սարգար Մահմուդ և Չախուօղլի Ղայա). «...նախ զիւր եղբայրն... (*) սպանին էնկիշարիքն ի Չորականջեր գիւղն, եւ նա վասն կսկծանաց եղբօրն ժողովեաց բազում քուրդ, եւ զոմանս յենկիշարեցն սպանեց ի մէջ գեղջիցն Սիմայու»: Կամ. «Սորա մեծ եղբայրն... սպանին ենկիշարիքն նենգութեամբ եւ խաբկանօք, եւ այս Ղայեա Չախու Օղլիս շարացեալ ժողովեաց բազում ելուզակս նման ինքեան եւ բազում շարիս գործեաց սպանմամբ թուրքացն մեծամեծաց... եւ ինն քաշազօր քրդով դիմեաց ի լերինս բարձանց ապաւէն առնելով զապառաժս վիմաց»³³: Ամեն դեպքում, Գզիրօղլի Մուստաֆայի ապստամբելու դրդապատճառների մասին Դարանաղցին լռում է:

Հետաքրքիր է, որ Բաղիշեցին ևս կրճատ է նշում քուրդ ավագակապետի անունը (Գզիրօղլի), սակայն որևէ հիշատակություն չկա նրա ջալալի լինելու մասին, ինչը անպայման շեշտում են մյուսները:

Քյոռօղլու այս զինակցի մասին մանր ժամանակագրություններին բնորոշ արձանագրային ոճով միևնույն հակիրճ տեղեկությունն է պարունակում նաև Գրիգոր Դարանաղցու խմբագրած XVII դ. ժամանակագրությունը, որը կազմվել է անանուն ժամանակագրական տարաբնույթ բնագրերից, «զոր ոմանք գրեալ են, բայց ոչ զժամանակն եւ ոչ զտեղին եւ ոչ զանուն գրողին է յայտնի»³⁴.

«Թվին Ռիթ (1590) Քուրթն գլուխ քաշեց եկեալ յէզնկան...

Թվին Ռե (1591) Գրգիր օղլին ելաւ ճալալի, Քուրթ ազգաւ»³⁵:

Նույնը վկայում են նաև XVIII դ. մանր ժամանակագրությունների հեղինակները: Փոքր-ինչ աղավաղված՝ վերոհիշյալ հատվածը կրկնում է Ղևոնդ Տոսպեցին. «Ռե (1591) Գզիր օղլին եղեւ Շաւալի Քուրտ ազգաւ»³⁶: «Շաւալին» արդեն ակնհայտորեն ժամանակագրի կողմից սխալ արտագրության արդյունք է:

³³ Ժամանակագրություն, էջ 33-34:

³⁴ Նույն տեղում, էջ 3:

³⁵ Մժ, հ. Բ, էջ 268-269:

³⁶ Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, էջ 502:

Միևնույն ժամանակագրական ոճով ևս մեկ հաղորդում առկա է եղմ. 3701 ձեռագրում ամփոփված համառոտ ժամանակագրության մեջ, որը, դրա հրատարակիչ Նորայր Պողարյանի համոզմամբ՝ XVIII դ. խմբագրությունն է (բանասիրության մեջ պայմանականորեն հիշատակվում է որպես «Երուսաղեմի ժամանակագրություն»): Հատկանշական է, որ «ժամանակագրություն» մեջ հիշատակվում է Դավրիժեցու երկը: «Ներկա ժամանակագրությունը ունի շատ մը կարևոր տեղեկություններ, — գրում է Պողարյանը, — իր կողմե գրի առնված կամ այլուստ անձանոթ աղբյուրներե քաղված»³⁷: Ընդամին, արձանագրված է հետևյալը.

«ՌՇՂԲ = ՌԷԹ (1590).- Յայսմ ամի քուրթն գլուխ քաշեց եւ եկն եզրնկէն:

ՌՋՂԳ = ՌԽ (1591).- Յայսմ ամի Քիզիր-օղլին էլաւ Զալալի՝ քուրդ ազգաւ»³⁸:

Հատկանշական է, որ ի տարբերություն մյուս աղբյուրների՝ սույն ժամանակագրության մեջ հայտնի ասպատակի մականունը կազմող պաշտոնական կոչումը նշված է օսմանյան գրական ձևով «kizir», այլ ոչ թե «գզիր» ժողովրդական արտասանությամբ:

Ուշագրավ է հատկապես Հարություն քահանա Խալֆայանի (աշխարհիկ անվամբ՝ Մարտիրոս Խալիֆա) վկայությունը զինակից ջալալի առաջնորդների մասին. «ՌԽ (1591) Քօռ օղլին, Գզիր օղլին եւ այլ բազումք եղէն Զալալիք»³⁹: Նույնը բառացիորեն կրկնվում է նաև Անանուն Վանեցու տարեգրության մեջ⁴⁰:

Վ. Հակոբյանի կարծիքով Խալֆայանը, որի ժամանակագրությունն ընդգրկում է 623-1800 թթ. ժամանակահատվածը, մի պատրաստի բնագիր է շարունակել XVIII դ. 80-ական թվերից⁴¹: Եվ եթե ընդունենք այս վկայության հավաստիությունը, ապա ստացվում է, որ հայ մատենագրության մեջ հիշատակվում է նաև Քյոռօղլու ապստամբության տարեթիվը, ինչն աննախագեղ է: Ամեն դեպքում, ինչպես արդեն նշվել է, օսմանյան պետական գրագրության փաստաթղթերում Քյոռօղլու առանձին ավագակալին գործողություններ հիշատակվում են դեռևս 1579 թ.-ից, իսկ Քյոռօղլին ինքը համարվում է 1582-84 թթ. ժամանակահատվածից ավագակալին գործունեություն ծավալած նախաջալալիական շրջանի հրոսակներից⁴²:

³⁷ «Ժամանակագրություն (XI-XVIII դդ.)», տպագրության պատրաստեց Ն. Եսյս. Պողարյան, ԲՄԳ, 1969 (էջ 257-282), էջ 257:

³⁸ Նույն տեղում, էջ 278:

³⁹ Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, էջ 124, Մժ, Բ, էջ 482:

⁴⁰ Մժ, Բ, Ա, էջ 355:

⁴¹ Մժ, Բ, էջ 480:

⁴² Akdağ, Türk Halkının Dirlilik ve Düzenlik Kavgası, Celali İsyanları, s. 265, 298.

Այնուամենայնիվ, առավել հավանական է թվում, որ հալֆայանն ի նկատի ունենալով Գզիրուղլի Մուստաֆայի և Քյոռուղլու զինակցության հանգամանքը, ինչը նրան կարող էր հայտնի լինել իր իսկ օգտագործած աղբյուրներից, ուղղակի նույնացրել է նրանց ապստամբության ժամանակահատվածները՝ իրար կցելով երկու տարբեր ժամանակագրական հաղորդում: Նման երևույթը, ընդհանրապես, բնորոշ է եղել մանր ժամանակագրությունների հեղինակներին, առավել ևս՝ հետագայում բանաքաղային կարգով դրանց շարունակողներին:

Այսպիսով, ակնհայտ է, որ խնդրո առարկա ժամանակահատվածի հայերեն ժամանակագրությունները ոչ միայն հաստատում են «Քյոռուղլի» էպոսի պատմական նախատիպերի և դրանում արտացոլված պատմական իրադարձությունների ուսումնասիրության առնչությամբ առկա պատմագրական հաղորդումներն, այլև լրացնում և հարստացնում դրանք հավելյալ մանրամասներով:

SAMVEL RAMAZYAN

**THE HISTORICAL BACKGROUND OF THE EPIC OF *KOROGLU*
AND THE ARMENIAN CHRONICLES OF THE 17TH- 18TH CENTURIES**

Keywords: Koroglu, Jelali, “minor chronicles”, epic, Kiziroglu Mustafa, chronist, Grigor Daranaghtsi, Kurd.

The historical basis of the epic of *Koroglu* is generally related to the Jelali (Celali) Rebellions, which took place in the Ottoman Empire in the late 16th and early 17th centuries. Relying on a centuries-old well-established tradition, the Armenian historiography of the 17th-18th centuries preserved important and unique information about the Jelali Rebellions and the Jelali leaders, the historical prototypes of the characters of the epic: Koroglu, Kiziroglu Mustafa, Kosa Safar and others.

Particularly important for the study of the historical background of the epic are not only the works of 17th century Armenian historians Arakel Davrizhetsi (Arakel of Tabriz), Grigor Daranaghtsi (Kamakhetsi) and Eremia Komurjian, but also “minor chronicles” of the same period. These sources contain information about the characters of the epic, as well as certain historical events that transpire in the epic.

САМВЕЛ РАМАЗЯН
ИСТОРИЧЕСКАЯ ОСНОВА ЭПОСА “КЕРОГЛЫ”
И АРМЯНСКИЕ ХРОНИКИ XVII- XVIII ВВ.

Ключевые слова: Кероглы, малые хроники, эпос, Гзироглы Мустафа, хронист, Григор Даранагци, курд.

Историческую основу эпоса “Кероглы” в целом составляют джелалийские восстания в Османской империи в конце XVI – начале XVII вв. Опираясь на многовековую стабильную традицию, армянская историография XVII-XVIII вв. сохранила важные и уникальные сведения об этих исторических событиях, в том числе о предводителях джелали, исторических прототипах действующих лиц эпоса: Кероглы, Гзироглы Мустафе, Коса Сафаре и др.

Особенную важность для изучения исторических предпосылок эпоса представляют не только труды армянских историков XVII в. Аракела Даврижеци, Григора Даранагци (Камахеци) и Еремии Кеомурчяна, но также “малые хроники” того же периода. Данные армянские источники содержат сведения как о персонажах эпоса, так и о некоторых отраженных в нем исторических событиях.

ՎԵՐԱ ՍԱՀԱԿՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ՝ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ (ՕՍՄԱՆԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ)

Բանալի բառեր՝ եղիա Մոմջյան, Զօմախլու, օսմաներեն պաշտոնական վավերագիր, Սարգիս Թորոսյան, էվերեկ, մուհաջիր, աշիրեթ, գաղտնի գրություն, ծածկագիր-շիֆրե:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են Հայոց ցեղասպանությանը վերաբերող վավերագրեր: Դրանք Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանի և հայաբնակ այլ վայրերի հայ բնակչության մասին տարաբնույթ զեկուցագրեր են, ականատեսների վկայություններ, հուշագրություններ, օրագրություններ, հայ որբերին և գաղթականությունը օգնելու նպատակով կազմակերպված տարբեր նախաձեռնությունների մասին տեղեկագրեր, օսմաներեն պաշտոնաթղթեր և այլն:

Վավերագրերն ընդգրկված են Կաթողիկոսական դիվանում, Նոր-Նախիջևանի հայոց եկեղեցիների հոգաբարձության, Մկրտիչ Ա Վանեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի (1893-1907 թթ.), Տիրայր վարդապետի (Տեր-Հովհաննիսյան-Մելիք Մուշկամբարյան Տիգրան), բանասեր Նորայր Բյուզանդացու, պատմաբան Ա. Ալպոյաճյանի և այլ անձանց ֆոնդերում: Այստեղ արձանագրված են հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, հայատառ թուրքերեն, օսմաներեն (բնօրինակ, լուսապատճեն, մեքենագիր՝ բնօրինակ և մեքենագրի լուսապատճեն) վավերագրեր նաև՝ միկրոժապավեններ:

Հայոց ցեղասպանությանը վերաբերող մատենադարանյան նյութի ամբողջական քննություն առաջին անգամ է կատարվում: Մեր նպատակն է մանրակրկիտ ուսումնասիրել ի մի բերված վավերագրական նյութը, վերլուծել և ներկայացնել այդ սկզբնաղբյուրների նշանակությունն ու կարևորությունը:

Այս ուղղությամբ ցարդ կատարված աշխատանքների մեջ նշանակալից ներդրում է Մատենադարանի ավագ գիտաշխատող Նարեկ Հակոբյանի՝ «Կաթողիկոսական դիվանի և սրբազան սինոդի արխիվային վավերագրերի հավաքածուն որպես հայկական հարցի ուսումնասիրության սկզբնաղբյուր (1894—

1914)» աշխատությունը, որում բարեխղճորեն ներկայացված են Կաթողիկոսական դիվանի մեջ արձանագրված Հայկական հարցին առնչվող նյութերը¹:

Հայոց պահանջատիրության իրավական քաղերի՝ ճանաչման և հատուցման համար մեծ կարևորություն ունեն օսմաներեն պաշտոնական վավերագրերը: 2011 թ. աշխատանքի անցնելով Մատենադարանում, առաջին հերթին սկսեցինք ուսումնասիրել այստեղ պահվող օսմաներեն փաստաթղթերը: Պրպտելով արխիվային նյութերն ու վերհանելով Յեղասպանությունը փաստող վավերագրերը, դրանք առանձնացրինք, ապա՝ դրանց վրա հրավիրեցինք Անահիտ Աստոյանի ուշադրությունը, որն այդ պահին ուսումնասիրում էր լքյալ գույքերի թեման²: Մատենադարանում պահվող վավերագրերի հետքերով հետագա տարիներին շարունակեցինք մեր հետազոտությունները, գտնելով շափազանց կարևոր այլ վավերագրեր ևս:

Չնայած պաշտոնական թուրքիան դեռևս խուսափում է ընդունել Հայոց ցեղասպանության իրողությունը և չի բացում թուրքական արխիվները, այնուամենայնիվ, այս պահին հանրության հասանելի հատուկենտ օսմաներեն վավերագրերը համոզիչ կերպով նկարագրում են ցեղասպանության հանցագործությունը, դրա իրականացման եղանակները, ծրագրման փուլերը, մասնակիցների լայն շրջանակները և այլ մանրամասներ:

1930 թ. նյու Յորքում լույս է տեսել Կարապետ քհնյ. Գալֆայանի³ (Արիս Տ.Կ. Գալֆայեան) «Զօմախլու»⁴ գիրքը⁵: Գրքում գետեղված է 17 օսմաներեն վավերագիր, որոնց ստացման վերաբերյալ Վահան Մալխասյանը ունի հակիրճ ծանոթություն. «Պետական հրահանգներով թուրքերէն բնագիրները ստացանք վերջին պահուն, երբ արդէն գրքին կեսէն աւելին տպուած էր: Գրքին յարգելի հեղինակը նոյնպէս խնդրած է յիշատակել հանգուցեալ Էվէրէկցի⁶ դեղագործ

¹ Ն. Ա. Հակոբյան, Կաթողիկոսական դիվանի և սրբազան սինոդի արխիվային վավերագրերի հավաքածուն որպէս հայկական հարցի ուսումնասիրության սկզբնաղբյուր (1894–1914), քեկնածուական ատենախոսություն, Երևան, 2016, 179 էջ:

² Վավերագրեր տե՛ս Ա. Աստոյան, Դարի կողոպուտը, Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Երևան, 2013, էջ 215-222:

³ Կ. Գալֆայանի կենսագրական մանրամասները տե՛ս ՀՀ ազգային արխիվ, Կարապետ Բահանա Գալֆայան, Ֆոնդ № 167, ցուցակ № 1, վավ. 377, էջ 2:

⁴ Չոմախլուն գյուղ է պատմական Փոքր Հայքում, Կեսարիայի նահանգի Կեսարիայի գավառում, էվերէկ Բաղաբից 6-7 կմ հեռավորության վրա: Տե՛ս Ք. Խ. Հակոբյան, Մա. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, Երևան, 1998, հ. 4, էջ 267:

⁵ Կարապետ քհնյ. Գալֆայեան (Արիս Տ.Կ. Գալֆայեան), Զօմախլու, Նիւ-Եորք, տպ. Կոչնակ, 1930:

⁶ Էվերէկ (Էվէրէկ) կամ Ավերակ՝ գյուղաբաղա՛ Կեսարիայում: Բուն գյուղաբաղա՛նում և Ֆենեսետում Ս. Էփրիկյանը հաշվում է 1700 տուն հայ բնակիչ: Ունեցել է Մեսրոպյան անունով վարժարան և 440 աշակերտանոց ընթերցարան, Ս. Թորոս անունով մեկ եկեղեցի, բա-

Սարգիս Թորոսեանի անունը, որ սոյն պաշտօնական թղթակցութեանց թուրքերէն բնագիրները զարմանալի միջոցով մը կրցած է բանտին մէջ իրեն հասցնել: Դժբախտաբար, մեզի անձանօթ կը մնայ թէ ան ինչ պարագաներու տակ կրցած էր ձեռք անցնել այնպիսի թղթերը, զորս իւրացնել կարենալու համար պէտք պիտի ըլլար կազմակերպուած մեծ ուժի եւ նիւթական խոշոր ծախսի, յայտնի է, թէ շատ անգամ ալ ապարդիւն աշխատանքի պիտի յանգէր նմանօրինակ ծրագիրի մը յաջողութիւնը»⁷:

Կարևորելով այս վավերագրերի բովանդակութիւնը՝ պատմաբան Լևոն Վարդանը, անդրադառնալով հրապարակված փաստաթղթերին⁸, գրում է, թե Կ. Գալֆայանը զետեղել է հրահանգների այս հավաքածուի թարգմանությունները, որոնք սակայն, ունեն լեզվական ինչ-ինչ անճշտություններ և խրթնաբանություններ: Ուստի «մենք կը կատարենք նոր թարգմանութիւն մը Զօմախլու-ի մեջ դրուած օսմաներէն հաւաքածոյէն»⁹: Ինչ վերաբերում է զետեղված վավերագրերի թարգմանությանը՝ դրանք կատարել է անձամբ Կ. Գալֆայանը¹⁰:

Վստահաբար պէտք է ասենք, որ Լևոն Վարդանը գործածել է Կ. Գալֆայանի գրքում հրապարակված վավերագրերը, քանի որ ձեռքի տակ չի ունեցել այլ կրկնօրինակ, կամ չի կարողացել ձեռք բերել հենց բնօրինակները:

Հայաստանի Ազգային արխիվում պահվող մի նամակից տեղեկանում ենք, որ նշված փաստաթղթերը փնտրել է նաև պատմաբան Գրիգոր վրդ. Կերկերյանը (Գրիկեր): 1964 թ. Գրիկերին ուղղված երեք էջից բաղկացած իր պատասխան նամակում¹¹ Կ. Գալֆայանը մանրամասներ է հաղորդում «Զօմախլու» և «Գիրք ելից հայոց» աշխատություններում օգտագործված օսմաներէն փաստաթղթերի ձեռք բերման պատմությունից, ապա նաև ցավով նշում, որ բնագրերը կորել են¹²: Նամակի երրորդ էջում Գալֆայանը գրում է, թե իրեն

վական մեծ թիվ են կազմել Հայ ավետարանականները: Էվերեկցիների հայերենը Ս. Էփրիկյանը համարում է բավական աղավաղված: Իրա արդյունքներից մեկն էլ Ավերակի՝ Էվերեկ տարբերակն է: Էվերեկ ասելով տեղացիները ընկալել են իրար կից գտնվող շոս շեներից կազմված գյուղախումբը: Մանրամասն տե՛ս Ս. Էփրիկյան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1902, էջ 795:

⁷ Զօմախլու, էջ 111: Այս վավերագրերի ստացման մանրամասնությունները տե՛ս ՀՀ ազգային արխիվ, Ֆոնդ № 167, ցուցակ № 1, վավ. 377, էջ 2:

⁸ Լևոն Վարդան, Հայկական տասնհինգր և հայերու լքեալ գոյքերը, քննական ակնարկ ըստ թրքական վաւերագիրներու, Պէյրուք, 1970, էջ 133:

⁹ Նույն տեղում, էջ 203:

¹⁰ ՀՀ ազգային արխիվ, Ֆոնդ № 167, ցուցակ № 1, վավ. 377, էջ 2:

¹¹ Նամակի մասին տեղեկացրել է Միհրան Մինասյանը, որին հայտնում եմ խորին շնորհակալությունս:

¹² ՀՀ ազգային արխիվ, Ֆոնդ № 167, ցուցակ № 1, վավ. 377:

ուղարկված նամակը ներփակ լուսաբանական 10-էջանոց հարցարանով անմիջապես ուղարկել է Նյու Յորք՝ Վահան Մալխասյանին¹³:

Գրիկերը փնտրել ու կարևորել է այս պաշտոնաթղթերը, քանի որ դրանք բնօրինակներ են, իսկ դրանցից մեկը՝ Յեղասպանության վերաբերյալ տրված գաղտնի ծածկագրերի, գրությունների ու գաղտնի հեռագրերի 20 կետից բաղկացած ամփոփագիրն է՝ բացառիկ մի պաշտոնական վկայություն, որն այսօր ունի իրավական ապացուցողական մեծ նշանակություն և կարող է Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հատուցման համար հիմք հանդիսանալ:

Ինչպե՞ս են այս վավերագրերը հասել Մատենադարան: Յեղասպանության վերաբերյալ մեծաթիվ նյութեր՝ հուշագրություններ, վկայություններ, պաշտոնաթղթեր, սեփականության վկայականներ և այլն, Հայաստան են բերվել Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցին ընդառաջ: Վավերագրերի մատենադարանյան հավաքածուն նույնպես Հայաստան է բերվել այդ տարիներին: Այն ներառում է թվով 17 օսմաներեն պաշտոնաթուղթ, որոնց հակիրճ նկարագրություններն ամփոփված են Մատենադարանի կաթողիկոսական դիվանում (29ա): Այս վավերագրերի ստացման վերաբերյալ 29ա ցուցակի 375գ էջում արված է հետևյալ գրառումը. «Նյութեր Կեսարիա քաղաքի արխիվից: ԱՄՆ-ից բերել է Վահան Մալխասյանը 1970 թ. և հանձնել՝ եղիա Հովհաննեսի Մոմջյանին¹⁴ (ծագումով Կեսարիայի շրջանի էվերեկ գյուղաքաղաքից), որը և հանձնել է Մատենադարանին: Հասցե՝ Կիրովական, 377200, Կիրովի հրապարակ 10, բնկ. 11»¹⁵:

Առաջին ակնհայտ զուգահեռությունը Վ. Մալխասյանի մասին հիշատակությունն էր: Վերջինս, «Զօմախլու» գրքում առկա հակիրճ ծանոթագրության հեղինակն է: Այս հանգամանքի վրա հենվելով՝ մանրագնին կերպով համեմատեցինք վավերագրերը, պարզելով, որ Կ. Գալֆայանի գործածած բնօրինակ փաստաթղթերը այժմ գոյություն ունեն և պահվում են Մատենադարանում: Սակայն ուշագրավ է, որ Կ. Գալֆայանի նշած և Ե. Մոմջյանի նվիրաբերած վավերագրերի՝ 29ա ցուցակում նկարագրված ոչ բոլոր վավերագրերն էին համ-

¹³ Նույն տեղում, էջ 3:

¹⁴ Եղիա Հովհաննեսի Մոմջյան՝ լեզվաբան, հնագետ, շումերագետ, ծնվել է 1905 թ. մարտի 15-ին, էվերեկ գյուղաքաղաքում: Դեպի Գեր-Ջոր տարագրության հանապարհին կորցրել է ծնողներին: Մեծացել է Բեյրութի որբանոցներից մեկում: Ե. Մոմջյանի արխիվի նյութերը՝ ձեռագրի ուսումնասիրությունները, պահվում են ՀՀ տարբեր արխիվներում և Մատենադարանում: Հետմահու տպագրվել են նրա բազմաթիվ հոդվածներ: Տպագրվել է նաև նրա շումերերեն-հայերեն ստուգաբանական բառարանը: Կենսագրական այս տեղեկությունը մեզ է տրամադրել Ե. Մոմջյանի գիտական ժառանգության պահպանությամբ զբաղվող, իրավապաշտպան, Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի նախագահ Գևորգ Մանուկյանը:

¹⁵ ՄՄ Կաթ. դիվան, 29ա ցուցակ, էջ 375գ:

ընկնում: Պատճառը մասամբ նախկինում արված ոչ ճշգրիտ նկարագրություններն էին, մասամբ էլ՝ մինչ Մատենագարան հասնելը դրանց վնասվելը կամ կորչելը:

Կ. Գալֆայանի գործածած վավերագրերից կարևորագույնը Կաթողիկոսական դիվանի 3-րդ թղթապանակում 133-րդ համարի ներքո արձանագրված օսմաներեն պաշտոնական փաստաթուղթն է, որի գտնվելու վայրի մասին ցեղասպանագետները, որքան մեզ հայտնի է, մինչ այժմ որևէ տեղեկություն չեն ունեցել:

Հայոց Ցեղասպանության պետական ծրագիր լինելը փաստող այս բացառիկ վկայությունը, ըստ էության, 1915 թ. մայիսի 25-ից մինչև 1915 թ. օգոստոսի 13-ը հայկական բնակավայրերը հայաթափելու, հայ ժողովրդի ունեցվածքը յուրացնելու, նրանց տներում մուսուլման գաղթականներին (մուհաջիր) բնակեցնելու, հայ ժողովրդին բնաջնջելու, հայ երեխաներին թուրքացնելու վերաբերյալ տրված կարգադրությունների և գաղտնի հեռագրերի, գաղտնի հրամանագրերի ու ծածկագրերի ամփոփագրի բնօրինակն է:

Հողվածի շրջանակներում հրապարակելով իր տեսակի մեջ եզակի, հույժ կարևոր այս փաստաթուղթը, նպատակ ենք հետապնդում Հայոց ցեղասպանության դատապարտման, ճանաչման և հայ ժողովրդին հատուցմանն ի նպաստ՝ նրա վրա հրավիրել միջազգային իրավունքի մասնագետների, ցեղասպանագետների ուշադրությունը:

Ստորև ներկայացնում ենք բնագրից արված մեր թարգմանությունը՝ հավելվածում ներկայացնելով նաև վավերագրի երեք էջերի լուսապատճենը:

Հայերին տեղահանելու և տարագրելու, տիրագուրկ կալվածքների կառավարման և պահպանության, և հարանման այլ խնդիրների ու գործերի առնչությամբ տրված բոլոր պաշտոնական շրջաբերականներն (ի սկզբանե մինչ օրս. Evvel ve Âher) իրագործել: Սույն գրությամբ հայտարարում և կարգադրում ենք դրանց իրագործումը՝ ներևում շարադրված ամփոփագրերի համաձայն¹⁶:

1. 12 Մայիս, 331 (1915 թ., մայիսի 25): Ծածկագիր. Հայկական գյուղերը հայաթափելուն պես, պետք է աստիճանաբար տեղեկություններ հաղորդել [գյուղերի] մասին, ապա գյուղի անվան և այն վայրի մասին, որտեղ ուղարկվում են:

¹⁶ ՄՄ Կաթողիկոսական դիվան, 3-րդ թղթապանակ, վավ. 133, 2 թերթ:

2. 23 Մայիս, 331 (1915 թ., հունիսի 5): Ծածկագիր. Դատարկված գյուղերի ժողովրդի փոխադրության և այլ ծախսերը պետք է հատուցվեն նույն գյուղերն ուղարկված գաղթականներին հատկացվելիք հատուկ գումարից: Եւ, երբ այդ նպատակին հատկացված բավարար դրամ չլինի, պետք է հեռագրով փոխանագիր պահանջել, և այս գործողության համար անհրաժեշտ ծախսի գումարը հեռագրով պետք է ծանուցել, որի հաշվեցուցակը գաղթականների հաշվեցուցակի նմանությամբ պետք է ուղարկել բոլոր մանրամասներով՝ երեք ամիսը մեկ:

3. 31 Մայիս, 331 (1915 թ., հունիսի 13): Եւ Այն ընտանի կենդանիները, որոնք հայերը չեն կարող իրենց հետ տանել, հարկ եղած դեպքում, կարող են հանձնվել զինվորական կարիքների համար՝ հանձնված ստացականի հիման վրա:

4. 31 Մայիս, 331 (1915 թ., հունիսի 13): Եւ Հայերի բնակության, սննդի և նրանց այլ գործերի մասին տրված կանոնադրության ութերորդ հոդվածի համաձայն՝ նրանց տրվելիք արտոնագիրը (*վեսիթա*) վերաբերում է միմիայն իրենց նոր շրջանի մեջ երթևեկությանը: Այդ արտոնագիրը կարող է գործածվել մինչև պատերազմի ավարտը:

5. 8 Հունիս, 331 (1915 թ., հունիսի 21): Ծածկագիր. Տեղացի ժողովուրդը չպետք է խառնվի տիրագուրկ կալվածքների¹⁷ գործին:

6. 9 Հունիս, 331 (1915 թ., հունիսի 22): Ծածկագիր. Այն ֆաղաֆներն ու գյուղերը, որոնք հայաթափվում են, տեղի դպրոցները նույնությամբ պետք է հանձնել այնտեղ հաստատվող մուսուլման գաղթականներին: Սակայն անհրաժեշտ է արձանագրել այդ հաստատությունները՝ դպրոցական պարագաներով, ֆանակով և արժողությամբ:

7. 10 հունիս, 331 (1915 թ., հունիսի 23): Ծածկագիր. Տեղահանության ընթացքում միևնույն գավառի և գավառակների¹⁸ հայ բնակչությանը տեղաբաշխել առանձին-առանձին և թույլ չտալ, որպեսզի վերջիններս կարողանան դպրոց բացել: Ստիպել, որպեսզի իրենց գավառներին ուղարկեն

¹⁷ Կ. Գալֆայանը այստեղ գործածել է «վյալ ինչքեր» արտահայտությունը: Այս եզրը մենք ճիշտ չենք համարում: Օսմանյան կայսրության հայազգի ֆաղաֆացիների՝ սահմանադրությամբ ամրագրված սեփականության անկապտելի իրավունք է խախտվել: Ըստ էության, հայերի սեփականությունը օտարվել է առանց սեփականատիրոջ ներկայության, իմացության, հետևաբար՝ առանց նրա համաձայնության: Ուստի այն պետք է համարել ոչ թե լքված, այլ տիրագուրկ: Ավելին, երբ Մ. Տամատյանի (վարչապետ) գլխավորությամբ Ադա-նայում Կիլիկիան հռչակվում է անկախ հանրապետություն, կառավարության կազմում ստեղծվում է «Անժառանգ կալուածքներու վարչութիւն», ֆանի որ սեփականատերերը վտարվել էին և սպանվել: Ինչ վերաբերում է բնագրային թարգմանությանը, ապա օսմաներենում emval-i metruke արտահայտությունը թարգմանվում է «գողնված ապրանքներ»:

¹⁸ Բնագրում՝ *քաղա* և *լիվա*:

պետական դպրոց: Պետք է ուշադրություն դարձնել, որ այն վայրերը, որտեղ նրանք կանգ են առնում, իրարից գտնվեն առնվազն հինգ ժամ հեռավորության վրա, **շունենան ինքնապաշտպանության համար նպաստավոր և հարմար դիրքեր:**

8. 28 հունիս 331 (1915 թ., հուլիսի 11): Ծածկագիր. Դատարկված (հայաթափված) հայկական գյուղերը բնակեցնելու նպատակով, անմիջապես այնտեղ ուղարկել մուսուլման գաղթականների խմբեր¹⁹: Եթե այնտեղ ուղարկվածները (այսինքն՝ մուհաջիրները) չունեն երկրագործական գիտելիքներ, նրանց հատկացվելիք գումարների հաշվին փնտրել և գտնել վարպետներ, նրանց աշակցությամբ մշակել այգիներն ու պարտեզները՝ պահպանելով նախկին շեն վիճակը:

9. 29 հունիս 331 (1915 թ., հուլիսի 12): Ծածկագիր-հեռագիր. Որպես հայերի համար տեղահանության կայան ընտրվել են Հալեպի նահանգի (վիլայեթ) հարավային, Սիրիայի նահանգի արևելյան հատվածները և Քերֆուհի սանջախը (վիլա): **Ձոր սանջախ այլևս հայեր չպետք է ուղարկվեն:** Քանի որ այնտեղ տասն անգամ ավելի մարդ է արդեն ուղարկված: Տեղահանվածները այլևս պետք է ուղարկվեն վերը նշված նահանգները: **Տարագրության ճանապարհին եղած հատուկ պաշտոնյաներին հայտնել սույն տեղեկությունը:**

10. 29 հունիս, 331 (1915 թ., հուլիսի 12): Ծածկագիր-հեռագիր. Հայերի բռնագաղթի և ահաբեկի ընթացքում հավանական է, որ երեխաներ մնան: Նրանց կրթելու և ուսուցանելու նպատակով բաշխել այնպիսի ֆաղաֆների ու գյուղերի նյութապես ապահով, հայտնի մարդկանց տների միջև, որտեղ հայեր կամ օտարականներ չեն ապրում, մնացյալ երեխաներին բաժանել նյութապես ոչ ապահով ընտանիքների միջև: Այդ դեպքում, մոհաջիրներին հատկացվելիք գումարից ամսական 30 ֆուրուշ վճարել այդ անապահով ընտանիքներին: Հարկ եղած բոլոր տեղերում հրահանգել: Ի կատար ածել ըստ գրության:

11. 10 հունիս, 331 (1915 թ., հունիսի 23): Հեռագիր. Տիրագուրկ կալվածքների հանձնախմբի նախագահին և անդամներին հրահանգված է հայաթափված գյուղերում ու ֆաղաֆներում մուսուլման գաղթականներին և

¹⁹ Բալկանյան պատերազմից հետո Օսմանյան Թուրքիա տեղափոխված գաղթականների մեծ խումբ, որը բնակեցվում էր հայաթափված գյուղերում ու ֆաղաֆներում: Այդ հարցերով զբաղվում էր Օսմանյան *Իսթան վե ասայիշ մյուդյուրլյուղու* (Տեղահանման և գաղթականության տնօրինություն) կոչված վարչությունը: Այս ֆաղաֆականության նպատակը իսլամ բնակչության ավելացումն էր, ինչի մասին և կարդում ենք հուլիս 15-ի գրության մեջ:

ցեղախմբերին ($աշխրեթ^{20}$) վերաբնակեցնելու գործը: Հարկ եղած ֆննդությունը կատարելով և տեղեկագրեր կազմելով, 15 օրը մեկ անգամ կազմված և լրացված ցուցակները պարտավոր են ներկայացնել [Ներքին գործոց] նախարարությանը: Իրենց պաշտոնավարման իրավասությունների շրջանակներում, կանոնադրության համաձայն, հաստատվելիք մուսուլման գաղթականների հանձնախմբի անդամ լինելու հանգամանքով, այնտեղ ևս այցելելով, տրված որոշումների և գործադրությունների համաձայն, կանոնավորապես պետք է իրականացնել մուսուլման գաղթականության վարչությանց գործերն ու գործառնությունները, ֆննել երկրագործական ու տնտեսական կյանքը, կազմակերպել նրա բնականոն ընթացքը: Պետք է անել ամեն հնարավոր բան՝ զարգացում ապահովելու նպատակով: Բացառիկ առաջնահերթությամբ պետք է կարևորել մուսուլման գաղթականների [հայկական բնակավայրերում] զետեղման գործը: Արդյունքի մասին հետևողականորեն տեղեկացնել:

12. 15 հուլիս, 331 (1915 թ., հուլիսի 28): Գրություն. Օսմանյան երկրում ի սկզբանե մուսուլմանաբնակ գյուղերը իրենց չափերով փոքր են եղել և ֆաղափակրթական կենտրոններից հեռու մնալու հետևանքով ընկերային ու հավաքական զարգացման տեսակետից հետամնաց: Սա հակասում է մեր այն սկզբունքային դիրքորոշմանը, որի համաձայն, պետք է բազմացնել, շատացնել **խլամի հետևորդների ֆանակը**, զարգացնել արհեստների նրանց տիրապետման հմտությունները և վաճառականական ձիրքը: **Ուստի, նմանատիպ գյուղերի իսլամադավան բնակիչներին վերաբնակեցնել նախկինում հարյուրից հարյուր հիսուն տուն ունեցող հայաթափված գյուղերում** (ընդգծումը մերն է - Վ. Ս.): Անմիջապես գործադրել: Նրանց բնակեցնելուց հետո, այն գյուղերը, որոնք տակավին դատարկ կմնան, արձանագրել, որպեսզի հետագայում դրանք ևս բնակեցվեն մուսուլման գաղթականներով ու ցեղախմբերով:

13. 21 հուլիս, 331 (1915 թ., օգոստոսի 3): Հեռագիր. Նպատակը, որը հարկադրեց իրականացնել վարչական ու ֆաղափական առումով դժվար իրագործելի այս ձեռնարկը, որն է հայտնի (malum) շրջանների հայերի փոխադրության և աֆսորի հարցը, իր լրումին հասցնելու համար անհրաժեշտ է, որ հայերին աֆսորելիս ուշադրություն դարձվի մարդավայել պահանջներին ու պարտականություններին, հոգ տարվի նրանց պատվի և կյանքի պաշտպանության, տիրազուրկ կալվածքների մասին, որպեսզի դրանք հետագայում վերադարձվեն տերերին, իրենց փոխադրության ընթացքում

²⁰ Քրդական մասամբ հոշվոր ցեղախումբ, տե՛ս *Վավերագրական նյութեր արևմտահայերի մասին*, առաջաբանի հեղինակ և թարգմանիչ Ա. Հ. Փափազյան, Երևան 1983, էջ 10:

գերծ պահել հավանական հափշտակություններից, շարաշահումներից: Հասարակ ժողովուրդ, թե պաշտոնյա՝ բոլորը պետք է հարգեն տերության և ազգի փրկությունն ու հարատևումն ապահովելու համար պարտադրված այս ձեռնարկը: Նրանք, ովքեր ուղղակի կամ անուղղակի կփորձեն հակադրել այս շարժմանը, խստիվ և ծանր կերպով պետք է պատժվեն, իսկ հափշտակված գույքը պետք է ետ վերցվի: Ազգային վարձն ու արժանապատվությունը պահելու համար ամեն միջոց պետք է ձեռնարկել (ընդգծումը մերն է – Վ.Ս.):

14. 22 հուլիս, 331 (1915 թ., օգոստոսի 4): Ծածկագիր. Մի քանի տեղից ստացված տեղեկությունների համաձայն, տիրագուրկ կալվածքների անուրդի ընթացքում որոշ պաշտոնյաներ կուտակած եկամուտներով փորձել են գնել դրանք: Կառավարության պաշտոնյաների նման միջամտությունները տեղիք են տալիս ամբաստանությունների: Ուստի, տիրագուրկ կալվածքների վաճառքի մեջ պաշտոնյաները չպետք է հանդես գան գնորդի կարգավիճակում: Այդտեղ ևս նման պարագաների դեպքում վարվեք ըստ այդմ:

15. 25 հուլիս, 331 (1915 թ., օգոստոսի 7): Գրություն. Անհրաժեշտություն է առաջացել, որ մանրամասն վիճակագրություններ ու տեղեկագրեր պատրաստվեն ծանոթ տեղեր և շրջաններ աֆսոսվող ժողովրդի ճշգրիտ թվի, նրանց թողած կալվածքների և հողերի տեսակի, քանակի ու արժեքի մասին: Այդ նպատակի համար ներփակ ուղարկում ենք բավական թվով ցուցակների օրինակներ, որոնց սյունակները պետք է լրացնել և ուղարկել:

16. 28 հուլիս, 331 (1915 թ., օգոստոսի 10): Ծածկագիր հեռագիր. Հայ ժողովրդի պաշտոնական հաստատությունների և անհատների ունեցած պարտքերը և նրանց հանդեպ եղած պահանջների հատուցման կամ գանձման եղանակների վերաբերյալ կազմված է կանոնադրություն (talimatname), որը շուտով կուղարկվի ձեզ: Առայժմ դրանք անհապաղ արձանագրեցե՛ք հատուկ մատյանների մեջ, որպեսզի պարտատերերը հանգիստ ու ապահով զգան:

17. 29 հուլիս, 331 (1915 թ., օգոստոսի 11): Հեռագիր. Հայաթափված (դատարկված) վայրերը պետք է վերաբնակեցվեն մուսուլման գաղթականներով, որոնց խմբերը կենտրոնացվում են Անկարա և Կոնիա քաղաքներում: Կոնիայից պետք է ուղարկվեն դեպի Ադանա և Դիարբեկիր (Տիգրանակերտ): Իսկ Անկարայից՝ Սիվաս (Մեքաստիա), Կայսերի (Կեսարիա) և Մամուրեթ-ոյ Ազիզ (Մեզիրե): Հատուկ այդ նպատակի համար մեր հավաքագրած գաղթականները (mürettep muhacirîn sevki olunacağından...) պետք է ուղարկվեն նշված նանապարհ: Սույն հրամանը ստանալու պահին, վերը նշված շրջաններում, արդեն իսկ գտնվող գաղթականները, պետք է շարժվեն

նույն հանապարհներով և միջոցներով: Սույնով ծանուցում ենք դրա իրագործումը:

18. 29 հուլիս, 331 (1915 թ., օգոստոսի 11): Ծածկագիր. Կրոնափոխ եղողների, [մուսուլմանի հետ] ամուսնացողների, դաստիարակելու նպատակով վստահելի անձանց հանձնված [հայ] երեխաների անձնական գույքը պետք է պահվի տեղում (çocukların emlâk-ı zâtiyeleri ibkâ): **Եվ, եթե նրանց կտակարարները արդեն մեռած են** (ընդգծումը մերն է – Վ.Ս.), պետք է նրանց ժառանգության բաժին թողնել (hisse-i irsî):

19. 31 հուլիս, 331 (1915 թ., օգոստոսի 13): Շրջաբերական հեռագիր. Կուսակալությունների և գավառների սահմաններից դուրս է բերվում տեղահանվող հայությունը: Սակայն, նրանք օրերով երկաթուղային կայարաններում են սպասում և առաջացնում խնդումներ, որի հետևանքով դադարել է զինվորականության փոխադրությունը, ինչպես նաև սահմանակից կուսակալությունների համար առաջացրել են դժվարություններ: Ուստի այսուհետ, նախօրոք որոշված տեղերը փոխադրելու համար տարագրվողներին խմբերի բաժանել (**բաֆիլե**) և տեղափոխել մինչև ընտրված կենտրոն՝ Հալեպ: Այն նահանգներով և գավառներով, որտեղով պետք է անցնեն, տեղի կառավարիչների հետ թղթակցելով **ապահովել այդ կետը**: Տարագրվող հայությանը թույլ չտալ, որպեսզի զինվորական կայաններին խառնվեն: Տարագրյալների խմբերին պետք է ուղեկցեն **մասնավոր պաշտոնյաներ** (պատոված մի քանի բառ)... և դրա հետ կապված անհրաժեշտ ծախսերը (պատոված հատված) պետք է հատկացնել դրամից:

20. 31 հուլիս, 331 (1915 թ., օգոստոսի 13): Հեռագիր. Տարագրվող հայերին (պատոված մաս), չնչին գնով վաճառվի... (մոտ մեկ տող պատոված)...

(1) Այն շրջանները, որոնք չպետք է հայաթափվեն, օտար, կասկածելի, անձանոթ որևէ մեկին չթույլատրել ներս մտնելու:

(2) Եթե լինեն այդպիսիք, անմիջապես վտարել:

(3) Եթե հայերից էժան ապրանք գնողներ լինեն, ջանացե՛ք բարձրացնել ապրանքի գինը, վճարականապես արգելե՛ք և տեղի մի տվե՛ք ապօրինի շահեր ապահովելու:

(4) Թույլատրե՛ք, որ հայերը իրենց ուզած ապրանքը վերցնեն իրենց հետ:

(5) Փչացող այն ապրանքները, որոնք հայերը չեն կարող իրենց հետ տանել, աճուրդով գնեցե՛ք:

(6) Այն ապրանքները, որոնք հայերը չեն կարող տանել իրենց հետ, և, որոնք փչանալու վտանգ չունեն, պետք է պահվեն իրենց տերերի անունով:

(7) Անշարժ կալվածքների վարձակալությունը, ավանդի փոխանցումը, գրավի և նման այլ գործարքները, որոնք տիրոջ սեփականության իրավունքը կարող են խախտել, արգելել, իսկ տարագրության սկզբից մինչև հիմա գործադրված պայմանագրերը համարել անվավեր:

(8) Չիրականացնել ուրիշի անունով կեղծ պայմանագրերի գործադրում: Թույլատրել գնման, փոխանցման և նման գործողությունները: Արգելել օտարականներին անշարժ կալվածք կամ հող գնելու գործարքները:

Տիրագուրկ կալվածքների Բ. հանձնախմբի
Բարձր նախագահությանը
Ընդ. թիվ 8149
Մասն. թիվ 798
Վսեմաշուք տեր իմ

Ներքին Գործոց Նախարարության 331 թ. օգոստոսի 12-ի (1915 թ., օգոստոսի 25), 486 համարով թվագրված գրության համաձայն՝ ընդհանուր շրջաբերական գրությամբ ձեզ ուղարկելով վերոգրյալ հրահանգների կրկնօրինակը, տեղեկացնում և հանձնարարում ենք՝ գործադրել ըստ բովանդակության:

25 օգոստոս, 331 (1915 թ., սեպտեմբերի 7):
Մյուսթեսարրըֆ
(ստորագրություն)²¹:

Ակնհայտ է գործ ունենք հայաթափման, հայ ժողովրդին ոչնչացնելու, հայերի ունեցվածքը յուրացնելու հատուկ գրույթյունների հետ: Ավելի քան բացահայտ է, որ յուրաքանչյուր հեռագիր կամ ծածկագիր պատրաստվել է ծայրահեղ զգուշավորության պայմաններում՝ հետագայում թուրք ժողովրդին կամ թուրքական պետությանը պատասխանատվությունից զերծ պահելու նպատակով:

Դեռևս 1911 թ. երիտթուրքական կառավարությանն ուղղված Օսմանյան խորհրդարանի պատգամավոր, փաստաբան և գրող Գրիգոր Զոհրապի խնդրագրում հստակ մատնանշված է պետության այն քաղաքական գիծը, որը շորս տարի անց արձանագրվել է տեղահանված բնակչությանն ուղղված այս ծածկագրերում և հեռագրերում: Զոհրապը խնդրագրի մեջ գրում է. «Հայկական դպրոցներին, եկեղեցիներին և վանքերին կից հողերի և կալվածքների անժառանգության վերաբերյալ հարցապնդումները պետք է արգելվեն, իսկ նիզամիե դատարաններին հանձնված դատերի առնչությամբ անհրաժեշտ է, որ կառա-

²¹ Առն Վարդանը համարում է, որ ամփոփագիրը կրում է Թալեաթի ստորագրությունը (Առն Վարդան, նշվ. աշխ., էջ 133), ինչին սակայն մենք համամիտ չենք:

վարական խորհուրդը որոշում կայացնի շարիաթական դատարանների կայացրած վճիռները չեղարկելու մասին»²²: Սա ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրության հայազգի քաղաքացիների գույքի բռնագրավման պետական մեխանիզմները մշակվել և գործադրվել են շատ ավելի վաղ, քան Թուրքիան կմտներ պատերազմի մեջ:

Հայազգի քաղաքացիների նկատմամբ նման գործողությունը երկրի հիմնական օրենքի՝ այն է՝ սահմանադրության համապատասխան նորմերի ոտնահարման ապացույց է: Այս պարագայում օսմանյան կառավարության բնօրինակ վավերագրերը կարող են ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների վերականգնման և հատուցման գործընթացի համար անառարկելի և հավաստի ապացույցներ լինել:

Այլևայլ արխիվների ուսումնասիրությամբ պարզում ենք, որ մեր այս հոդվածի շրջանակներում ներկայացված ծածկագրերից մի քանիսը առանձին-առանձին առաքվել են տարբեր նահանգներ: 9-րդ կեսում բերված 29 հունիս 331 թ. (1915 թ., հուլիսի 12) ամսաթվով ծածկագրի «Օսմանյան արխիվում» պահվող մեկ այլ առանձին օրինակից պարզում ենք, որ այն ուղարկվել է Ադանա, էրզրում, Բիթլիս, Հալեպ, Տիգրանակերտ (Diyârbekir), Սեբաստիա (Sivas), Մամուրեթ-ու Ազիզ, Ուրֆա, Կեսարիա, Ջանիկ և Իզմիր նահանգների կառավարիչներին: Պահպանված այս վավերագրի համաձայն՝ այն ուղարկվել է Արտաքին Գործոց Նախարարությանն առընթեր ստեղծված Տեղահանման և գաղթականների զետեղման հանձնաժողովի կողմից, ՆԳՆ Թալեաթ փաշայի օգնական Ալի Մյունիֆի ստորագրությամբ²³:

Մայիսի 31-ի ծածկագրի համաձայն՝ «Այն ընտանի կենդանիները, որոնք հայերը չեն կարող իրենց հետ տանել, հարկ եղած դեպքում, կարող են բռնագրավել զինվորական կարիքների համար...»:

Եթե այստեղ հիշելու լինենք տեղահանության օրենքը, դրա համաձայն, հայերը ընդամենը մի քանի ժամվա ընթացքում պարտավոր էին թողնել իրենց բնակավայրը, անշարժ և շարժական ամբողջ գույքը և ձեռքի բեռով բռնել դեպի Միջագետքի անապատները տանող աքսորի ուղին²⁴: Հայերը բռնագաղթվելիս իրենց հետ չէին կարող և չեն վերցրել ընտանի կենդանիներ՝ բացառությամբ հատուկեկտ դեպքերի, երբ ճանապարհ են ընկել սալլերով, այն էլ՝ ճանապարհի կեսը միայն: Խոշոր և մանր եղջերավոր անասունների բազմահազարա-

²² Հայագիտությունը արտասահմանում, Վավերագրական նյութեր արևմտահայերի մասին, գիտա-ինֆորմացիոն բյուլետեն, Գ. մատենաշար, № 2 (56), պաշտոնական օգտագործման համար № 61, e87AN, 1983, էջ 11:

²³ BOA. DH. ŞFR, nr. 54/413, տե՛ս https://www.devletarsivleri.gov.tr/assets/file/1915_Olamlari/belge/992/70.PDF

²⁴ Վավերագրական նյութեր..., էջ 16:

նոց հոտերը մնացել են տեղում: Ավելորդ ենք համարում այստեղ խոսել ընտանի թուշունների մասին առհասարակ: Այսպիսով, հայաբնակ բոլոր գյուղերի ընտանի կենդանիները, ըստ այս ծածկագրի՝ յուրացրել է կառավարությունը:

Նույն ծածկագրի մեջ խոսվում է նաև տարագրվողներին հանձնվելիք վե-սիքաների՝ արտոնագրերի մասին, որոնք տրվում էին տարագրության վայրում շրջելու համար: Իրանով չի լուծվել տարագրվածների սննդի, բնակության և այլ կարիքների հարցը, որի մասին խոսվում է մայիսի 31-ի ծածկագրում: Ավելին, Մեծ եղեռնի տարիներին թուրքական կառավարությունը հրապարակել էր նաև երկաթգծից օգտվելու արգելքի մասին հրամանը, որը վերաբերում էր միայն հայերին, իսկ օրենքը խախտողները պետք է կանգնեին զինվորական պատժիչ դատարանի առջև²⁵:

Այն արգելքը, որ հունիսի 8-ի ծածկագրով սահմանված էր տեղացի ժողովրդի համար տիրազուրկ կալվածքների գործին չմիջամտելու հողվածով, հայանպաստ նպատակ չէր հետապնդում, այլ միտված էր պետական գանձարան հնարավորին չափ շատ գույք և դրամ մտնելուն:

Մեկտեղելով բոլոր ծածկագրերն ու հեռագրերը, տեսնում ենք, որ դրանք բոլորն էլ պետության և կառավարության գիտությունը ու իմացությունը տրված ցեղասպանական դիտավորություն հետապնդող հրահանգներ են: Հայաթափել հայկական բնակավայրերը, նրանց տներում վերաբնակեցնել գաղթականներին, հայերին թույլ չտալ, որպեսզի կարողանան բացել դպրոցներ, նրանց տեղակայել այնպիսի վայրերում, որպեսզի չկարողանան միավորվել և դիմել ինքնապաշտպանության: Հունիսի 29-ի (հուլիս 12, 1915 թ.) ծածկագրի մեջ արդեն տեսնում ենք բացահայտ հրաման հայերին ոչնչացնելու մասին. «Հայերին բաժանել խմբերի, չպետք է այլևս Զոր սանջաք ուղարկվեն, այս մասին հայտնել տարագրության ճանապարհին եղող մասնավոր պաշտոնյաներին»:

Գաղթականներին ուղեկցողները մարդասիրական օգնությանը պատրաստ ծառայողներ չէին: Նույն ծածկագրում հիշվող մասնավոր պաշտոնյաները հայերին կոտորելու համար բանտարկյալներից կազմված Հատուկ կազմակերպության՝ Թեշքիլաթ-ը մախսուսայի հանցագործներն էին, որոնք պետք է հայերի քարավանները առաջնորդեին նախապես ընտրված հարմար վայրեր և ոչնչացնեին: Թեշքիլաթականներին՝ որպես քարավաններին ուղեկցող մասնավոր պաշտոնյաների տրված հրահանգներ կան նաև հուլիսի 31-ի շրջաբերական հեռագրում:

Թուրքական պաշտոնական պատմագրությունը պաշտպանում է երկու թեզ. հայերը ոչ թե ենթարկվել են ցեղասպանության այլ՝ 1. տեղահանվել են պատերազմական գոտուց, 2. Տեղահանվել են ընդհանուր ապստամբության

²⁵ DH. ՏՖ. 62/313:

կասկածանքի պատճառով: Հունիսի 29-ի (հուլիս 12, 1915 թ.) ծածկագրում ասվում է, որ հայերից հետո հնարավոր է, որ երեխաներ մնան, որոնց պետք է բաժանել հարուստ ընտանիքների միջև, իսկ մնացածին՝ աղքատ ընտանիքների, 30 քուրուշ ամսավճարի դիմաց: Եթե հայերը տեղահանվել են պատերազմական գոտուց, պատերազմական պայմաններից ելնելով պետությունը պետք է հոգար առաջին հերթին երեխաների անվտանգության մասին:

Երեխաների մեծաքանակ լինելու հանգամանքը խոսում է այն մասին, որ հայությունը ցեղասպանելու ճանապարհին, առաջին հերթին նրանց որդեգրվել են՝ պատերազմական պայմաններում թուրք բնակչության աճը և զարգացումն ապահովելու նպատակով²⁶: Եվ սա հստակ շարադրված է հուլիսի 15-ի գրության մեջ. «պետք է իսլամի հետևորդներին բազմացնել»:

Հստակ է, որ ցեղասպանական քայլերի թելադրանքները տրվել են ծածկագրերի միջոցով, մինչդեռ հեռագրերը ուղարկվել են ոճրագործությունները կոծկելու և հետագայում պատասխանատվությունից խուսափելու նպատակով: Օրինակ՝ հուլիսի 21-ի հեռագրի՝ «հոգ տանել նրանց պատվի և կյանքի պաշտպանություն մասին», խոսքերը հակասում են ծածկագրերի բովանդակությանը: Հեռագրի ուշադիր ընթերցումը բացահայտում է նրա կեղծ բովանդակությունը. «Հասարակ ժողովուրդ, թե պաշտոնյա՝ պետք է բոլորը հարգեն տերության և ազգի փրկության ու հարատևության ապահովման համար հարկադրող այս ձեռնարկը: Նրանք, ովքեր ուղղակի կամ անուղղակի կփորձեն հակազդել այս շարժմանը, խստիվ և ծանր կերպով պետք է պատժվեն, իսկ հափշտակված ապրանքը պետք է ետ վերցվի: Ազգային վարքն ու արժանապատվությունը պահելու համար ամեն միջոց պետք է ձեռնարկել»: Սա բացահայտ հրաման է թուրք բնակչությանը, որի համաձայն, հանուն թուրքական ազգային պետություն ստեղծելու երիտթուրքական ծրագրի՝ չպետք է որևէ մեկը վարանի հայերին ոչնչացնելու հարցում, հակառակ դեպքում խստագույնս կպատժվի: Այս առիթով հիշենք նաև 1919 թ. դատավարությունների շրջանակներում ընթերցված Մահմուդ Քյամիլ փաշայի ստորագրությունը կրող հեռագիրը, որի համաձայն հայերին իրենց տներում թաքցնող մահմեդականները մահապատժի կենթարկվեն²⁷:

²⁶ Տե՛ս հուլիսի 15-ի հեռագիրը. «Վաղափակրական կենտրոններից հեռու լինելով չափազանց հեռամնաց են հավաքական կարիքներից և ընկերական զարգացումներից»:

²⁷ Ա. Փափազյան, Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1988, էջ 44 (գործ 13, փաստաթուղթ № 1): Նույնի օսմաներենը տե՛ս նաև Թաքվիմ-ի վաքայի թուրքական պաշտոնաթերթ, 1919 թ., № 3540, «հավելված» բաժնում:

ВЕРА СААКЯН
АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ МАТЕНАДАРАНА О ГЕНОЦИДЕ
АРМЯН (ОСМАНСКИЕ ДОКУМЕНТЫ)

Ключевые слова: Егия Момджян, Чомахлу, официальный документ на османском языке, С. Торосян, В. Малхасян, Эверек, мухаджир, зашифрованная телеграмма.

В Матенадаране им. Маштоца хранятся документы, относящиеся к геноциду армян. Это различные докладные записки, свидетельства очевидцев, мемуары, дневники, официальные османские документы, отчеты об организации различных мероприятий с целью помощи армянским сиротам и беженцам и т. д. Эти материалы входят в состав сборника архивных документов католикосов, в фонды попечительства армянских церквей Новой Нахичевани, Католикоса Всех Армян Мкртича I (1893-1907 гг.), архимандрита Тирайра, филолога Норайра Бюзандаци (1844-1916), историка А. Алпояджяна и др. Среди них есть документы на армянском, русском, английском, французском, немецком, армянописьменном турецком, османском (оригиналы и копии, машинописные оригиналы и копии), а также микрофильмы.

Впервые проводится кропотливое изучение документов Матенадарана, касающихся данной темы. Наша цель – детально рассмотреть документальный материал, проанализировать и оценить значение данных первоисточников. Мы обратились также к османским документам, которые хранятся в фонде католикосов, сданные в Матенадаран уроженцем Эверека Егией Оганесовичем Момджяном.

Мы выделили один уникальный новонайденный документ, проанализировали его в свете османских официальных документов и показали государственные механизмы осуществления геноцида. Публикуя документ и его армянский перевод, мы обращаем на него внимание специалистов по международному праву.

VERA SAHAKYAN
MATENADARAN'S ARCHIVAL DOCUMENTS RELATED TO THE
ARMENIAN GENOCIDE (OTTOMAN DOCUMENTS)

Keywords: Yeghia Momdjian, Chomakhlu, official documents of the Ottoman Empire, S. Torosian, V. Malkhasian, Everek, muhajir, encrypted telegram.

Matendaran houses a number of documents related to the Armenian Genocide (1894-1923). They include reports about Armenian-populated areas and the Armenians of Western Armenia and Ottoman Turkey, eyewitness accounts, memoires, diaries, and records of different initiatives aimed at supporting Armenian orphans and migrants, official documents of the Ottoman Empire, etc.

The documents are part of the Archive of the Catholicoi, the collections of the trustees of the Armenian Churches of New-Nakhijevan, including Catholicos Mkrtich I Vanetsi (1893-1907), Vardapet Tirayr, philologist Norayr Byuzandatsi, A. Alboyadjian and others. They are in Armenian, Russian, English, French, German, Turkish in Armenian letters, Ottoman (originals, copies, type-written originals and copies) as well as microfilms.

A detailed study on Matenadaran's archival documents related to the Armenian Genocide is being carried out for the first time. Our goal is to thoroughly study the documents and to analyze and present the contents of the primary sources. We have also consulted the Ottoman documents that are part of the Archive of the Catholicoi given to Matenadaran by Yeghia Momdjian born in Everek. We have singled out a unique newly-discovered document, analyzed it in the light of official Ottoman documents and pointed out the state mechanisms that served for committing the genocide. By publishing this document and its Armenian translation, we draw the attention of international law specialists.

ԷԳՈՒԱՐԳԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ ՎԱՎԵՐԱԳԻՐ ՂԱՐԱՔԱՂԻ ՄԱՍԻՆ

Քանալի բառեր՝ Ղարաբաղ (Արցախ), կառավարման համակարգ, սոցիալ-տնտեսական իրավիճակ, մահմեդական կառավարման հետևանքներ, մահմեդական բեկեր, հայ ժողովուրդ, ժողովրդագրություն:

XIX դարի առաջին երեսնամյակի ռուս-պարսկական պատերազմներին հաջորդող տարիները Ղարաբաղում նշանավորվեցին կարևոր ու բարդ քաղաքական իրադարձություններով: Մահմեդական կառավարման հետևանքներն իրենց զգացնել էին տալիս էին Ղարաբաղի սոցիալ-տնտեսական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Անկասկած, այդ ժամանակաշրջանում Ղարաբաղում տիրող իրավիճակի մասին յուրաքանչյուր հաղորդում աղբյուրագիտական նշանակություն է ձեռք բերում, մանավանդ որ Ղարաբաղին վերաբերող վավերագրերը ներկայումս մեր հարևան երկրի պատմաբանների շահարկման առարկա են դարձել: Ուստի ներկա հրապարակումը թելադրված է նաև այդ կարևոր հանգամանքով հակադարձել ադրբեջանական պատմագիտության մեջ Ղարաբաղի պատմության ներկայիս խեղաթյուրումներին, ասել ճշմարտությունը: Այդ տեսակետից առավել կարևորվում են Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում գետեղված նյութերը:

Ղարաբաղին վերաբերող ուշագրավ վավերագիրը հրատարակվել է Կովկասի հնագրական հանձնաժողովի ստվարածավալ ժողովածուի յոթերորդ հատորում և կրում է «Նոթեր Ղարաբաղի մարզի մասին» վերնագիրը: Թվագրված է 20-ը ապրիլի 1830 թ.: Նոթերում, որի հեղինակը ռուս բարձրաստիճան պաշտոնյա, պետական խորհրդական Զուբարեն¹ է, ճշմարտացի կերպով ներ-

¹ Տե՛ս **И. Ениколопов**, “Записка о переселении армян из Персии в наши края”, *Տեղեկագիր հասարակական գիտությունների*, հ.8, 1949, էջ 72-73: Հոդվածից տեղեկանում ենք, որ Գ.Ն. Զուբարեն Կովկաս էր ժամանել ռուս նշանավոր դիվանագետ և գրող Ալ. Գրիբոյեդովի հետ 1828 թ. կեսերին: 1830 թ. ապրիլին նա այցելել է Ղարաբաղ, և նրան հանձնարարվել է գրել Ղարաբաղի նկարագրությունը: Գրիբոյեդովի ողբերգական մահից հետո Զուբարեն այնուհետև ծառայության է անցել Թիֆլիսի նահանգապետ Պ. Զավիլյեյսկու մոտ, որը Գրիբոյեդովի բարեկամն ու մերձավորն էր: Համագործակցել է ռուսական հանրահայտ ամսագրերի, ինչպես նաև «Թիֆլիսյան տեղեկագրի» հետ. վերջինիս խմբագիրներից մեկն էր: Զուբարեն նշանակալի անձնավորություն էր թիֆլիսյան հասարակական շրջանակներում: Մասնակցել է 1832 թ. Թիֆլիսում Գրիբոյեդովի «Նեպից պատմության» բեմականացմանը՝ խաղալով Չացկու դերը: Ժամանակակիցներից մեկն այսպես է բնու-

կայացված են XIX դարի առաջին քառորդին Արաբաղում խմորված իրադարձությունները: Նոթերի հենց ներածականում Զուբարևը հաստատում է, որ Արաբաղի մահմեդական խաները մարզը կառավարել են բացառապես սեփական կամայականությամբ և կառավարման համակարգը վստահել են իրենց մերձավոր բեկերին. «Այս բեկերը, գյուղերը կառավարել են թալանի և բռնաճնշումների իրավունքով», - գրում է Զուբարևը²: Ուստի պատահական չէր, որ ռուս-պարսկական պատերազմի նախօրյակին Մեհտի Աուլի խանի³ Արաբաղից հեռանալուց հետո նրանք արագորեն գործի են անցնում իրենց օգտին հավելագրումներ կատարելու համար: Բնականաբար, ստեղծված իրավիճակը ռուսական իշխանություններին պարտադրում է նոր հաշվառում և ցուցակագրում անցկացնել Արաբաղում: Մահմեդական բեկերն այստեղ էլ իրենց հատուկ խորամանկությամբ շտապում են օգտվել այդ խառը իրավիճակից. նրանք ռուս պաշտոնյաներին կաշառելու միջոցով վերջիններիս համոզում են հաշվառման-ցուցակագրման ժամանակ իրենց ամրագրել շատ գյուղեր, որոնք երբևէ իրենց չեն պատկանել: Այս ամենը մանրամասն փաստվում է պետական խորհրդական Զուբարևի նոթերում. «Գյուղերի նոր հաշվառման ժամանակ, - գրում է նա, - օգտվելով ռուսների անտեղյակությունից, մահմեդական բեկերն իրենց էին վերագրում գյուղեր, որոնք երբեք նրանց չեն եղել, իսկ պաշտոնյաները, որոնք հաշվառում էին Արաբաղը, նրանց ասածը հիմք էին ընդունում, և այդ անհիմն հաշվառումը մինչ օրս բեկերի համար որպես ապացույց է հանդիսանում այդ անշարժ գույքին տիրանալու համար»⁴: Դատելով Զուբարևի նոթերից, այդ հաշվառումից հետո Արաբաղի ռազմամարզային պետերը և պարետները, որոնք իրենց համարում էին լիիրավ իշխանավորներ, պետական սեփականություն համարվող գույքը՝ «գյուղերը բաժանում էին իրենց մերձավորներին՝ ոչ միայն բեկերին, այլև թարգմանիչներին, եսաուլներին, առևտրականներին... Պետական գյուղերի բաժանումը կատարվում է առանց գլխավոր

թագրել նրան՝ պալատական խորհրդական, գեղեցկադեմ, խելացի, կրթված և բավականին բարյացակամ մարդ էր Դիմիտրի Ելիսեևիչ Զուբարևը: Կովկասի մասին Զուբարևի նոթերը տպագրվել են ռուսական բազմաթիվ ամսագրերում: Հավելեմ նաև, որ հրատարակման հեղինակ Ի. Ենիկոլոպովը ծնունդով Արաբաղից էր, Ենիկոլոպովների նշանավոր ընտանիքից, որի շատ անդամներ հետագայում դարձան հմուտ գիտնականներ:

² *Акты собранные кавказской археографической комиссией* (այսուհետև՝ АКАК), Тифлис, 1878. т. VII, Документ 411: "Записка к.а. Зубарева о Карабагской провинции. Представлена гр. Паскевичу при рапорт, от 20-го апреля 1830 года", с. 460.

³ Մեհտի Աուլի խանը Արաբաղի երկարամյա տիրակալ Իբրահիմ խանի որդին էր, և հոր սպանությունից հետո նրան հանձնվեց Արաբաղի կառավարումը:

⁴ АКАК, т. VII, Документ 411: "Записка к.а. Зубарева о Карабагской провинции. Представлена гр. Паскевичу при рапорт, от 20-го апреля 1830 года", с.460-461.

պետերի գիտություն և այդ շարիքն այնքան է խորացել, որ ներկայումս Ղարաբաղում շատ քիչ թվով պետական գյուղեր են մնացել»⁵:

Առաջին հայացքից պետական խորհրդականի գրառումներից չեն երևում այս ապօրինությունների իրական մեղավորները, և կարելի է նույնիսկ մտածել, որ դրանցում ներգրավված է եղել նաև Ղարաբաղի հայությունը, սակայն քիչ անց Զուբարևը բացահայտում է իրական մեղավորներին. «Որպեսզի դադարեցվեն այս անկարգությունները, որոնք կատարվում են թաթար բեկերի կողմից (ընդգծումը մերն է՝ Է. Հ.) և պետական գանձարանի ու բնակիչների համար մեծ վտանգ են ներկայացնում, — շարունակում է Զուբարևը, — պետք է ճուշտում մի խորհուրդ հիմնել՝ արդարամիտ պաշտոնյաների մասնակցությամբ, որոնք պարտավորություն կստանան. առաջին՝ քննարկել մահմեդական բեկերի ներկայացրած բոլոր ապացույցները, երկրորդ՝ քննարկել հարկերից ազատված մարդկանց իրավունքները, որոնց թիվը Ղարաբաղում կազմում է ավելի քան 5 հազար մարդ, երրորդ՝ քննարկել բեկերի իրավունքն անշարժ գույքի հանդեպ՝ ապացույց համարել միայն նախկին խանի տված շնորհագրերը (խոսքը Մեհտի Ղուլիի մասին է՝ Է. Հ.), որոնք ևս պետք է ստուգվեն մեծ զգուշությամբ և վերապահությամբ, քանի որ խանի Պարսկաստան փախուստից հետո կնիքը մնացել էր նրա մերձավոր Ռուստամ բեկի մոտ, որն օգտվելով այդ իրավիճակից, իրեն և իր ազգականներին է վերագրել շատ գյուղեր: Ընդ որում, շատ շնորհագրեր տրվել են այնպիսի անգրագիտությամբ, որ որպես այդ շնորհագրի հանձնման տարի, նշված է մի տարեթիվ, երբ նման որակի թուղթ, որի վրա այն գրված է, ընդհանրապես գոյություն չի ունեցել»⁶:

Ահա այսպիսի խարդավանքների են դիմել մահմեդական բեկերը նույնիսկ ռուսական կառավարման տարիներին, ուր մնաց թե խանական կառավարման ժամանակ՝ կատարյալ կամայականությունների պարագայում: Իսկ ահա ադրբեջանցի ներկայիս որոշ պատմաբաններ իրենց թույլ են տալիս պնդելու, թե Ղարաբաղում մահմեդական կառավարումը հաստատված է եղել մի շարք շնորհագրերով⁷, այն դեպքում, երբ ռուսական պետական խորհրդականին ոչնչով չի կարելի մեղադրել կողմնակալություն մեջ: Ստեղծված իրավիճակի և հանցավոր թողտվության մեջ Զուբարևը մեղսակցության բաժին է հանում նաև իր հայրենակիցներին: Ուշադրություն դարձնենք զեկույց-ուսումնասիրության երկրորդ բաժնում արված կարևոր այս դիտարկմանը. «Պարսկաստանի հետ

⁵ Նույն տեղում, էջ 461:

⁶ Նույն տեղում:

⁷ **Джамиль Гасанлы**, "Карабах: Поиск исторической правды", журнал *Кавказ и глобализация*, 2010, т. 4, выпуск 3-4. Էլեկտրոնային միջոց . <http://cyberleninka.ru>, հասանելիության աստիճանը՝ <http://cyberleninka.ru/article/n/karabah-poisk-istoricheskoy-pravdy> և ուրիշներ:

ներկայիս պատերազմից հետո ամենից մեծ սխրանքներից մեկը պետք է համարել Պարսկաստանից հայերի գաղթը դեպի մեր նորանվաճ մարզերը (ընդգծումը մերն է է. Հ.): Հայերը, – շարունակում է Զուբարևը, – այդ տարածաշրջանում մեզ ամենից հավատարիմ ժողովուրդն են և, կարելի է ասել՝ նույնիսկ ամենից ազնիվը, համենայն դեպս դա լիովին կարելի է ասել այս ժողովրդի մասին: Պարսկահայերն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, և նրանց մեծ մասն արհեստավորներ են, որոնք մեծ օգուտ կարող են բերել Կովկասին, առավել ևս Արաբաղին»⁸:

Ի դեպ, ուշագրավ է, որ ըստ Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերից մեկի՝ ռուսական կառավարությունը Արաբաղը դիտարկել է որպես պարսկահայերի գաղթի կարևոր հանգրվան: Սակայն այն, որ Արաբաղը բնակության վայր է նախատեսվել նաև արևմտահայերի համար, մեզ համար նորություն էր: Կոմս Ի. Պասկևիչին 1830 թվականի հունվարի 28-ին ուղղված Թուրքիայից քրիստոնյա գաղթականների կոմիտեի զեկույցի 2-րդ կետում կարդում ենք. «Կոմիտեն, ստանալով գաղթականների ընտանեկան ցուցակները, արդեն ըստ դրանց բաժանում է կատարում, թե ում որտեղ բնակեցնել, հիմք ընդունելով խորհրդի եզրակացությունը՝ Բայազետի հայերին Երևանի և Արաբաղի մարզերում (ընդգծումը մերն է է. Հ.) տեղավորելու համար»⁹:

Այստեղ ստիպված ենք մեջբերել հայերի գաղթին վերաբերող Բաքվի համալսարանի պրոֆեսոր Զամիլ Հասանլուի ևս մեկ «փայլուն» դիտարկում. նրա պնդմամբ՝ Արաբաղում մահմեդականների ժողովրդագրությանը մեծ վնաս է հասցրել 1828 թվականի հայկական մեծ գաղթը. «1832 թվականի մարդահամարի տվյալներով՝ Արաբաղում ընտանիքների թիվը հասավ 20456-ի, իսկ հայկական ընտանիքների թիվը այդ տասը տարում հասավ 31,6%-ի»¹⁰: Իսկ առավել ուշագրավ ընդգծումը վերջինս անում է այդ բաժնի վերջում. «Ադրբեջանցիների մտավախությունները արդարացան: Հայերը հիմնավորվեցին ադրբեջանական հողերում և որոշ ժամանակ անց թշնամություն ցուցաբերեցին այդ հողերի իրական տերերի հանդեպ»¹¹: Եվ այսպիսի «հիմնավորումներով» է լցված Ադրբեջանի ներկայիս «պատմագիտական համացանցը»: Իսկ հետևյալ տողերի հեղինակը պատմագիտության դոկտոր Ռաֆիկա Աղակիշիբեկովան է. «Որպեսզի արդարացներ սկսված պատերազմը, ռուսական կայսրությունը պարտավորվել էր հայերին գաղթեցնել Հարավային Ադրբեջանից դեպի Հյուսիս-

⁸ АКАК, նույն տեղում:

⁹ Նույն տեղում, Документ 822: "Рапорт Комитета переселения из Турции христиан гр. Паскевичу, от 28-го января 1830 года", № 35, с. 834:

¹⁰ Джамиль Гасанлы, "Карабах: Поиск исторической правды..." с.143.

¹¹ Նույն տեղում, էջ 145:

սային Ադրբեջան, թեպետ դրան դեմ էին Իրանը և Թուրքիան: Ընդհակառակը, հայերի համար այնտեղ ստեղծված էին բոլոր պայմանները բնականոն ապրելու համար...»¹²:

Զուբարևի ուսումնասիրության մեջ ամենից կարևոր դիտարկումը, մեր կարծիքով Ղարաբաղի հայությանը վերաբերող մասն է, որի պատմագիտական նշանակությունը մի շարք առումներով ուղղակի անգնահատելի է: «Իժբախտաբար, – գրում է Զուբարևը, – այս օգտակար ժողովուրդն անասելի կերպով հարստահարվում է Ղարաբաղում, էլ չենք խոսում հնաբնակ հայերի մասին (ընդգծումը մերն է՝ Է. Հ.): Նրանք բոլորն էլ դաժանորեն շահագործվել են թաթար բեկերի կողմից»¹³:

Զուբարևը լիովին իրատեսական և ճշմարիտ է նաև Ղարաբաղի հայությանը տված իր բնութագրումներում: «Ղարաբաղի տեղական կառավարիչները, – գրում է նա, – հայերի հանդեպ ունենալով ինչ-որ զգուշավորություն, նրանց մշտապես ճնշել են, և մինչ օրս նրանք զրկվել են իրենց հիմնական օջախից, նրանց հատկացվել են ցածր բերքատվության հողեր...: Եղջյուրավոր անասունների գնումը տեղական կառավարիչների կողմից կատարվել է խիստ անբարեխիղճ, այսինքն՝ գյուղացիներին բավականին թանկ են վաճառվել քոշվոր ցեղերից գնված քաշող անասունները, ընդամին դրանք ծեր և աշխատանքի համար պիտանի չէին: Որպես ապացույց, որ գաղթածների վիճակը բավականին անմխիթար է, բերենք Մարաղայի հայերի օրինակը. տեղական կառավարչի հրամանով նրանց սկզբում տեղավորել են հին, ներկայումս ավերակ վիճակում գտնվող Բերդա քաղաքում: Այս տեղանքում, որը գտնվում է հարթավայրում, Կուր գետի մերձակայքում, ամռանը բավականին շոգ է, իսկ անտառային մասում տարբեր տեսակի թունավոր միջատների պատճառով բնակիչները մահվան դատապարտվեցին: Մինչդեռ մարաղացիներն ավելի սովոր են ցուրտ և առողջ կլիմայի, ուստի չկարողացան տանել այս շոգ կլիման և շատերն ուղղակի հիվանդացան տարբեր հիվանդություններով: Գյուղի ավագը գուր էր համոզում ռազմամարզային կառավարչին՝ թուլատրել բարձրանալու լեռները. նրանց խնդրանքն այդպես էլ մնաց առանց հետևանքի»¹⁴, – գրում է Զուբարևը:

Ինչպես նկատում ենք, մահմեդական բեկերը գիտակցաբար ամեն տեսակի խոչընդոտներ են հարուցել՝ դեպի Ղարաբաղ հայերի գաղթը կանխելու համար:

¹² Рафика Агакишибекова: "Кровавые страницы истории азербайджанского народа". Էլեկտրոնային միջոց՝ <http://azpress.az/>, հասանելիության աստիճանը՝ <http://azpress.az/index.-php?lang=ru§ionid=news&id=26181>.

¹³ АКАК, т. VII, Документ 411: "Записка к.а. Зубарева о Карабагской провинции...", с. 461.

¹⁴ Նույն տեղում:

եվ դա պատահական չէր. հայկական տարրի ավելացման և ամրապնդման մեջ նրանք լուրջ վտանգ էին տեսնում, մեր կարծիքով՝ հայերի հետ ինչպես քաղաքական և, որ կարևոր է, տնտեսական մրցակցությունը շղիմանալու պատճառով: Գատելով գեկույցում ներկայացված իրավիճակից՝ գաղթած հայերի դրությունն իսկապես անտանելի է եղել: «Ջրկված լինելով ջրից, սննդից, ապրելով բաց երկնքի տակ և ենթարկվելով կիզիչ արևի ճառագայթներին, — գրում է նա, — չարիքի ենթարկված հայերը դատապարտված էին մահվան: Երեք ամսվա ընթացքում նրանցից 1.012 հոգի մահացավ: Գաղթականների ողբերգական դրությունն ավելի էին ծանրացնում հարևան քոչվոր թաթարները, որոնք, օգտվելով նրանց հիվանդ վիճակից, թալանում էին նրանց գույքն ու անասունները: Իզուր էին հայերն ապավինում արդարադատությանը», — գրում էր Ջուբարևը¹⁵:

Ուշագրավ է նաև գեկույց-ուսումնասիրության երրորդ մասը, ուր Գ. Ջուբարևը ներկայացնում է հայերի հանդեպ մահմեդական բեկերի ցուցաբերած վերաբերմունքը. «Թաթար բեկերը դաժանորեն են վարվում գյուղացիների հետ. հատկապես հայերին նրանք պատժում են ամենադաժան կերպով՝ օգտագործելով ասիական դաժանության ողջ զինանոցը, երբեմն նույնիսկ ձեծելով սպանում էին, զրկում ողջ ունեցվածքից, սահմանում էին անասելի տուգանքներ: Գործած գազանություններով հատկապես աչքի էին ընկում Խանլար-աղան, Գյուզար-աղան և մյուս մահմեդական բեկերը»¹⁶: Ներկայացնելով այս անտանելի վիճակը՝ Ջուբարևը ռուսական իշխանություններին հորդորում է. «Ամեն գնով սահմանափակել նրանց ինքնիշխանությունը և սահմանել բնակչությանից վերցվող հարկերի հստակ չափանիշներ»¹⁷:

Արաբաղի մասին պետական խորհրդական Գ. Ջուբարևի գեկույց-ուսումնասիրությունը պատմական կարևոր փաստաթուղթ է, քանի որ տնտեսական հարցերից զատ, ներկայացված է Արաբաղի կառավարման համակարգը, քննության է առնված երկրամասի անցյալն ու ներկան: Ջեկույցում անդրադարձ կա նաև տեղական նայիբներին (գավառապետերին — է. Ն.): «Մահալների (գավառների — է. Ն.) նայիբները նույնպես շահագործում են բնակիչներին և իրենց օգտին են հավաքում զգալի հարկեր, առանց դրա իրավունքն ունենալու: Որպեսզի բնութագրենք նայիբների կառավարումը, — գրում է Ջուբարևը, — ներկայացնեմ հետևյալ դեպքը, որի ականատեսը անձամբ ես եմ եղել: Կազար-զի պետական գյուղի ուսումնասիրության ժամանակ մեզ ներկայացավ Վարանդայի մաղալի նայիբ Խուզադադը, իր համար սովորական դարձած հարբած վիճակում: Այդ գյուղում հայերից մեկը մտադրություն ուներ օրենքով ա-

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

մուսնանալ տեղացի այրիներից մեկի հետ: Խուզադադը, տեղեկանալով այդ մասին, արգելեց հոգևորականին օրինականացնել ամուսնությունը և փեսացուից պահանջեց 20 չերվոնեց... վերջապես, համաձայնվելով թույլատրել օրինականացնել ամուսնությունը, նա գնաց եկեղեցի, պատուեց հոգևորականի գրքերը և անկարգություններ գործեց, հայհոյեց և վիրավորեց ներկաներին... Վարանդայի մաղալի բնակիչները բազմաթիվ անգամ ռազմա-մարզային պետին բողոքել են նայիբի անկարգություններից, սակայն այդ դիմումներն այդպես էլ մնացել են անպատասխան», – տեղեկացնում է պետական խորհրդականը¹⁸:

Մանրամասն ներկայացնելով Ղարաբաղում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակն ու այդ կապակցությամբ իր դիտարկումները, Զուբարեն առանձնացնում է մի շարք ակնառու ապօրինություններ, թերևս ակնկալելով ռուսական բարձրաստիճան իշխանությունների միջամտությունը: Թվարկենք դրանցից մի քանիսը.

... Շուշիի ոստիկանապետի օգնական Կասիմ-բեկը դեռևս 1827 թվականին մայր Կրուկի կողմից հեռացվել էր իր պաշտոնից թալանի և կաշառակերության համար և դատի էր տրվել: Սակայն իշխան Աբխազովը առանց որևէ օրինական պատճառի, պարետին հրամայել էր դադարեցնել նրա նկատմամբ դատն ու հետաքննությունը և Կասիմ-բեկին կրկին վերադարձրել էր իր նախկին պաշտոնին: Ներկայումս նա շարունակում է թալանել ու ճնշել բնակիչներին:

... Հարկերի հավաքումը դրամով և բնամթերքով դարձել է շարաշահունների և անկարգությունների պատճառ: Դրամական հարկերը տեղական կառավարիչները վերցնում են ոչ թե ըստ բնակիչների քանակի, այլ թե ինչ ազդեցություն ունի մաղալի նայիբը բնակչության վրա: Բնամթերային հարկը վերցվում է հացի, բամբակի և մետաքսի բերքից, որի 1/5 մասը ուղարկվում է գանձարան՝ պետական հողերի օգտագործման դիմաց: Այս հարկը հավաքելու նպատակով սովորաբար թաթար միրզաները կամ բեկերը գնում են գյուղերը, գյուղացիներից բազմատեսակ նվերներ են ստանում, իսկ պետական գանձարան են մուծում ավելի քիչ գումար, քան ստացվել էր բերքից...

... Մարզային դատարանում տիրող անկարգությունները վեր են ամեն տեսակ նկարագրությունից: Պետական միջոցներն առավելապես ծախսվում են առանց բարձրագույն կառավարիչների թույլտվության և նրանց են տրվում առանց ստորագրության և ստացականի: Այս անօրինությունն այժմ փորձում են կարգավորել Ղարաբաղի պարետ մայր Կալաչևսկու եռանդուն ջանքերի շնորհիվ: Մարզային դատարանը միայն անունով է դատարան, ընդհանրապես չի զբաղվում արդարադատությամբ. այդ ամենն իրեն է վերագրել կապիտան

¹⁸ Նույն տեղում, էջ 461-462:

Միրզա-Աղիգյուզալը (վերջինս նաև Արարադ-նամե գրքի¹⁹ հեղինակն է է. Հ.), իշխան Աբխազովի սիրելին: Մատյանները և ողջ գործընթացը կատարվում է ուսերեն լեզվով, այն դեպքում, երբ դատարանի անդամները ոչ մի բառ ուսերեն չգիտեն:

... Թալանն ու գողությունը տիրում են Արարադում ամենաբարձր աստիճանով: Թալանչիները մշտապես գտնվում են իրենց նայիբների, հատկապես Միրզա-Աղիգյուզալի պաշտպանության ու հովանավորության տակ: Այս վերջինն իր մահալ է ընդունում այլ գավառակներից և Ելիզավետպոլի գավառից եկած փախստականներին, մոտ 350 ընտանիք, որոնք պետական գանձարան ոչ մի հարկ չեն մուծում... Իգիրմի-դորտի գավառակը, որը կառավարում է Միրզա-Աղիգյուզալի եղբայրը, դարձել է թալանչիների որջ: Բնակիչներից և ոչ ոք չի փորձում բողոքել Միրզա-Աղիգյուզալի դեմ, քանի որ նա վայելում է իշխան Աբխազովի անսահման վստահությանը:

... Շուշիում միակ հարկատուները հայերն են (ընդգծումը մերն է է. Հ.), քանի որ թաթարական տները, և հատկապես բեկերը, իրենց դրանից լիովին ազատել են, թեպետ օրենքով բոլորը պետք է հարկվեն... »²⁰:

Արարադի մասին պետական խորհրդական Գ. Զուբարևի դիտարկումներն այսքանով, սակայն, չեն սահմանափակվում. 1830 թվականի հունիսի 10-ին նա հանդես է գալիս նոր առաջարկություններով, որոնք կրկին վերաբերում են Արարադի քաղաքական-տնտեսական վիճակի վերլուծությանը: Եվ որքան էլ տարօրինակ է, դրանից, օրինակ, պարզ է դառնում, որ գլխավոր հրամանատար Ի. Պասկևիչը շարունակում է հովանավորել... նախկին խան Մեհտի Աուլի և ավելին, հրամայել էր «Արարադի նախկին խան Մեհտի Աուլի կողմից Պարսկաստան տարած 1000 քոչվոր թաթարների ծխերից 200-ին տեղավորել Արարադում»²¹:

Ի դեպ, Պասկևիչը հասել էր նաև նրան, որ կառավարությունը համաձայնել էր ետ ընդունել Մեհտի Աուլի խանի հետ վերադարձած թաթարներին. «սրանցից բացի, — շարունակում է Զուբարևը, — տեղական իշխանությունը նրան է հանձնել նաև Պարսկաստան չհեռացածներին»²²: Այլ խոսքով կոմս Երևանսկին այդպես էլ չկարողացավ թաքցնել հայերի հանդեպ ունեցած իր անվստահությունը. հիշենք նրա բազում արտահայտությունները հայերի մասին. որ իբր նրանց քաջությունը վախի զգացումից է, և վերջապես, նրա ան-

¹⁹ Տե՛ս Միրզա- Աղիգեզալ-բեկ, *Արարադ-նամե*, Երևան, 2016, Ա. Մաղալյանի աշխատասիրությամբ և ընդարձակ առաջաբանով:

²⁰ АКАК, т. VII, Документ 411: “Записка к.а. Зубарева о Карабагской провинции...”, с. 462.

²¹ Նույն տեղում, Документ 413: “Записка к.а. Зубарева о Карабаге”. - Представлена ген.-адъют. Стрекалову при рапорт, от. 10-го июня 1830 года, с. 464.

²² Նույն տեղում:

բարյացակամ հարաբերությունները Ներսես Աշտարակեցու հետ, որոնք հետագայում վերածվեցին բացահայտ հակամարտության: Ուստի, Ղարաբաղի նախկին խանի հանդեպ ցուցաբերած ակնհայտ հովանավորությունն այդ համատեքստում միանգամայն հասկանալի էր. ֆելդմարշալի նպատակը Ղարաբաղում հայկական տարրի թուլացումն էր: Ավելին, Պասկևիչը ոչ միայն առաջարկում էր ետ բերել Մեհտի Ղուլի խանին, այլև պատրաստվում էր նրան վերադարձնել իր նախկին իրավունքներն ու կոչումները. «... Պատիվ ունեմ բարեխոսելու նրա համար, որպեսզի նրան վերադարձեն նաև իր կոչումները»²³, – գրում էր Պասկևիչը:

Փաստորեն, ինչպես իրավացի նկատում է Զուբարևը, Պասկևիչը ռուսական կառավարությանը բազմիցս դավաճանած Մեհտի Ղուլի խանին «նվիրում է» 200 թաթարական ընտանիք, որպեսզի ապահովի նրա նախկին կարգավիճակը Ղարաբաղում, և նրա մահից հետո միայն այդ բոլորը պետք է դառնային պետական սեփականություն, քանի որ խանն անժառանգ էր: Զուբարևը միաժամանակ հաղորդում է, որ ժամանակին ինքը բազմիցս զգուշացրել է, որ չի կարելի հավատալ խանին, քանի որ վերջինս մտադիր էր այս սեփականությունը բաժանել իր մերձավոր բեկերին. «Այդ մտադրությունը ներկայումս նա իրագործում է, քանի որ Դեհգան, Բախտիյարլու և Մուրադխանլու գյուղերը, որոնք հմտացած են մետաքսագործության մեջ, նպատակադրվել են տալ Կաշի բեկին, մյուսները նույնպես կբաժանի իր կողմից հովանավորվող բեկերի միջև»²⁴:

Եվ այդուհանդերձ, Պասկևիչի հակահայկական այս քայլը միակը չէր Ղարաբաղում. Զուբարևը հաստատում է, որ նա հնարավորություն էր տվել Ղարաբաղ վերադառնալ նաև ժամանակին իր անօրինականություններով հայտնի Ռուստամ բեկին: «Նրա եղբայրը՝ դավաճան Հաջի Աղալար-բեկը, որը Ղարաբաղում 1826 թվականին ռուսների դեմ խռովության կազմակերպիչն էր և կոտորել էր ոչ քիչ թվով ռուսների ու փախել Պարսկաստան, այնտեղ ձեռք էր բերել խանի իրավունք, իշխան Աբխազովին նվեր էր ուղարկել թուրքմենական ձի, որպեսզի նա բարեխոսի իր եղբոր համար: Ռուս գեներալը չէր ամաչել վերցնել դավաճանի ձեռքից այդ նվերը, – գրում է Զուբարևը, – և կոմսին բարեխոսական մի նամակ է հղել, որում ապացուցում էր, որ եթե դավաճան Ռուստամ-բեկին չտրվեն իրեն հասանելի գյուղերը, որոնք ներկայումս գանձարանին տարեկան բերում են 25 հազ. չերվոնեցի եկամուտ, ապա մեր կայսրության վերջը կգա: Ղարաբաղում շրջանառվող լուրերով միայն կարելի է դատել Ռուստամ-բեկի նվիրվածության մասին: Արշավանքի ժամանակ, – շարունակում է Զուբարևը, – նա հայհոյում էր այն բեկերին, որոնք ճակատամարտում քաջու-

²³ Նույն տեղում, Документ 402: "Рапорт ген. Паскевича гр. Дибичу, от 12-го июня 1827 года", N 62. Эчмиадзин, с. 454.

²⁴ Նույն տեղում, Документ 413: "Записка к.а. Зубарева о Карабаге...", с. 464.

թշուն էին ցուցաբերում, ասելով՝ «ինչու եք սպանում ձեր հավատակիցներին ուս շների համար... Եվ այդ մարդն այսօր խրախուսվում է պետերի կողմից, – հարցնում է Ջուբարևը, – ներկայումս Ռուստամ-բեկն իշխան Աբխազովի հետ մեկնել է Թիֆլիս և հաստատ համոզված է, որ գլխավոր հրամանատարը որոշել է պաշտպանել գանձարանի շահերը և կտա իրեն հասանելիք գյուղերը, որոնց բնակիչներն ահի մեջ սպասում են, թե ինչպես իրենց պետք է նորից հանձնեն այդ գազանին ու դավաճանին»²⁵, – եզրակացնում է Ջուբարևը:

Ձեկույցում Գ. Ջուբարևն անդրադարձել է Պարսկաստանից գաղթած հայերին բաժին հասած ճակատագրին, և դատելով հետևյալ տողերից, բավական իրատեսական դիտարկումներ է արել. «Գաղթած հայերն այստեղ ճնշված են թաթար նալիբների կողմից: Եթե այդ գյուղացիներից մեկը գալիս է Շուշի խնդրանքով, նրան ուղղակի դիմավորում են ծեծով: Անցյալ տարի, – շարունակում է Ջուբարևը, – նրանցից ոմանք ցորեն ցանեցին, սակայն բերքն այդպես էլ չհասցրին հավաքել, քանի որ թաթարները թունավորեցին... այժմ նրանք սերմացու չունեն, ինչի մասին հայտնեցին ինձ, իսկ ես իմ հերթին նամակով դիմեցի Ղարաբաղի պարետին»²⁶:

Ամփոփելով Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում գետեղված պետական խորհրդական Գ. Ե. Ջուբարևի՝ Ղարաբաղին նվիրված գեկույց-նոթերի քննությունը՝ հարկ է նշել, որ այն ակնհայտորեն դուրս է այդ ժանրին հատուկ սահմաններից և Ղարաբաղի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքը բնութագրող, պատմական առումով ուշագրավ և մեծարժեք ուսումնասիրություն է:

ЭДУАРД ОГАНЕСЯН

ПРИМЕЧАТЕЛЬНЫЙ АРХИВНЫЙ ДОКУМЕНТ О КАРАБАХЕ

Ключевые слова: Карабах (Арцах), система управления, социально-экономическое положение, последствия мусульманского правления, мусульманские беки, армянское население, демография.

Годы, последовавшие за русско-персидской войной 1826-1828 гг., в Карабахе (Арцахе) были отмечены сложными и важными политическими событиями. Несмотря на изменение системы управления, последствия мусульманского правления довольно сильно отражались на экономической жизни области. В статье, на основе публикации государственного советника Д. Зубарева “Записки о Карабахской области”, помещенной в *Актах археологической комиссии*

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

Кавказа (АКАК), приведено множество фактов насилия и незаконных действий со стороны местных мусульманских правителей по отношению к коренному населению области, карабахским армянам. Исследования Д. Зубарева свидетельствует о том, что именно в результате этих действий армянское население Карабаха вынуждено было покинуть свои родные края и что они и являются главной причиной сокращения численности армян в Карабахе.

EDWARD HOVHANNISYAN
AN IMPORTANT DOCUMENT ON KARABAKH

Keywords: Karabakh (Artsakh), system of governance, socio-economic situation, consequences of the Muslim rule, Muslim beys, Armenian population, demography.

The years following the Russo-Persian war of 1826-1828 in Karabakh (Artsakh) were marked by complex and important political events. Despite the change in the system of governance, the consequences of the Muslim rule had a significant impact on the economic life of the region. Based on the publication of state adviser D. Zubarev, “Notes on the Karabakh Region,” in the *Acts of the Archaeological Commission of the Caucasus* (ACAC), the article mentions numerous instances of violence and illegal actions perpetrated by the local Muslim rulers against the indigenous population of the region – the Armenians of Karabakh. Zubarev's study suggests that these actions had forced the Armenian population of Karabakh to leave their native lands, resulting in a decrease in the number of Armenians in Karabakh.

ԱՐՎԵՍ

ԱՍՏԳԻԿ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՄԻ ՆՇԽԱՐ ԵՐԱԺԻՇՏ-ՓԻԼԻՍՈՓԱ ՆԵՐՍԵՍ ՎԱՐԳԱՊԵՏ ՄՈԿԱՅՈՒ ԵՐԱԺՇՏԱԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Բանալի բառեր՝ Ս. Գրիգոր Նարեկացի, Ներսես վարդապետ Մոկացի (Մատաղ), Վարդավառ, Համբարձում, Բաղեշի Ամրոգուլու և Խնդրակատար Ս. Աստվածածին վանքեր, տաղ, գանձ, ձայնեղանակ, Գանձարան, Նիկողայոս Թաշճյան:

Միջնադարյան Հայաստանում մեծ հռչակ ունեին Մեծ Հայքի Աղձնյաց աշխարհի Սալնոձոր գավառի Բաղեշ քաղաքում գտնվող Խնդրակատար Ս. Աստվածածին վանքը, որն ըստ ավանդության հիմնել է Քաղեոս առաքյալը¹, ինչպես նաև Ժե. դարում Գանիել վարդապետի (Գրիգոր Տաթևացու աշակերտ) հիմնած Ամրոգուլու վանքը², որոնցում գործունեություն են ծավալել հայտնի վարդապետներ Հովհաննես Համշենցին, Գրիգոր Արճիշեցին, Ներսես Մատաղը, Ներսես Բաղիշեցին, Ներսես Մոկացին և այլք: Նշյալ բազմաշնորհ գործիչներից շատերը բանիբուն երաժիշտներ էին և երաժշտաբանաստեղծական ուշարժան ժառանգություն են թողել, սակայն հանգամանքների բերումով քիչ բան է հարատևել: Առանձնապես սուղ է երաժշտական բաղադրիչով պահպանված

¹ Խնդրակատար Ս. Աստուածածին վանքի առաջնապետ լինելու մասին վկայություններ կան Վարդան Բաղիշեցու «Յիշատակաց մատեան»-ում. «Եւ արդ գիտութիւն լիցի ձեզ Բրիտոսադաւան եւ աստուածաւէր ժողովրդեանդ: Յաղագս Խնդրակատար Սուրբ Աստուածածին անուն եկեղեցոյս, որ է նախ հիմնարկեալ եւ կառուցեալ ձեռամբ Քաղեոսի Սուրբ Առաքելոյն: Եւ այս է պատեհան, որ Խնդրակատար կոչի եկեղեցիս այս: Ասի թէ առաքեալն Քաղեոս հազար եւ մի եկեղեցի շինել է յանուն Սրբուհոյն Աստուածածնին. եւ այն հազարաց վերջին այս է հանդիպեալ, որոյ անունն Խնդրակատար վերածայնի»: տե՛ս **F. Macler**, “Notre-Dame de Bitlis,” *Բանասէր, ամսաթերթ գրական եւ գիտական*, Կ. Պոլիս, 1905, № 10, էջ 295: Հմմտ. նաև էջ 293. «Եւ ընդ աստուածապարգև օրհնութեանս. գիտութիւն լիցի ձեզ Քրիստոսի արեամբ գնեալ ժողովուրդ, զի այս Խնդրակատար Սուրբ Աստուածածին անուն եկեղեցիս, որ (է) նախ հիմնարկեալ եւ շինեալ ձեռամբ Քաղեոսի Սուրբ առաքելոյն, եւ անուանի եւ հռչակատու վանք»:

² *Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ*, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1896, էջ 391: Ըստ Մ. Օրմանյանի՝ Բաղեշի դպրոցի աշակերտությունը հայ վարդապետության նոր զարգացման սկզբնապատճառն է հանդիսանում, քանի որ Հովհաննես Համշենցու և Գրիգոր Արճիշեցու բազմաթիվ աշակերտներ՝ սփռվելով այս ու այն կողմ, նոր դպրոցներ բացեցին. տե՛ս **Մ. Օրմանյան**, *Ազգապատում*, հ. Բ, Կոստանդնուպոլիս, հրատարակություն Վ. և Հ. Տէր-Ներսիսեան, 1914, § 1710, սյուն. 2892:

նմուշների ցանկը, և ահա այստեղ է, որ գտնում ենք վերոհիշյալ ներսեսներից մեկի անունով գրի առնված «Այսօր ցնծայ լեառն Թաբօր» Վարդավառի տաղը, որի հիմքում ընկած է Ավետարաններում պատմվող դրվագը՝ Թաբօր լեռան վրա Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության և Այլակերպության մասին (Մատթեոս ԺԷ 2, Մարկոս Թ 2, Դուկաս Թ 29): Քերթողահայր Մովսես Խորենացին իր «Յաղագս Վարդավառին խորհրդոյ» նշանավոր ճառում այսպես է նկարագրում օրվա խորհուրդը. «[...] այսօր հրեշտակական դասուցն քաղցրանուագ հնչեն օրհնութիւնք ի նոր Սրովն պայծառահրաշ լուսով. և փայլումն Գալլստեանն Քրիստոսի զհաւատացելովքս փարի: Նորոգին երկինք, և երկիր լրիվ իւրով ըստ մարգարէին. և լերինք՝ ցնծան առաջի Տեառն»³: Հոգևոր երգաստեղծության մեջ հայտնի են բազմաթիվ սքանչելի կտորներ՝ նվիրված Վարդավառի տոնին, ինչպես՝ Անանիա Շիրակացու և Ներսես Շնորհալու շարականները, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու գանձերն ու տաղերը: Սակայն, հետագայում ևս, միջնադարի հայտնի և անհայտ հեղինակները շարունակել են հորինել նոր գանձեր և տաղեր, որոնցից մեկն էլ հենց «Այսօր ցնծայ»-ն է⁴:

Ձեռագրական աղբյուրներին՝ մեր կատարած ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեծավ մասամբ «Այսօր ցնծայ» տաղի հեղինակին գրիչները չեն ցուցում, և միայն մի քանի ձեռագրեր ունեն անվանական հիշատակումներ.

Ա. «Տաղ Նորին ի Մոկացոյ. – Այսար ցնծայ լեառն Թաբար» (ձեռ. եղմ. 1193, Տաղարան, 1476 թ., տեղն անհայտ, գրիչ՝ Պաղշիշ, էջ 689)⁵:

Բ. «Տաղ գեղեցիկ Վարդավառին, ի Ներսէս վարդապետէ. Այսար ցնծայ» (ձեռ. Վնտկ. 1210, Գանձարան, 1485 թ., Արճեշ, գրիչ Յովհաննէս երէց Մանկասարենց, թ. 96բ)⁶:

Գ. «Նորին Մոկացոյ տաղ. – Այսօր ցնծայ լեառն Թաբօր եւ զըւարճանայ մեծն Ահրմոն» (ձեռ. եղմ. 135, Գանձարան, 1575 թ., Սողած գիւղ (Խլաթ) եւ Թեղւայ վանք, գրիչ՝ Կարապետ Սողածցի, թ. 385բ)⁷:

Դ. «Տաղ Մոկացոյ. – Այսար ցնծայ լեառն Թաբար» (ձեռ. եղմ. 3001, Մաշտոց-Տաղարան, 1651 թ., տեղի և գրիչ՝ անհայտ, էջ 174)⁸:

³ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Դազարու, 1865, էջ 326-327:

⁴ Երաժշտական բաղադրիչով պահպանվել է նաև Վարդավառի մեկ այլ անանուն տաղ՝ «Վեա՛ռն, ցնծայ դու, Թաբօր»:

⁵ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր չորրորդ, կազմեց Նորայր եպս. Պողոթեան, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1969, էջ 311:

⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ (այսուհետև՝ Յուցակ Վենետիկի), հ. Ե, Յայսմատուրֆ-Գանձարան-Տաղարան-Տօնացոյց, յօրինեց Հ. Սահակ վրդ. ձեմճեմեան Մխիթարեան ուխտէն, Վենետիկ – Ս. Դազար, 1995, սյուն. 385:

⁷ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր առաջին, կազմեց Ն. Պողոթեան, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1966, էջ 396:

Ե. «Տաղ Վարդավառի երրորդ աւուր՝ Մոկացոյ ասացեալ – Այսաւր ցըն-
ծայ լեառըն Թափար եւ զուարճանայ մեծն Ահերմոն» (ձեռ. Վնտկ. Քիւրտ. 85,
Տաղարան, 1678 թ., Կ. Պոլիս, գրիչ՝ Յովհաննէս Երէց, թ. 13ա)⁹:

Զ. «Տաղ Վարդավառին ի Մոկացուէ. – Այսօր ցընծայ լեառըն Թափօր»
(ձեռ. Եղմ. 3813, Մայր Մաշտոց, 1696-97 թթ., նոր Զուղայ, գրիչ՝ Ազարիա
քարտուղար, էջ 859)¹⁰:

Է. «Տաղ գեղեցիկ Գ. օրն: – Այսօր ցընծայ լեառըն Թաբօր... «(ի լուս. «Ի
Մոկացի Ներսէս վարդապետէ ասեր տաղս») (ձեռ. Զմմ. 510, Գանձարան եւ
Տաղարան, ԺԶ դար, տեղն անհայտ, գրիչ՝ Մխիթար, թ. 244բ)¹¹:

Ը. [Տաղ ի Մոկացի Ներսիսէ. Այսօր ցընծայ լեառն Թաբօր] (ձեռ. Բեռ. 67,
Տօնացոյց, 1703 թ., նոր Զուղայի Ս. Բեթղէհեմ վանք, գրիչ՝ Սարգիս Երեց, թ.
225բ)¹²:

Թ. «Երգ Վարդավառի Բ աւուր. Տաղ ի Տէր Ներսիսէ ասացեալ: Այսօր
ցընծայ լեառն Թաբօր» (ձեռ. Վիեն. 1041, Տաղարան-Գանձարան, Ի դար, էջ-
միածին եւ Թավրիզ, թ. 451ա)¹³:

Ժ. «Տաղ Թափուրի Մոկացոյ. – Այսաւր ցընծայ լեառըն Թափուր» (ձեռ.
Եղմ. 3413, Գանձարան, Ժամանակ, տեղի եւ գրիչ՝ անհայտ, էջ 661)¹⁴:

⁸ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր իններորդ, կազմեց Ն. Պողարեան, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1979, էջ 184:

⁹ Ձեռագիրը գտնվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում պահվող «Քիւրտեան հավաքածոյ»-ում: Դրա մանրամասն նկարագրությունը (որ դեռևս անտիպ է) կատարել է Գ. Տեր-Վարդանյանը, ում հայտնում ենք մեր շնորհակալությունը՝ այն մեզ տրամադրելու համար: Ձեռագրի մասին տե՛ս Գ. Տեր-Վարդանեան, «Հ. Ներսէս Ակիմեանի եւ Հ. Համազասպ Ռսկեանի նամակները Յարութին Քիւրտեանին», ՀԱ, 2005, թիւ 1-12, սյուն. 461 և սյուն. 447, ծան. 8:

¹⁰ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր տասնմէկերորդ, կազմեց Ն. Պողարեան, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1991, էջ 244:

¹¹ Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի Մատենադարանին, հ. Բ, «Անտոնեան հա-
ւաքածոյ», կազմեցին Հ. Ն. Ակիմեան եւ Հ. Հ. Ռսկեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1971, էջ 113:

¹² Verzeichniss der armenischen Handschriften der Königlichen Bibliothek zu Berlin von Dr. N. Karamianz. Berlin, A. Ascher & Co., 1888, S. 50): Տաղային միավորի և դրա հեղինակային պատկանելության մասին տեղեկությունը փաղեկ ենք հետևյալ ուսումնա-
սիրությունից՝ Հ. Ներսէս Վ. Ակիմեան, Բաղէշի դպրոցը. 1500-1704, Վիեննա, Մխիթարեան
տպարան, 1952, էջ 35: Քանի որ նկարագրությունը համառոտ է և տաղի խորագիրը չկա,
ուստի այն բերել ենք ենթադրաբար՝ առնելով ուղղանկյուն փակագծերի մէջ:

¹³ Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հ. Բ, կազմեց Հ. Հ.
Ռսկեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1963, էջ 667: Այս ձեռագիրը
զանազան սկզբնաղբյուրներից արտագրել են Հ. Ահաոյանն ու իր կինը և հանձնել Ն.
Ակիմեանին՝ Վիեննայի Մխիթարյան մատենադարանի համար:

¹⁴ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր տասներորդ, կազմեց Ն. Պողարեան,
Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1990, էջ 321:

Արդ՝ ո՞վ է գրիչների հիշատակած ներսես տաղերգուն:

Մեր նշած ձեռագրական տվյալները հիմք են տվել տարբեր մեկնաբանությունների: Նորայր վրդ. Ծովականը (Պողարյան) «Միջնադարյան տաղասացներ (Ներսես վարդ. Մոկացի)» հոդվածում հիմք ընդունելով վերը նշված եղմ. 135 ձեռագիրը, «Այսօր ցնծայ» տաղն ընծայում է ներսես Մոկացուն (Բեղլու մականունով, 1575-1625)¹⁵: Նա նույն կերպ է վարվում նաև Ս. Հակոբյանց վանքի ձեռագրացուցակի Ա հատորի անձնանունների ցանկում: Սակայն բազմավաստակ գիտնականի ուշադրությունից վրիպել է այն փաստը, որ **Ներսես վրդ. Մոկացին (Բեղլու) ծնվել է այն նույն թվականին՝ 1575, երբ գրվել է Երուսաղեմյան հավաքածուի ձեռագիրը: Ավելին, վերոնշյալ ցուցակի Ա ձեռագիրն ընդօրինակված է Մոկացու ծնունդից մեկ դար առաջ (1476), ուրեմն տաղը նրան ընծայելը դառնում է անհնար**¹⁶:

«Մոկացու ասացեալ» կապակցությունը այլ կերպ է մեկնել Ն. Ակինյանը՝ «Այսօր ցնծայ» Վարդավառի տաղը վերագրելով մեկ այլ Ներսես վրդ. Մոկացու, որին նույնացրել է ներսես վրդ. Մատաղի հետ¹⁷: Վերջինս XV-XVI դարերում ապրած եկեղեցական նշանավոր գործիչներից մեկն է, որին հիշում է Առաքել Դավրիժեցին իր Պատմության Բաղեշի Ամրդու վանքի վարդապետների ցանկում. «Նախ՝ Գրիգոր Տաթևացին, նորին աշակերտ Դանիէլ. նորին՝ Յովհաննէս Համշէնցին, նորին՝ Չորթան Գրիգոր Արճիշեցին. նորին՝ **Ներսէս, որ Մատաղ ասի** (ընդգծումը մերն է – Ա. Մ.). նորին՝ Ներսէս Բաղիշեցին. նորին՝ Ներսէս Ամկեցին. նորին՝ Բրգուտ Յովհաննէս Ոստանցին, նորին՝ Բարսեղ Գաւառցին [...]: Սորին աշակերտ Մոկացի Ներսէս ի գեղջէն Ասկնջաւաայ, զորոյ մակ անուն Բեղլու ասեն, զի մեծ էր բեղն: Սորին աշակերտ Մելքիսէթ Երևանցի, ի գեղջէն՝ որում անուն էր Վժան»¹⁸: Պատմագիրը ներսես Մատաղին հիշատակում է նաև «Այլ եւս կարգ վարդապետաց» գլխում¹⁹: Նրա մասին վկայու-

¹⁵ Էջմիածին, 1944, № 10-12, էջ 37:

¹⁶ Ներսես Մոկացու կյանքին և գործունեությանը նվիրված իր հետազոտության մեջ Ա. Դուրյանյանը ևս ժխտում է տաղի հեղինակության մասին այս թյուր կարծիքը. տե՛ս **Աելիաա Դուրյանյան, Ներսես Մոկացի. կյանքը, գործունեությունը**, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2009, էջ 64-65:

¹⁷ Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 33: «Այսօր ցնծայ լեռն Թարօ» Վարդավառի տաղը ներսես վրդ. Մատաղին վերագրելու Ն. Ակինյանի տեսակետը մինչ այժմ չի հերքվել ո՛չ բանասիրության, և ո՛չ էլ առավել ևս՝ երաժշտագիտության մեջ, այնպես որ՝ դեռևս գիտական շրջանառության մեջ է:

¹⁸ Պատմություն Առաքել վարդապետի Դարձեցայ, էջ 391:

¹⁹ Նույն տեղում, էջ 441: Ցանկը մեջբերել է նաև Մ. Օրմանյանը. տե՛ս *Ազգապատում*, հ. Բ, § 1710, սյուն. 2892:

թյուն է պահպանվել նաև Վարդան Բաղիշեցու²⁰ (XVII-XVIII դդ.) կազմած «Յիշատակաց մատեան»-ում, որտեղ նա առաջինն է նշվում ԶԿԳ (1514) թվականից սկսած՝ Բաղեշի ինդրակատար Ս. Աստվածածնի վանքի առաջնորդների և տեսուչների շարքում²¹: Վարդան վարդապետի վկայությամբ՝ «Ներսէս Մատաղն եւ Ներսէս րաբունապետն»²² օգնականութեամբ եւ վերակացութեամբ խոջայ Թումաշանին շինեցին զպարիսպն և զտներն, եւ արարին հանդիսի վանք, դասատուն և դպրոց: Եւ ել բարի համբաւ սոցա ի բազում տեղիս: Եւ լուեալ բազմաց գային ի պատճառս ուսման եւ ի հետեւումն Աստուածային գրոց»²³:

Ներսես Մատաղի մասին որոշ տեղեկություններ ենք քաղում Ն. Ակինյանի վերոհիշյալ աշխատությունից: Եղել է Գրիգոր Արճիշեցու աշակերտը հավանաբար Աղթամարում 1483 թվականից հետո²⁴, ստացել է վարդապետական իշխանություն, այնուհետև եկել Բաղեշ (1514 թվից ոչ շատ առաջ), գործել Ամրդուլու վանքում, որից հետո հաստատվել է ինդրակատար Ս. Աստվածածնի վանքում և այստեղ էլ վախճանվել մոտ 1530 թ.²⁵: Ս. Աստվածածնի վանքը՝ իբրև հոգևոր-կրթական կենտրոն, մեծ հռչակ է ձեռք բերել հենց Ներսես Մատաղի բարենորոգչական գործունեության շնորհիվ: «Դար մը շարունակ եղաւ այն հայ մտաւոր կեանքի վառարան, ուսկից ելան հայ եկեղեցւոյ համար նշանաւոր քարոզիչ վարդապետներ, գրագէտ և գրասէր», – գրում է Ն. Ակինյանը²⁶: Մեր հիշատակած աղբյուրներում տեղեկություններ չենք գտնում Ներսես Մատաղի ծննդավայրի մասին: Սակայն, դատելով Վարդան Բաղիշեցու «Յիշատակաց մատեան»-ի գույգ Ներսեսների մասնակցությամբ վերոհիշյալ դրվագից, Ն. Ակինյանը հետևյալ կարծիքին է հանգել. կրտսեր Ներսեսը ծնունդով Մոկացի էր և Բաղիշեցի է կոչվել այնտեղ հաստատվելուց հետո: Եվ քանի որ նրան իր հետ Բաղեշ էր բերել իր ուսուցիչ Ներսես Մատաղը, ապա վերջինս նույնպես ծնունդով Մոկացի պիտի եղած լիներ, և «նոյն՝ ... Մոկացի համանուն գանձասաց և տաղասաց վարդապետին հետ»²⁷:

²⁰ Վարդան Բաղիշեցին չորս տասնամյակից ավել (1663-1705) եղել է Ամրդուլու վանքի վանահայր՝ ծավալելով չափազանց արգասավոր գործունեություն:

²¹ F. Macler, “Notre-Dame de Bitlis”, էջ 293:

²² Իմա՝ Մատաղի աշակերտ Ներսես Բաղիշեցին:

²³ F. Macler, “Notre-Dame de Bitlis”, էջ 294:

²⁴ Եւեմ տարի (1480-1483 թթ.) Երուսաղեմում դասավանդելուց հետո Գրիգոր վրդ. Արճիշեցին վերադարձել և հաստատվել է Աղթամարում:

²⁵ Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 29-30:

²⁶ Հ. Ն. Ակինեան, «Կարապետ Վ. Բաղիշեցի (1475-1550)», ՀԱ, 1937, № 6-8, էջ 319:

²⁷ Ն. Ակինեան, Բաղեշի դպրոցը, էջ 30:

Բացի «Այսօր ցնծայ» տաղից, Ն. Ակինյանը ներսես վրդ. Մատաղին է ընծայել նաև ձեռագրերում հանդիպող երեք գանձ՝ «Նախախնամող Աստուած յայտնեցար» (Գանձ Վարդավառին)²⁸, «Նշան օրհնեալ եւ փառաւորեալ» (Գանձ Վարագայ Ա. Խաչին) և «Ներբողական բառըս հրաշալի» (Գանձ Շողակաթին Եկեղեցւոյ), որոնց տների սկզբնատառերը հոդում են «Ներսէս» ծայրակապը: Ի մի բերելով ներսես վարդապետի ստեղծագործական ժառանգության մասին իր ուսումնասիրության արդյունքները, Ն. Ակինյանը գրում է. «Ներսէս Վ. Մոկացւոյ անունով ունինք Գանձարաններու մէջ երեք գանձ եւ մէկ տաղ: Անոնք կը գտնուին արդէն 1505ին գրուած Գանձարանի մէջ» (ընդգծումը մերն է – Ա. Մ.)²⁹: Սակայն «Անոնք» իրականում վերաբերում է վերոհիշյալ գանձերից միայն երկուսին («Նախախնամող Աստուած յայտնեցար» և «Նշան օրհնեալ եւ փառաւորեալ»), քանի որ հետազոտողի մատնանշած ձեռագրերում³⁰ երրորդ գանձը («Ներբողական բառըս հրաշալի») և «Այսօր ցնծայ» տաղը գրառված չեն: Ասվածի ստուգությունը հաստատվում է, երբ Ն. Ակինյանը բերում է մեզ հետաքրքրող տաղին վերաբերող ձեռագրերի մի առանձին ցանկ³¹, որում, ինչպես և ենթադրելի էր, 1505 թ. ձեռագիրն ընդգրկված չէ, իսկ որպես վաղագույն սկզբնաղբյուր բերվում է ՄՄ 7725 Գանձարանը³² ընդօրինակված 1595 թ. Հիզանում: Այսպիսով, «Այսօր ցնծայ» տաղի՝ մեր հայտնաբերած հնագույն նմուշը (1476 թ.) **119 տարով կանխում է վաստակաշատ բանասերի ցուցած ամենավաղ ձեռագրական գրառումը:**

Ուրեմն, 1476 թվականից սկսյալ³³, խնդրո առարկա տաղը մեծապես հայտնի է դարձել, և գրիչները փութաշանորեն արտագրել են այն: Գանձարան-Տաղարաններում, ինչպես նաև նոր հայկական ձայնագրությամբ ժողովածուներում «Այսօր ցնծայ»-ն հիշատակվում է իբրև տաղ կամ մեղեդի: Ձեռագրերում նշված տվյալները, թե Վարդավառի տոնի երեք օրերից հատկապես որ

²⁸ Այս գանձը բազմաթիվ ձեռագրերում հանդիպում է «Ներգործական Աստուած բարեւար» սկզբնատողով:

²⁹ Ն. Ակինեան, *Բաղէշի դպրոցը*, էջ 33:

³⁰ ՄՄ 7888, Գանձարան, 1505 թ., տեղն անհայտ (Ակինյանի գրքում ձեռագիրը նշված է ըստ Երևանի գրական թանգարանի հին՝ 355 թվահամարի): Տե՛ս նաև *Յուզակ հայերէն ձեռագրների Քիֆլիզի ներսիսեան հոգևոր դպրանոցի*, կազմեց Ստեփան Կանայեանց, Քիֆլիզ, Շարաձէի տպարան, 1893, ձեռ. № 2, Գանձարան, 1505 թ., տեղն անհայտ:

³¹ Ն. Ակինեան, *Բաղէշի դպրոցը*, էջ 35:

³² Ն. Ակինյանի ցանկում № 1026 (ըստ հին թվահամարի):

³³ ՄՄ ձեռագրապահոցին կից նյութերի այբբենական փառարանում հանդիպում ենք «Այսօր ցնծայ» տաղի մի գրառման՝ թվագրված 1408 թվականով՝ ըստ ՄՄ 3540 ձեռագրի: Սակայն տաղն ընդօրինակված է ձեռագրի սկզբնամասում (թ. 4բ), այլ գրչությամբ գրված և բուն ձեռագրի հետ կազմված կապոցի թերթերից մեկին, որը, ըստ Արփենիկ Ղազարոսյանի՝ ընդօրինակված է ամենավաղը XVII դ.:

օրն է նախատեսված եղել կատարելու, հակասական են՝ տարբեր գրիչներ այն հատկացրել են տարբեր օրերի: Շատ դեպքերում վերնագրի փոխարեն գետեղվել են այլևայլ բնութագրական հատկանիշներ, ինչպես՝ «Տաղ Վարդավառին ազնիւ և անոյշ ասացեալ»³⁴, «Տաղ Այլակերպութեան գեղեցիկ»³⁵, «Տաղ անոյշ և գեղեցիկ»³⁶, «Տաղ գեղեցիկ և լաւ [է]»³⁷, «Տաղ գեղեցիկ ոգէշահ»³⁸:

«Այսօր ցնծայ լեառն Թաբօր» տաղը Հիսուս Քրիստոսի հրաշալի Այլակերպութեան և Պայծառակերպութեան Ավետարանական դրվագը վերապատկերող մի պատում է, որում «բացահայտվում է» դեպքերի աստիճանական «ընթացքը»՝ Հիսուսի աղոթքը Թաբօր լեռան վրա աշակերտների ներկայութեամբ, հանկարծ տեղի ունեցած տեսիլքը, երբ Տիրոջ «լուսասփյուռ կերպարանքը, ճերմակ, փայլուն զգեստները, երկու փառավոր անձերը, խորախորհուրդ խոսքերը պարզվեցին նրանց աչքի առջև»³⁹, աշակերտների շփոթմունքն ու սոսկումը՝ նրա փառքը տեսնելուց և հատկապես Երկնքից եկող ձայնը լսելուց հետո՝ «Իս է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա՛ լուարուք», և վերջապես՝ առաքյալներին սթափեցնող Տիրոջ կոչը՝ «Յո՛տն կացէք՝ եւ մի՛ երկնշիք», որից հետո միայն նրանք խաղաղվում են: Հեղինակը գեղարվեստական կերպավորման ամենաբազմազան միջոցներով կերտում է մի մեծակտավ ստեղծագործություն՝ իրապես համահունչ այդ մեծագույն իրադարձությանը:

«Այսօր ցնծայ» տաղը գրառված է նոր հայկական ձայնագրություններով բազմաթիվ տպագիր և ձեռագիր ժողովածուներում: Մենք քննության ենք առել Ն. Թաշճյանի գրառած և հայ եկեղեցու կողմից վավերացված օրինակը⁴⁰, որը Չայնագրեալ Պատարագում գետեղված է «Տաղը ըստ պատշաճի աուրցն զորս երգեն զկնի «Քրիստոս պատարագեալ»-ի» խորագրի ներքո, և շատ մեծ տարբերություններ չի արձանագրում մյուս տարբերակների համեմատ:

Իբրև տաղի գրական բնագիր ծառայում է առաջին տունը⁴¹.

Այսօր ցնծայ լեառն Թաբօր,
եւ զուարճանայ մեծն Ահերմոն.

³⁴ ՄՄ 1661, ք. 386ա:

³⁵ ՄՄ 2029, ք. 242ա:

³⁶ ՄՄ 5306, ք. 64ա; 7725, ք. 12բ:

³⁷ ՄՄ 5668, ք. 41ա; Վնակ. 1387, ք. 131ա (Յուցակ Վենետիկի, հ. Ե, սյուն. 714):

³⁸ ՄՄ 7193, ք. 24բ:

³⁹ Մաղափա առք. Օրմանյան, Համապատում, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, էջ 315:

⁴⁰ Չայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կարողիկէ Էջմիածնի, 1878, էջ 164:

⁴¹ Տաղի բնագիրը հրատարակել է Ն. Ակիմյանն իր գրքում (էջ 36-39)՝ հիմք ընդունելով Զմմատի վանքի «Անտոնեան հավաքածոյ»-ի № 510 (հին թվահամարը՝ 100)՝ ԺԶ դարի Գանձարան-Տաղարանի օրինակը՝ համեմատությամբ Վիեննայի մատենադարանի ԺԷ դարի երեք ձեռագրերի (Վիեն. 343, 745 և 1002) և Բազմավէպ-ում (1864, օգոստոս, էջ 234-235) հրատարակված նմուշների:

Քանզի լոյսըն Աստուածային

Այսօր ծագեաց յայն սուրբ լերինն.

Ա՛յ ցընծայ, ա՛յ ցընծայ

Լեառըն Թաբօր եւ զուարճանայ:

Յուրաքանչյուր տանը բնորոշ հարակրկնությունը (անաֆորա) «հին երգողաց և շարականաց Այսօր բառին» (Ղ. Ալիշան)⁴² սկզբնավորությամբ, հայ հոգևոր երգաստեղծությանը բնորոշ ոճաբանական ֆիզուրներից մեկն է հայտնի Սահակ Պարթևի, Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու, Սահակ Ջորափորեցու, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու ստեղծագործությունից⁴³:

Տարբեր ժամանակներում տեքստին արվել են գրչական հավելումներ, այդ պատճառով էլ ձեռագրական աղբյուրներում տների քանակը փոխվում է: Բացի այս, կան նաև տարբերություններ, ինչպես, օրինակ՝ ՄՄ 7725 Գանձարանում, որտեղ չորրորդ տողն է «Իջեալ ցաղէր յայն սուրբ լերինն» (Թ. 12բ): Իսկ ՄՄ 2672 Գանձարանում (1607, Կաֆա, Թ. 242բ) ընդօրինակված նմուշի վեցերորդ տողը սկզբից ունի հավելում՝ «Յնծայ, ցնծայ, լեառըն Թաբօր եւ զուարճանայ», և հենց այս տարբերակն էլ ընկած է Ն. Թաշճյանի ձայնագրած տաղի երաժշտական բաղադրիչի հիմքում: Բանաստեղծական տողերը բաղկացած են 4+4 երկանդամից, և յուրաքանչյուր տողին համապատասխանում է երաժշտական բաղադրիչի մեկ պարբերություն: Բացառություն է կազմում վեցերորդ տողը, որը, նշված հավելման արդյունքում, կազմված է 4+4+4 եռանդամից: Երաժշտական բաղադրիչի համամասնությունն ապահովելու համար հեղինակը դիմել է «Լեառըն Թաբօր եւ զուարճանայ» տողի կրկնությունը՝ այն զուգորդելով այլ երաժշտական նյութի հետ:

«Այսօր ցնծայ» տաղը մեծակերտ-զարդարական ոճի տիպական նմուշ է, իմպրովիզացիոն բնորոշ հենքով, սակայն նաև՝ երաժշտական մտքի զարգացման խիստ տրամաբանված ընթացքով (տե՛ս օրինակ 1): Երաժշտական պատումը բաղկացած է երկու խոշոր պատկերից և կառուցված է հետևյալ սխեմայով՝

առաջին պատկեր - **a b/ c d/ a b/ e f**,

երկրորդ պատկեր - **g h/ i d/ b f**,

այսինքն՝ ներկայացնում է յոթ պարբերություն՝ կազմված զույգ նախադասություններից:

⁴² Ղ. Ալիշան, Հայապատում. պատմիչք և պատմություն Հայոց, Վենետիկ, ի վանս Ս. Ղազարու, 1901, էջ 491:

⁴³ «Այսօր»-ով սկսվող մի սովոր ցանկ է գոյանում հատկապես Շարակնոցն ուսումնասիրելիս: Առավել համեստ է տալերի ցանկը, որոնց թվում են Ներսես Շնորհալի հայրապետի («Այսար ի սկզբան Բանն»), «Այսար աւետեաց Գաբրիէլ» («Այսար ցնծան դամ հոգեղինացն») և այլն), Հովհաննես Երզնկացի Պրովի («Այսար ձայնն Հայրական») և անանուն հեղինակների մի բանի նմուշներ, ինչպես, օրինակ՝ «Այսօր անհատ մեծ խորհրդով» (Աստուածամար Ծննդեան) և կամ «Այսար գալրստեամբ Աստուածորդոյն յերուսաղէմ» տաղերը:

Այսօր գնձայ լնառն թափօր

pp

The musical score consists of ten staves of music. The first staff begins with a treble clef and a key signature of one flat. It features a melodic line with lyrics 'Այ- սօր ցըն- ծայ' and a triplet of eighth notes. The second staff continues the melody with lyrics 'լնա-ընն' and includes a dynamic marking of *pp*. The third staff has lyrics 'թա- փօր,' and a triplet of eighth notes. The fourth staff has lyrics 'գոտար - ճա - նայ' and a triplet of eighth notes. The fifth staff has lyrics 'մն-' and a triplet of eighth notes. The sixth staff has lyrics 'մօն.' and a triplet of eighth notes. The seventh staff has lyrics 'քան - զի լոյ- սըն' and a triplet of eighth notes. The eighth staff has lyrics 'Սատ-ուա- ծա-' and a dynamic marking of *pp*. The ninth staff has lyrics 'յին այ- սօր ծա- գնաց' and a dynamic marking of *f*. The tenth staff has lyrics 'սուրբ լն- թինն.' and a dynamic marking of *f*. The score includes various musical notations such as slurs, ties, and dynamic markings.

Այ- սօր ցըն- ծայ

լնա-ընն

թա- փօր,

լն ց

գոտար - ճա - նայ

մն-

մօն.

քան - զի լոյ- սըն

Սատ-ուա- ծա-

յին այ- սօր ծա- գնաց

սուրբ

լն- թինն.

այ գրն- ծայ այ
 գրն- ծայ գրն- ծայ,
 գրն- ծայ
 լնա-ղն թա- փոր.
 նա գուար- ճա-
 նայ թա- փոր լնա-ղն
 գուար- ճա-
 նայ:

Օրինակ 1

Մի շարք հատվածներ ամբողջապես և անփոփոխ կրկնվում են **a**-ն՝ երկու, **b**-ն՝ երեք, **d**-ն՝ երկու և **f**-ը՝ երկու անգամ, ինչը բխում է երաժշտական նյութի զարգացման անհրաժեշտությունից՝ ապահովելով հորինվածքի կառուցիկությունը: Բացի նույնական մասերից, մնացածները ևս հարազատության որոշակի եզրեր ունեն. այսպես, նույնն են **a** և **c** նախադասությունների սկզբնական հատվածները, **d** և **f** նախադասությունները բաղկացնող սկզբնական դասույթները: Տաղի այս թեմատիկ առանձնահատկությունը նպաստում է ծավալուն երաժշտական մտահղացքի կուռ, ամբողջական կառուցվածքին:

Առաջին պատկերի սկիզբն արտաքուստ հանդարտ է, մտասուզ-հայեցողական: Սակայն թվացյալ խաղաղ ընթացքը լի է ներքին մեծ լարումով, որ աստիճանաբար տեղի է տալիս հուզախոռով ապրումների (հատված **d**), թեև քիչ հետո վերադառնում է նախկին հոգեվիճակին: Միանգամայն հակադիր երկրորդ պատկերը (հատված **g**) իր պոռթկուն-ցնծագին տրամադրությամբ, ազդարարում է տաղի դրամատուրգիական բարձրակետի սկիզբն իր երկու գագաթներով, որոնք երկուսն էլ սկսվում են վերընթաց քառյակային թռիչք-գոչումով, սակայն երկրորդը (հատված **i**) բոլորովին նոր, նպատակասույց մղումով, հետտրական-պաթետիկ տոնի ուժգնացմամբ (նաև վերին հնչամասերի ընդգրկման շնորհիվ): Այն առավել տևական է դառնում ի հաշիվ դրան ազուցված արդեն ծանոթ կտորի (հատված **d**): Այս «գագաթնակետային բարբառումների»⁴⁴ փոթորկուն ալեկոծումից հետո երաժշտական միտքն ուղղորդվում է դեպի հանգուցալուծում-վերջաբան՝ երգչական հնչամասերի աստիճանական անկումով: Այստեղ հեղինակը դարձյալ դիմում է կոմպոզիցիոն միևնույն հնարին՝ նախորդ մասից փոխառելով ևս երկու նախադասություն (հատվածներ **b** և **f**), որոնցից վերջինը յուրատեսակ կամար է գոյացնում առաջին և երկրորդ պատկերների ավարտների միջև՝ հանդես գալով նաև որպես յուրատեսակ կոդա: Պետք է շեշտել, որ մոնոդիայում միևնույն մեղեդիական դարձվածքների այսպիսի հաճախակի կիրառումը չի դիտվում իբրև անհարկի կրկնաբանություն. ընդհակառակը՝ դրանք այնքան սահուն և ներդաշն են ներկառուցվում երաժշտական տեքստի այս կամ այն մասում, որ լիովին արդարացնում են հեղինակի մտահղացումը, և դժվար է ասել՝ այլ դեպքում այս ստեղծագործությունը կլինե՞ր արդյոք գեղարվեստորեն այդքան համոզիչ:

Տաղի առաջին պատկերը պարզորոշ կերպով ընթանում է հիմնական Գձ ձայնեղանակի դիմող ձայնի (**c**) գերակայության ոլորտում: Ակնհայտ է նրա առանցքային դերակատարությունն իբրև կենտրոն, որի շուրջ հյուսվում են զարդոլորուն պտույտ-պասաժները՝ իրենց անսպասելի զարտուղություններով դեպի Բձ և Գձ դարձվածքներ: Բձ դարձվածքն առավել հիմնարար նշանակություն է ստանում երկրորդ պատկերում՝ դառնալով դրամատուրգիական հանգուցակետին (հատված **g**) և նրան հաջորդած վերելքին (հատված **i**) ներհատուկ ձայնեղանակ:

Տաղի բնորոշ առանձնահատկություններից են վարպետորեն կառուցված ձայնեղանակային համադրումները. մի դեպքում անցումը մեկից մյուսին «նախապատրաստվում» է հնչունների խրոմատիկ փոփոխությունների միջոցով (հատվածներ **b-c** Գձ - Բձ դարձվածք, կամ **d** Բձ դարձվածք-Գձ դարձվածք), իսկ մյուս դեպքում տեղի է ունենում կտրուկ (հատվածներ **g-h-i** Բձ դարձվածք - Բձ - Բձ դարձվածք, կամ **d-b** Բձ դարձվածք - Գձ դարձվածք - Գձ):

⁴⁴ Ն. Թահմիբյանի բնորոշումն է, նշվ. աշխ., էջ 222:

Առանձնահատուկ պետք է նշել յուրաքանչյուր ձայնեղանակի տիպական պտույտների ֆոնի վրա մերթընդմերթ հայտնվող վերընթաց քառյակային թռիչքների էական դերը ոչ միայն մեղեդիակերտման և ձևակառուցման մեջ. դրանք ձեռք են բերում նաև արտահայտչական մեծ նշանակություն՝ իրենց մերթ կամային-խրոխտ (տե՛ս հատկապես **g**, **i** հատվածները), մերթ էլ մեղմաշունչ-քնարական երանգով (հատված **b**):

«Այսօր ցնծայ» տաղի ցցուն դրսևորումներից է «ոգեշունչ ճառումը, զմայլանքն ու հափշտակությունը»⁴⁵, որ այնքան բնորոշ էր մեծակերտ-զարդարական ոճի տաղային նմուշներին: Եվ առհասարակ՝ այն հորինված է տաղային արվեստի լավագույն ավանդույթներին քաջատեղյակ հեղինակի ձեռքով: Ներսես վարդապետ Մոկացին, ստեղծագործաբար յուրացնելով հատկապես մեծն Ա. Գրիգոր Նարեկացու երգարվեստին բնորոշ հատկանիշները, իր երկը հղացել է նրա «Աչքն ծով»⁴⁶ տաղի ոճով⁴⁷: Դա է վկայում, առաջին հերթին, «Այսօր ցնծայ» (հատված **g**) և «Աչքն ծով» տաղի մեղեդիական կառույցների նույնությունը (տե՛ս վերջինիս միջնամասի «ծալա[...]» վանկերին համապատասխանող հատվածը): Բացի ինտոնացիոն հարազատությունից, ոճական ընդհանրություն մի քանի էական գծեր ևս նկատելի են, իմա՝ լայնաշունչ վիպաքնարական բնույթը, ձևի և բովանդակության խոր ներդաշնակությունը, ձայնեղանակային հարուստ երանգապնակը, ռիթմական բազմաբնույթ պատկերների կիրառումը, սուր սինկոպացված ռիթմով վերընթաց սեկունդային մոտիվի հաճախակի գործածումը, վերընթաց քառյակային թռիչքի՝ հորինվածքում ունեցած հիմնարար դերը⁴⁸, բարձրակետային մասերում նույն թռիչքի միջոցով բարձր հնչամասում գտնվող հիմնաձայնի վրա կանգ առնելը, այն շրջազարդելն ու հետագա աստիճանական վայրէջքը⁴⁹, վարընթաց մասերում սեկվենցիոն դարձվածքների գործածումը, զարդարանքների առատությունը, գործիքային արվեստի հետ ունեցած սերտ աղերսը, և, վերջապես, գեղարվեստական ներգործություն մեծ ուժը, որոնք «Այսօր ցնծայ» տաղը դարձնում են հոգևոր տաղերգության հատրնտիք նմուշներից մեկը:

⁴⁵ Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 38:

⁴⁶ Զայնազրեալ Պատարագ, էջ 97:

⁴⁷ Գրիգոր Նարեկացու տաղերի բազմահմուտ հետազոտող, վաստակաշատ երաժշտագետ Ն. Թահմիզյանը գտնում է, որ տաղը վերաեղանակավորվել է Կիլիկիայում XII-XIII դարերում, այնուհանդերձ նաև հաստատում, որ «պահպանվել են նրա նախաստեղծ հիմքը՝ երաժշտական բուն մտահղացքը, ինչպես և սկզբնական ելևէջներից ու պտույտներից շատերի գլխավոր շրջագծերը» (նշվ. աշխ., էջ 223):

⁴⁸ Հանգետ «Հափկ»-ի կամ «Հատուն, հատուն»-ի, որտեղ հանդիպող նմանատիպ թռիչքները՝ փոփր և մեծ տևողությունների զուգորդմամբ, Մ. Նավոյանն անվանում է «կշռութային»։ տե՛ս Մ. Նավոյան, Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում, Երևան, «Արևել» հրատ., 2001, էջ 168:

⁴⁹ Տե՛ս «Հափկ», «Ահեղ ձայն», «Աչքն ծով» տաղերի նմանատիպ մասերը:

Միջնադարյան խազավոր գրչագրերում գրիչները այս կամ այն տաղի ձայնեղանակի վերաբերյալ սովորություն ունեին նշումներ թողնել՝ ցուցելով մեկ այլ հայտնի ստեղծագործություն, ինչպես, օրինակ, Ներսես Շնորհալու մի քանի տաղեր հղվում են կատարվելու Գրիգոր Նարեկացու տաղերի «գույնով», այսինքն՝ ձայնեղանակով, կամ հենց իր՝ Ներսես Շնորհալու տաղերի «գույներով» են կատարվում այլ տաղեր⁵⁰: Այս առումով պետք է հատկապես ընդգծել մեր գրիչների, վանական երաժիշտների կատարած ջանադիր և հետևողական աշխատանքը: Ինչպես ձեռագիր Գանձարաններից մեկում ենք կարդում՝ «Իւրաքանչիւր տաղի եւ գանձի զգիարդն եւ զոր գունակ երգելն մեծաւ խուզմամբ տեղեկացաք այսր եւ անդր շրջելով եւ երբեմն զհնագոյն միաբանսն հարցանելով. վասն որոյ եւ հանդէպ իւրաքանչիւր տաղի եւ գանձի զորգունակ երգելն գրեցաք եւ ստորանշեցաք, թէ այս ինչ տաղ այս գունակ երգի եւ այս ինչ գանձ այսքան ոտիւք չափի»⁵¹ (ընդգծումը մերն է – Ա. Մ.): «Այսօր ցնծայ» տաղը ևս բացառություն չի կազմում. 1786 թ. գրված Տաղարանում⁵² ունի ցուցում կատարման վերաբերյալ՝ «Այսօր ձայնի գոյնն է»: Անշուշտ, նկատի ունի քիչ հետո գրառված «Այսօր ձայնն Հայրական» տաղը («Տաղ ազնիւ Զորհնեաց անոյշ գունով» խորագրով)⁵³: Վկայություններ ենք գտնում նաև մեր տաղի ձայնեղանակով այլ երգեր կատարելու մասին, ինչպես նշված է «Սիրտ իմ առ Քեզ Յիսուս տենչայ»⁵⁴ տաղի («Այսօր ցնծայ լեառն Թաբօր գունն է»), ծայրակապ՝ «Ստեփաննոս»), և կամ՝ «Գոյիդ Անեղ անսկզբնական»⁵⁵ և «Այսօր լըրիւ երկիր հնչէ»⁵⁶ տաղերի («Այսօր ցընծայի գոյն է») լուսանցագրերում:

Սակայն, ձեռագրական աղբյուրներում հանդիպող համանման հղումները ենթադրում էին ոչ միայն ձայնեղանակային, այլև մեղեդային հարազատություն կամ նույնություն գրառված նմուշի հետ: Եվ ահա՛ ն. Թաշճյանի ձայնագրած տաղերի երաժշտական բաղադրիչների՝ մեր կատարած համեմատական քննությունից պարզ դարձավ, որ երգչական ավանդույթի համաձայն՝ «Այսօր ցընծայ»-ի «գույնով» է երգվել «Եւ ի յերկինս վերացեալ» Համբարձ-

⁵⁰ Տե՛ս Ներսես Շնորհալու «Որդիքն որոտման» տաղի վերաբերյալ Գրիգոր Նարեկացու «Սեա եւ գեղեցիկ» տաղի մասին հղումը (ՄՄ 428, ք. 50ա), իսկ իր՝ Շնորհալու տաղերի «գույնով» կատարելու մասին հետևյալ նշումները՝ «Հոփսիմեանց տաղի գոյն է» (ՄՄ 428, ք. 13ա, 14բ և այլուր) և կամ «Նոր ծաղիկ պայծառ գոյն» (նույն տեղում, ք. 139ա) և այլն:

⁵¹ Նոր Զուլա 387, 1709 ք., ք. 5ա. տե՛ս *Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուլայի Ամենափրկիչ վանքի*, հ. Ա, կազմեց *Սմբատ Տէր-Աւետիսեան*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1970, էջ 504:

⁵² Վնտկ. 1835, ք. 15ա (*Յուցակ Վենետիկի*, հ. Ե, սյուն. 901):

⁵³ Վնտկ. 1835, ք. 17ա (*Յուցակ Վենետիկի*, հ. Ե, սյուն. 902):

⁵⁴ ՄՄ 3540, ք. 10բ:

⁵⁵ Եղմ. 135, ք. 186բ շար., *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հատոր առաջին, էջ 382:

⁵⁶ ՄՄ 429, ք. 24ա:

Ինչպես իր նախորինակը, այնպես էլ «Եւ ի յճրկինս վերացեալ» տաղն իր հնավանդ երաժշտական բաղադրիչով ու նոր գրական բնագրով այնքան մեծ տարածում է գտել, որ ընդգրկվել է Չայնագրչալ Պատարագի տաղերի և մեղեդիների վավերացված նմուշների շարքում⁵⁹:

Այսպիսով, «Այսօր ցնծայ լեառն թաբօր» վարդապետի տաղը՝ ամփոփելով հանդերձ X-XV դարերի հայ հոգևոր տաղերգուիթյան լավագույն ավանդույթները, մի նոր զարգացման նախասկիզբն է հանդիսացել նաև: Այն տվյալ դարաշրջանից մինչև մեր օրերը հասած եզակի հատակոտորներից է, մի նշխար՝ երաժիշտ-փիլիսոփա Ներսես վարդապետ Մոկացու երաժշտաբանաստեղծական ժառանգուիթյունից:

АСТХИК МУШЕГЯН

РЕЛИКВИЯ ИЗ МУЗЫКАЛЬНО–ПОЭТИЧЕСКОГО НАСЛЕДИЯ МУЗЫКАНТА–ФИЛОСОФА АРХИМАНДРИТА НЕРСЕСА МОКАЦИ

Ключевые слова: Св. Григор Нарекаци, архимандрит Нерсес Мокаци (*Матах*), Преображение Господне, Вознесение Господне, монастыри Амрдолу и Скоропослушницы Пресвятой Богородицы в Багеше, *таг*, *гандз*, глас, Гандзаран, Никогайос Ташчян.

Статья посвящена анализу одного из лучших образцов армянского средневекового песнетворчества – *тагу* (песнопению) “Радуется ныне гора Фавор”, исполняемому на праздник Преображения. Он появляется в рукописных источниках, начиная с XV века (самый ранний из известных нам – “Гандзаран”, 1476 г.) и является одним из наиболее популярных тагов. В некоторых рукописях его авторство приписывается архимандриту Нерсесу Мокаци (по прозвищу *Матах*), знаменитому церковному деятелю, поэту и музыканту, жившему в XV-XVI вв.

Музыкальный компонент *тага*, записанный армянской нотой известным музыкантом Н. Ташчяном в XIX в., создан под определенным воздействием произведений выдающегося поэта и музыканта Св. Григора Нарекаци (X-XI вв.). Более того, у *тага* “Радуется ныне гора Фавор” и *тага* “Очи – море” есть идентичные фрагменты. В статье представлен подробный анализ музыкального компонента и его взаимосвязь с литературным текстом, выявлены структурные, гласовые и другие особенности.

⁵⁹ Տաղը (միևնույն տարբերակով) լայն կիրառություն է գտել նաև այլ երգչական ավանդույթներում. տե՛ս Մեղեդիներ, տաղեր, գանձեր Հայաստանեայց եկեղեցու, կազմող և խմբագիր՝ Չարեհ Կար. Ազնաուրեան, Անթիլիաս, հրատարակություն Կարողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1990, էջ 71:

Позднее некий анонимный автор соединил мелодию исследуемого *тага* с новым литературным текстом, в результате чего появился *таг* “И вознесшись на Небо”, исполняемый на праздник Вознесения.

Таг “Радуется ныне гора Фавор” воплотил в себе лучшие традиции армянского духовного песнетворчества и является одним из редчайших музыкальных образцов данной эпохи. Он сохранился как реликвия музыкально-поэтического наследия музыканта-философа архимандрита Нерсеса Мокаци.

ASTGHİK MUSHEGHYAN

A RELIC FROM THE MUSICAL AND POETIC HERITAGE OF MUSICIAN AND PHILOSOPHER ARCHIMANDRITE NERSES MOKATSI

Keywords: St. Grigor Narekatsi, Archimandrite Nerses Mokatsi (*Matagh*), Feast of the Transfiguration of Christ, Ascension of Christ, monasteries of Amrdolu and Holy Mother of God Gorgoepikoos in Baghesh, *tagh*, *gandz*, mode, *Gandzaran*, Nikoghayos Tashchyan.

This article is devoted to the analysis of one of the finest examples of Armenian medieval music – the *tagh* (*canticle*) *Mount Tabor Rejoices Today* («Այսօր ցնծայ լեւանն Քարօր»), performed at the Feast of the Transfiguration. The *tagh* appears in manuscripts from the 15th century onwards (the earliest known is *Gandzaran*, copied in 1476) and was one of the most popular *taghs*. In some manuscripts it is attributed to Archimandrite Nerses Mokatsi (nicknamed *Matagh*), a 15th-16th centuries prominent cleric, poet and musician.

The melody of the *tagh* was written down in New Armenian musical notation in the 19th century by renowned musician N. Tashchyan. It was created under the influence of the works by famous poet and musician St. Grigor Narekatsi (10th-11th centuries). Moreover, *Mount Tabor Rejoices Today* shares similar passages with the *tagh* *Eyes Like Sea*. The article contains a detailed analysis of the melody and its interaction with the text, revealing its structural, modal and many other features.

Later on, an anonymous author combined the melody of *Mount Tabor Rejoices Today* with another text, creating a new *tagh*, *And Ascended into Heaven* («Եւ ի յերկինս վերացեալ»), performed on Ascension Day.

The *tagh* *Mount Tabor Rejoices Today* represents the best traditions of the Armenian sacred music; it is one of the rarest examples of Armenian music from this era – a relic of the musical and poetic heritage of musician and philosopher Archimandrite Nerses Mokatsi.

РАИСА АМИРБЕКЯН

**КАДЖАРСКИЙ БИБЛИОФИЛ БАХМАН МИРЗА И
ЕГО МОЛИТВЕННИК «ЗАД-УЛ-МИ'АД» ИЗ
КОЛЛЕКЦИИ МАТЕНАДАРАНА**

«В судный день я скорблю о том, что мне придется еще раз
увидеть людей, проживающих на земле».
Одна из шести эпитафий, составленных каджарским принцем
внуком Фатх-Али шаха Бахманом Мирзой.

Ключевые слова: Каджарская династия, Мухаммад Бакир, Табриз, Мухаммад 'Али ибн Мухаммада Шафи Табризи, 'Аббас Мирза, Шуша, Фатх 'Али Шах Каджар.

В музейном комплексе Матенадарана одну из экспозиций (зал арабографических рукописей), среди прочего, украшает писанный в Табризе изысканный манускрипт № 480* – список 1260 г.х. (1844) известного в исламской традиции сборника молитв Мухаммада Бакира под названием «Зад-ул-Ми'ад»**.

Благодаря содержательному колофону, не характерному для большинства арабографических рукописей, мы имеем возможность восстановить название списка, место и время его переписки, имена как заказчика, так и изготовителя, а также получить из первых рук важный корпус исторической информации (см. **Приложение**).

Колофон, написанный от лица каллиграфа и одновременно изготовителя манускрипта, Мухаммад 'Али ибн Мухаммада Шафи Табризи, включает имя Бахмана-Мирзы¹ – заказчика списка молитвенника, описание и сроки исполнения работ, стоимостные данные, и пр.

* См: **Kristine Kostikyan**, *Catalogue of Persian Manuscripts in the Matenadaran*. Yerevan, "Nairi" Publishing House, 2017, N247, pp. 171-172.

** См. другие списки этого молитвенника: **Ch. Rieu**, *Catalogue of the Persian Manuscripts of the British Museum*, Oxford, 1883 (reprint 1966), vol. I. P. 21; **W. Pertsch**, *Die Persischen Handschriften der Herzoglichen Bibliothek zu Gotha*, Viena, 1859. pp. 257-8 etc.

¹ О Бахман-Мирзе см. **Лен-Пуль**, *Мусульманские династии*, пер. **В. Бартольд**, СПб., 1899, с. 272; **Amir Arsalan Afkhami**, "Defending the Guarded Domain: Epidemics and the Emergence of an International Sanitary Policy in Iran", in: *Comparative Studies of South Asia, Africa and the Middle East*, Vol. XIX, No. 1, 1999, p. 122-134 (p. 123); **Abbas Amanat**, *Pivot of the Universe*, Los Angeles 1997, p. 31 ff.; **Mehdi Bamdad**,

Поздние приписки и печати на защитных листах позволяют довольно четко проследить траекторию миграции данного молитвенника ***.

Рукопись исполнена в лучших традициях персидских иллюминированных манускриптов времени правления династии Каджаров. Все кодикологические составляющие организма книги строго подчинены параметрам традиционной исламской рукописи. От известных образцов классического периода персидской рукописи 15-17 вв. рассматриваемый каджарский манускрипт отличается рядом новшеств в декоре фронтисписов, унванов² и др. Это яркие мелкие цветочки, вкрапленные в общую ткань композиции декора страницы или разворота, роскошный лаковый переплет, использование анилиновых красок и др.

Впервые этот молитвенник был представлен нами научной общественности в 70-е гг. в формате доклада, на конференции, организованной Музеем искусства народов Востока в Москве и посвященной искусству Ирана³.

"Bahman Mirza", in: *Sharh-e hal-e rejal-e Iran*, vol 1, Tehran 1992, p. 195-198; "Mohammad Ali Shah", in: *Sharh-e hal-e rejal-e Iran*, vol 3, Tehran 1992, 438-441 (440); **George A. Bournoutian**, *The Khanate of Erevan under Qajar Rule, 1795-1828*, Mazda Publishers, Costa Mesa 1992, p. 47 ff.; **Г. В. Шитов**, *Персия под властью последних каджаров*, Ленинград: Изд. АН СССР 1933, с. 231; **L. Lockhart**, "Abbas Mirza," *Encyclopaedia of Islam*, Edited by **P. Bearman**, **Th. Bianquis**, **C.E. Bosworth**, **E. van Donzel** and **W.P. Heinrichs**, Brill, 2007; **Каджар Чингиз**, *Старая Шуша*, Баку, вŞərq-Qərb, 2007, с. 344; **Nəzirli Şəmistan**, *Güllələnmiş Azərbaycan generalları*, Bakı: Kooperasiya, 2006, s. 624; **Nəzirli Şəmistan**, *Cümhuriyyət generalları*, Bakı: Nərbə Nəgriyyat, 1995, s. 212; **Шакарим Кудайберды-улы**, *Родословная тюрков, киргизов, казахов и ханских династий*, Алма-ата: СП Дастан, 1990.

*** Оттиски печатей: сс. 2 а и 3 б.

² Унван (араб., перс.) – буквально: заглавие, заставка, украшающая начало сочинения или начало главы в арабографических рукописях.

³ **Р. Амирбекиян**, "Миниатюра персидских рукописей и документов Каджарского периода из собрания Матенадарана", *3 Всесоюзная конференция "Искусство и археология Ирана и его связь с искусством народов СССР с древнейших времен"*, Москва, Музей искусства народов Востока. Тезисы докладов, Москва: Изд. Советский художник, 1979, сс. 9-11. См. Также "Каджарская миниатюра в собрании Матенадарана" (co-author Arline Abdalian (USA), *'Iran & Caucasus: Research Papers from the Caucasian Center for Iranian Studies'*, Yerevan, vol. 2 (Tehran, 1999), pp. 83-94, 4 ill., (на русском); "Qajar Art as an Alternative Source of History: Look Through the 18th and 19th Century Persian Illuminated Manuscripts from the Armenia's Collections," *International Conference "Iran and the Caucasus: Unity and Diversity" ARYA International University (Yerevan) and the Caucasian Centre for Iranian Studies (Yerevan), in collaboration with the Armenian Association for Academic Partnership*

Впервые этот манускрипт достойным образом был представлен в альбоме-монографии *Каллиграфия и миниатюра Востока. Коллекция Матенадарана*⁴.

Рукопись была заказана Бахманом-Мирзой мастеру, который прекрасно владел искусством каллиграфии, миниатюры, золочения и исполнения всех остальных компонентов книги, включая переплет. Как становится известно из содержания памятной записи, создавал молитвенник Мухаммад ‘Али ибн Мухаммад Шафи Табризи по договору с заказчиком в доме у последнего, где ему были созданы необходимые условия для работы и проживания в течение двух лет. За исключительное качество и высокий уровень исполнения заказа мастер был премирован помимо гонорара (выданного в твердой валюте в размере 518 нохудов⁵ золота), еще и халатом с плеча хозяина, Бахмана-Мирзы, сына престолонаследника ‘Аббаса-Мирзы, внука Фатх ‘Али шаха Каджара. Колофон содержит также упоминание о том, что помимо личного молитвенника для хозяина мастер исполнил еще несколько заказов на изготовление рукописей в этом доме.



Принц Бахман-Мирза Каджар (1810-1884)

and Support (ARMACAD), June 06-08, 2008. Abstracts, Yerevan: ARYA International University, 2008, p. 5.

⁴ Р. Амирбекян, *Каллиграфия и миниатюра Востока. (Коллекция Матенадарана)*, Ереван: Наири, 2012; R. Amirbekian, *Calligraphie et enluminure des manuscrits orientaux (Collection du Maténadaran)*, Erevan: Nairi, 2012; Raisa I. Amirbekyan, *The Calligraphy and Miniature Painting of Oriental Manuscripts (Armenia's Matenadaran Collection)*, Yerevan: Nairi, 2018 (forthcoming).

⁵ Нохуд – единица веса в Персии.

По желанию заказчика рукописи для текста молитвенника был выбран крупный шрифт, а именно, *наسخи джали*⁶ – крупный *наسخ*⁷ (*наسخ*, как один из видов почерковых стилей арабского письма, использовался многие годы при переписке текстов исключительно сакрального содержания). Это пожелание Бахмана-Мирзы было продиктовано тем, что он страдал близорукостью. Крупный шрифт избавлял его от необходимости в процессе чтения молитв прибегать к посторонней помощи, т.е. обращаться к Аллаху через посредников.

Рукопись открывает исключительный по своей красоте и утонченности традиционный для исламской книжной традиции круглый медальон-эклибрис *шамсе*⁸, заключающий в себе оттиск печати владельца молитвенника, Бахмана-Мирзы. Этой же печатью были скреплены многие известные по публикациям важные исторические документы и грамоты, о чем свидетельствуют их оригиналы, хранящиеся ныне в различных государственных и частных коллекциях по всему миру. Медальон исполнен с использованием пигментов, черной туши и высококачественного сусального золота.

⁶ *Джали/джалил* (араб.) – термин, обозначающий любое крупное письмо, но особенно применительный к крупному сульсу. Этот стиль развивался начиная с правления сельджукидов, особенно в 15-ом веке, и достиг расцвета в период Тимуридов и Сефевидов.

⁷ *Насх* (араб.) – вид арабского письма, включающий в себя прямолинейные, округлые и курсивные почерки. Своему происхождению почерк *наسخ* обязан выдающемуся каллиграфу первой половины 10 века Ибн Мукле. Пропорциональный почерк Ибн Муклы был усовершенствован в начале 11 века другим знаменитым каллиграфом, Ибн Баввабом. Начиная приблизительно с 10 века *наسخ* стал использоваться для переписки корана. Дольше всего традиция каллиграфии *наسخа* сохранилась именно в Персии. Последним мастером, работающим в стиле *наسخ*, был Мирза Ахмад Науризи, знаменитый каллиграф и миниатюрист начала 18 века. В Сельджукском Иране *наسخ/наسخи* использовался для частной корреспонденции, а также для переписки художественных произведений.

⁸ *Шамсе* (араб., перс., тюрк.) – большая овальная, или круглая декоративная розетка в виде медальона, расположенная в центре листа или верхней и нижней крышек переплета рукописи в исламской традиции. В персидских рукописях *шамсе* использовалось как эклибрис, в который вписывалось имя владельца или его *тугра*.



Оттиск печати Бахмана Мирзы, 1265 (1848)

Главным украшением списка «Зад-ул-Ми'ад» Матенадарана несомненно является каллиграфическое мастерство переписчика – *хатмата* Мухаммада 'Али ибн Мухаммада Шафи Табризи. Крупные буквы почеркового стиля *наسخ*, исполненные черной тушью, в сочетании с золотом на фоне великолепно отшлифованной бумаги цвета слоновой кости, в полной мере передают впечатление сакральной таинственности, действенности и могущества слова начертанного.

Развернутый фронтиспис традиционно открывает вход в мир молитвенника, приглашая читателя к общению. Роскошь декоративных элементов, качество использованных материалов, строгий математический расчет в композиции декора, скрупулезность и точность, лежащие в основе воспроизведения деталей, яркость и чистота красок в сочетании с обилием светоносного металла демонстрируют высочайший уровень мастерства исполнителя.

Весь комплекс кодикологических составляющих памятника делает его раритетом не только восточной коллекции Матенадарана, но и выдающимся образцом персидского манускрипта эпохи Каджаров.

Рукопись содержит три аналогичных портала – двойные фронтисписы, открывающие наиболее важные разделы молитвенника. Вся иллюминация манускрипта построена с учетом сакральности содержания и твердого следования нормам исламской традиции, предъявляемым к манускриптам подобной направленности – списков коранов, толкований, молитвенников и др.⁹

⁹ А. Б. Халидов, *Арабские рукописи и арабская рукописная традиция*, отв. редактор О.Г.Большаков, Москва: Наука ГРВЛ, 1985; он же, *Рукописная книга в куль-*

Лаковый переплет молитвенника исполнен на высоком художественном уровне. Техника исполнения подобных переплетов, основанная на использовании живописи по папье-маше с последующим покрытием лаком, была весьма популярна в рассматриваемый период. Исследователи отмечают, что в Каджарский период искусство изделий из лака было доведено в Персии до совершенства¹⁰. Эта техника в свое время была экспортирована из Индии (из области Кашмир), где она использовалась в прикладном искусстве с незапамятных времен. В комплексе с остальными элементами декоративного убранства рукописи, выбор подобного переплета дополняет впечатление от молитвенника Бахмана-Мирзы как от типичного образца роскошного манускрипта своего времени. Комплекс его кодикологических составляющих являет гармоническое сочетание как традиционных, так и новаторских элементов, демонстрируя эстетические вкусы, тенденции и веяния времени в сочетании с личными предпочтениями конкретного заказчика.

Бахман-Мирза Каджар является потомком тюркского рода Каджаров. Он, как было отмечено выше, был сыном наследника иранского престола принца ‘Аббаса-Мирзы Каджара и принцессы Асии-ханум из знатного рода Каджаров – Давалу.

туре народов Востока. Очерки, Кн. Первая, Москва: Наука, 1987, сс. 297-298; Г.Э. фон Грюнебаум, *Классический ислам*, Москва, 1986; Khatibi, Abdelkebir and M. Sijelmassi, *The Splendour of Islamic Calligraphy*, New York: Rizzoli, 1976; A. Schimmel, *Calligraphy and Islamic Culture*, New York: New York University Press, 1984; M. Lings, *The Quranic Art of Calligraphy*, London, 1976; E. Kühnel, *Islamische Schriftkunst*, Graz, 1972; Mohammad Khazaie, “The Development of the Arts of the Book in Early Islamic Art of Persia – Nameh-ye Baharestan,” *Iranian International Journal for Islamic Manuscripts Research*, Vol. 1, No.2. Winter 2001, pp. 193-204; A. M. Takistani, *The Art of Illumination*, Tehran: Soroush Press, 1993, p. 194.

¹⁰ О.Ф. Акимушкин, “К вопросу о среднеазиатских переплетах рукописных книг (30-е годы XVIII – 30-е годы XX в.)”, *Письменные памятники Востока*, 1, весна-лето 2004; D. James, *Qur'ans and Bindings*, London: World of Islam Festival Trust, 1980, pp. 118-19; Diba, Layla with Maryam Ekhtiar (eds.), *Royal Persian Paintings: The Qajar Epoch 1785-1925*, London: I. B. Tauris Publishers in association with the Brooklyn Museum of Art, 1998; Dickson, Martin and Stuart Cary Welch, *The Houghton Shahnameh*, Cambridge, MA: Fogg Art Museum, Harvard University Press, 1981; “Establishment of the Qājār Dynasty”, in: *Cambridge History of Iran VII: From Nadir Shah to the Islamic Republic*, ed. by Peter Avery, Gavin Hambly and Charles Melville, Cambridge University Press, Cambridge, 1991, pp. 104-144.

О его детстве известно мало. Бахман-Мирза родился 11 октября 1811 г. в Тегеране в Голестанском дворце в резиденции Каджарских шахов. Вместе с братьями он получил блестящее для своего времени домашнее образование в Табризе. Среди его учителей были такие видные общественные деятели своего времени, как отец и сын Гаим Маггамы, Мирза Исса Фарахани (Мирза Бозорг, везир 'Аббаса-Мирзы) и Мирза Абуль Гасым Гаим Магам.

Источники свидетельствуют, что Бахман-Мирза прославился среди современников как наиболее образованный из Каджарских принцев. Он сочетал труды на литературном поприще с масштабной благотворительной деятельностью и покровительством искусства. Бахман-Мирза глубоко и серьезно изучал материалы, связанные со всемирной историей и географией, особенно его привлекала история Европы.

Многие часы он проводил за чтением книг. Современники восхищались его богатой библиотекой, насчитывавшей несколько сотен книг. Личные качества принца Бахмана-Мирзы, общение с мировой литературой в сочетании с традиционными знаниями, позволили ему оставить значительный след в истории Персии периода правления династии Каджаров.

По приказу своего деда Фатх 'Али-шаха в 1831 г. он был назначен губернатором Ардебилля. Однако смерть шаха в 1834 перевернула жизнь наследников: многие из них, в том числе и Бахман-Мирза, пройдя испытания, наветы, заключение в Ардебильскую крепость, вышли, несмотря ни на что, на новый жизненный виток. Бахман-Мирза стал губернатором Тегерана, затем он сменил друг за другом многие другие высокие посты. И, наконец, после смерти Гахрамана Мирзы Каджара, стал в звании фельдмаршала генерал-губернатором Азербайджана, самой богатой провинции Ирана, и тем самым приобрел высокий статус в императорской семье.

Он был избран на этот пост не только благодаря тому, что был единоутробным братом шаха, старшим сыном 'Аббаса-Мирзы, и ему способствовали мать и братья из рода Давалу, но и благодаря лидерским качествам и таланту управления.

Под сенью его правления Табриз стал космополитическим городом с богатой культурной жизнью. Бахман-Мирза намечал планы по модернизации армии, смены системы налогов и судопроизводства.

Благодаря его толерантной политике, глава религиозной секты Сейид ‘Али Мухаммед, именуемый в народе Баб, смог разместиться в Табризе, хотя впоследствии Бахман-Мирза устранил практику *баста* в целях контроля над клерикальными силами. Он также пытался модернизировать иранскую систему санитарии и этим предотвратить очередной взрыв азиатской холеры¹¹.

Бахман-Мирза был полон желания провести реформы, необходимые для европеизации и демократизации общества. Но, оклеветанный Мирзой Агаси, по приезде в Тегеран, Бахман-Мирза под страхом ареста вынужден был бежать. На пароходе “Лянкяран” в мае 1848 г. он отплыл в Баку, затем в Шемаху, а спустя несколько дней вызвал из Тегерана в кавказское наместничество русского императора в Тифлисе и свою семью (7 жен и 19 детей). Вслед за ними из Табриза прибыли его сокровищница и огромная по тем временам библиотека рукописных и печатных книг. Для ее перевозки потребовалось 95 верблюдов.

В Тифлисе Бахман-Мирза остановился в роскошном доме Сумбатова.

Более трех лет Бахман-Мирза вел переговоры с шахским правителем о возвращении на родину. Условия, на которых ему разрешалось вернуться, оказались очень жесткими и унижительными. Бахман-Мирза решил остаться на Кавказе и принять русское подданство. В Российской империи за Бахман-Мирзой и его потомками официально сохранили титул персидских принцев, который добавлялся к их именам. На русский манер они титуловались “сиятельными”, а с 1887 г., по Высочайшему повелению, “светлостями”.

Царское правительство встретило Бахман-Мирзу с большими почестями. Ему была назначена пожизненная пенсия в 6 тысяч червонцев в год и обещано получение местожительства в любой точке России. Бахман-Мирза попросил разрешения поселиться в Шуши, куда он в октябре 1851 г. переехал со своим большим гаремом, детьми и приближенными.

Огражденный высоким каменным забором большой дворцовый комплекс помимо всего прочего имел мечеть, школу для его детей и библиотеку. Свою преданность и любовь к книгам Бахман-Мирза пронес сквозь всю свою жизнь. Тонкий знаток и ценитель литера-

¹¹ См. примеч. 1.

туры, он прививал своим потомкам любовь к книгам как источнику знаний, звеньям памяти человечества. Они же слагали легенды о его феноменальных познаниях, доброжелательности, мудрости и талантах.

Еще при жизни Бахман-Мирза велел построить для себя мавзоль-усыпальницу. Он состоял из трех помещений с купольными перекрытиями, где во втором после прихожей помещении были расположены ниши для книг и светильников, а в третьем предполагалось предать земле его прах. Он скончался 11 февраля 1884 г. в Шуши и был похоронен на кладбище культового комплекса Имамзаде, возле мечети Ибрагим в Барде.


Во время межэтнических убоиц и столкновений в 1905 году дворец Бахман-Мирзы был сожжен. Впоследствии сыну Бахман-Мирзы Гулам Шах-Мирзе Каджару удалось частично восстановить дворец¹².

Бахман-Мирза является автором нескольких научных трудов по истории, этнографии и географии своей провинции. Наиболее известным его произведением является “Шукюрнаме” (Книга-благодарение Царю Царей, посвященная Александру I). Труд был написан в 1871 г. в Шуши на персидском языке. Автор использовал материалы из дворцового архива. В книге представлена историография и обширная информация по шестивековой истории Кавказа вплоть до Мухаммад шаха Каджара. Исследователи (например, ‘Али Гусейнзаде) отмечают также, что Бахман-Мирза является автором ряда кратких справочных книг по географии, истории и этнографии народов некоторых стран мира.

Некоторые фрагменты знаменитой библиотеки Бахмана-Мирзы ныне хранятся в фондах Института рукописей Национальной академии наук Азербайджана. Часть раритетов из этого собрания расплылась по государственным и частным библиотекам, музеям и кол-лекциям по всему миру. На многих сохранившихся книгах, как

¹² Г. В. Шитов, *Персия под властью последних каджаров*, Ленинград: Изд. АН СССР, 1933; Каджар Чингиз, *Старая Шуша*, Баку: вŞərq-Qərbv, 2007, с. 344; Nəzirli Şəmistan, *vGüllələnmiş Azərbaycan generallariv*, Bakı: Kooperasiya, 2006, с. 624; Nəzirli Şəmistan, *vCümhuriyyət generallariv*, Bakı: Nərbiv Nəşriyyat, 1995, с. 212; Шакарим Кудайберды-улы, *Родословная тюрков, киргизов, казахов и ханских династий*, Алма-ата: СП Дастан, 1990; Сейед Рахман Хасани, *Торговые связи Ирана с Россией в XIX -начале XX вв.*, диссертация кандидата исторических наук: Душанбе, 2015.

рукописных, так и печатных, присутствует оттиск его владельческой печати. На ней выгравированы слова, точно характеризующие менталитет этого библиомана: “Единственная жемчужина шахского океана” (Егане говхар-и дарйа-и хосрови-Бахман). Еще больше говорит текст, выбранной им для личной подписи: “Бахман Мирза ибн наеб ал-салтане ‘Аббас Мирза”.



Рассмотренная нами рукопись из арабографической коллекции Матенадарана (инв. № 480) – это памятник с четко прослеживаемым путем миграции (Табриз, Шуши, Москва, Ереван). Переходя из рук в руки, молитвенник “Зад-ул-Ми’ад” оказался в фондах библиотеки Лазаревского института Восточных языков в Москве, а после его расформирования нашел свой приют в Матенадаране.

В настоящее время рукопись находится в хорошей сохранности, время от времени выставляется для обозрения в одном из залов Матенадарана, среди других раритетов постоянной экспозиции арабографических рукописей и документов.

Приложение: Колофоны рукописи¹.

Рукопись № 480 арабографического фонда Матенадарана, лл. 2б – 3а (281б – 282а (на перс.):

حسب الفرمايش نواب اشرف ارفع والا بهمن ميرزا که وليعهد مغفور نايب السلطنه العليه عباس ميرزا بن خاقان خلد آشيان فتحعلي شاه قاجار را بهمن فرزند و سرکار اقدس اعليحضرت محمد شاه را كهين برادر و فرمان فرماي كل ممالك آذربايجانست در سنه ۱۲۶۰ و هزار و دويست و شصت که در دارالسلطنه تبريز تشریف داشتند بنده درگاه محمد علي بن محمد شفيع تبريزي را بتحرير کتاب مستطاب زادالمعاد که وسيله فزون شاد و سداد است بجهت تلاوت خود سرکار مامور فرمودند. امثالاً الامرہ العالی شروع گرديد واللہ المعين.

По приказу престолонаследника Бахмана-Мирзы, главы провинции Атрпатакан, сына ‘Аббаса-Мирзы, сына Фатх-‘Али Шаха Каджара, младшего брата и должностного лица шаха Мухаммада, в 1260 году по лунному календарю (1844 г.) во время пребывания в шахской резиденции в Табризе дворцовому слуге Мухаммаду ‘Али Ибн Мухаммаду Шафи Табризи было поручено переписать благоую книгу “Зад-ул-Ми ‘ад” для чтения его Высочеством, что явилось причиной большой радости.

Ատրպատականի երկրամասի գլխավոր դեկավար, Ֆաթհալի-Շահ Դաշարի որդի, Աբբաս-Միրզայի թագաժառանգ և Մոհամմադ շահի կրտսեր եղբայր Բահման-Միրզայի հրամանի համաձայն, լուսնային տոմարով 1260 թ. (1844 թ.) թագավորանիստ Թավրիզ պալատի ծառայիս՝ Մոհամմադ ‘Ալի Իբն Մոհամմադ Շահի Թավրիզիին հանձնարարվեց գրի առնել «Զադուլմա’ադ» գովելի գիրքը՝ Նորին Մեծության ընթերցանության նպատակով, որը մեծ բերկրանք պատճառեց [նվաստիս]:

¹ Колофон рассматриваемой рукописи был скопирован по просьбе автора статьи 30 лет тому назад Кристине Костилян (в те годы студентки кафедры иранистики Ереванского Гос. Университета), устно переведен старшим научным сотрудником Матенадарана Акопом Папазяном и записан автором статьи с его слов, далее был вновь переведен на армянский язык и уточнен магистрантом кафедры иранистики ЕГУ и носителем языка Хосейном Хормузари (Иран) и, наконец текст колофона был окончательно отредактирован и выверен старшим научным сотрудником Матенадарана Кристине Костилян и опубликован в вышедшем в 2017 году в каталоге персидских рукописей Матенадарана (см. **Kristine Kostikyan, Catalogue of Persian Manuscripts in the Matenadaran, Yerevan, “Nairi” Publishing House, 2017**). Перевод на русский язык осуществлен нами.

در سنه هزار و دویست و شصت از هجرت حضرت خیر الانام و خاتم الانبیا 458ش^ه کرام محمد بن عبدالله علیه التحیه السلم نواب اشرف و ارفع والا بهمن میرزا حفظه الله تعالی که ولیعهد مغفور نایب السلطنه العلیه عباس میرزا بن خاقان خلدآشیان السلطان فتحعلی شاه قاجار بهمن فرزند و با سرکار اقدس اعلی حضرت محمد شاه غازی خلدالله ملکه (458ش^ه) یکدرج و اختر یکبرج و فرمانفرمای کل ممالک آذربایجان اقل العباد محمد علی بن محمد شفیع خطاط تبریزیرا بر تنمیق نسخه شریفه زادالمعاد مامور فرمودند چون غالباً کتاب مستطاب زاد المعاد در لیالی و اسحار ماه مبارک رمضان ضرور و در کار و تزاید اعمار موجب ضعف ابصارا بود لهذا سهولت تلاوت منظور نظر مبارک نواب والا افتاد از میان خطوط خط جلی را تعیین فرمودند بنده درگاه خلایق پناه موافقا "الحکم و مطابقا" الامر بخط نسخ جلی بعون الله القادر العلی در مدت دو سال از ترقیم این کتاب خیریت مال و سعادت اشتحال فراغت حاصل نمود و در تمامیت اینمدت روز بروز از نواب والا حرسه الله تعالی مشمول مرحمتهای بیکران و عنایتهای شایان گردید و بعد از اتمام خدمت و انجام کتابت مبلغ پانصد اشرفی تومان هجده نخودی بصیغه انعامرا مرحمت و مجدداً بخدمت جداگانه مامور فرمودند که بان وسیله همه اوقات مشمول عنایات گشته برفاهیت مشغول خدمت و دعاگوئی دوام دولت باشد.

В 1260 году по лунному календарю (1844 г.) приказом престолонаследника Бахмана-Мирзы, сына Аббаса-Мирзы, сына Фатх-Али Шаха Каджара, исполняющего должность шаха, было поручено дело переписки благостной книги "Зад-Ул Ми ад" Мухаммад 'Али Ибн Мухаммаду Шафи Табризи. Так как прекрасная книга "Зад-Ул-Ми 'ад" более нужна ночью и ранним утром благословенного рамазана, а вследствие приумножения работ ухудшилось зрение, для легкости чтения Его Величество выбрал почерк джали. Слуга шахского двора согласно приказу приступил к написанию сей книги и с Божьей помощью закончил его в течении двух лет, ежедневно наслаждаясь благодарным вниманием Его Высочества. После окончания служения и завершения переписки книги в качестве награды ему было выдано вознаграждение в размере 500 золотых туманов², равное

² Туман – от татарского слова "тумен" (10 000), позже перешедшее также на денежные единицы. В 13-14 веках в Персии туман как счетно-денежная единица соответствовал 10 000 серебряных динаров, но до конца 18 века оставался только счетно-денежной единицей, подобной индийскому и бангладешскому крору. При основателе Каджарской династии Ага Мухаммаде (1779-1797) был в 1794 введен золотой туман весом 8,2 г. Его преемник Фатх 'Али-шах (1797-1834) чеканил монеты в 5, 2, 1, 1/2, 2/3 и 1/3 тумана. В 1810-1828 вес тумана составлял 4,6 г., затем снизился до 3,5 г. В 1806-1852 чеканились монеты 989-й пробы в 1/2, 1, 3, 5,

по весу 18 нохудам, и поручена новая работа, чтобы и впредь служил [двору], молясь за его долговечность.

Լուսնային տոմարով 1260 թ. (Մ.թ. 1844թ.) Ֆաթհալի-Շահ Ղաջարի որդի, թագավորի պաշտոնակատար Աբաս-Միրզայի թագաժառանգ Բահման-Միրզան Մուհամմադ Ալի Իբն Մուհամմադ Շահի Քավրիզիին հանձնարարեց ընդօրինակել «Ձադոլմա՛ադ» ազնվատառ գիրքը: Քանի որ հրաշալի «Ձադոլմա՛ադ» գիրքը առավելապես անհրաժեշտ էր օրհնյալ ուսմագանի գիշերները և վաղ առտոյան, իսկ գործերի շատացման հետևանքով տեսողությունը թուլացել էր, ուստի ընթերցանության դյուրացման համար նորին Գերագանցությունն ընտրեց ջալի գիրք: Պալատի ծառան հրամանին համապատասխան, այն Աստծո հաջողությամբ ավարտի հասցրեց երկու տարվա մեջ, որի ընթացքում ամեն օր վայելելով նորին Գերագանցության անսահման շնորհներն ու արժանավայել բարեհաճությունը: Ծառայության մատուցման ավարտին և գրքի ընդօրինակումն իրականացնելուց հետո, որպես պարգև նրան շնորհվեց հինգ հարյուր աշրաֆի թուման՝ տասնութ նոխոզ (հավանաբար՝ կարատ) քաշով և կրկին նրան հանձնարարեցին այլ գործ, որպեսզի շարունակի ծառայությունը և ազոթի պետության հարատևման համար³:

ՌԱԻՍԱ ԱՄԻՐԲԵԿՅԱՆ

ՂԱԶԱՐԱԿԱՆ ԳՐՔԱՍԵՐ ԲԱՀՄԱՆ ՄԻՐԶԱՆ Ե ՆՐԱ «ՁԱԴ-ՈՒԼ ՄԻ՛ ԱԴ» ԱՂՈԹԱԳԻՐՔԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՈՒՄ

Բանալի բառեր՝ Ղաջարի դինաստիա, Մուհամմադ Բակիր, Քավրիզ, Մուհամմադ Ալի Մուհամմադ Շահի Քաբրիզի, Աբբաս Միրզա, Շուշի, Ֆաթհ Ալի Շահ-Ղաջար:

Մատենադարանի թանգարանային համալիրի ցուցադրություններից մեկը արաբատառ ձեռագրերի դահլիճն է, որի զարդերից է նրբաճաշակ մի ձեռագիր՝ իսլամական աղոթքների «Ձադ-ուլ Մի՛ադ» վերնագրով ժողովածուն (XIX դարի կեսեր): Այն ընդօրինակվել է Քավրիզում գեղագիր Մուհամմադ Ալի Իբն Մուհամմադ Շահի Քաբրիզի ձեռքով: Աղոթագիրքն ունի վերնագիր, պատվիրատուի և կատարողի անունները, ընդօրինակման վայրն ու ժամանակը: Նրան հատուկ է գեղարվեստական բարձր մակարդակ: Հնարավոր է նկատել նաև գրքի տեղաշարժման բավականին ճշգրիտ հետագիծը:

20, 30, 50 и 100 туманов. Туман, томан, золотая монета Персии, равная 10 кранам, с 1932—10 риалам. Туманы чеканились с 1789-90 гг. До 1879 г. содержали 3,22 г золота 900-й пробы, затем 2,59 г чистого золота. С начала 20 в. туманы исчезли из обращения и ныне служат предметом торговли на рынках Ирана.

³ Ձեռագրի հիշատակարանները ընթերցել և թարգմանել է Մատենադարանի ավագ գիտաշխատող Քրիստինե Կոստիկյանը:

Գրչի հանգամանակի հիշատակարանի շնորհիվ հնարավորություն է ընձեռվում պատմական կարևոր տվյալներ ստանալ «առաջին ձեռքից»: Իրա մանրամասն ուսումնասիրությունը պատմաբաններին հնարավորություն կտա վերականգնել Պարսկաստանի Ղաջարական տիրապետության շրջանի որոշ դրվագներ, որոնք կամբողջացնեն արդեն հայտնի մշակութատնտեսական պատկերը:

Աղոթագրքում հիմնականում կրկնվում է պարսկական դասական ձեռագրի նմուշներին բնորոշ ոճն ու ձևը: Հիմնականում, նորարարությունները վերաբերում են գրի տեսակի ընտրությանը, ճակատագարդերի և գլխազարդերի ձևավորման նոր մանրամասներին, ինչպես նաև, պատվիրատուի ցանկությամբ և ժամանակին համահունչ մի շարք նոր տեխնիկական նյութերի օգտագործմանը:

Առաջին անգամ ձեռագիրը ներկայացվել է 1970-ականներին, Մոսկվայի Արևելքի ժողովուրդների թանգարանի կազմակերպած Իրանի արվեստին նվիրված համամիութենական գիտաժողովում տողերիս հեղինակի զեկուցումով: Հետագայում ևս, Ղաջարական արվեստին վերաբերող զանազան հոդվածներում և ելույթներում, բազմիցս անդրադարձել ենք Բահման Միրզայի աղոթագրքի գեղարվեստական ձևավորմանն առնչվող հարցերին: «Զադ-ուլ Մի'ադ»-ը պատշաճ ձևով ներկայացված է նաև մեր՝ 2012 թ. Ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով լույս տեսած «Արևելքի գեղագրությունն ու մանրանկարը: Մատենադարանի հավաքածու» վերնագրով ալբոմ-մենագրությունում:

Բահման Միրզա Ղաջարը սերում էր թյուրքական Ղաջար ցեղից: Նա Իրանի թագաժառանգ՝ իշխան Աբբաս Միրզա Ղաջարի և Ղաջար-Դավալու ազնվական տոհմի իշխանուհի Ասիյա-խանումի որդին էր: Աղբյուրների վկայությամբ՝ Բահման Միրզան Ղաջար իշխաններից ամենակրթվածն էր: Գրական գործունեության հետ համատեղ, նա զբաղվել է նաև բարեգործությամբ, հովանավորելով արվեստներ: Ժամանակակիցները հիանում էին իշխանի հարուստ գրադարանով, որտեղ հարյուրավոր գրքեր կային: Բահման Միրզայի անձնական հատկությունները, ծանոթությունը համաշխարհային գրականությանը, զուգակցված ժամանակի լավագույն գիտնականներից նրա ստացած ավանդական կրթության հետ, կերտեցին այդ յուրահատուկ անձնավորությանը, որը նշանակալի հետք թողեց Պարսկաստանի պատմության մեջ:

«Զադ-ուլ Մի'ադ»-ի ձեռագրի պատկանելությունը Բահման Միրզային և նրա բարձր գեղարվեստական բնութագիրը այն դասում է Մատենադարանի արաբատառ հավաքածուի հազվագյուտ նմուշների շարքին:

RAISA AMIRBEKYAN

**THE QAJAR BIBLIOPHILE BAHMAN-MIRZA AND HIS PRAYER
BOOK "ZAD-UL MI'AD" (MATENADARAN COLLECTION)**

Keywords: Bahman Mirza, Zadul-Mi'ad, Qajar dynasty, Muhammad Bakir, Tabriz, Muhammad 'Ali ibn Muhammad Shafi Tabrizi, Abbas Mirza, Shushi, Tabriz, Fatah 'Ali Shah Qajar.

One of the permanent exhibitions at the Matenadaran museum complex, the hall of Arabic-Script manuscripts, houses a treasure: an exquisite mid-19th century manuscript entitled *Zad-ul Mi'ad*. It is a well-known Islamic collection of prayers by Muhammad Bakir, copied in Tabriz by calligrapher Muhammad 'Ali ibn Muhammad Shafi Tabrizi. The manuscript contains references to the place and time of its copying, the names of the commissioner and the scribe. It is also possible to trace, quite clearly, how the book has been carried from place to place. The manuscript is of great artistic value.

Thanks to the scribe's detailed colophon, it is possible to obtain first-hand important historical data. Its in-depth study will allow historians to clarify some cultural and economic details complementing the already well-known picture of Persia during the Qajar period.

The manuscript as a whole repeats the traditional style and format of Persian manuscripts of the classical period. The selection of handwriting style, the design of frontispieces and *unvans* are innovative. The use of new technical materials, in accordance with the time period and the preferences of the commissioner, is evident as well.

The manuscript was presented for the first time in the 1970s in the author's report on the Qajar manuscripts of Matenadaran at a conference dedicated to Iranian art, organized by the Museum of Oriental Art in Moscow. The author has analysed the artistic design of the Bahman-Mirza prayer book in other articles and presentations related to the history of the Qajar art. *Zad-ul Mi'ad* is also presented in detail in the author's album-monograph *The Calligraphy and the Miniature of the East. The Matenadaran Collection*, published in 2012, in Russian and French.

Bahman-Mirza Qajar was a descendant of the Turkic race of the Qajars. He was the son of Prince 'Abbas-Mirza Qajar (heir to the Iranian throne) and Princess Asia-khanum of the noble Qajar-Davalu family.

Sources attest to the fact that Bahman-Mirza was known among his contemporaries as the most educated of the Qajar princes. He combined his literary activity with extensive charitable work, earning the title of a patron of the arts. His contemporaries admired his rich library, which contained hundreds of books. Prince Bahman-Mirza's personal qualities, his knowledge of world literature, combined with the traditional education obtained from the best scholars of his time, have shaped this unique person who has left a significant mark on the history of Persia.

The artistic value of *Zad-ul Mi'ad* and the fact that it belonged to Bahman-Mirza make it a rare example of Matenadaran's Arabic-Script collection.

ԹԱԳՈՒՀԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԹՄԲՈՒԿՆԵՐԻ ՔԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐԳԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ և ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ*

Քանալի բառեր՝ թմբուկ, քանդակային հարդարանք, Երկնային Երուսաղեմ, Երկնային պատարագ, որմնակամարաշար, քշոց, առաքյալներ, առասպելական էակներ, պատվիրատու:

Արևելաքրիստոնեական արվեստում առանձնակի տեղ են զբաղեցնում Անդրկովկասյան ու հատկապես հայկական ճարտարապետական հուշարձանները, որոնց հատուկ են մի շարք ինքնատիպ և ճանաչելի գծեր, նաև հարուստ արտաքին հարդարանք¹: Ինքնատիպ դրսևորումներից է եկեղեցու հորինվածքում ճարտարապետորեն արտահայտված և գերակշռող դիրք գրավող թմբուկն իր հարդարանքով, որով աչքի են ընկնում հայկական եկեղեցիները վաղ միջնադարից մինչև ուշ շրջան:

Քրիստոնեական ճարտարապետության պատմության մեջ նշանակալից փուլ է հանդիսանում կենտրոնագմբեթ եկեղեցիների հաստատումը ու վերջիններիս խորհրդաբանության ձևավորումը, որտեղ որպես կառուցվածքային կարևորագույն տարր հանդես է գալիս աղոթասրահը գմբեթին կապող հատվածը՝ թմբուկը:

Կենտրոնագմբեթ եկեղեցիների կառուցումն արևելաքրիստոնեական երկրներում մեծ թափ է ստանում VI դարում, իսկ Հայաստանում առավելապես VII դարի ընթացքում: Հենց այս շրջանում է, որ հայկական ճարտարապետությունը աչքի է ընկնում կենտրոնագմբեթ եկեղեցիների պատկառելի քանակով² և հորինվածքային տարատեսակ լուծումներով, ինչին մեծապես նպաստում են

* Սույն թեմայով զեկույցը ներկայացվել է Մատենադարանի Երիտասարդական 3-րդ գիտաժողովին, 2017 թ. նոյեմբերի 28-30-ին:

¹ **Ա. Լ. Якобсон**, “Взаимоотношения раннесредневековой архитектуры Армении и Византии”, *ИРЗ*, к. 4, 1973, էջ 36; **А. Ю. Казарян**, “Архитектура Армении IV-VI веков и особенности раннехристианской традиции в соседних странах”, *Византийский временник*, т. 60 (85), 2001, с. 155.

² **Վ. Հարությունյան**, *Հայկական ճարտարապետության պատմություն*, Երևան, 1992, էջ 75, **А. Ю. Казарян**, “Античное наследие в армянской архитектуре конца X- начала XI века”, *К проблеме «Ренессансов» в средневековой культуре, Архитектура: сборник научных трудов*, вып. 6, Минск, 2012, с. 21-26.

նաև շինարվեստի տեղական ավանդույթները³: VI դ. բյուզանդական մայրաքաղաքային եկեղեցիներին հատուկ են ցածր գմբեթները, որոնք գրեթե արտահայտված չեն կառույցի հորինվածքում: Բացի այդ, բյուզանդացի վարպետները, շարունակելով հռոմեական ավանդույթները, լայնորեն կիրառում են աղյուսը⁴, որը չի ենթարկվում գեղարվեստական մշակման և խիստ սահմանափակում է արտաքին հարդարման հնարավորությունները: Այլ է հարավկովկասյան տարածաշրջանի և Հայաստանի, ինչպես նաև նրան հարող Կապադովկիայի որոշ հատվածների դեպքում, որտեղ առկա էին քարի մշակման գեղարվեստական ավանդույթները և կիրառվում էր «միդիս»՝ եռաշերտ շարվածքը⁵, ինչը լայն հնարավորություններ էր ընձեռում եկեղեցական կառույցի արտաքին հարդարման համար: Պակաս կարևոր չէին եկեղեցու կոնստրուկտիվ խնդիրները: Հայաստանում և նրան հարող արևելյան շրջաններում եկեղեցու կառուցվածքում կարևոր դերը պատկանում էր տրոմպային անցումներին⁶, որի դեպքում, հատկապես եթե գմբեթը լայն թռիչք ուներ, կիրառվում էին 2 կամ 3 շարք տրոմպներ⁷ և ձևավորվում էր բարձր թմբուկ⁸: Այս երկու կարևոր հանգամանքները՝ շարվածքում քարի, իսկ կոնստրուկցիայում տրոմպի կիրառումը, նպաստավոր պայման են դառնում հայկական կենտրոնագմբեթ եկեղեցիների հորինվածքում թմբուկի ձևավորման և շեշտադրման համար:

Այդուհանդերձ, միջնադարյան մարդու համար առաջնային նշանակություն ունեին եկեղեցական կառույցի աստվածաբանական ընկալումները: Համաձայն եկեղեցական հայրերի մեկնությունների (Եվսեբիոս Կեսարացի (263-

³ Փ. Тер-Мартиросов, Л. Микаелян, «Древние корни строительной техники «мидис»», *ԼՀԳ*, 2009, №2, էջ 143-144; А. Ю. Казарян, «Архитектура Армении IV-VI веков ...», с. 149, 150; А. Л. Якобсон, «Взаимоотношения раннесредневековой ...», с. 37.

⁴ А. Л. Якобсон, «Взаимоотношения раннесредневековой ...», с. 37; *Всеобщая история архитектуры* (под редакцией Ю. С. Ярлова, Н. Н. Воронина и др.), т. 3, Ленинград-Москва, 1966, с. 26.

⁵ Վ. Հարությունյան, *Հայկական ճարտարապետության...*, էջ 104-105, А. Ю. Казарян, «Архитектура Армении IV-VI веков ...», с. 149-150, 155; Օн же, «Архитектура Византии», *Православная энциклопедия*, т. 8, Москва, 2004, с. 253-303.

⁶ Վերջին տարիների ուսումնասիրության համաձայն, հայկական եկեղեցիների գմբեթատակ անցման համար ի սկզբանե կիրառվել է տրոմպ-առագաստային համակցված համակարգը (տե՛ս, А. Ю. Казарян, «Тромпово-парусный подкупольный переход. Происхождение и эволюция в системе купольных глав», *Архитектурное наследство*, вып. 57, Москва, 2012, с. 10):

⁷ Վ. Հարությունյան, *Հայկական ճարտարապետության...*, էջ 107, А. Ю. Казарян, «Тромпово-парусный ...», с. 15:

⁸ Ա. Ղազարյանը նշում է, որ հավանաբար Կովկասում և ողջ Քրիստոնյա Արևելքում առաջինը հայ վարպետներն են գմբեթատակ ֆռակուսուց դասական անցումային համակարգի և լուսավոր թմբուկի կիրառողները եղել (տե՛ս А. Ю. Казарян, «Тромпово-парусный ...», с. 13):

340), եվագր Աքուլաստիկոս (շուրջ 531/535-594), Մաքսիմոս Խոստովանող (582-662), պատրիարք Գերմանոս (640-ական թթ.- 733)) տաճարը Տիեզերքի կերպարն է (սրբապատկերն է) երկրի վրա⁹ և Աստծո խորհրդավոր ներկայության վայրը: Համաձայն քրիստոնեական պատկերացումների՝ եկեղեցին բաղկացած է երեք խորհրդանշական մասերից՝ արտահայտված հորիզոնական՝ 1. նախամուտք/ նարտեքս – 2. աղոթասրահ/նաոս – 3. խորան/բեմ, ինչպես նաև ուղղահայաց՝ 1. աղոթասրահ – 2. կամարներ – 3. թմբուկ և գմբեթ ուղղություններով: Այս երեք հատվածները համապատասխանաբար խորհրդանշում են 1. Էրկիրը կամ հինկտակարանային աշխարհը, 2. Էրկիրը կամ նորկտակարանային տեսանելի աշխարհը, 3. Էրկնից Էրկիրը (Գ Թագ. Ը 27) կամ Աստծո գահը, որը, համաձայն Եվսեբիոսի, «երկնակամարից ավելի վեր է գտնվում»¹⁰: Այս երրորդ, ամենաարբազան հատվածը և՛ երկնային թագավորությունն է, և՛ երկնային Երուսաղեմը, և՛ Փրկչի Երկրորդ գալստյան վայրը: Հենց այս պատկերացումներով էլ պայմանավորված էր միջնադարում եկեղեցու թմբուկի, ինչպես և, մյուս հատվածների հարդարման համակարգը (եկեղեցու ներսից՝ որմնանկար կամ խճանկար¹¹, իսկ դրսից՝ քանդակային հարդարանք¹²):

Հաշվի առնելով վերջին տարիների ուսումնասիրությունները, կարելի է փաստել, որ թմբուկի գեղարվեստական հարդարման վաղագույն օրինակն ունենք էջմիածնի Մայր տաճարում: Համաձայն նորագույն տվյալների՝ Մայր տաճարի թմբուկի կառուցումը և հարդարումը իրականացվել է Կոմիտաս կաթողիկոսի պատվերով, մոտավորապես VII դարի 20-ական թվականներին, և այդ աշխատանքներն ընդգրկում են մինչև սլաքաձև որմնակամարների հատվածը¹³: Մայր տաճարի թմբուկի 12 նիստերի անկյունային հատվածներում առկա են օրդերային կիսասյուներ, իսկ նրանց միջև ընկած հատվածում մեղալիոնների մեջ, ներկայացված են առաքյալների դիմապատկերները: Ինչպես

Գ. Կ. ⁹ **Вагнер**, “Византийский храм как образ мира”, *Византийский временник*, т. 47, 1986, с. 173, 176, 179.

¹⁰ **Եվսեբիոս Չեսարացի**, *Պատմություն եկեղեցուց, թարգմ. ի ձեռն Հ. Աբրահամ Վ. Ճարեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1877, էջ 743, Գ. Կ. Вагнер*, “Византийский храм ...”, с. 173; **А. Ю. Казарян**, “Тромпово-парусный ...”, с. 8; **А. Л. Якобсон**, *Закономерности в развитии средневековой архитектуры IX-XV вв.*, Ленинград, 1987, с. 17.

¹¹ **В. Н. Лазарев**, “Система живописной декорации византийского храма IX-X веков”, *Византийская живопись, Сборник статей*, Москва, 1971, с. 98-99; **И. Алфеев**, “Система живописной декорации византийского храма. Основные иконографические типы”, *Храм и икона*, т. 2, эл. адрес: <http://pravoslavie.by/pagebook/sistema-zhivopisnoj-dekoracii-vizantijskogo-hrama-osnovnye-ikonograficheskie-tipy> (17.02. 2018)

¹² **А. Ю. Казарян**, *Кафедральный собор Сурб Эчмиадзин и восточнохристианское зодчество IV-VII вв.*, Москва, 2007, с. 103; **Л. А. Дурново**, *Очерки изобразительного искусства средневековой Армении*, Москва, 1979, с. 42, 52.

¹³ **А. Ю. Казарян**, *Кафедральный собор...*, с. 110.

և ընդունված է միջնադարյան պատկերագրության մեջ, առաքյալները լուսապատկերով են, բռնել են գիրք կամ գալարակ, իսկ առանձին դեպքերում իրենց անձը խորհրդանշող առարկաներ, օրինակ՝ Պետրոսը՝ բանալի, իսկ Անդրեասը՝ խաչ¹⁴:

Թմբուկի նիստերին առաքյալների պատկերների ընգրկումը լիովին համապատասխանում է քրիստոնեական խորհրդանշական և պատկերագրական կանոնին և իմաստային առումով կապվում է Երկնային պատարագի և Փրկչի երկրորդ գալստյան խորհրդանշական պատկերացումների հետ: Աներկբա է, որ քրիստոնեական պատարագի անմիջական մասնակիցներն ու կատարողները, ինչպես նաև Աստծո խոսքի տարածողները հենց առաքյալներն են: Պատահական չէ, որ հունարեն ΛΕΙΤΟΥΡΓΙΑ (լիտուրգիա) բառը նշանակում է «ծառայություն»¹⁵: Հատկանշական է, որ բազիլիկ եկեղեցիների խորանում ավանդաբար պատկերվող Քրիստոսի և առաքյալների պատկերները (մասնավորապես Համբարձման տեսարանում) կենտրոնագմբեթ եկեղեցիների պարագայում տեղափոխվում են վերին տարածք՝ բաշխվելով գմբեթի (Քրիստոս ու հրեշտակներ) և Թմբուկի (Աստվածամայր, առաքյալներ ու մարգարեներ) միջև¹⁶:

Եկեղեցու արտաքին հարդարանքում առաքյալների պատկերման վաղագույն օրինակ կարելի է տեսնել 400-ականներով թվագրվող բյուզանդական փղոսկրե սալիկի վրա՝ Մյունխենի Թանգարանից¹⁷: Այստեղ ներկայացված է Քրիստոսի Հարություն տեսարանը, որտեղ փոքր եկեղեցական կառույցի՝ տվյալ դեպքում Սբ. Գերեզմանի Թմբուկին առաքյալների պատկերներն են՝ առնված մեդալիոնների մեջ ճիշտ այնպես, ինչպես էջմիածնի Թմբուկի նիստերին: Այս վաղբյուզանդական օրինակը լավագույնս հաստատում է, որ վաղքրիստոնեական շրջանում արդեն ձևավորվել էր առաքյալների պատկերագրական կանոնը, ինչպես նաև հաստատվել էր նրանց տեղը պատկերների հիերարխիկ համակարգում: Քանի որ նույն սկզբունքը կիրառվել է որմնանկարների կամ խճանկարների դեպքում, ապա զուգահեռներ տանելիս կարելի է ասել, որ քանդակի դեպքում առաքյալների պատկերները Թմբուկի ներքին տարածքից «դուրս են բերվել» էքստերիեր¹⁸:

Էջմիածնի Թմբուկի հարդարման համակարգը ներշնչման աղբյուր է հանդիսացել այլ հուշարձանների համար: Նույն VII դ. 70-ական թվականներին է կառուցվել Սիսավանի Սբ. Գրիգոր եկեղեցին, որի նիստավոր Թմբուկը հար-

¹⁴ Նույն տեղում, էջ 78-79, 90.

¹⁵ «Պատարագ», Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 847-848:

¹⁶ В. Н. Лазарев, “Система живописной декорации...”, с. 98.

¹⁷ А. Grabar, *L'âge d'or de Justinien. De la mort de Théodose à l'Islam*, Paris, 1966, fig. 332 (p. 287), p. 282.

¹⁸ А. Ю. Казарян, *Кафедральный собор...*, с. 94.

դարված է խուլ կամարաշարերով, իսկ թմբուկը պսակող քիվին՝ ուղղված աշխարհի շորս կողմերը, մինչև գոտկատեղը ներկայացված են շորս ավետարանիչները¹⁹՝ անուշների համապատասխան մակագրություններով²⁰: Ըստ այդմ, արևմտյան կողմում պատկերված է Մարկոսը, հյուսիսային կողմում՝ Հովհաննեսը, արևելյան կողմում՝ Դուկասը, հարավային կողմում՝ Մատթեոսը²¹: Նշենք նաև, որ Միսավանի քանդակներում ավետարանիչների դիմապատկերներն օժտված են անհատական գծերով՝ ինչպես էջմիածնի թմբուկին, բացի այդ, նրանք ներկայացված են յուրահատուկ պատկերազրական տարբերակով՝ լուսապսակից²² բացի ունեն կուլակ²³, որը բացառիկ երևույթ է և հաստատում է կապը վաղբրիտոնեական նախատիպերի հետ:



Նկ. 1

էջմիածնի Մայր տաճարի թմբուկը, 620-ական թթ. (ըստ Ա. Ղազարյանի)

¹⁹ Л. А. Дурново, *Очерки изобразительного искусства...*, с. 53.

²⁰ Ս. Մնացականյան, «Միսավանի պատկերաֆանդակները և տաճարի կառուցման ժամանակը», *ՀՍՄԻ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների*, 1961, №10, էջ 65, А. Ю. Казарян, «Сисаван (Сисиан), церковь Сурб Григор (Св. Григория) Сюни-ванка, 70-е гг. VII в.», *Церковная архитектура стран Закавказья VII века. Формирование и развитие традиции*, т. 3, Москва, 2012, с. 128-129:

²¹ Ս. Մնացականյան, «Միսավանի տաճարը», *ՊԲՀ*, 1965, № 4, էջ 228:

²² А. Ю. Казарян, «Сисаван (Сисиан), церковь Сурб Григор ...», с. 129.

²³ Առաֆյաներին կուլակով ներկայացնելու վաղբրիտոնեական պատկերազրական ավանդույթի արձագանքները հայտնի են վաղագույն ձեռագրերից մեկում՝ Մլխե բագունու ավետարանում (տե՛ս, З. Акоюн, «Художественные и иконографические истоки миниатюр Евангелия царицы Млке (862г.)», *Лазаревские чтения. Искусство Византии, Древней Руси, Западной Европы, 4 (XXXV), Материалы научной конференции 2011*, Москва, 2012, с. 25-26):

Էջմիածնի Մայր տաճարի թմբուկի ավելի լիարժեք վերարտադրությունն է հանդիսանում ուշմիջնադարյան մեկ այլ եկեղեցի՝ Դարաշամբի (Մաղարդավանքի) Սբ. Ստեփանոսը (XVII դ., Արտազ գավառ, այսօր՝ Իրան)։ Հիմք ընդունելով Էջմիածնի թմբուկի հարդարանքը, Սբ. Ստեփանոսում այդ համակարգը համալրվում է մի շարք այլ պատկերներով, որոնք խորհրդանշական առումով լրացնում և բազմապատկում են Մայր տաճարի նախնական մտահղացումը։ Թմբուկի 16 նիստերը եզրագծող գալարահյուս սյուներն ավարտվում են երկգլխանի վիշապ-խոյակներով և պսակվում հյուսածո սլաքաձև կամարաշարերով։ Կամարների ներսի առանցքային հատվածներում, քառանկյուն շրջանակների մեջ, ներկայացված են 12 առաքյալների՝ մինչև գոտկատեղը հասնող դիմաքանդակները, իսկ մյուս 4 նիստերին՝ գահին նստած Հիսուս Գրիստոսի (արևմուտք), Աստվածամոր (հյուսիս), Հովհաննես Մկրտչի (արևելք) և Գրիգոր Լուսավորչի (հարավ) պատկերները։ Կամարների անտրվուտերում քանդակված են վեցաթև սերովբեները, հարդարանքում տեղ ունեն նաև շորս ավետարանիչների խորհրդանիշները՝ արծիվը, առյուծը, ցուլը և մարդը²⁴։ Որպես հավելյալ տարրեր, թմբուկի յուրաքանչյուր նիստին առկա են խաչքարեր, վարդյակներ, ինչպես նաև թռչնաքանդակներ։ Խաչքարեր են կանգնեցված նաև գմբեթը պսակող հովհարաձև վեղարի սրածայր վերջավորությունների վրա, իսկ ջրհորդանները ներկայացված են կենդանիների գլուխների տեսքով²⁵։ Այստեղ առաքյալների, նրանց ուղեկցող սերովբեների, ինչպես նաև ավետարանիչների խորհրդանիշներից բացի Գրիստոսի, Աստվածամոր, Հովհաննես Մկրտչի և Գրիգոր Լուսավորչի պատկերների համատեղումը ավելի ամբողջական և շեշտադրված է դարձնում երկնային պատարագի գաղափարը²⁶։

Բազրատունիների դարաշրջանում թմբուկների հարդարումն ավելի սիմվոլիկ, վերացական բնույթ է կրում, քանզի որպես հարդարման հիմնական տարր հանդես է գալիս որմնակամարաշարը, իսկ պատկերաքանդակները դառնում են սահմանափակ։ Խուլ կամարաշարը, որ լայն կիրառում է ունեցել դեռ անտիկ շրջանում, դառնում է վաղքրիստոնեական ճարտարապետության սիրված դեկորատիվ տարրերից մեկը, որը մեծապես պայմանավորված էր վերջինիս հետ առնչվող խորհրդաբանություններով։ Հայտնի է, որ որպես ուշ անտիկ ավանդույթի շարունակություն, որմնակամարաշարը կիրառվել է Երուսաղեմի Հարություն տաճարի հարդարանքում և դրանով հանդերձ օժտվել

²⁴ Ա. Հախնազարյան, Արտագի երեք վանքերը (RAA գիտական ուսումնասիրություններ), գիրք ժե, Երևան, 2012, էջ 268:

²⁵ Նույն տեղում:

²⁶ А. Ю. Казарян, Кафедральный собор..., с. 103; В. Н. Лазарев, “Система живописной декорации...”, с. 97.

խորհրդանշական իմաստով կապվել երկնային երուսաղեմի²⁷ (երկնային Արքայություն) գաղափարի հետ: Հարդարման այս տարրը մուտք է գործում հայ արվեստ Զվարթնոց տաճարի կառուցման հետ և հետագայում լայն տարածում գտնում հատկապես Բագրատունիների ու Զաքարյանների շրջանի ճարտարապետական հարդարանքում²⁸: Խուլ կամարաշարերով են հարդարված օրինակ, Անիի Աբուղամրենց (Սբ. Գրիգոր) և Տալքի Օշքվանքի եկեղեցիները: Անիի Աբուղամրենց եկեղեցու (X դ.) թմբուկը գլանաձև է²⁹, որը նորություն էր հայկական ճարտարապետության մեջ և բնորոշ է դառնում Բագրատունիների կառուցած եկեղեցիներին:

Աբուղամրենցի թմբուկը հարդարված է կամարաշարով և վերջինիս ուրվագիծը կրկնող պատուհանների շրջակալներով: Թմբուկի կամարաշարում բացակայում են խոյակները՝ հորինվածքին հաղորդելով ավելի սահուն, դեկորատիվ բնույթ³⁰: Օշքվանքում (963-973 թթ.), որպես հիմնական տարր, կրկին խուլ կամարաշարն է և տարբերությունը միայն կիսասյուների ձևի, բուսականացված հավելյալ տարրերի մեջ է: Օշքվանքի թմբուկին կարելի է նաև տեսնել սահմանափակ քանակով նապաստակներ, առյուծներ ու գրիֆոն³¹:

Թմբուկի հարդարման հետաքրքիր ու ավելի բարդ հորինվածքներ են ի հայտ գալիս Զաքարյանների դարաշրջանում: Այդպիսին են, օրինակ, Հառիճավանքի և Գանձասարի եկեղեցիների (XIII դ. առաջին կես) թմբուկները: Ի տարբերություն Գանձասարի, Հառիճի եկեղեցում հարդարանքը կարծես իր արտահայտչամիջոցներով դեռ ավելի զուսպ է և լակոնիկ: Այստեղ թմբուկն

²⁷ А. Ю. Казарян, “Ротонда Воскресения и иконография раннесредневековых храмов Армении”, *Востоchnoхристианский храм. Литургия и искусство*, Санкт-Петербург, 1994, с. 109, 111.

²⁸ Հայկական միջնադարյան հարաբերակցության մեջ խուլ կամարաշարերի կիրառման ավանդույթի մասին տե՛ս, Ս. Մնացականյան, *Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները*, Երևան, 1971, էջ 127, Ս. Мнацаканян, *Звартноц. Памятник армянского зодчества VI-VII веков*, Москва, 1971, с. 45; Л. А. Дурново, “Стенная живопись в Аруче”, *Известия АН Арм. ССР. Общественные науки*, 1952, №1, с. 53-54; Она же, *Очерки изобразительного искусства ...*, с. 42, 52; А. Ю. Казарян, “Фасадная аркатура армянских и грузинских церквей VII-XI вв.. Структурные отличия и взаимосвязь традиций”, *Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները*, Երևան, 2004, էջ 455; Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, հտ. 2, Երևան, 1944, էջ 290:

²⁹ Անի-ՌԾ Պատկերազարդ գիրք-ալբոմ, կազմեց՝ Ս. Կարապետյանը, Երևան, 2011, էջ 77:

³⁰ Լ. Դուռնովն նշում է, որ X դարի վերջին Անիի Աբուղամրենց եկեղեցու թմբուկի վրա առաջին անգամ առանց խոյակների և խառիսիների կամարաշար է կիրառվում (տե՛ս, Л. А. Дурново, *Очерки изобразительного искусства...*, с. 94): Սակայն հուշարձանի ավելի մանրամասն զննումը ցույց տվեց, որ խառիսիներ այնուամենայնիվ կան: Հմմ., Անի-ՌԾ. Պատկերազարդ գիրք-ալբոմ..., էջ 76:

³¹ М. Bogish, “Textile Designs as Models for the Architectural Sculpture of Tao-Klarjeti (10th c.)”, *Tao-Klarjeti International Conference (Materials)*, Tbilisi, 2018, p. 44.

ավելի է տրոհված, այն բաժանված է 20 նիստերի, որոնց հարդարող կիսասյուները պսակվում են հովհարածե վերջավորությամբ: Չեզոքության այս սկզբունքը նույնպես պատահական բնույթ չի կրում, այն պատկերագրորեն նորից կապվում է Սբ. Գերեզմանի հետ³², որով էլ ավելի է ընդգծվում իմաստաբանական և խորհրդաբանական այն կապը, որ կա թմբուկի և Երկնային աշխարհի միջև: Բացի այդ, այստեղ հայտնվել է խորհրդանշական մի նոր տարր՝ քշոցը³³:

Քշոցն օժտված է կարևոր խորհրդանշական իմաստով, որի հիման վրա էլ լայն կիրառում է ստացել եկեղեցական արարողակարգում: Համաձայն քրիստոնեական, այդ թվում Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգի՝ քշոցն ուղղակիորեն կապվում է Երկնային պատարագի հետ³⁴ հանդիսանալով նրա տեսանելի խորհրդանշաններից մեկը³⁵: Այս իմաստով կարելի է ասել, որ քշոցը հավասարազոր է դառնում և գալիս է լրացնելու առաքյալների³⁶, հրեշտակների³⁷ (վերջիններիս հետ են նույնացվում նաև սարկավագները³⁸) շարքը, մանավանդ, որ հրեշտակապետերը գրեթե միշտ պատկերվում են քշոցներով: Կարևոր ենք համարում նշել, որ եկեղեցում պատարագի ժամանակ օգտագործվող քշոցների վրա պատկերվում են սերովբեներ, որպես հրեշտակներ՝ երկնային ուժերի ներկայության խորհրդանշաններ³⁹, իսկ ահա դրանցից կախված զանգակները,

³² Հովհարածե վեղար հանդիպում է միայն հայկական միջնադարյան հուշարձաններում, որի ամենահին պահպանված օրինակը համարվում է Ջարնջայի եկեղեցին (VI դ. վերջ և VII դ. առաջին կես): Եկեղեցու կառուցումը ենթադրաբար կապվում է Հերակլ կայսրի կողմից պարսկական գերությունից Ս. Խաչը Երուսաղեմ վերադարձնելու իրադարձության հետ, ինչի կապակցությամբ էլ այն հիմնադրվել է (տե՛ս, Ա. Ղազարյան, «Ջարնջայի եկեղեցին և հովհարածե վեղարները», *Անի*, 1992, №3-4, էջ 46, 90, Ա. Казарян, “Ротонда Воскресения...”, с. 112-115):

³³ Л. А. Дурново, *Очерки изобразительного искусства...*, с. 94.

³⁴ Պատարագամատուց ըստ արարողութեան Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցուց, էջմիածին, 2006, էջ 86:

³⁵ А. Ю. Казарян, *Кафедральный собор...*, с. 103;

³⁶ Մ. Օրմանյան, *Ծիսական բառարան*, Երևան, 1992, էջ 60:

³⁷ «Սպառ եկեղեցական», *Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան*, Երևան, 2002, էջ 918, И. Драмбян, *Фрески Кобайра*, Ереван, 1979, с. 10; В. Лазарев, “Система живописной декорации...”, с. 97.

³⁸ Св. Герман Константинопольский, *Сказание о Церкви и рассмотрение таинств*, Москва, 1995, с. 16-17.

³⁹ Պատարագամատուց ըստ արարողութեան Հայաստանեայց ... էջ 86, Г. Казарян, *Храм в Гандзасаре. Архитектура и рельефы*, Автореферат канд. диссертации, Москва, 2010, с. 24, Н. Richardson, “Remarks on the Liturgical Fan, Flabellum or Rhipidion, The Age of Migrating Ideas”, *Early Medieval Art in Northern Britain and Ireland. Proceedings of the Second International Conference on Insular Art*, Gloucestershir, 1933, p. 29.

համաձայն Գրիգոր Տաթևացու, արտահայտում են 12 առաքյալների քարոզչության ձայնը⁴⁰: Հառիճի ազդեցությամբ քրոջներով թմբուկի հարդարման այս սկզբունքն ի հայտ է գալիս նաև Հովհաննավանքում (1216-1221 թթ.):



Նկ. 2

Հառիճավանք, Ս. Աստվածածին եկեղեցու թմբուկը,
XIII դ. սկիզբ (ուս.՝ Ջ. Հակոբյանի)

Քրոջներ, ինչպես նաև այլ պատկերներ կան Գանձասարի եկեղեցու (XIII դ. առաջին կես) թմբուկին: Այստեղ թմբուկն, ի տարբերություն Հառիճի, ավելի հագեցած է պատկերաքանդակներով, որտեղ առկա են ինչպես Հին ու Նոր կտակարանային կերպարներ, այնպես էլ կենդանիների ու խորհրդանշական բնույթի պատկերներ: Դրանցից են Խաչելությունը, Օրհնող Քրիստոսը, Ազամի և Եվայի պատկերները, Աստվածամայրը, որ ներկայացված է երկու պատկերազրական տարբերակներով՝ Գթասիրտ և Ողբացող⁴¹: Թվարկված պատկերները իմաստային առումով նույնպես արտահայտում են Երկնային եկեղեցու գաղափարը: Մյուս պատկերներից են 2 արծիվը, 2 հուշկապարիկը, ցուլն ու խոյը⁴²: Շատ հակիրճ անդրադառնալով այս կենդանական պատկերներին՝ նշենք հետևյալը. համաձայն վաղ քրիստոնեական պատկերացումների՝ արծիվը խորհրդանշում է ինչպես համբարձվող Քրիստոսին⁴³, Հովհաննես ավետա-

⁴⁰ Մ. Օրմանյան, Ծիսական բառարան..., էջ 60:

⁴¹ Г. Казарян, Храм в Гандзасаре..., с. 17-22.

⁴² Նույն տեղում, էջ 17-24.

⁴³ Д. Холл, Словарь сюжетов и символов в искусстве, Москва, 1996, с. 406.

րանչին⁴⁴, այնպես էլ հրեշտակներին⁴⁵, և, այս առումով, դրանց պատկերումը երկնային գոտում թմբուկին, լիովին հասկանալի է: Մյուս էակը հուշկապարիկն է, որը խառնածին կենդանի է ու առասպելական այլ էակների նման օժտված է աստվածային շնորհով (չնայած, որ այն ունեցել է նաև բացասական իմաստ), համարվել է միջնորդ երկնային և երկրային աշխարհների միջև⁴⁶, որը հաստատվում է թեկուզ նրանով, որ հուշկապարիկը պատկերվում է Ավետարանների խորաններում, ինչպես նաև եկեղեցիների բեմառաջներին, այսինքն՝ ներկայացվում է կեղեցու սրբազան հատվածում:

Ի նկատի ունենալով առասպելական էակների ներկայությունը քրիստոնեական պատկերաշարում նշենք, որ, օրինակ, էջմիածնի թմբուկի խոյակներից մեկին, առաքյալներին զուգահեռ, պատկերված է մեկ այլ առասպելական էակ, որին ընդունված է անվանել սենմուրվ⁴⁷: Սա հաստատում է այն միտքը, որ այդ էակները, միջնորդ հանդիսանալով երկու աշխարհների միջև, իրենց հաստատուն տեղն են գտնում նաև թմբուկների հարդարանքում: Ավելի անորոշ են մեկնաբանությունները ցլի ու խոյի դեպքում, քանի որ այս առումով միջնադարյան աղբյուրները բավարար տեղեկություն չեն տալիս: Սակայն նորից ելնելով միջնադարյան հուշարձաններում այդ կենդանիների պատկերման հաճախականությունից և հատկապես պատկերման տեղից՝ գալիս ենք այն եզրակացություն, որ թե՛ ցուլը, թե՛ խոյը միջնադարյան պատկերացումներում ունեցել են որոշակի խորհրդանշական իմաստ ու նաև իրենց որոշակի տեղը եկեղեցիների արտաքին հարդարանքում: Դրա համար հիմք են ծառայում հետևյալ պատկերաքանդակները. ցլի գլուխ կա նույն XIII դ. Գեղարդավանքի գլխավոր եկեղեցու թմբուկին, Վրաստանում գտնվող վաղմիջնադարյան բազիլիկներից մեկի՝ Բոլնիսի Սիոնի (478-493) խորանին կից խոյակին, խոյի պատկերներ ունենք նաև երեքույթի բազիլիկի երկու մուտքերի բարավորներին, որպես խաչի ուղեկիցներ:

⁴⁴ К. Муратова, *Средневековый bestiарий*, Москва, 1984, с. 139; Հայկական մանրանկարչություն, առաջաբանը՝ Ռ. Գրամբյանի, տեխստը՝ Լ. Դուռնովոյի, Երևան, 1969, էջ 16:

⁴⁵ Գրիգոր Տաթևացի, Գիրք Քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր, Կոստանդնուպոլիս, 1740, էջ 205-206: Համաձայն Գիոնիսիոս Արեոպագացու՝ Քրիստոսն ու Հովհաննես ավետարանիչը, ֆահանայապետը ևս համեմատելի են հրեշտակի հետ (տե՛ս, Գիոնիսիոս Արեոպագացի, *Աստվածաբանական երկեր. Արեոպագիտիկաներ*, Երևան, 2013, էջ 28, 236, 45):

⁴⁶ Կ. Մաթևոսյանը Գանձասարի եկեղեցու բմբուկին ֆանդակված այս կերպարը դիտում է որպես արծվակերպ հրեշտակի (մարդադեմ) պատկեր, որն իր տեսակով «ճանկող արծվի» պատկերագրության տարբերակ է: Այն խոհրդանշում է փրկագործությունը, ըստ որի արծիվը մարմնավորում է հրեշտակին, իսկ որսը՝ փրկություն ակնկալողին (տե՛ս, Կ. Մաթևոսյան, *Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները*, Երևան, 2017, էջ 80-81):

⁴⁷ А. Ю. Казарян, *Кафедральный собор...*, с. 89.



Նկ. 3

Գանձասար, Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու թմբուկը,
XIII դ. առաջին կես (լուս.՝ Ա. Ղազարյանի)



Նկ. 4

Դարաշամբ (Մաղարդավանք), Ս. Ստեփանոս եկեղեցու թմբուկը, XVII դ.,
Իրանի Իսլամական Հանրապետություն

Եվ վերջապես, Գանձասարի եկեղեցու թմբուկին առկա են 2 տղամարդու և 2 կնոջ ֆիգուրներ, որոնք ավանդաբար դիտարկվում են որպես պատվիրատուներ՝ Հասան-Ջալալյան ընտանիքի անդամներ (ըստ Ա. Յակոբսոնի, Լ. Դուռնովոյի, Շ. Մկրտչյանի, Ստ. Մնացականյանի և այլոց): Ընդունելով այն, որ այս պատկերները աշխարհիկ կերպարներ են, այդ մեկնաբանությունը ճշմարտանման ենք համարում, քանի որ հայկական միջնադարյան արվեստում պատվիրատուին կամ իրական պատմական անձանց Դրախտային գոտում պատկերելու նախադեպեր եղել են: Մենք ի նկատի ունենք առաջին հերթին Զվարթնոցի տաճարի հարդարանքում տեղ գտած ֆիգուրներին՝ «շինարարներին», ինչպես նաև Կարսի, այսպես կոչված, «Առաքելոց» եկեղեցու պատկերաքանդակները, որտեղ, համաձայն նոր մեկնաբանությունների, ամենայն հավանականությամբ ներկայացված են իրական պատմական անձինք՝ հավատի ջատագովներն ու Հայոց եկեղեցու հիմնադիրները⁴⁸, այլ ոչ թե առաքյալներ: Եթե ընդունենք նաև, որ Աղթամարի Դրախտային այգում «Որթագալարի» գոտում, ներկայացված է եկեղեցու պատվիրատուն՝ Գագիկ Արծրունին իր որդիների հետ⁴⁹, ապա զարմանալի չպիտի թվա նաև Գանձասարի թմբուկում պատվիրատուների առկայությունը: Քանի որ, ըստ միջնադարյան պատկերացումների, եկեղեցու կառուցումը աստվածահաճո գործ էր և փաստացի այն նվիրաբերվում էր Աստծուն, ըստ այդմ պատվիրատուները հանդես էին գալիս որպես արդարներ, որոնք նաև ընծայաբերմամբ պետք է արժանանային հավերժական կյանքի՝ Երկնային թագավորության: Այսու օրինաչափ է տեսնել նաև այս կերպարներին եկեղեցու այդ սրբազան գոտում, որովհետև համաձայն եկեղեցական սուրբ հայրերի՝ պատարագը միավորում է երկու՝ Երկնային և Երկրային եկեղեցիները, իսկ պատարագի ժամանակ համատեղվում է անցյալը, ներկան և ապագան:

Սույն հոդվածում մեր նպատակից դուրս է անդրադառնալ բոլոր հայկական քանդակագործ թմբուկներին, սակայն ներկայացված օրինակները վկայում են, որ հայկական միջնադարյան յուրաքանչյուր եկեղեցական կառույց ի հայտ է բերել բազմաբնույթ ու հետաքրքիր գեղարվեստական և պատկերագրական լուծումներ՝ մեկ ընդհանուր գաղափարական և խորհրդանշական առանցքի շուրջ:

⁴⁸ Զ. Հակոբյան, «Զվարթնոցի խորհրդարանական կերպարը (պատկերաբանական մեկնաբանման հարցի շուրջ)», *էջմիածին*, 2006, 2, էջ 84, Գ. Գրիգորյան, «Կարսի Ս. Առաքելոց տաճարի թմբուկի ֆանդակները», *Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հինգերորդ նստաշրջան*, Երևան, 2011, էջ 238:

⁴⁹ Զ. Հակոբյան, «Զվարթնոցի խորհրդարանական կերպարը ...», էջ 85:

TAGUHI AVETISYAN
THE SYMBOLIC AND ICONOGRAPHIC TRADITIONS OF THE
SCULPTURAL DECOR OF THE MEDIEVAL ARMENIAN CHURCH
DRUMS

Keywords: Drum, sculptural decor, Heavenly Jerusalem, Heavenly Liturgy, wall arcades, labarum, Apostles, fabulous creature, donator.

From the early 7th century, crossed-dome churches were very popular in Armenian architecture. This provided wide possibility for their external decor, in particular of the drums. It was stimulated by the “midis” kind of masonry and local traditions of stone cutting, as well as by using pendentives in church construction. The church drum and the dome crowning it are among the sacred parts of the church (equivalent to the apse) and, according to the Church Fathers, symbolize the Heavens. They were related to the ideas of Paradise and the New Jerusalem, which preconditioned the existence of various iconographic and symbolic compositions in the drum decoration. Among these images one can see the Apostles as the participants of the Heavenly Liturgy and propagators of the Christian doctrine (Echmiadzin Cathedral, the 620s, St. Stepanos Church of Darashamb, 17th century), birds and animals as symbols of the Garden of Eden (Oshkvank Church of Tayk, 963-973, St. Katoghike Church of Geghard and St. John the Baptist Church of Gandzasar, both of the 13th century, St. Stepanos Church of Darashamb), and fabulous creatures (*senmurvs*, sirens) as intermediaries between the Celestial and Terrestrial worlds (Echmiadzin Cathedral, St. John the Baptist Church of Gandzasar). One can also see large labarums on the church drums, which are the visible symbols of the Heavenly Liturgy (Harjavank, Hovhannavank, Gandzasar, all from the 13th century), as well as wall arcades. This iconography goes back to the St. Sepulchre in Jerusalem, while its symbolism is related to the Heavenly Jerusalem (Sisavan, 7th century, St. Apostles in Kars, St. Grigor Church of Abughamrents, Oshkvank Church of Tayk, all from the 10th century). Finally, especially characteristic are the portraits of commissioners who, acting as righteous ones and donators, are expecting everlasting life.

ТАГУИ АВETИСЯН
СИМВОЛИЧЕСКИЕ И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ТРАДИЦИИ
СКУЛЬПТУРНОГО УБРАНСТВА БАРАБАНОВ СРЕДНЕВЕКОВЫХ
АРМЯНСКИХ ЦЕРКВЕЙ

Ключевые слова: барабан, скульптурное убранство, Небесный Иерусалим, Небесная литургия, аркатура, лабарум, апостолы, мифическое существо, донатор.

Начиная с VII столетия в армянском средневековом искусстве широкое распространение получают купольные постройки, что создает уникальную возможность для внешней декорации церквей, особенно барабана. Этому во многом способствуют строительная техника “мидис” и локальные традиции обработки камня, а также использование тропов в архитектурной конструкции зданий. Барабан и венчающий его купол являются священной частью церковной постройки (равнозначной пространству алтаря) и согласно учению Отцов Церкви, символизируют Небеса Небес, Рай и Новый Иерусалим. Исходя из этих представлений, барабаны армянских церквей, начиная со времени перестройки Эчмиадзинского кафедрального собора (620-е годы) и до позднего средневековья, являют великое разнообразие внешнего убранства. Среди скульптур, украшающих барабан, можно видеть: изображения апостолов как участников Небесной литургии и распространителей учения Христа (Эчмиадзинский собор, церковь Св. Стефана в Дарашамбе, XVII в.), птиц и зверей, как обитателей Райского сада (Ошкванк в Тайке, 963-973, главная церковь монастыря Гегард и церковь Иоанна Предтечи в Гандзасаре, обе XIII в., церковь Св. Стефана в Дарашамбе) и мифологических существ (сэнмурвы, сирены), как посредников между миром Небесным и Земным (Эчмиадзинский собор, церковь Иоанна Предтечи в Гандзасаре). В убранстве барабанов армянских церквей часто встречается лабарум как символ Небесной литургии (церкви монастырей Арич, Ованаванк, Гандзасар – все XIII в.), а также декоративная аркатура, иконографически восходящая к храму Гроба Господня в Иерусалиме, а в символическом – Небесному Иерусалиму (церкви Сисаван, VII в., Апостолов в Карсе и Аbugамренц (Св. Григория) в Ани, а также Ошкванк в Тайке, все – X в.). И наконец, примечательны изображения самих заказчиков церквей, выступающих в роли праведников и донаторов, которые своим богоугодным поступком уповают на будущую Вечную жизнь (церковь Апостолов в Карсе, X в., церковь Иоанна Предтечи в Гандзасаре).

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԶՈՒԼԻԵՏԱ ԷՅՆԱԹՅԱՆ

ԶԱՏԻԿ ԵՎ ԾՌԱԶԱՏԻԿ (3). ԺԷ. ԴԱՐԻ ՏՈՄԱՐԱԳԵՏ ԱՎԻԿԻ «ՍԱԿՍ ԾՌԱԶԱՏԿԻՆ» ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

(Առաջաբան և բնագիր)

Բանալի բառեր՝ հաշվարկներ, կուտակված սխալներ, լուսին, Զատիկ, օրահավասար, երրորդ 532-ամյա զատկական շրջան, Լիմ անապատ:

Հայ առաքելական եկեղեցին առաջնորդվում է Նիկիայի տիեզերաժողովի սկզբունքով, որտեղ Անդրեաս տոմարագետի ջանքերով որոշվեց եկեղեցական տոների և հատկապես Քրիստոսի կյանքի հետ կապված կարևորագույն օրերի վերջնական, անփոփոխ հաշվարկը:

Անդրեասի հաստատած կանոնները սկզբում ընդունվել են բոլորի կողմից, հետագայում դրանց հավատարիմ է մնացել միայն Հայոց եկեղեցին: Քրիստոսի հիշատակի ամենամեծ տոների՝ Ս. Ծնունդի և Ս. Հարություն (Զատիկ) տոնակատարության օրերի շուրջ եղել են տարածայնություններ:

Մինչև հինգերորդ դարը բոլոր քրիստոնյաները Ս. Ծնունդը նշում էին հունվարի 6-ին, բայց հետո այլ ազգերն այն սկսեցին տոնել Արևի տոնի օրը՝ դեկտեմբերի 25-ին, իսկ Հայտնությունը կամ Մկրտությունը՝ հունվարի 6-ին:

Հայ եկեղեցու՝ Ս. Ծնունդն ու Ս. Հայտնությունը նույն օրը տոնելու որոշումը առիթ է տվել մյուս եկեղեցիների դժգոհության, «Յոյներու և հայերու միջև Ծննդեան տօնին առթիվ կատաղի վիճաբանություններ տեղի կունենային»¹:

Զատիկի տոնակատարության առիթով հակասությունները ամենամյա չէին, սակայն դարձյալ անհամաձայնություններ էին առաջանում, որոնք ի վերջո, բերում էին լուրջ ընդհարումների:

Տևական պատերազմները, հարևան եկեղեցիների հետ դավանաբանական վեճերը, որոնք սպառնում էին հայ ժողովրդի և եկեղեցու ինքնուրույնությանը, ստիպեցին նրանցից սահմանազատվել նաև եկեղեցական տոների հաշվարկների հարցում:

Մեր նախորդ հոդվածներում նշել ենք, որ ծուղատիկը հաճախակի երևույթ չէր՝ 532 տարիների ընթացքում այն երեք անգամ էր պատահում՝ 95

¹ Հ. Ն. Ակիմեան, Հ. Տեր-Պողոսեան, «Մատենագրական հետազոտություններ», ՀԱ, 1975, № 4-6, էջ 135:

տարի տարբերություններ, մեկ անգամ 247, երբ հայ և հույն եկեղեցիները Ջատիկը տոնում էին մեկ շաբաթվա տարբերությամբ: Այդ առիթով հակասությունները բերում էին լուրջ ընդհարումներ²:

Այս հարցին տարբեր դարերում անդրադարձել են գրեթե բոլոր հայ նշանավոր մտածողները: Հայտնի է, օրինակ, 1007 թ. ծոազատիկի պատմությունը, երբ հույները զատիկը ապրիլի 13-ին տոնելու փոխարեն տոնեցին այն ապրիլի 6-ին. «Յառուր մեծ Ջատիկին մոլորեալ եղեն ի կատարելոյ զսուրբ Յարութեան օրն Ջատիկին... և ածին նոքա զլրումն Ջատիկին ի կիրակէն ի շաբաթն, և զկնի աւուր մի Ջատիկ արարին, զոր պարտ էր զկնի ութ աւուրն կատարել... Եւ եղև սուգ մեծ ի վերայ եկեղեցւոյն... և ոչ վառեցաւ լոյս կանթեղացն ի սուրբ գերեզմանն»³: Արդյունքում անհավատները «կոտորեցին սրով զամենայն քրիստոնեայսն՝ հոգիք իբրև տաան հազար: Եւ լցաւ սուրբ Գերեզմանն Քրիստոսի արեամբ աղօթաւորացն, և դեռ մինչև ցայսօր կան ոսկերք նոցա ի յայրին անդ»⁴:

Բացի սպանություններից՝ այլազգիները նաև կործանեցին եկեղեցին, «զսպասս և զգանձս նորին առնուլ զաւարի»⁵:

Ծոազատիկների մասին տեղեկությունները կարևոր աղբյուր են հայ եկեղեցու պատմության համար, քանի որ Ջատիկի հետ են կապված մյուս շարժական տոները:

«Ինչպես Հրէից, նմանապէս ամէն քրիստոնէից տոմարներուն մէջ զատկական հաշիւը ամենահարկաւոր գիտնալուն բան մըն է... Քրիստոնեայք ալ Ջատիկը կը տօնեն, չէ թէ Իսրայելացւոց Ջատիկն յիշատակը պահելու համար, հապա Քրիստոսի Տեառն մերոյ փառաւորեալ յարութեանը յիշատակ... անոր համար քրիստոնէից մէջ ալ Ջատիկը ամէն տօներէն մէծ կը սեպուի, և տարւոյն ուրիշ ամէն շարժական տօները Ջատկէն կախուած են», կարդում ենք 1845 թ. «Բազմավէպ»-ի մի անստորագիր հոդվածում⁶:

Սույն հոդվածում ներկայացնում ենք երրորդ 532-ամյա զատկական շրջանի ծոազատիկների պատմությունը:

ԺՁ. դարից Հայաստանը գտնվում էր երկու հզոր տերությունների՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի տիրապետության տակ: Երկու տերություն-

² Ջ. Էյնաթյան, «Եկեղեցական տոների շուրջ Հայոց և հարևան եկեղեցիների միջև հակասությունների մասին: Ջատիկ և ծոազատիկ», *Էջմիածին*, 2017, № 4, էջ 122-134, Ջ. Էյնաթյան, «Ջատիկ և ծոազատիկ (2): Հայոց երկրորդ ՇԼԲ-ի՝ 1102, 1197, 1292 և 1539 թթ. ծոազատիկները», *ԲՄ*, № 24, 2017, էջ 261-284:

³ Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ, Երուսաղէմ, 1869, էջ 51-53:

⁴ Սույն տեղում, էջ 53:

⁵ Ա. Տէր Յովհաննիսեան, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, Երուսաղէմ, 1890, էջ 122:

⁶ «Ջատկական հաշիւներուն վրայ տեղեկութիւն», *Բազմավէպ*, 1845, էջ 97:

ների համանման նպատակները անխուսափելի էին դարձնում բախումը նրանց միջև: ԺՁ. դարի ընթացքում և ժԷ. դարի սկզբին նրանց միջև ընդմիջումներով արյունահեղ պատերազմներ էին մղվում:

Ազգային ինքնությունը պահպանելու ժողովրդի անհաղթահարելի ճիգերի մասին բնորոշ է հետևյալ պատմությունը. պարսից Շահ Աբասը Ագուլիս կատարած այցի ժամանակ Անդրեաս քահանային մեծ պարգևների փոխարեն հավատափոխ լինելու առաջարկ է անում: Վերջինս հրաժարվում է և դաժան մահապատժի ենթարկվում՝ «քաջ նահատակն և ճշմարիտ քահանայն Անդրէաս հաստատունն հաւատով կայր ի վերայ անշարժ հիման հաւատոյս քրիստոնէութեան»⁷:

ԺԷ. դարի իրադարձությունները ամենայն մանրամասնությամբ պահպանվել են դեպքերի ականատես Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ում, որն իր ժամանակի Հայաստանի մշակույթի, գիտության և կրթության պատմության կարևոր սկզբնաղբյուր է: Կործանարար իրադարձությունների հետևանքով Հայաստանը քաղաքական, տնտեսական ու մշակութային խոր ճգնաժամ էր ապրում, եկեղեցիները «բազմաժամանակեայ փակեալ դրամբք խաւար և անլոյս, լռեալ ի պաշտամանց և ի պատարագաց, աւերեալ և խախտեալ շինուածք նոցա, տանիք և որմունք իբրեւ զանտէր և այրի ի փեսայէն և օտարացեալ յորդոց, նստեալ թախժեալ հոգւով և անմխիթար լայր ընդ երեսս մարդոյ»⁸:

ԺԷ. դարի սկզբին իրավիճակի կործանարար հետևանքների դեմն առնելու նպատակով որոշ հայրենանվեր գործիչներ փորձում էին վանքերին կից բարձրագույն տիպի դպրոցների երբեմնի մակարդակը վերականգնել՝ անապատական կենցաղ վարելով և մտավոր աշխատանք կատարելով: Պատմիչը հպարտությամբ և հիացմունքով է խոսում գիտնական վարդապետների անօրինակ սխրանքի մասին, որոնց մտահոգության առարկաներն էին Հայաստանում մոռացության մատնված «արտաքին» գիտությունները՝ հին հույն հեղինակների ստեղծագործությունները:

Հայաստանի ուսումնական կյանքի խոշոր գործիչ և ապագա կաթողիկոս Մովսես Տաթևացու հետատես խորհրդով, Երուսաղէմից Սարգիս եպիսկոպոսն ու Կիրակոս Պոնտացի քահանան գալիս են Սյունիք և Տաթևի վանքի մերձակա մի վայրում նոր միաբանություն հիմնում: Աշխարհագրական դիրքի շնորհիվ արտաքին աշխարհից մեկուսացած այդ «Մեծ» անապատում կային դեռևս բանիմաց վարժապետներ, որոնք պահել էին հին դպրոցների ավանդները:

⁷ Առափել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 289:

⁸ Նույն տեղում, էջ 242:

1615 թ. այստեղ է գալիս նաև ինքը՝ Մովսես Տաթևացին, և դպրոցը վերածվում է ուսման նշանավոր կենտրոնի: Առաքել Դավրիժեցին սիրով ու ջերմությամբ է խոսում այդ կաթողիկոսի (1629-1632 թթ.) մասին, որը մեծ ջանք էր ներդրել հայ ժողովրդի հոգևոր կյանքի վերածննդի ու հետագա զարգացման գործում:

Իսկ երուսաղեմից հրավիրված երկու նվիրյալների մասին ասվում է. «Քանզի իբրեւ զմայրն Սիօն, գորմէ ասէ մարգարէն Եսայի, թէ ի Սիօնէ ելցին օրէնք, եւ բան Տեառն՝ յերուսաղեմէ, սոքա երկոքին արքս եղեն սկիզբն անապատիս, եւ անապատս եղեւ մայր եւ ծնող ամենայն անապատաց եւ առիթ լուսաւորութեան ազգիս Հայոց»⁹:

Անապատի գործունեության արդյունքները ճշուղավորվում ու ծավալվում էին ոչ միայն մերձակա (Երևան, Հովհաննավանք, Էջմիածին, Սևան), այլև ավելի հեռու գավառներում: Դրանցից էր Վանա լճի ամենամեծ կղզին՝ Կիմր: Ըստ ավանդության՝ Կիմ անապատի հիմնադիրն է եղել Գրիգոր Լուսավորիչը, «սակայն իրականին անոր գործունեութենէն տարիներ ու դարեր վերջ եղած պիտի ըլլայ Կիմի հիմնարկութիւնը»¹⁰,— գրում է Հ. Ոսկյանը: 1310 թ. հիշատակություններից մեկում Զաքարիա կաթողիկոսը համարվում է Կիմի Սուրբ Գևորգ եկեղեցու հիմնադիրը, մեկ ուրիշում վերանորոգողը¹¹:

Կիմի ժէ. դարի վերականգնումը և ուսումնական կյանքի աշխուժացումը կապվում է Ներսես Մոկացու (Բեղլու) անվան հետ. «Նա նոր կյանք է տալիս Կիմին»¹²: Մոկացին Մեծ անապատի ուսուցիչներից էր, «արտաքին» գիտություններ էր դասավանդում: 1622 թ. նա մեկնում է Կիմ և այնտեղ նոր դպրոց հիմնում: Սկիզբ է դրվում գիտամշակութային ապագա ծավալուն գործունեության՝ թեպետ դանդաղ, բայց անխափան առաջընթացին: «Ի կղզին Լմայ, ի մէջ ծովուն ժողովեցան... բազմութիւնք եղբարց, և եղև անապատ հաստատուն ամենայն կարգօք և կրօնիւք միակեցութեան վարուց, և ինքն Ներսէս վարդապետն անդէն կացեալ կրօնաւորական ժուժկալութեամբ, կատարեաց զընթացս իւր առաքինի վարուք»¹³: Պատահական չէ, որ հայ փիլիսոփայական մտքի պատմության ուսումնասիրողները ժէ. դարի նոր աշխարհայեցողության կրողների շարքում հիշատակում են նաև Ներսես Մոկացուն¹⁴:

⁹ Նույն տեղում, էջ 218:

¹⁰ Հ. Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, 1940, էջ 19:

¹¹ Հ. Հ. Ոսկեան, նշվ. աշխ., էջ 8: Խոսքը Աղթամարի կաթողիկոս Տ. Զաքարիա Սեֆեդիյանի մասին է (1296-1336 թթ.), տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Գ, Էջմիածին, 2002, էջ 60:

¹² Հ. Հ. Ոսկեան, նշվ. աշխ., էջ 19:

¹³ Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 218:

¹⁴ Հ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983, էջ 65:

Դեռ «Մեծ անապատում» Մոկացին դասավանդում էր, և թեև սկզբում շատերն էին հավաքվում նրա շուրջ, բայց կարճ ժամանակ անց հեռանում էին: Սակայն աշակերտներից մեկը՝ Մելիքսեթ Վժանեցին, միշտ նրա կողքին էր և նրա հետ էլ մեկնեց Լիմ: Այստեղ նույնպես սկզբում ներսեսի շուրջ հավաքված սաները, չդիմանալով դժվարություններին, ձանձրանում և ետ էին կանգնում արտաքին գրքեր կարդալուց:

Իսկ Մելիքսեթը երկար տարիներ Մոկացու ղեկավարութեամբ զբաղվեց արտաքին գիտություններով. «Տէր Մելիքսեթ ոչ եթող արտաքին գիրքն... անդադար տքնութեամբ զցայգ և զցերեկ ընթեռնոյր և մտածէր և բերեալ առ ներսես վարդապետն ցուցանէր... քանզի գիտութեան ամենայն արտաքին գրոց անտարակոյս ի վերայ հասեալ գիտող եղև Սահմանացն, Պորփիրին, Ստորոգութեան, Պերիարմենիասին, Աշխարհացն, Առաքինութեան, Վերլուծականին¹⁵», – հայտնում է Առաքել Դավրիժեցին:

Մելիքսեթը տեղյակ էր նաև տոմարական հարցերին. «Այլ և զամենայն ազգաց սոմարն՝ որոց պատճէն գրեալ կայ ի միջի մերում, քաջ և անտարակոյս եհաս ամենայնի, գիտելով զսկիզբն և զպատճառն և զամենայն հետևմունս նոցա¹⁶»:

Սկզբում նպատակը ոչ թե աշխարհիկ նոր գիտության և գրականության հիմնադրումն էր, այլ նախորդ ժամանակաշրջանում ստեղծված, բայց տևական պատերազմների ընթացքում մոռացության տրված գիտելիքների վերականգնումը: Հավաքվում և ուսումնասիրվում էին հայկական հին ձեռագրերը, ընդօրինակվում և տարածվում նորերը:

Մաշտոցի անվան Մատենադարանում այժմ պահվում է Լիմում գրված չորս տասնյակից ավելի ձեռագիր, որոնց կեսը ժԹ. դարից են (օրինակ՝ ՄՄ 5035, ՄՄ 5375, ՄՄ 6407):

Կա ժԴ. դարի մեկ ձեռագիր՝ ՄՄ 192 (գրված 1375 թ.), «Մասունք Աստուածաշնչի»:

ԺԵ. դարի հինգ ձեռագրերն են ՄՄ 4472, ՄՄ 4624, ՄՄ 4979, ՄՄ 6509, ՄՄ 6570 «Աւետարան», «Յայսմաուրբ», «Մաշտոց»:

ԺԶ. դարի յոթ ձեռագրերն են ՄՄ 945, ՄՄ 1613, ՄՄ 3353, ՄՄ 5011, ՄՄ 5346, ՄՄ 5976, ՄՄ 6043, որոնք պարունակում են «Աւետարան», «Մաշտոց», «Գանձարան», «Շարակնոց», որոշ հատվածներ Պլատոնից:

ԺԷ. դարի ձեռագրեր են՝ ՄՄ 45, ՄՄ 2079, ՄՄ 3069, ՄՄ 3697, ՄՄ 4693, ՄՄ 4836, ՄՄ 5049, ՄՄ 5128, ՄՄ 5389, ՄՄ 5637, ՄՄ 6753, ՄՄ 10697:

¹⁵ Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 315:

¹⁶ Նույն տեղում:

Դրանցում Աստվածաշնչի, Հայսմավուրքի կողքին գտնում ենք Մովսես Խորենացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի, Գրիգոր Տաթևացու երկերը: Այդ շարքում են նաև «Խրատ տոմարի», «Պատճեն տումարի», ինչպես նաև Սամվել Անեցու, Վանական վարդապետի, Հակոբ Արիմեցու աշխատությունները:

ԺԸ. դարի ձեռագրերից են ՄՄ 1834, ՄՄ 1842, ՄՄ 1866, ՄՄ 2009, ՄՄ 5620, ՄՄ 5747, ՄՄ 7183, որոնցից մի քանիսը հատվածներ են պարունակում Արիստոտելի հայերեն թարգմանություններից:

Ներսեսի նախաձեռնությամբ, կրոնական բովանդակության ձեռագրերի հետ մեկտեղ, բազմացվում էին «արտաքին գիտություններին» նվիրված գրքեր, իմաստասիրական բնագրեր, հարցուպատասխանի եղանակով շարադրված մեկնողական գործեր:

Ներսես Մոկացուց վարդապետական գավազան ստանալուց հետո Մելիքսեթը գալիս է Էջմիածին, սկզբում արժանանում է սառը վերաբերմունքի, իսկ ավելի ուշ նրա շուրջն են հավաքվում մի խումբ աշակերտներ, նրանից գիտելիքներ ստանում: Մելիքսեթը նրանց դասավանդում է փիլիսոփայություն, բնագիտություն, տոմարագիտություն:

Հայոց տոմարը անաղարտ պահելու խնդիրը անհրաժեշտ էր եկեղեցու ինքնուրույնությունը պաշտպանելու համար: Պետք էր վերականգնել նրա հետ կապված և բոլորից տարբեր յուրահատուկ հաշվարկները, պատրաստել տոմարագետներ, որոնց շնորհիվ կշարունակեին եկեղեցական տոները հաշվել դեռևս է. դարից սկիզբ առած ուրույն համակարգով:

Պետք էր անփոփոխ պահել Անաստաս կաթողիկոսի հոգաձուլությամբ և հանձնարարությամբ Անանիա Շիրակացու ստեղծած տոմարը «ըստ այլոց ազգաց... յօրինել, զի միշտ անշարժ լինիցին տօնք տարեկանաց կամ յեղափոխ եղանակք ժամանակաց... զի բարեձևագունից ոմանց և զմերս, կշռադատեալ մի կարօտասցուք գալ ի զուգաւորութիւն հռովմայեցւոց¹⁷»:

ԺԷ. դարի սկզբնաղբյուրները վկայում են, որ քսանական թվականների վերջերին ուժեղացել էր կաթողիկ միսիոներների՝ հայաձուլմանն ուղղված գործունեությունը: Լվովում կաթողիկ միսիոներների և Էջմիածնի նվիրակների հանդիպման ժամանակ կազմակերպված հրապարակային բանավեճում հայերը պարտություն կրեցին: «Հենց այս միջադեպն էլ շրջադարձային կետ հանդիսացավ ԺԷ. դարի հայ փիլիսոփայական ու գիտական մտքի զարգացման գործում... Հայ մտավորականները խորապես հասկացան, որ առանց գիտական-

¹⁷ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցուց Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Գ. Տէր-Վարդանեանի, ՄՀ հ. ԺԱ, Անթիլիաս, 2010, էջ 414:

փրկիստփայական անհրաժեշտ պատրաստականության իրենք անգոր կլինեն պաշտպանելու սեփական ժողովրդի ինքնուրույնության իրավունքը»¹⁸:

Երկրորդ ՇԼԲ-ի վերջին ծնագատիկից՝ 1539 թ.-ից 95 տարի անց՝ 1634 թ. պատահեց հաջորդ ծնագատիկը: Այդ ծնագատիկի պատմությունը կապված է Ավիկ տոմարագետի անվան հետ:

Փէ. դարի տոմարագետ Ավիկի մասին քիչ բան է հայտնի, իսկ նրա ծնագատիկին նվիրված մեկնությունը մինչ այժմ հատուկ ուշադրության չի արժանացել:

Բ. Թումանյանը ՄՄ 2762 ձեռագիրն ուսումնասիրելիս հանդիպել է այդ աշխատանքին և գրել. «Տոմարական բավական հետաքրքրական տեքստ, գրված Ավիկի կողմից, ուր մանրամասն հաշվումներով ցույց են տրվում հայկական տոմարով զատկական հաշվումներում կատարված սխալները: Տեքստից երևում է, որ Ավիկը բավականին հմուտ տոմարագետ է և քաջ ծանոթ ինչպես հայկական, այնպես էլ մյուս՝ մասնավորապես հռոմեական տոմարին»¹⁹:

Հ. Անասյանը ՄՄ 1971, ՄՄ 2018 և ՄՄ 7104 ձեռագրերում նկատելով այդ աշխատանքը, Ավիկի մասին գրել է. «Փէ. դարի հայ տոմարագետ-հեղինակ, որից մեզ հասել է մի փոքրիկ երկ ծնագատիկի մասին»²⁰:

Մեր որոնումների արդյունքում չորս ձեռագրին ավելացավ ևս մեկը՝ ՄՄ 2180:

1627-1646 թթ. Լիմի առաջնորդությունը վարում էր Ստեփանոս Շատախցին: Պահպանվել է նրա մի արձանագրություն՝ «կարևոր անուններն այն անձինքներու, որոնք ներսեսի և իւր օրով Լիմի մէջ կը ծաղկէին»²¹: Երեք տասնյակ անունների թվում կա երկու Ավետ և մեկ տեր Ավետիս: Այն, որ Լիմում հավաքվել էին մի քանի տասնյակ միաբաններ, գրում է նաև Ավիկը. «Գրեցաւ տամարագիրքս ի ծովապատ անապատս Լիմ հորջորջեալ, թուականիս Հայոց ՌՁԱ. (1081=1632) ամին... վերականգնութեամբ Ստեփանոս վարդապետին և միաբանութեամբ Հ. (70) եղբարցս, որ աստ կան հաւաքել ի հաճոյս Աստուծոյ» (ՄՄ 1971, թ. 118բ):

Իր երկը գրելով հերթական ծնագատիկից տարիներ առաջ, Ավիկ տոմարագետը փորձել է կասեցնել հնարավոր խառնաշփոթը՝ նաև հետագայում սխալներից խուսափելու նպատակով:

Ծնագատիկի հետ կապված տարածայնությունները մեր եկեղեցու համար հավասարազոր էին Քաղկեդոնի հետ կապված սկզբունքային դիրքորոշմանը.

¹⁸ Հ. Միրզոյան, նշվ. աշխ., էջ 134:

¹⁹ Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, գ. 1, Երևան, 1964, էջ 325:

²⁰ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, Երևան, 1976, էջ 1029:

²¹ Հ. Հ. Ոսկեան, նշվ. աշխ., էջ 23-24:

«Մեք ի միւս կիրակէն տամք և գերծանիմք ի նզովից, զի հայք ոչ ընկալան զթիւր օրինակն, որպէս և ոչ զժողովն Քաղկեդոնի», – գրում է Կիրակոս Գանձակեցին²²:

Երրորդ 532-ամյա զատկական շրջանի առաջին՝ 1634 թ. ծնագատկի մասին Մ. Օրմանյանը գրում է. «Ծնագատիկները սկսած էին ընդհանրապէս դիտողութեան տեղի շտալ... բայց կը պահէին իրենց նշանակութիւնը երուսաղէմի մէջ լուսահանութեան պարագային պատճառով, իբր զի ճրագալոյցի հրաշալի լոյսը մէկ կամ միւս ազգին զատկը պիտի նուիրագործէր: Կարծես թէ այս անգամ ուրիշ անգամներէ աւելի կարեւորութիւն ստացած էր խնդիրը, եւ կանուխէն սկսած էին փոխադարձ սպառնալիքներ իրարու զատիկները խափանելու»²³:

Երուսաղէմի պատրիարք Գրիգոր Մոկացին մինչ զատկի օրը «փոյթ կալաւ որսալ զսիրտս յունաց... քանզի լուեալ էր ի պատմութեանց, թէ յամենայն խոտորմունս տօնի զատկին մեծամեծ վրդովմունք լինէին անդ մինչև ցհեղումն արեան»²⁴:

Հուլները լուր ուղարկեցին Գրիգոր պատրիարքին, թէ կպատժեն հայերին, եթէ նրանք չհամաձայնեն տոնել զատկը իրենց հետ միասին: Պատրիարքը ստիպված դիմեց քաղաքապետին, քաղաքի դատավորին և մյուս մեծամեծերին և «յայտնի եցոյց նոցա, թէ յոչ զսպիլ յունաց՝ խռովութիւնք մեծամեծք ծագին ի քաղաքի»²⁵:

Այս մասին մանրամասն գրում է Մ. Չամչանցը. «Պատահեցաւ ի սմին ժամանակի՝ ի թուին Հայոց ՌՁԳ. (1083=1634), յերկրորդ ամի Փիլիպպոս կաթողիկոսի, խոտորումն զատկի՝ ի մէջ յունաց և հայոց, որ ծնագատիկն կոչի... Եւ էր յայնժամ պատրիարք Երուսաղէմի Գրիգոր Մոկացի... սա յառաջ քան զհասանել տօնի զատկին փոյթ կալաւ որսալ զսիրտս յունաց»²⁶:

Գրիգոր պատրիարքը ստիպված հուլների սպառնալիքների մասին հայտնում է քաղաքապետին, քաղաքի դատավորին, որ եթէ չզսպեն հուլներին, քաղաքում մեծ խռովութիւն կլինի: Այս կերպ զատկի տոնակատարութիւնը ավարտվում է առանց պատահարների:

Տոմարն անսխալ պահելու համար յուրաքանչյուր տարի ուշադրութիւն էր դարձվում գարնանային օրահավասարից հետո առաջին լիալուսնի՝ Ավագ լրման օրը ճշտելուն. «Վասն հարկի Աւագ լրմանն հաշուելու, զի յառաջ խաղացուցեալ զնա, արտաքս հանցեն քան զհասարակածն, զի մի գուցէ անկանիցի

²² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 44:

²³ Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. 2, Երևան, 2001, էջ 2828:

²⁴ Մ. Չամչանց, Հայոց պատմութիւն, հ. Գ, Ե., 1984, էջ 615:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Մ. Չամչանց, նշվ. աշխ., էջ 615:

Աւագ լրումն ի ներքոյ հասարակածին և առնիցէ զմին տարին Բ. (2) Զատիկ»²⁷:

Այդ պատճառով, եկեղեցական հայրերը աշխատում էին տոմարագետների հետ մեկտեղ մեծ ճշգրտութեամբ կատարել գատկական հաշվարկը, քանի որ սխալի դեպքում «գհոյլս իմաստասիրաց հակառակասիրացն ճշտութեան ծաղր տայ առնել, զի տգէտ և յիմար երեցուցանէ ոչ կարել առնել տարորոշումն սկզբան տարւոյն և վախճանին, զոր յայտնապէս սահմանեաց Աստուած յամենայն Զատիկս, զի ի մին տարին Բ. (2) Զատիկ բերէ և զգալ տարւոյն Զատիկն խափանէ»²⁸: Մեր մեկնություններում բացատրությունը տրվում էր եբրայական ամիսների համար, ըստ որի՝ եթե Ավագ լրումը լինի Ավելյաց 4 = Մարտի 20-ին, և այդ օրը շաբաթ լինի, ապա Զատիկը կլինի հաջորդ օրը՝ Ավելյաց 5 = Մարտի 21-ին:

Տոմարագետները բացատրում էին, որ «տարի» ասելով պետք է հասկանալ երկու բան՝ իսկական և «ըստ» պատահման»: Առաջինը սկսվում է գարնանային օրահավասարի օրից, իսկ մյուսը մարդիկ են ստեղծել: «Զի ազգ և ազինք ի յորում եղանակի տարւոյն ըստ հաճութեան և ըստ պատահման որ եդին իւրեանց թուական, զօրն զայն, յորում եդին զթուական, սկիզբն տարւոյ եղև նոցա և նոր տարի անուանեցին զայն»²⁹:

Մ. թ. Զ. դարի կեսում Ալեքսանդրյան եկեղեցին որոշել էր յուրաքանչյուր տարվա բոլոր ամիսների նորալուսնի և լիալուսնի օրերը, այսինքն՝ կազմվել էին 19-ամյակի «մշտական օրացույցներ»: Այդ աղյուսակները, որոնք միջնադարում մեծ արժեք ունեին, այժմ որևէ կարևորություն չունեն³⁰:

Բանն այն է, որ հուլյան տարին մեծ է տրոպիկական տարուց 11 ր 14 վրկ, որի հետևանքով 128 տարում հավաքվում է 1 օրվա տարբերություն: ԺԶ. դարի վերջում գարնանային օրահավասարը համընկնում էր ոչ թե Մարտի 21-ի, այլ նույն ամսի 11-ի հետ: Հայտնի է, որ սխալն ուղղվեց 1582 թ. Գրիգոր ԺԳ. պապի հրամանով: Օրերի հաշվարկը առաջ շարժվեց 10 նիշով:

Սխալը չկրկնելու համար որոշվեց 400 տարում հաշվարկից հանել 3 օր: Այսինքն՝ յուրաքանչյուր 400 տարում 100 նահանջ տարիների փոխարեն պետք է հաշվել 97: Նահանջների հաշվարկից դուրս թողնվեցին 2 զրոյով ավարտվող տարիները, որոնք 4-ի չեն բաժանում: Այդպիսիք էին 1700, 1800, 1900 թվականները: Արդյունքում հին ու նոր տոմարների տարբերությունը ժԸ. դարում 11 օր էր, ժԹ.-ում՝ 12, Ի.-ում՝ 13: ԻԱ. դարում 13 օրվա տարբերությունը պահ-

²⁷ ՄՄ 74, էջ 354բ, ՄՄ 2017, էջ 49բ:

²⁸ ՄՄ 74, էջ 357ա, ՄՄ 2017, էջ 52ա:

²⁹ ՄՄ 74, էջ 357բ, ՄՄ 2017, էջ 52բ:

³⁰ М. Идельсон, *История календаря*, Ленинград, 1925, с. 84.

պանվում է, քանի որ 2000 թվականը բաժանվում է 400-ի, համարվում է նահանջ: Մինչ աշխարհի տարբեր կաթոլիկական երկրներ ժէ-ժՖ. դդ. անցան Գրիգորյան (նոր) տոմարին, Ռուսաստանում այն ընդունեցին Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո. 1918 թ. հունվարի 31-ից հետո որոշվեց հաշվել ոչ թե փետրվարի 1, այլ 14: Իսկ մինչ այդ շատ երկրներում շարունակում էին առաջնորդվել հուլյան տոմարով:

Մեր ձեռագրերում պահպանված 532-ամյա գատկացանկերը կազմված են 28 առանձին 19-ամյակներով, որոնք տեղավորված են առանձին էջերի վրա: Մինչդեռ Աշոտ Աբրահամյանի թե՛ «Անանիա Շիրակացու մատենագրությունը» և թե՛ «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» գրքերում³¹ տարիները դասավորված են կամայական ձևով: Իսկ մենք «Պատճէն տոմարի» գրքում 532-ամյա գատկացանկի տարիները դասավորել ենք ըստ ՄՄ 1999 ձեռագրի՝ առանձին 19-ամյակներով³², և որոշ տարիների համար հատուկ նշումներով: Այդ նշումները հիշեցնում են 532-ամյակի կոնկրետ 113, 208, 455-րդ տարիների ծագատիկների մասին³³: Ուշադիր ընթերցողը կնկատի, որ այդ տարիներին Լուսնի ավագ լրումը եղել է ապրիլի 6-ին, Ջատիկը՝ մեկ շաբաթ անց՝ ապրիլի 13-ին³⁴:

Ավիկը, անդրադառնալով հայոց տոմարի առանձնահատկություններին, զգուշացնում է, որ ժամանակի ընթացում սխալներ են կուտակվել: 1003 թ., երբ նավասարդի սկիզբը համընկավ գարնանային օրահավասարի՝ Մարտի 20-ի հետ, նրանց համապատասխանությունը խախտվեց, «մինչ ի յայս ամս խիստ ուղիղ էր հայոց տոմար» (ՄՄ 7104, թ. 213ա):

Հայտնի է, որ նավասարդի 1-ի հանդիպումը Մարտի 20-ի հետ խառնաշփոթի պատճառ է դարձել տոմարական հաշվումների մեջ: Դրա հետևանքով

³¹ Ա. Աբրահամյան, *Անանիա Շիրակացու մատենագրությունը*, Երևան, 1944, *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, Երևան, 1956:

³² Պատճէն տոմարի (է-ժե դդ.), աշխատասիրութեամբ Ջ. Էյնաթյանի, աշխատակցությամբ և խմբագրութեամբ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2002, էջ 220-247:

³³ Նույն տեղում, էջ 225, 231, 243:

³⁴ *Անանիա Շիրակացու մատենագրությունը*, էջ 268, 270, 280: *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, էջ 193, 194, 199: Ինչպես երևում է հրատարակված ՇԼԲ-ից, 18-րդ տարվա համար նշում չկա: Երկրորդ ՇԼԲ-ի 18-րդ տարին 1084+18=1102 թ. է, երբ Հովհաննես Սարկավազը դեռ կենդանի էր, դրան տեղյակ էին բոլորը, այն հատուկ նշելու կարիք չկար: 1102 թ. ծագատիկի պատմությունը հայտնի է և պահպանվել է Գրիգոր Վկայասերի ուղեծի շնորհիվ (ՏԵՍ *ՔՄ* 24, 2017, էջ 272-283): Հետաքրքիր է, որ Ա. Աբրահամյանը 1102-ի փոխարեն նշում է 1002 թ. (*Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, էջ 203): Նա մեջբերում է Վ. Ա. Հակոբյան, *Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.*, հ. I գրքից (էջ 25) «ՇԾ. (= 1001) թուին պատահումն զատկին» տողը, որտեղ իրականում խոսքը 552+550=1102 թ. մասին է:

առաջացած մեկ տարվա սխալը ուղղեց Հովհաննես Սարկավազը: Նորոգված տոմարը հնից տարբերվում էր ոչ միայն ավելորդ թիվը հաշիվներից հանելով, այլև վերադրի և գատկական լրումի ուղղումներով, որոնց շնորհիվ առաջիկայում սխալները չէին կրկնվի: Վերադրի փոփոխության մասին խոսելիս Հովհաննես Սարկավազը օգտագործում է «հին վերադիր» և «նոր վերադիր» արտահայտությունները: Նա հայտնում է, որ ինքը վերադիրը ավելացրել է երկուսով. «երկուցն, զոր յաւելումք ի վերադիրն յառաջին... ունել զվերադիրն մետասան, այլ ոչ ինն հանապազ»³⁵:

Քանի որ 19 տարիների գատկական լրումների ամսաթվերը փոխելը բոլոր եկեղիցները պետք է ընդունեին հատուկ որոշումով, ինչպես արեց ժԶ. դարում Հռոմի պապը, ապա Սարկավազը Լուսնի հաշիվների ճշգրտման հարցին մոտենում է ամենայն զգուշությամբ և պատասխանատվությամբ. «Զհանապազորդն Զատիկի... փոխեցաք լինել ԽԶ. (46)... քանզի... յայլ լրմունս Լուսնոյ... ունիմք ԽԵ. (45)... ոչ յանդգնութեամբ ինչ զայս իմանալով... երկու աւուրքք ի քանակութենէ Լուսնին ի բաց անկանին... ոչ անփոյթ առնեմք զանցանել...»³⁶:

Ինչպես ասվել է, ծնագատիկը հաճախակի հանդիպող երևույթ չէր, 532 տարիների ընթացքում այն երեք անգամ պատահում էր 95 տարի տարբերությամբ, մեկ անգամ էլ՝ 247: Այսինքն՝ մեկ սերնդի կյանքում այն միայն մեկ անգամ կարող էր պատահել:

Ուսումնասիրողները նշում են, որ եկեղեցին ուշագիր հետևում էր հարևան եկեղեցիների տարբեր կանոնների ճշգրիտ գործընթացին. «Հայ հին իրավունքի պատմության մեջ եկեղեցական կանոնները գրավում են կարևոր և ուրույն տեղ... Կանոնները անփոխարինելի աղբյուր են հանդիսանում ոչ միայն իրավագիտության պատմության համար, այլև նրանք շափազանց կարևոր են հայ վաղ ֆեոդալական հասարակության քաղաքական, տնտեսական, գաղափարական և մշակութային կյանքի համակողմանի ուսումնասիրության համար... Կանոնախմբերի հիմնական մասը ստեղծվել է սկսած Ե. դարից, հայկական պետականության անկումից հետո, երբ եկեղեցին բացի հոգևոր-կրոնական պաշտոններից, ստանձնեց նաև աշխարհիկ իշխանության որոշ պարտականություններ»³⁷:

Արարչության օրերից, տոմարի համար առանձնացվում էին երեքը. «Գիտելի է, զի երեք են սկիզբն արարչութեան աւուրցն. առաջին օրն սկիզբն է արարչութեան և չորրորդ օրն՝ սկիզբն Արեգականն և Լուսնի ընթացութեան, իսկ վեցերորդ օրն՝ սկիզբն արարչութեան Զատիկի և տարեմտի, ամաց և ժամա-

³⁵ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 249:

³⁶ Նույն տեղում, էջ 263:

³⁷ Ս. Արևշատյան, «Կանոնագիրք Հայոց», էջմիածին, № 3, 1966, էջ 51:

նակաց և դարուց կատարման: Ջի և ի նմին աւուր մարդն ստեղծաւ... Անիծիւք փակեալ է, թէ որ առնէ Ջատիկն ի ներքոյ հասարակածին և կամ ի հասարակածն, ընդ անիծիւք է, զի մի տարին երկու գատիկ լինի և երկրորդ տարւոյն Ջատիկն խափանի... Յառնելն թուական ոչ ասեն կալ յարարչութեան առաջին աւուրն, այլ թէ կալ յԱդամայ հետէ, և Ադամ ի վեցերորդ օրն ստեղծաւ, յարարչութեան Ջատիկն»³⁸:

Ավիկը ուշադիր է հետևում այդ հաշիվներին և զգուշացնում է. «Բայց զգուշ լերուք, թուի ինձ շատ տեղ շփոյթ ձգէ տոմարն»³⁹: Հայտնի էր, որ սխալի դեպքում «ի մին տարին Բ. (2) Ջատիկ բերէ և զգալ տարոյն Ջատիկն խափանէ»⁴⁰:

Ծոպատիկի հարցը քննարկելուց առաջ Ավիկը մանրամասն ներկայացնում է Հայոց Մեծ թվականի հետ կապված հաշվարկները, բացատրում, որ 452 տարի շարունակ, այսինքն՝ երբ «գատիկն ի յԱհիկի ամիսն, ի Մարերի, ի Մարգաց, ի Հրոտից և յԱւելեաց լինէր», ամեն ինչ ճշգրիտ էր, «մինչ ի յայս խիստ ուղիղ էր հայոց տոմար... մինչ նաւասարդի Ա. (1) և Մարտի Ի. (20) եղև գարնանային հասարակ»⁴¹: Այնուհետև շարունակում է. «Աստ Բ. (2) շփոյթ անկաւ ի ներս. Ա. (1), որ գարնանամուտն յառաջ էր, եղև զկնի, և միւսն, որ Ջատիկ լրման հանապազորդն Խ. (40), այլ ոչ գայր ուղիղ»⁴²:

Փաստորեն խախտվել էր Ջատիկի հաշվարկի հիմնական պահանջը, այն է՝ կատարել Ջատիկը գարնանային օրահավասարին հաջորդող առաջին լիալուսնից հետո:

Ավիկը հարգանքով հիշատակում է Հովհաննես Սարկավագի անունը և կատարած աշխատանքը. «Յոհաննէս վարդապետն ի Հաղբատոյ, որ Սարկավագ կոչի, զհանապազորդն սահմանեաց ԽԶ. (46) և արար մեկնութիւն տոմարի»⁴³: Սակայն Ավիկին զարմացնում է, թե ինչու Սարկավագը բավարարվում է միայն երկրորդ ՇԼԲ.-ի հաշվարկների կարգավորմամբ, նաև հրահանգով, ըստ որի չի կարելի Ջատիկը տոնել գարնանային օրահավասարից առաջ. «Այլ ոչ յիշեաց, թէ երբ հասանէ Ջատիկն ի Քաղոց, ի յԱրաց, ի Մեհեկի և այլ յառաջ, այլ ուղիղ չի գայր: Այլ այսպէս է գրեր, թէ նզովեալ է այն, որ առնէ Ջատիկ ի ներքոյ հասարակածին, նզովեալ է այն, որ առնէ Ջատիկ ԻԳ. (23) աւուր Լուսնին, իբր թէ ի մէջ բաղարջակերացն լինի Ջատիկ»⁴⁴:

³⁸ ՄՄ 1114, էջ 49ա-բ:

³⁹ ՄՄ 7104, էջ 215 բ:

⁴⁰ ՄՄ 74, էջ 357ա, ՄՄ 2017, էջ 52ա:

⁴¹ ՄՄ 7104, էջ 213ա:

⁴² Նույն տեղում:

⁴³ ՄՄ 7104, էջ 213բ:

⁴⁴ Նույն տեղում, էջ 213բ-214ա:

Ավիկը նշում է, որ ճիշտ կլիներ հաշվարկը կատարվեր բոլոր ամիսների համար, որոնց հետ կհամընկներ գարնանամուտը: Եւ եթէ տարօրինակ է թվում այդքան երկարաժամկետ գործնական հաշիվներ նախօրոք կատարելը. «Եւ թէ ասես Զատիկն յայն ամիսքն չի հասնիր, թէ աշխարհս շեն մնայ, փութով հասանէ»⁴⁵:

Նա ցավով է արձանագրում, որ «քեզ արինակ ծնագատիկն, որ յառաջ քանի հանապազորդն Խ. (40) էր և կիսակն չէր յաւելեալ, միշտ ի ԺԳ. (14) Լուսնի դիպէր, այլ այժմ ի ԺԸ. (18) աւուր Լուսնին և ի մէջ բաղարձակերացն»⁴⁶: Եւ եթէ գատկական լրումը լիալուսինը պատահում է «ի ԺԸ. (18) աւուր Լուսնին», իսկ «այժմ ի ԻԵ. (25), ԻԶ. (26) աւուր Լուսնին լինի Զատիկ... ինչպես ասես թէ ծնագատիկ է: Զի ոչ թէ բան զիրն հաստատէ, այլ իրն զբան հաստատէ»⁴⁷: Փաստորեն՝ տեղյակ է և ահագանգում է, որ Լուսնի լրումներն իր ժամանակ սխալ են հաշվում, և որ նրանք տեղի են ունենում գարնանային օրահավասարի օրվա ոչ ճիշտ հաշվարկի հետևանքով: Ուստի ծնագատիկի մասին խոսելն ավելորդ է:

Ընդգծենք, որ եթե Հովհաննես Սարկավագի պատրաստած՝ երկրորդ 532-ամյա գատկացանկի ծնագատիկները նշված են ձեռագրերի 19-ամյակներում ճշգրիտ թվականներին, ապա Անանիա Շիրակացու ՇԼԲ.-ի դեպքում ծնագատիկների մասին նշումներ բացակայում են, քանի որ հրատարակության մեջ ՇԼԲ.-ն լրացված է ըստ մի թերի աղյուսակի:

Հուլյան տոմարով առաջնորդվող եկեղեցիները շարունակում էին հիշել ծնագատիկների պատմությունը՝ չնայած նրան, որ ԺԶ. դարում ընդունված Գրիգորյան տոմարով գատկական հաշվումներում պարզություն էր մտցվել: Այդ մասին է վկայում 1634 թ. ծնագատիկի պատմությունը:

Հայ տոմարագետները հիշեցնում և զգուշացնում էին, որ ՇԼԲ.-ի շորս տարիներին մեր և հարևանների գատկի հաշվարկում տարբերություն կա: Այսպես, ԺԸ. դարում հրատարակված «Բուն տօմար Հայոց» գրքի հեղինակը գրում է. «Ի մէջ 532 ամ շրջանին, այսինքն 18-ին, 113-ին, 208-ին, 455-ին պատահի Աւագ լրումն ի կիրակէ, որպէս գրեալ է, և նոքա Ա. (1) օր յետ բերեն զլրումն ի շաբաթի օրն, և միւս օրն, որ է կիրակէ, Զատիկ առնեն»⁴⁸: Նա կարծում է, որ կարելի է «վարիլ մերով հայկազեանս տօմարաւ, քանզի եթէ ըստ խրատու

⁴⁵ Նույն տեղում, էջ 214ա:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Կիւրեղ Սեբաստեան, Բուն տօմար Հայոց, Կ. Պօլիս, 1760, էջ 19:

կանօնիցն, որք եղեալք են, բարւոք մտառմամբ ընթանաս մինչև ի վախճան աշխարհիս, ոչ սխալի և ոչ վերջանայ»⁴⁹:

Ավրիկի եզրակացութիւնը մեկն է՝ «Ապրիկար և եղեռնագործ Ավրիկս սակս ծռազատկին ուշիմ միտ, այլ Յունաց ազգին ծռազատիկ չի հանդիպիր»⁵⁰: Այսինքն՝ եթե կուտակված սխալների պատճառով հնարավոր չէր ճշգրիտ հաշվարկ կատարել, ինչպես դա արել են ժՁ. դարում կաթոլիկական երկրներում, ապա մեր և հունական եկեղեցու Զատիկների միջև տարբերութիւնը՝ ծռազատիկը հաշվելու համար պետք է ունենալ հատուկ գիտելիքներ:

Հնարավոր է, Ավրիկը տեղյակ էր ժՁ. դարի Գրիգոր պապի կատարած ուղղումի մասին, բայց իրավասու չէր հետևել այդ որոշմանը⁵¹: Պարզապես սեփական դիտարկումները նրան բերել էին եզրակացութեան, որ գարնանային օրհավասարի օրը ճշտելու հարցում սխալներ են կուտակված, որի հետևանքով հայոց տոմարի հաշվարկներում խախտումներ կան և ծռազատիկների մասին խոսել հնարավոր չէ:

Ավրիկի «Սակս ծռազատկին» մեկնութիւնը պարունակող հինգ ձեռագրերից միայն մեկն է գրվել Լիմոն, որտեղ ստեղծագործել է Ավրիկը: Ձեռագրերն են.

1. ՄՄ 2018, 1621 թ., գրվել է Իլովոն (Լվով): Բովանդակութիւնն է Արիստորոտել, Սամվել Անեցի, Հակոբ Ղրիմեցի, Ասար Սեբաստացի, Ավրիկ:

2. ՄՄ 7104, 1621 թ., գրվել է Գետաթաղում: Բովանդակութիւնն է Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, «Պատճէն տումարի», Սամվել Անեցի, Ավրիկ:

3. ՄՄ 1971, 1632 թ., Լիմ: Բովանդակութիւնն է Եվսեբիոս, Անդրէաս, Հովհաննես Սարկավազ, Ավրիկ:

4. ՄՄ 2180, 1644 թ., տեղն անհայտ: Բովանդակութիւնն է Եվսեբիոս, Անանիա Շիրակացի, Հովհաննես Սարկավազ, Գրիգոր Տաթևացի, Բարթոլոմէոս Մարաղացի, Հակոբ Ղրիմեցի, Ավրիկ:

5. ՄՄ 2762, ժՁ. դ., տեղն անհայտ: Բովանդակութիւնն է Եվսեբիոս, Անանիա Շիրակացի, Հովհաննես Սարկավազ, Ավրիկ:

Ինչպես տեսնում ենք, Ավրիկի աշխատութեան հինգ օրինակներից երկուսը գրվել են հերթական ծռազատիկից (1634 թ.) 13 տարի առաջ՝ 1621 թ., մեկը՝

⁴⁹ Նույն տեղում, էջ 18:

⁵⁰ ՄՄ 1971, էջ 118բ:

⁵¹ Նույնիսկ պապի հրամանագրի դեպքում անհամաձայնություններ եղան: Այսպես, հայտնի է «տումարական անկարգություններ» երևոյթը Ռիգայում 1584-1589 թթ.: Հրամանագիրը ընկալվել է բողոքականների կողմից իբրև տեղի բյուրգերների իրավունքների խախտում և հավատի գործերին անթույլատրելի միջամտություն: Այդ շարժումը այնքան զորեղ էր, որ ստիպված եղան այն կանգնեցնել լեհական-լատվիական զորքերի օգնությամբ (История Латвийской ССР, т. 1, Рига, 1951, сс. 186-190):

երկու տարի առաջ, 1632 թ., մյուս երկուսը ծնագատիկից շատ հետո: Այսինքն՝ այդ աշխատանքը ուսումնասիրելը կարևոր էր ոչ միայն առաջիկա ծնագատիկի հետ կապված հնարավոր խառնաշփոթը կանխելու, այլև հետագայում հնարավոր սխալներից խուսափելու համար:

1634 թ. ծնագատիկից 95 տարի հետո սպասվում էին հաջորդ՝ 1729 թ. գատիկի հետ կապված տարածայնությունները. «Ծնագատիկի տարբերությունը 1729-ին ալ տեղի պիտի ունենար և կանուխն սկսան Հայերուն եւ Յոյներուն բանակուները, որոնք նորէն ձախող արկածներ գուշակել կու տային... Գրիգոր առաջարկեց կանուխն կերպ մը մտածել, որ Հայերուն և Յոյներուն շփումները արգելուին զատկին առթիւ, եւ այս նպատակով յարմար դատեց, որ Յոյներուն զատկին Հայեր, եւ Հայերուն զատկին Յոյներ Ս. Յարութեան տաճարը մտնելէ արգելուին»⁵²:

Արդյունքում անկարգություններից խուսափեցին⁵³:

Իսկ Մ. Չամչանցն այլ տեղեկություն ունի, ինչի մասին գրում է Ա. Տէր-Հովհաննիսյանը. «Իսկ Հ. Մ. Չամչեան այլով իմն եղանակաւ ասանդէ զայն պատմութիւն խոտորման Զատիկի»⁵⁴:

Իրոք, ինչպես Մ. Չամչանցն է գրում. «Ի յոխորտալ ի վերայ միմեանց՝ միեցան ի բանս զկծանաց և ի հանդիպիլ միմեանց թշնամանէին զիրեարս և սպառնային առնուլ վրէժս... Ի հասանել տօնի զատկին՝ եղեն մեծամեծ աղմուկք յճրուսաղէմ, և սպանած երկու ոգիք ի հայոց և երկու ևս ի յունաց, յորմէ առաւել ևս բորբոքեցան երկու ազգք ընդդէմ միմեանց... Ի նմին իսկ ամի եղև հրայրեացք սաստիկ՝ ի Կոստանդնուպօլիս, և այրեցան երկոտասան եկեղեցիք յունաց և մի ևս եկեղեցի հայոց»⁵⁵:

1729 թ.-ից 95 տարի անց սպասվում էր հերթական՝ 1824 թ. ծնագատիկը: Այդ մասին Մ. Օրմանյանը գրում է. «Ծնագատիկները..., որոնք մինչև իսկ սպանութեանց եւ արինահեղութեանց առիթ տուած են... վերջին ծնագատիկը 1729-ին հանդիպած էր, եւ 95 տարիներու հեռաւորութեամբ ծնագատիկը պիտի նորոգուէր 1824-ին, եւ ամէն ոք գրաւուած էր նոր շփոթներու երկիւղէն, եւ վախ կար, որ ապրիլ 6 եւ 13 օրերը դժպհի եղելութեանց թատր դառնային մեծ կեղրոններուն մէջ: Վտանգին առջեւն առնելու ջանքերը կանուխն սկսան, բայց մէկ եղանակ միայն կար զայն փարատելու՝ Հայոց համակերպիլը: Զի ենթադրելի իսկ չէր, որ ամբողջ որթողոքսութիւնը Յոյներով եւ Ռուսներով,

⁵² Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 2, 2001, էջ 3313:

⁵³ Ա. Տէր Յովհաննիսյան, Ժամանակագրական Պատմութիւն Ս. Երուսաղէմի, Երուսաղէմ, հ. Բ., 1890, 23:

⁵⁴ Նույն տեղում, էջ 25:

⁵⁵ Մ. Չամչեանց, հ. Գ, էջ 804:

Ռուսներով եւ Սլաւներով հրաժարէր իր տոմարէն... 1824 յունուար 26-ին Առաջաւորաց Բարեկենդան հաշուեցաւ փոխանակ փետրվար 2-ին թողլու, եւ ապրիլ 6-ին ալ Չատիկ տօնուեցաւ Յունաց եւ Ռուսաց հետ, ինչպէս սովորաբար կը տօնուէր, եւ ծնագատիկի ոչ խօսքն եղաւ եւ ոչ խնդիր յուզուեցաւ: Անկէ ետքը... այեւս ծնագատիկի անունն իսկ մոռացութեան մատնուեցաւ... Գայթակղութիւնը մեծ պիտի ըլլար, եթէ Ռուսներուն դիմող եւ ապաւինող Հայերը տարբեր օրով Չատիկ տօնէին»⁵⁶:

Ավիկի հինգ ձեռագրերի համեմատությունը ներկայացրել ենք հետևյալ կերպ.

Ա. – ՄՄ 7104, էջ 211ա-216ա,

Բ. – ՄՄ 2018, էջ 414բ-415բ,

Գ. – ՄՄ 2080, էջ 468բ-471ա,

Դ. – ՄՄ 1971, էջ 118բ-119ա,

Ե. – ՄՄ 2762, էջ 42բ-45բ:

ՄՄ 1971, էջ 118բ, ՄՄ 2180, էջ 468բ, ՄՄ 2762, էջ 42բ-ում պահպանվել է Ավիկի հիշատակարանը. «Ավիկար և եղեռնագործ Աւիկա Սակս ծնագատիկին, որ զայս քանի բանս գրեցի: Ով, հանդիպողք, ուշիմ միտ, այլ Յունաց ազգին ծնագատիկ չի հանդիպիր»:

⁵⁶ Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Գ, էջ 4115-4117:

[ՍԱԿՍ ԾՌԱԶԱՏԿԻՆ]

(Բնագիր)

Ով, երկայնամիտ բազմաշնորհ ամենակեցոյց պարգևատու առատ ողորմութեան, խնդրեմ և հայցեմ ի քէն, մարդասէ՛ր, մի՛ արգելցես զշնորհս ամենազար¹ տերութեանդ ի յեղկելի և ի թարմատար, տգէտ և ի տկար, եղեռնագործ, կրկնամեռ անպիտանէս²:

Յորժամ³ եղաւ թՎական Հայոց, թվական հոռոմայեցոց⁴, որ էր⁵ ժԶ. ԹԺ. երեակ: Եւ յորժամ ասեն Հայոց թվական⁶ Ա, Հոռոմայեցոցն⁷ եղև⁸ ՅԵ. և յունվարի ամսամուտ, որ է կաղանդն, յԱրաց ամիսն⁹:

Յունվարի Զ. և յԱրաց Լ. եղև ջրարհնէք¹⁰, Փետրվար ԺԳ., Արեգի Թ. տեառնընդառաջն, Մարտի Ի., Ահկի ԺԳ. գարնանային¹¹ հասարակն, հայոց վերադիրն Գ., հոռոմայեցոց Բ., որ ի բազմապատկելն հայոցն ասէր հանապազ Ը. թիւ ի բաց ե՛րթ, որ Ա. ԺԱ. լինի, Ը. երթայ ի ԺԱ.էն, Գ. կու մնայ, որ է առաջին ամի վերադիրն:

Իսկ հոռոմայեցոցն ի բազմապատկելն ասէ Թ. թիւ հանապազ ի բաց ե՛րթ, որ Ա. ԺԱ. լինի, Թ. երթայ ի ԺԱ.էն¹², մնայ Բ., որ է առաջին ամի վերադիրն, իսկ է. երեակն հայոց Դ.:

Բայց հոռոմայեցոցն¹³ թվական¹⁴, որ եղաւ, է. երեակն Ա. էր: Այլ հայոց թվականի ամին Գ. էր է. երեակն հոռոմոցն¹⁵:

Հայոց թվական որ եղաւ, տանուտեր Աղեղնաւորն էր, և լրումն Զատկին Մարերի է. էր և Ապրիլի¹⁶ ԺԳ., պատկեր արն¹⁷ կիրակի: Բայց հանապազորդ¹⁸ Զատկին Խ. էր, զի կիսակն Ահկի ամսոյն¹⁹ Գ. էր և Մարերի ամսոյն²⁰ Գ. ու կէս:

¹ Ե ամենազօր

² Գ անտի

³ Գ որժամ

⁴ Ա հոռոմայեցոց .յդ. էր, Բ Հոռոմայեցոցն, ԳԵ էր Հոռոմայեցոցն

⁵ ԳԴ է

⁶ Ե թուական

⁷ Ե Հոռոմայեցոցն

⁸ ԳԵ > եղև

⁹ ԱԳԴԵ ամիս ԻԵ. եմուտ

¹⁰ Ե ջրօրհնէք

¹¹ Բ գարնանային

¹² ԳԴԵ ԺԱ. էն

¹³ Գ հոռոմոցն

¹⁴ Ե թուական

¹⁵ Բ հոռոմայոցն

¹⁶ Բ ապրիլի Ե ապրիլի

¹⁷ ԲԳԴԵ օրն

¹⁸ Ե հանապազորթ

¹⁹ ԳԴԵ ամսոյ

²⁰ ԳԵ ամսոյ

Կրումն Ջատկի այսպէս առնէին՝ կա՛լ հանապազ Խ., զվերադիրն ի բաց ե՛րթ, որ մնայ, լրումն է Ջատկի, ի Խ.էն Գ. գնաց, մնայ Լէ., Լ. տո՛ւր Ահկի ամսոյն, որ հասարակածն յԱհկի ամսոյն²¹ ժԳ էր, է. Մարերի լրումն է²² Ջատկի, արագիւտ²³ արա՛, կա՛լ զաւուրս ամսոյն Մարերոյ է.²⁴, եւթներեկն²⁵ Գ., կրկնակն²⁶ Գ., եղև ժե., և²⁷ ե՛րթ է., է.²⁸, ժԳ. գնաց, մնաց Ա., որ է կիրակի²⁹: Մարերի է. տո՛ւր ի³⁰ միւս կիրակին, լինի ժԳ. ի Մարերի³¹ Ջատկի: Ապրիլ ժԳ. լրումն է, օրագիւտ³² արա՛³³ Ապրիլ³⁴ ժԳ., կրկին գժԹ., է.երեակն Գ., ԻԲ., ԻԱ. գնաց, մնաց Ա., որ է կիրակի³⁵, Ապրիլ. ժԳ.³⁶ օրն կիրակի, տո՛ւր ի միւս կիրակին³⁷, լինի Ի. ապրիլի Ջատկի³⁸, է. ի վերայ ած, Գ. ամիսն³⁹ տո՛ւր, Վարդավառ է: Ապրիլ Ա., Մայիս Բ., Յունիս Գ., Յուլիս Իէ. ամիսն տուր՝ Վարդավառ է, Ը. ած ի վերայ Մարերոյ ժԳ.ին⁴⁰, ի⁴¹ Գ. ամիսն տո՛ւր, Վարդավառ է: Մարերի Ա., Մարգաց Բ., Հրոտից Գ., Աւելեաց Գ., Ը. ու⁴² ժԳ., լինի ԻԲ., Ե. օրն⁴³ տո՛ւր⁴⁴ Աւելեաց, ժէ. նաւասարդի եղև⁴⁵: Տե՛ս, որ Յուլիս Իէ. և⁴⁶ նաւասարդի ժէ. Վարդավառ է:

21 ԳԳե ամսոյ

22 ԳԳե > է

23 Բե օրագիւտ

24 Ե > է

25 Ե եօթներեկն

26 Դե կրկնակ

27 Գ > և

28 ԳԳե + է, է երթ, որ մնայ, Ջատկի է, է գնաց

29 ԳԳե + մարերի կիրակի

30 ԳԳե > ի

31 ԳԳե Ջատկի է ի մարերի ժԳ] ի մարերի Ջատկի

32 ԱԲ արագիւտ

33 ԳԳե > արագիւտ արա

34 ԳԳե > ապրիլ... մնաց Ա

35 Գ > որ է կիրակի

36 Գ > որ է ... ապրիլ ժԳ

37 Գ > որ է... ի միւս կիրակին

38 ԳԳե + Ջատկի է

39 ԳԳե ամիս

40 ԳԳե ժԳ] ժԳ ին

41 ԳԳե > ի

42 ԳԳե > ու

43 ԳԳե օր

44 ԳԳե > տուր

45 Գ և] եղև

46 Ե > և

Եւ նաւասարդի ամիսն հայոց տարեմուտ⁴⁷ է և սկիզբն ամսոց: Որ յամէն Գ. նաւակատիս⁴⁸ օր ետկոյս գայ, որ ի ՃԻ. տարին ամիսն մի ի միւս ամսոյ տեղն գայ, ՆԾԲ. տարի երեկ, նաւասարդի ամիսն հասաւ ի Մարտ ամսոյ ի Ի. ի միւս ամիսն, որ թվական⁴⁹ հայոց ՆԾԳ. էր և հռոմոցն⁵⁰ ՉԾԷ. էր մեծ թվական, նաւասարդի Ա. և Մարտի Ի. եղև գարնանային հասարակն, մինչ յայս ամս խիստ ուղիղ էր հայոց տոմար, բայց աստ Բ. շփոյթ⁵¹ անկաւ ի ներս. Ա. որ գարնանամուտն յառաջ էր, եղև զկնի, և միւսն որ Ձատկի լրման հանապազորդն Խ. էր, այլ ոչ գայր ուղիղ: Ձի մինչ յայս Խ. կալնէին⁵² Ձատիկն ի յԱհկի ամիսն, ի Մարերի, ի Մարգաց, ի Հրոտից և յԱւելեաց լինէր Ձատիկն: Յորժամ Ձատիկի լրումն առնէին, Խ. կալնէին, զվերադիրն ի բաց հանէին, այս ամսոց կիսակն զլրման արն⁵³ յայտնի ցուցանէին: Յորժամ ի նաւասարդի եմուտ Ձատիկն, նաւասարդի⁵⁴ կիսակ չունէր, երբ Խ. կալնէին⁵⁵, զվերադիրն ի բաց հանէին⁵⁶ ի ժ. աւուր⁵⁷ կուսնին հանդիպէր և ոչ ի ժե. կամ ի⁵⁸ ժՁ. կուսնին:

Յոհանես⁵⁹ վարդաապետն ի⁶⁰ Հաղբատոյ⁶¹, որ Սարկաւազ կոչի, զհանապազորդն սահմանեաց ԽՁ. և արար մեկնութիւն տոմարի և այլ ոչ յիշեաց, թէ երբ հասանէ Ձատիկն ի Քաղոց, ի յԱրաց, ի Մեհեկի և այլ յառաջ այլ ուղիղ չի գայր: Այլ այսպէս է գրեր, թէ գրեալ է նզովեալ է այն, որ առնէ Ձատիկ ի⁶² ներքոյ հասարակածին, նզովեալ է այն, որ առնէ Ձատիկ ի Դժ.ան կուսնին ընդ տիրասպան ազգին: Եւ նզովեալ է այն, որ առնէ Ձատիկ⁶³ ԻԳ. աւուր⁶⁴ կուսնին⁶⁵, իբր թէ ի⁶⁶ մէջ բաղարճակերացն⁶⁷ կու լինի⁶⁸ Ձատիկն: Բայց այժմ ի Իե.,

47 Գ-Գե տարեմուտն

48 ԲԳ-Գե տարի] նաւակատիս

49 Բե թուական

50 Բ հռոմայոցոցն

51 ԲԳե շփոթ

52 Գե կալնեն

53 ԲԳ-Գե օրն

54 Գ նաւասարդ

55 Գ-Գե կալնեն

56 Գ-Գե հանեն

57 Ե օր

58 ԲԳ > Ի

59 Ե Յովհաննէս

60 Գ > Ի

61 Գ Հաղբատոյ

62 Գ-Գե > Ի

63 Ե > Ձատիկ

64 Ե օր

65 Գ-Գ + Ձատիկ

66 Գ > Ի

67 Բ բաղարճակերացն, Գ-Գ բաղարճակերաց, Ե բաղարջակերաց

68 Ա լինի] կու լինի

ԻՉ. աւուր Լուսնին լինի Չատիկ: Եւ երբ Չատիկն հասանէ յԱրեգի, յԱհիի, Մարերի, Մարգաց և⁶⁹ Հրոտից քանի աւուր Լուսնին պիտի Չատիկ լինի: Եւ թէ ասէն Չատիկն յայն ամիսքն չի հասնիր, թէ աշխարհս շէն մնայ, փութով հասանէ:

Դարձեալ քեզ օրինակ ծոագատիկն, որ յառաջ, քանի հանապազորդն Խ. էր, և կիսակն չէր յաւելեալ, միշտ ի ԺԴ. Լուսնի դիպէր: Այլ այժմ ի ԺԶ. աւուր Լուսնին և ի մէջ բաղարձակերացն⁷⁰ ինչպէս ասէս թէ ծոագատիկ է, զի ոչ թէ բան զիրն հաստատէ, այլ իրն զբան⁷¹ հաստատէ: Եւ թէ ոք ասէ, թէ հայոց ամիսքն շարժական են, այլ հոռոմոցն⁷² անշարժք են, առ այս ասելի է, թէ ճիշտ⁷³ անշարժ են: Բայց Լուսնին հետ⁷⁴ հայոց ամսոցն կապակցեալ է, որ յամէն Դ. ամ Ա. աւր⁷⁵ յետկոյս⁷⁶ գայ հայոց ամիսքն և ծնունդ, Լուսնին լրումն, աւուրք Լուսնին և զրոպէն⁷⁷ Լուսնին⁷⁸ ամբողջ մնայ, որ այլ ազգի ամսով⁷⁹ այնպէս ուղիղ ոչ գայ, որպէս հայոց ամսով: Բայց յամէն Դ. ամ Ա. աւր⁸⁰ աւելի լինի, զայն օրն⁸¹ ի փետրվար ամիսն⁸² դնեն, որ Մարտ⁸³ անշարժ մնայ, այլ ամէն աւուր⁸⁴ Ժ. մասն ու կէս աւել է, քան⁸⁵ զԻԴ. ժամ աւուր, որ Ժ. մասն զե.⁸⁶ աւր աւելեացն շինէ⁸⁷ ու կէս մասունքն ի Դ. ամն զօր նահանջին շինէ⁸⁸: Այն նահանջի աւուր մասունքն ոչ ի վերագիրն և ոչ ի⁸⁹ ԹԺ. երեկն կերևայ, քանի որ հոռոմոցն⁹⁰ ամսովն ծնունդ Լուսնին⁹¹ առնես⁹² Բ. աւուր, քան զհայոց յետոյ կու լինի:

69 Դե > և

70 Գե > ի բաղարձակերացն

71 Բ գբանն

72 Բ հոռոմացոցն

73 Բե նշմարիս

74 Բ > հետ

75 Բե օր

76 Ե > կոյս

77 ԳԴե գառաբն և զրոպէն

78 ԳԴ > Լուսնին

79 Գ ամիսով

80 Բե օր

81 Դ աւրն

82 ԳԴե ամիս

83 Բե մարտն

84 Ե օր

85 ԳԴե > քան... Ժ մասն

86 Բ + ուր զե

87 ԳԴե շինեն

88 ԲԴե շինեն

89 Դ > ի

90 Բ հոռոմայոցն, ԳԴ հոռոմոց

91 ԳԴե > Լուսնին

92 Գ առնէր

Եւ դեկտեմբերի ելքն Բ. աւուրք Լուսին⁹³ յաւելի⁹⁴ կու լինի, քան զվերահիրն: Եւ թէ ասէ ոք, թէ միշտ այսպէս եղեալ է, արա՛յ աւուրք Լուսնի թվականի⁹⁵ առաջի ամն, որ վերոյ գրեցաւ⁹⁶, թէ Մարերի է. լրումն⁹⁷ Զատիկի է, աւուրք ամսոյն է⁹⁸ վերադիրն⁹⁹ Գ. եղև, ժ. կիսական Գ. ու կէս եղև աւուրք Լուսնի ժ.Գ. ու կէս:

Ապրիլ¹⁰⁰ ժ.Գ. էր լրում¹⁰¹ Զատիկի, ապրիլ ժ.Գ. վերադիրն Բ. եղև ժե. Ա. ու կես, կիսական եղև ժԶ. ու կէս, տե՛ս, որ Բ. աւուր պակաս է, բայց այժմ Բ. աւուր յաւել է, նոյնպէս ամէն ամաց կարգաւ արասցես: Երբ հայոց թվական¹⁰² եղև ՉԿե., Նաւասարդի¹⁰³ և Յունվար¹⁰⁴ գոյգ Ա. ար¹⁰⁵ տարեմուտ եղև յունվար Զ. ջրաւրհնէք¹⁰⁶: Գ. ամ այսպէս եղև, բայց չորրորդի¹⁰⁷ ամն¹⁰⁸, որ է նահանջ¹⁰⁹, որ թվական¹¹⁰ հայոց ՉԿԸ. էր, ի դեկտեմբեր ԼԱ. Նաւասարդի եղև տարեմուտ, Ա. տարին Բ. անգամ Բ. շփոյթ¹¹¹ յայն տեղն անկաւ ի տումարն¹¹²: Ա. որ աւելի թիւն անկաւ ի թվական¹¹³ և միւսն որ զնահանջի ամն արար առաջին ամ¹¹⁴:

Բայց զգոյշ¹¹⁵ լերո՛ւք, թուի ինձ շատ տեղ շփոյթ¹¹⁶ ձգէ ի տումարն¹¹⁷: Մեղայ Աստուծոյ Ռ. բիւր անգամ, որ տգէտ եմ¹¹⁸:

93 Գե Լուսնին

94 Գե աւելի

95 Ե թուականի

96 Գ վերագոյացաւ Ե վերոյ գոյացաւ] վերոյ գրեցաւ

97 Գ լրում

98 Գ.Գե > է

99 Գե վերադիր

100 Գե ժե ապրիլ] ապրիլ

101 Գ նոյնպէս կարգաւ զամէն ամսոյ արասցես] լրում Զատիկի... կիսական եղև ժԶ... Բ աւուր յաւել է

102 Բ թվականն, Ե թուական

103 Գ + Ա

104 Գե + Ա

105 Բե or

106 Բ ջրաւրհնէք, ԲԳ, Ե ջրօրհնէք

107 Ե չորրորդին

108 Գե > ամն

109 Գ յունվար, Ե յունվարի Ա

110 Բե թուական

111 Ե շփոթ

112 Գ տումարն

113 Ե թուական

114 Գ ամն

115 Ե զգոյշ

116 Ե շփոթ

117 ԲԳ տումարն

118 Գ.Գե > ու տգէտ եմ

Դարձեալ տոմարի պատճէն¹¹⁹ ասէ, թէ ձմռան եղանակն ՂԲ. է, բայց ի նահանջի ամին ՂԳ. լինի, զայն աւելի աւուր ժ. մասն ու կէս կու խնդրեմ ու շեմ իմանայր¹²⁰, թուի թէ այս մասունքս զԼուսին առաջ տանին¹²¹: Եւ Մարտի¹²² Ի. հասարակ տունչեան և գիշերոյ: Եւ թէ այժմուս քննես, ի ժԱ. լինի հասարակն և ոչ ի Ի., նոյնպէս և դարձ Արեգական և ամենայն եղանակք այնպէս:

Այլ ոչ թէ¹²³ զառաջին սուրբ հարքն¹²⁴ ասեմ¹²⁵, թէ չիմացան, քաւ և մի՛ լիցի, բայց զամենայն ճիշտ¹²⁶ և ստույգ գրեցին ի շնորհաց Հոգւոյն¹²⁷ Սրբոյ լի¹²⁸ և¹²⁹ անթերի: Բայց այժմ յամսոցդ և ի մասանցդ¹³⁰ եղև, որպէս և գրեցաւ:

ДЖУЛИЕТТА ЭЙНАТЯН

ПАСХА И “КРИВАЯ ПАСХА” (3). СОЧИНЕНИЕ КАЛЕНДАРОВОЕДА
XVII В. АВИКА “О КРИВОЙ ПАСХЕ”

Ключевые слова: подсчеты, накопившиеся отклонения, Луна, пасха, равноденствие, третий 532-летний пасхальный период, монастырь Лим.

В средние века разногласия различного характера между армянской и соседними церквями иногда переходили в прямое противостояние. Одним из поводов для этого является установление даты пасхи, так как четыре раза за 532 лет (552-1084 гг.) армянская церковь этот праздник отмечала на неделю позже других церквей (“кривая пасха”). В нашей первой статье, посвященной данной проблеме, представлена история “кривой пасхи” в 570, 665, 760, 1007 гг. (*Эчмиадзин*, 2017, № 4, сс. 122-134), во второй статье – соответственно в 1102, 1197, 1292, 1539 гг. (*Вестник Матенадарана*, № 24, 2017, сс. 261-284).

В настоящей статье речь о “кривой пасхе” в 1634, 1729, 1824 гг., когда расчеты пасхи отклонялись от точной даты из-за неправиль-

¹¹⁹ ԳԳԵ պանկն

¹²⁰ Թմանար

¹²¹ ԳԳԵ > թուի...տանին

¹²² ԲԳԵ մարտ

¹²³ ԳԵ > թէ

¹²⁴ Բ հայրքն

¹²⁵ Ե ստեմ] ասեմ

¹²⁶ Ե ճշմարիտ

¹²⁷ Բ հոգուն, Գ հոգոյն

¹²⁸ ԳԵ > լի և

¹²⁹ Դ > և

¹³⁰ Ե > յամսոցդ և ի մասանցդ ԳԳ > ի մասանցդ

ных наблюдений возраста луны в дни весеннего равноденствия. Об этом пишет календаровед XVII века Авик.

Критический текст ранее не изданного труда Авика составлен нами на основе пяти рукописей Матенадарана.

JULIETTA EINATYAN

EASTER AND “ERRONEOUS EASTER” (3). *ON ERRONEOUS EASTER BY CALENDAR EXPERT AVIK, 17TH CENTURY*

Keywords: calculation, accumulated errors, Moon, Easter, equinox, third Paschal 532-year cycle, Lim monastery.

In the Middle Ages, various disagreements between the Armenian and neighbouring churches sometimes turned into direct confrontation. One of the reasons for this was determining the date of Easter, since four times in 532 years (552-1084) the Armenian Church celebrated the feast one week later than the other churches (“erroneous Easter”). The author’s first article dedicated to this problem presents the history of the “erroneous Easters” of 570, 665, 760, and 1007 (*Ejmiadzin*, 2017, № 4, pp. 122-134), while the second one, those of 1102, 1197, 1292, and 1539 respectively (*Bulletin of Matenadaran*, № 24, 2017, pp. 261-284).

The present article focuses on the “erroneous Easters” of 1634, 1729, and 1824, when Easter calculations deviated from the correct date as a result of inaccurate observations of the Moon during the vernal equinox. This is the topic of the calendric work by Avik (17th century).

The critical text of Avik’s never-before-published treatise is based on five manuscripts kept in Matenadaran.

ՀԱՍՄԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՏԱՄՈՔՍԻ ԵՎ ԱՂԻՆԵՐԻ ԽՈՑԱՅԻՆ ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ¹

Բանալի բառեր՝ ստամոքսի խոցային հիվանդություն, ախտորոշում, բուժում, ձեռագիր աղբյուր, արյուն, բժշկապետ, բորբոս, *Helicobacter pylori*:

Արդի ժամանակաշրջանում աղեստամոքսային ուղու հիվանդությունների շարքում մեծ տեղ են գրավում խոցային հիվանդությունները, որոնք առաջանում են ախտածին գործոնների ազդեցության ներքո (ստրես, սննդակարգի խանգարում, որոշ հակաբորբոքային դեղամիջոցների, նիկոտինի, ալկոհոլի, սուրճի չարաշահում և այլն): Վերջին տարիներին, որպես կարևոր էթիոլոգիական գործոն, հայտնաբերվել է նաև *Helicobacter pylori* մանրէն: Դրանց ազդեցության դեմ պայքարելու նպատակով, մեր օրերում ստեղծվել է ստամոքսի ու աղիների խոցային հիվանդությունների բուժման մի բարդ համակարգ: Չնայած այդ ասպարեզում ձեռք բերված զգալի հաջողություններին, վերջինս տակավին չի լուծում վերոհիշյալ հիվանդությունների բուժման հետ կապված բոլոր հարցերը: Ուստի, մեր հայացքը դարձնելով անցյալի փորձին, հիշենք, որ հաճախ «նորը լավ մոռացված հինն է»:

Միջնադարում հայ բժիշկներն, անշուշտ, չունեին հետազոտման համար անհրաժեշտ մեթոդային սարքավորումներ ու լաբորատորիաներ, բայց լսելով հիվանդի գանգատներն ու հիմնվելով նրա արտաքին տեսքի և արտաթորանքների ուսումնասիրության, ինչպես նաև շոշափման, բախման ու ունկնդրման եղանակով ստացված տվյալների վրա, կազմում էին հիվանդության մասին ճիշտ պատկերացում ու առաջարկում իրենց կողմից փորձված ավանդական դեղամիջոցներ, որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել նաև արդի բժշկության համար: Ուստի, փորձենք վերլուծել նրանց հայացքները նշված հիվանդությունների էթիոլոգիայի, պաթոգենեզի, կլինիկական ախտաբանության ու բուժման հարցերի վերաբերյալ:

Յավոք, մեզ չի հասել XIII դարի հայ դասական բժշկության հիմնադիր Մխիթար Հերացու «Ախտաբանութիւն»-ը: Սակայն «Ջերմանց մխիթարութիւն» (1184 թ.) գրքում նա առաջ է քաշել «բորբոսի»՝ որպես վարակիչ հիվանդու-

¹ Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում Մատենադարանի բազմավաստակ գիտնական, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստելլա Վարդանյանին, որի խորհրդով և դեկավարությամբ գրվել է սույն հոդվածը:

թյունների հարուցչի իր վարկածը²: Վերջինս, ըստ անվանի հայ բժշկապատմաբան Լևոն Հովհաննիսյանի՝ մինչ մանրէաբանական շրջանի գաղափարներից առավել մոտ է ճշմարտությանը³:

Նրա հետնորդներից մեկը՝ XIII դարի բժիշկ Գրիգորիսը, «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» գրքում օգտագործեց «բորբոս» եզրը աղեստամոքսային ուղու հիվանդությունների հարուցիչը նկարագրելիս⁴: Արդյո՞ք դա *Helicobacter pylori*-ի ինտուսիտիվ կանխագուշակումը չէր հեռավոր անցյալում: Գրիգորիսի գրքում նկարագրված են ստամոքսացավերի, այդ թվում նաև ստամոքսի ու աղիների խոցի, ախտանիշներն ու վնասակար բորբոսի գոյացման պատճառները⁵: Ըստ հեղինակի՝ ստամոքսի տաքությունից առաջացած բորբոսային հիվանդության նշանները հետևյալն են. հիվանդը զկուտում է, նրա բերանից գոլորշի է դուրս գալիս, իսկ լնդերից ու թուքից՝ աղբի կամ ձկան հոտ: Գրիգորիսը քաջածանոթ էր ստամոքսի խոցային հիվանդության կլինիկական ախտանիշների ողջ համալիրին, ուտելուց հետո առաջացող մարսողության խանգարման (դիսպեպսիայի) նշաններին՝ ծանրության զգացողությանը, գլտոցին, նոզկանքին, բերանի տհաճ համին (հատկապես առավոտյան ժամերին), այրոցին ու փսխմանը: Հեղինակից չեն վրիպել նաև ստամոքսակաթիլի նեղացման դեպքում փսխման զանգվածում առկա վաղուց ընդունած սննդի մնացորդները:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում աղեստամոքսային ուղու հիվանդությունների ախտորոշման եղանակները, որոնք նշված են միջնադարյան բժշկարաններում:

Վիեն. 540 ձեռագրում⁶, XVI դարի փորձառու բժիշկ Գալուստ Ամասիացին տալիս է ստամոքսի և աղիների խոցերի ախտորոշումը կղանքի միջոցով: Ըստ նրա՝ երբ ստամոքսում դեղին մաղձը կամ «սաֆրան» ավելանում է, այն պակասեցնում է շարժողական ուժը և նույնիսկ կարող է ստամոքսում խոց առաջացնել: Իսկ եթե կղանքի հետ խառնված արյուն է դուրս գալիս, ապա այն հուշում է, որ խոցեր են առաջացել աղիներում: Արյան մեջ թարախի առկայությունը, ըստ նրա, խոսում է այն մասին, որ խոցը տեղակայված է ուղիղ աղիքում: Հեղինակը նկատում է նաև, որ եթե արյունն ու թարախը կղանքից առաջ

² Ջեռագիր ՄՄ 416, ք. 51բ- 54ա:

³ Լ. Ա. Օգանեսյան, *История медицины в Армении в 5 томах*, т. 2, Ереван, 1946, с. 120-121.

⁴ Գրիգորիս, *Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց*, աշխատասիրությամբ Ա. Կոռյանի, Երևան, 1962, ներածություն, էջ XX-XXI:

⁵ Ջեռագիր ՄՄ 415, ք. 76ա-86բ:

⁶ Վիեն. քիվ 540 (Մ. Մատեանադարանում պահվող միկրոժապավեն), էջ 35:

են դուրս գալիս, ապա խոցը վերին աղիքում է տեղակայված, իսկ եթե կղանքից հետո՝ ստորին աղիքում:

Որպես նկարագրություն ինքնուրույն միավոր, միջնադարյան բժշկության մեջ ստամոքսի խոցային հիվանդությունն աղեստամոքսային ուղու այլ հիվանդություններից առանձնացրեց պարսիկ բժիշկ Իբն Սինան կամ Ավիցենան (980-1037 թթ.) իր «Կանոնի» երրորդ գրքում⁷: Այստեղ նա տալիս է ստամոքսի խոցի ախտաբանության ու բուժման այնպիսի լիարժեք նկարագրություն, որը բավական մոտ է ժամանակակից պատկերացումներին: Ըստ որում, հեղինակը նույնիսկ հղումներ չի կատարում հին իմաստունների գործերին, ինչպես նա անվանում է անտիկ շրջանի բժիշկներին, քանզի սույն գլխում նա հաճախ հանդես է գալիս որպես նորարար: Հայտնի է նաև, որ «Բժշկության իշխանը» (այսպես էին կոչում Իբն Սինային միջնադարում) բարձր էր գնահատում Հայաստանի բուսական, կենդանական ու հանքային դեղամիջոցները: Հատկապես նա գովաբանում էր հայկական կամ իր խոսքով «անիական կավը» (*Bolus armena*), որին առանձին գլուխ է նվիրել «Կանոնի» երկրորդ գրքում⁸:

Իբն Սինան գրում է, որ խոցերն ստամոքսում առաջանում են ստամոքսահյուսվածքի սրուկյան պատճառով, նաև այլ օրգաններից արտադրվող նյութերից, որոնք իջնում են գլխից, ստեղծելով թարախային միջավայր: Հյուսվածքի շարունակական իջնելու դեպքում ստամոքսը թարախակալում է և քայքայվում: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ արաբական, ինչպես և անտիկ բժշկության ոլորտում, բացակայում էր Հերացու նորարար «բորբոսի» գաղափարը, որի փոխարեն հանդես էր գալիս հինը՝ «թարախային»-ը⁹: Անդրադառնալով ստամոքսի խոցի ախտանիշներին, Իբն Սինան նշում է, որ հիվանդի մոտ առկա է շնչառության նվազում, առատ քրտնարտադրություն, ուշագնացություն և վերջույթների սառեցում: Նա տալիս է նաև ստամոքսի խոցի դիֆերենցիալ ախտորոշումը: Կերակրափողի խոցի և ստամոքսաբերանի (*pylorus*) խոցի միջև տարբերությունը, ըստ «Կանոնի» հեղինակի՝ կայանում է նրանում, որ կերակրափողի խոցի ժամանակ ցավն արտահայտվում է թիկունքում թիակների միջև, և պարանոցում կրցքավանդակի վերին հատվածում: Խոցի դիրքը որոշվում է կերակրի կլլումի միջոցով: Վերջինս ցույց է տալիս, թե որ հատվածն է ցավում: Եվ երբ կերակուրն անցնում է այդ հատվածից, ցավը փոքր-ինչ խաղաղվում է:

⁷ *Ибн Сина, Канон врачебной науки в 5 томах*, т. III/1/, Ташкент, 1979, с. 663-664 (այսուհետև՝ *Канон*).

⁸ *Канон*, т. II, Ташкент, 1982, с. 305.

⁹ Ստեփան Վարդանյան, Հայաստանի բժշկության պատմություն, Երևան, 2000, էջ 99-100:

Իսկ ստամոքսաբերանի խոցի ժամանակ ցավն ավելի ուժեղ է լինում և արտահայտվում է կրծքավանդակի ստորին հատվածում ու որովայնի վերին մասում: Կուլ տված կերակուրն անցնում է կրծքավանդակի հատվածով, և ցավը հաճախ տեղափոխվում է որովայնի պատերի շրջան: Եթե խոցը տեղակայված է ստամոքսի հատակում, ապա կղանքով դուրս են գալիս խոցի թեփուկները:

Իբն Սինան տարբերակում է ստամոքսի խոցն աղիքայինից՝ ցավի դիրքով և նշում, որ ստամոքսի խոցի ժամանակ այն գտնվում է որովայնի շատ ավելի բարձր հատվածում: Նա զգուշացնում է, որ հաճախ խոցային հիվանդությունը շփոթվում է դիզենտերիայի հետ: Սրտխառնոցի հետևանքով դուրս եկած թեփուկները խոսում են կերակրափողում և ստամոքսում առկա խոցի մասին:

Բուժումն, ըստ Իբն Սինայի՝ հետևյալն է. ստամոքսում ձևավորված թարմ վերքը պետք է բուժել կապոդ դեղորայքով, արագ նշանակել հեշտամարս կերակուր և խուսափել խոց առաջացնող դեղորայքից, որոնց թվին են պատկանում անօրգանական բնույթի դեղամիջոցները՝ պղնձարջասպ, սպիտաճ (CERUSSA), թուլթիա (ցինկի օքսիդ) և նմանատիպ այլ միջոցներ: Ստամոքսի խոցի քայքայումը կարելի է բուժել, նախօրոք մաքրելով այն մեղրաջրի և ճուլապի օգնությամբ, ընդ որում, մաքրող միջոցը չպետք է ունենա այնքան ուժեղ գործունեություն, որ ավելացնի խոցոտումը: Եթե կա բացահայտ քայքայում և մեռուկացած հյուսվածք, պետք է օգտագործել այնպիսի դեղորայք, որի միջոցով կվերականգնվի ախտահարված հատվածը և նոր հյուսվածք կաճի: Իբն Սինայի այս մոտեցումը կիրառվում է նաև արդի բժշկության մեջ: Նա մեծ կարևորություն էր տալիս սննդակարգին: Երբ խոցը սկսում է մաքրվել, հարկավոր է հիվանդին խմեցնել կովի թան, որից հանված է սերը, նաև մատուցել սերկևիլի և նուան եփուկ: Այսպիսի հիվանդներին օգտակար է գարու ջուրը նուան հետ, կապոդ մրգերի խտացրած հյուսվածք, երբեմն էլ անհրաժեշտ է լինում նրանց կերակրել քացախի մեջ պահված հորթի և այծի ստամոքսով:

Իբն Սինան զգուշացնում է բժշկին. «Խմացի՛ր, քանի դեռ ստամոքսը չես մաքրել բոլոր կեղտերից, չի լինի որևէ օգուտ քո տված բուժումներից և վերականգնող դեղամիջոցներից: Եթե խոցը գտնվում է կերակրափողի հատվածում կամ ստամոքսաբերանում, պետք է ընտրես այնպիսի վերականգնող դեղորայք, որոնք ունեն ուժեղ սոսնձող հատկություն, օրինակ՝ գազի խեփը (astragalus tragacantha L.): Երբեմն ստամոքսի խոցի ժամանակ ցուցված է նաև սաքը, մանավանդ եթե առկա է արյունային փսխում: Օգտակար են նաև կանեփի սերմերը և դառը օշինդրը»¹⁰: Ի դեպ, Իբն Սինան, ում ողջ գիտակից կյանքում հետապնդել է դաժան թուրք սուլթան Մահմուդ

¹⁰ Канон, т. III/1/, с. 664.

Ղազնեհին, ինքն էլ երկար ժամանակ տառապել է, անշուշտ, ստրեսային վիճակում առաջացած աղեստամոքսային ուղու խոցային հիվանդությամբ, որից և վախճանվեց 57 տարեկանում¹¹:

Միջնադարյան հայկական բժշկության մեջ XV դարի հայ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացին (1420/25-1496 թթ.), իբն Սինայի նման, առաջինն առանձնացրեց ստամոքսի խոցի նկարագրությունն այլ աղեստամոքսային հիվանդություններից: Նրա «Օգուտ բժշկութեան»¹² հիմնարար աշխատության մեջ տրված են ստամոքսի խոցի պատճառագիտությունը, նշանները, ախտորոշումն ու բուժումը: Անդրադառնալով հիվանդության առաջացման պատճառներին, նա գրում է. «/Այն/ ուռեց է, որ ճղեղ է և տեղն խոց է եղել. և կամ սուր խառնուած է իջել ի գլուխն և ժամանակաւ զստամոքսն խոց է արեր»¹³: Հետաքրքիր է նկատել, որ Ամիրդովլաթն իր մեջբերումն արել է ոչ թե «Կանոն»-ից, որտեղ, որպես պատճառ, նշված են սոսկ Հիպոկրատեսի հումորալ տեսության համաձայն՝ գլխից իջնող սուր հեղուկները, այլ IX դարի արաբ հեղինակ Մասուայի որդու (Զաթքար Մուհամադ Բեն Մուսա) գրքից¹⁴: Ամիրդովլաթ Ամասիացին չէր սահմանափակվում լոկ արաբ բժիշկների գրքերի ուսումնասիրությամբ, նա օգտվում էր նաև անտիկ հեղինակների գործերից, մեջբերումներ անելով հույն բժիշկ Դիոգենես Ապոլոնիացի, Ք. ա. VI-V դդ. աշխատությունից¹⁵:

Հիվանդության ախտանիշների մասին «Օգուտ բժշկութեան» երկում հակիրճ ասված է. «Նշան ստամոքսի խոցին այն է, որ սուր և կամ թթու ուտե՛ ստամոքսն ցավի, և բերանն ի վեր տայ, և արտաքս գէտ թարախ ելանէ խառն, և թիկնամէջն մինչև ի պորտն ցալի»¹⁶:

Բուժման հարցում Ամիրդովլաթը հիմնվում էր Հայաստանի բուսական, կենդանական ու հանքային դեղամիջոցների հարուստ շտեմարանի վրա:

Հիվանդության բուժման մասին «Օգուտ բժշկութեան» գրքում նշված է. «Ստածումն ստամոքսի խոցին. դեղն այն է, որ տաս մեղրաջուր և ճուղի: Եւ թէ յիմանաս որ ցան ի տաֆէ լինի՝ տուր յայնժամ զայս դեղերս, շատ օգտե: Առ խունկ, աղբրաց արինն-ե (5-5) դրամ և ճուղինար (վայրի նուան ծաղիկ – Հ. Հ.) և ֆահրուպար (սաթ – Հ. Հ.) Բ-Բ (2-2) դրամ, և հայկաւ Դ (4) դրամ. զամէնն աղա և մաղէ և տուր բոնող (կապող – Հ. Հ.) մրգերով, և

¹¹ Канон, т. I, предисловие Б. Д. Петрова, с. XV-XXXIII.

¹² Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, խմբագրությամբ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940 (այսուհետև՝ Օգուտ բժշկութեան):

¹³ Ձեռ. ՄՄ 414, ք. 314ա:

¹⁴ Օգուտ բժշկութեան, էջ 530:

¹⁵ Նույն տեղում, էջ 529:

¹⁶ Ձեռ. ՄՄ414, ք. 314ա:

սերկևիլի ջուր և խնձորի և ուր նման է սոցա»¹⁷: Այս դեղատոմսը, որի մեջ մտնում են հայկական ավանդական դեղամիջոցներից «աղբրաց արին»-ը և հայկավը, Ամիրդովլաթի հակայական բժշկական փորձի դրսևորումներից մեկն է:

Հարկ է նշել, որ Ամիրդովլաթի մոտ և այլ բժշկարաններում հայերեն դեղանունների կողքին (հայկավ, սաթ, աղբրաց արին, նուան ծաղիկ, վարդի ջուր) հանդես են գալիս նրանց արաբերեն ու արաբացված պարսկերեն տարբերակները՝ طين ارمني والانى (տին արմանի վա-լ-անի), كبريا (քահրուպար կամ քահրուբա), دم الاخوين (դամալ-ախավայն), جلتان (ճուլինար) և جلاب (ճուլապ): Վերջինս լատիներեն դեղագիտարաններում դարձել է *Julep* կամ *Jularium*¹⁸:

Ուշադրության է արժանի նաև, որ միջնադարյան դեղագիտարաններում առկա դեղաբույսերի անունները հաճախ բազմիմաստ են ու պատկանում են տարբեր բուսաբանական ընտանիքների ներկայացուցիչների: Այսպես, օրինակ՝ «ճուլինար»-ը ոչ միայն վայրի նուան (*Balaustion Hook, Fam. Myrtaceae*), այլ նաև մշակովի նուան (*Punica granatum L., Fam. Punicaceae*) անունն էր, իսկ «աղբրաց արին» էր կոչվում ոչ միայն Հայաստանի բուսաշխարհում (օրինակ՝ Քանու ձորում) այժմ հազվագյուտ հանդիպող գեղեցիկ արյունագույն ծաղիկը (*Phelypea coccinea Poir., Fam. Orobanchaceae*), այլ նաև հեռավոր Օմանի կղզում աճող վիշապենու կամ վիշապածառի (*Dracaena draco L, Fam. Liliaceae*) կարմիր խեժը: Այս նույնանուն եզրերն ունեին նման բուժական սպեկտր՝ հակախոցային, արյուն կանգնեցնող, կապող, սոսնձող և այլն: Այստեղ, հավանաբար, կարևոր դեր էր խաղում և գունային նմանակությունը, կապված ավանդական նմանաբուժության (*homoeopathia*) պատկերացումների հետ (օրինակ՝ արյունահոսությունը բուժում էին կարմիր բույսերով) և այլն:

Հայ բժշկապետը կարևորում էր նաև ստամոքսի խոցի սննդային բուժումը, կապող մրգերի և հատկապես՝ նուան հյութի կիրառումը: Միջնադարյան հայկական բժշկարաններում դարեր շարունակ հավաքված այս թանկարժեք փորձը դեղագիտության ու սննդաբուժման ասպարեզում այսօր էլ կարող է պիտանի լինել ստամոքսի ու աղիների խոցային հիվանդությունների բուժման համար:

¹⁷ Ձեռ. ՄՄ414, ք. 314ա:

¹⁸ Амйрдовлат Амасиаци, *Неужное для неучей*, комментированный перевод с армянского С. А. Варданян, Москва, 1990, сс. 200, 270, 448, 685, 690, 758, 793; *Mechithar's des Meister Arztes aus Her "Trostbei Fiebern"*, aus dem Mittelarmenischen übersetzt und erläutert von **Dr. med. Ernst Seidel**, Leipzig, 1908, S. 121, 158, 276, 301.

АСМИК АЙРАПЕТЯН
ЯЗВЕННАЯ БОЛЕЗНЬ ЖЕЛУДКА И КИШЕЧНИКА В
СРЕДНЕВЕКОВЫХ АРМЯНСКИХ ЛЕЧЕБНИКАХ

Ключевые слова: язвенная болезнь желудка, диагноз, лечение, рукописный источник, кровь, *бжикапет* (“глава врачей”), плесень, *Helicobacter pylori*.

В статье дается сравнительный анализ взглядов восточных и армянских средневековых врачей относительно этиологии, патогенеза, клинической симптоматики и лечения язвенной болезни желудка и кишечника.

В прошлом, как и в настоящее время, язвенная болезнь была частым явлением в ряду заболеваний желудочно-кишечного тракта (ЖКТ), возникающих под влиянием патогенных факторов.

Выдающийся армянский *бжикапет* (“глава врачей”) XII века Мхитар Гераци, в трактате *Утешение при лихорадках* выдвинул теорию, согласно которой причиной инфекционных заболеваний является живой возбудитель – плесень. Армянский врач XIII века Григорис в трактате *Анализ природы человека и его недугов* использовал термин “плесень” при описании болезней ЖКТ. Возможно, это было интуитивным предсказанием существования *Helicobacter pylori*, обнаруженного современной наукой.

В наши дни создана сложная система лечения язвенной болезни желудка и кишечника. Несмотря на значительные успехи в этой области, многие вопросы здесь еще ждут своего решения. В средневековой армянской медицине эта проблематика также была довольно актуальна. Великий армянский *бжикапет* XV века Амирдовлат Амасиаци в своем фундаментальном труде *Польза медицины* приводит целый ряд рецептов для лечения язвенной болезни ЖКТ, среди которых важное место занимают лекарства растительного и минерального происхождения, а также пищевые средства. Этот ценный опыт в области фармакологии и диетологии, хранящийся в средневековых армянских лечебниках, и сегодня может быть полезен для лечения вышеназванного заболевания.

HASMIK HAYRAPETYAN
PEPTIC ULCERS OF STOMACH AND INTESTINES IN MEDIEVAL
ARMENIAN MEDICAL BOOKS

Keywords: stomach ulcers, disease of stomach, diagnosis, treatment, hand-written source, blood, *bzheshkapet* (“chief physician”), mould, *Helicobacter pylori*.

This article provides a comparative analysis of the views of ancient, Arab and medieval Armenian physicians regarding the etiology, pathogenesis, clinical symptomatology and the treatment of stomach and intestine peptic ulcers.

Since ancient times, peptic ulcers have been a widespread disease of the gastrointestinal tract (GIT). They occur under the influence of a number of pathogenic factors (stress, dietary disorders, abuse of some anti-inflammatory drugs, nicotine, alcohol, coffee, etc.).

In his treatise *Relief of Fevers*, the 12th-century outstanding Armenian *bzheshkapet* (chief physician) Mekhitar Heratsi put forward an innovative theory, according to which the cause of infectious diseases was a living pathogen –mould. In his treatise *Analysis of Human Nature and his Ailments*, Grigoris, an Armenian physician of the 13th century, used the term "mould" while describing the cause of GIT diseases. Perhaps this was an intuitive prediction of *Helicobacter pylori*, discovered by modern science.

Today, a complex system for treating peptic ulcers has been developed. Despite significant success in this field, many issues still await solution. In medieval Armenian medicine, this problem was also quite relevant. In his fundamental work *The Benefits of Medicine*, the eminent 15th-century physician Amirdovlat Amasiatsi gives a number of prescriptions for the treatment of the disease, which include medicines from herbs and minerals, as well as dietary instructions. This valuable information in the field of pharmacology and dietology can be found in medieval Armenian medical books (*bzheshkarans*) and today can be useful for the treatment of peptic ulcers.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ԳՈՀԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒՋԱՆԴԱՑՈՒ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

(1896-1897 թթ.)

«Շուետի հեռաւոր երկրին մէջ հայոց համար համակրութիւն ստանալ
դժուարին ձեռնարկութիւն էր: Ես սակայն փորձեցի...»:

Նորայր Բյուզանդացի

Հրատարակութեան ենք ներկայացնում ականավոր հայագետ, լեզվաբան, բանաստեղծ, Նորայր Բյուզանդացու (1845 Վ. Պոլիս-1915 Վենետիկ)¹ անտիպ նամակները՝ գրված 1896-1897 թթ. Շվեդիայի մայրաքաղաք՝ Ստոկհոլմից: Ստոկհոլմում ն. Բյուզանդացին ապրել է ավելի քան քսան տարի (1882-1903 թթ.)² «միակ պարապմունք ունելով զուսուժնասիրութիւն Հայ լեզուի եւ գրականութեան»: Բազմաթիվ հոդվածներով աշխատակցել է հայագիտական հանդեսներին, ինչպիսիք են՝ Վ. Պոլսի «Մասիս»-ը, Փարիզի «Բանասէր»-ը, Տիբուրի «Մշակ»-ը, «Լուսնայ»-ն, Վիեննայի «Հանդէս ամսօրեայ» -ն եւ այլն:

Սակայն քչերին է հայտնի, որ Բյուզանդացին հայագիտական, բանասիրական բնույթի հրատարակութեան բացի գրել է նաեւ «շար մի յօդուածոց» 1894-1896 թթ. հայկական կոտորածները³ մասին, որոնցում իր բողոքի ձայնն է բարձրացրել Օսմանյան կայսրութիւնում տեղի ունեցող հայերի զանգվածային ջարդերի դեմ: Դրանք դատապարտող խիստ հողվածներում ու ելույթներում ներկայացնելով «զանօրէն Աբդուլ Համիդն»⁴ իբր միակ հեղինակ Հայոց

¹ Ն. Բյուզանդացու կենսագրության և գիտական ժառանգության մասին տե՛ս Մ. Մինասեան, «Ն. Բիւզանդացու կեանքը, հրատարակութիւնները եւ դիւանը», Բազմալէզ, 1983, էջ 39-97, Գ. Ղազարյան, «Նորայր Բյուզանդացու Վենետիկ եւ Վիեննա անտիպ ուսումնասիրությունը», ԲՄ 22, Երևան, 2015, էջ 473-480:

² 1881 թ. Վ. Պոլսում ամուսնացել է Շվեդիայի արհունիքի լուսանկարչուհի, ազգությամբ շվեդ՝ Սելմա Յակոբսոնի հետ և 1882-ից տեղափոխվել Ստոկհոլմ: Կնոջ մահվանից հետո՝ 1903 թ. հեռացել է Ստոկհոլմից և հաստատվել Վենետիկում, որտեղ էլ ապրել է մինչև կյանքի վերջը:

³ 1894-1896 թթ. Սուլթանական կառավարությունը կազմակերպեց հայերի դաժան ու անմարդկային մասսայական կոտորածներ՝ կանոնավոր զորամասերի «համիդիե» զնդերի, ոստիկանության ու այլ ավագակախմբերի ձեռնով: Այդ կոտորածներին զոհ գնաց 300 հազար հայ, 100 հազար բռնի դավանափոխ եղավ, նույնքան էլ տարագրվեց օտար երկրներ (Ռուսաստան, Ամերիկա և այլն):

⁴ Աբդուլ Համիդ երկրորդ (1842-1918)՝ քուրդ սուլթան 1876-1909 թթ.:

կոտորածներուն⁵», նա մեղադրել է նաև Եվրոպական տերություններին հանցավոր թողտվության մեջ, որ «թոյլ կու տան շարդել եւ ջնջել զհայս»:

«Նոտոր ճանապարհներով» ստանալով «վաւերական գրութիւնս Հայոց կոտորածներու մասին» (Մուշից, Մարզվանից, Բաղեշից, Սեբասիայից)⁶, Նորայրն այն որպէս «տեղեկագիրս» օգտագործել է իր ելույթների ու հոդվածների համար, թարգմանել ֆրանսերէն եւ հանձնել Ստոկհոլմում հրատարակվող Aftonbladet⁷ և Stockholms Dagblad⁸ լրագրերին, փորձելով քրիստոնյա աշխարհի ուշադրութիւնը հրավիրել Հայոց հարցի վրա, ինչպէս նաև շահել շվեդ ժողովրդի կարեկցանքն ու համակրանքը «հանդեպ Հայոց»։ «Շուետի հեռաւոր երկրին մէջ Հայոց համար համակրութիւն ստանալ՝ դժուարին ձեռնարկութիւն էր: Ես սակայն փորձեցի...»:

Շնորհիվ իր հրապարակումների, 1896 թ. հունվարին Ստոկհոլմում բացվել է հանգանակութիւն «ի նպաստ Հայոց»:

Նույն թվականի մարտի 3-ին Կ. Եգյանին⁹ ուղղված նամակում կարդում ենք. «Յղեցի այսօր Վսեմութեանդ Stockholms Dagblad լրագրի Յունուար 13, 15, 17, 21, 27 թիւերը: Յունուար 13-21 շորս թիւերն կը պարունակեն զիմ յօդուածս Հայ խնդրոյն նկատմամբ, 27-ի թուոյն մէջ կը տեսնէք երկայն յօդուած մի Utan hopp ? (գղ. Sans espoir ?) [«Առանց հույսի»] վերնագրով, զոր խմբագրապետն Տէր C. O. Montan գրեց իմ խնդրանօք՝ առ ի շարժել կարեկցութիւն Շուետացոց ի վերայ տառապեալ Հայոց Հայաստանի: Տ. Մոնտան նոյն 27ի թուոյն մէջ բացաւ նաև հանգանակութիւն ի նպաստ Հայոց. նուիրատուաց առաջին ցանկն այս օրերս պիտի հրատարակուի լրագրին մէջ»¹⁰:

Հայկական շարդերի վերաբերյալ ելույթով Ն. Բյուզանդացին հանդես է եկել նաև Ստոքհոլմի Գիտութիւնների Ակադեմիայի դահլիճում կայացած նիստում, (1896 թ. հոկտեմբերի 21ին) որին մասնակցել էր ավելի քան 400 մարդ. «Գումարումնն բացուեցաւ իմ բանախօսութեամբ, նկարագրեցի զմեր եղբարց ողբալի եւ յուսահատական վիճակն. շնորհակալութիւն յայտնեցի Շուետացոց այն ազնիւ մարդասիրութեան համար, զոր մինչև ցարդ ցուցուցին եւ տակա-

⁵ Որպէս 1894-1896 թթ. ցեղասպանության կազմակերպիչ և գլխավոր պատասխանատու սուլթան Աբդուլ Համիդ II-ը ստացել է «կարմիր սուլթան», «արյունոտ սուլթան», «մարդասպան», «մեծ ռեազոր» անունները:

⁶ Տե՛ս Գ. Ղազարյան, «Համիդյան կոտորածների վկայությունները», Վեմ, Երևան, 2010, N 2 (30), էջ 152-165:

⁷ Aftonbladet [Շաբաթվա լուրեր], հիմնադրվել է 1830 թ., ունի սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն:

⁸ Stockholms Dagblad [Ստոկհոլմի օր], լույս է տեսել 1824-1931 թթ., բնույթով պանկանոնական:

⁹ Կարապետ Եգյան (1835 Մոսկվա-1905 Պետերբուրգ)՝ բանասեր, պատմաբան:

¹⁰ Մատենադարանի արխիվ. Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235Բ, վավ.105:

ւին կ'ուզեն ցուցնել հալածեալ Հայոց, եւ խնդրեցի որ միացնեն զհւրեանց ջանքերը միւս քրիստոնեայ ժողովրդոց հետ»:

Նրա ելույթներն ու հրապարակումները մեծ արձագանք գտան բարեսիրտ ու կարեկից շվեդների մոտ, որոնք իրենց նյութական և մարդկային աջակցութիւնը ցուցաբերեցին թուրքական սպանդից փախած հայ հալածյալներին ու սովյալներին: Այդ են վկայում նրա հետևյալ տողերը. «Այս ամէն բանախօսութեանց եւ յօռուածոց արդիւնքն եղաւ ստանալ զՇուետացւոց համակրութիւնն մեզ համար եւ զհւրեանց դրամական նպաստաւորութիւնն...»:

Կարևորելով և գնահատելով «ազնիւ օտարազգեաց» մարդասիրական նախաձեռնութիւնը, «որ առանց նիւթական շահու, պարզապէս յանուն մարդկութեան եւ յանուն քրիստոնէութեան, կը համակրեն Հայոց եւ բանիւ եւ գրով կը պաշտպանեն զանոնք», Նորայրը նամակներով դիմում է հայազգի իր գրչակիցներին, մտերիմներին, հորդորելով որպէսզի նրանք «յայտնեն զհւրեանց» շնորհակալութիւնը «առ լրագիրն» եւ իրենց երախտագիտութիւնը «մատուցին Շուետացւոց»:

Ստորև ներկայացվում են Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվի՝ Նորայր Բյուզանդացու ֆոնդում պահվող նամակներ՝ հասցեագրված «Մշակ»¹¹ խմբագրութեանը, Ալ. Աբեղյանին¹², պոլսեցի ուսուցչուհիներ Մարի Մյուհենտիսյանին և Արշակուհի Պետրոսյանին: Նամակներում¹³ տեղ գտած ֆրանսերեն բառերի և արտահայտութիւններին՝ Արուս Բոյաշյանի հայերէն թարգմանութիւնը բերված է քառակուսի փակագծերում:

¹¹ «Մշակ»՝ հասարակական-հաղափական, գրական թերթ: Հրատարակվել է 1872-1921 թթ., թիֆլիսում: Հրատարակման տարիները համընկնում են Արևելյան ճգնաժամի հետ: «Մշակ»-ի էջերում մեծ տեղ են զբաղեցրել ինչպէս Հայկական հարցի և թուրքիայում հայերի ծանր կացության վերաբերյալ նյութեր, այնպէս էլ ժողովրդի լուսավորության, հայ գրականության ու արվեստի զարգացման հարցեր:

¹² Ալեքսանդր Աբեղյան (1858-1940)՝ հայ դրամատուրգ: 1872-ից բնակվել է Բաբվում: Աշխատակցել է «Մշակ», «Արձագանք», «Տարազ», «Մուրն» և այլ պարբերականներին:

¹³ Նամակները ներկայացնում են մի նույնությամբ՝ պահպանելով հեղինակի ուղղագրությունը:

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

1

Մեծապատիւ խմբագրութիւն Մշակի

29 Յունուար 1896

Յուսամ ընդունեցաք զվեց ուրբիւն, զոր յղեցի ամսոյս 22ին, գին վեցամսեայ բաժանորդութեան Մշակի:

Խնդրեցի ի C. O. Montanէ՝ C. O. Montan լրագրի խմբագրապետէն, որ յանձնարարէ Շուետի քրիստոնեայ ժողովրդեան օգնել Թուրքիոյ Հայոց: Տ. Մոնտան սիրով կատարեց զիմ խնդիրն, լրագրին Յունուար 27ի թուոյն մէջ գրելով ընդարձակ խմբագրական մի, յորում հիմնուելով իմ յօդուածոց վերայ՝ կ'ողբայ զանտանելի թշուառութիւն հայ քրիստոնէից. շատ սրտաշարժ եւ շատ պերճախօս է իւր յօդուածն: Նոյն թուոյն մէջ Տ. Մոնտան բացաւ նաեւ Հանգանակութիւն ի նպաստ Հայաստանի Հայոց, եւ Յունուար 27ի առաւօտն՝ երբ գնացի ի խմբագրատունն, որպէս զի շնորհակալ ըլլամ Տ. Մոնտանէ, ըսաւ ինձ ուրախութեամբ, որ այլեւայլ բարեսէր անձինք առդէն իսկ փութացեր էին տալ ոմն 25 քրունա (1 քրունա = 1 փրանկ 40 հարիւրորդ), ոմն 30 քրունա, եւ այլն եւ այլն: Կրագիրն շատ ազդեցիկ թերթ մի ըլլալով, կը յուսամ որ Հանգանակութիւնն ըստ ամենայնի կը յաջողի:

Ես զիմ հայրենասիրական պարտս կատարեցի եւ այլ եւս կը կատարեմ յօժարութեամբ: Բայց նկատմամբ այն ազնիւ օտարազգեաց՝ որ առանց նիւթական շահու, պարզապէս յանուն մարդկութեան եւ յանուն քրիստոնէութեան. կը համակրեն Հայոց եւ բանիւ եւ գրով կը պաշտպանին զանոնք, Հայոց պարտքն է որ յայտնեն զիւրեանց երախտագիտութիւնն առ այնպիսի ազնիւ անձինս: Կը խնդրեմ որ անյապաղ շնորհակալութեան նամակ յղէք, կա՛մ յանուն Մշակի, կա՛մ յանուն Տիգրանի Հայ հասարակութեան առ հետեւեալ երկու անձինս ի Ստոքհոլմ:

Առ Monsieur Prof. Ferdinand Schulthess (Շուլթէս), Directeur du Telegrambyrå, Stockholm (Suède): Սա ջերմ բարեկամ է Հայոց, բաւական համարեցէք զայս շափս, վասն զի աւելի բան չկարեմ ըսել:

Առ Monsieur C. O. Montan, Directeur du "Stockholms Dagblad", Stockholm (Suède). առ սա կարէք գրել գաղղիերէն կամ գերմաներէն. իսկ առ Տ. Շուլթէս՝ գաղղիերէն:

Երեկի թուոյն մէջ ալ կայր յօդուած մի, զոր Ստոքհոլմցի ոմն ուղղած է առ խմբագրութիւն լրագրին ի նպաստ Հայոց:

Ուրախ եմ որ իմ յօդուածներս անօգուտ չեղան: Կը պարսաւեմ զանօրէն Աբդիւլ Համիդն՝ որ կ'ուզէ կա՛մ տաճկացնել զՀայս Հայաստանի, կա՛մ բնաջինջ ընել. բայց աւելի կը պարսաւեմ զքրիստոնեայ տէրութիւնս՝ որ թող կուտան անօրինին ջարդել եւ ջնջել զՀայս:

Աւասիկ թէ ինչպէս կ'աւարտի իմ Conclusionս [եզրակացութիւնս].

“...Il était d’autant plus urgent...” [*.. Առավել քան հրատապ էր...*] այլն:
 Կը սպասեմ շարունակութեան Մշակի Դեկտեմբեր 150 թիւէն սկսեալ: Լաւ
 կ’ըլլայ որ մի եւ նոյն օրը յղէք զնամական առ Տ. Շուլթէս եւ առ Տ. Մոնտան:
 Խորին մեծարանօք մնամ Ձերդ նորայր

Մատենադարանի արխիվ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ,
 վավ. 98:

2

Սիրելիդ իմ Տէր Ա. Աբելեանց

1 Փետրուար 1896

Հնկալայ զՁեր նամակն 1895 Դեկտեմբեր 16 (հ. տ.) թուականաւ եւ զԱ-
 թանասեանցի «Երեւանի նահանգի բուսականութիւնը»¹, որոյ համար մեծապէս
 շնորհակալ եմ Ձեզ:

Ես հրատարակեցի շար մի յօդուածոց քաղաքիս Stockholms Dagblad
 լրագրին մէջ, Յունուար 13 (A), 15 (B), 17 (C), 21 (D). Կը գտնէք զայնս ներ-
 փակեալ: “Utan hopp?” [*«Առանց հուսի»*] գեղեցիկ յօդուածն (27 Յունուար)
 խմբագրութիւնն գրեց իմ խնդրանօք. ներփակեալ կը գտնէք եւ զայն. նոյն
 թուոյն մէջ “Fran Armenien” նամակն նոյնպէս ես հաղորդած եմ: Խմբագրու-
 թիւնն բացաւ նաեւ Հանգանակութիւն ի նպաստ Հայոց. (տե՛ս “Utan hopp?”
 յօդուածին վերջը):

Մշակի խմբագրութեան հաղորդեցի միայն զգլխակարգութիւնս 4 յօդուա-
 ծոցս գաղղիերէն լեզուաւ, եւ զվերջաբանն, նոյնպէս գաղղիերէն. ծանուցի
 նաեւ որ St. Dagblad Հանգանակութիւն բացած է ի նպաստ Հայոց: Եթէ հա-
 մարձակէիք շուետերէն, գաղղիերէն կամ գերմաներէն նամակ մի գրել առ
 Monsieur C. O. Montan, Directeur du “Stockholms Dagblad”, Stockholm
 (Suède), եւ շնորհակալ ըլլալ այն շերտ համակրութեանն, զոր կը ցուցնէ առ
 մեր արտասուելի Ազգն, կարծեմ շատ լաւ կ’ըլլար: Ուրիշ երկրի լրագրիներ ա-
 նօրէն Թուրքէն կաշառք կ’ընդունին, որպէս զի պաշտպանեն զԹուրքն եւ վատ
 խօսին Հայոց վերայ, իսկ Տ. Մոնտան՝ պարզապէս յանուն մարդկութեան եւ
 քրիստոնէութեան կը պաշտպանէ զՀայս. քան զայս մեծ ազնուութիւն եւ
 բարութիւն ի՞նչ կրնայ ըլլալ:

Խնդրեմ ողջունեցէք սիրով յինէն զՁեր պատուական հայրն եւ եղբայրն, եւ
 ընդունեցէք զհաւաստիս իմ բարեկամութեան:

Կինս կ’ողջունէ զՁեզ մեծարանօք:

Նորայր

Մատենադարանի արխիվ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ,
 վավ. 99

¹ Նկատի ունի հետևյալը՝ Երեւանի նահանգի բուսականութիւնը, Աշխատասիրեց Յովհ.
 Աթանեսեանց, Երևան, տպ. Պսակ լրագրի, 1881, 96 էջ:

3

Իմ սիրուն եւ հիֆ Օրիորդ Մարիս

3 Փետրուար 1896

Ի՞նչպէս արձածեմ ի ձեզ յոյս եւ մխիթարեմ զձեզ՝ երբ ես ինքնին բոլորովին յուսահատ եմ եւ անմխիթար: Դարերէ ի վեր բարդուած յանցանքներու եւ սխալներու պատիժն է զոր կը կրենք. եւ ոչ ուրեք կը տեսնեմ խելացի եւ ճշմարիտ հայրենասէր մի որ կարող ըլլայ դարման մատուցանել մեր անդարմանելի վիճակին: Ո՛հ այդ Պոլսեցի եկեղեցականներդ եւ մեծատուններդ, Ազգին կարծեցեալ առաջնորդներդ եւ երեւելիներդ. ի Պատմութենէ գիտէի թէ ո՛րչափ անմիտ եւ անպիտան մարդիկ եղած են հին օրերուն մէջ, եւ անձամբ ալ հասու եղայ իրենց անմտութեան ու անպիտանութեան 1869-1873 եւ 1879-1882 տարիներուն մէջ: Փախի՛ք այդ անիծեալ երկրէդ, սիրելիդ իմ, փախչելով միայն կարէք ազատիլ. անարգեցէ՛ք Բոսպորի գեղեցկութիւնն ալ, օդն ալ, ջուրն ալ, ամէն վայելքներն ալ: Հաւատացէ՛ք ինձ որ Եւրոպայի յետին գիւղին բնակութիւնն բիւր անգամ ընտրելի է, քան թէ գարշելի մայրաքաղաքիդ բնակութիւնն, ուր մեր հայրերն եւ պապերն աններելի թեթեամտութեամբ հաստատուելով, խարսխուելով կարծած են գտնել գերջանկութիւն: Հայն մեծ թերութիւն մ'ունի, որ է կենցաղասիրութիւնն. կ'աշխատի, կը տառապի որպէս զի ոսկի դիզէ, կեանք վայելէ եւ վայելեցնէ իւրայնոց, բայց չմտածեր որ անապահով երկրի մէջ՝ ի միում վայրկենի թէ՛ յընչից կարէ զրկուիլ, թէ՛ կենաց: Փախի՛ք, սիրելիդ իմ, ազատեցէ՛ք զձեզ. եթէ յԱրեւմուտս դիմելդ դժուար է, Տիփլիս շատ հեռու չէ ձեռնէ. հարուստ չէք, բայց մտացի էք, ուսեալ էք, քաջասիրտ էք, կարէք ձեր աշխատութեամբն ապրիլ, եւ ոչ եւս կը տանջուիք այժմու անտանելի եւ ամենօրեայ կասկածանօքն՝ թէ արդեօք յանկարծակի պիտի կողոպտուի՞ք, պիտի սպանուի՞ք: Ո՛ր էր թէ զձեզ եւ զայլ քանի մի սիրելիս՝ զորս ունիմ ի քաղաքիդ՝ կարենայի հրաւիրել ի Ստոքհոլմ եւ հայթայթել գործ, որպէս զի բարեկարգ երկրի մէջ գո՛հ եւ ապահով ապրէիք: Հայրենիք² չեմ ստանար. կ'երեւի թէ խափանուած է: Ափսոս Արփիարի³: Ո՛ր Գարակէօզեանն է սպանեալն՝ չիմացայ: Արդեօք դժողքն այժմու Պոլսէն ավելի՞ զարհուրելի տեղ է՞ չգիտեմ:

Կինս շատ ուրախ է որ կը սիրէք զինքն. ինք եւս կը սիրէ զձեզ, եւ գորովանօք կը համբուրէ:

Ստէպ ստէպ հաղորդեցէք ինձ զձեր լուրս սիրելիդ իմ Օրիորդ Մարի, վասն զի ձեր վիճակն մեծապէս անհանգիստ կ'ընէ զիս: Սիրով կ'ողջունեմ զՏիկին

² «Հայրենիք» օրաթերթ, լոյս է տեսել 1891-1896 թթ., Կ. Պոլսում, շեշաված դեմոկրատական ուղղութեան համար հալածվել է սուլթանական կառավարության կողմից:

³ Խոսմն արևմտահայ արձակագիր, հրապարակախոս, խմբագիր, գրաֆնմանադատ Արփիար Արփիարյանի (1851-1908) մասին է: Խմբագրել է «Մասիս», «Արևելք», «Նոր կյանք», «Հայ հանդես», «Շիրակ» թերթերը, այդ նաև «Հայրենիք» պարբերականը:

մայրդ եւ զՏիկինն Ջարուհի քոյրդ, ի սրտէ մաղթելով ամենուդ ազատութիւն եւ ապահովութիւն

մնամ միշտ Ձեր

Նորայր

Մատենադարանի արխիվ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ.,
վավ. 101

4

Սիրեցեալդ իմ Օրհորդ Արշակունի

5 Փետրուար 1896

Հնկալայ զձեր թուղթս Դեկտեմբեր 31ի եւ Յունուար 28ի թուականօք: Ես մեծ յոյս չունէի որ առատ հունձք պիտի գտնէիք ի Մանչեստրը, եւ ոչ իսկ ի Լոնդոն. վասն զի գիտէի որ արդէն իսկ երկու Հայ գաղթականութիւնքդ նպաստած էին մեծամեծ գումարներով: Բայց ո՛րչափ եւ ո՛րչափ կը գտնուին յայլեւայլ տեղիս մերազգի «ոսկում բեռնաւորեալ էշեր» որ փող մի անգամ չեն տար յօգուտ հայրենեաց եւ սովամահ ողորմելեաց: Յաւեցայ լսելով որ «տէր-տէրական» խնդիր կայ ի Մանչեստրը եւ թէ Հ. Պարոնեան⁴ պարտաւորեալ է հեռանալ:

Քաղաքիս “Stockholms Dagblad” լրագրին մէջ հրատարակեցի շար մի յօդուածոց (շուետերէն) Հայոց խնդրոյն մասին, Յունուար 13, 15, 17, 21: Խմբագրապետն իմ խնդրանօք գրեց նաեւ ընդարձակ եւ շատ գեղեցիկ յօդուած մի Յունուար 27 ի թերթին մէջ, մեծ համակրութիւն ցուցանելով մեր ազգին եւ յանձնելով Շուետի քրիստոնէից որ օգնեն Հայոց քրիստոնէից. այս նպատակաւ բացաւ նաեւ Հանգանակութիւն ի նպաստ Հայոց, զորոյ արդիւնս յուսամ քանի մի օրէն կը հրատարակէ: Հաւաքեալ դրամն պիտի յղուի առ Ուէստմինստրի⁵ դուքսն: Կրագիրն սիրով պիտի հիւրընկալէ զո՛ր եւ է յօդուած որ հաղորդեմ զՀայոց: Եթէ Դուք հաճէիք ուղղել թուղթ մի (գաղղիերէն) առ Monsieur C. O. Montan, Directeur du “Stockholms Dagblad”, Stockholm (Suede), ըսելով որ Հայ աղջիկ մի էք եւ լսած էք որ ամենայն ազնուութեամբ Տ. Մոնտան կը պաշտպանէ զՀայս եւ յօգուտ նոցա կ’աշխատի, եւ թէ շնորհակալ էք իւր անչափ մարդասիրութեան, կարծեմ շատ ախորժելի կ’ըլլայ Տ. Մոնտանի ձեր գիրն:

⁴ Խոսքը Սուփաս (Հովհաննէս) Պարոնյանի (1831-1903) մասին է՝ բանասեր, Վիեննայի Միսիթարյան Միաբանության անդամ: 1895 նշանակվել է Մանչեստրի (Անգլիա) հայերի հոգևոր առաջնորդ:

⁵ Վեստմինսթեր [Westminster] վանք, Լոնդոնի պատմական շրջանում, Թեմզայի ձախ ափին: Վեստմինսթերում են գտնվում Մեծ Բրիտանիայի գլխավոր կառավարական հիմնարկությունները՝ պառլամենտը, նախարարությունները, վարչապետի նստավայրը, թագավորների նստավայր Բեֆինգհեմյան պալատը, Վեստմինսթերյան տաճարը:

Գեղեցիկ է մտածութիւնդ որով կը փափագիր ճիւղանդներու եւ գիւղացիներու նուիրել զձեր կեանս: Կինն Հրեշտակ մի է որ տառապեալ մարդկութեան արտասուքը կը սրբէ, ցաւերը կը մոռացնէ, կը մաղթեմ ձեզ զօրութիւն եւ կատարեալ յաջողութիւն:

Շնորհակալ եմ լուսանկարիդ: Ի «տեսութիւն» կը գրէք ինձ ձեր կրկին թղթոց մէջ ալ. ուրախ կ'ըլլամ եթէ փափագ ունիք ի Ստոքհոլմ գալու, եւ աւելի ուրախ՝ եթէ զփափագդ իրագործէք. կինս կը հանէ յայնժամ զձեր կենդանագիրն՝ անխոժոռ՝ առանց «բարբարոս Թուրքերու բանակին» ազդած զարհուրանաց, ես եւս կը խօսիմ ձեր հետ մտերմաբար զանազան կարեւոր նիւթոց վերայ՝ մերթ ես զձեզ, մերթ դուք զիս տեղեկացնելով:

Մեր բանն յուսահատ է, սիրեցեալդ իմ Օրիորդ Արշակունի, եթէ Հայաստան աւերակաց եւ դիականց կոյտ մի դառնայ, եւ Հայաստանէն դուրս՝ միայն Ձեթուն մի կանգուն մնայ իւր 20-25,000 հայերով: Ես չեմ հաւատար Հայաստանի փրկութեան մինչեւ որ չկործանի անիծեալ Թուրքաց տէրութիւնն, մինչեւ որ անօրէն մահմետականք բնաջինջ չըլլան ի մեր հայրենի աշխարհէն:

Դեկտեմբերի 23ին գրեցի առ Comité Anglo-Arménien [Անգլա-Հայկական կոմիտե] ի Լոնդոն, որպէս զի բարեհաճին յղել առ իս լուրս, տեղեկութիւնս, documents [փաստաթղթեր], եւ այլն, եւ ես հրատարակեմ զայնոսիկ ի Stockholms Dagblad. արժանի չեղայ պատասխանուոյ: Իրաւունք չունէի՞ ըսելու թէ «ցրուած ոյժերը միացնել չենք գիտեր»:

Ողջ եղիք Սիրելիդ իմ: Ձերդ ի սրտէ

Նորայր

Մատենադարանի արխիվ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ., վավ. 102

5

Սիրեցեալդ իմ Օրիորդ Արշակունի

18 Փետրուար 1896

Յղեցի Ձեզ զերեկի Stockholms Dagblad լրագրի թիւն. Յդ երեսին Չդ սինակին ստորոտն կ'ըսէ բաւականապէս թէ որչափ ախորժեղի եղած է Տ. Մոնտանի ձեր գիրն, որմէ շատ ախորժեցայ ես իսկ: Պիտի յղեմ զայն եւ առ Մշակ. հաղորդե՞մ զանունդ թէ լռեմ, խնդրեմ ծանուցանէք ինձ փութով: Ի նմին երեսի Den armeniska frögan երկար յօդուածի վերնագիրն կը նշանակէ La question arménienne [հայկական հարց (շվեդերեն եւ ֆրանսերեն)]:

Ձերդ ի սրտէ

Նորայր

Մատենադարանի արխիվ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ., վավ. 103

6

Սիրեցեալդ իմ Օրհորդ Արշակունի

6 Մարտ 1896

Հնկալայ գԶեր թուղթս Փետրուար 17ի եւ 22ի, նոյնպէս զանգղիական հրատարակութիւնսն զորս յղեցիք երկու անգամով. շնորհակալ եմ մեծապէս:

Stockholms Dagbladի երեկի թուոյն մէջ հրատարակեցաւ Առաջին ցանկն նուիրատուութեանց ի նպաստ Հայոց. գումարն է 1983 քրունա, 75 էօ-նէ, այսինքն գրեթէ 110 ստեռլին: Մեծագոյն նուէրն է 300 քրունա (1 քրունա = 1 փրանկ 40 հարիւրորդք), փոքրագոյնն՝ 1 քրունա. Տ. Մոնտան նուիրած է 25 քրունա: Աւասիկ լրագրապետ մի՞ որ ոչ միայն ձրի կը պաշտպանէ գՀայս իւր թերթին մէջ, այլ եւ յօգուտ նոցա դրամ եւս կը նուիրէ՝ այսպիսի ազնիւ անձ մի զձեր եւ զիմ միայն շնորհակալիս ընդունեցաւ: Դրամն լաւ է. բայց լոկ դրամ չբաւեր. բիւրաւորք կոտորեցան, եւ թերեւս կոտորին. բիւրաւորք ալ տաճկացան, եւ պիտի տաճկանան եթէ Անգղիա բանիւք միայն շատանայ, եթէ Ռուսիա անգործ մնայ: Ես բողոքովին անյոյս եմ. Հայութիւնն պիտի ջնջուի Թուրքի Հայաստանէն: Մեր նախորդաց անմտութիւնն եւ տգիտութիւնն ահա թէ ուր պիտի հասցնէր զմեզ: Թող Պոլսի հայ երեւելիներն շարունակեն լիզել զոտս անօրէն Աբգիւ Համիդի. թող եկեղեցական եւ աշխարհական առիթ չփախցնեն նախատել եւ հարուածել զկաթողիկէոյ եկեղեցին եւ զբողոքական եկեղեցին: Թէ այսչափ համակրութիւն ստացանք մեր ներկայ աղետալի վիճակին մէջ յնրոպայի եւ Ամերիկայի քրիստոնէից, շնորհիւ կաթողիկէոյ Հայոց եւ բողոքական Հայոց է: Եթէ ի կաթողիկէոյ եկեղեցոյն բաժնուած՝ գոնէ յունական եկեղեցոյ հետ մի ըլլայինք, Յոյնք եւ Ռուսք ձեռն կուտային մեզ:

Կարդացի լրագիրս⁶ որ Հռոմայ Պապն⁷ 75,000 փրանկ նուիրած է Հայոց:

Figaro լրագրին 27 Փետրուար թուոյն մէջ ալ կարդացի որ Յ-4 շաբաթուան մէջ 82,000 փրանկ նուիրած է առ Père Charmetant, Directeur des Ecoles d'Orient [Հայր Շարմըտան, Արեւելյան դպրոցների տնօրէն], յօգուտ Հայոց. թող զհազարաւոր ստեռլինս Անգղիացի բողոքականաց, եւ զ21/2 միլիոն փրանկն Ամերիկացի քրիստոնէից: Տեղեկացայ, որ E. Drumont (Հրէից

⁶ Խոսքը վերաբերում է Վիեննայում (1887-ից) լոյս տեսնող «Հանդէս Ամսօրեայ» հայագիտական հանդէսին, տե՛ս 1896 ապրիլ, էջ 123:

⁷ Հռոմի Պապ Լեոն 13-րդ (1810-1903), գահակալել է 1878-1903 թթ.: 1896 թ. իրադարձությունների ժամանակ տեղեկացված լինելով Համիդյան կոտորածների մասին, Լեոն 13-րդը սուլթանին կոչ էր արել վերջ տալ հայերի հանդէպ իրականացվող ցեղասպանությանը և զթույնն ցուցաբերել:

թշնամին) իւր La Libre Parole⁸ լրագրին 26 Փետրուարի մէջ յօդուած մի հրատարակած է ի նպաստ Հայոց: Եթէ Տ. Մոնտանի նման ձրի գրած է Drumont, ամենայն շնորհակալութեան եւ երախտագիտութեան արժանի է: Անգղիոյ Հայք անտարակոյս կը յայտնեն զիւրեանց շնորհակալիս առ ամենայն օտարագգիս որ կ'աշխատին յօգուտ մեր ամենաթշուառ Ազգին:

Տրտմեցայ լսելով որ դժոխքէն՝ ի Կ. Պոլսէ ազատած՝ պիտի դառնաք ի դժոխսդ:

Ձանգղիերէն գրութիւնսդ հաղորդեցի Տ. Մոնտանի՝ որպէս զի առնու ինչ որ կը յօժարի: Ես եւս կը հաղորդեմ նմա (թարգմանութիւններ) այլ եւ այլ տեղեկագիրս՝ որ հեռաւոր եւ խոտոր ճանապարհներէ կը հասնին յիմ ձեռս:

Ողջ եղեք, Սիրելիդ իմ Օրիորդ Արշակունհի, եւ ինձ նման մի՛ յուսահատիք. դուք քան զիս յոյժ մանկագոյն էք, եւ թերեւս տեսնէք զմեր Ազգին լաւ օրերն զորս ես տեսնելու յոյս չունեմ: Ես յոգնած եմ յանապատի քարոզելէ. միակ միսթարութիւնս այն է որ յետ մահուս պիտի փնտռուիմ, բայց կարելի է թէ այս եւս սուտ միսթարութիւն է:

Ձերդ

Նորայր

Մատենադարանի արխիվ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ., վավ. 106

7

Սիրեցեալդ իմ Օրիորդ Արշակունհի

20 Մարտ 1896

Հնկալայ զՁեր ամսոյս 11ի թուղթն. նոյնպէս զArménie,⁹ Հնչակ,¹⁰ եւ այլեւայլ գաղղիերէն եւ անգղիերէն լրագրաց հատուածներն, եւ զBlue Book [Կապույտ գիրքը] մեծապէս շնորհակալ եմ: Շնորհակալ եմ նաեւ որ թելագիր եղած էք ձեր ծանօթներուն երախտագիտական գիր ուղղել առ Տ. Մոնտան, որոյ լրագիրն կը շարունակէ հրատարակել տեղեկութիւնս զմեր ցաւալի վիճակէն, եւ յորդորել զՇուետացիս որպէս զի մասնակցին հանգանակութեան: Երե-

⁸ Eduard Adolphe Drumont (1844-1917)՝ ֆրանսիացի գրող, լրագրող: 1892-ին Փարիզում հիմնադրել է «La Libre Parole» [Ազատ խոսք] թերթը: Այն լոյս է տեսել մինչև 1924 թ., ունեցել է ֆաղափական ուղղվածություն:

⁹ «Arménie» ֆաղափական գրական լրագիր: Լոյս է տեսել 1885-1923 թթ. Մարսելում: Նկարագրել է արևմտահայերի ծանր վիճակը և նրանց նախապատրաստել ազգային-ազատագրական պայքարի, հույսը չկապելով եվրոպական տերությունների հետ:

¹⁰ «Հնչակ» հասարակական-ֆաղափական ամսաթերթ, Հնչակյան կուսակցության կենտրոնական օրգան: Լոյս է տեսել 1887-1915թթ.: Պրոպագանդիկ է Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու գաղափարը, լուսաբանել Հայկական հարցը, արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարը:

կի երեկոյան թուռն մէջ կար երկար յորդոր մի (ամբողջ մի սինակ) այս նպատակաւ:

Շատ հետաքրքիր էի տեսնել Հնչակի թիւ մի. ուրախ եմ որ ծանօթացուցիք ինձ զթերթդ: Ինձ այսպէս կ'երեւի որ լաւագոյն էր հրատարակել եւրոպական լեզուաւ (կամ լեզուներով) եւ ձրի յղել առ գլխաւոր եւրոպական եւ ամերիկեան լրագիրս: Երկու տարիէ ի վեր ամենակարեւոր երեւցած էր ինձ հրատարակել այլեւայլ լեզուներով գիրք մի զՀայոց եւ զՀայ խնդրոյն, ամփոփելով զմեր Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Գրականութիւն, վաւերական վկայութեամբք մեր պատմագրաց. նկարագրել թէ ո՛րչափ արիւն թափած են Հայք Քրիստոսի սիրոյն համար: Այլոց եւս հաղորդեցի զիմ մտածութիւն: Պէտք էր իբրեւ շարունակութիւն նոյն գրոց հրատարակել հետզհետէ գարշելի Համիդին հրամայած ջարդերուն մանրամասնութիւնները, պաղատել քրիստոնէայ ժողովրդոց (եւ ոչ թէ Տէրութեանց) զթուփինը եւ օգնութիւնը: Երբեք այսպիսի անողոք հալածանք կրած չէինք. վերջին հարուածն է որ կը տրուի մեր ոգեսպառ Ազգին: Պէտք էր նոյնպէս ունենայինք կեդրոնական մասնաժողով մի եւ խելացի գլխաւոր մի, որպէս զի ամենայն հայրենասէր Հայք կեդրոնին հետ կապուած՝ մի եւ նոյն ուղղութեամբ աշխատէին եւ միացնէին իրենց ոյժերն:

L'Arménieի 1 Mars թուռն մէջ կարդացի որ Drumont կոչեր է զանօրէնն Abd-ul-Hamid le Massacreur [Աբդուլ Համիդ ջարդարար]. ես եւս իմ յօդուածոյս մէջ կոչեցի զնա Abd-ul-Hamid le Sanguinaire [Աբդուլ Համիդ արյունարբու]. բայց Տ. Մոնտան չհամարձակեցաւ եւ ջնջեց:

Արփիար գաղղիական շոգենաւով փախեր է ի Կ. Պոլսէ (Մշակ, 20 Փետրուար)¹¹: Կը մաղթեմ որ յաջողեք ապահովել զՁեր վիճակն յԱնգղիա կամ ի Պարիս, եւ պէտք չունենաք դառնալոյ ի Պոլիս: Պէտք է որ Հայք փախչին ի Պոլսէ, փախչին ի Հայաստանէ. ազատութեան ուրիշ ճար չկայ:

Ողջ եղիք, Միրելիդ իմ Օրիորդ Արշակունի. իբրեւ բարի եւ ազնիւ Հայ աղջիկ շարունակեցէք աշխատել յօգուտ մեր արտասուելի եղբարց. խօսեցէք եւ գրեցէք Ձեր ընտիր մտօք եւ ամենալաւ սրտիւ, մաքառելով ընդդէմ տգիտութեան, այն թանձր տգիտութեան՝ որու զոհ եղած է մեր եղկելի Ազգն:

Ձերդ ի սրտէ

Նորայր

Մատենադարանի արխիվ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, քոթ. 235 Բ., վավ. 110

¹¹ Հայկական շարդերի ժամանակ, 1896թ., Արփիար Արփիարյանը խուսափելով բուրձական կառավարության հալածանքներից անցել է արտասահման (եղել Անգլիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում) և այնտեղ շարունակել ակտիվ գործունեությունը:

8

Սիրեցեալդ իմ Օրհորդ Արշակունի

1 Մայիս 1896

Ընկալայ զձեր թուղթն Ապրիլ 14 ի եւ զՀնչակի 7^ր թիւն. այս առաւօտ ընկալայ զՏ^ր թիւն եւ զԶոհրապի Haik and Belus [Հայկ եւ Բել]: Շատ շնորհակալ եմ:

Stockholms Dagblad հրատարակեց իւր Ապրիլի 8 թուոյն մէջ որ ի նպաստ Հայոց հանգանակեալ դրամէն յղեր է 100 ստեռլին առ Ուէստմինստրի դուքսն, եւ թէ ի դիմաց դքսին՝ Edward Atkin շնորհակալութեան գիր ուղղեր է առ խմբագրութիւնն: Atkinի նամակն հրատարակեալ էր շուետերէն թարգմանութեամբ նոյն թուոյն մէջ: Atkin կը գրէ թէ 100,000 ստեռլինի պէտք կայ, եւ կը խնդրէ ի խմբագրութենէն որ ի Ստոքհոլմ հաստատուի Մասնաժողով մի Շուետի համար, եւ կղերն բարեհաճի աշակցիլ հանգանակութեան գործոյն:

Շուետի հեռաւոր երկրին մէջ Հայոց համար համակրութիւն ստանալ՝ դժուարին ձեռնարկութիւն էր: Ես սակայն փորձեցի իմ երկու յօդուածներովս Aftonbladet մէջ, եւ երբ St. Dagblad առաջարկեց ինձ որ շար մի յօդուածոց գրեմ սիրով յանձն առի: Տեսնելով որ Տ. Մոնտան ինքնաբերաբար յօժարեցաւ հանգանակութիւն բանալ լրագրին մէջ, կարեւոր համարեցայ ծանուցանել զայս այլեւայլ թղթակցացս՝ որպէս զի բարեհաճին շնորհակալութիւն յայտնել առ լրագրին, եւ իրենց երախտագիտութեան արտայայտութեամբ յորդոր եւ գրգիռ մատուցանեն Շուետացւոց որ նուիրեն մտադիւր զիւրեանց նպաստն: Թղթակիցներէս միայն դուք միշտ ազնիւ, փութացայք կատարել զիմ փափագն. միւսներն՝ եւ ոչ պատասխան արժանի համարեցան գրել: Կը ցաւիմ որ եւ ոչ այն անձինք առ որս դուք դիմեցիք՝ յօժարեցան երկտողիւ շնորհակալ ըլլալ Տ. Մոնտանի: Ձեր նամակն՝ որ սրտանց գրուած էր՝ շատ լաւ տպաւորութիւն գործած էր իմ ծանօթներուս վերայ. կը յուսայի որ այնպիսի քանի մի նամակներ կ'արժարժէին զհամակրութիւն Շուետացւոց: Այլ եւս յոյս չունիմ որ հանգանակութիւնն յաջողութեամբ շարունակուի:

Հայերէն Հնչակներն եւ Արմենիաներն բոլորովին անօգուտ հրատարակութիւնք են ըստ իս: Մեծատուններն՝ որ չեն պակսիր Հայոց մէջ՝ պէտք էր որ առատ դրամ նուիրէին, որպէս զի այլեւայլ կարող անձերէ խմբագրեալ լրագիր մի զանազան եւրոպական լեզուներով հրատարակուէր եւ ձրի յղուէր առ ամենայն գլխաւոր լրագիրս յԵւրոպա եւ յԱմերիկա: Իսկ Ապտակն¹² վնասակար հրատարակութիւն է. սգաւորութիւն եւ խեղկատակութիւն չկարեն ի միասին

¹² «Ապտակ»՝ երգիծական-ֆաղափական ամսագիր, Հնչակյան կուսակցութեան օրգան: Լոյս է տեսել 1894-1867-ին Աթենքում, ապա Լոնդոնում: Շոշափել է արևմտահայերի ֆաղափական, ազատագրական խնդիրները:

կալ. մենք պարտական էինք ներկայացնել զմեզ քաղաքակիրթ աշխարհի իբր մարտիրոս ազգ, գթութիւն եւ օգնութիւն պաղատիլ. երգիծաբանութիւնն բնաւ չարմարիւր մեր արդի ամենատխուր կացութեան:

Կը կարդա՞ք եւ կ'սիրէ՞ք զգրաբար Հայերէնն: Այժմ յէջմիածին ընդ մամլով է իմ ընդարձակ երկասիրութիւնս Կորին Վարդապետ եւ Նորին Թարգմանութիւնք, Գիրք Մակաբայեցոց, Եւթաղ Աղեքսանդրացի, Ագաթանգեղոս եւ Փաւստոս Բիւզանդ: Երբ հրատարակուի սիրով կը յղեմ ձեզ:

Գիտէք որ Հոռովմայ Պապն 75,000 փրանկ նուիրեց յօգուտ Հայոց: Տեղեկութիւն ունի՞ք յայն վատ յօդուածէ զոր այս առթիւ գրեր է Ն. Քարամեանց (կարծեմ յ'Արարատ ամսագրի էջմիածնի): Ես ի մասնէ տեղեկացայ Ամսօրեայ Հանդիսի միջոցաւ (Ապրիլ, երես 123ա), որ հետեւեալ խորհրդածութիւնը կ'ընէ, ճիշտ իմ գաղափարացս համեմատ. «Եւ կը զարմանա՞նք դեռ թէ Հայը կողմնակիցներ ու համակիրներ չունի եւրոպական ազգին մէջ»: Ահա ապտակի արժանի Հայ մի Քարամեանց. վա՛տ մարդ:

Յուսամ, Սիրեցեալդ իմ Օրիորդ Արշակունի, որ քաջառողջ էք այժմ: Կը մաղթեմ որ միշտ առողջութիւն եւ հանգստութիւն վայելէք եւ մնամ

Ձերդ ի սրտէ

Նորայր

Յ. Գ. Տ. Մոնտան փափագեցաւ տեսնել զBlue Book [Կապույտ գիրքը], եւ փոխ տուի նմա: Գիտաւորութիւնն էր նոր խմբագրական մի հրատարակել զՀայոց: Աւաղ որ 3-4 միլիոն ազգի մէջ երկու Հայ միայն գտնուեցանք որ շնորհակալութիւն մատուցանենք այսպիսի բարեսիրտ անձի:

Մատենադարանի արխիւ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ.,
վավ. 114

9

Սիրեցեալդ իմ Օրիորդ Արշակունի

26 Մայիս 1896

Հնկալայ զՁեր թուղթն ամսոյս Տի թուականաւ, զArménie Մայիս 1ի, եւ զCharmetant քահանայի սգալից Martyrologén [Նահատակների պատմութիւն]. զ Arménie փոխ տուի Տ. Մոնտանի, որ իրեն համար բոլորովին անձանօթ հրատարակութիւն մի էր, իսկ զMartyrologén նուիրեցի. ինձ համար ա՛յլ օրինակ մի ապսպրած եմ գրավաճառիս, որ յուսամ կը հասնի ի մօտոյ: Տ. Մոնտան ըսաւ որ պիտի հրատարակէ նոր յօդուած մի զՀայ խնդրոյն: Պարիսի Հայ Օրիորդաց շնորհակալութեան նամակն կ'երեւի թէ հասած չէ ի ձեռս Տ. Մոնտանի, ապա թէ ոչ կը հրատարակէր զայն, կամ գոնէ ինձ կը ծանուցանէր:

Մշակ ի Daily News¹³ առնչով կը հաղորդէ թէ Հ. Ալիշան¹⁴ միջնորդութիւն կը կատարէ ընդ Վատիկան եւ ընդ Իզմիրլեան Պատրիարք¹⁵ առ ի միաւորել զՀայս ընդ կաթողիկէ եկեղեցւոյ:¹⁶ Երանի թէ վաղ միացեալ ըլլայինք կամ ընդ Յոյն եկեղեցւոյ կամ ընդ Հռովմեականին. մեր Ազգին դժբախտութեան միակ պատճառն եղած է մեր կղզիացեալ դիրքն ի քրիստոնէութեան, ոմանց համար հերձուածող, այլոց համար հերետիկոս: Իմ կարծեօք մեր շահն զայն կը պահանջէ նախամեծար ընտրենք միաւորիլ ընդ Յոյն եկեղեցւոյ ի պատճառս Ռուս Տէրութեան: Թող Ազգին երեւելիներն եւ իմաստուններն որոշեն ինչ որ լաւագոյն կը համարին. ես միշտ փափագող եղած եմ մեր Ազգին բարւոյն, միշտ սիրող. միութեան, հարուածիչ տգիտութեան եւ կամակորուրթեան. Սակայն իմ շուրջս ուրիշ բան տեսած չեմ, եթէ անտարբերութիւն, անզգայութիւն, տխմարութիւն, նիւթապաշտութիւն եւ չարութիւն:

Մինչդեռ երկու տարիէ ի վեր ամէն օր կը մաղթէի որ անիծեալ Աբգիւլ Համիդն սատակի կամ շանթաճար, կամ անդնդակուլ, կամ ժանտախտիւ, կամ վրիժառու դանակաւ, ահա Նասրէդդինն է որ զո՛հ չ'երթայ գնդակի: Եւ կ'ըսեն թէ Աստուածային Նախախնամութիւնն է որ կը հսկէ աշխարհիս վերայ. գեղեցիկ Նախախնամութիւն՝ որ բիւրաւոր անմեղներու սոսկալի կոտորածները անպատիժ կը թողու, եւ անօրէն արիւնարբու դահիճն՝ փառօք եւ պատուով յղփացեալ անուշ անուշ կը հեշտանայ ի գիրկս իւր կիներուն:

Կարդացի զՀայկին: Եթէ բանաստեղծն ծանուցած չըլլար զիւր անունն, ես պիտի կարծէի թէ կը կոշուի Մանուկ Տիրացուեան, կամ Տիրացու Մանուկեան: Ո՛հ մեր Ազգին անբժշկելի տիրացութիւնն:

Ողջ եղեք, Սիրելիք իմ Օրիորդ Արշակունցի, եւ գիտցէք զիս

Ձերդ ի սրտէ

Նորայր

Մատենադարանի արխիւ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ.,
վավ. 118

¹³ «Daily News» [«Օրվա նորություններ»], լույս է տեսել Նյու Յորքում 1855- 1906թթ.: Թերթը հիմնադրել և հրատարակել է կոնգրեսական Բենջամին Վուդը (1820-1900):

¹⁴ Ղևոնդ Ալիշան (1820-1901)՝ Վենետիկի միաբանության անդամ 1838-ից: Հայ բանաստեղծ, բանասեր, պատմաբան, թարգմանիչ:

¹⁵ Մատթեոս Իզմիրլյան (Մատթեոս Եպիսկոպոս, 1845-1910)՝ ատվածաբան, Պոլսի հայոց Պատրիարք (1894-1896), հայոց կաթողիկոս 1908-ից:

¹⁶ Սույն տեղեկությունը կոշտ արձագանքի է արժանացել Մայր Աթոռի կողմից. «Այդպիսի միաբանություն հաստատելը Հայաստանեայց եկեղեցու կանոններով վեր է որել հոգևոր պետի իրաստություններից եւ Սրբազան Իզմիրլեանն այն անձը չէ, որ այդպիսի ձեռնարկություններ սկսէ: Հայաստանեայց եկեղեցին սովոր է նահատակուիլ, բայց երբէ՛ շեղուի իւր ասանդություններից», տե՛ս Արարատ, 1896, Ապրիլ, էջ 191:

Սիրեցեալդ իմ Օրիորդ Արշակունի

8 Աւգոստոս 1896

Ինչպէս ծանուցած էի ձեզ Յունիս 14ի նամակաւ, նոյն ամսոյս 16ին մեկնեցայ ի Պետրբուրգ՝ ուր մնացի մինչեւ ի 28 Յուլիսի եւ 31ին դարձայ ի Ստոքհոլմ: Ի դարձիս գտայ զձեր նամակն Յունիս 12ի որ ինձ կը սպասէր: Երէկ տեսնուեցայ Տ. Մոնտանի հետ: Տ. Մոնտան եւս բացակայ էր ի Ստոքհոլմէ, եւ երբ Յուլիս ամսուն կը դառնայ ի քաղաքս՝ կը գտնէ զշնորհակալեաց գրութիւնս Պարիսի Հայ Օրիորդներուն եւ Աղեքսանդրիոյ Հայ գաղթականութեան. Stockholms Dagbladի Յուլիս 22ի երեկոյեան թուոյն մէջ (երես 2, սիւնակը 2-3) կը հրատարակէ «Հանգանակութիւն ի նպաստ Հայաստանի սովելոց» վերնագրին ներքեւ զ50 ստեպլինի ընդունագիրն զոր յղած է նմա Edward Atkin ի դիմաց Ուէստմինստրի դքսին, եւ ապա կը ծանուցանէ թէ խմբագրութիւնն ստացած է շնորհակալութեան գիր ի Պարիսի Հայ Օրիորդաց (armeniskorna i Paris) եւ յԱղեքսանդրիոյ բազում Հայ գաղթականաց: Միայն վերջնոցս նամակին սկզբնաւորութիւնը հրատարակած է շուետերէն. «Չկարացի ամբողջապէս հրատարակել, ըսաւ, վասն զի շատ գովեստներ տրուած էին թէ ինձ եւ թէ լրագրիս»: Կը տեսնէք թէ որչափ համեստ է Տ. Մոնտան: Աղեքսանդրիոյ նամակին ստորագրողներն խնդրեր են ի Տ. Մոնտանէ որ եթէ հրատարակէ զհարեանց գրութիւնն՝ յղէ օրինակ մի ի լրագրին յայն թուոյն: Տ. Մոնտան յղեր է ցոյց տուած հասցէին, բայց յանձնեց ինձ այլ եւս 2 օրինակ, զորս պիտի առաքեմ ձեզ որպէս զի հաճիք յղել կրկին անգամ յԱղեքսանդրիս՝ եթէ ստացած չեն զ'արդէն առաքեալն:

Տ. Մոնտան սիրով պիտի տայ ձեզ զհար լուսանկարն քանի մի օրէն. նոյնպէս եւ ես պիտի յղեմ ձեզ զիմս հանդերձ լրագիրներով՝ երբ ստանամ զպատասխան նամակիս: Շնորհակալ եմ L'Arménieի Յուլիսի 1 թուոյն:

Ունիմ զLes Massacres d'Arménie [հայկական կոտորածները], կարգացի զՅառաջաբանն Clémenceauի¹⁷, բայց զմնացեալսն պիտի չկարդամ, վասն զի սիրտ չունիմ. տուի Տ. Մոնտանի: Շատ գոհ չեղայ ի Յառաջաբանէն. աւելի քրիստոնեայ, ավելի քաղաքագէտ, աւելի պերճախօս գրչի պէտք էր յանձնել. բայց ամենայն ուրեք անօգնականքս պէտք է շնորհակալ ըլլանք ոեւէ ձայնի որ կը հնչէ ի մեր պաշտպանութիւն: Աւասիկ այսպիսի գրոց հրատարակութիւնն էր զոր ես 1894է ի վեր կը բաղձայի, եւրոպական ամէն լեզուներով եւ ձրի բաշխելով. դժբախտաբար ոչ ոք կարեւորութիւն տուաւ իմ խորհրդոց:

Ի խնդրոյ Ուէստմինստրի դքսին՝ St. Dagblad բացաւ երէկ հանգանակութիւն ի նպաստ կրետացւոց: Ամէն անգամ որ կը կարդամ զանօրէն թուրքերու ջարդուիլն՝ սիրտս կը զովանայ:

¹⁷ Georges Benjamin Clemenceau [Ժորժ Բենժամեն Կլեմանսո] (1848-1929)՝ ֆրանսիացի պետական գործիչ, գրող, 1906-1909 և 1917 թթ. եղել է Ֆրանսիայի վարչապետը:

Շնորհակալ եմ ձեր բարեկամական յորդորներուն. բայց իմ յուսահատութիւնս շատ մեծ է. մեր փրկութիւնն անհնար կ'երեւի ինձ. երանի թէ խաբուիմ:

Մաղթելով ձեզ քաջողջութիւն եւ զորութիւն, եմ ի սրտէ ձերդ

Նորայր

Յ. Գ. Յղեցի թղթոյս հետ զիմ լուսանկարն եւ զՁ լրագիրսն: Շնորհակալ եմ որ ի Պարիսէ եւ յԱղեքսանդրիոյ երախտագիտութեան արտայայտութիւն հասցընել տուիք առ Տ. Մոնտան:

Կը սիրեմ զձեզ, Սիրելիդ իմ Արշակունհի

Մատենադարանի արխիվ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ.,
վավ. 135

11

Իմ սիրուն Օրիորդ Մարիս

12 Սեպտեմբեր 1896

Երէկ ընկալայ զթուղթդ Ազոստոս 19/31 թուականաւ, եւ կը փութամ խնդակցիլ Ձեզ որ ողջ էք: Կ. Պոլսի վերջին կոտորածն¹⁸ սարսափեցուց զիս, եւ սաստիկ կը տագնապէի մտածելով Ձեր եւ այլ քանի մի սիրելեաց վերայ զորս ունիմ ի քաղաքիդ: Ուրախ եմ որ դուք ողջ էք, բայց միւսնե՞րն. ինչ անհոգ մարդիկ են որ չեն գրեր ինձ: Փախի՛ք յանիծեալ երկրէդ, Սիրելիդ իմ, դարձեալ կ'ըսեմ. գոնէ առ այժմ փոխադրուեցէք ի Պերա,¹⁹ որ աւելի ապահով է քան զգիւղդ. փախի՛ք, փախի՛ք, փախի՛ք: Մեզ համար յոյս չկայ: Ի՞նչ շահեցանք 50-60 հազար Հայոց ջարդերովն. ի՞նչ շահեցանք անցեալ տարուոյ Սեպտեմբերի կոտորածին²⁰. Ի՞նչ պիտի շահինք վերջին 10,000 անմեղներու քստմնելի սպանութեամբն: Ոչ ինչ. ես յոյս չունիմ. եւ անմտութիւն կը համարիմ արեան հեղեղներ թափել՝ քանի որ այդ արեան վրէժը խնդրող եւ լուծող չկայ: Ձմեզ կոտորող գազաններն յանցանք չունին. միակ յանցաւորն Եւրոպա է որ անտարբեր աչօք կը նայի մեր յուսահատ մաքառման. անիծեա՛լ վեց տէրութիւններն, անիծեա՛լ եւ Բարթողիմէոսն, Նուրեանն²¹ եւ իրենց համախոհներն. սատկի Բարթողիմէոսն շան պէս, գայլ եւ ոչ հովիւ իւր մարտիրոս ժողովրդեան:

¹⁸ Խոսքը 1896 թ. օգոստոսի 14-16-ին Կ. Պոլսում թուրքերի կազմակերպած կոտորածի մասին է, որի ժամանակ մայրաքաղաքում կոտորվեց ավելի քան 10 հազար հայ:

¹⁹ Պերա (Բերա)՝ Կ. Պոլսի եվրոպական մասը:

²⁰ Խոսքը 1895 թ. սեպտեմբերի 18-ին Կ. Պոլսի Պապ-Ալիի հրապարակում տեղի ունեցած արյունալից դեպքերի մասին է: Միայն այդ օրը մայրաքաղաքում սպանվեց շուրջ 2000 հայ՝ Հնչակյանների կազմակերպած խաղաղ ցույցի մասնակիցներ (ցույցը նպատակ ուներ թուրք կառավարությանը ստիպելու կենսագործել խոստացած «Մայիսյան բարենորոգումները», սակայն այն վերածվեց թուրք ոստիկանության ու զորքերի ձեռքով հայերի սպանողի): Նույն ամսին զանգվածային շարժեր տեղի ունեցան նաև Տրապիզոնում (սեպտ. 26-ին) և Բաբերդում (սեպտ. 30-ին):

²¹ Նուրյան Հովհաննես (Օհաննես, 1839-1900)՝ դատավոր, դիվանագետ, երկրագործական դրամատան նախագահ, ֆաղաֆային ժողովի ատենապետ:

Կը խնդրեմ որ Ձեր ազգական կամ բարեկամ մի շնորհ ընէ տեղեկանալ ի կաթողիկեոյ Հայոց Պատրիարքարանէն թէ ո՞րչ է իմ Ագապ քոյրս, ո՞րչ է իմ Կոմիտաս հօրաքեռորդիս (Ժամագործ, եղբայր Հայր Գարեգին՝ որ է միաբան Ս. Ղազարու) եւ Կոմիտասայ երեք քոյրերն՝ որոց մին ամուսնացեալ է եւ կը կոչուի Մարիամ էֆէեան. ո՞րչ է նոյնպէս էֆէեանն (Անտոն). ամէնքն ալ կը բնակին ի Pancaldi [Պանկալտի],²² կարծեմ: Ո՞րչ է Մարգար Պէյլեկճեանն, որդի հանգուցեալ Ստեփանի, եւ Մարգարի մայրն, քոյրերն եւ եղբայրն, որ կը բնակէին ի Գալիանճուգ: Ա՛հ, ի՞նչ ըսեմ Պոլսեցի Հայոցդ, ցան եւ ցիր սփռուած խումբ խումբ՝ որը ի Պերա, որը յմսկեղջիւր, որը Բոսպորի այս եւ այն կողմը՝ կամըրջէն մինչեւ ի Գավագ, որը Պոլսոյ այլեւայլ թաղերը, որը Գատըքէօյ,²³ փոխանակ ամփոփ ի միասին բնակելու ի Պերա՝ որպէս զի վտանգի ժամանակ կարող ըլլայիք իրարու հասնիլ, իրարու օգնել:

Կարողութիւն չունիմ աւելի գրելու այսօր, վասն զի յուզմուքս շատ մեծ է. բայց դուք, Սիրելի Մարիս, գրեցէք ինձ երկարօրէն եւ փութով: Յանձնեցէք զնամակսդ ի գերմանական թղթատունն, եւ բնաւ երկիւղ մի ունենաք:

Կինս եւս ջերմապէս կը խնդակցի ձեզ, մօրդ եւ քոյրերուդ: Կ'ողջունենք սիրով զմայրդ եւ զամէն ընտանիսդ:

զՁեզ միշտ սիրող

Նորայր

Ո՞րչ է Տիկին Ազնիւ եւ իւր Նշանիկն. նոյնպէս եւ մօրաքոյրդ (կարծեմ Տիկին Փէմպէ) եւ իւր ամուսին: Մասնաւոր ողջոյն Տիկին Զարուհեաց եւ իւր ամուսնոյն՝ զորոյ անուն մոռացած եմ: Վերջին հեռագիրներն են որ Գաղղիական Տէրութիւնն 10,000 փրանկ յղեր է ի նպաստ Հասքէօյի Հայոց, եւ հրաման տուեր է որպէս զի ի Մարսիլիա²⁴ հասնող Հայոց աշխատանք հայթայթուի: Կարգացի որ Բոսպոր կաթողիկեոյ Հայ քահանայ մի սպանուեր է avec sa tante et sa nièce [հորաքրոջ կամ մորաքրոջ եւ զարմուհու հետ]. գիտէ՞ք ով է: Ո՞րչ են Ապտուլլահեանք եւ Տ. Յովսէփ Ազնաւորեան: Յուսամ Հայերն այլ եւս ֆէս չեն կրեր, այլ գլխարկ: Կարգացի որ շատերն տաճկացիք են. իրա՞ւ է:

Մատենադարանի արխիվ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ.,
վավ. 146

²² Pancaldi (հին աղբյուրներից մեկում՝ **Pangaalti** կամ **Pancaldi**)՝ Ստամբուլի Շիշլիի շրջանում գտնվող Նիշանթաշի չոքս թաղամասերից մեկն է (**Թեշվիչեի**, **Մաչկա** եւ **Օսմանբեյի** հետ միասին):

²³ Գատըքէօ (Գատըգյուղ)՝ Կ. Պոլսի ասիական թաղերից մեկը:

²⁴ Մարսիլիա (Մարսել)՝ Բալթիկ Ֆրանսիայի հարավում, Միջերկրականի ափին:

12

Պատուական խմբագրութիւն Մշակի**25 Հոկտեմբեր 1896**

Շուետացի Pehr Pehrsson²⁵ բողոքական երէցն՝ Հոկտեմբերի 15ի իրիկունը, Ստոքհոլմի Քրիստոնէական Միութիւն երիտասարդաց (Kristliga Föreningen af Unge Mœn) ընկերութեան լսարանին մէջ, շատ գեղեցիկ ճառ մի արտասանեց Հայաստանի եւ Հայ քրիստոնէից հալածման վրայ: Ներկայ էին 100ի շուրջ անձինք, որոց մէջ էինք նաեւ իմ կինս եւ ես: Հասոյթն յատկացեալ էր ի նպաստ Հայաստանի Հայոց:

Քրիստոնէական Միութիւնն երիտասարդաց փափաքեցաւ որ Pehr Pehrsson երէցն կրկին անգամ արտասանէ զիր ճառն՝ ընդարձակագոյն սրահի մէջ, եւ ես ալ իբր Հայ բանախօսութիւն մի ուղղեմ ունկնդիրներուն: Հոկտեմբերի 21ին իրիկունը՝ քաղաքիս Գիտութեանց Ակադեմիայի դահլճին մէջ լեցուած էին աւելի քան 400 անձինք: Գումարումն բացուեցավ իմ բանախօսութեամբ. նկարագրեցի զմեր եղբարց ողբալի եւ յուսահատական վիճակն. շնորհակալութիւն յայտնեցի Շուետացոց այն ազնիւ մարդասիրութեան համար զոր մինչեւ ցարդ ցուցուցին եւ տակաւին կ'ուզեն ցուցնել հալածեալ Հայոց, եւ խնդրեցի որ միացնեն զիրեանց ջանքերն միւս քրիստոնէայ ժողովրդոց հետ: Յետոյ Պերսոն երէցն արտասանեց զիր ճառն: Ունկնդիրներէն շատերն լացեր էին, ինչպէս գրեց քաղաքիս լրագիրներէն մին: Ճառէն վերջը իւրաքանչիւր ոք ձգեց գանձանակներու մէջ զիր կամաւոր տուրքն, ի նպաստ մեր թշուառ հայրենակցաց: Հասոյթն եղաւ զուտ 350 քրունա, այսինքն 175 ռուբլի: Երէցն ստացած էր արդէն Շուետացիներէ 400 քրունա, այսինքն 200 ռուբլի, նոյն նպատակաւ: Բացի այս 375 ռուբլիէն՝ պատուական երէցն տպագրութեամբ պիտի հրատարակէ զիր ճառն, որու վաճառումէն գոյացած դրամն՝ նոյնպէս պիտի յատկացուի Հայոց: Տպագրեալ ճառն լոյս կը տեսնէ այս շաբթուս մէջ:

Իմ բանախօսութիւնս հրատարակուեցաւ շուետերէն հայասէր Stockholms Dagblad լրագրին Հոկտեմբերի 22ին թուոյն մէջ, ամբողջ. քաղաքիս միւս վեց լրագիրներն հրատարակեցին հատուածներ, եւ առհասարակ ամէնն ալ մեծ համակրութեամբ խօսեցան հալածեալ Հայոց մասին:

Կը յուսամ որ զայս համառօտ տեղեկութիւն կը համարձակիք հրատարակել պատուական Մշակիդ մէջ: Շնորհ ըրէք եւրոպական տառերով գրել Pehr

²⁵ Pehr Pehrsson [Պեր Պերսսոն] (1867- 1953). Գոտենբուրգում եղել է շվեդական ֆանանա և խոբհոյարամական: Գրել է 1800-ականների վերջին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող հայերի կոտորածների և նրանց կրած տառապանքների մասին “Ur Österby bruk och vallonernas krönika” (1899) գիրքը:

Pehrsson, Kristliga Föreningen af Unge Män, Stockholms Dagblad. *Եւ Մշակի նոյն թուէն հաճեցէք յղել ինձ այլ եւս Յ օրինակ, որպէս զի տամ Պերսոն երիցուն, Երիտասարդաց Քրիստոնէական Միութեան, եւ լրագրին. որով գիտնան թէ իրենց անուններն հասեր են յականջս Հայոց:*

Եթէ կը փափաքիք ստանալ զպատճէն բանախօսութեանս գաղղիերէն, խնդրեմ ծանուցէք ինձ թղթով, եւ կամ լրագրիդ շորրորդ երեսը գրեցէք այսչափ միայն. Ստորհում. Ն. Յղեցէք:

Խորին մեծարանօք

Նորայր Ն. Բիւզանդացի

Մատենադարանի արխիւ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ.,
վավ. 163

13

Սիրեցեալդ իմ Օրհորդ Արշակունի

29 Դեկտեմբեր 1896

Հնկալայ զնոյեմբեր 11ի թուղթդ, ինչպէս եւ զ'Daily News, զ'Arménie, եւ զ'Pro Armenia. շնորհակալ եմ մեծապէս:

Անցեալ օր Pehr Pehrsson երէցն մեզի եկաւ. ուրախ էր Ձեր նամակին համար: Կը շարունակէ դրամ հաւաքել ի նպաստ Հայոց: Աբդիւլ Համիդի սատկելովն թերեւս Հայոց համար փրկութեան նշոյլ մի ծագի. ապա թէ ոչ՝ մեր բանն յուսահատ է: Վայ անոնց որ գազանիս կենդանութեան ժամանակ կը կարծեն թէ Հայոց վիճակն կարէ լաւանալ. ապուշ մարդ է Hanotaux²⁶, ապուշ են ամէն անոնք որ Համիդի խոստմանց կը վստահին: Մինչեւ որ Թուրքիոյ վերայ Եւրոպա շքոնանայ՝ Հայաստանի Հայոց ջնջումն անխուսափելի է: Երկու տարի շարունակ զայս ըսի ես իմ ամէն յօդուածոց մէջ. բայց ի՞նչ օգուտ երբ նոյն իսկ ընտանի քանդիչներ պակաս չեն մեր մէջ, Բարթող Չամչեանի, Նուրեանի, Համբարձում Աղաճաճեանի նման՝ շան պէս մորթուելու արժանի մարդիկ, որ կարծեն թէ Անօրէնին գարշապարները լիզելով իրենց ողորմելի Ազգին փրկութեան կ'աշխատին: Ալ յօգնած եմ ես, եւ կ'ուզեմ հանգչիլ:

Մաղթելով Ձեզ երջանիկ նոր տարի՝ մնամ սիրոյ ողջունիւս

Նորայր

Մատենադարանի արխիւ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ.,
վավ. 178

²⁶ Gabriel Hanotaux [Գաբրիել Ալբեր Օգյուստ Անտոն] (1853-1944)՝ ֆրանսիացի դիվանագետ, պատմաբան, ֆալսֆական գործիչ:

Սիրելի Օրհորդ Մարիս**5 Յունուար 1897**

Անշափ ուրախացայ ընդունելով զթուղթդ զոր գրած էիք ի Տիզբուս անցեալ Դեկտեմբերի 9/21 ին: Կը մնայ ինձ մաղթել որ Ձեր ամէն սիրելիքն ալ մեկնին յանիծեալ Թուրքի հողէն եւ միանան ձեզ հետ: Մի՛ ըսէք թէ պանդուխտ էք, Սիրելի Մարիս, պանդուխտ են ամենայն Հայք որ Հայաստանէ դուրս կ'ապրին. բայց կարելի՞ է բնակիլ ի Հայաստան՝ երբ անօրէն Թուրքն է անոր տէրն: Աբդիւլ Համիդի սատկելովն թերեւս յուսոյ նշոյլ մի ծագէ մեզ. ապա թէ ոչ եւ ոչ մի հայ պիտի մնայ ի Հայաստան. որը պիտի սպանուի, որը պիտի գաղթէ, եւ որը պիտի թուրքանայ, ինչպէս ցարդ հազարաւորք սպանուեցան, գաղթեցին եւ թուրքացան:

Համառօտ կը գրեմ այսօր, Սիրելի Մարիս, վասն զի սաստիկ յոգնած եւ տկար եմ երկու ամսէ ի վեր: Յղեցի Ձեզ եւ Տ. Աղ. Երիցեանի²⁷ համար զպատճէն իմ վերջին գաղղիերէն բանախօսութեանս, զոր ընդօրինակեց մեր արուեստանոցին օրիորդներէն մին: Ես հրատարակեցի երկու յօդուած Սասնոյ քստմնելի կոտորածին առթիւ քաղաքիս Aftonbladet լրագրին մէջ 1894 նոյեմբերի եւ Դեկտեմբերի. հրատարակեցի ուրիշ ընդարձակ յօդուած մի Հայաստանի եւ Թուրքիոյ Հայոց մասին անցեալ տարուոյ Յունուարին, Stockholms Dagblad լրագրին մէջ, շորս անգամով: Համառօտիւ բանախօսեցի եւ երկու անգամ. զերկրորդն է որ կը գտնէք ներփակեալ: Այս ամէն բանախօսութեանց եւ յօդուածոց արդիւնքն եղաւ ստանալ զՇուետացոց համակրութիւնն մեզ համար, եւ զիրեանց դրամական նպաստաւորութիւնն: Մինչեւ ցարդ հաւաքուեցաւ Շուետի մէջ 5000 փրանկէ աւելի:

Կ'ողջունեմ յարգանքօք զՏ. Աղ. Երիցեան՝ որոյ գրական գործունեութիւնն ծանօթ է ինձ. կ'ողջունեմ եւ զՏ. Ստ. Մալխասեանց: Իսկ զձեր, Սիրելի Մարիս, կը պնդեմ գորովանօք զձեռսդ եւ ի սրտէ կը մաղթեմ որ ողջ եւ հանգիստ ըլլաք, եւ տարիս՝ որ տխրութեամբ սկսաւ՝ շարունակուի եւ աւարտի կատարեալ ուրախութեամբ եւ երջանկութեամբ:

Ձձեզ միշտ սիրող

Նորայր

[Յ. Գ.] Կինս եւս կը յայտնէ զիւր ջերմ խնդակցութիւն Պոլսէն ազատելոյդ համար եւ կը համբուրէ զձեզ անձկանօք: Ստէպ գրեցէք ինձ, խնդրեմ, եւ երկարօրէն. ես ալ շատ բան ունեմ ձեզ ըսելիք: Ողջ եղիք, սիրուն օրիորդ Մարիս:

Մատենադարանի արխիվ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ., վավ. 180

²⁷ Ալեքսանդր Երիցյան (1841-1902) հայ պատմաբան, հնագետ: Աշխատակցել է «Կոունկ Հայոց աշխարհի», «Մեղու Հայաստանի», «Արձագան», «Մուրն» և այլ պարբերականներին:

15

Մեծապատիւ Խմբագրութիւն Մշակի

26 Յունուար 1897

Որովհետեւ կը բարեհաճիք յղել ինձ շարունակաբար զպատուական լրագիրդ, (անցեալ օր ընդունեցայ զՅունուար 1ի թիւն) կը փափագիմ օգտակար լինել ձեզ ըստ իմ կարողութեան:

Գիտէք անշուշտ որ այս տարի (Մայիս-Հոկտեմբեր) Արուեստահանդէս պիտի ունենանք ի Ստոքհոլմ, որու պիտի մասնակցի եւ Ռուս Տէրութիւնն: Եթէ հաճոյ է ձեզ կարգել զիս պաշտօնապէս թղթակից Մշակիդ՝ Արուեստահանդիսին Օտար Մամուլ բաժնին մէջ, սիրով յանձն կ'առնում: Կը ներկայացնեմ զլրագիրդ ամէն հանդէսներու եւ գումարումներու մէջ՝ որ տեղի պիտի ունենան, եւ կը յղեմ ձեզ քանի մի նամակ՝ նկարագրելով ինչ որ արժանի է եւ հետաքրքրական: Եթէ կ'ընդունիք զառաջարկութիւնս՝ խնդրեմ ուղղէք անյապաղ գիր (գերմաներէն կամ գաղղիերէն) առ Bureau de l'Exposition Scandinave de Stockholm de 1897 [Ստոկհոլմի սկանդինավյան ցուցահանդէսի գրասենյակ], ըսելով որ թղթակից կը կարգէք Տիլլըսի հայերէն Մշակ լրագրիդ զ M. N. de Byzance Norayr, philologue, citoyen suédois d'origine arménienne, domicilié au "15 Fredsgatan, à Stockholm [Պ. Նորայր Բյուզանդացի՝ բանասէր, հայկական ծագումով Շվեդիայի քաղաքացի, բնակավայր՝ Ֆրեդսգատան " 15, Ստոքհոլմ], որ պիտի ներկայացնէ պաշտօնապէս զՄշակ, եւ պիտի նկարագրէ զԱրուեստահանդէսն Մշակի ընթերցողաց: Զայս յանձնարարական խնդրեմ գրէք այնպիսի թղթոյ վրայ՝ յորում տպագրուած ըլլան ուսերէն (կամ լաւ եւս՝ գաղղիերէն) Rédaction du Mschak Tiflis [Մշակի խմբագրութիւն, Թիֆլիս] բառերն. նոյնպէս նամակին պատրուակին (enveloppe) [ծրար] վրայ: Զգիրդ յղեցէք առ իս, եւ ես կը մատուցանեմ զայն Մամուլ գրասենեակին պետին:

Կը յուսամ որ թէ ձեզ եւ թէ ինձ պատուաբեր կ'ըլլայ իմ թղթակցութիւնս: Աւելորդ չեմ համարիր ըսել որ բաց ի Մշակէ այլ լրագրի կամ հանդիսի ոչ ինչ յօդուած կը հաղորդեմ Արուեստահանդիսի մասին:²⁸

Արուեստահանդիսի Վարչութիւնն ի հրապարակ հանեց Արուեստահանդիսի գունաւոր դրոշմներ (timbre) [դրոշմանիշ] որոցմէ 10 հատ կը յղեմ ձեզ ներփակեալ:

²⁸ «Արուեստահանդէսի» մասին Ն. Բյուզանդացու թղթակցութիւնները տե՛ս «Մշակ» 1897, մայիսի 20, «Ստոֆօլմի 1897 Արուեստահանդէսը» I, մայիսի 29, «Ստոֆօլմի 1897 թիւ Արուեստահանդէսէն» II, հունիսի 14, «Ստոֆօլմի Արուեստահանդէսը» III, հուլիսի 1, «Ստոֆօլմի 1897 Արուեստահանդէսը» IV, հուլիսի 16, «Լրագրութեան միջազգային համաժողով ի Ստոֆօլմ» V:

Ստոքհոլմի բողոքական Մայր եկեղեցուց երէցներէն մին, Samuel Andreas Fries,²⁹ յանձնարարութեամբ Գերմանական Մասնաժողովոյն՝ որ կազմուած է ի նպաստ Հայոց դրամ հաւաքելու նպատակաւ, բանախօսեց երկու անգամ քաղաքիս Գիտութեանց Ակադեմիայի դահլրճին մէջ՝ ամսուս 19 ին եւ 22 ին. երրորդ անգամ պիտի բանախօսէ այս երեկոյ: Հասոյթն յատկացեալ է հալածեալ Հայոց: Իւր բանախօսութեանց նիւթն է Արեւելեան եկեղեցիներն:

Մաղթելով ամենայն յաջողութիւն պատուական լրագրիդ,
մնամ մեծարանօք
Նորայր

Մատենադարանի արխիվ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ.,
վավ. 188

16

Սիրեցեալդ իմ Օրհորդ Արշակունի

23 Փետրուար 1897

Ընկալայ զՁեր թուղթն ամսոյս 4ին թուականաւ, նոյնպէս եւ զ'Daily News, զ'Արմէնիա, գտախտական կոտորածներուն, եւ զՁերագին³⁰ Arménie (Յունուար եւ Փետրուար). շատ շնորհակալ եմ:

Տիեզերական Աղերսագրի մասին զիմ կարծիս կը հարցընէք: Ահաւասիկ. եթէ Եւրոպա մինչեւ ցարդ 100,000է աւելի անմեղ Հայոց արեան վրէժը չլուծեց՝ նախ գահընկէց ընելով զանօրէն Աբդիլ Համիդն, եւ յետոյ շան պէս մորթելով զնա, յաւիտեան Եւրոպա վրէժխնդիր պիտի չըլլայ մեր արտասուելի նահատակած, եւ գարշելի շունն պիտի շարունակէ լափել զարիւն Հայոց: Մեզ համար ոչ Աստուածային արդարութիւն եւ գթութիւն կայ, ոչ մարդկային: Ամիսներէ ի վեր իմ սրտիս միակ զովացումն է՝ ամէն օր սարսափելի անէծք տեղալ Վեցերուն վրայ, որ շարամահ սատակի՛ն իրենք, իրենց կանայք եւ որդիք: Զմեզ չազատեցին, եւ այժմ իրենց թնդանօթներն քրիստոնեայ Յունաց եւ Կրետացուց վրայ կ'արձակեն. սատակին գնդակոծողներն ալ, գնդակոծելու հրաման տուողներն ալ: Եթէ Յունաց Տէրութիւնն խելք ունի՝ պէտք է գրգռէ զԹուրքիոյ Յոյնս որպէս զի ապստամբին եւ սկսին շարդել զԹուրքս. փրկութեան ուրիշ միջոց չգիտեմ: Պէտք է որ պատերազմ բորբոքի, պէտք է որ շատ արիւն թափուի. դարերէ ի

²⁹ Սամուել Անդրեաս Ֆրիես (1867-1914)՝ շվեդ աստվածաբան:

³⁰ Մինաս Զեւագ (1852-1929)՝ հայ բանաստեղծ, հասարակական, մշակութային գործիչ: 1889 թ. խուսափելով թուրքական հետապնդումներից հաստատվել է Լոնդոնում, հրատարակել է «Լ'Արմենի» գրական-հաղափական թերթը: 1898-ին տեղափոխվել է Փարիզ, որտեղ մինչև 1906 շարունակել «Լ'Արմենի» թերթի հրատարակությունը: 1908-ին ընտրվել է Պոլսի Ազգային ժողովի նախագահ: Զբաղվել է ազգանպաստ գործունեությամբ:

վեր քրիստոնէից արիւնը լափող անիծեալ Թուրքն պէտք է որ արեան մէջ խեղ-դուի եւ աշխարհիս երեսէն անհետանայ:

Հայք ի սկզբանէ ի վեր մեծամեծ սխալներ գործած են, մանաւանդ շուն Համիդի օրով: Միութիւն՝ բնաւ. գլուխ՝ ոչ ոք. Պատրիարքութիւնն՝ անմիտ, որ աղօթք կ'ընէ Համիդի համար. շատ մը սրիկաներ որ Թուրքէն կաշառուած խռովութիւն հանեցին ասդիս անդին, որպէս զի Թուրքն իրաւունք ունենայ զանմեղներն ջարդելու. յարձակեցան Banque Ottomanի [Օսմանյան բանկի] վրայ, որպէս զի յարձակման վերայ 10-15 վայրկեան շանցած՝ օրերէ ի վեր պատրաստուած ջարդն սկսի: Անմտութեամբ եւ սրիկայութեամբ ինչ շահեցան Հայերն՝ բոլոր աշխարհի ծանօթ է: Սատակի՛ն սրիկաներն, սատակի՛ն Համիդի համար աղօթողներն, սատակին Տատեանի նման վատերն՝ որ այդպիսի գազանի կը ծառայեն:

Անմիտ Հայեր՝ որ Լոնդոնի առաջին ճաշարաններէն միոյն մէջ հացկերոյթ կու տան՝ ինչո՞ւ կը զարմացնեն զՁեզ: Այս ձմեռ ես շատ անգամ հրաւեր ընդունեցայ ճաշի եւ այլ գուարճութեանց, եւ միշտ պատասխանեցի. «Սգաւոր եմ. քանի որ ողջ է անօրէն Համիդն՝ ես չկարեմ գուարճանալ»:

Կինս շնորհակալ է Ձեր ողջունին, եւ փոխարէն կ'ողջունէ զՁեզ սիրով: Յղեց Ձեզ այսօր զլուսանկար Pehr Pehrsson երիցուն. եւ զլուսանկար արքունի պալատանն՝ զոր կը տեսնէք ի բարձրաւանդակի:

Մաղթելով Սիրելի Արշակունհիս, որ միշտ ողջ ըլլաք,

մնամ Ձերդ

Նորայր

Մատենադարանի արխիվ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ.,
վավ. 197

17

Սիրեցեալդ իմ Օրհորդ Արշակունի

16 Ապրիլ 1897

Ընդունած եմ զՁեր թուղթն Մարտ 21ի, նոյնպէս զ' Arménie, 1er Mars [Մարտի 1ի «Արմենիա»ն] երէկ ընկալայ եւ զ'Éclair Եւ զ'Arménie, 1er Avril [«Կայծակ» եւ ապրիլ 1ի «Արմենիա»], յորում կը գրէք թէ անհամբեր կը սպասէիք պատասխանոյս: Կը տեսնեմ, Սիրելիս, որ իբր նոր Jeanne d'Arc [Ժաննա դ'Արկ] պատերազմիլ կ'ուզէք. ո՞ր ճշմարիտ Հայոյն արիւնն չեռար՝ անօրէն Թուրքերէն վրէժ խնդրելու մեր բիւրաւոր անմեղներու կոտորածին: Բայց գարշելին ունի քան զինքն գարշելի պաշտպաններ: Համարինք թէ քաջասիրտն Antoine (Անտուան) յաջողեցաւ գումարել իրեն նման 10,000 քաջեր. ի՞նչ կարող են ընել այդ 10,000դ ընդդէմ միլիոնաւոր Թուրքերու, որոց ետեւը կանգնած են միլիոնաւոր քրիստոնեայներ՝ ոչ թէ մեզ օգնելու, այլ Թուր-

քին օգնելու՝ որպէս զի հանգստեամբ շարդէ, կոտորէ զմեզ: Իբր թէ այլ եւս Հայ արեան կաթիլ մի անգամ պիտի չթափէր. ի՞նչ ընենք հապա եւրոպիոյ վերջին կոտորածը, յորում հարիւրաւորներ շարդուեցան: Ա՛հ, սատակի՛ն սատակի՛ն քրիստոնեայ թագաւորներն: Ես որ կը սիրեմ զՁեզ՝ չկարեմ յորդորել որ մտնէք Antoineի դրոշին ներքեւ, զի վստահ եմ որ պիտի չյաջողի:

Գիտէ՞ք արդեօք թէ ով է այն Հայ Տիկինն՝ զորոյ մի ընդարձակ յօդուածն հրատարակած էր (L'Arménie (1er Février), “chef-d'œuvre de style, de pensée et de sentiment” [փետրվարի 1-ի «Արմենիա»-ն. ոճի, մտքի եւ զգացմունքի գրուխործոց] անուանելով: Ինչ ինչ բացատրութիւններ անվայել երեւցան ինձ ի յօդուածիդ. իրաւ է որ եւրոպայի տէրութիւններն թրքի մէջ թաթխելու եւ խղզելու արժանի են. բայց պէտք չէ որ գգուելու սահմանեալ կանացի ձեռքեր կատարեն զայդ գործ արդար վրէժխնդրութեան: Այդպիսի գրուած չկարէ կոչուիլ chef-d'œuvre de style. [ոճի գլուխգործոց] ոչ ինչ նուազ արժանի են թրքի մէջ թաթխելու եւ խղզելու նաեւ մեր dadais [տխմար] Տատեաններ³¹, Միքայէլ Փորթուզալեաններն³², եւ այն ամէն վատերն որ Թուրքին կը ծառայեն, զԹուրքն կը բարեբանեն, շուն Համիդի կենաց համար կ'աղօթեն: Անմիտ եւ անսիրտ չՀայ ճիւղնե՛ր:

Ըսի Ձեզ թէ Hanotaux ապուշ մարդ է. շատ ուրախ եմ որ ես միայն չեմ որ ապուշ կը համարիմ զBatignolles³³ [Բատինոլլի] Richelieu [Ռիշելիո]. Figaroի մէջ (22 Février 1897, Ա. Բ.) կարդացի զհետեւեալ dépêcheդ [հեռագիր] զոր Paul Cambon,³⁴ Գաղղիոյ դեսպանն ի Կ. Պոլիս, ուղղեր է առ Hanotaux «Je prie Votre Excellence de n'attacher aucune créance aux notes que lui a remises Munir-Bey. Le Sultan emploie tous les moyens dilatoires, et les notes de son ambassadeur à Paris n'ont d'autre but que de vous faire croire qu'on fait quelque chose alors qu'on ne fait rien». [«Խնդրում եմ Ձերդ գերազանցութեանը որեւէ հավատ չընծայել Մյունի-Բեյի հանձնած հայտագրերին: Սուլթանն օգտագործում է բոլոր ձգձգող միջոցները, և Փարիզի նրա դեսպանի հայտագրերն այլ բան չունեն, քան Ձեզ հավատաց-

³¹ Տաւյաններ՝ 18-20րդ դարերում Թուրքիայում պետական, հայ ազգային-հասարակական գործիչների, նշանավոր մտավորականների տոհմ Կ. Պոլսում: Կոտորածների տարիներին բարձրաստիճան պաշտոններ են զբաղեցրել Հարություն Փաշա Տաւյանը (1830-1911) և Տիրան Բեյ Տաւյանը, որոնք էական ազդեցություն են ունեցել թուրքական արժունիքում:

³² Փորթուզալ Միքայէլ փաշա (1842-1897)՝ Կ. Պոլիս, հայ հասարակական գործիչ, բանասէր, հայագետ: Կրեւտում ու Թուրքիայում վարել է զանազան պետական պաշտոններ, քարգմանիչ, մաքսատան վերատեսուչ, ելևտից խորհրդական, սուլթանի անձնական գանձարանի նախարար և այլն: Զբաղեցրել է նաև կայսերական գանձապետի պաշտոնը:

³³ Batignolles՝ Փարիզի թաղամասերից մեկը:

³⁴ Paul Cambon [Պոլ Կամբոն] (1843-1924), ֆրանսիացի դիվանագետ, 1886-ին նշանակվել է ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Մադրիդում, 1900-ից տեղափոխվել է Կ. Պոլիս, իսկ 1898-1820 թթ. ծառայությունն է շարունակել Լոնդոնում:

նել, թե ինչ-որ բան արվում է, մինչդեռ ոչինչ չի արվում»]: Աւասակ գեղեցիկ ապտակ մի Hanotauxի երեսին՝ իւր դեպանին ձեռքով տրուած: Անցեալ նոյեմբերի Hanotaux յայտարարեց թէ բարեկարգութիւնքն անմիջապէս պիտի սկսին ի Հայաստան. ապու՛շ ապու՛շ ապու՛շ:

Ողջ եղիք, Սիրելի Արշակունհիս. կը մաղթեմ որ դուք հասնիք մեր ազատութեան օրուան՝ որու ես հասնելու յոյս չունիմ: Կինս կ'ողջունէ զՁեզ սիրով:

Ձերդ ի սրտէ

Նորայր

Մատենադարանի արխիւ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ.,
վավ. 212

18

Սիրեցեալդ իմ Օրհորդ Արշակունի

16 Յունիս 1897

Կը փութամ պատասխանել ձեր ամսոյս 6ի նամակին: Շատ վտանգաւոր կ'երեւի ինձ ձեր ի Կ. Պոլիս դարձն. գիտէք որ լի է քաղաքդ լրտեսներով եւ մատնիչներով, նոյն իսկ ի Հայոց. ի՞նչ ապահովութիւն ունիք որ թուրք ոստիկանութեան տեսրակներուն մէջ արձանագրուած չէ Ձեր անունն. եթէ յանկարծ ձերբակալուիք, դուք որ թուրքի հպատակ էք, ո՛վ պիտի պաշտպանէ զձեզ եւ ո՛վ պիտի ազատէ: Կ'ուզէք երթալ որպէս զի ձեր հիւանդ մայրը դարմանէք. բայց եթէ մօրդ հիւանդութիւնն երկիւղալի չէ, եւ ձեր բանտարկութեամբն ծանրանայ իւր վիճակն, բարի՞ք պիտի ըլլայ ձեր երթն, թէ՞ չարիք: Իմ կարծիքս այն է, որ չդառնաք ի Կ. Պոլիս, ինչ ալ որ պատահի: Ես ոչ ուրեք ի թղթակցացս գրած եմ ձեր մասին. բայց եթէ այլ ոք գրած է անխոհեմութեամբ, վստահ եղէք որ թուրք ոստիկանութեան հասած է անունդ: Կը ցաւիմ որ յորմէ հետէ մեկնած էք թուրքի պիղծ երկրէն՝ մոռացեր էք ամենէն կարեւորը, այսինքն՝ հպատակութիւն փոխելը:

Շնորհակալութեամբ ընդունեցայ զ'Arménie Յունիսի եւ զմիւս երկու հրատարակութիւնսն:

Մաղթելով Ձեզ ողջութիւն եւ յուսալով որ չէք դառնայ անիծեալ Համիդի անիծեալ քաղաքը, մնամ սիրոյ ողջունիւ

Ձերդ ի սրտէ

Նորայր

Մատենադարանի արխիւ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթ. 235 Բ.,
վավ. 224

ГОАР КАЗАРЯН
«ПРОБУДИТЬ СИМПАТИИ К АРМЯНАМ В ДАЛЕКОЙ СТРАНЕ
ШВЕЦИИ БЫЛО ТРУДНЫМ ПРЕДПРИЯТИЕМ, НО Я
ПОПЫТАЛСЯ.....»

(Неопубликованные письма Норайра Бюзандаци)

Представленные к публикации письма принадлежат перу выдающегося арменоведа, лингвиста и лексикографа Норайра Бюзандаци (1845-1915), написанные и посланные им разным адресатам в 1896-1897 гг. из Швеции.

Получая сведения из Западной Армении о имеющей место там резне армян (1894-1896 гг.), он выступал со статьями, гневно осуждающими политику Османской Империи. Впоследствии перевел их на французский язык и издал в стокгольмских газетах “Aftonbladet” и “Stokholms Dagblad”. Бюзандаци пытался таким образом привлечь внимание христианского мира на происходящее в Западной Армении и Армянский вопрос, а также по возможности пробудить сострадание в сердцах шведов к гонимому и страдающему армянскому народу. Благодаря этому патриотическому предприятию, в январе 1896 г. газетой “Stokholms Dagblad” был произведен сбор средств в пользу армян.

После этого Бюзандаци обратился с письмами к соотечественникам и коллегам, призывая их выразить благодарность шведскому народу за проявленный им гуманизм.

Сегодня письма хранятся в архиве Матенадарана им. Маштоца, в фонде Норайра Бюзандаци.

GOHAR GHAZARYAN
“IT WAS A DIFFICULT UNDERTAKING TO EVOKE COMPASSION
TOWARDS THE ARMENIANS IN THE FAR AWAY SWEDEN,
NEVERTHELESS, I TRIED...”

(The unpublished letters of Norayr Byuzandatsi)

The letters published in this article were written and sent from Sweden to various recipients in 1896-1897 by the outstanding Armenologist, linguist and lexicographer Norayr Byuzandatsi (1845-1915).

Having received news from Western Armenia about the massacres of Armenians (1894-1896), Byuzandatsi began to write articles and speeches condemning the politics of the Ottoman Empire, subsequently translating

them into French and publishing them in the Swedish newspapers *Aftonbladet* and *Stockholms Dagblad*. By doing so, he strived to draw the attention of the Christian world towards the Armenian question and to evoke the compassion of the Swedish people towards the persecution of Armenians. Thanks to his patriotic activities, in January 1896, *Stockholms Dagblad* organized a fund-raising activity for Armenians.

In the letters addressed to his compatriots and colleagues, Byuzandatsi urged them to express their gratitude to the Swedish people for their humanism.

The letters are kept at Matenadaran in the Norayr Byuzandatsi collection.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԷՄՄԱ ԿՈՐԽՄԱԶՅԱՆ, ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆԸ ԺԱ- ԺԴ ԴԴ., ԵՐԵՎԱՆ, 2015

Սույն գիրքը ականավոր միջնադարագետ, արվեստագիտության դոկտոր էմմա Կորխմազյանի երկար տարիների տքնաշան աշխատանքի արդյունք է: Սեղանի վրա առաջին անգամ դրվում է մի աշխատություն, որը հայ մանրանկարչության մի կարևոր դպրոցի մի քանի դար տևած պատմությունն է ներկայացնում: Այդպիսին էր նաև նրա առաջին գիրքը՝ նվիրված Ղրիմի հայ մանրանկարչության դպրոցին¹, որն ի դեպ հիմնականում կազմում է Բարձր Հայքի մանրանկարչության դպրոցի շարունակությունը՝ ունենալով զարգացման իր գաղթօջախային ուղին:

Ոճական առումով Բարձր Հայքի մանրանկարչության դպրոցը շունի այնպիսի միասնական դեմք, ինչպիսին հատուկ է Կիլիկիայի, Վասպուրականի և Ղրիմի մանրանկարչությանը: Դրա հավանական պատճառները հետևյալն են՝ ինչը կարող է ճշտվել հետագա ուսումնասիրությունների ընթացքում.

ա. Բարձր Հայքի բնակչությունը եղել է անկայուն. մի կողմից կամ վերացվել է կամ տարագրվել, մյուս կողմից՝ համալրվել կենտրոնական Հայաստանից, հիմնականում Շիրակից և Կիլիկիայից գաղթած հայ բնակիչների հաշվին. բնակչության կազմի փոփոխությունները հիմք են դարձել նաև մանրանկարչության անկայուն ոճի փոփոխությունների:

բ. Բացի ազգաբնակչության կազմից, փոփոխվել են Բարձր Հայքի շրջակա ոչ հայկական և հայկական գավառների քաղաքական-ազմինիստրատիվ բաժանումները՝ Բյուզանդիա, ապա սելջուկներ, այնուհետև՝ թաթար-մոնղոլներ, Կիլիկիայի հայկական թագավորություն, Իկոնիայի սուլթանություն, Պալեոլոգյան Բյուզանդիա, Լենկթեմուրին հաջորդած խառը շրջան և հայերի արտագաղթ դեպի Ղրիմ:

Այս երկու հանգամանքների փոխներթափանցումը առաջ է բերել նաև ոճի կտրուկ փոփոխություններ. վաղ շրջանի Ավագ Վանքի դպրոցի ոճը, որը Մեծ Հայքի մանրանկարչությանը բնորոշ ազատ, զարդային, սխեմատիկ ոճ է, ԺԳ. դարի երկրորդ կեսի մանրանկարչությունը, որ ազդված է կիլիկյան ավան-

¹ Э. М. Корхмазян, Крымская армянская миниатюра, Симферополь: Энергия-дельта, 2008.

դուլթներից, և ժԴ. դարի մանրանկարչությունը, որ բյուզանդական արվեստի՝ ոչ միայն մանրանկարչության, այլև մոնումենտալ ձևերի, յուրացման նոր փորձ է հայ մանրանկարչության մեջ:

Ձենք կարող պնդել, որ մեր առաջադրած սխեման բացարձակապես ճշգրիտ է, բայց ընդհանուր գծերով այն հիմնավորված է էմմա Կորխմազյանի հիանալի ուսումնասիրության մեջ: Նույն գիրքը մեզ թույլ է տալիս պնդել, որ Բարձր Հայքի մանրանկարչության անցած ուղին նման չէ հայ մանրանկարչական որևէ այլ դպրոցի ուղուն, այն յուրահատուկ է: Որոշ առումով իր բազմազան դրսևորումներում, սակայն ոչ ոճի մեջ, այն նման է Մեծ Հայքի մի քանի այլ՝ Անիի, Գլաձորի, Արցախի դպրոցների ուղուն:

Գրքի ընթերցումը թույլ է տալիս նաև այլ տիպի ընդհանրացումների գալու կամ զարգացնելու վերն արված մեր եզրահանգումները: Իսկ դա նշանակում է, որ լրացվել է մի կարևոր բաց հայ մանրանկարչության պատմության մեջ, բացահայտվել է զարգացման մի շղթա, որ համարձակություն է տալիս մինչև այժմ եղածների համեմատ մի փոքր տարբեր հայացք նետել հայ միջնադարյան արվեստի վրա:

Գրքի արժանիքները վերագրելով հեղինակին՝ ուզում ենք առիթն օգտագործել՝ նշելու համար նաև հայագիտության այն վաստակավորներին, որոնց գիտական ղեկավարությամբ է աշխատել տիկին Կորխմազյանը տասնյակ տարիներ, կրթելով իր աչքը, հարստացնելով իր գիտելիքները և հավատարիմ մնալով նրանց ավանդներին՝ Ս. Տեր Ներսեսյան, Ռ. Դրամբյան, Լ. Դուռնովո, Տ. Իզմայլովա, Լ. Ազարյան: Այս փաղանգից չենք կարող անջատել նաև ակադեմիկոս Լևոն Խաչիկյանին, ում ահռելի գիտելիքների ու խորթափանցության վրա հիմնված խորհուրդներն ու կենդանի աջակցությունը մեզ բոլորիս լուսավոր հիշատակ է թողել, և Ասատուր Մնացականյանին, ով փորձում էր գտնել զարդարվեստի ծագման ակունքները: Նշենք նաև Հայդե և Հելմուտ Բուշհուզեն ամուսիններին, որոնց հետ տիկին Կորխմազյանի երկարամյա աշխատակցությունը փոխադարձ նպաստներ է բերել: Կարելի է նաև այլ անուններ հիշել, սակայն բավարարվենք այսքանով:

Ինչպիսին որ վերոհիշյալ անձինք եղել են էմմա Կորխմազյանի համար, չենք վարանում ասել, որ ճիշտ նույնպիսին ինքն է եղել մեր՝ իրենից կրտսեր արվեստաբան միջնադարագետներիս համար: Նա եղել է մեր թեկնածուական թեզի ընդգրկմախոսը, մեր բազմապիսի պրպտումների վստահելի խորհրդատուն:

Գիրքը բաղկացած է երկու մասից՝ տեքստային և պատկերային: Առաջաբանում և առաջին գլխում (Պատմամշակութային ակնարկ և «Բարձր Հայքի մանրանկարչության ակունքները») հեղինակը հանգամանորեն խոսում է Բարձր Հայքի առասպելական և պատմական անցյալի, տարբեր շրջաններում

նրա վարչական բաժանումների մասին, ի մի բերելով հայագիտության մեջ արժարժված զանազան ստուգաբանություններ՝ կապված Երիզա, Երզնկա տեղանունների և Անահիտ աստվածուհու պաշտամունքի հետ, խոսում է այնտեղ գտնված հայկական զանազան աստվածների և դիցուհիների (Անահիտ, Նանե, Արամազդ և այլն) հեթանոսական սրբավայրի մասին:

Նման նախաբանը մեզ հուշում է Բարձր Հայքի հեթանոսական հարուստ անցյալի, հնագույն ժամանակներում հունական և մերձավորարևելյան լայն կապերի մասին: Քրիստոնեության տարածման շրջանում ևս շարունակվում է Բարձր Հայքի մշակութային ակտիվությունը (Գրիգոր Լուսավորչի ժամանակ և դրանից առաջ եկեղեցիների հիմնարկում, Մաշտոցի մի քանի աշակերտների ծնունդը այդ աշխարհում, Հոռոմի և Բյուզանդիայի կայսրերի, ավելի ուշ նաև արաբների առևտրական և այլոց հետաքրքրվածությունն այդ աշխարհով և այլն): Այդ ամենը, նույնիսկ մեզ քիչ թե շատ հայտնի տեղեկություններին դիմելը (Իփիգենիայի և Օրեստեսի հայտնվելը Քիլիսեհեում, այսինքն՝ Բարձր Հայքի Եկեղյաց գավառում) ստեղծում է մշակութային մի հետնախորք, որը կարծես թե հիմնավորում է այդ աշխարհում մանրանկարչական կարևոր դպրոցի հարուստ բովանդակությունը:

Դպրոցի ակունքներում հեղինակը տեսնում է Մատենադարանի երկու ձեռագիր՝ թիվ 2877 և 6264: ՄՄ 6264 ձեռագրի հիշատակարանի վերընթերցման շնորհիվ որոշվում է նաև ՄՄ 2877 ձեռագրի ժամանակը՝ ԺԱ. դարի վերջ (1089 թ.), ճշգրտելով Գարեգին Հովսեփյանի մոտավոր թվագրումը (1181 թ.): Այս ձեռագրերը մոտ են ոչ այնքան ոճով, որքան զարգամոտիվներով, որոնց նմուշներ տիկին Կորխմազյանը տեսնում է Բարձր Հայքի հեթանոսական գտածոներում:

Ելնելով այն ընդհանուր հիմնադրույթից, որ քրիստոնեական արվեստը շատ բան է ժառանգել հեթանոսական պատկերացանկից և վերաիմաստավորել այն, հենվելով հայ մանրանկարչության խոր գիտակ Տատյանա Իզմայլովայի ուսումնասիրությունների վրա, արվեստաբանը պարզում է, որ Բարձր Հայքում է կազմավորվել Ավետարանների տիտղոսաթերթն իր գլխազարդով, սկզբնատառով և տեքստի առաջին տողերով (Տ. Իզմայլովան դա գնահատում է իբրև եզակի երևույթ գրքարվեստում, թեև վերագրելով դա հայ և բյուզանդական գրքարվեստին և ոչ թե իռլանդական, որտեղ այդ երևույթը ավելի վաղ է տեղ գտել):

Այս առիթով նշենք, որ դեռևս վաղ է խոսել ԺԱ.-ԺԲ. դարերում Բարձր Հայքի մանրանկարչության ազդեցության մասին կիլիկյանի վրա, սակայն դա հնարավոր ենք համարում: Ամուր հիմքեր չունենք խոսելու նաև Կարինի արվեստում քաղկեդոնական ազդեցության մասին, քանի որ Բարձր Հայքում ԺԱ.-ԺԳ. դարերում եղել են նաև քաղկեդոնական հայեր, իսկ մեզ հայտնի բուն ար-

վեստը մինչև Երզնկայի Աստվածաշունչը բյուզանդական արվեստի ազդեցություն գրեթե չի կրել ոճական առումով: Ըստ էության, բյուզանդական արվեստի տեսանկյունից ուղղակի ազդեցություն Բարձր Հայքում եղել է այն ժամանակ, երբ Բյուզանդիան ինքն էր նվաճվում խաչակիրների կողմից: Ուրեմն գեղարվեստական ձևի փոփոխությունները միանգամայն այլ երևույթների հետ են կապված, որոնք կարելի է համարել «գեղարվեստական մոդա» և «գեղարվեստական ազդեցություն», ինչպես նոր ժամանակներում իմպրեսիոնիզմի ազդեցությունը կապ չունի նկարչի որևէ դավանանքի պատկանելու հետ:

Ինչ վերաբերում է Կապադովկիայի և Բարձր Հայքի արվեստի հարաբերությունների ուսումնասիրությանը, դա ավելի ընդգրկուն խնդիր է, քանի որ Կապադովկիայի հայկական ազդեցությամբ կամ հայերի ձեռքով արված որմնանկարների գոյությունը համընկնում է Ժ.-ԺԲ. դարերին, իսկ կապադովկյան արվեստը առնչություններ ունի հայկական արվեստի շատ ռեգիոնների հետ՝ Փոքր Հայք, Վասպուրական, Տարոն, Կիլիկիա՝ մինչև Սարգիս Պիծակ: Ընդ որում տեղական շարքի պատկերումը Բարձր Հայքում մեզ առաջին հայտնի օրինակներով հանդիպում է ԺԱ դարի վերջի ՄՄ 2877 Ավետարանում և Մշո Ճառընտիրում (ՄՄ 2270)՝ ոճով միանգամայն տարբեր գործերում:

ԺԳ. դարի սկզբի Բարձր Հայքի մանրանկարչությունը հիմնականում կապված է Դարանաղի և Եկեղյաց գավառների հետ, կարևոր ձեռագրեր հասել են Ավագ վանքից՝ Երզնկայից ոչ հեռու Դարանաղի գավառից: Ավագ Վանքի ձեռագրերի վրա առաջին լուրջ ուշադրությունը դարձրել է երախտավոր Ա. Մաթևոսյանը (1969 թ.):

Այսպիսով, հայկական ձեռագրերի խոր գիտակ երջանկահիշատակ էմմա Կորխմազյանի սույն աշխատությունը լուրջ ներդրում է հայագիտության մեջ, առանձնապես միջնադարյան հայ գրքարվեստի ուսումնասիրության մարզում: Նոր դպրոց հայտնաբերելը հազվագեղ երևույթ է, իսկ տիկին Կորխմազյանը հայտնաբերել և խորապես ուսումնասիրել է երկու մանրանկարչական դպրոց՝ Ղրիմի և Բարձր Հայքի, որոնք, ինչպես նա համոզիչ կերպով ցույց է տվել, մեկը մյուսի օրգանական շարունակությունն են:

Հարկ ենք համարում նշել, որ էմմա Կորխմազյանի այս «կարապի երգը»՝ հայերեն և ռուսերեն, հետմահու հրատարակության են պատրաստել նրա վաղեմի բարեկամներ, Մաշտոցի անվան Մատենադարանի աշխատակիցներ Մարգո Դարբինյանը, Ստելլա Վարդանյանը և Գևորգ Տեր-Վարդանյանը:

ՆԱԶԵՆԻ ՂԱՐԻՔՅԱՆ

ԿՐԿՆԱԿԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Քրիստինա Մարանցիի «Արթուն գորություններ (Զվարթունք). Վաղմիջնադարյան Հայաստանի երեք եկեղեցի» (Christina Maranci. *Vigilant Powers: Three Churches of Early Medieval Armenia*, Studies in the Visual Cultures of the Middle Ages, vol. 8), Brepols, Turnhout 2015) գիրքն այս տարվա հունվար ամսին երկրորդ անգամ է պարզևատրվել՝ արժանանալով միջնադարյան արվեստի պատմությանը վերաբերող գրքերի համար սահմանված «Կարեն Գուլդ» հեղինակավոր մրցանակին: Դա տարեկան մրցանակ է և հիմնվել է 2016 թվականին: Առաջին պատվավոր գնահատանքը գիրքն ստացել էր մեկ տարի առաջ՝ ամերիկյան «Հայկական ուսումնասիրությունների և հետազոտությունների ազգային ընկերության» (NAASR) կողմից՝ պարզևատրվելով «Դոկտոր Սոնա Արունյան» գրքի մրցանակով:

Քրիստինա Մարանցիի այս ծավալուն աշխատությունը նվիրված է յոթերորդ դարի հայկական երեք նշանավոր եկեղեցիներին՝ Մրենի, Զվարթնոցի և Պողնիի ուսումնասիրությանը: Հայկական ճարտարապետության պատմության ավելի քան հարյուրամյա գիտական ժառանգության մեջ այս աշխատանքն այն եզակի ուսումնասիրություններից է, որ նոր, համակարգված և միջոլորտային մոտեցում է ցուցաբերում քաջածանոթ նյութին և առաջադրում է նոր խնդիրներ: Կարելի է ասել, որ այստեղ առաջին անգամ փորձ է արվել, առնվազն անգլախոս ընթերցողների համար, ոչ միայն վաղմիջնադարյան «ոսկեդարյան» շրջանի այս երեք եկեղեցիները ներկայացնել ճարտարապետական, տիպաբանական, կառուցողական կամ գեղարվեստական առանձնահատկությունների վերլուծությամբ և դասակարգմամբ, այլև դիտարկել այդ վերլուծությունը պատմական, գաղափարական, ծիսաբանական ընդհանուր համատեքստում, տեսնել դրանք մի միասնական շղթայի մեջ:

Այդ համատեքստը յոթերորդ դարի աշխարհաքաղաքական փոփոխություններն են, Սուրբ Երկրի դրամատիկ իրադարձությունները և դրանց հետ կապված՝ Հայաստանի քաղաքական, հասարակական և դավանական իրողությունները: Իսկ շղթան՝ կայսերական, եկեղեցական և նախարարական իշխանության թողած դրոշմը՝ երեք հուշարձանների ճարտարապետական հորինվածքի, քանդակային հարդարանքի և վիմագրական բովանդակության վրա:

Հեղինակը հատկապես շեշտում է այն փաստը, որ այս երեք եկեղեցիները կառուցվել են «գլոբալ» պատերազմների տարիներին, երբ մի կողմից՝ Հայաստանի «ուղեղնային սահման» լինելու կարգավիճակը, մյուս կողմից՝ ժամանա-

կակիցների վախճանաբանական սպասելիքների ուժգնացումը, ձևավորել են մի բաբախուն գեղարվեստական մշակույթ, որ աղերսվում է միաժամանակ բյուզանդական, պարսկական և արաբական աշխարհներին: Ըստ Մարանցիի՝ յոթերորդ դարի հայկական հուշարձանների աննախադեպ քանակը և տիպաբանական բազմազանությունը թույլ են տալիս պնդել, որ «սահմանային» դրույթները կարող է արտոնյալ տարածք հանդիսանալ մշակույթի և արվեստի զարգացման համար: Ըստ այդմ, հեղինակի գլխավոր հարցադրումներն են՝ ինչպե՞ս են այս հուշարձաններն արտահայտում այն աշխարհը, որի մեջ ստեղծվել են և ինչպե՞ս են դրանք «գործել» այդ աշխարհում:

Միջմշակութային առնչությունների և պատմական համատեքստում դիտված հետազոտության մեթոդաբանությունը, ինչպես նաև տարածաշրջանային գեղարվեստական ավանդույթների ընդհանրության ընկալումը թույլ են տվել հեղինակին վերանայել հուշարձանի վերաբերյալ գոյություն ունեցող առանձին տեսակետները, ընդունել կամ հերքել տարբեր վարկածներ, ինչպես նաև առաջադրել մի շարք բացահայտումներ և նորովի մեկնաբանություններ, առաջ քաշել նոր, չուսաբանված խնդիրներ: Դրանցից են, օրինակ, պատվիրատուների շրջանակի և հասարակական պատմության, գաղափարախոսության կազմավորման, ընկալման տեսությունների, փոխանակման և յուրացման հղացքների հարցերը, կամ մեկ հուշարձանում կամ պատկերում ամփոփված մի քանի իմաստների և միտումների ընթերցման հնարավորությունը, սրբազան տարածքների ձևավորումը և եկեղեցիների տեղադրությունը բնապատկերում, կառուցվող կամ վերակառուցվող եկեղեցիներում նախկին քանդակագործ հուշարձանների բեկորների գործածումը, որ բարձրացնում են մշակութային հիշողության հարցը, և այլն: Ոչ պակաս կարևոր է նաև Մարանցիի ձգտումը՝ զգալ և փոխանցել հայկական միջնադարյան եկեղեցիների շարժուն միջավայրն ու կենդանի շունչը, որ օժված էր մեռոնով, պարուրված էր խնկարկման բույրով, թրթռում էր ծիսական մեղեդիների և արարողական երթերի շրջունի ձայներից: Ինչպես ինքն է նշում «Մոտիկից հայացքը կազմում է այս գրքի սիրտը, և հույս ունեմ՝ նաև ընթերցման հաճույքը» (էջ 18):

Յուրաքանչյուր հուշարձանի վերաբերյալ ուսումնասիրված և ներկայացված են թե՛ սկզբնաղբյուրների, և թե՛ մասնագիտական գրականության գրեթե ամբողջական գիտելիքը: Ավելին, մատենագիտության տեսության մեջ առատորեն քննարկվում են նաև նյութին անուղղակի առնչվող կամ հարակից բնագավառներին պատկանող աշխատություններ, որոնք օգնել են փաստարկել մի շարք կնճռոտ հարցեր և տեղեկություններ:

Երեք եկեղեցիների ընտրությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ դրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է դարաշրջանի ճարտարապետական ամենատարածված տիպերից մեկի հարացուցային տարբերակը:

Մրենը գմբեթավոր բազիլիկա է, Զվարթնոցը՝ կենտրոնագմբեթ բոլորակ՝ ներքուստ քառաբսիդ հատակագծով, իսկ Պտղնին գմբեթավոր սրահ է: Բացի այդ՝ դրանք կապված են վաղմիջնադարյան Հայաստանի երկու գլխավոր նախարարական տներին՝ Կամսարականների և Ամատունիների, և կաթողիկոս Ներսես Գ Շինողի անվան հետ:

Գիրքն այսպիսով բաժանված է երեք գլխի՝ որոնցից յուրաքանչյուրը նվիրված մեկ եկեղեցու համապարփակ ուսումնասիրությանը:

Առաջին գլուխը վերնագրված է «Մահմանը, Հերակլը, Հայաստանը և Մրենի եկեղեցին»: Ըստ Մարանցիի՝ կառուցված լինելով հայ-բյուզանդական սահմանին՝ Մրենի եկեղեցին անմիջականորեն առնչվում է Հերակլի ռազմական արշավանքների քաղաքական համատեքստին, մասնավորապես՝ սահմանի ամրագրման խնդրին: Այս ընկալմամբ է վերլուծված նաև եկեղեցու հյուսիսային ճակատը՝ զարդարող քանդակային հորինվածքը, որ պատկերում է գերեվարված Խաչի հաղթական վերադարձը Երուսաղեմ: Տեսարանի բովանդակությունը քննելով գրավոր աղբյուրների, կայսերական գաղափարախոսության և ժամանակի վախճանաբանական պատկերացումների հոլովույթում, ինչպես նաև հաշվի առնելով եկեղեցու սրբօծման հայկական ծեսի առանձնահատկությունները՝ հեղինակը նորովի է մեկնաբանում քանդակային հորինվածքը՝ որպես Երկնային Երուսաղեմ մուտքի խորհրդանշական դարպաս: Հուշարձանը տեղում ուսումնասիրելու հնարավորությունը Մարանցիին թույլ է տվել մանրագնին հետազոտել նաև եկեղեցու ներսում երբեմնի որմնանկարային շարքի մնացորդները և հետաքրքիր բացահայտումներ անել, օրինակ՝ Քրիստոսի հոտնկայս կերպարը, առաքյալների դիմանկարները, ամենահին հայկական աստվածաշնչան մեջբերումը և այլն: Որմնանկարների պատկերագրական ծրագիրը նույնպես արտահայտել է կայսերական ռազմական հզորության գաղափարը:

Գլխում մանրամասն քննության է առնվում նաև արևմտյան մուտքի բարավորի քանդակային խումբը, որ հանգեցնում է Մրենի անմիջական պատվիրատուի կամ պատվիրատուների ինքնության խնդրի նորովի մեկնաբանությանը, այստեղից էլ՝ շինարարության ավարտի տարեթիվը 638/40-ը համարելու պատեհությունը: Հատկապես համոզիչ է կերպարների դիրքի և հագուստների պատկերագրական բազմաշերտ քննությունը: Գլուխն ավարտվում է ենթադրություններով, որ Մրենի կառուցման պատճառներն ու հանգամանքները ուղղակիորեն կապված են Հերակլի հայկական արշավանքների հետ: Ինչպես կարծում է Մարանցիին. «եկեղեցին արտահայտում է շահերի և գաղափարների մի հավաքական ցանց, քաղաքական և կրոնական ամրապնդմանն ուղղված կայսերական օրակարգը, տեղական նախարարական տները և նրանց՝ իշխանության աստիճանակարգում առաջ գնալու պատեհական հավակնությունները, Սուրբ Երկրի և Երուսաղեմի վերաբերյալ ընդհանուր մտահոգությունները և Քրիստոսի Երկրորդ գալստյան սպասումը» (էջ 18):

Զվարթնոցին նվիրված գլուխը, որ վերնագրված է «Միջազգային հարթակ. Զվարթնոցի տաճարը», երեքից ամենածավալունն է: Այն նաև ներշնչել է գրքի անվանման գաղափարը. «Զուարթունք՝ Արթուն զորություններ», որով Գրիգոր Լուսավորչի տեսիլքի երկնաբնակ զորքն աղերսվում է դարաշրջանի գերտերությունների և վերջիններիս հետ անընդհատ առնչվող հայկական հոգևոր ու աշխարհիկ ընտրանու հզորությանը: Գլխում համակարգված հաջորդականություններ ի մի են բերված մինչ այժմ գոյություն ունեցող բոլոր արժեքավոր ուսումնասիրությունները հայոց ճարտարապետության հազվագյուտ գոհարներից մեկի՝ Ներսես Գ-ի կառուցած Զվարթնոց-Սուրբ Գրիգոր եկեղեցու և կից պալատական համալիրի մասին: Բացի այդ, քննարկվում են հուշարձանի անվան, հիմնադրման, տեղավայրի ընտրության, ինչպես նաև ճարտարապետական հորինվածքի և քանդակային հարդարանքի վերաբերյալ տարբեր տեսակետներն ու վարկածները, որոնց հեղինակը հավելում է նորերը: Առաջին հերթին կարևորվում են տաճարի կառուցման ժամանակը և հանգամանքները, որոնց առիթով նա հատկապես շեշտում է Հայաստանում բյուզանդական ուղմական ներկայությունը և Ներսես կաթողիկոսի հարաբերությունները մի կողմից Կոստանդ Բ կայսեր, մյուս կողմից՝ հայոց հոգևոր իշխանության հետ: Այս առումով բավական խորաթափանց դիտարկում է մոնոթեիստական, այսինքն՝ «միակամական» զիջումային վարդապետության հիշատակումը, որ որդեգրել էր բյուզանդական արքունիքը՝ սկսած Հերակլից՝ Արևելյան եկեղեցիների միավորման նպատակով:

Ապա Զվարթնոցի ճարտարապետական աննախադեպ տիպը վերլուծվում է ասորա-միջագետքյան և հատկապես՝ երուսաղեմյան ավանդույթների հետ հարաբերության մեջ: Վերջին պնդումը Մարանցին փաստարկում է նաև գրավոր աղբյուրներով (Մովսես Դասխուրանցու Պատմության մեջ պահպանված երուսաղեմի «Սուրբ տեղեաց» ուղեցույցի հատվածը)՝ փորձելով պատմականորեն բացատրել Հարություն բոլորակի «սրբազան նախատիպի» գործածումը հայկական հողում և այդ նախատիպի ստեղծագործական զարգացումը տարբեր օրինակներում: Այս առումով միանգամայն յուրօրինակ և ուսանելի է Զվարթնոցի և մահմեդական աշխարհի կարևորագույն հուշարձան՝ երուսաղեմի հրեական տաճարի տեղում կառուցված Ալ-Հարամ-ալ-Շարիֆկամ «Ժայռի գմբեթ» մզկիթի միջև անցկացված զուգահեռը:

Առանձին բաժիններով նորովի լուսաբանված են Զվարթնոցի ամբողջ համալիրի վիմագրական արձանագրությունները, ուրարտական սեպագիր կոթողի ներկայությունը և հատկապես մինչ այժմ գրեթե անտեսված՝ արևային ժամացույցը: Վերջինս նորույթ է թվում վաղմիջնադարյան հայկական իրակա-նության մեջ և կարող է կապվել Ներսես Գ-ի ձեռնարկած ծիսական, ժամերգա-կան ռեֆորմի հետ:

Առանձնապես հետաքրքիր է հեղինակի մեկնաբանությունը տաճարի քանդակային հարդարանքի վերաբերյալ, որտեղ, ընդունելով հանդերձ արդեն իսկ շրջանառության մեջ դրված տեսակետները, նա փորձում է դրանք միահյուսել ընդհանուր գաղափարաբանական հանդերձի հետ, որում արտահայտված են կառույցի՝ որպես կաթողիկոսանիստ մայր եկեղեցու և Աստծո սրբազան տաճարի կարգավիճակը, ինչպես նաև՝ հայոց առաջին հայրապետ Գրիգոր Լուսավորչի եկեղեցաշինական գործունեության խորհուրդը:

Զվարթնոցի կառուցման տարիները (643-660) համընկնում են արաբական առաջին արշավանքների, Սասանյան հարստության վերջաբանի և Բյուզանդական հզորության սասանման ժամանակաշրջանին, ուստի եկեղեցին կարող է դիտվել որպես զուգահեռաբար ընթացող համաշխարհային հնչողության մտահղացում. հեղինակի դիտարկմամբ՝ «յոթերորդ դարի ռազմական թատերաբեմում «միջազգային հարթակ» բարձրացված հուշարձան» (էջ 19):

Սրան հակառակ՝ վաղմիջնադարյան Հայաստանի տեղական ազնվականական կյանքի և ավանդույթների համատեքստում է ուսումնասիրված երրորդ՝ Պտղնու եկեղեցին, որին նվիրված բաժինը կրում է «Իշխանական սրբավայր. Պտղնու եկեղեցին» վերնագիրը: Մարանցին ուշադրությունը կենտրոնացրել է առավելապես հուշարձանի քանդակային հարդարանքի մեկնաբանության վրա՝ փորձելով աստվածաշնչյան և որսի տեսարանների, թռչունների, զարդագոտիների և սրբազան անոթների պատկերների համաքրիստոնեական նշանակությունը կապել կոնկրետ պատմական անձանց և իրողությունների հետ, որոնք վերաբերում են Ամատունիների նախարարական ընտանիքին: Ըստ այդմ՝ պատկերազրական այս համակարգն ընդհանուր մտահղացմամբ նպատակ ուներ հավերժացնել հայկական ազնվականության հիմնական արժեքները՝ հերոսական քաջությունը, Ֆիզիկական ուժը, որսի և խնջույքի կարևորությունը, նախնիների հիշատակը և հնագույն տոհմական ծագումը: Գեղեցիկ համեմատություն անելով գրավոր աղբյուրներում հիշատակված Ամատունիների ծննդաբանության պատումի և համիրանական աշխարհում հայտնի՝ արքայական իշխանության սրբազան եռյակ «բախտ, քաջություն, փառք» ատրիբուտների հետ, ինչպես նաև դիպուկ նկատելով, որ վաղքրիստոնեական արվեստում որսի և խնջույքի տեսարաններն առավելապես հանդիպում են թաղումնային գործառույթ ունեցող հուշարձաններում, հեղինակը եզրակացնում է, որ Պտղնու եկեղեցին կառուցվել է ոչ միայն որպես եպիսկոպոսանիստ կաթողիկե, այլ նաև ծառայել է որպես նախնիների հիշատակին նվիրված տոհմական սրբավայր. ավանդույթ, որ կրկին անդրադարձնում է Հայաստանի «սահմանային» դիրքի առանձնահատկությունները, բայց այս անգամ՝ Պարսկական կայսրության քաղաքական և մշակութային ծիրում: Հեղինակը քննարկում է նաև եկեղեցու կառուցման թվականները՝ ըստ բերված փաստարկների առաջարկելով

ավելի շուտ յոթերորդ դարի կեսերը (640-680 թթ. միջև), քան սկիզբը, ինչպես ենթադրվում էր մինչ այժմ:

Քրիստինա Մարանցիի այս աշխատության նորարարությունն ու բովանդակային համապարփակությունն այնքան ծանրակշիռ են, որ տեղ գտած մի քանի վրիպակներն ու անճշտությունները բոլորովին չեն խանգարում գրքի գիտական արժեքի ընկալմանը: Դրանց թվում թերևս կարելի է նշել «քաղաքագյուղ» և «տանուտեր» բառերի մեկնաբանությունը (էջ 35 և 44), որոնցից առաջինի «պարսպապատ գյուղ» ճշգրիտ իմաստը թույլ կտար ենթադրել Մրենի եկեղեցու շուրջ բնակավայրի գոյությունը, իսկ երկրորդի՝ «նախարարական տոհմի ավագ, ղեկավար» լինելու իմաստը գերազասելի է արտաքին միջամտությամբ տիտղոս ստանալու մասին ենթադրությունից: Նմանապես՝ Բարդուղիմեոս առաքյալի պաշտամունքն ավելի ուշ շրջանում է տարածվել Հայաստանում, քան Թադեոսինը, և նրա անունը չի կարող հիշատակված լինել հինգերորդ դարի աղբյուրներում, ինչպես նշում է հեղինակը (էջ 90), իսկ Վրթանես Քերթովը հայտնի է ոչ թե որպես կաթողիկոս (էջ 91), այլ՝ տեղապահ: Դառնալով Զվարթնոցի տաճարին՝ գուցե առարկելի է այն պնդումը, թե արաբական արշավանքների և Ներսեսի բացակայության հետևանքով 650-ական թվականներին ընդհատվել են եկեղեցու շինարարական աշխատանքները, քանի որ աղբյուրները նշում են կաթողիկոսի տեղապահ Անաստասի գործունեությունը: Նույնկերպ, ըստ աղբյուրների քննության, Զվարթնոցի տաճարի կառուցման վայրի ընտրությունը վերաբերում է սուրբ Գրիգորի և Տրդատ թագավորի հանդիպմանը՝ վերջինիս Վիրապից ելնելուց հետո դեպի Վաղարշապատ ճանապարհին, այլ ոչ՝ Գրիգորի՝ Կեսարիայում ձեռնադրվելուց հետո (էջ 122), որովհետև այդ ժամանակ Տրդատը նրան հանդիպում է Բագավանում¹: Վրիպակների շարքում արժե հիշատակել Հովհաննես Մանդակունու կաթողիկոսության տարիները, որ նշված են 420-490 (էջ 151), և հայերեն որոշ բառերի սխալ տառադարձումը (տե՛ս էջ 42, 61, 151 ևն), որ հետևանք է ավելի շուտ արևմտահայերենի արտասանության:

Այսպիսով, խանդավառությամբ ողջունելով Քրիստինա Մարանցիի Արթուն գործություններ. Վաղմիջնադարյան Հայաստանի երեք եկեղեցի գրքի մուտքը մասնագիտական շրջանակներ, համամիտ ենք հեղինակի հայտնած հույսին, որ «այն կհավելի մեր գիտելիքները վաղմիջնադարյան հայկական աշխարհի և շրջակա ավանդույթների հետ նրա կապի մասին, ինչպես նաև կձևավորի այս ոլորտում այլընտրանքային մոտեցումների հնարավորությունը»:

¹ Հունական վաբը չի նշում հանդիպման վայրը, սակայն նկարագրում է Գրիգորի «աթոռ բարձրանալը» Աշտիշատում (տե՛ս G. Garitte, *Documents pour l'étude du livre d'Agathange*, Vatican 1946, § 158, p. 96-97):

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ, ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՂԻԿ ՂԱՓԼԱՆԵԱՆԻ, ԵՐԵՒԱՆ, 2015*

Վաղուց ի վեր հասունացել էր ներկայացվող մատենագիտությունը կազմելու պատասխանատու գործը, որ պիտի նպաստի նարեկացիագիտության հետագա զարգացմանը: Եվ ահա 2015 թ. Երևանում Տիգրան Մեծ հրատարակչությունը Աստղիկ Ղափլանյանի աշխատասիրությամբ լույս ընծայեց «Գրիգոր Նարեկացի. Մատենագիտութիւն» մեծարժեք գիրքը՝ Կարո Շահբազյանի մեկենասությամբ:

Սույն գրախոսության արդիականությունը նարեկացու մատենագիտության գիտագործնական նշանակության գնահատումն է: Մեր նպատակն է գիտականորեն արժևորել Աստղիկ Ղափլանյանի կազմած մատենագիտությունը, բացահայտել բացթողումները՝ հետագա վերահրատակություններում լրացնելու համար: Մեր հիմնական խնդիրն է ներկայացնել կազմված մատենագիտության արժանիքները և թերությունները: Գրախոսության մեջ առաջնորդվել ենք արժեքանական (աքսիոլոգիական) մեթոդով, ինչպես նաև մատենագիտական սկզբունքներով: Մեր հոգվածի գիտական նորույթը Աստղիկ Ղափլանյանի կազմած մատենագիտության գիտական արժևորումն է՝ բացթողումների մատնանշումով:

Գրքի խմբագիրն է Մատենադարանի ավագ գիտաշխատող Հակոբ Քյոսեյանը, որն արժանիորեն գնահատում է Աստղիկ Ղափլանյանի կատարած գործը. «Նարեկացու ժառանգութեան խորքն ու ծաւալը, նրա ունեցած ահռելի նշանակութիւնը հայ հոգևոր մտքի պատմութեան մէջ վաղուց հրամայական անհրաժեշտութիւն էին առաջացրել կազմելու նրա երկերի մատենագիտութիւնը: Աստուածահաճո այս ձեռնարկն իրեն բնորոշ ջերմեռանդ սիրով, նախանձախնդրութեամբ կեանքի կոչեց գրադարանային գործի նուիրեալ մշակ տ. Աստղիկ Ղափլանեանը»¹:

Գրքի հենց սկզբում Աստղիկ Ղափլանյանը գրում է. «Մատենագիտական ծանօթութիւն», որում համառոտ շարադրում է նաև իր կազմած մատենագիտության սկզբունքները:

* Այս հոդվածի մի այլ՝ համացանցային տարբերակ տե՛ս <https://bit.ly/2kmZXie> (25 մայիսի 2018 թ.) - Խմբ.:

¹ Գրիգոր Նարեկացի, Մատենագիտութիւն, աշխատասիրութեամբ Աստղիկ Ղափլանեանի, Երևան, 2015, էջ 14:

«Այս աշխատանքի շարժառիթը այն անվերապահ, ակնածոս սէրն է, որ տաճել ենք Ս. Գրիգոր Նարեկացու անուան ու ժառանգութեան նկատմամբ», - գրում է Աստղիկ Ղափլանյանը², - ստանձնելով դժվարին ու պատվախնդիր մի աշխատանք՝ 1173 թ. Նարեկացուն առաջին անգամ հիշատակող ձեռագրից հասնելով մինչև 2014 թ. տպագիրները: Այդ դարավոր ճանապարհին Նարեկացին և՛ արտագրվել է ձեռագրերով, և՛ տպագրվել գրաբար, նաև աշխարհաբար փոխադրություններով ու այլալեզու թարգմանություններով:

1512 թ. հայերեն առաջին տպագիր գրքից սկսած՝ կազմվել է Նարեկացու բոլոր տպագիրների մատենագիտությունը, այդ թվում նաև Նարեկացու երկերի օտար լեզուներով հրատարակությունները և նրա մասին օտարալեզու ուսումնասիրությունները:

Գրքի վերջում զետեղված են լուսանկարներ, որոնց մեջ հատկապես գրավիչ է Նարեկացու եռահարկ ճգնարան-քարայրի լուսանկարը և հատակագիծը: Ներկայացված են նաև Գրիգոր Մլիճեցու շորս մանրանկարները, որոնցում պատկերված է Նարեկացին:

Գրքի առաջին գլուխը վերնագրվել է «Ս. Գրիգոր Նարեկացու ձեռագիր ստեղծագործություններ», որտեղ մատենագետը ձեռագրացուցակներից հանել և դասակարգել է պահպանված ձեռագրերը՝ խմբավորելով ըստ ժանրերի: Մենք ձեռնպահ ենք մնում այս բաժնի մասին կարծիք հայտնելուց՝ այն թողնելով ձեռագրագետներին՝ հուսալով, որ ձեռագրացուցակների լույսընծայման և ձեռագրերի թվայնացման ավարտից հետո հնարավոր կլինի օբյեկտիվ խոսք ասել այս բաժնում կատարված գործի մասին:

Գրքի երկրորդ գլուխը, որ 623 էջանոց գրքի մեծ մասն է կազմում, սկսվում է 89 էջից և վերնագրված է «Ս. Գրիգոր Նարեկացու տպագիր ստեղծագործություններ»:

Տպագիրների մատենագիտությունը կազմված է թեմատիկ և ժամանակագրական սկզբունքով: Մատենագետը հաշվառել է 2252 միավոր նարեկացիագիտական տպագիր գրականություն: Կազմվել է ինչպես Նարեկացու առանձին ստեղծագործությունների, այնպես էլ նրանց մասին եղած հայագիտական հարուստ գրականության մատենագիտությունը, որը խմբավորվել է նաև առարկայական դասակարգմամբ:

Հեղինակի ընտրած մատենագիտական սկզբունքը առիթ է դարձել կրկնությունների, մինչդեռ կարելի էր դրանցից խուսափել: Ուստի վերատպվելու դեպքում առաջարկում ենք ընտրել նյութերի հետևյալ հաջորդականությունը՝ Նարեկացու ձեռագրերը, տպագիրները, հայերեն փոխադրությունները, օտարալեզու թարգմանությունները, նարեկացիագիտությունը՝ հայերեն և

² Անդ. էջ 5:

օտար լեզուներով, Նարեկացին գեղարվեստական գրականության մեջ (կարող է նաև շներառվել գիտական մատենագիտության մեջ): Այս սկզբունքին հետևելով՝ հնարավոր կլինի բացառել կրկնությունները:

Թեև գրքում կան նաև վրիպումներ, սակայն դա ամենևին էլ չի ստվերում այն աստվածահաճո գործը, որ մեծ նվիրումով տասնյակ տարիների տքնանքով իրագործել է Աստղիկ Ղափլանյանը՝ գիտակցելով իր աշխատանքի անկատարությունը. «Ցանկացած այսպիսի հրատարակություն գերծ չէ թերութիւններից, որոնց համար խնդրում ենք ընթերցողի ներողամտութիւնը»³: Ուստի նարեկացիական անկատարության զգացումով և կատարելության հասնելու նվիրական ձգտումով, բացառապես գրքի վերատպության հույսով և մեր նկատած վրեպները շտկված տեսնելու ցանկությամբ՝ վկայակոչենք որոշ թերություններ ու բացթողումներ:

Գրքի երկրորդ՝ «Ս. Գրիգոր Նարեկացու տպագիր ստեղծագործություններ» գլխում «Մատենան ողբերգութեան» երկն ամբողջական հատվածից զարմանալիորեն դուրս են մնացել «Մատենագիրք Հայոց»-ում Նարեկացու բոլոր երկերի տպագիրները (ԺԲ. հատոր, Անթիլիաս, 2008) և (Ժ. հատոր, Երևան, 2011) բացի երգ երգոցի մեկնությունից, որը տեղ է գտել մատենագիտության մեջ: Դրանք են.

Մատենագիրք Հայոց, ԺԲ. Հատոր, Ժ. դար, Անթիլիաս, 2008

«Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենան ողբերգութեան», բնագիրը՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, էջ 47-605, «Գանձտետր», բնագիրը՝ Ա. Քյոշերյանի, էջ 623-745,

«Գրիգորի Նարեկայ վանից վանականի Պատմութիւն Ապարանից Սուրբ Խաչին», բնագիրը՝ Մ. Արաբյանի, էջ 913-929,

«Ներբող ի Սուրբ Խաչն», էջ 930-952, «Ներբող ի Սուրբ Կոյսն», էջ 953-975, «Ներբող ի սուրբ առաքեալսն», էջ 976-989, «Ներբող ի Սուրբ Յակոբ Մծբնայ բան նուիրական գովեստի», էջ 990-1005, բնագրերը՝ Մ. Արաբյանի,

«Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան», բնագիրը՝ Հ. Միրզոյանի, էջ 1022-1084,

«Թուղթ ամենաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացու, զոր գրեաց ի հոյակապ եւ յականաւոր ուխտն Կճաւայ», էջ 1087-1089⁴:

Նարեկացուն վերագրված և նրա անունով Մատենագիրք Հայոց-ի Ժ. հատորում տպագրված երկերը ևս դուրս են մնացել տպագիրների մատենագիտությունից:

«Մատյանի» տպագիրներից դուրս է մնացել է նաև 1790 թ. Կ. Պոլսում Մկրտիչ Միրճանյանցի աշխատասիրությամբ կազմված և Հովհաննեսի ու Պո-

³ Անդ, էջ 12:

⁴ Նոյնը տե՛ս նաև Մատենագիրք Հայոց, հ. ԺԲ., Երևան, 2011:

դոսի տպագրած 350 էջանոց տպագիրը՝ Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ Հոգեկիր Հոգևորի, Կ. Պոլիս, 1790 գիրքը:

Նարեկ աղօթից, աշխատասիրութեամբ Գ. Աւետիքեանի, Վէնետիկ, 1801, գրքում Գ. Ավետիքեանի Նարեկլուծի հետ կա նաև «Մատեան»-ն ամբողջութեամբ. մինչդեռ այն արժեքներ կայացնել բուն բնագրի տպագիրների շարքում, գրախոսվող գրքում այն տեղ է գտել միայն երկի մեկնությունների մեջ: Նույնը պետք է ասել նաև «Նարեկ աղօթից համառոտ եւ զգուշաւոր լուծմամբ բացայայտեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յավելուածով» (աշխատասիր.՝ Հ. Գաբրիէլի Աւետիքեանի, Վենետիկ, 1827), որի 3-539 էջերում Նարեկլուծի երկրորդ տպագրության հետ կա նաև «Մատյանն» ամբողջութեամբ, այդպես է նաև 1859 թ. Նարեկլուծի երրորդ տպագրության մեջ՝ «Նարեկ աղօթից» համառոտ եւ զգուշաւոր լուծմամբ բացայայտեալ աշխատասիրութեամբ տեառն Հ. Գաբրիէլի Աւետիքեան վարդապետի, Վենետիկ, 1859, էջ 2-539:

Գրախոսվող գրքից առհասարակ դուրս է մնացել նաև «Մեկնութիւն Երգոց երգոյն Սողովմոնի» (Կալկաթայ, 1813):

«Մատեան ողբերգութեան» երկը հատուածական» բաժնում տպագիրներից դուրս է մնացել 2000 թ. Պողոս Խաչատրյանի աշխատասիրութեամբ տպագրված «Գանձարան հայ հին բանաստեղծության» գիրքը, որի 106-154 էջերում տեղ են գտել ընդարձակ հատվածներ: Մատենագետի ուշագրությունից դուրս է մնացել նաև տողերիս հեղինակի՝ ԻԶ. Բանի մինչ այդ չթարգմանված մի հատվածի փոխադրությունը⁵:

«Ս. Գրիգոր Նարեկացու մեկնութիւնները» գլխի տակ ներկայացվել է «Բան խրատու» գործը, այս խրատի մատենագիտությունից դուրս է մնացել դրանից հատվածների հնագույն տպագիրը՝ Շրյոգերի գրքում ներկայացված որպես Գրիգոր Նարեկացու ստեղծագործություն⁶:

Յավոք, մատենագետի ուշագրությունց դուրս են մնացել նարեկացիագիտական այլ գրքեր ու հոդվածներ ևս, որոնք ներկայացնում ենք ստորև.

Աբայան Էդ., «Նարեկացին շվարած», Գարուն, 1991, թիվ 12,

Ակիմեան Ն., «Մէ՞կ, թէ՞ երկու Նարեկացի», ՀԱ, 1949, ԿԳ, էջ 120-121,

Անադյան Հ., Հայոց անձնանունների բառարան, Կ. Ա, Երևան, 1942, էջ 543-547,

⁵ Տե՛ս Վ. Եղիազարյան, *Բանասիրական որոնումներ*, Երևան, 2003, էջ 34:

⁶ Տե՛ս Schröderi Joh. Joachimi, *Thesaurus linguae Armeniacae, antiquae et hodiernae*, Amstelodami, MDCCXI (1711): Մե կարծիքով, այս երկը պատկանում է ուրիշ Գրիգորի գրչի (տե՛ս Վ. Եղիազարյան, «Գրիգոր Նարեկացուն վերագրուած Խրատի՝ «Մատենագիրի Հայոց»-ում որպէս Նարեկացու գրական երախայրի տպագրելու շուրջ», ՀԱ, 2017, թիւ 1-12, էջ 463-484):

- Ապրելյան Ա.**, «Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկի առաջին թարգմանիչները», *Բանբեր հայագիտության*, 2014, թիվ 1, էջ 173-183,
- Արամյան Մ.**, *Երգ երգոց՝ հանդերձ մեկնութեամբ նախնեաց*, Ե., 1993, էջ 5-36,
- Աւետիսեան Ա.**, «Գրիգոր Նարեկացու Տաղերի, Գանձերի նորաբանութիւնների առանձնացում եւ բառակազմական փոփոխումներ», *ՀԱ*, 2014, ՃԻԸ (1-12), էջ 65-96,
- Բալայան Ն.**, «Արշակ Զոպանյանի «Գրիգոր Նարեկացի» ուսումնասիրությունը», *Կանթեղ*, 2006, թիվ 2, էջ 56-59,
- Բախչինեան Հ.**, «Գրիգոր Նարեկացու տաղերը», 1992, *Վարուժան*, թիվ 5,
- Բախչինեան Հ.**, *Հայ միջնադարեան գրականություն*, Ե., 2006, էջ 92-112,
- Գ. Կ. Ո.**, «Աւերեալ եկեղեցոյն ոսկիով կշռուած «Նարեկ»ը», *Արեւելք*, 1890, № 1999,
- Գրիգոր Նարեկացի**, «Մեկնությունն Երգ երգոցի Սողոմոնի, (հատվածական)», թարգմ. Վ. Ֆերեշեքյան, *Աստղիկ*, թիվ 4, 1991, էջ 3-31:
- «Գրիգոր Նարեկացու վարբը», *Հայկական վարբեր և վկայաբանություններ*, V-XV դդ., Երևան, 1998, էջ 48-51,
- Դեմիրճյան Դ.**, «Գրիգոր Նարեկացի», *Սովետական Հայաստան օրաթերթ*, թիվ 109, Երևան, 1942,
- Դեռիկեան Վ.**, «Առաջաբան», *Մատենագիրք Հայոց*, հ. ԺԳ, գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 9-30,
- Դուրեան Ե.**, *Պատմություն հայ մատենագրության ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերն*, Կ. Պոլիս, 1885, էջ 41-42,
- Դուրեան-Մովսիսեան Յ.**, «Գրիգոր Նարեկացու պատկերաուրման արուեստը», *ՀԱ*, 1993, ՃԷ (1-12), էջ 221-228,
- Եղիազարյան Վ.**, *Բանասիրական որոնումներ*, Երևան, 2003, էջ 27-30, էջ 31-34, էջ 35-42,
- Եղիազարյան Վ.**, *Հովհաննես Թլկուրանցու կյանքը և ստեղծագործությունը*, Երևան, 2001, էջ 105-111,
- Զարբհանալեան Գ.**, *Պատմություն հայերէն դպրութեանց ի պէտս ուսման ազգային վարժարանաց*, հ. Ա, Վենետիկ, 1865, էջ 434-447,
- Զաֆարյան Ս.**, *Հայկական Վերածննդի հարցը*, Ե., 2006,
- Թամրազեան Հ.**, «Նարեկեան դպրոցը եւ X դարի հայ մատենագրութիւնը», *Մատենագիրք Հայոց*, հ. Ժ, Երևան, 2011, էջ 11-16,
- Թամրազյան Հ.**, «Անանիա Նարեկացին եւ Գրիգոր Նարեկացու «Մատենանը» », *Բե՛՛*, 1993, թիվ 2, էջ 134-140,

- Թամրազյան Հ.**, «Բանաստեղծության հարակայության խորհուրդն ըստ Գրիգոր Նարեկացու», *ԲՄ*, 2015, թիվ 22, էջ 31-47,
- Թամրազյան Հ.**, «Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն «Ո՛վ է դա»ի» երկը», *ԲՄ*, 2014, թիվ 20, էջ 45-49,
- Թամրազյան Հ.**, «Դիոնիսիոս Արեոպագացին և Գրիգոր Նարեկացին», *ԲՄ*, 2014, թիվ 21, էջ 15-34,
- Աեռ**, *Երկերի ժողովածու*, հ. 2, Ե., 1967, էջ 460-465,
- Խայկեան Գ.**, *Երեք սուրբեր*, Մարտէյլ, 1954, էջ 18-30 (այս հեղինակի անունը Խայկիկեան է տպվել, էջ 323, թիվ 817),
- Խաչատրյան Գ., Պետրոսյան Լ.**, «Նարեկի -ե/-ալի վերջածանցներով նորաբանությունները», *Մխիթար Գոշ*, 2003, թիվ 2, էջ 37-41,
- Խաչատրյան Թ.**, «Նարեկացին երեկ և այսօր», *Գարուն*, 1992, թիվ 11-12, էջ 46,
- Խաչատրյան Պ.**, *Գանձարան հայ հին բանաստեղծության*, Ե. 2000, էջ 889,
- Խրլոպեան Գ.**, Գրիգոր Նարեկացու գլուխգործոցը. «Մատեան Ողբերգութեան», *Բազմավէպ*, 2003, թիվ ՃԿԱ (1-4), էջ 101-112,
- Խրլոպյան Գ.**, «Գրիգոր Նարեկացու բարոյագիտական հայացքները», *Գարուն*, թիվ 6, 1982,
- Կարապետյան Վ.**, «Գրիգոր Նարեկացու բարոյափիլիսոփայությունը», *Էջմիածին*, 2014, թիվ 2, էջ 59,
- Կոզմոյան Ա.**, «Երկու պոեզիա, երկու հավատամք (Նարեկացու և Ռուդաֆիի բանաստեղծության պատմատիպաբանական համեմատության փորձ)», *ՊԲՀ*, 1992, թիվ 2-3, էջ 189-198,
- Կոզմոյան Ա.**, *Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան (10-16 դդ)*, Երևան, 1997, էջ 17-93,
- Հ. Միրզոյան**, «Նարեկացու «Մատեանի» ընթերցման շուրջ», *ԲԵՀ*, 2013, թիվ 1, էջ 17-25,
- Համբարձումյան Հ.**, *Զուգահեռ ընթերցումներ*, Երևան, 2012, էջ 26-48,
- Հարոյան Հ., Հարոյան Ն.**, «Միջնադարի մեծ մարդասերը. Գրիգոր Նարեկացի», *ԲԵՀ*, 2013, թիվ 4, էջ 17-27,
- Մալխասեանց Սա.**, *Բանասիրական հետազոտություններ*, Երևան, 1982, էջ 288-290,
- Մանուկյան Գ.**, ««Նարեկացու բառաշխարհը» հրապարակման ֆննական վերլուծություն», *ԲԵՀ*, 2006, թիվ 1, էջ 84-94,
- Մարգարյան Մ., Զաֆարյան Մ.**, «Հավատը մարդասիրության ակունք՝ ըստ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան»», 2011, *ՊԲՀ*, թիվ 1, էջ 157-175,

Մեծարենց Մ., «Նարեկացիին հետ», *Լոյս*, Կ. Պոլիս, 1908, 19 հունվար, թիվ 4, էջ 133-137,

Միրզոյան Հ., «Վերընթերցելով Գրիգոր Նարեկացուն», *Բեշ*, 2012, թիվ 1, էջ 65-79,

Մկրյան Մ., *Երկեր*, հ. 1, Ե., 1987, էջ 434-526,

Մուրադյան Պ., ««Նարեկի» գիտական անդրանիկ հրատարակությունը (Կ. Պոլիս, 1774)», *Ակադեմիկոս նիկողայոս Մառ*, Երևան, 2005, էջ 99-118,

Մուրադյան Պ., «Յովհաննէս Կոլոտ պատրիարքի բնագրագիտական աւանդները և «Նարեկ»-ի 1774 թ. հրատարակութիւնը», *Ակոս*, Ստամբուլ, 2005, թիվ 508, 23 դեկտեմբերի,

Նազարյան Շ., «Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի ինքնագրի հարցի մասին», 1987, *ՊԲՀ*, թիվ 4, էջ 104-112,

Նազարյան Շ., «Նարեկացիական շարժումը 18-րդ դարում և նրա արտացոլը Պաղտասար Դպիրի ֆնարեգության մեջ», *Բազմավէպ*, 1986, թիվ 1-4,

Նալբանդյան Վ., Ներսիսյան Վ., Բախչինյան Հ., Հայ միջնադարյան գրականություն, համառոտ պատմություն, Երևան, 1986, էջ 81-85,

«Նարեկը եւ հայ բողոքականները», տե՛ս *Մանգունէ*, 1903, թիվ 727,

«Նարեկն ու Նարեկացին», տե՛ս *Արեւելք*, 1893, № 2727,

Շանթ Լ., *Երկերի ժողովածու*, հ. 7, Երևան, 2013,

Պետրոսյան Ա., «Նարեկյան մեղսագիտակցությունն ինքնանախնայման բանալի», *Էջմիածին*, 2005 թիվ Ժ-ԺԱ, էջ 103-111,

Պետրոսյան Ե. Եպս., Տեր-Ստեփանյան Ա., Սուրբ գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն, Երևան, 2002,

Պետրոսյան Լ., «Գ. Նարեկացու նորաբանությունները Հ. Թումանյանի երկերում», *Լեզվաշխարհ (Լեզվական հիմնախնդիրներին նվիրված նյութերի ժողովածու)*, Պրակ 3, Երևան, 2011, էջ 53-57,

Պետրոսյան Լ., «Գրիգոր Նարեկացու «Մատենան»-ի բաղադրյալ բաների բարբառային ակունքները», *Հանրապետական գիտաժողով նվիրված պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանի ծննդյան 60-ամյակին, Գիտական նյութերի ժողովածու*, Վանաձոր, 2013, էջ 183-192,

Պետրոսյան Լ., «Գրիգոր Նարեկացու նորաբանությունների կիրառությունները Հ. Շիրազի ստեղծագործություններում», *ՎՊՀ Գիտական տեղեկագիր*, Ա պրակ, 2015, էջ 47-53,

Պետրոսյան Լ., «Գրիգոր Նարեկացու ստեղծագործության՝ կազմությանը բարդ նորաբանությունները», *Հանրապետական գիտ. նյութ. ժող. նվիրված հայոց լեզվի ամբիոնի հիմնադրման 35-ամյակին*, Վանաձոր-Երևան, 2005, էջ 125-137,

Պետրոսյան Լ., Կոծինյան Շ., «Գրիգոր Նարեկացու «Մատենանոց» երկի նորաբանությունների ուսուերեն թարգմանությունները», *Արդի բանասիրության հիմնախնդիրները*, Երևան, 2015, էջ 217-222,

Պըլտեան Գր., «Գեղեցկությունը ըստ Գրիգոր Նարեկացիի», *Բազմավէպ*, 1994, ՃԾԲ, թիվ 1-4, էջ 131-174,

Պողոսյան Ն., «Հարություն արք. Եղեսացու «Տաղաչափեալ Նարեկը»», *Բեշ*, 2005, թիվ 1, էջ 115-118,

Սարինյան Ս., *Հայոց գրականության երկու դարը*, Երևան, 2002, հ. 3, էջ 447-454,

Սարինյան Ս., *Հայոց գրականության երկու դարը*, Երևան, 2004, հ. 4, էջ 23-37,

Սնապեան Պ., «Նարեկացին և իր թարգմանիչները», *Ազդակ*, 1968, 29 յունիս,

Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացոյ վարք և մատենագրութիւնք, թարգմանեալ ի յունէ ի հայ բարբառ ի հինգերորդ դարու, աշխատ. և ծանօթագրութեամբ ի լոյս ընծայեալ **Հյր Բարսեղ Սարգիսեանէ**, Վենետիկ, 1907, էջ ՃԿ-ՃԿԱ.,

Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց, *Գալիքի տեսիլքով*, էջմիածին, 1988, էջ 191-209,

Տասնապետեան Թ., «Գրիգոր Նարեկացիի Տիրամօր Գ. ներբողեանը (Վերափոխման)», *Տաթեհ հայագիտական տարեգիրք*, 1, Հալեպ, 2008, էջ 59-108,

Տասնապետեան Թ., *Աստուածածին. նոր յօդուածներու ժողովածու*, Անթիլիաս, 2008, էջ 255-312,

Տեր-Մկրտչեան Կ., *Պաղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ և մերձաւոր հերձուածային երևոյթներ Հայաստանի մէջ*, Երուսաղեմ, 1938,

Տեր-Վարդանյան Գ., «Թովմա Մեծփեցու նորայայտ՝ Ս. Աստուածածնի Աւետման նախատօնակի հառը (ուսումնասիրություն և բնագիր)», *էջմիածին*, 2008, թիվ ԺԲ., էջ 25-62,

Քալանթարյան Ժ., «Կառուցվածքային առնչություններ Նարեկացու «Մատենանոց» երկի և սաղմոսների միջև», *Պայքար*, 1995, թիվ 6-7,

Քիպարեան Կ., «Սբ. Գրիգոր Նարեկացի և Երզ երգոցի մեկնությունը», *Բազմավէպ*, 1961, ՃԺԹ, էջ 1-10,

Այն մեծածավալ աշխատանքը, որ տասնյակ տարիների ընթացքում միայնակ կատարել է պատվարժան Աստղիկ Ղափլանյանը, բնականաբար չէր կարող զերծ լինել նման բացթողումներից այն պարզ պատճառով, որ աշխատասիրողը մասնագիտությամբ մատենագետ է, բայց ոչ միջնադարագետ-նարեկա-

ցիազեա: Կարծում ենք, մեծարժեք այս գրքի գրախոսությունը հանդես կգան նաև այլ միջնադարագետներ՝ նկատելով մեր ուշադրությունից վրիպած այլ բացթողումներ, որոնց հաշվառմամբ էլ արժե նորովի վերատպագրել Գրիգոր Նարեկացու մատենագիտության մնայուն և մեծարժեք գիրքը:

Մատենագիտությունը, բնականաբար գերծ չէ նաև այլ թերություններից. դրանք նշում ենք՝ վերատպության պարագայում բացառելու նպատակով:

Այսպես՝ էջ 158-ում թիվ 126-ը համարվել է առանձին գիրք՝ Նարեկայ վանից վանականի հատմ, գանձմ եւ տաղմ տպագրված 1827 թ. Վենետիկում: Մատենագետը ծանոթագրել է, որ գիրքը թերի է, գտնվում է ԳԱԹ-ի գրադարանում: Իրականում դա հայտնի Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրությունը, Վենետիկ, 1827, գիրքն է, արդեն հղված Մատենի տպագիրների մեջ:

էջ 239՝ Կարապետ Տեր-Մկրտչյանի գիրքը⁷ թիվ 493-ում սխալմամբ վերագրվել է Գալուստ Տեր-Մկրտչյանին:

էջ 301, թիվ 745՝ Հ. Միրզոյան, Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը, Երևան, 2006, գրքի վերնագրում վրիպակ կա՝ «բանաստեղծական արվեստը»:

էջ 326՝ կա փաստական սխալ՝ Թ. Ավդալբեգյանի «Միջնադարյան մի նշանավոր տաղի հեղինակի հարցի շուրջը» (Տեղեկագիր, 1962, թիվ 10) հոդվածը սխալմամբ համարվել է Գր. Նարեկացու մասին, մինչդեռ այդ տաղը Գրիգորիս Աղթամարցունն է, ուստի հոդվածը Նարեկացուն չի վերաբերում:

էջ 141 և 356՝ տողերիս հեղինակի «Նարեկա սարի իմաստասերը» հոդվածը ներկայացվում է որպես 1985 թ. գիտաբանական բնագրի մասին գրախոսություն, մինչդեռ այն Հ. Միրզոյանի 2003 թ. «Գրական թերթ»-ում տպագրված մի հոդվածի պատասխան-հերքումն է:

էջ 344, թիվ 984՝ թերևս տպագրական սխալումն է հետևանք է. նման հոդված չկա:

էջ 357՝ «բառաստեղծ» բառի փոխարեն տպվել է «բանաստեղծ», պետք է լինի **Գ. Խաչատրյան, Լ. Պետրոսյան**, «Նարեկացին բառաստեղծ», *Վասն արդարության*, Վանաձոր, 2003, թիվ 9, էջ 37-41:

էջ 363՝ Վարագ Ներսիսյանի 2003 թ. հոդվածը⁸ սխալմամբ կրկնվել է նաև 2004 թվականին:

⁷ **K. Ter-Mkrtschian**, *Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte ketzerische Erscheinungen in Armenien*, Leipzig, 1893 գրքի բարգամնությունը **Կ. Տեր-Մկրտչյան**, *Պաղիկեանք Բիզանդական կայսրության մէջ և մերձաւոր հերձուածային երևոյթներ Հայաստանի մէջ*, Երուսաղեմ, 1938:

էջ 367՝ թերի է Լ. Սարգսյանի⁹ հոդվածի վերնագիրը. չկա «Համեմատությունները» բառը:

էջ 367-368՝ 2009 թ. գիրքը սխալմամբ ներկայացվել է նաև 2008 թ., մինչդեռ նիշարը՝ էջ 370՝ **Գ. Գասպարյան**, *Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն*, Երևան, 2009, էջ 304-382:

էջ 369, թիվ 1185՝ սխալ է գրված հղումը. նիշտ տարբերակն է՝ **Հ. Միրզոյեան**, Գրիգոր Նարեկացու «Համառատիւ բան խրատու» երկը, *Մատենագիրք Հայոց*, հ. ԺԲ., էջ 1009-1021:

էջ 370՝ **Հ. Թամրազյան**, «Անանիա Նարեկացու «Ներբողեան ասացեալ ի սուրբն կաթողիկէ եկեղեցի» երկը», *Էջմիածին*, 2009, թիվ է., էջ 40-59, հոդվածում Անանիա Նարեկացու անվան փոխարեն սխալմամբ գրված է Անանիա Շիրակացի:

էջ 375, թիվ 1235՝ հեղինակը Ազատ Եղիազարյանն է, սակայն հեղինակի անունը նշված չի:

էջ 392, 1282, 1283, 1284 համարները պետք է միավորել:

էջ 392, թիվ 1285-ի հեղինակը նշված չի, պետք է լինի՝ **Խ. Լեւոնեան**, «Նարեկայ վանքն եւ Նարեկացին - իններորդ հարիւրամեակ. 1003-1903», *Բիւզանդիոն*, 1903, թիվ 2031, էջ 1:

էջ 414՝ **Գ. Բարսոթթի**, «Մեղֆի եւ փրկագործութեան գաղափարը Գրիգոր Նարեկացիի հոյ՛ս», *Բազմավէպ*, 1969, ճԻԷ., թիվ 1, էջ 33-43, միավորը կրկնվում է արևմտահայերեն՝ Տ. Պարսոթթիի անունով:

էջ 439՝ տպված է **Ն. Պողոսյան**, «Նարեկացու բառաշխարհը», *ԲԵՀ*, 2005, թիվ 1, էջ 95-118, բայց իրականում Նորայր Պողոսյանի հոդվածն այլ վերնագիր ունի՝ **Ն. Պողոսյան**, «Հարություն արք. Եղեասացու «Տաղաչափեալ Նարեկը»»:

էջ 472՝ «Նարեկացին գրականության և բանահյուսության մեջ» ենթագլխում տեղ է գտել **Հ. Այվազյանի** «Գրականության կենսահաստատ ուժը» գրքում զետեղված (2009 թ.) գիտական հոդվածը, և այն կրկնվել է նիշտ տեղում՝ էջ 493, թիվ 1722:

էջ 475, թիվ 1622՝ սխալ տեղեկություն է, չկա նման բան, նիշտ է թիվ 1621-ում՝ **Հորոյ**, *Նարեկը եւ իւր աշխարհաբար թարգմանութիւնը*, Կ. Պոլիս, 1905, նաև Լոյս շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1905, թիվ 9, էջ 213-215:

⁸ Տե՛ս **Վ. Ներսիսյան**, «Նարեկացու «Մատենան»-ի ֆնարական հերոսը», *Էջմիածին*, 2003, թիվ ԺԲ, էջ 54-61:

⁹ Տե՛ս **Լ. Սարգսյան**, «Համեմատություններ Գրիգոր Նարեկացու, Միսաք Մեծարենցի եւ Սիամանթոյի ստեղծագործություններում», *Կանթեղ*, 2007, թիվ 3, էջ 140-148:

էջ 474-ում ««Մատենան»-ի աշխարհաբար թարգմանությունները» վերնագիրը պետք է լիներ «թարգմանությունների մասին», քանի որ այդ բաժնում ոչ թե թարգմանություններն են ներկայացված, այլ դրանց մասին եղած հոդվածները, նույն կերպ նաև էջ 479-ում «Օտար լեզուներով թարգմանություններ»-ի փոխարեն պետք է լիներ «թարգմանությունների մասին»:

էջ 480-ում թիվ 1648 և 1649 համարները նույն հղումն են, առաջարկում են միավորել:

Այժմ օտար լեզուներով հրատարակումների մատենագիտության մասին, որտեղ ևս նկատել ենք բազմաթիվ բացթողումներ: Այսպես՝ անգլերենից ղուրս են մնացել հետևյալ ուսումնասիրությունները.

“Letter [to the Monastery of Kchav]”, in *The Key of Truth, a Manual of the Paulician Church of Armenia*, Oxford Clarendon Press, 1898, pp. 125-130;

Cowe S.P., “The Interpretation of the Divine and Human Spheres in Narekaci's Theology of Culture”, in *J.-P. Mahé, B.L. Zekiyian, Saint Grégoire de Narek théologien et mystique. Actes du Colloque international tenu à l'Institut Pontifical Oriental 22-22 janvier 2005*. In Book Series: OCA (275). [Publ.], Roma, 2006 (այսուհետ՝ *Mahé, Zekiyian, Grégoire de Narek*), pp. 229-246;

Drost-Abgarjan A., “Veneration and Reception of Surb Grigor in the Armenian Culture and Spirituality”, in *Mahé, Zekiyian, Grégoire de Narek*, pp. 57-82;

Feulner H.-J., “Prayers of St Gregory of Narek in the Thondrakian Heretics: Canonical and Sacramental Aspects”, in *Mahé, Zekiyian, Grégoire de Narek*, pp. 187-204;

Goltz H., “Narek and the Occident: Anxiety of the Classic Ages and Contemporary Materialism: an Imaginary Dialogue”, in *Mahé, Zekiyian, Grégoire de Narek*, pp. 325-336;

Krikorian M.K., “The Letter of Grigor of Narek Addressed to Thondrakian Heretics: Canonical and Sacramental Aspects,” in *Mahé, Zekiyian, Grégoire de Narek*, pp. 169-186,

La Porta S., “A Theology of Mysticism: The Vision of God and the Trinity in the Thought of Gregory Narekaci”, in *Mahé, Zekiyian, Grégoire de Narek*, pp. 83-98;

The Festal Works of St. Gregory of Narek, Annotated Translation of the Odes, Litanies, and Encomia by A. Terian, Collegeville, Minnesota, 2016:

Thomson R.W., *A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD*, Brepols-Turnhout, Corpus Christianorum, 1995, pp. 128-133;

Էջ 553, թիվ 2042՝ անգլերեն հղումը թերի է, չկա հեղինակի անունը, պետք է լինի՝ **Russell J.R.**, “Armenian Spirituality: Liturgical Mysticism and Chapter 33 of the Book of Lamentation of st. Grigor Narekac'i”, *Revue des études arméniennes* 26, 1996, Paris, pp. 427-439:

Ֆրանսերեն բաժնից ևս դուրս են մնացել բազմաթիվ տպագիր նյութեր.

Choix de poèmes arméniens de Grégoire de Narek, poètes du moyen âge, trad. de **Luc-André Marcel** et **Garabéd Poladian**, Marseille, Liban, 1980 (հատվածների ֆրանսերեն թարգմանությունը՝ Լյուկ-Անդրե Մարսելի);

Commentaire sur Le Cantique des cantiques Grégoire de Narek, introduction, traduction et notes par **Lévon Pétrossian**, Roma, 2010 (երգերգի մեկնության ֆրանսերեն թարգմանություն),

Dasnabédian T., “La figure de Marie dans le panégyrique de la Sainte Mère de Dieu de Grigor Narekatsi”, *ProcheOrient chrétien*, 1990, vol. 40, pp. 3-26;

Dédéyan G., “L'Armenie des IXe-XIe siècles: vie politique et religieuse”, **Mahé, Zekiyán**, *Grégoire de Narek*, pp. 17-32;

Dorfmann-Lazarev I., “La cristologia di Gregorio di Narek”, **Mahé, Zekiyán**, *Grégoire de Narek*, pp. 113-138;

Granian A., “La pertinence actuelle de Narek”, **Mahé, Zekiyán**, *Grégoire de Narek*, pp. 315-324;

Grégoire de Narek et l'ancienne poésie arménienne présentés et traduits par **Luc-André Marcel**, Erevan, 1971;

Grégoire de Narek et Nahabed Koutchak, *Tous les désirs de l'âme, poème d'Arménie*, trad. par **Vahe Godel**, Paris, 2002,

Grégoire de Narek, *Commentaire sur le Cantique des cantiques*, traduction et notes par **L. Pétrossian**, *Orientalia Christiana Analecta* 285, Roma: Pontificio Istituto Orientale, 2010;

Grégoire De Narek, *Le Livre de Lamentation*, introduction, traduction et notes par **Annie** et **Jean-Pierre Mahe**, E., 2012,

Grégoire de Narek, *Le Livre de Prières*, introduction, traduction et notes **d'Issac Kéchichian**, *Sources chrétiennes*, Paris, Éditions du Cerf, 2000 (1re éd. 1961), 575 p.;

Grégoire de Narek, *Tragédie, Matean olbergut'ean, Le Livre de lamentation*, introd., trad. et notes par **Annie** et **Jean-Pierre Mahé**, Lovani, 2000;

Grégoire de Narek, *Traité sur la doctrine chrétienne*, Trad. Constantinople, 1774;

Grégoire De Narek. *Paroles à Dieu*, trad. et notes par **Annie et Jean-Pierre Mahé**, Paris, 2007,

Hymnes et odes de Grégoire de Narek, introduction, traduction et notes par **Annie et Jean-Pierré Mahe**, Paris: Peeters, 2014, 295 p. (օրհնութիւնի ու ներբողների ֆրանսերէն թարգմանություն):

J.-P. Mahé, “Basile II et Byzance vus par Grigor Narekaci”, in *Travaux et Mémoires* (Collège de France. Centre de recherche d'histoire et civilisation de Byzance), 1991, vol. 11, pp. 555-574;

J.-P. Mahé, “L'écclésiologie de saint Grégoire de Narek”, in **Mahé, Zekiyan**, *Grégoire de Narek*, pp. 205-228;

Kéchichian I., *Le livre de prières. Grégoire de Narek. Grigor “Narekaci”*, Paris, 2000;

Kolvenbach P.H., “Préposé Général de la Compagnie de Jésus”, **Mahé, Zekiyan**, *Grégoire de Narek*, pp. 337-356;

L'école de Narek et le commentaire du Cantique des cantiques de Grigor Narekaci (Grégoire de Narek) /Lèvon Pèrossian; sous la direction de Jean-Pierre Mahé, [s.l.]: [s.n.], 2006,

L'école de Narek et le commentaire du Cantique des cantiques de Grigor Narekaci (Grégoire de Narek) [Microforme] /Lèvon Pèrossian; sous la direction de Jean-Pierre Mahé /Lille : Atelier national de reproduction des thèses, 2013:

Lanne E., “Marie Immaculée dans le mystère du salut chez Grégoire de Narek”, **Mahé, Zekiyan**, *Grégoire de Narek*, pp. 139-168;

Le livre de prières Grégoire de Narek, introduction, traduction et notes par **Isaac Kéchichian**, préface de **Jean Mécérian**, postface de **Krikor Bédédian**, Réimpr. de la 1re éd., Paris, 2000;

Le Livre des lamentations, Odes mystiques Grégoire de Narek, [trad. par] **Luc-André Marcel**, Marseille, 1951;

Luc-André Marcel, *Grégoire de Narek et l'ancienne poésie arménienne*, éd. Cahiers du Sud, 1954, 145 p.;

Prières Grégoire de Narek, adapt. de **Vahé Godel**, Paris, 1975;

Prières Grégoire de Narek, adaptation de **Vahé Godel**, Paris, 1957;

Saint Grégoire de Narek et la liturgie de l'église, 2o colloque international organisé par le Patriarcat arménien catholique à l'Université Saint-Esprit de Kaslik (USEK), Liban, du 12 au 14 octobre 2009 /actes

publiés par **Jean-Pierre Mahé, Paul Rouhana, et Boghos Levon Zekiyán**/ Kaslik, Pusek, 2010;

Tamrazyan H., “La vie de saint Grégoire de Narek: aperçu critique,” in **Mahé, Zekiyán, Grégoire de**, pp. 33-48;

Trésor des fêtes, hymnes et odes de Grégoire de Narek, introduction, traduction et notes par **Annie et Jean-Pierre Mahe**, Louvain, 2014 (տաղերի և գանձերի ֆրանսերեն թարգմանություն),

Urvoy D., “Grégoire de Narek et le monde arabo-islamique”, **Mahé, Zekiyán, Grégoire de Narek**, pp. 303-314;

Zakaryan L., “Le Narek enluminé de St. Nersès de Lambron”, **Mahé, Zekiyán, Grégoire de Narek**, pp. 49-56;

Zekiyán B.-L., “L'esperienza mistica di S. Gregorio di Narek e il problema del linguaggio teologico”, **Mahé, Zekiyán, Grégoire de Narek**, pp. 279-302;

էջ 568, 2114 և 2115 համարները առաջարկում ենք միավորել:

էջ 568, թիվ 2116՝ ԽԱ. և Ձ. գլուխների՝ Ֆելիս Նևի 1886 թ. թարգմանությունն է՝ **F. Nève, L'Arménie chrétienne et sa littérature**, Louvain, 1886, էջ 256-267 (սխալմամբ նշված է որպես 1986 թ. տպագրություն):

էջ 569, թիվ 2119՝ անգլերեն է, բայց սխալմամբ տեղ է գտել ֆրանսերենի տակ:

Գերմաներենից դուրս են մնացել հետևյալ տպագիրները՝

Gregor von Narek, Buch der Gebete, Kap. 12, in: *Seele der Welt. Texte von Christen der ersten Jahrhunderte* (Übersetzung aus dem Armenischen), Edition Taizé, Herder, Freiburg im Breisgau (Basel) Wien, 2001 (գերմաներեն թարգմանություն),

Neumann C., *Versuch einer Geschishte der armenischen Literatur*, Leipzig, 1836:

Ter-Mkrtschian K., *Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte ketzerische Erscheinungen in Armenien*, Leipzig, 1893 (Կնավա վանքի վանահորն ուղղված թղթի գերմաներեն թարգմանությունը);

Լատիներենից դուրս է մնացել՝

Schröderi Joh. Joahimi, *Thesaurus linguae Armenicae, antiquae et hodiernae*, Amsterdam, 1711:

Իտալերենից դուրս է մնացել՝

Ճառ ներբողական ի սուրբ Կոյսն Մարիամ /Discorso panegirico alla beatissima Vergine Maria scritto da S. Gregorio da Naregh, Venezia, 1904 (գրաքար եւ իտալերէն),

Gugerotti C., “Peccato del mondo, compunzione, redenzione”, **Mahé, Zekiyan, Grégoire de Narek**, pp. 255-278:

Somalian Placido Sukias, Quadro della storia letteraria di Armenia, Venezia, 1829, էջ 63-66;

Ռումիներենից դուրս է մնացել՝ Antologie de poezie armeană clasică și contemporană, București: ed. Minerva, 1981 (նումիներեն 4 բանի թարգմանությունը՝ Հ. Գրլմեսկուի):

Ուկրաիներենից դուրս է մնացել Իվան Դրաչի թարգմանությունը՝ Класична вірменська поезія, переклав **І. Драч**, Київ, 1988: Իսկ 2222 և 2223 համարները ներկայացվել են որպես ուկրաիներեն, սակայն հայերենով ուկրաիներենի մասին գրված հրատարակումներ են:

Առհասարակ դուրս են մնացել լատվիերեն թարգմանությունները՝

Garīgas dziesmas Putniņš, putniņš atmodies; Uz Jeruzālemi došos, no senarm. atdz. **V. Salmiņa**, rakstā “Narekas Grigora Augšāmcelšanās dziesmas ‘Havun, Havun’ (Putniņš, putniņš atmodies) avoti un simbolika” [“Sources and symbols of the Song of Resurrection ‘Havun, havun’ by Grigor Narekatsi (in Latvian)”], translated from Old Armenian by **Valda Salmiņa**, *Cultural Studies. Animals in Literature and Culture. Scientific Papers*, Daugavpils Universitāte, Saule, 2010, 56-66 (լատվիերեն թարգմանությունները՝ Վալդա Սալմինյայի):

Narekas Grigors, “Žēlabu grāmata, Ban 3.”, translated from Old Armenian, rendered in verse by **Valda Salmiņa**, *Mūzikas Saule*, 2008, Nr 6(50), 8; “Ban 7., 8., 9., 10, 15., 17.”, translated from Old Armenian, rendered in verse and commented by **Valda Salmiņa**, *Karogs*, 2005, Nr. 4, 127-142; “Ban 13., 15.”, translated from Old Armenian, rendered in verse and commented by **Valda Salmiņa**, *Latvijas Luterānis*, 2002, Nr 1 (142), 14-16; “Ban 5.”, translated from Old Armenian, rendered in verse and commented by **Valda Salmiņa**, *Kentaurs XXI*, 1998, Nr 16, 65-68; “Ban 4””, translated from Old Armenian, rendered in verse and commented by Valda Salmiņa, *Svētdiena Rīts*, 1997, Nr 1, 6; “Ban 2.”, translated from Old Armenian, rendered in verse and commented by **Valda Salmiņa**, edit. U. Bērziņš, LU teoloģisks rakstu krājums *Ceļš*, 1997, Nr. 49, 208-

213; “Ban 1., 30.”, translated from Old Armenian, rendered in verse and commented by *Valda Salmina*, edit. U. Bērziņš, *Kentaurs XXI*, 1992, Nr1, 102-108.

Թուսերենով ստեղծված նարեկացիագիտական գրականությունից դուրս են մնացել՝

Аверинцев С., “Поэзия Григора Нарекаци”, *Наука и религия*, 1988, № 7,

Грдзелян Р., “Переклички ‘Книги скорби’ Григора Нарекаци с ‘Псалтырью’,” *Декабрьские чтения, Собрание статей конференции по литературе*, с. 71-76,

Джанполадян М., “Русская критика об образе Бога в ‘Книге скорбных песнопений’ Григора Нарекаци”, *Декабрьские чтения. Собрание статей конференции по литературе*, Ереван, 2002, с. 15-23,

Зулумян Б., “Символика ‘Книги скорбных песнопений’ Григора Нарекаци”, *ՊԲՀ*, 2010, թիվ 2, էջ 130–149,

Մկրտչյան Լ. Մ., “К полемике вокруг перевода Вл. Микушевича ‘Книги скорбных песнопений’ Григора Нарекаци” (Վլադիմիր Միկուշևիչի Գրիգոր Նարեկացու «Մատյանն ողբերգության» թարգմանությանը), *ՔԵՀ*, 3 (87), Երևան, 1995, էջ 89-105:

Չեխերենից դուրս են մնացել հետևյալ տպագիրները՝

Kindler E., Turková B., Utidjian H., “Ukázka z Knihy modliteb sv. Řehoře z Nareka”, *Slovo* 33, in: *Orer*, č. 46, 2009, č. 1, s. 46;

Turková B., Utidjian H., Kindler E., “Matka Boží v arménské duchovní poezii”, *Světlo*, XI, 18. května 2003, č. 20, s. 13 (s překladem úryvku 80. části Knihy modliteb Řehoře z Nareku);

Turková B., Utidjian H., Kindler E., “Tisíc let od smrti arménského básníka svatého Řehoře z Nareka”, in: *Karmel* 2 (2003), 13–15 (s překladem úryvku z 33. části Knihy modliteb Řehoře z Nareku);

Turková B., Utidjian H., Kindler E., “Tisíc let od smrti arménského básníka svatého Řehoře z Nareka”, *Orer*, 2003, č. 9–11, s. 23 (s překladem úryvku 30. části Knihy modliteb Řehoře z Nareku);

Utidjian H., Kindler E., “Svatý Řehoř z Nareka”, *Mezinárodní Report*, 8, červen 2003, č. 6, s. 30 (s překladem 34. části Knihy modliteb Řehoře z Nareku);

Utidjian, H., “Poezie a hudba sv. Řehoře z Nareku jako zrcadlo arménské historie v druhém tisíciletí”, *Parrésia* 8, 2014, s. 331-370;

Utidjian, H., „Řehoř z Nareku“, ed. **M. Starowieyski**, *Slovník raněkřesťanské literatury východu*, Mervart 2012, s. 260-264;

Utidjian, H., Pičmanová M., “Óda na sv. Bohorodičku Řehoře z Nareku”, *Parrésia* 8 2014, s. 523-530:

Utidjian, H., Pičmanová M., “Ukazky z Hymnaře armenske apoštolske církve”, *Parrésia* 5, 2011, s. 227-244;

Utidjian, H., Pičmanová M., Liška, L., “Písni podivuhodná”, *Plav*, 4/2015, s. 21-23;

Բացի այս շեխերեն տպագիրներից, ուսումնասիրությունների շարքում դուրս են մնացել նաև Հայկ Ութիճյանի անգլերեն երկու հրատարակում՝

Utidjian, H., “On the early Venetian manuscripts of the, Ode of the Little Cart”, *Parrésia* 7, 2013, s. 205-228:

Utidjian, H., “On the printed sources of the, Ode of the Little Cart”, *Parrésia* 7, 2013, s. 185-203;

Ամփոփենք. Աստղիկ Ղափլանյանի կազմած Գրիգոր Նարեկացու մատենագիտությունը, թերություններով հանդերձ, չափազանց կարևոր ներդրում է նարեկացիագիտության մեջ: Նշված բացթողումներն ամենևին չեն նսեմացնում այն ահռելի աշխատանքը, որ մեծագույն նվիրումով իրագործել է Ա. Ղափլանյանը. հեղինակն արժանի է միմիայն դրվատանքի, իսկ նրա աշխատասիրած մատենագիտական գիրքը, շունչ առնելով դարերի խորքերից, գնում է հավերժորեն խոսելու դարերի հետ, ուստի նաև ունի նկատված բացթողումների լրացումով վերահրատարակելու անհրաժեշտություն:

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ

ՎԱՐԳԱՆ ԱԶԱՏՅԱՆ

ԿՅԱՆՔԸ՝ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ. ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Մեղմ բարքով, իր և դիմացինի խոսքի ու վարքի հանդեպ պատասխանատվության պահանջով, նուրբ հումորով և սեփական երկրի ու ժողովրդի ներկայով անընդհատ մտահոգ արվեստաբան, քննադատ և դասախոս էր Լիլիթ Զաքարյանը՝ էլլան:

Նրբանկատ գրուցակից էր, անուղղելի հետաքրքրասեր, լայն ու խոր իմացության տեր, որն ի ցույց չդնելն էական էթիկական սկզբունք էր իր համար: Նա խորաթափանց, զգայուն և կենսուրախ մարդ էր, որ պիսիք քիչ են հանդիպում գիտական հաստատությունների պատերի ներսում փակված, անապատական կամ բյուրոկրատ գիտնականների շրջանում: Էլլան 1960-1970-ական թվականներին ասպարեզ իջած հայաստանյան արվեստաբանների շրջանակի մի յուրահատուկ ներկայացուցիչ էր, արվեստաբաններ, որոնք ազգային մշակութային զարթոնքի գաղափարներին իրենց նվիրվածությամբ և արդիադավան հետաքրքրություններով ձգտում էին հաղթահարել մեր արվեստաբանության մեջ ստալինյան ժառանգություն վարչական մտածողությունն ու «ակադեմիական» գիտնականի կարծրացած տիպարը, նեղ փաստագրականությունն ու «ոռնալիզմի» անքննադատ ջատագովությունը: Լիլիթ Զաքարյանը՝ Վիլհելմ Մաթևոսյանի, Հենրիկ Հովհաննիսյանի, Վիգեն Ղազարյանի հետ միասին, տեսական գրականության հանդեպ իր հետաքրքրություններով, եվրոպական լեզուների իմացությամբ, կենդանի արվեստի ու նկարիչների հետ անընդհատ շփման մեջ ձգտում էր կենդանություն հաղորդել խորհրդահայ արվեստաբանության կարծրացած սկզբունքներին:

Խորհրդահայ իրականության մեջ, որտեղ արվեստաբանը գիտական աստիճան ստանալու հնարավորություն չուներ, էլլան առաջիններից էր, որ Վասպուրականի մանրանկարչության մասին իր թեկնածուական աշխատանքը պաշտպանեց Ռուսաստանում, բյուզանդագետ Վիկտոր Լազարևի մոտ, ումից, ինչպես ինքն էր շեշտում, շատ բան է սովորել: Գիտական ճշգրտության Լազարևի՝ հաճախ չափազանցության հասնող սկզբունքներից զատ, որոնք անշուշտ իրենց դերն ունեցան էլլայի՝ աներկբա գիտական բարեխղճության մշակման գործում, նրան գրավում էր գիտնականի բարոյական տիպարը: Խորհրդային ճնշող միջավայրում Լազարևի բարեկրթությունն ու հայ ուսանողներին աջակցելու պատրաստակամությունը էլլայի պատկերացմամբ կապվում էր տոհմիկ լինելու փաստի հետ՝ այդ կերպ հարազատության մի ներքին կապ հաստատելով իր իսկ ծագման հետ: Նրանց համատեղ աշխատանքի մեջ էլլայի աչքում կարծես հանդիպել էին Զաքարյաններն ու Լազարյանները: Ազնվացեղական այս հայացքը, խնդրահարույց լինելով հանդերձ, խորհրդային համակարգի դեմ մի դիմադրություն էր, համակարգ, որի գեղագիտական սկզբունքների դեմ էր ուղղված նաև ատենախոսության թեման. Վասպուրականի մանրանկարչության պարզ ու ազնիվ գեղագիտության պաշտպանությունն արդիադավան մի քայլ էր ընդդեմ խորհրդային բարձր ռեալիզմի սկզբունքների, փորձ՝ վերհանելու նույն այդ սկզբունքների տեսակետից հորջորջված կրիկյան մանրանկարչության ստվերում մնացած գեղագիտական ավանդույթը: Երբ ազնվադավանությունն ու արդիադավանությունը միակցող այս ատենախոսությունը գրքով հրատարակվեց 1980 թվականին, էլլան նպատակահարմար գտավ բացել այն Լերուայի հետևյալ խոսքով. «Ամենայն հնուցից անհրաժեշտաբար գեղեցիկ չէ, բայց միշտ հետաքրքիր է»¹: Սոցիալիստական ռեալիզմի տեսակետից «տգեղի» հանդեպ արդիադավան հետաքրքրությունն էր ընկած գրքի հիմքում: Եվ պատահական չէ, որ Լազարևից զատ, գիրքը խմբագրել էր Վիգեն Լազարյանը, իսկ տպագրության երաշխավորել Վիգեն Մաթևոսյանը:

Էլլայի այս առաջին գիրքը բյուրեղացնում է նրա գիտական հետաքրքրությունները, մոտեցումներն ու աշխատելաեղանակը: Նրա հետազոտության կենտրոնում նախ և առաջ հայ արվեստի արքեոտիպային ձևերի ու դրանց ժառանգորդության հարցերն են: Այդուհանդերձ, էլլայի համար սա ակունքների հարատևության պարզ հարց չէր, այլ փոխակերպվող այն եղանակների, որոնցով իրենց կյանքն են ապրում հնամենի ձևերը: Ուստի, ակունքը բացահայտվում է աշխույժ, բայց նուրբ փոփոխությունների ընթացքի մեջ, փոփոխություններ, որոնք էլլան կապում է պատկերների ստեղծման տեղի (ազգային գետին), պատմահոգևոր մթնոլորտի ու արվեստի հասարակական դերի (պատ-

¹ Л. Закарян, *Из истории васпураканской миниатюры*, Ереван: Издательство АН Арм. ССР), 1980, с. 5.

մական ժամանակակիցություն), ստեղծագործողի յուրահատկության (անհատականություն) հետ²: Վասպուրականի մանրանկարչության պատկերագրական հին տիպերը (հաճախ այնքան հին ու մոռացված, որ թվում են ինքնատիպ) հանդես են գալիս պատմական ներկայից եկող ժանրային տարրերի, ժողովրդական, կենցաղային կոյրիտի «վառ, անմիջական և հուզական ընկալման» լույսի ներքո (էջ 50): Հնամենի տիպարների՝ նրբին փոխակերպումներով այս բարդ կյանքը էլլան բացահայտում է այդ բարդությանը համաչափ մեթոդաբանական զինանոցով. նոր նյութի հայտնագործումից ու դասակարգումից (Խիզանի մանրանկարչության դպրոցի նոր օրինակներ) մինչև տեղականը լայն միջմշակութային կապերի մեջ տեղակայելը (Ասորիք, Եվրոպա, մասմեդական աշխարհ, հատկապես՝ Բաղդադի դպրոց), կերպարվեստի առարկան արվեստի այլ ճյուղերի հետ կապերի մեջ տեսնելուց (ճարտարապետություն, գրականություն, քանդակագործություն, այդ թվում՝ մանր պլաստիկա) մինչև սկզբնաղբյուրների և դասական ու ժամանակակից ուսումնասիրությունների վարպետորեն օգտագործում մի շարք լեզուների (Ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, ռուսերեն) իմացությունը և, վերջապես, արվեստաբանական տարբեր մեթոդների (պատմահոգևոր, պատկերագրական, ոճական) հմուտ կիրառությունը:

Արքետիպերի նուրբ փոխակերպումները վերլուծելու կամ ընդհանրապես նկատելու համար պահանջվում է նրբանկատություն: Պատկերները վերլուծելիս էլլայի ցուցաբերած նրբանկատությունը հաճախ զարմացնող է: Պատկերի՝ սովորաբար աննշան թվացող մանրուքները դառնում են ավանդույթի «հետմահու կյանքի» առանձնահատկությունների բացահայտման վճռական կովաններ: Այդպիսին է, օրինակ, Վանի դպրոցի մանրանկարներից մեկի անկյունում հանդիպող եղնիկի պատկերը. «Պատահաբար հայտնված այդ մոտիվը «պատահանիկ» է բացում դեպի նախնական այն մոդելը, որի պատճենը, ավելի ու ավելի փոխակերպվելով, գուցե թե նախատիպի տեսքով, հասել է հայ նկարչին» (էջ 32): Պատկերագրական այս դիտողունակությունից զատ, էլլան նույնքան նրբանկատ է վերլուծվող պատկերը իր, այսպես ասած, նյութական կրիչից՝ գրքի ֆիզիկական ու գործառնական առանձնահատկություններից շանջատելու հարցում. «...միևնույն տեսարանը, զարգանալով երկու էջի վրա, անցնում է մեկից մյուսը: Սա առավելապես վերաբերում է երկար թափորներին...» (էջ 29): Հատուկ ուշադրության են արժանի էլլայի նկատառումները պատկերների ստեղծման գործում կանանց (ասորական մանրանկարների պատվիրատու՝ հայուհի Ashenuhi-ի) մասին (էջ 57), կամ բուն պատկերներում հանդիպող կանանց կերպարների (Աբրահամի հյուրընկալման մի տեսարանում նահապետական տան կարգի համաձայն՝ կինը մուտք չունի տղամարդկանց

² Նույն տեղում, էջ 43, 49-50:

խնջույք) հիշատակումը (էջ 29): Հատկապես հետաքրքրական է հիմար կույսերի առակում կանանց տղամարդկանց տեսքով պատկերելու՝ հայ արվեստում հանդիպող սկզբունքի էլլայի բացատրությունը ոչ միայն «կույս» բառի նշանակությունը, որը հայերենում վերաբերում է նաև տղամարդուն, այլև ու հատկապես բարոյաէթիկական բովանդակությամբ. կույս է նա, ով անկախ սեռից, աներկբայորեն ծառայում է Քրիստոսին և չի պղծում իրեն ամուսնական կյանքով³: Այս նկատառումները արված չեն կանանց և սեռերի փոխհարաբերության հարցին հատուկ ուշադրություն դարձնելու նպատակով, բայց գուցե հենց դրա շնորհիվ ավելի բովանդակալից են ու գործուն:

Ահա՛ ծավալուն մի մեջբերում՝ պատկերացում տալու համար էլլայի վերլուծական արթնամտության, նրբանկատության և հնի ու նորի դինամիկ փոխհարաբերության նրա հավատամքի մասին. «Խիստ հարթային կոորդինացումը միավորում էր մեկ տարածական գոտում տեղավորված կերպարներին ու առարկաները, ինչի արդյունքում մանրանկարներին հայացք նետելիս՝ ակամայից ստեղծվում է «գորգեղենության» տպավորություն. կարծես մակերեսի վրա շաղ են տված նախշեր՝ յուրաքանչյուրն ինքնատիպ: Այստեղ վերստին իր մասին զգալ է տալիս մանրանկարների հարազատությունը հարթաքանդակների հետ: Սա «իրեղեն» մոտեցում է, որ նկարիչները ցուցաբերում էին ինչպես ձեռագրի, այնպես էլ քարե հարթության նկատմամբ: Թե՛ առաջին, թե՛ երկրորդ դեպքում վարպետը հանդես է գալիս նյութը ձևավորողի դերում՝ առանց այն մերժելու և քայքայելու: Այստեղից էլ ծավալի անտեսումը, մանրանկարների կերպարների հանրաժանոթ սեղմ, արձանագրային ոճը, ինչն էլ բացահայտում է դրանց ազգակցությունը հարթաքանդակների հետ: Էական տարբերություն չտեսնելով ձեռագիր թերթի և խեցեգործական կամ բրոնզե սպասքի միջև, նկարիչը խիզախորեն ձևերը մի նյութից տեղափոխում է մեկ այլ նյութի վրա: Կինելով հիրավի ժողովրդական արվեստ, զերծ ակադեմիական կանոններից, Վասպուրականի մանրանկարչությունն առավելապես հետևում է դեկորատիվ արվեստի սկզբունքներին, որի գեղագիտական կոնցեպցիայի մեջ առաջնահերթ կարևորություն ունեն հարթությունն ու դրվագազարդումը: Արդյոք այս կողմը չէ՞ զուգորդված կատարման ընդհանրականության, «կարճառոտության», առարկաներին ու մարդկանց սխեմայի, նշանի վերածելու հետ, որ այս մանրանկարները մոտեցնում է ժամանակակից արվեստին: Ժամանակի ազնվածանգը կարծես մի պահ անհետանում է՝ ժողովրդական ստեղծագործություններին տալով առանձնահատուկ, մերօրյա հայացքը հուզող հնչողություն»⁴:

³ Նույն տեղում, էջ 28: Այս մտախիզ էլլայի վաղ հրապարակումներից մեկի նյութն էր, տե՛ս "Об одном рельефе Ованнаванка", ՊԹՀ, 1973, թիվ 1, էջ 292-296:

⁴ Լ. Զաքարյան, *Из истории васпураканской миниатюры*, էջ 40-41:

Էլլայի գրչի տակ արվեստի գործերը ո՛չ զմուսվում են սառն ու անկենդան «գիտական» լեզվի մեջ, ո՛չ պարուրվում կիսաբանաստեղծական հոետորության շղարշով. դրանք դառնում են հետաաբհիր: Գիրքը բացող ֆրանսիացի միջնադարագետ Ժյուլ Լերուայի միտքը այս տեսակետից հատկապես խոսուն է: Մեջբերումն էլլան կատարում է ֆրանսերեն բնագրից: Էլլայի «Ֆրանկոֆիլիայից» գատ, այս հանգամանքը վկայում է եվրոպական գիտության հետ ուղիղ հարաբերության մեջ հայ միջնադարյան արվեստն ուսումնասիրելու համոզման մասին: Եվ այս խաչմերուկում է, որ հառնում է Էլլայի՝ արվեստաբանության համար մյուս էական հեղինակության՝ Սիրարփի Տեր-Ներսիսյանի կերպարը: Էլլան անձնապես մտերիմ էր Տեր-Ներսիսյանի հետ, ով, Էլլայի իսկ վկայությամբ՝ բարձր էր գնահատել նրա այս աշխատությունը: 1976 թվականին, Տեր-Ներսիսյանի ծննդյան 80-ամյակի առիթով հրատարակած իր հոդվածում նա գրում էր. «Տեր-Ներսիսյանի կյանքում ամեն ինչ ենթարկվել է մեկ գերագույն, համապարփակ նպատակի՝ ստեղծագործության»⁵:

Սա Էլլայի նվիրական համոզմունքն էր. կյանքի նպատակը ստեղծագործությունն է, կյանքը՝ ստեղծագործություն: Ինքն այդպես էր ապրում: Հայաստանյան արդի և ժամանակակից արվեստի հետ նրա սերտ կապերը, այդ դաշտի մասը լինելու հանգամանքը, պատահականություն չէր: Միջնադարագետը միաժամանակ ներգրավված էր կենդանի արվեստի ստեղծման, կայացման, քննարկման գործընթացներում. նա արդի հայ արվեստի քննադատ էր: Նրա բարեկամությունն իր սերնդի այնպիսի նկարիչների հետ, ինչպիսիք են Էդվարդ Խարազյանը, Վիգեն Թադևոսյանը, Ռոբերտ Էլիբեկյանը, վկայում էր նրա ազգային արդիադավան համոզմունքների մասին: 1987 թվականին Թադևոսյանի մասին գրված իր հոդվածում Էլլան հատուկ շեշտում է տեղական արդի արվեստում հոգևոր արժեքների հաստատման կարևորությունը՝ եվրոպական արդիադավան բանաստեղծների ազգային յուրացմանը զուգահեռ⁶: Միաժամանակ, ինչպես իրական գործուն քննադատ, նա իր ներդրումն էր ունենում արվեստագետների ստեղծագործության շրջանառման գործում: Այս տեսակետից ևս նշանակալի է նրա մտերմությունը հավաքորդ Գարիկ Բասմաջյանի հետ: 1990-ականների վերջին և 2000-ականների սկզբին Էլլան «Ակտուալ արվեստ» ժամանակակից արվեստի և մշակույթի քննադատական հանդեսի խմբագրակազ-

⁵ Լ. Զաֆարյան, «Սիրարփի Տեր-Ներսիսյան (Ծննդյան 80-ամյակի առիթով)», *ՊԲՀ*, 1976, թիվ 4, էջ 237:

⁶ Լ. Զաֆարյան, «Սեփական փորձի սահմաններում», *Արտերիա* (<http://www.arteria.am/hy/1332976092> - այց՝ 28.05.18): Նախապես հրատարակվել է *Գարուն*, 1987, թիվ 8, էջ 60-64:

մի անգամ էր և հետաքրքրություն էր ցուցաբերում ժամանակակից արվեստի առավել նոր սերնդի ներկայացուցիչների ստեղծագործության նկատմամբ:

Էլլան 1993-2000 թթ. արվեստի ուսանողների շրջանում մեծ կարևորություն ստացած «Աննա Հովնանյան» արվեստի դպրոցի նախաձեռնողներից ու դասախոսներից էր: Նա 2000-2010 թթ. դասախոսել է նաև Երևանի պետական համալսարանում: Այնուամենայնիվ, էլլայի կյանքն ու գործունեությունը կապված էին նախ և առաջ մեկ հաստատության՝ Մատենադարանի հետ. նա իրեն իրավամբ «մատենադարանական» էր համարում և անկեղծորեն տոգորված էր Մատենադարանը հայ մշակույթի մտավորական գործուն և նորարարական կենտրոն տեսնելու ցանկությամբ: Մինչև Մատենադարանի շենքի վերակառուցումը, էլլայի աշխատասենյակն այն նույն սենյակն էր, որտեղ պահվում էին Տեր-Ներսիսյանի գրադարանն ու արխիվը: Այդտեղ աշխատելն իրապես հաճո էր նրա սրտին և ինքնին խորհրդանշական: Այդտեղ էր նա հարստացնում ու լրամշակում դեռևս 1980-ականներին իրականացրած իր Աղջոց ս. Ստեփանոս գիրքը, որը նվիրված է Տեր-Ներսիսյանի՝ աշխատության առաջին ընթերցողի հիշատակին⁷: ԺՊ. դարի ճարտարապետական այդ քիչ ուսումնասիրված կոթողի պատկերաքանդակներին նվիրված աշխատությունը լույս տեսավ 2007 թվականին: Ինչպես նրա առաջին, այնպես էլ այս երկրորդ գրքում դրսևորվում է էլլայի՝ ոչ միայն թերուսումնասիրված կամ ըստ էության չգնահատված նյութի հանդեպ գիտական հետաքրքրությունը՝ վերաարժեքավորողի նրա քննախույզ հայացքը, այլև գլխավոր մեթոդաբանական մտահոգությունը. քրիստոնեական սկզբնատիպերի «նախնական անաղարտության» հարատևությունն ու միաժամանակ այն «նորարարական միտումները», որոնք արտահայտված են համեմատաբար ավելի ուշ կառուցված Պողոս, Պետրոս փոքր եկեղեցու մուտքի երկու կողմերում զետեղված նույն առաքյալների մարդահասակ քանդակապատկերներում. «Ավանդականն ու նորը այստեղ անմիջականորեն մեր առջև են, դյուրին բաղդատելի» (էջ 30-31, 33):

Բաղդատական այս աշխատանքի արդյունքում էլլան տարբերակում է քանդակագործական ոճի երեք ուղղություն. դրվագազարդումը՝ հատկապես ի դեմս վանքի արևելյան պատի վարդյակի, որ արված է մեծ վարպետությամբ, Գանիելի և Վերջին դատաստանի պատկերաքանդակները, որ արված են «ավանդական, դեռևս հուշակոթողներից հայտնի» պահպանողական ոճով, և վերջապես՝ Պողոս, Պետրոս առաքյալների պատկերաքանդակները, որոնք խոսում են «նոր ուղղության երևան գալու մասին, ուղղություն, որը հիմնակա-

⁷ Լ. Զաֆարյան, Աղջոց ս. Ստեփանոս, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2007: Գիրքը երկլեզու է՝ հայերեն բուն տեքստին հաջորդում է Արդա Զարխյանի ֆրանսերեն թարգմանությունը:

նում բնորոշվում է դեպի իրապաշտական ոճը հակված գեղագիտական սկզբունքներով» (էջ 87): Վերջին պատկերաքանդակներն այս գրքի «զարդն» են՝ ուսումնասիրության ծանրության կենտրոնը, քանզի դրանք «ձևաբանական-ոճական նոր մտածելակերպի սկզբնավորողն են հայկական միջնադարյան քանդակագործության մեջ» (էջ 87): Հայ միջնադարյան եկեղեցական արվեստում ըստ էության բացառիկ՝ մարդահասակ և նկատելիորեն իրապաշտական այս քանդակները հնարավոր դարձան ժ.Գ. դարի երկրորդ կեսից սկսած հայ-հռոմեական հարաբերությունների մեջ որոշ մեղմացման շնորհիվ, ինչպես նաև վանքում Վարդան Արևելցու ներկայությամբ (էջ 61): Հավանական է, որ Արևելցին Կիլիկիայից իր հետ բերած լինե՞ր «Արևմուտքում շատ տարածված «մոդելներին» մի տեսրակ» (էջ 65): Արևելցու Մեկնության հիման վրա վանքի քանդակային համակարգը մեկնաբանելիս՝ էլլան նկատում է, որ «Մեկնության մեջ Հին ու Նոր ուխտերի իմաստաբանական կապը վկայված է Դանիելի, Պողոս, Պետրոս առաքյալների և Վերջին Դատաստանի միջոցով» (էջ 71):

Կիլիկիայով միջնորդված արևմտյան արվեստի ազդեցությունը, սակայն, ժ.Գ. դարում զգալիորեն հիմնված էր բյուզանդական արվեստի վրա, այստեղից էլ Վենետիկի ս. Մարկոսի տաճարի հյուսիսային մուտքի վերնամասում գտնվող պատկերաքանդակների նմանությունը Աղշոցի Պողոս, Պետրոս առաքյալների պատկերաքանդակների հետ (էջ 108-109): Քանդակների ձևաբանական առանձնահատկությունը էլլան, ի վերջո, բացատրում է այն հանգամանքով, որ սրանք քանդակ-իկոնաներ են (էջ 106-107), իրականացված «միստիկ իմացություն և բյուզանդական արվեստի ձևաբանական նորմերի» ազդեցությամբ (էջ 96): Արդյունքում, հայկական արվեստ մուտք էր գործել միստիկ նոր գիտակցություն՝ ոչ թե ներամիոփի և զուտ հոգևոր, որ արտահայտված էր առավել վաղ շրջանի հայ արվեստում հանդիպող կերպարների նշանային բնույթի մեջ (օրինակ՝ Աղթամարի ս. Խաչ եկեղեցու Գագիկի և Քրիստոսի պատկերաքանդակները), այլ առավելապես «մեղմ» ու «մատչելի» մի միստիցիզմ, որտեղ առկա է «մարդու բնությանը մոտ հոգեբանական էներգիա» (էջ 99): Այս նոր, ավելի հումանիստական միստիցիզմի սկզբնավորումն էլլան կապում է Ներսես Լամբրոնացու, հատկապես աղոթքի «զուտ անհատական» բնույթի նրա կարևորման հետ. «Մարդուն որպես անկրկնելի, յուրահատուկ անհատ դիտարկելը հայ միջնադարում նոր երևույթ էր, նոր մտայնության արգասիք» (էջ 100): էլլային մտահոգող պատկերաքանդակների խորհրդապաշտական ծրագիրը, փաստորեն, զրկանքներին առերես՝ հավատի մեջ ամուր մնալու պատգամն էր, որ հավատացյալներին էին առաջարկում ժողովրդի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդները (էջ 84): Այս, ըստ էության, հին ծրագիրը կազմող քանդակաշարի մեջ նորարարությամբ տրոփող սիրտը, փաստորեն, Պողոս, Պետրոս

առաքյալների պատկերաքանդակներն էին, որոնք էլլայի մեկնաբանությանը հանդես են գալիս իբրև անհատապաշտության և միստիցիզմի մի սիմբիոզ:

Անհատի «ներքին մարդու», նրա ստեղծագործական ուժի հանդեպ հավատը՝ լծորդված աշխարհակարգի հոգևոր բնույթին հասու իմացության հետ, դառնում է այն առանցքային ելակետը, որով գրքում իմաստավորվում է Աղջոց վանքն ու նրա քանդակային համակարգը: Վանքի վերլուծությունը նախ և առաջ ու գլխավորապես արտածվում է ազնվականության և հոգևոր առաջնորդների քաղաքական ու գաղափարական ուղղվածությունից, պատկերների աղբյուրագիտական վերլուծությունները հիմնականում սահմանափակվում են հիշյալ շերտերի գրական ժառանգությանը:

Խորհրդային համակարգի «մատերիալիզմը» թոթափելու ճանապարհին, կարծես համակարգի կապանքներից ազատված, էլլան այս գրքում ձգտում է արժանին մատուցել իր իսկ հավատի ուխտին, որն իր բարձրակետին է հասնում նրա վերջին՝ Մոմիկի մանրանկարչության մասին ուսումնասիրության մեջ: Խոսելով ծաղկողի միջավայրի մասին, էլլան գրում էր. «... և որքան էլ զարմանալի թվա, դա ազատ անհատականությանը օժտված մարդն էր, որի գործունեության արդյունքն ընկալվում էր որպես ինքնուրույն գեղագիտական արժեք՝ ի զորու դիտողին փոխադրել բոլորովին այլ մի հոգևոր աշխարհ տանելով նրան իրականությունից դեպի Իրականը, որն է Սկզբնատիպը, ամենայնի Արարիչը»⁸: Այսպես անհատապաշտական արդիագավանդությունն ու քրիստոնեական աշխարհայեցողությունը ձեռք-ձեռքի կազմում էին ազգային միջնադարագիտության հակախորհրդային տանդեմը:

Այս համոզումներն էին, որ հնարավոր չէր բացահայտորեն արտահայտել խորհրդային տարիներին, բայց որոնց բացահայտ արտահայտումը հետխորհրդային շրջանում, արժեքավոր լինելով հանդերձ, ամբողջությամբ անխնդրահարույց չէր: Աղջոց ս. Ստեփանոս աշխատությունը՝ գրված խորհրդային տարիներին, բայց վերանայված հետխորհրդային շրջանում, արտացոլում է այս առանձնահատուկ իրադրությունը: Գրքի որոշ հատվածներ վերլուծական խստությամբ և պատկերը լայն, բայց կոնկրետ պատմամշակութային համատեքստում նրբորեն տեղակայելու նպատակադրվածությամբ անշեղորեն մատնում են իրենց հարազատությունը էլլայի առաջին գրքի հետ, միաժամանակ, գիրքը տոգորված է բացահայտ կրոնաբարոյական շեշտադրումներով, իսկ վերլուծությունը հիմնականում միտված հայտաբերել քրիստոնեական բարոյականության առաքինությունները՝ հաճախ անթաքույց ողջագուրմամբ⁹: Այստեղ դրսևորվում է

⁸ Լ. Զաֆարյան, «Մոմիկի մանրանկարչական արվեստը», տե՛ս Մոմիկ մանրանկարիչ, 13-14-րդ դդ., Երևան, Նայիրի, 2010, էջ 14:

⁹ Զաֆարյան, Աղջոց ս. Ստեփանոս, էջ 41-42 հմմտ. օրինակ՝ 34, 40-41, 46:


ողբերգական մի հարակարծություն: Ուշխորհրդային բազմաթիվ մտավորականներ՝ գործելով խորհրդային իրականության սահմանափակումների ներսում, շատ ավելի բարդ ու դինամիկ եղանակներով էին ստիպված արտահայտել ազգային ինքնորոշման, հոգևոր կյանքի և քրիստոնեական բարոյականության հետ կապված իրենց նվիրական համոզմունքները, քան դա հնարավոր էր այդ սահմանափակումների բացակայության պայմաններում. մեծ պայքարի բովում ծնվում էին մեծ գործեր:

Գրքում արտահայտված այն համոզմունքը, որ միջնադարի հայ «տոհմական ազնվականությունը» տոգորված էր «հոգևոր Հայաստան ստեղծելու երազային ձգտումներով» (էջ 20), նախ և առաջ վերաբերում էր էլլային և իր սերնդակից համախոհներին, քան միջնադարյան ավատատիրական տներին, և վկայում նրա՝ որպես ազգային մտավորականի առհավատչյան, որը «հոգևոր Հայաստանի» իրականացման հնարավորությունը կապում էր անկախ պետականության հետ: Էլլան ներկայի խնդիրներով ապրող, պայքարող մտավորական էր՝ մտահոգ իր ժողովրդի ու երկրի բարօրությամբ: Նա քաղաքականապես գիտակից գիտնական էր, իսկ նրա քաղաքական համակրանքները ազգային-ազատականության կողմն էին. նա մեծ հույսեր էր կապում Հևոն Տեր-Պետրոսյանի վերադարձով սկսված 2008-ի շարժման հետ: Սակայն մարտի 1-ն ու շարժման ձախողումն անշուշտ դեր ունեցան էլլայի առողջական վիճակի վատթարացման գործում: Ներկան ավելի ու ավելի դադարեց իրականություն լինել նրա համար և անցյալի հիշողություններն ահագնացան այնքան, որ սկսեցին դառնալ կեցավայր՝ անհույս դարձած իրականության համեմատ: Կյանքի վերջին տարիներին նա կարծես մարմնով սկսեց ապրել այն հոգևոր արժեքների մեջ, որոնք, իր իսկ խոսքով, կազմում էին ստեղծագործողի «միակ ճշմարիտ իրականությունը»¹⁰: Ուրեմն, վատառողջ վիճակում իսկ, նա գոյություն մը շարունակում էր հաստատել ստեղծագործողի իր հավատամբը: Էլլան վախճանվեց 2017 թվականի հունիսի 30-ին, 78 տարեկան հասակում:

¹⁰ Լ. Զաֆարյան, «Սեփական փորձի սահմաններում»:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

ՊԵՏԵՐ ՀԱԼՖՏԵՐ (1944- 2018)



Գերմանական հայագիտությունը և միջնադարագիտությունը մեծ կորուստ կրեց: 74 տարեկան հասակում կյանքից հեռացավ իր գործը և իր ընտանիքը սիրող գիտնականը, իսկական քաղաքացին: Նրա կյանքը հայ-գերմանական բարեկամության վառ օրինակ է:

Պետեր Հալֆտերը ծնվել է 1944 թ. այսօրվա Չեխիայի Հանրապետության Բոհեմիա երկրամասի Բրոունով (նախկինում Բրաունաու) քաղաքում: Երկրորդ Համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ 1946 թ., երբ ընտանիքի հայրը գերության մեջ էր, տատիկի և մոր հետ ապաստանել է Գերմանիայում: 1949 թ. հայրը վերադարձել է գերությունից, և ընտանիքը հաստատվել է Ֆրայբուրգի երկրամասի Բադեն-Վյուրտեմբերգ մարզի Գրենցախ-Վիլեն բնակավայրում: Հայրը, որ քիմիկոս էր, լծվեց Գերմանիայի հետպատերազմական վերականգնման աշխատանքներին: Գրենցախ-Վիլենում ծնվեցին Պետերի փոքր եղբայրները և քույրը: Պիտի հիշեմ, որ Հայաստան կատարած վերջին այցելություններից մեկի ժամանակ նա խնդրեց իր հետ զբոսնել Երևանը Զանգվի կիրճի հետ կապող թունելով, որպեսզի երեակայության մեջ վերականգնի գերմանացի ուսանողներին տաժանակիր աշխատանքը Երևանը կառուցողների հետ: Այդ զբոսանքին մասնակցում էր նաև նրա կինը՝ Հաննան, որի հայրն էլ էր ուսանողների եղել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Նրանց համար հիշողությունների աղբյուր էին Զանգվի վրա նետված Հալթանակի կամուրջը և Մոնումենտ բարձրացող ճանապարհի ամրապատնեշը, որոնք ևս կառուցված են գերմանացի ուսանողների ուժերով: Նրանք աղոթում էին, որ այդ կառույցները, որոնց բարձրացման համար քրտինք են թափել իրենց հայրենակիցները, մնան մեր և գերմանացիների հիշողության մեջ իբրև երկու երկրների բարեկամության սիմվոլներ:

Պետերը սովորել է Գրենցախի Ռայնֆելդի գիմնազիայում: Այստեղի գրադարաններում նրա ուշադրությունն են գրավում հայկական ճարտարապետությանը նվիրված հետազոտությունները: Երիտասարդ ուսանողը 1966 թ. Բա-

գելի և Թյուրինգենի համալսարաններում խորացնում է իր գիտելիքները պատմության և գերմանագիտության բնագավառներում: Քերականության գծով ԳՖՀ-ի կենտրոնացված կրթական համակարգի համապետական քննություն հանձնելուց հետո, Պետեր Հալֆտերը դառնում է *Regesta Imperii* միջնադարագիտական կենտրոնի գիտաշխատող: Այնուհետև նրա կենսագրության մեջ շրջադարձային դեր է կատարում Ճանապարհորդությունը դեպի Թուրքիա, որի ընթացքում նա այցելում է Արևմտյան Հայաստան և Կիլիկիա: 1975/6 թթ. ուսումնական տարում նեյրոգենում և Շվաբիայում ուսումը շարունակելուց հետո նա վերադառնում է Թյուրինգեն ու կրկին աշխատանքի է անցնում Ռեգեստա Իմպերիի գիտական կառույցում: 1978 թ. իր առաջին մշտական պաշտոնն է ստանում Կուրդվիգսբուրգի Մյուրկե-գիմնազիայում, ինչը նրան ֆինանսական հնարավորություն է տալիս 1980 թ. Մարբախի Ալեքսանդր կաթողիկե եկեղեցում ամուսնանալ Հաննայի հետ: Այդ երջանիկ ամուսնությունից ծնվում են նրանց երեխաներ Միքայելը (1983) և Դորոթեան (1985):

1986 թ. մանկավարժական գործունեության հետ միասին Պ. Հալֆտերը վերսկսում է գիտական հետազոտությունները, որոնց արդյունքները 1993 թ. ներկայացնում է պաշտպանության, և Թյուրինգենի Համալսարանում ստանում դոկտորի (PhD) կոչում: 1995 թ. գերմաներեն լեզվով հրատարակում է խմբագրված և վերանայված «Պապականությունն ու հայերը վաղ և զարգացած միջնադարում» ատենախոսությունը, որն արժանանում է գիտական աշխարհի սեփական ուշադրությանը:

Գրեթե երեսուն տարի նա եղել է Պետերս միջազգային ընկերության գիտաշխատող, իր գիտելիքները ներդրել Միջնադարյան եվրոպայի, Մերձավոր Արևելքի խաչակրաց ռազմարշավների և Կովկասի քրիստոնյա ժողովուրդների պատմության և մշակույթի հետազոտության բնագավառում: Հալֆտերն իր հոգվածները հրատարակում էր «*Annuaire Historiae Conciliorum*», «*Oriens christianus*», «*Le Muséon*» հանդեսներում, գիտաժողովների և տարբեր գիտական ժողովածուներում: Իբրև միջնադարագետ նա կատարելապես տիրապետում էր լատին լեզվաբանությանը, եվրոպայի և Մերձավոր Արևելքի միջնադարյան պատմությանն ու մշակույթին: Հիմնվելով այդ գիտելիքի վրա, կարողանում էր ստեղծել Մերձավոր Արևելքի խաչակրաց աշխարհի և Կովկասի ամբողջական պատկերը, պատմական զարգացման խորքային հետազոտության մեջ փորձում էր ցույց տալ այդ գործընթացում Հռոմի պապության և Գերմանական կայսրության խաղացած դերը: Չունենալով հիմնարար հայագիտական կրթություն, նա կարողանում էր ներթափանցել հայկական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների այնպիսի խրթին ծալքերի մեջ, որոնք դժվարընկալելի են նույնիսկ բազմաթիվ հայագետների համար: Հայկական

Ճարտարապետության իմացությունը նրան օգնեց մասնագիտական խոսք ասել Բուրգոսի ֆրանսիական կաթողիկեի, 1204 թ. Քյոլնում պահպանված Սիմեոն Նախանձահուլզին վերաբերող մասունքների և վկայությունների հետազոտության բնագավառում: Դա օգնեց բազմաթիվ լատին սկզբնաղբյուրներ և հնագիտական նյութեր ծառայեցնելու զարգացած ավատատիրության դարաշրջանի Հայաստանի և Վրաստանի պատմության ուսումնասիրության ամենատարբեր հիմնախնդիրների բարձրաձայնմանը: Նրա ուսումնասիրությունների շրջանակում էին Ֆրիդրիխ Բ-ի և Շտաուֆերների, կայսր Օտտո Գ-ի և Հոմբի մի շարք պապերի (Ղուկաս Գ, Իննոկենտիոս Գ ևն.) փոխհարաբերությունները Ամենայն Հայոց կաթողիկոսների (Ներսես Շնորհալի, Գրիգոր Տղա, Կոստանդին Բարձրաբերդցի և ուրիշներ), նաև Կիլիկիայի Հայոց թագավորության ներկայացուցիչների (Աևոն Ա, Հեթում Ա ևն.) հետ: Հետագայում նրա հետաքրքրությունների ոլորտ ներխուժեցին XII դարում բարձրացող Վրաց թագավորության հետ Հոմբի պապության և կաթողիկ վանական կարգերի՝ Տաճարականների և Հիվանդախնամների վանական կարգերի հետ փոխհարաբերությունների բացահայտումը: Նրա ուսումնասիրությունների շրջանակը ներառում էր նաև Մոնղոլական տիրապետության ներքո հայ և վրաց գինվորական գործիչների ծառայության խնդիրները, նրանց մասնակցությունը Մերձավոր Արևելքում մոնղոլ բանակների ռազմարշավներին, Միջնադարյան եվրոպայի և Մերձավոր Արևելքի քրիստոնյա ժողովուրդների եկեղեցան-քաղաքական փոխհարաբերություններին: Հալֆտերը զբաղվել է նաև Հայաստանում և եվրոպայում թափառող միջնադարյան զրույցների պատմամշակութային հետազոտությամբ:

Նա հայագիտության այն մշակներից էր, որն իր ողջ կյանքը նվիրեց Հոմբի պապության և Կիլիկիայի Հայոց պետության, իսաչակրաց պետությունների հետ Կովկասի քրիստոնյա երկրների մշակութային և հոգևոր խորքային կապերի հետազոտությանը: Նրա հետաքրքրությունների շրջանակում էին ԺԲ-ԺԵ դարերի Գերմանական կայսրությունը, Հոմբի պապությունը, Մերձավոր Արևելքի խաչակրաց պետությունները, Կիլիկյան Հայաստանը, Վրաստանը, միջնադարյան մշակույթը, Մերձավոր Արևելքի բազմաշերտ հասարակությունը:

Մեր ծանոթությունը և առաջին հանդիպումները տեղի են ունեցել Փարիզում և Ֆրանկֆուրտում, իսկ 1998 թվականից հետո Պետեր Հալֆտերը մի քանի անգամ այցելեց Հայաստան՝ Երևան և Էջմիածին (2014, 2015), մասնակցեց Հայաստանում ու Վրաստանում կազմակերպված գիտաժողովների: Միաժամանակ նա ակտիվ գործունեություն էր ծավալում Հայ-գերմանական ընկերակցության շրջանակներում, ակտիվորեն մասնակցում Deutsch-Armenische Korrespondenz պարբերականի հրապարակման և խմբագրման աշխատանքներին: 2000-2008 թթ. մանկավարժական գործունեությամբ աչքի է ընկել

Մարբախի Ֆրիդրիխ Շիլլեր գիմնազիայում: Իբրև տուրք իր հոգևոր անուրջներին՝ 2017 թ. աշնանը նա կազմակերպել է Մարբախի Ալեքսանդր կաթողիկե եկեղեցու ծխականների ուխտագնացությունները դեպի Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կաթոլիկ եկեղեցիներ, դասախոսություններով է հանդես եկել աշխարհի տարբեր համալսարաններում և հասարակական հավաքներում:

Հայագիտության մեջ նրա առաջին կարևոր քայլը «Պապությունն ու հայերը վաղ և զարգացած միջնադարում» մենագրությունն է, որը մեծ ընդունելություն գտավ հայկական և միջազգային գիտական շրջանակներում: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական ամսագիրը այդ աշխատության գրախոսականին նվիրեց իր էջերը (տե՛ս 1996, ժԲ, էջ 116-128): Նրա աշխատանքները այս բնագավառում նոր որակ բերեցին հայագիտությանը, հարստացրին այն նոր գույներով ու լուծումներով:

Պ. Հալֆտերը ամենայն բարեխղճությամբ վերհանել է Հռոմի եկեղեցու քաղաքական ծրագրերը և այդ ետնախորքի վրա հետազոտել Ամենայն Հայոց կաթողիկոսության և Հռոմի պապության եկեղեցան-քաղաքական փոխհարաբերությունները: Գերմանացի գիտնականը, ուսումնասիրելով իրեն հասու ողջ նյութը, եկել է այն համոզման, որ Հայոց և Հռոմի եկեղեցիների փոխհարաբերությունների մերձեցումը միշտ ուղիղ համեմատական է բյուզանդական եկեղեցու հետ նրանց փոխհարաբերությունների վատթարացմանը: Այս հանգամանքը վկայում է, որ արդեն XII դարում Կիլիկիայի Հայկական պետությունը մի կողմից նպատակ ուներ պահպանել երկրի տարածքները մուսուլմանական շրջապատման մեջ, մյուս կողմից՝ ապահովել Հայաստանի մշակութային ամբողջականությունը, որ վտանգված էր խաչակիր քրիստոնյաների, օրթոդոքս աշխարհի և մուսուլմանական պետությունների կողմից: Ըստ Պ. Հալֆտերի՝ 1198 թ. հունվարի 6-ին Լևոն Ա-ի թագադրումով հայկական պետությունը չզասվեց խաչակրաց Արևելքի պետությունների շարքը, սակայն իր մշակութային ուղերձն ուղարկեց Արևելքի և Արևմուտքի տերություններին՝ կամուրջի դեր կատարելով համաշխարհային մշակութային, հոգևոր և քաղաքական փոխհարաբերություններում: Մոնղոլների հետ դաշինքը նոր հեռանկարներ բացեց Կիլիկիայի Հայոց թագավորության առջև, սակայն փառավոր ժամանակներն ավարտվեցին 1266 թ. սուլթան Բայբարսի ներխուժումներով, որից հետո Կիլիկիան կենաց-մահու կռվի մեջ մտավ մղել սեփական անկախության համար, իսկ եվրոպական տերությունները սկսեցին Հայոց պետական գործիչներին սնել զանազան երևակայական հույսերով: Պետեր Հալֆտերի գիտական հետաքրքրությունների կենտրոնում էր նաև այն հարցը, թե Հայոց պետությունը որքանո՞վ էր ձուլվել լատին Արևելքի պետությունների հետ, քանի որ մոնղոլների տիրապետության տարիներին Կիլիկիան, ճանաչելով վերջիններիս գերա-

գահովելունը, նպատակ էր հետապնդում մերձեցնել քրիստոնեական Արևելքի և Արևմուտքի շահերը:

Պետեր Հալֆտերի հետ հանդիպել ենք աշխարհի տարբեր քաղաքներում (Ֆրանկֆուրտ, Երևան, Անն Արբոր, Մոնպելիե և այլն) կայացած հայագիտական ֆորումներում: Նա միշտ ոգևորված էր և լեցուն ապագայի հավատով, որով վարակում էր իր հետ շփվողներին: Նրա հետաքրքրությունների շրջանակում էին թե՛ միջնադարի պատմության և թե՛ այսօր մեզ հուզող հարցերը:

Պետեր Հալֆտերն անսպասելի հեռացավ մեզանից: Ըստ Deutsch-Armenische Korrespondenz պարբերականի այսօրվա խմբագիր Բաֆֆի Կանտյանի՝ Պետերը նվիրված և իր գործն իմացող գիտնական էր, որի վաստակը դեռևս երկար ժամանակ կուղեկցի հայագիտությանը: Տաղանդավոր մարդն ունեցել է նաև այլ սիրելի զբաղմունքներ, որոնց մասին մեզնից ոչ ոք չէր կարող ենթադրել: Նրա նկարները կախված են մի շարք ցուցասրահներում: Ընտանիքը հանձն է առել Պետերի երազանքի կատարումը՝ Մարբախի գոթական եկեղեցու վերականգնման գործի՝ բեռի իր բաժինը:

Հոծ բազմության, ընտանիքի ու բազմաթիվ ընկերների հետ, հինգշաբթի օրը՝ ապրիլի 26-ին տեղի ունեցած նրա հուղարկավորությանը, որ անցել է վայելուչ ու գեղեցիկ, մասնակցել է նաև Մարբախ-Նեկորի քաղաքապետը: Մահախոսական է ընթերցել հայագետ և Լուվենի Արևելագիտական ինստիտուտի (Institut orientaliste de Louvain (LIOL)/ Institut des civilisations, art et lettres (INCAL)) անդամ և գործընկեր Անդրեա Շմիդտը:

Արտահայտելով հայագետ մտավորականների ցանկությունը, մեր ցավակցությունն ենք հայտնում նրա ընտանիքին և գործընկերներին: Մեր բարեկամի շիրիմը, որի առջև խոնարհվում ենք, գտնվում է Ալեքսանդերկիրխե գոթական եկեղեցու գերեզմանոց-պուրակում:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ոչ ամբողջական)¹

Մենագրություն

Das Papsttum und die Armenier im frühen und hohen Mittelalter: Von den ersten Kontakten bis zur Fixierung der Kirchenunion im Jahre 1198, Köln, Weimar, Wien: Böhlau, 1996 [Forschungen zur Kaiser- und Papstgeschichte des Mittelalters, 15], 361 SS.,

գրախ.՝ Ա.Բոզոյան, «Պապությունն ու հայերը վաղ և զարգացած միջնադարում», *էջմիածին*, 1996, ժԲ, էջ 115-128, “Das Papsttum und die

¹ Կենսագրության որոշ տվյալներ ստուգելու և մատենագիտությունն ամբողջացնելու գործում մեզ օգնել են Կլոդ Մուրաֆյանը, Անդրեա Շմիդտը և Գաբրիել Դանիելյանը:

armenische Kirche im 12. und 13. Jahrhundert,” *A. Drost-Abgarjan, H. Goltz* (Hg.), *Armenologie in Deutschland: Beiträge zum Ersten Deutschen Armenologen-Tag*, Münster: LIT Verlag, 2005, S. 135-152.

Հոդվածներ

1. “Die Staufer und Armenien,” - *S.Lorenz/ U. Schmidt* (ed.), *Von Schwaben nach Jerusalem. Facetten staufischer Geschichte* (Veröffentlichungen des Alemannischen Instituts 61), Sigmaringen 1995, S. 187-208;
2. “Eine Gesandtschaft Kaiser Ottos IV. in Armenisch-Kilikien,” In: *Armenisch-Deutsche Korrespondenz* 104,2 (1999), S. 18-20;
3. (mit **A. Schmidt**) “Der Brief Papst Innozenz’ II. an den armenischen Katholikos Gregor III. Ein wenig beachtetes Dokument zur Geschichte der Synode von Jerusalem (Ostern 1141),” In: *Annuaire Historiae Conciliorum*, Vol. 31 (1999), S. 50-71;
4. “Die Beschreibung des armenischen Königreiches von Kilikien durch den Hildesheimer Domherren Wilbrand von Oldenburg,” In: *Armenia and Christian Orient* (Հայաստանի և Քրիստոնեյա Արևելքը), Երևան 2000, S. 402-421;
5. “Die Armenier und die römisch-katholische Kirche,” In: *Armenisch-Deutsche Korrespondenz* 114,4 (2001), S. 34-38;
6. “Eine Beschreibung Kilikiens aus westlicher Sicht. Das Itinerarium des Wilbrand von Oldenburg Halfter,” In: *Oriens Christianus*, Vol. 85 (2001), S. 176-203;
7. (mit **A. Schmidt**), “Der römische Stuhl und die armenische Christenheit zur Zeit Papst Innozenz IV. Die Mission des Dominikus von Aragon nach Sis und Hromglah und das Lehrbekenntnis des Katholikos Konstantin I. Bardzrbetsi,” In: *Le Muséon*, 116, 1-2 (2003) S. 91-135;
8. “Armenier und Franken im Zeitalter der Kreuzzüge,” In: *Armenisch-Deutsche Korrespondenz* 119/120 (2003), S. 36-40;
9. “Armenien unter georgischer Herrschaft,” In: *Armenisch-Deutsche Korrespondenz* 123/124, 1-2 (2004), p. 34-35;
10. “Das Papsttum und das Königreich Georgien in der ersten Hälfte des 13. Jahrhunderts,” In: *Le Muséon*, 118, 1-2 (2005), S. 109-142;
11. “Constantinus Novus. Zum geschichtlichen Hintergrund des apokryphen Freundschaftspaktes zwischen Konstantin und Trdat, Grigor dem Erleuchter und Papst Silvester,” In: *Le Muséon*, 119, 3-4 (2006), S. 399-428;

12. "Corona regni Armeniae. Aus der Spätzeit der staufisch-armenischen Beziehungen. - In: *Le Muséon*, 120, 1-2 (2007), S. 131-162;
13. "Von den Kreuzfahrerstaaten in das Königreich Georgien," In: *Le Muséon*, 121, 3 (2008), S. 403-436;
14. "Papacy, Catholicosate and the Kingdom of Cilician Armeniad," In: *Hovhannisian, R.G. – Payaslian, S.* (eds.), *Historic Armenian Cities and Provinces. Armenian Cilicia*, Costa Mesa 2008, S. 111-129;
15. "L'Église arménienne entre la papauté et les Byzantins aux XII et XIII siècles," In: *L'Église arménienne entre Grecs et Latins. Fin XI^e - milieu XV^e siècle*, Textes réunis par *I. Augé & G. Dédéyan*, Paris: Geuthner, 2009, S. 63-78;
16. "Die militärischen Triumphe der Georgier und ein wenig beachtetes Erdbeben an der Grenze Armenisch-Kilikiens (c. Ende August 1213)," In: *Le Muséon*, 122, 3 (2009), S. 423-447;
17. "Die Staufer und Georgien. - In: *Le Muséon*, 123, 3-4 (2010), S. 387-423;
18. "Armenier in Westeuropa und Westeuropäer in Großarmenien in der ersten Hälfte des 13. Jahrhunderts," In: *Le Muséon*, 124, 1-2 (2011), S. 77-123;
19. "Georgien und die Georgier in den abendländischen Geschichtsquellen des hohen Mittelalters," In: *Le Muséon*, 125, 3-4 (2012), S. 367-419;
20. "Das Königreich Armenisch-Kilikien und der fünfte Kreuzzug (1217-1221)," In: *Le Muséon*, 126, 3-4 (2013), S. 379-418;
21. "Die Bedeutung armenischer Krieger im byzantinischen Reich unter den Kaisern Justinian und Maurikios," *Bücher, Zeitschriften & CDs*, 2013, Heft 1, ADK 158, S. 61-62;
22. "Ist der Mythos vom ewigen Juden armenischen Ursprungs," *Բանբեր Մատենադարանի* 21, 2014, S. 443-456;
23. "La couronne d'Arménie: Un document récemment découvert, illustrant les relations entre l'empereur Frédéric II et le roi Hét'oum I^{er}," In: *La Méditerranée des Arméniens XII^e-XV^e siècle*, sous la direction de *Cl. Mutafian*, Paris: Geuthner, 2014, p. 101-120;
24. "Die Herrschaft Philipps von Antiochia als König von Kilikisch-Armenien (1222-1225): Eine quellenkritische Untersuchung," In: *Le Muséon*, 127, 3-4 (2014), p. 353-378;

25. “Franken und Waräger in Georgien und Armenien im frühen und hohen Mittelalter,” In: *Le Muséon*, 129, 1-2 (2016), S. 133-198;

26. “L’image des Géorgiens dans les documents historiques des Croisades,” I : **I. AUGE** (ed.), *L’Arménie et la Géorgie en dialogue avec l’Europe. Du Moyen Âge à nos jours*, Paris, 2016 S. 247-266;

27. (mit **S. Möller**) “Ikonographische und numismatische Probleme in Münzprägung und Sigillographie Levon I. von Kilikisch-Armenien,” In: *Le Muséon* 130, 3-4 (2017), S. 365-400;

28. “Georgier und Armenier im Heeresdienst der Mongolen,” In: *Le Muséon* 131 (2018), տպագր. ընթացքում

Յավոք, դեռևս հրապարակված չեն Պ. Հալֆտերի հետևյալ ուսումնասիրությունները.

– Franken und altorientalische Christen als Söldner in islamischen und mongolischen Heeren des Nahen Ostens (vom 12. bis in das 13. Jahrhundert);

– Katholikos Grigoris IV. Degh’a, der Fall Jerusalems 1187 und der Kreuzzug Friedrich I. Barbarossa;

– Levon II., Fürst von Kilikien und die zweite Phase des dritten Kreuzzuges;

– Der Kreuzzug Kaiser Friedrich II. und das Königreich Armenisch-Kilikien;

– Eine armenische Reminiszenz an den Kongress von Verona 1184;

– Die Synode von Sis 1251. Das Papsttum, Byzanz und die Armenische Kirche in der Auseinandersetzung um das *filioque* (mit **A. Schmidt**);

– Der Brief des Simeon Rhaban-Ata an Kaiser Friedrich II.;

– Armenier in Westeuropa im frühen und hohen Mittelalter;

– «O mirum et cunctis admirantibus pavendum!» Ein Brief aus dem Morgenland an den Erzbischof von Besançon am Vorabend des fünften Kreuzzuges.

**ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՀԱՆԳԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ
ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

1. Հոդվածին և ամփոփումներին վերնագրից հետո պետք է նախորդեն բանալի բառեր՝ թվով 8-10:

2. Հոդվածին պետք է հետևի ամփոփում՝ ռուսերեն և անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն)՝ 100-300 բառ ծավալով: Այլապես հոդվածների դեպքում ամփոփումները համապատասխանաբար հայերեն են և երրորդ լեզվով: Ամփոփման վերնագիրն ու հեղինակի անունը ձևավորել ինչպես հոդվածի հիմնական բնագրում՝ առանց «Ամփոփում», “Резюме”, “Summary” և նման նշումների:

3. Հայերենի համար օգտագործել AMM MairTcutcak (unicode) տառատեսակը: Ռուսերեն և լատինատառ մասերը շարել Times New Roman տառատեսակով: Հիմնական բնագրի տառերը՝ շեղ (italic), չափը՝ 12, տողատակինը՝ ուղիղ, չափը՝ 10:

4. Աշխատությունների տողատակի հղումներում կիրառել միջազգայնորեն ընդունված հետևյալ ձևերը.

ա. Գրքերի և պարբերականների վերնագրերը գրել շեղատառ (italic):

բ. Հոդվածների (և գրքերի գլուխների) վերնագրերը՝ ուղիղ (ոչ շեղ), չակերտների մեջ:

գ. Շարքերի վերնագրերը գրել փակագծերում ուղիղ՝ հրատարակման վայրից առաջ:

դ. Աշխատությանը վերաբերող տվյալներն իրարից բաժանել ստորակետով:

ե. Նույն աշխատության կրկին վկայակոչման դեպքում նշել միայն հեղինակին և վերնագիրը կամ ճանաչելի ձևով համառոտումով:

զ. Եթե կրկին վկայակոչումն անմիջապես հաջորդում է առաջինին, գրել «Նույն տեղում» և էջահամարը (եթե փոխվել է): Եթե հաջորդաբար նույն հեղինակի տարբեր աշխատություններ են նշվում, գրել՝ «նույնի» և աշխատության տվյալները:

է. Առանց գումարվում է *ԲՄ*-ում ավանդական դարձած հեղինակի անունը թավ (bold), իսկ խմբագրի, կազմողի, թարգմանչի անունը թավ և շեղ (bold + italic) գրելու պահանջը:

Օրինակներ՝

Դափթ Անյադթ, *Սահմանք իմաստասիրութեան*, համահավաք ֆննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները *Ս. Ս. Արևշատյանի*, Երևան, 1960, պրակֆ Ժէ., էջ 132:

Paul J. Alexander, “Medieval Apocalypses as Historical Sources,” *American Historical Review*, 73, 1968, p. 998:

Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի* (ՄՀ¹, ժե. հատոր, ժ. դար), Երևան, 2011, էջ 27-437:

Philonis Alexandrini *Quaestiones in Genesim et in Exodum. Fragmenta Graeca*, ed. **F. Petit** (Les oeuvres de Philon d'Alexandrie 33), Paris, 1978:

5. Հանախակի հղվող աղբյուրների համար մշակել համառոտագրություններ, որոնց ցանկը կցել հոդվածի վերջում:

6. Գլխավոր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերը հիշատակել հետևյալ հապավումներով.

ՄՄ 1746 (Մաշտոցի անվան Մատենադարան):

Եղմ. 1903 (Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանք):

Վնտկ. 456 (Վենետիկի Մխիթարյան միաբանություն):

Վիեն. 2159 (Վիեննայի Մխիթարյան միաբանություն):

Փրգ. 58 (Փարիզ, Ֆրանսիայի Ազգային գրադարան):

(Մնացած հավաքածուների համար հապավումներ կմշակվեն առաջիկայում: Առաջարկում ենք ծանոթանալ հետևյալ կայքէջում զետեղված և միջազգայնորեն կիրառվող հապավումներին՝ Coulie, *Liste des sigles utilisés pour désigner les manuscrits*, (Coulie – 2002),

<http://sites.uclouvain.be/aiea/wp-content/uploads/2014/03/Sigles.pdf>:

¹ = Մատենագիրք հայոց: Այլ հանրահայտ հապավումներ են ՊԲՀ = Պատմաբանասիրական հանդես, ԲՄ = Բանբեր Մատենադարանի, ՀԱ = Հանդես ամսօրեայ, ԼՀԳ = Լրաբեր հասարակական գիտությունների, ԲԵՀ = Բանբեր Երևանի համալսարանի, REArm = Revue des Études Arméniennes:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՆԱՐԵԿԱՅԻԱԿԱՆ ԵՐՐՈՐԳ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ. ԳԱՆՁԵՐ ԵՎ ՏԱՂԵՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ (17-18 հոկտեմբերի, 2017) ՆՅՈՒԹԵՐԻՑ

Ժան-Պիեռ Մանե	«Բոսոր» ածականը նարեկացու տաղերում. առասպելական մի գույն	5
Աբրահամ Տերեան	Նարեկեան մի ֆանի պատկերներու Փիլոնեան նախապատկերները	14
Հայկ Սրկ. Իսիւնեան	Դէպի Ս. Գրիգոր նարեկացոյ տաղից նոր հրատարակութիւն. Ասպարէզներ եւ նոր հեռանկարներ	30
Արուայակ Թամրազյան	Նարեկացիագիտական նորագույն հրապարակումներ (Աբրահամ Տերյան, The Festal Works of St. Gregory of Narek, Հրայա Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, Գ)	83

«ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ (19 սեպտեմբերի, 2017) ՆՅՈՒԹԵՐԻՑ

Անի Ենոբյան	Ռուսահայ առաջին տպարանի հրատարակությունները և դրանց նկարագրադաման առանձնահատկությունները	101
Միհրան Մինասեան	Հայերէն նորայայտ հինատիպ հրատարակութիւններ	123
Արմեն Խաչատրյան	Աստվածաշնչի Ոսկանյան տպագրությունների առեղծվածը	133

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մարի Մամյան	«Մանկութեան աւետարան»-ը՝ հայ միջնադարյան արգելված գրքերի ցանկերում	166
Խաչիկ Հարությունյան	Անձնանունները հայերեն ձեռագրերի հիշատակարաններում	187
Տաթևիկ Մանուկյան. Քնար Հարությունյան	Երկու նորահայտ ծածկագիր	218
Մարինե Սարգսյան	Որոշ ճշտումներ Գևորգ Դպիր Պալատացու կյանքի և տոհմաժառի վերաբերյալ	232

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմեն Պետրոսյան	Որոշ հայ նշանավոր տոհմերի ծագումը ըստ ավանդական տվյալների	245
Արկադի Ակոպով	Կիսկիմի գավառի հայ բնակչությունը XIX դարի 30-70-ական թթ.	258
Վեներա Մակարյան	Պատմական Սիրիայի կրոնական համայնքների կարգավիճակը և միջհամայնքային հարաբերությունները (XVI-XVIII դդ.)	268
Սամվել Ռամազյան	«Քյոռոզլի» էպոսի պատմական հենքը և XVII-XVIII դդ. հայերեն ժամանակագրությունները	277
Վերա Սահակյան	Մատենադարանի՝ հայոց ցեղասպանության մասին արխիվային վավերագրերը	291
Էդուարդ Հովհաննիսյան	Ուշագրավ վավերագիր Դարաբաղի մասին	310

ԱՐՎԵՍ

Աստղիկ Մուշեղյան	Մի նշխար երաժիշտ-փիլիսոփա Ներսես վարդապետ Մոկացու երաժշտաբանաստեղծական ժառանգությունից	321
Раиса Амирбемян	Каджарский библиофил Бахман Мирза и его молитвенник «Зад-ул-Ми'ад» из коллекции Матенадарана	337
Թագունի Ավետիսյան	Հայկական միջնադարյան եկեղեցիների թմբուկների ֆանդակային հարդարման խորհրդանշական և պատկերագրական ավանդույթները	353

ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Զուլիետա Էյնաթյան	Զատիկ և ծոազատիկ (3). ԺԷ. դարի տոմարագետ Ավիկի «Սակս ծոազատիկն» մեկնությունը	367
Հասմիկ Հայրապետյան	Ստամբուլի և աղիների խոցային հիվանդությունները միջնադարյան հայկական բժշկարաններում	390

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Գոհար Ղազարյան	Նորայր Բյուզանդացու անտիպ նամակները	398
-----------------------	---	-----

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիգեն Ղազարյան	Էմմա Կորխմազյան, <i>Բարձր Հայքի մանրանկարչությունը ԺԱ-ԺԳ դդ.</i> , Երևան, 2015	425
Նազենի Ղարիբյան	Քրիստինա Մարանցիի «Արթուն գորություններ (Զվարթունք). Վաղմիջնադարյան Հայաստանի երեք եկեղեցի» (C. Maranci, <i>Vigilant Powers, Brepols, Turnhout, 2015</i>)	429
Վանո Եղիազարյան	Գրիգոր Նարեկացի. <i>Մատենագիտություն</i> , աշխ.՝ Ա. Ղափյանեանի, Երևան, 2015	435

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ

Վարդան Ազատյան	Կյանքը՝ ստեղծագործություն. Լիլիթ Զաֆարյանի հիշատակին	452
Ազատ Բոզոյան	Պետեր Հալֆտեր	461
<i>Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը վերաբերող պահանջներ</i>		469

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 25

BULLETIN OF MATENADARAN

Volume 25

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 25

*Էջագրությունը, համակարգչային ձևավորումը՝ Շողիկ Զադոյանի
Անգլերենի խմբագիր՝ Գոհար Թովչյան
Ոճական խմբագիր՝ Արմինե Գրիգորյան*

